ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔՈՎ

9(47.925)
Մ-15
Հ.

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔՈՎ

Հուշեր
Հրապարակախոսություն
Արձակ

6476

ԵՐԵՒԱՆ 2022

ՀՏԴ 32:82-94
ԳՄԴ 66
Մ – 151

# DAVIT MATEVOSYAN
## DEVOTION TO PEACE
### Recollections, Political Essays, Stories
### Erevan 2022

Մաթեւոսյան Դավիթ
Մ – 151 Խաղաղության հավատամքով. հուշեր, հրապարակախոսություն, արձակ / Կազմողներ՝ Դավիթ Տեր-Պետրոսյան, Թեւոս Մաթեւոսյան, Արման Մուսինյան, Մարիամ Ծատրյան, սրբագրիչ-խմբագիր՝ Լիզա Ճաղարյան, ձեւավորող՝ Ավետիս Ավագյան, խմբագիր՝ Աշոտ Սարգսյան, – Եր., 2022 – 396 էջ:

Ժողովածուն ամփոփում է ազատամարտիկ, 1991–1994 թթ. Արցախյան պատերազմում Հայաստանի հարավային շրջանների պաշտպանության կազմակերպիչ, քաղաքական գործիչ, 2020թ. երկրորդ Արցախյան պատերազմում զոհված Դավիթ Մաթեւոսյանի թողած գրավոր ժառանգության ընտրանին: Տարբեր ժանրի նյութերը ոչ միայն բնութագրում են հեղինակին՝ որպես բացառիկ քաղաքական անհատ եւ արժանավոր քաղաքացի, այլ նաեւ հավաստի սկզբնաղբյուր են՝ 1988-ից ի վեր, շուրջ երեք տասնամյակի մեր պատմության կարեւոր մանրամասների համար:

ISBN 978-9939-76-899-1

© Հայ Ազգային Կոնգրես, 2022

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

*Իր բոլոր շնորհներով ու գործերով հանգերձ, Դավիթ Մաթեւոսյանն ինձ համար, նախ եւ առաջ, Մարդու եւ Քաղաքացու կատարյալ տիպարն է: Նրա մեջ ամեն ինչ կար, բացի ԵՍ-ը: Վստահ եմ, որ դա կհավաստի նրա հետ շփված ցանկացած անձ:*

**Լեւոն Տեր-Պետրոսյան**

*Ինչպիսի փորձանքի տակ էլ որ գլուխս դնելու լինեմ, ինչ պիտակներ էլ որ կպցնեն, միեւնույն է իմ հնարավորությունները, ունակությունները ու ազդեցությունները գործադրելու եմ հանրության լայն շրջանակներում խաղաղության հաստատման անհրաժեշտությունն իրրեւ համոզմունք ամրապնդելու եւ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանով ընտրությունների դնացող քաղաքական ուժին լիարժեք աջակցելու համար:*

**Դավիթ Մաթեւոսյան**

Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման սկզբից եւեթ նրա առաջամարտիկներից ու կազմակերպիչներից էր Դավիթ Մաթեւոսյանը: Արդեն 1989-ից նա նաեւ ազատամարտիկ էր այս բառի բուն նշանակությամբ՝ Մեղրիի տարածաշրջանում կազմակերպել է սահմանների պաշտպանությունը, նաեւ որպես զինվոր՝ զենքը ձեռին կանգնել է դիրքում, գնացել նակատամարտի, նստել ու ճնել խրամատում: Այդպես էր 1990-ականների Ղարաբաղյան շարժման ու պատերազմի տարիներին, երբ 30-ամյա երիտասարդ էր, այդպես էր 2020-ի պատերազմում, երբ տարիքի այդ 30-ը արդեն կրկնապատկվել էր:

Եզակիներից էր Դավիթը ազատամարտիկների մեջ, գուցեեւ միակը, ում համար հակառակորդը երբեմ թշնամի չդարձավ, այլ մնաց մարդ-

ժողովուրդ, հարեւան, որի հետ համակեցության, հարաբերության լավագույն եւ միակ ձեւը խաղաղ գոյակցությունն էր, բարիդրացիությունը՝ հենված հումանիզմի, երկու կողմի իրական արժեքների փոխադարձ գնահատման, ընդունման ու հարգանքի վրա: Սա է այն առանցքային գիծը, որ անխաբար անցնում է նրա հոդվածների, հարցազրույցների, կլույթների ու նաեւ գեղարվեստական գործերի միջով: Այս գաղափարն այնքան խորն է նրա մեջ, որ դուրս է ցցվում անգամ ամենաանսպասելի տեղում, ամենաանսպասելի կոնտեքստում՝ պարզ, գեղեցիկ ու տպավորիչ: Հակառակորդի հետ հերթական ընդհարումից հետո հերթական բանակցության գնալու առիթով ասում է՝ «գնացի հակառակորդի հետ բանակցելու՝ **պատերազմի մեջ խաղաղություն փնտրելու**» (տես ilur.am, 17.07.2017թ.): Սա էր Դավիթի առաջնային բնութագիրը, ապրած կյանքի առանցքային գիծը՝ պատերազմի մեջ էլ նա խաղաղություն է փնտրել:

Մտավորական էր նա, դարձյալ այս բառի ամենաընդգրկուն նշանակությամբ: Մտավորական էր իր ամբողջ էությամբ, ինչին անունով հասարակական մի ամբողջ խավ է հավակնում, սակայն, անգամ ամենաբարձր տիտղոսներով, շատ քչերն են այդ կոչման որակները լրացնում այնքան լիարժեք, որքան Դավիթը: Չէր կարող լռել, շտեսնելու տալ որեւէ բան, ինչը սխալ էր կամ սխալ էր համարում: Չէր կարող կեղծել ինքն իրեն ոչ մի հարցում եւ ոչ մի դեպքում: Նրա համար առաջնային էր փաստի եւ փաստարկի արժեքը, բանավեճում չէր բաշվում համաձայնել, երբ փաստական կամ տրամաբանական նման բավարար հիմքեր էր տալիս զրուցակիցը:

Ընկերական հարաբերությունները նրա համար, կարծես, միակողմանի էին՝ ինչով կարող է ինքը օգնել եւ օժանդակել դիմացինին՝ իր արածի փոխարեն ոչինչ չակնկալելով: Դրանով, մի տեսակ, ինքնահաստատվում, դրանից ինքը հարստանում, ներքին մեծ բավականություն էր ստանում:

Բնածին էր Դավիթի քաղաքական մտածողությունը՝ հստակ ու անփոփոխելի սկզբունքներով: Պետական մարդ էր Դավիթը, պետականության նրա ըմբռնումը եւ պատասխանատվության զգացումը առաջնային էին եւ միակ հիմքը՝ ոչ միայն իր ստանձնած տարբեր պաշտոններում, այլ նույն կերպ՝ որպես պարզ քաղաքացի նրա վարքագծում ու կեցվածքում: Քաղաքական ու պետական մտածողության թելադրանքով



էր, օրինակ, նրա բազմակի բողոքն ու գայրույթը՝ Մեղրիով անցնող Հայաստան–Նախիջեւան–Ադրբեջան երկաթուղու «հայրենասիրական» ապամոնտաժման դեմ:

«Ես ուխտ եմ արել»,– ասում էր Դավիթը: Նրա սրբազան այդ ուխտը մարդկային-քաղաքական-պետական էր՝ Հայաստանում հաստատված ավազակապետության վերացումը եւ իր այնքա՛ն փափագած խաղաղության հաստատումը: «Ուխտավորի» նվիրումով նա առաջին շարքերում մասնակիցն էր այդ ավազակապետության դեմ բոլոր պայքարներին, մասնավորապես՝ 2006–2007-ին ծառացած դիմակայության առաջին անհավասար պայքարին («Արմատ»–«Այլընտրանք»–«Իմպիչմենտ» դաշինք), իսկ 2007-ի աշնանից՝ նա հանգուցային դերակատարներից էր Հանրապետության հիմնադիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական հայտի շուրջ ծավալված համաժողովրդական շարժման, նրա նախընտրական շտաբի հիմնական հենասյունը:

Գեղագետ էր Դավիթը՝ պատկերի նուրբ զգացողությամբ: Պատմվածքներ էր գրում: Երբ մի առիթով ասացի, թե իր պատկերները Բակունցին են հիշեցնում, նեղվեց, կարմրեց իրեն հատուկ ամոթխածությամբ, ասաց՝ «էլ չեմ գրի»: Անգամ «մամուռ» քաղաքական հոդվածներում ու խոսքում մի արտահայտության, դարձվածի, պատկերի տեսքով «սողոսկում է» գեղարվեստական պատկերը: Գրքի առաջին մասում ամփոփված քաղաքական հոդվածներից մի քանիսը հանգիստ կարելի էր դնել նաեւ նրա գեղարվեստական գործերի շարքում: Ավազակապետական ռեժիմի նրա կերտած կերպարը «Ռեժիմի հուշարձանը» հոդվածում, որքան սպանիչ է, նույնքան ճշգրիտ, արձանի նման առարկայական ու շոշափելի: Բայց հենց այնպես հանուն գեղարվեստի չէր գրում: Գեղարվեստը նրա համար միջոց էր՝ քաղաքական խոսքն ու գաղափարը ավելի համոզիչ դարձնելու, շատերին հասցնելու ու համոզելու համար: «Սուլթան Նանան» որքան բարձրաճաշակ, քնքուշ գեղարվեստ է, նույնքան եւ ավելի՝ քաղաքական, պետական մտածողության արդյունք է եւ ասելիք: Այստեղ էլ առաջնային խնդիրը պատմությամբ տրված հարեւանի հետ խաղաղ գոյակցության, բարիդրացիության անշրջանցելի խնդիրն է, որ մշտապես առաջնային է եղել Դավիթ Մաթեւոսյանի համար:

Անհնար է սկսել «Սկիզբ» վերնագրած ծավալուն, իր ժանրի մեջ կատարյալ հուշագրությունը եւ մի շնչով չհասնել վերջին. գեղացիկ ու

պարզ լեզուն, շարադրանքի դինամիզմը ընթերցողին տեղափոխում է այդ օրերը եւ, կարծես, մասնակից դարձնում իրադարձություններին: Ճշգրիտ վավերագրություն լինելով հանդերձ՝ որոշ դրվագներ պարզապես առանձին նովելներ են, հուզիչ իրադարձություններով ու հմայիչ կերպարներով՝ ոչ միայն հայ, այլ նաեւ աղրբեջանցի: Այս հուշագրության դրվագներից յուրաքանչյուրը, որպես հավաստի աղբյուր, մանրամասն ցուցադրում է Շարժման եւ պետականության առաջին տարիների բազմազան ու յուրատեսակ ամենօրյա խնդիրներն ու տարաբնույթ խոչընդոտները, որոնց լուծման համար ցանկացած մակարդակի պաշտոնյայից ոչ միայն խելք, կառավարման հմտություններ նիշտ կողմնորոշվելու, հանախ, ինչպես շախմատում, միակ նիշտ քայլը գտնելու ունակություն, այլ նաեւ վճռականություն եւ անձնական խիզախություն էր պահանջում: Դավիթն այդպիսի գործչի մի էտալոն է եղել իրեն վստահված բոլոր գործերում, բնագավառներում եւ պաշտոններում: Հիանալի քաղաքական դիտողականությամբ օժտված լինելով, նա արձանագրում է առաջին հայացքից մանր թվացող այնպիսի փաստեր, որոնք գծագրում են եւ 1990-ականների, եւ հետագա տարիների ներքաղաքական, հասարակական մթնոլորտը՝ շատ կարեւոր հիմք այդ տարիների քաղաքական իրադարձություններն իմաստավորելու ու հասկանալու համար: Նրա հաղորդած մանրակրկիտ տեղեկությունները միայն առանձին մի տարածքի (Մեղրիի շրջանին) չեն վերաբերում, այլ նաեւ շատ ավելի լայն՝ ընդհուպ հանրապետության արտաքին քաղաքական հարցերին եւ իրողություններին: Երանի ունենայինք այսօրինակ անաչառ ու վավերական հուշեր ժամանակի այլ գործիչներից ու դերակատարներից:

Անհնար էր, չէր կարող տանը նստել Դավիթը, երբ պատերազմ էր: Եւ չնստեց: Գնաց ինքնուրույն, ինքնակամ, իր պատկերացրած վտանգին դիմակայելու: Գնաց որպես խաղաղության մարտիկ եւ անմահացավ հանուն խաղաղության...

Հերոսական է եղել Դավիթի կյանքը այս բառի ամենաբազմակողմ նշանակությամբ:

Տարբեր առիթներով կարող են փողոց ու հրապարակ դուրս գալ հարյուր-հազարավոր մարդիկ: Ընթացքը եւ արդյունքը կախված են նրանից, թե ինչ «մերան-խմորիչ» է ստանում այդ հոծ զանգվածը մարդկային գործոնի տեսքով՝ նկատի ունենալով ոչ միայն համաժողովրդական ընդվզման ղեկավար կազմը, այլ նաեւ նույնպիսի որակներով անհատներին մյուս օղակներում: Ամեն ինչ կախված է լինում այս վերջինների գործունեության ու վարքագծի մեկնակետից՝ դա սեփական անձն է, թե երկիրը, ժողովուրդը, պետությունը, հոչակված խնդիրը: 1988-ի Համաժողովրդական շարժման այդ «մերան-խմորիչը» կազմող անհատների միակ մեկնակետը երկրորդն էր, եւ Դավիթը այդ հատկանիշը մարմնավորող էտալոնային վառ անհատներից մեկն է:

Այս ժողովածուն ընթերցողին կներկայացնի մարդկային այն կերպարներից ու գործիչներից մեկին, որոնց ամենօրյա տքնանքի, անմնացորդ նվիրումի ու պայքարի առարկայացումն էր Ղարաբաղյան շարժումը սկիզբ առնող Հայոց պատմության հերոսական տասնամյակն իր անհավատալի հաղթանակներով ու ձեռքբերումներով: Այն գործիչներից մեկին, որոնք մինչեւ վերջ անդավաճան մնացին իրենց սկզբունքներին ու դավանած արժեքներին, որոնք իրենց կերպարով օրինակ են քաղաքական մտածողության, քաղաքացիական կեցվածքի եւ մարդկային բարոյականության: Եթե ժամանակին ամենաառաջին պլանում չի երեւացել Դավիթ Մաթեւոսյանը, ապա իր գործունեության արդյունքով, ավանդով ու կերպարով պատմության մեջ անուն առ անուն հիշատակվելու, արժեւորվելու եւ հիշվելու արժանի գործիչների առաջին շարքերում է անտարակույս:

* * *

Ժողովածուի նյութերը ներկայացված են երեք բաժնով.

ա) Դավիթ Մաթեւոսյանի հեղինակած քաղաքական հոդվածներ, հարցազրույցներ.

բ) Գեղարվեստական արձակ, հուշագրություն, նամակներ, այլ նյութեր.

գ) «Հավելվածում» Դավիթ Մաթեւոսյան անձի, գործչի, ընկերոջ մասին կարծիքներ, գնահատականներ:

Ժողովածուն կազմվել է ընտրությամբ. դուրս են մնացել, մասնավորապես, երդյթներ, մի քանի տասնյակ հերոստատեսային հարցազրույցներ, ռեպորտաժներ նրա դատավարությունից եւ այլն:

Նյութերը դասավորված են ժամանակագրական հաջորդականությամբ:

Հոդվածների վերջում հեղինակի ստորագրությունները թողել ենք այն դեպքերում, եթե դրանց կից այլ տեղեկություններ կան:

Հրապարակվող ժողովածուն առաջին ձեռքից կարևոր և արժանահավատ սկզբնաղբյուր է՝ վերջին 30 տարվա Հայաստանի պատմության, քաղաքական մթնոլորտի, ամենատարբեր արժեքավոր մանրամասների, մասնավորապես՝ Ղարաբաղյան շարժման, ղարաբաղյան առաջին պատերազմի, 2007 թվականի աշնանից ծավալված Հայկական երկրորդ համաժողովրդական շարժման իրողությունների ճանաչման, օբյեկտիվ վերհանման ու գնահատման համար: Որպես այդպիսին՝ այն անպայման պետք է կազմվեր ու հրատարակվեր: Դավիթ Մաթևոսյանի զոհվելուց, անժամանակ մահվանից հետո այս գիրքը նաև յուրատեսակ մի հուշարձան է նրա հիշատակին:

**Աշոտ Սարգսյան**
**Պատմական գիտությունների թեկնածու**

## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել եմ 1960թ.-ի մարտի 22-ին Սյունիքի մարզի (Մեղրիի շրջան) Կարճևան գյուղում:

Գյուղի ութամյա դպրոցը ավարտելուց հետո միջնակարգ կրթություն ստացել եմ հարևան Ագարակ քաղաքում, որը ավարտել եմ 1977-ին և անմիջապես ընդունվել Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետ, այն գերազանցությամբ ավարտել եմ 1982 թվականին: Զուգահեռ ուսանել եմ ռազմական ամբիոնում, ինստիտուտը ավարտելուն պես երեք ամսով զորակոչվել Վանաձորի տանկային գունդ և ծառայության ավարտին ստացել պահեստի լեյտենանտի կոչում:

Որպես երիտասարդ մասնագետ՝ նշանակվել եմ մասնագիտությամբ աշխատելու Ռուսաստանում՝ ոչ սեւահողային գոտում, սակայն, դժգոհելով պայմաններից, ինքնակամ վերադարձել եմ Հայաստան:

1982–85 թվականներին աշխատել եմ մի շարք հիմնարկներում:

1985թ. նշանակվել եմ Կարճևանի սովխոզի տնօրեն:

1988 թվականից սկիզբ առած Ղարաբաղյան շարժման շրջանում կազմակերպել եւ գլխավորել եմ գյուղի ինքնապաշտպանությունը:

1990թ. գարնանը հիմնավորել եմ, որ սովխոզի գոյությունը արդյունավետ չի կարող լինել, նախաձեռնել եւ իմ հրամանով ձեռավորված հանձնաժողովի միջոցով տնտեսությանը պատկանող հողերը անհատույց հատկացրել եմ համագյուղացիներին: Իսկ անասնագլխամանակի վաճառքից գոյացած գումարով գնել եմ «Ազրոբանկի» Մեղրու մասնաճյուղի բաժնետոմս: Մեկ տարի անց տնտեսության լուծարումից հետո

այն փոխանցվել է համայնքին, որի դիմաց վերջինս շարունակաբար ստացել է շահաբաժին:

1991թ. ապրիլին Վազգեն Սարգսյանի հորդորով նշանակվել եմ Մեղրիի ներքին գործերի բաժնի պետ՝ շրջանի պաշտպանությունը համակարգելու եւ սաղմնավորվող բանակի կայացմանը աջակցելու լիազորություններով:

1995 թվականին, զինադադարից հետո, իմ նախաձեռնությամբ դուրս եմ եկել ներքին գործերի համակարգից, առաջադրվել եւ մեծամասնական ընտրակարգով ընտրվել եմ ԱԺ առաջին գումարման պատգամավոր (1995–99 թթ.):

1996թ. նշանակվել եմ Սյունիքի փոխմարզպետ եւ 1998 թ. իմ նախաձեռնությամբ թողել եմ այդ պաշտոնը:

1999թ. մեծամասնական ինքնաառաջադրումով, 2007-ին «Իմպիչմենթ» դաշինքի կազմում, 2012-ին «ՀԱԿ» դաշինքի կազմում եւ 2017թ.-ին «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի կազմում առաջադրվել եմ պատգամավորության թեկնածու, սակայն պատգամավոր չեմ դարձել:

1999 թվականի սեպտեմբերին նշանակվել եմ «Հայանտառ» ՓԲԸ գլխավոր տնօրեն եւ աշխատել մինչեւ վարչապետ Արամ Սարգսյանի պաշտոնավարման ավարտը:

2002 թվականից «Քյու-Հաշ» ՍՊԸ փոքր ձեռնարկության գործադիր տնօրենն եմ, ինչն ընդմիջվել է 2008թ. մարտի 1-ին ազատազրկվելու հետեւանքով: Բանտից ազատ եմ արձակվել համաներման արդյունքում՝ 2009թ. հունիսին:

2008թ. նախագահական ընտրությունների ժամանակ եղել եմ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի ընտրական շտաբի անդամ:

Անկուսակցական եմ, ամուսնացած, ունեմ երեք զավակ եւ թոռնիկ:

# ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵԼՈՒՅԹՆԵՐ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՆԵՐ

## ԵԼՈՒՅԹ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ՝ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆՈ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ[1]

**Դավիթ Մաթևոսյան.**– Ես բացարձակապես ցանկություն չունեմ խոսելու քննարկվող հարցի մասին, դրա անհրաժեշտությունը չկա: Պետք է խոսեմ վերջին դեպքի՝ Արծրուն Մարգարյանի սպանության մասին, որովհետև նա իմ հարազատ ընկերն էր, և հանգամանքների բերումով մասնակցում էի որոնումների աշխատանքներին: Եղել եմ դեպքի վայրում, ականատես եմ եղել դեպքի վայրի և դիակի զննությանը:

**Խորով Հարությունյան.**– ...Ես կառաջարկեմ, այդուհանդերձ, հնարավորին չափով քննարկումները ծավալենք օրակարգում գտնվող հարցի վերաբերյալ: Ես Ձեզ խնդրում եմ:

**Դավիթ Մաթևոսյան.**– Ես կարծում եմ, խիստ շաղկապված են դրանք, ներողություն եմ խնդրում, բայց ես գիտեմ՝ ինչ եմ ասում:

Իմ ընկալմամբ՝ իրավաբանությունն ունի երկու գլխավոր բաղադրիչ մաս. մեկը տրամաբանությունն է, մյուսը՝ բարոյականությունը: Դեպքի վայրի զննման ժամանակ ես եղա ականատեսը, թե հանրապետության գլխավոր դատախազության ղեկավարությունը (ես ամբողջ համակարգին չեմ մեղադրում, որովհետև այնտեղ կան բավականին պարկեշտ մարդիկ, հմուտ մասնագետներ) ինչքան անտրամաբանական մոտեցում ունեցավ դեպքի վայրի և դիակի զննությանը:

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 69, գ. 159, թ. 118, էջ 157–158:*

Երբ հիշում եմ, կարծում եմ՝ շատերդ հեռուստատեսությամբ դիտել եմ, հատկապես կարեւորագույն գործերով այն քննիչին, որը հպարտանում էր, թե ինչպես է ինքը սպանված Արծրուն Մարգարյանի կամ ավելի ճիշտ՝ «ինքնասպան» եղած Արծրուն Մարգարյանի ձեռքից վերցրել ատրճանակը: Ես զարմացած ու ապշած էի: Ես ինձ պատահական մարդ չեմ համարում, որովհետեւ գոնե չորս տարի աշխատել եմ ներքին գործերի համակարգում: Առավել եւս՝ ղեկավարել եմ ներքին գործերի բաժինը մեր հանրապետության ամենածանր տարիներին: Եւ այնման էին ոգեւորված ինքնասպանության վարկածը հաստատելու ցանկությամբ, որ, կրկնում եմ, շատ ու շատ հանգամանքներ աչքաթող արեցին:

Անցնեմ բարոյականությանը: Շտապողականությունն այնման շատ էր ինքնասպանության վարկածի հաստատման համար, որ առաջին իսկ օրը, օգտագործելով պետական հեռուստատեսությունը, փորձեցին Արծրուն Մարգարյանից կերտել հարբեցողի եւ, թերեւս, հոգեկան հիվանդի կերպար: Եւ զավեշտն այն էր, որ ոչ միայն իրենց հայտարարությամբ սա փորձեցին ամրագրել, այլեւ օգտագործեցին հարազատին՝ հորաքրոջ որդուն, որը, գեղջկական մտածողությամբ միամիտ մի տղա, չհասկացավ ինչ է կատարվում: Համենայնդեպս, դրանով իսկ հասան իրենց նպատակին, ավելի շուտ՝ փորձեցին հասնել իրենց նպատակին: Սա անբարոյականության կատարյալ աստիճան է: Եւ ես կարծում եմ, որ բարոյականություն եւ տրամաբանություն չունեցող մարդիկ ընդհանրապես այս դահլիճ որեւէ միջնորդություն բերելու իրավունք չունեն, ում էլ որ դա վերաբերի: Ուստի, ես առաջարկում եմ հանրապետության գլխավոր դատախազին՝ լրել այս դահլիճը՝ այլեւս այստեղ չվերադառնալու պայմանով:

Պարոն դատախազ, դուք հավանաբար ինձ չեք ճանաչում, ես ընդամենը մեկ խորհուրդ կարող եմ տալ ձեզ՝ որ ես իմ ասածների համար պատասխանատու եմ: Եւ որպեսզի ինձ լավ ճանաչեք, թերեւս, պարոն Սերժ Սարգսյանը բավարար չափով ինձ ճանաչում է, կարող եք խորհրդակցել նրա հետ: Շնորհակալություն:

## ԵՐԲ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՆ ՆՎԱՃՈՂԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՄԲ[2]

Սահմանադրության փոփոխության 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեն, որ կազմակերպվել էր գործող իշխանությունների կողմից, արդյունքների կեղծման առումով տարբերվում էր մի առանձնահատկությամբ, որն աննախադեպ էր 1999թ. մայիսի 30-ի Ազգ. ընտրություններից սկսած: Հիշյալ եւ հետագա ընտրությունները նախորդ բոլորից իրավական առումով տարբերվում էին առանցքային մեկ դրույթի փոփոխությամբ՝ նախորդ ընտրություններում շրջանառվող քվեաթերթիկների ետնամասում վիճակահանությամբ որոշված հանձնաժողովի երկու անդամների հետ մեկտեղ, իրենց ստորագրությունն էին դնում թեկնածուների վստահված անձերը:

Ի դեպ, այս առանցքային դրույթի փոփոխության գաղափարը ծնվեց 1998թ. արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքում, երբ, համոզելով, կաշառելով ու սպառնալով, ապօրինի շրջանառության մեջ դրված քվեաթերթիկների ետնամասում «հաջողացրին» դնել մրցակցի որոշ վստահված անձանց ստորագրությունները: Գլխացավ պատճառող դրույթը ոչնչացվեց մինչեւ հաջորդ ընտրություններ, իսկ Ընտրական օրենսգրքում փոփոխությունների հիմնական զկկուցողը Վիկտոր Դալլաքյանն էր, որն իրեն հատուկ պաթոսով հիմնավորեց փոփոխությունների անհրաժեշտությունը: Այդ փոփոխությունների ամրագրումից հետո, վստահված անձանց ինստիտուտը խեղկլու եւ հասարակական վերահսկողությունը բացառելու պայմաններում, ընտրությունների արդյունքների աննե-

[2] *«Հայկական ժամանակ», 11.11.2006թ.:*

6476

ՀԱՅ ՀՅ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ ՀՀ

տեւանմ կեղծումն ընտրական հանձնաժողովների որեւէ ատյանում ընդամենը ցանկության հարց է:

Նոյեմբերի 27-ի հանրաքվեի կեղծման առանձնահատկությունն այն էր, որ կեղծիքը հիմնականում իրականացվեց տեղամասային հանձնաժողովներում: Կեղծվեց, որովհետեւ տրվել էր կեղծելու հանձնարարություն, որը հստակ էր՝ վերից վար պարտադրված պատասխանատվությամբ: Ենթակաները, հանձինս մարզպետների եւ քաղաքապետների, ստանձնեցին անցողիկ ցուցանիշների ապահովման պատասխանատվությունը, որը մարզերում վերաձեւեցին ըստ համայնքների՝ թողնելով իրագործումը համայնքների ղեկավարներին ու իրական հեղինակություններին: Համայնքների ղեկավարների դերը կարեւորվել էր հանրաքվեին նախորդած ՏԻՄ ընտրությունների ժամանակ, երբ պարզ էր դարձել, որ արդյունքներն իշխանություններին հիմնականում չեն բավարարել այն համայնքներում, ուր գործող համայնքի ղեկավարի առաջադրման պայմաններում նախապատվությունը տրվել էր այլ թեկնածուի:

Սա նշանակում է, որ իշխանությունը կեղծիքով կարողանում է ցանկալի արդյունք ապահովել այն դեպքում, երբ կենտրոնական, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինները ցուցաբերում են միասնական մոտեցում: ՏԻՄ ղեկավարների անձնական շահագրգռվածության պայմաններում ձեւավորված հանձնաժողովների ընդդիմադիր կուսակցությունների կողմից նշանակված անդամների գերակշիռ մեծամասնությունը համայնքապետների կամակատարներն են: Սա է պատճառը, որ հանրաքվեից առաջ հանձնաժողովների աշխատանքները բոյկոտելու պարլամենտական ընդդիմադիրների կոչերին չհետեւեցին սույն հանձնաժողովականները, մինչդեռ ՀՀ գլխավոր դատախազին թվաց, թե ի լուր աշխարհի իր բերանով արտաբերած իրավական սպառնալիքներն արդյունք տվեցին:

Հանրաքվեն սկսելուց անմիջապես առաջ, առանց կարծիքը հաշվի առնելու, նրանց առաջադրած ծպտյալ իշխանամետ կուսակցությունների ղեկավարների լուռ համաձայնությամբ, կամակատարներով փոխարինվեցին ՏԻՄ ընտրություններում պարտված թեկնածուների միջնորդությամբ տեղամասային հանձնաժողովներում ներգրավված հատուկենտ անաչառ անդամները, եւ արդյունքում ձեւավորվեցին բացարձակ կողմնակալ հանձնաժողովներ:



Հատուկենտ սկզբունքային դիտորդների չեզոքացման գործը իրական հեղինակությունների կողմից ստանձնելու պայմաններում առաջացավ պարարտ միջավայր՝ սոցմրցույթ կազմակերպելու համար: Մասնակցության անհրաժեշտ 776 հազար ցուցանիշի դիմաց 1 միլիոն 515 հազարի ապահովումը լիովին համապատասխանում է «Հնգամյակը երեք տարում» բրեժնեւյան կարգախոսին, ոեռ մի բան կ ավելի:

Վերհիշենք, թե ինչպես ուռճացվեց մարդահամարի արդյունքների «մշտական բնակվողներ» ցուցանիշը՝ նրա մեջ «ժամանակավոր ներկա» ձեւակերպման կիրառությամբ, որը բնորոշվում է բացակայող քաղաքացու՝ վերջին մեկ տարում հաշվառման վայրում թեկուզ մեկ օրով գտնված լինելու հանգամանքով: Ի դեպ, մինչեւ այսօր դա գաղտնի է պահվում, որովհետեւ ներքին հատուկ հանձնարարությամբ բոլոր ժամանակների բացակայողների մի պատկառելի մասը ներառվել է վերջինիս մեջ, ըստ մամուլի բնութագրումների՝ 2003թ. նախագահական ընտրությունների ցանկալի արդյունք ապահովագրելու նպատակով: Ինչեւէ, հանելով ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների պաշտոնական 2.301000 թվից վերոհիշյալ գաղտնի թիվը եւ վերահաշվարկելով՝ հանրաքվեի մասնակցության 65.4 տոկոսի փոխարեն, անտարակույս, կստանամ խորհրդային ցուցանիշ: Մինչդեռ ամենաշահագրգիռ եւ փոխադարձ վերահսկելի ՏԻՄ ընտրություններում, երբ, պայմանավորված սուբյեկտիվ գործոններով հնարավոր է դառնում կեղծիքներ հասցնել նվազագույնի, մասնակցությունը ձգում է մինչեւ 30 տոկոսի:

Փաստորեն, ընտրական հանձնաժողովների ներկայիս կազմը, նրանց ուղղորդող ու սատարող ուժերի համակցումով, որոնք իրականացնելու են նաեւ առաջիկա խորհրդարանական ընտրություններ, փորձարկված ու խարխուսված կեղծիքի մեխանիզմ է: Մեխանիզմ, որը ծրագրավորված է տերերի արհեստական բարձր վարկանիշը ապահովելու նպատակով եւ որեւէ այլ հրաման վերծանում է որպես նշանաբան ու կատարում է միակը՝ ծրագրվածը:

Առաջիկա ընտրությունների ապօրինի մեխանիզմը տրված է իշխանության առանցքային ուժերի համար: Քոչարյանի հետ նույնացվող «Բարգավաճ Հայաստանը» հանրապետության ողջ տարածքը ծածկել է վարսավիրանոցներից խիտ գրասենյակային ցանցով՝ հանձն առնելով

գործադիր իշխանության ու համատիրությունների մի շարք գործառույթներ: Ս. Սարգսյանին սերտաճած Հանրապետականը, հատուկ պատվաստանյութով հանրապետականացնելով տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների ու դպրոցների տնօրեններին, սակայն, իր ապագան պայմանավորելով պաշտպանության նախարարի հավակնոտ վերարտադրությամբ, մերթ մոռանալով կառավարությամբ ներկայացված լինելու հանգամանքը, ընդօրինակում է նախորդին ու կահավորում դպրոցական լաբորատորիաներ, մերթ ցուցարերում ինքնազոհողության նշույլներ՝ հանուն տիրոջ վարկանիշի: Սրանց շուրջ պտտվում եւ քաղաքական ծամածռություններ են անում թեկուզ եղածից փոքր մասնաբաժնով վերարտադրվել ցանկացող ուժերը:

Ձեռնպահ մնալով այլ որակումներից՝ պայմանականորեն քաղաքական միամտություն անվանենք որոշ ընդդիմադիրների այն մոտեցումը, թե միջազգային հանրության ճնշումների ներքո ընտրություններում որեւէ ձեւաչափով իրենք հաջողության կհասնեն:

Իշխանությանն ուրացողությամբ տիրացած, կեղծիքներով «ընտրված» ու վերարտադրված, նվաճողի հոգեբանությամբ կառավարող ուժերը երբեք ընդունակ չեն կազմակերպելու գաղափարական մրցակցություն՝ հանուն պետականության զարգացման ու հզորացման, քաղաքացիների ազատության, անվտանգության, արժանապատվության, բարեկեցության ու սեփականության անձեռնմխելիության:

Պետության ու հասարակության զարգացումը խթանելու միակ ճանապարհը հասարակական գիտակցված ընդվզումն է:

## ԷՆԿԱՎԵԴԵ-Ն ՊԻՏԻ ՊԱՐՏՎԻ[3]

Պապիս սերնդի տղերքն Առաջին հանրապետության գոյատեւման ընթացքում եւ նույնիսկ հետո՝ Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ, արժանապատվորեն պաշտպանել էին հայրենի սահմանները:

Հետո կանխատեսելով, որ վտանգն իսպառ չեզոքացված չէ, նաեւ՝ հավանաբար չվստահելով սովետական կարգերին, մարտական զենքերը, իրենց ձեւակերպմամբ՝ «մոսինները», տարել ու թաքցրել էին ժայռածերպերում: Սովետները դաժան վարվեցին հարգանքի արժանի, ծով արժանապատվության տեր ռանչպարների այս սերնդի նկատմամբ: Բոլորին հալածեցին, մեծամասամբ ազատազրկեցին, շատերն անհետ կորան: Ազատազրկված պապիս ու իր ընկեր Վարդանին բախտը ժպտացել էր՝ վերադարձել էին:

Մշտապես նկատում, բայց չէի հասկանում, թե ինչու երկու ծերունիները հանախ կողք կողքի նստում էին գյուղամիջի նստարանին ու լռում: Երբոր մարդկանց ներկայությամբ զրուցում էին, երկուսով՝ լռում: Հետո հասկացա, որ նրանք 30–40 տարի անց դեռ զգում էին ԷՆԿԱՎԵԴԵ-ի շունչը եւ լռում էին խոսում:

Մի անգամ մայրամաղամից իրեն տեսակցելու եկած կրտսեր եղբորը՝ Արտաշեսին պապս առաջարկել էր միասին զրոսնել: Տարել էր գյուղից դուրս, ամայության մեջ մատնացույց արել եւ ասել, թե այնտեղ է պահված իր զենքը: Հետո, պատճառաբանելով ծանր լսողությամբ պայմանավորված բարձրախոսությունը, շարունակել էր, թե ասելիք շատ ունի, բայց վախենում է՝ իմանան. ամայությունն էլ ականջ ունի:

[3] *«Հայկական ժամանակ», 10.01.2008թ.:*

Գյուղի որսորդներից մեկը դեռ դպրոց չճանախող մորաքրոջս որդուն՝ Ռուբենին հաջալերել էր, որ նա իր Ռուբեն պապից իմանա, թե վերջինս որտեղ է պահել իր զենքը: Պապը կշտամբել էր թոռանը, ընդհանրապես արգելել խոսել դրա մասին՝ զգուշացնելով, թե ԷՆԿԱՎԵԴԵ-ն կրոնի:

Իսկ անհավատ դարձած մեր հայրերի սերունդը փառք էր տալիս Աստծուն, որ Ստալինին չէր փոխարինել Բերիան:

Մեր սերնդին պապերի հալածանքների մասին պատմությունները հեքիաթ էին թվում, ԷՆԿԱՎԵԴԵ-ն՝ հեքիաթի հրեշ: Կարծում էինք, թե այդ բոլորն անդառնալիորեն մնացել է հեռավոր անցյալում...

Նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանը, 1996 թվականին Կապան քաղաքում նախընտրական քարոզչություն իրականացնելիս, այցելեց մարզպետարան՝ ինձ հանդիպելու նպատակով: Անակնկալ հանդիպում տեղի ունեցավ մարզպետի ընդունարանում: Ես նրան հրավիրեցի իմ աշխատասենյակ եւ մոտ կես ժամ զրուցեցինք: Ես մարզպետի տեղակալ էի, «Հանրապետական» խմբակցության անդամ Աժ պատգամավոր: Հանդիպման մասին, բնականաբար, իմացավ մարզպետարանի ողջ աշխատակազմը, իսկ ԿԳԲ-ի այն ժամանակվա մարզային պատասխանատու Արկադի Սարգսյանը համապատասխան հաղորդագրություն էր ուղարկել վերադասին: Սակայն մինչեւ այսօր որեւէ մեկը ինձ չի կշտամբել եւ նույնիսկ չի հարցրել դրա մասին:

## Նախկին բարձրաստիճան մի պաշտոնյայի պատմածից

Ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյանը լուսահոգի Կարեն Դեմիրճյանի մերձավոր ընկերներից մեկին համոզելով, կաշառելով կամ պարտադրելով ժուչկավորել եւ, զրույցի որոշակի թեմա առաջադրելով, ուղարկել է Կարեն Դեմիրճյանի մոտ: Չի բացառվում, սակայն, որ վերջին պահին այս ժուչկակիր ստորաքարշ պավլիկմորոզովականը խղճի խայթ է ունեցել եւ Կարեն Դեմիրճյանին գլխի է գցել իր առաքելության բուն նպատակը: Համենայնդեպս, Կարեն Դեմիրճյանն իմացել է սրա մասին:



## Մեկ այլ նախկին բարձրաստիճան պաշտոնյայի պատմածից

Մի անգամ պաշտոնյային հրավիրել է Աժ նախագահ Կարեն Դեմիրճյանը եւ ասել, որ կարեւոր բան պիտի ասի, բայց վստահ է, որ աշխատասենյակի խոսակցությունները լսվում են: Նա հարցրել է, թե մոտակայքում հնարավո՞ր է այնպիսի միջավայր գտնել, որտեղ անհնարին կլինի լսվելը: Պաշտոնյան հուշել է այդպիսի մի տարբերակ, սակայն Դեմիրճյանը արժանապատվությունից ցածր է համարել նման միջավայրում զրուցելը: Արհամարհելով լսվելու վտանգը եւ հաշվի առնելով վարչապետ Վազգեն Սարգսյանի հետ պաշտոնյայի ունեցած անմիջական հարաբերությունները՝ նա փոխանցել է հետեւյալը. «Խնդրում եմ, օգնիր ինձ համոզել Վազգենին, թող Սերժ Սարգսյանին նշանակի՝ որտեղ ուզում է, նույնիսկ նավթամթերքի նախարար, միայն թող ազատի նրան զբաղեցրած պաշտոնից, այդ պաշտոնում նա փորձանք է մեր ազգի գլխին»:

* * *

Արդեն 3-րդ ամիսն է՝ ոչ քաղաքական նկրտումներով փորձում եմ հանդիպել իմ կողմից շատ հարգված մի նանապարհաշինարարի հետ: Վերջինս, որ բազմաթիվ մարդկանց տարբեր ժամանակներում եւ առիթներով ասել ու կրկնում է, թե այսօրվա իր ունեցած դիրքի եւ կարողության համար նախ եւ առաջ երախտապարտ է ինձ, խուսանավում է: Ավելին, վերջերս վախենում է պատասխանել իմ հեռախոսազանգերին: Ուղղակի վստահ եմ, որ իմ վաղեմի ընկեր, ԿԳԲ-ի մարզային պատասխանատու Արշակ Գալստյանի խորհրդով է երախտապարտ նանապարհաշինարարը հեռու մնում «շառից ու փորձանքից»:

Բոլորովին վերջերս այցելեցի ծանոթ մի պաշտոնյայի: Զգում էի ներքին լարվածությունը, բայց ձեւացնում էր, թե ամեն ինչ կարգին է, եւ ուրախ է հանդիպման համար: Դեռ առաջին նախադասությունը չէի ավարտել, երբ խոսակիցս ցնցվեց, աղերսող ու տագնապած հայացքով լռելու ազդանշան տվեց: Հետո միացրեց հեռուստացույցը, բարձրացրեց ձայնը, բջջային հեռախոսը պահեց դարակում, թեքվեց ականջիս եւ շշուկով ասաց, որ ԿԳԲ-ն ամեն տեղ լսում է, ու պետք չէ քաղաքական թեմաներով զրուցել: Առեղծված էր: Խոսքս քաղաքական չէր, եւ նման

ցանկություն չունեի ընդհանրապես: Հանկարծ ապշահար հայտնաբերեցի, որ «մաղամական» սաածը կիսատ թողածս նախադասության վերջին բառի միջնամասում տեղ գտած «ա» հնչյունն էր:

Լևոն Տեր-Պետրոսյանի ճշմարիտ խոսքը տեղ է հասնում, ու մարդիկ գիտակցում են համընդհանուր վտանգը: Այդ գիտակցումը մարդկանց միավորում է ու դարձնում ժողովուրդ, և այս անգամ, հնարավոր է՝ մեկընդմիշտ: Արտաքին վտանգի դեմ ժողովուրդը բացահայտ է գործում, ինչպես 1988-ի Շարժման ժամանակ էր: Հիմա վտանգը ներքին է. ժողովուրդը խորամանկում է եւ իշխանություններին ներքաշում մոլորության մեջ:

Մեր երեխաների հավատավոր սերունդը, վստահ եմ, վերլուծելու է անցյալը ու փառք տա Աստծուն, որ Ռոբերտ Քոչարյանին չի փոխարինել Սերժ Սարգսյանը:

Դավիթ Մաթեւոսյան

Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի անդամ

## ՆԱԽՕՐՈՔ ԱՍՎԱԾ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ ԿԱՄ՝ ՄԵՆՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ ԵՆՔ[4]

### 1. Օրենքը ենթարկվեց պատժի

ՀՀ ոստիկանության ստորաբաժանումները 2008 թ. մարտի 1-ին մթության քողի տակ գաղտագողի ներխուժեցին Ազատության հրապարակ եւ մահակների, էլեկտրաշոկերի ու գազի գործադրմամբ՝ ֆիզիկական բռնությամբ ցրեցին զանգվածային հրապարակային միջոցառումը՝ մասնակիցներին պատճառելով տարբեր բնույթի եւ աստիճանի մարմնական վնասվածքներ:

Այս կապակցությամբ 01.03.2008թ.-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Վ. Հարությունյանի կողմից քրեական գործ հարուցելու եւ վարույթներ ընդունելու մասին որոշմամբ, հիմք ընդունելով ոստիկանությունից ստացված նյութերը, պարզվել է, որ մեր կողմից Ազատության հրապարակում զանգվածային հրապարակային միջոցառումները (իրականում դա մեկ միասնական միջոցառում էր, որ մեկնարկել էր փետրվարի 21-ից) կազմակերպվել եւ անցկացվել են օրենքով սահմանված կարգի խախտմամբ:

Հիշյալ նյութերն իրենցից ներկայացնում են Մարտի 1-ի նստացույցը ցրելուց հետո հապճեպ ձեւակերպված դեպքի վայրի զննության թվով վեց արձանագրություններ, որոնցից 5-ը՝ երկու նույն ընթերականեր, ցուցարարների բերման ենթարկելու մասին արձանագրություններ, այս կապակցությամբ ոստիկանապետերին ուղղված զեկուցագրեր, բեր-

[4] *«Հայկական ժամանակ», 09.05.2008թ.:*

ման ենթարկվածների անձնական խուզարկության արձանագրություններ ու այս ամենի շարժն ուղղորդող գրագրություն: Եւ ահա, միայն այս նյութերը գլխավոր դատախազին ուղղորդող կից գրության մեջ է արվում հետևյալ մերկապարանոց որակումը. «...օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառումը կազմակերպելու եւ անցկացնելու... մասին»:

Հաշվի առնելով այն փաստը, որ այս գնահատականները հնչեցնելիս ոչ մի տեղ չի նշվում այն օրենքը, որը սահմանում է միջոցառումը անցկացնելու կարգը, կարելի է ենթադրել, որ դատախազությունն ու ոստիկանությունը կամ գաղափար չեն ունեցել միջոցառման մասնակիցների եւ իշխանությունների հարաբերությունը կարգավորող՝ 2004-ին ընդունված «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ԺՀԵՑ օրենք) գոյության մասին, կամ էլ թքած են ունեցել նրա գոյության վրա: Հիշյալ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ զանգվածային հրապարակային միջոցառումը ինքնաբուխ վերածվել է զանգվածային հրապարակային միջոցառման, զանգվածային հրապարակային միջոցառումներ կարող են անցկացվել միայն լիազոր մարմնին իրազեկելուց հետո»:

Մեր միջոցառումը մեկնարկել է ոչ զանգվածային հրապարակային միջոցառման տեսքով (ըստ օրենքի՝ մասնակիցների թիվը մինչեւ 100 մարդ, եւ լիազոր մարմնին իրազեկում չի նախատեսվում), որի մասնակիցները, այդ թվում եւ ես, համարում էին, որ նախագահական ընտրությունները իշխանությունների կողմից իրականացված կազմակերպված հանցագործություն էր, եւ շատ արագ այն ինքնաբուխ վերածվեց շուրջօրյա զանգվածային հրապարակային միջոցառման (այսուհետ ՁՀՄ)՝ դրսեւորվելով օրենքով սահմանված ձեւերից մի քանիսով, ինչը թույլատրվում է օրենքի 5-րդ հոդվածի 3.4 կետով: Այն, որ ոստիկանությունը, մեղմ ասած, անտարբեր է օրենքների նկատմամբ, ապացուցվում է հետեւյալով: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2001 թվականին) հոդված 31-ի վերջում առկա է հնացած մի ձեւակերպում. «Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը..., ինչպես նաեւ խաղաղ, առանց զենքի շարտոնված հանրահավաքներ խափանելու ժամանակ»:



Բնականաբար, խոսքը չի վերաբերում իրական հեղինակություններին հավաքներին, իսկ «շարտոնված» եւ «խափանել» հասկացությունները ԺՀԵՑ օրենքում գոյություն չունեն: Վերջինիս ընդունումից 4 տարի անց այս հասկացությունները չեն վերացվել:

Ինչ վերաբերում է հատուկ միջոցներին, Ռոբերտ Քոչարյանի վկայությամբ՝ երեք քաղաքացիներ զոհվել էին բարոյապես մաշված հատուկ միջոցների գործադրման արդյունքում: Օրենքով վարվելու՝ չկրակելու դեպքում բարոյական մաշվածությունը դեր չէր ունենա: Այն, որ իշխանությունները Մարտի 1-ի ողբերգական դեպքերից հետո են հասկացել, որ ստիպված են լինելու հաշվի նստել մեր գործողությունների օրինականությունը ապահովագրող օրենքի դրույթների հետ, ապացուցվում է այն փաստով, որ հայտնվելով անելանելի վիճակում՝ օրենսդրական փոփոխությունների անվան տակ պատժի ենթարկեցին օրենքը՝ ոստիկանների արյունոտ մահակով առաջին հարվածը հասցնելով 10-րդ հոդվածի 1-ին կետին:

## 2. Զենքի եւ զինամթերքի միքը

Քանի որ ԺՀԵՑ օրենքի նպատակը խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է, շրջանառության մեջ դրվեց զենքի եւ զինամթերքի միքը:

Իբրեւ թե ոստիկանության կողմից Ազատության հրապարակը «ազատագրելուց» հետո՝ նրա շրջակայքում հայտնաբերվել են 3 ատրճանակ, մի քանի նռնակ եւ փամփուշտներ, որոնց պիտանիությունը հիմնավորված է փորձաքննությամբ: Որոշակի քանակությամբ շինանյութ՝ փայտեր, երկաթե ձողեր (ամրան), որոնք, ըստ փորձաքննության, չեն հանդիսանում սարք զենք, մետաղական ոգնիներ, որոնք հանդիսանում են սարք զենք եւ այլն:

Կարծում եմ՝ շատերն են նայել տեսագրությունը, որտեղ պատկերավոր երեւում է, թե ինչպես են ոստիկանության աշխատակիցները հիշյալ ատրճանակները ձեռքերով, իբր, լիցքաթափում, սակայն լուծում են ատրճանակների պատկանելությունը պարզելու հարցը:

Պատահական չէ, որ համալիր փորձաքննություն նշանակելու որոշման մեջ փորձաքննության ներկայացված առեղծանակների եւ ողորկ մակերեւույթ ունեցող այլ առարկաների վրա պիտանի մատնահետքեր հայտնաբերելու եւ նրանց համապատասխանությունը պարզելու պահանջ ներկայացված չէ: Իսկ թե ինչու էին մատնահետք վերցնելու նպատակով մոտում ոստիկանության բաժիններ տարված հարյուրավոր քաղաքացիների ձեռքերը, երեւի էական չէ:

Ենթադրությունը մեկն է՝ զենքի ու զինամթերքի գոյությունն իրականությանը չհամապատասխանող, ոստիկանության կողմից կազմակերպված սադրիչ գործողություն է:

Իսկ եթե ոստիկանությանը հայտնի լիներ անգամ, որ որոշ անձանց մոտ առկա է զենք ու զինամթերք, որը կրում է ակնհայտ պայմաններում, ապա հարց է, թե ում դեմ էր դա ուղղված: Ինն օր շարունակ՝ ինը հուժկու երթ, տասնութ հուժկու հանրահավաք եւ շուրջօրյա նստացույց ներառող՝ օր օրի թափ առնող զանգվածային հրապարակային միջոցառման մասնակցած հարյուրհազարավոր քաղաքացիներից ոչ ոքի ձեռքին զենք չի եղել:

Նման դեպքերում ոստիկանությունը պարտավոր էր, ԺՀՆՑ օրենքի 8-րդ հոդվածի 2.4 կետի համաձայն, ՁՀՄ անցկացման վայրից հարկադրաբար դուրս բերել այն անձանց, որոնք կատարում են հակաօրինական արարք կամ խախտում են հասարակական կարգը:

Թող կասկած չունենան, որ այդպես վարվելու դեպքում, անկասկած, կարժանանային մեր աջակցությանը:

## 3. Մահտեսյանի փոխադրությունը

Զգարմանք, բայց Մարտի 1-ի ողբերգությունից ուղիղ 10 օր հետո, երբ, սկսած քրեական գործ հարուցելու մասին որոշումից՝ նախաքննության մարմնի կողմից խզմված ցանկացած փաստաթղթում անընդմեջ տրված էր մեր գործողությունների անօրինական եւ հանցավոր լինելու, իսկ ոստիկանների գործողությունների մասին մերկապարանոց գնահատականներ, հանկարծ նախաքննության մարմինը դիմում է (10.03.08թ. 18/65 գրությամբ), չգիտես ինչու, հատկապես փոխոստիկանապետ Մահտեսյանին, որպեսզի վերջինս հայտնի, թե ինչ նպատակ է ունեցել



Մարտի 1-ին Ազատության հրապարակում եւ հետո ոստիկանության կողմից իրականացված միջոցառումը եւ նման բաներ:

Պատասխանը ստացվել է 17 օր անց՝ 27.03.2008-ին N10/4-2-536 ծավալուն գրությամբ, որի բովանդակությունը ոչ միայն հետու է իրականությունից, այլեւ ցանկացած արտահայտություն ենթակա է բարոյական եւ իրավական վերլուծության՝ սկսած նրանից, որ Ազատության հրապարակը սահմանված է Թատերական հրապարակ: Սա այլ թեմա է, բայց, այնուամենայնիվ, կատարենք 2 դիտարկում:

1. Ըստ Մահտեսյանի՝ միջոցառման համար հիմք է հանդիսացել փետրվարի 29-ին ոստիկանության եւ ազգային անվտանգության ստացած օպերատիվ տեղեկությունն այն մասին, թե, իբր, մարտի 1-ին «ցուցարարներին պետք է բաժանվեին մեծ քանակությամբ մետաղյա ձողեր եւ փայտե մահակներ, ինչպես նաեւ հրազեն, նռնակներ եւ պայթուցիկ նյութեր, որպեսզի մարտի 1-ին մայրաքաղաքում ծավալվեին սադրիչ գործողություններ եւ զանգվածային անկարգություններ»: Խայտառակությունն այն չէ միայն, որ այս հիմքի ձեւակերպումը տեւել է 17 օր, այլ նաեւ այն, որ ինքն իրեն այդ միջոցառում ասածից 27 օր անց չի հարցնում, թե այդ կասկածանքով քանի անձի նկատմամբ է քրեական հետապնդումն արդյունք տվել: Ի դեպ, այդ միջոցառումը Մահտեսյանն անվանել է «հատուկ գործողություն», որը, սակայն, «Ոստիկանության մասին» օրենքով նախատեսված չէ:

2. Նկարագրելով ֆրանսիական դեսպանատան եւ քաղաքապետարանի շրջակայքում զարգացող իրադարձությունները՝ որոշակի ձեւակերպումների մեջ կա հետեւյալ միտքը, որ լարվածությունը մեղմացնելու համար ոստիկանությունը սկսեց բանակցել ցուցարարների ներկայացուցիչների հետ եւ առաջարկեց հանրահավաքը տեղափոխել կայարանամերձ հրապարակ, «Հանրապետական» մարզադաշտին հարակից տարածք եւ նույնիսկ Մատենադարան եւ բողոքում է, թե Նիկոլ Փաշինյանը չհամաձայնեց: Շատ էլ ճիշտ արեց: Նախ, եթե ֆրանսիացիների եւ այլոց աչքի առաջ 10 մարդ սպանվեց, ո՞րն է երաշխիքը, որ նշված տարածքներ տեղափոխվելու դեպքում 100-ը կամ 1000-ը չկին սպանվի:

Եւ որ ամենակարեւորն է, եթե դուք հանրահավաքի անցկացման վայրի տեղափոխման խնդիր եք դնում, ուրեմն ընդունում եք, որ դա կայացել է ինքնաբուխ՝ ոչ զանգվածային հրապարակային միջոցառումից՝

ԺՀԵՑ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով եւ օրինական է:

Բայց այդ դեպքում օրենքն է կանոնակարգում այն վայրերը, որտեղ հանրահավաք անցկացնելը չի թույլատրվում (հոդված 9), որոնց մեջ, սակայն, ֆրանսիական դեսպանատանը հարող տարածքն իր շրջակայքով՝ նախատեսված չէ:

Ի տարբերություն ոստիկանության ծառայության՝ Նիկոլ Փաշինյանն օրենքին տիրապետում է վաղուց եւ շատ լավ: Գիտի նաեւ, որ 5-րդ հոդվածի 3-րդ կետով «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք չունեն խոչընդոտելու սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող հրապարակային միջոցառումներին կամ միջամտելու դրանց»:

## 4. Քաղաքական պատվերով իրականացվող շինծու քրեական հետապնդումը խճճված է

Քաղաքական հայացքների եւ գործունեության համար շինծու քրեական հետապնդման ենթարկվածները պայմանականորեն բաժանվում են 3 խմբի՝ ըստ ժամանակագրության եւ կիրառվող ստանդարտների՝

1. Մինչեւ Մարտի 1-ի ողբերգական դեպքերը հետապնդվողներ.

Հետապնդման նպատակն օր օրի թափ առնող շարժումը կոտրելն էր՝ վախի մթնոլորտ սերմանելու նանապարհով: Սրանց մեջ արդեն կան հանիրավի դատապարտվածներ: Հուսիկ Բաղդասարյանին, օրինակ, տան խուզարկության ժամանակ նախօրոք կամավոր օրինական զենքի հետ հանձնած 16 փամփուշտների համար (ըստ կատալոգի՝ այդ փամփուշտները նախատեսված են հենց այդ զենքից կրակելու համար) փորձաքննությամբ «ապօրինի զինամթերք» ճանաչելուց հետո առավելագույն պատիժ են տվել՝ երեք տարի ազատազրկում: Վերջինս Ղարաբաղյան պատերազմի մասնակից է: Իսկ Պետրոս Մակեյանի, Աշոտ Ջաբարյանի եւ Շոթա Սաղաթելյանի դատավարության ընթացքից ակնհայտ դարձավ պատվիրատուների ստորության զերագույն աստիճանը:

2. Մարտի 1-ի լուսաբացից՝ նստացույցը ցրելուց անմիջապես հետո հետապնդվողներ:



3. Երեւանի քաղաքապետարանի մերձակայքում արյունալի դեպքերի «կազմակերպման» համար հետապնդվողներ:

Այս խումբը դեռեւս պահվում է պատանդի կարգավիճակում՝ նրանց պատժելու քաղաքական որոշման եւ ունեցած «ապացույցների» անհամապատասխանության պատճառով: «Ապացույցների» որոնումը շարունակվում է: Ես ներառված եմ երկրորդ խմբի մեջ, որի նկատմամբ քրեական հետապնդումը թեւակոխել է դատավարության փուլ: Այս խմբի նկատմամբ քրեական հետապնդումը մեկնարկել է ՔՕ-ի 225-րդ հոդվածով («Օրենքով սահմանված կարգի խախտմամբ հրապարակային միջոցառում կազմակերպել եւ անցկացնել») եւ 316-րդ հոդվածի 2-րդ («Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի եւ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրել») մասով նախատեսված արարք կատարելու կասկածանքով, եւ նույնիսկ մեղադրանք է առաջադրվել: Հետագայում դադարեցվել է՝ այս հոդվածներով կատարված հանցագործությունների կատարմանը մասնակցության չհիմնավորման հիմքով (իմ դեպքում՝ մարտի 27-ին): Սակայն անմիջապես կիրառվել է նոր ստանդարտ. համատարած առաջադրվել է նոր մեղադրանք 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով («Իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը...»): Ըստ գործի նյութերի, դիմադրության արժանացած երկու ոստիկանները (բերման արձանագրություն, զեկուցագրեր) ինձ բերման են ենթարկել Ազատության հրապարակից: Առաջադրված մեղադրանքը փոփոխելու եւ նոր մեղադրանք առաջադրելու (մարտի 27) որոշմամբ ես պարզվել է, որ, իբր, ոստիկաններին դիմադրել եմ Ազատության հրապարակում: Նույնն է պարզվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման մեջ: Սա այն դեպքում, որ իրականում իմ բոլոր ցուցմունքներում նշված է, որ ինձ բերման են ենթարկել Ազատության հրապարակից բավականին հեռու՝ այլ տեղից: Եւ հանկարծ տեղի է ունենում հրաշք. մի քանի օր հետո ինձ ներկայացված մեղադրական եզրակացության մեջ նշված է՝ ինձ բերման ենթարկելու տեղը համապատասխանում է իրականությանը: Առեղծվածը պարզելու նպատակով՝ մինչեւ դատավարության սկսվելը ես դատարանին միջնորդություն ուղարկեցի՝ իմ պաշտպանության իրավունքի իրականացման անհրաժեշտությունից ելնելով ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ

Ա. Մահտեսյանին որպես վկա դատաքննությանը մասնակից դարձնելու պահանջով: Պատասխանն ապշեցուցիչ է՝ «...միջնորդությունը դուրս է իմ մեղադրանքի ծավալից» եւ մերժված: Վստահաբար ասում եմ, որ եթե ես իմ ցանկությամբ գրած լինեի, որ ինձ բերման են ենթարկել, ասենք, Համզաչիմանից, այդպես էլ կհաստատվեր՝ որման հնոու Ազատության հրապարակից, այնման ավելի լավ: Սա նշանակում է, որ մեր «կատարած» գործողություններ որեւէ կապ չունեն Ազատության հրապարակի, քաղաքական հայացքների եւ քաղաքական գործունեության հետ, որ մենք շարքային ոստիկանի դիմադրող ենք: Սա «ապացուցված» է նաեւ այս խմբի որոշ անդամների ավարտված դատավարության արդյունքներով: Եթե մեղադրյալն ընդունել է (հավանաբար՝ ստիպված է եղել), որ ինքը «շարքային ոստիկանի դիմադրող» է, դատարանի դահլիճից պայմանականորեն ազատ է արձակվել, եթե՝ ոչ, ազատազրկվել է:

Դատավարության ընթացքում ինձ շարքային դիմադրող ներկայացնելու մեղադրողի եւ դատարանի ջանքերն արդյունք չտվեցին: Իրենց պոտենցիալ «ամբաստանյալ» պատկերացնող ներկաների արդարացի վրդովմունքի պայմաններում դատարանը որոշեց հետաձգել դեպի Ազատության հրապարակ տանող միջնորդությունս կանխորոշված մերժման հրապարակումը: Կասկածից վեր է, որ մեզանից յուրաքանչյուրին քաղաքական հայացքների եւ գործունեության համար պատժելու եւ համաժողովրդական շարժումը վիժեցնելու նպատակով են ենթարկում շինծու քրեական հետապնդման:

Քրեական հետապնդման ենթարկելու հիմքերը հորինված են, ընթացքը՝ հակասություններով լի: Իմ գործի մասով ես դա կփորձեմ ապացուցել դատավարության ընթացքում: Եթե դատաքննությունը շարունակվի նույն տրամաբանությամբ, այսինքն՝ մեղադրողը եւ դատարանը փոխհամաձայնեցված կփորձեն ինձ վերագրվող արարքը չդիտարկել որպես Ազատության հրապարակում ծավալված իրադարձությունների հետեւանք, ապա նույնիսկ այն դեպքում, երբ դատաքննությամբ ձեռք բերված ապացույցներով մեղադրող դատախազի մոտ ներքին համոզմունք կձեւավորվի, եւ նա դատարանին կմիջնորդի կայացնելու արդարացման վճիռ, միեւնույն է, ես կմիջնորդեմ վերսկսել դատաքննությունը: Հենց դատաքննությամբ է պետք պարզել մեր եւ ոստիկանության գործողությունների օրինականության հարցը, սա մկների հանձնաժողովի խելքի բանը չէ:

## ԿԱՂԱՆԱԽՈՒՅՑ N[5]

Այս խուցն ունի 15 մ² մակերես, որից 2-ը սանիտարական հանգույցներն են, լիարժեք մարդահասակից քիչ բարձր յուղաներկով ներկված պատեր, տախտակամած հատակ: Յուղաներկի բաժանարար գծով անցնող երեւակայական հարթությունը պայմանականորեն անվանում են «շափուսահման», որից վեր, իբր, ազատությունն է, ուր կալանավորը չի կարող լինել:

Խցում ապրում ենք չորս հոգով՝ երեք Դավիթ եւ մեկ Արմեն: Բարեբախտաբար, Արմեն չի նշանակում Դավիթ, եւ դա իմ մխիթարությունն է, այլապես Դավիթ կնշանակեր կալանավոր: Խուցն ունի նկուղային հարկ՝ ընդամենը 20 սմ բարձրությամբ, ուր ապրում են մեզ անհայտ թվով խավարասերներ՝ ապահովելով ֆաունայի բազմազանությունն անազատության պայմաններում: Հարգանքի արժանի է: Նրանք, ունենալով ազատության ավելի մեծ աստիճան (համեմատաբար), տախտակամածի սանտիմետրանոց ճաքերով ազատ ելումուտ են անում խցի մեր հարկաբաժին: Նրանց հետ մենք ապրում ենք հաշտ ու համերաշխ՝ առանց դիմադրելու ու բռնություն գործադրելու, սրանով իսկ արտահայտած լինելով լիբերալ լինելու մեր հաստատակամությունը:

Նրանց վարքագիծը զգուշավոր է, եւ երբեք իրենց թույլ չեն տալիս բարձրանալ պատերն ի վեր: Մահճակալների հոտոցից անգամ, որի պակաս այստեղ չի զգացվում, արագ ետ են քաշվում իրենց հարկաբաժին:

Ահա այստեղից՝ մայիսի 15-ին ինձ տարան դատարան, որտեղ շարունակվելու էր ապրիլի 28-ին կիսատ մնացած դատաքննությունը: Սա

[5] *«Հարրորդ իշխանություն», 21.05.2008թ.:*

էլ՝ իր հերթին, հետաձգվեց մինչև հունիսի 2-ը, բայց, այնուամենայնիվ, բոլոր ներկաներին պարզ դարձավ, որ ինձ մեղսագրվող արարքը հիմնավորող որևէ իրավական նշանակության ապացույց գոյություն չունի: Մեղադրող կողմի ներկայացրած ապացույցները ոչ միայն շինծու ու հորինված են, այլեւ օրենքից դուրս են: Քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված մրցակցային դաշտում, ֆուտբոլի լեզվով ասած, մեղադրող կողմը պաշտպանության կողմին տանուլ է տալիս 0:5 հաշվով: Իսկ եթե հաշվի առնենք, որ մեր առած մի շարք միջնորդություններ, որոնք ունեն իմ կողմից հանցագործության հատկանիշներ պարունակող որևէ արարք կատարած լինելը բացառող ուղղակի ապացուցողական նշանակություն, որոնք, սակայն, դատավորի լիազորությունների չարաշահմամբ, առայժմ չեն բավարարվում, իսկ մեղադրանքի կողմը չունի եւ չի կարող ունենալ հակառակ նշանակության որեւէ միջնորդություն, ապա վերջնական պատկերն ավելի է հստականում: Հաշիվը կանխատեսելի է՝ 0:7:

Ես մեղադրանքը պաշտպանող դատախազի հետ որեւէ խնդիր չունեմ: Ավելին, նրա հետ պայմանավորվածություն ունեմ առ այն, որ ինքը միանշանակ առաջնորդվելու է դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների ազդեցությամբ ձեւավորված ներքին համոզմունքով, ինչպես նախատեսված է օրենքով: Այս պայմանավորվածությունը ձեռք ենք բերել ապրիլի 29-ին, «Կարդաշեն» ՔԿՀ-ում տեղի ունեցած հանդիպման ժամանակ, որին նա մասնակցում էր սպառնալիքի տարրեր պարունակող որոշակի ակնարկներ փոխանցելու լիազորությամբ: Սակայն, արդյունքում, մեր զրույցը փոխակերպվեց անկեղծ ու մարդկային փոխհարաբերությունների: Ես նույնիսկ վստահ եմ՝ հետաձգված դատաքննության վերջնամասում, ներքին համոզմունքից դրդված, նա պատրաստ էր քրեական հետապնդումը դադարեցնելու անհրաժեշտության մասին հայտարարությամբ հանդես գալ: Բայց կամ համարձակությունը չբավարարեց, կամ չհասցրեց. դատավորը անակնկալ հեռացավ:

Դատավորի հետ էլ ունեմ թարմ ու կոնկրետ պայմանավորվածություն: Իմ գործը քննելիս եւ վճիռ կայացնելիս նա միայն ու միայն առաջնորդվելու է համապատասխան օրենսդրությամբ՝ չենթարկվելով որեւէ սուբյեկտիվ ազդեցության: Իսկ պայմանավորվածությունը ձեռք բերվեց հետեւյալ պայմաններում:



Դատավորը հրահանգեց դահլիճից հանել առջեւի շարքում նստած մի գեղեցիկ օրիորդի՝ անչափահաս լինելու պատճառաբանությամբ: Ես միջամտեցի՝ ասելով, որ նա իմ աղջիկն է: Դատավորը հիմնավորեց, թե մարդկայնորեն հասկանում է, բայց դա օրենքի պահանջն է: Ես հակադարձեցի, որ, հետեւաբար, բոլոր հարցերին պետք է լուծում տալ նույն սկզբունքով: Նա համաձայնեց, եւ մենք պայմանավորվեցինք:

Սակայն ես ամենեւին զարմացած չեմ, որ այսքանից հետո, հակառակ քրեադատավարական օրենսդրության տրամաբանության, պետական իշխանության ինքնիրավ գործողությունների եւ չարաշահումների հետեւանքով, քաղաքական հայացքներիս ու գործունեությանս համար շարունակում եմ մնալ ազատության մեջ:

Բանն այն է, որ մեր պայմանավորվածությունները դեռ չեն սկսել գործել: Դրանք չեն կարող գործել, քանի դեռ Սահմանադրությամբ անկախ հռչակված դատական իշխանությունը գտնվում է գործադիր եւ օրենսդիր իշխանությունը բռնազավթած ուժի բացարձակ հսկողության ու ազդեցության տակ:

Եւ պատահական չէ, որ «Կենտրոն» հեռուստաընկերության Պետրոսի հյուր անկեղծ հանրապետական Սամվել Նիկոյանն այս թեմաներով խոսելիս անընդհատ գործածում էր «դատաիրավական համակարգ» ձեւակերպումը: Նա անկեղծորեն արձանագրում է փաստը:

Եւ այսպես, Մարտի 1-ի հայտնի քրեական գործից անջատված եւ հատ-հատ դատարաններ ուղարկվող անհատականացված գործերով վճիռները նախօրոք կայացված են: Դա ուրվագծվում է ՀՀ «դատաիրավական համակարգի» պատասխանատու Աղվան Հովսեփյանի՝ մեղադրական եզրակացությունները հաստատող երկարաշունչ ու գեղարվեստական ստորագրության մեջ: Տեսնես՝ սույն պարոնը մի օր կհասկանա, որ մարդը, լավ՝ գոնե հայ մարդը, ավելի մեծ արժեք է, քան իրենց մեսրոպատառ հոգածությամբ վիրտուալ մեղադրանքը: Տեսնես՝ հաջորդ նիստին կգա՞ իր հաստատած վճիռ-մեղադրանքը փայփայելու...

Ահա, առայժմ սրանով կաշկանդված լինելով, իմ մրցակից մեղադրող դատախազն ու մրցակցային դաշտ «ապահովող» դատավորը՝ համատեղ ջանքերով, պատանդի իմ կարգավիճակը երկարաձգեցին եւս 18 օրով...

Խուց վերադարձա դատարանի դահլիճից՝ ընկերոջս որդիներին կենդանաշոկի կիրառությամբ դուրս հանելու հետեւանքով Մարտի 1-ի ողբերգական դեպքերը վերհիշելուց ունեցած ապրումների ազդեցության տակ: Բարձրացա ու նստեցի երկրորդ հարկի իմ մահճակալին: Հանկարծ ինչ տեսնեմ. սահմանից վեր՝ ճնշ դեմ-դիմաց, պատին մի մեծ ու փարթամ խավարասեր: Հանեցի հողաթափս եւ փորձեցի դրանով վերջինիս ուղղորդել դեպի իր տիրույթ: ...Չհասկացա՝ ինչպես առաջվեց, բայց արդյունքում պատին նրանից ընդամենը թաց տեղ մնաց: Վատ զգացի. պատճառը մեղքն էր, թե զզվանքը... Տղաները տարակուսած իրար էին նայում, եւ Արմենը, որ Դավիթ չէ, ասաց.

– Զափուսահմանը անցել էր:

Քաղրանտարկյալ Դավիթ Մաթեւոսյան

## ՄԵՆՔ ԺՊՏՈՒՄ ԵՆՔ[6]

Նիկոլ Փաշինյանը զանգահարեց, եւ պայմանավորվեցինք հանդիպել. 2006-ի գարնանն էր:

Հանդիպեցինք Օղակաձեւ այգում: Մենք չորսով էինք. մեր երկուսից բացի, ներկա էին Նիկոլի որդին՝ Աշոտը, եւ իմ կրտսեր որդին՝ Ղեւոնը: Երեխաների մասնակցությունը պայմանավորվածությունից դուրս էր՝ զուգադիպություն: Մեր 6–8 տարեկան որդիների համատեղ խաղի ֆոնին, Նիկոլի առաջարկությամբ, քննարկում էինք Հայաստանի տվյալ վիճակը չհանդուրժելու եւ այն փոխելուն ուղղված քաղաքական պայքար ծավալելու անհրաժեշտությունը:

Պայքարի մոդելն ակնհայտ էր՝ փոքր մի բոցից մեծ, հզոր, հուժկու խարույկի ձեւավորումն է, որը պետք է արվեր համբերատարությամբ, քայլ առ քայլ, առանց հիասթափվելու:

Կայացան այլ հանդիպումներ, մշակվեցին առաջնահերթ ոլորտները բնութագրող եւ նրանցում առկա վիճակը հաղթահարելու՝ բարեփոխելու ճանապարհները ուղենշող, ծրագրային քաղաքական մոտեցումներ, այդ թվում՝ պայքարի խորհուրդը՝ առաջինը լինելու մղումը վերջինը լինելու պատրաստակամությամբ փոխարինելը: Սրանց տակ դրվեցին ստորագրություններ:

Պետրոս Մակեյանի հետ քննարկեցինք ու գտանք պայքարի մասնակից մեր սերնդակիցների դերը այդ պայքարի մոդելի մեջ՝ լուցկու այրվող մի հատիկ: Չգիտեմ՝ դեռ որքան է մնացել մեզ այրվելու, բայց որ ածխանալու ենք մինչեւ վերջ, կասկածից վեր է:

[6] *«Հայկական ժամանակ», 31.05.2008թ.:*

Ինչևէ, սկսվեց չոր ու բարակ, դյուրավառ շյուղերի կուտակման գործընթացը, որը կրոնկվեր լուցկու մի հատիկի արձակած ջերմությունից, եւ աստիճանաբար ու հերթականությամբ կսկսեին այրվել չոր ու բարակ, չոր ու միջին, չոր ու թաց՝ բարակ ու հաստ ճյուղերը. խնդիրն էր ունենալ մի վինակ՝ այնպիսի հզոր մի կրակ, որի ջերմությունից կբռնկվեին անգամ հաստ ու թաց կոճղերն ու գերանները:

Հայաստանի ապագայի մոդելի ճշգրիտ ձեւակերպումը պարզ ու հասկանալի լեզվով տվեց առաջին չոր ու դյուրավառ շյուղերից մեկը՝ Մհերը: Ըստ նրա, կարելի է պետությունը պատկերացնել մարդու կերպով ու նմանությամբ. ասենք՝ Հայաստանը՝ Հովհաննես Թումանյանի (եւ ոչ միայն) կերպով ու նմանությամբ:

Ճանապարհը, իհարկե, բարդ է, բայց կանխատեսելի: Նախորդ տարվա մայիսի 9-ին՝ ԱԺ ընտրությունների նախօրյակին, Նալբանդյան փողոցի վրա՝ ԱԱԾ-ի մոտ, դարձյալ մթության հողի տակ (փողոցային լուսավորությունը նախապես անջատել էին) Ռոբերտ Քոչարյանի կերպով ու նմանությամբ Հայաստանի՝ սափրագլխի կերպով ու նմանությամբ «իրավակարգի զինվորները» հարձակվեցին խաղաղ երթի մասնակիցների վրա եւ փորձեցին ցույցը բռնությամբ ցրել:

Ցուցարարներն անկոտրում էին: Երկու անգամ ղեմիս զազ փչելուց հետո՝ մթագնած գիտակցությամբ ու շղթայված ձեռքերով ինձ տեղափոխել էին ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն: Գիտակցությունս դանդաղ վերականգնվում էր: Բերանիս խոռոչն ու լեզուս լրիվ ջրազրկված էին, ձախ աչքս՝ ուռած ու կիսափակ: Աչքատակս բացված՝ այտոսկրիս երեւալու աստիճան, արյունոտված մարմինս տնքում էր մահակների ու սապոգների անկանոն հարվածների հետեւանքով առաջացած ցավից, բաճկոնս պատառոտված էր: Պահանջեցի արձակել ձեռնաշղթաները եւ լվացվելու հնարավորություն տալ: Այդ սափրագլուխը հոխորտաց, որ լռեմ, հակառակ դեպքում իրեն հանձնարարված է ինձ գլխից գնդակահարել: Ես ժպտացի եւ հայտնեցի գնդակահարվելու պատրաստակամությունս: Նա պարբերաբար հեռախոսազանգեր էր ստանում, եւ զանգ առ զանգ նրա վերաբերմունքն իմ հանդեպ մեղմանում էր: Ես շարունակում էի ժպտալ, եւ շուտով ինձ լվացվելու հնարավորություն տվեցին: Սափրագլուխը պատասխանեց հերթական զանգին, եւ լսափողից ինձ լսելի էին ցուցարարների՝ ինձ ազատ արձակելու պահանջվանկարկումները:



Հոգիս փառավորվում էր, անրնդհատ ժպտում էի, եւ գնդակահարել սպառնացողն ինձ հետ հարգանքով էր խոսում:

Կրակը բռնկվել էր, եւ ես ազատ էի:

Մի քանի օրից հանդիպեցի Մհերին, դեմքն ամբողջովին այտուցված էր, աչքերը՝ կիսափակ, բայց նա էլ էր ժպտում: Ես գրկեցի Թումանյանի կերպով ու նմանությամբ Հայաստանի առաջին քաղաքացուն:

Լեւոն Տեր-Պետրոսյանի վերադարձը քաղաքականություն՝ հզոր շունչ հաղորդեց կրակին:

Հոկտեմբերի 23-ին ՀՀ ոստիկանությունը, հերթական անգամ շարաշահելով իր լիազորությունները, կատարեց ապօրինի հանձնարարություն, եւ խաղաղ, առանց զենքի, ոչ զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցներիս բռնությամբ տեղափոխեցին Կենտրոնի բաժին:

Ինձ առաջինն էին խցկել մեքենա, որի պատուհանից տեսանելի էր այն դրվագը, թե ինչպես են վարվում Նիկոլի հետ: Փակված լինելով՝ ես անզոր էի որեւէ կերպ օգտակար լինել նրան:

Նիկոլին ծեծում էին մի քանի հոգով, նպատակադրված, առանձին դաժանությամբ, իսկ նա ժպտում էր ինձ ծանոթ ժպիտով:

Միանշանակ ճշմարիտ է Մյասնիկյանի արձանի մոտից՝ երկրի հակառակ կողմով Ազատության հրապարակ վերադառնալու որոշումը:

Լեւոն Տեր-Պետրոսյանի մուտքը ոստիկանություն եւ հայտարարությունը, թե ինքը դուրս կգա ոստիկանությունից միայն ապօրինի անազատության մեջ պահվողներիս ուղեկցությամբ, սառը ցնցուղ էր իշխանությունների համար:

Մենք ազատ էինք: Թեւեւ գիշեր էր ու ցուրտ, բայց հայրուրավոր մարդիկ մեզ ոգեւորությամբ դիմավորեցին ոստիկանության դիմաց: Հարեւան բարձրահարկ շենքի բնակիչները, որոնց գիշերային հանգիստը խանգարվել էր մեզ սպասողների բացականչություններից, վերջիններիս հրավիրել էին թույլ խմելու ու տաքանալու: Մեզ պատշգամբներից ողջունում էին ձեռքերի թափահարումներով:

Կրակը թեժանում էր:

Խոր աշնանը որոշակի առաքելությամբ հանդիպեցի իմ վաղեմի ընկերներից մեկին, որն այլեւս բարիկադների հակառակ կողմում էր: Նա,

հավանաբար հենց այնպես՝ մի բան խոսելու համար, ասաց, թե արժի՞ արդյոք մի բանով զբաղվել, որի համար ինչ-որ սերժանտներ կարող են հարվածել եւ մարմնական վնասվածքներ հասցնել: Ես ժպտացի: Ժպիտս նրան անհասկանալի եւ անլսելի պատասխան էր պարունակում. Սափրագլխի էությամբ ոստիկանի յուրաքանչյուր ապօրինի հարվածից մենք չենք վհատվում, ինչից էլ տասնյակ մարդկանց մոտ ջարդվում է վախի ու անտարբերության սառույցը, եւ հետեւաբար՝ մենք ժպտում ենք:

Փետրվարի վերջին տասնօրյակի խարույկը թեժ ու հուժկու էր: Ազատության ու ճշմարտության ջերմությունը տարածվեց ամենուր, Քոչարյանի կերպով ու նմանությամբ Հայաստանի վարագույրներն այրվեցին, վախի ու անտարբերության սառույցը հալվեց:

Եւ սրանք գործադրեցին գորշ Հայաստան պահպանելու միակ ու վերջին հուսահատ միջոցը՝ փորձեցին հուժկու խարույկը մարել արյունով:

Իսկ հիմա՝ նաեւ այդ թափած արյան պատասխանատվությունից խուսափելու նպատակով, շինծու մեղադրանքներով մեզ պահում են անազատության մեջ:

Իսկ մենք շարունակում ենք ժպտալ, որովհետեւ վստահ ենք՝ յուրաքանչյուր օրվա ընթացքում յուրաքանչյուրիս շրջապատում եւ այլուր նորանոր մարդիկ են տրամադրվում Քոչարյանի կերպով ու նմանությամբ Հայաստան չհանդուրժելու վճռականությամբ: Իսկ այն, որ շարժումն ամենալայն տարածումն է գտել հատկապես երիտասարդության շրջանում, հաղթանակ է:

Եւ վերջում՝ թեեւ վստահ եմ՝ մեղադրանքը պաշտպանող դատախազը պիտի առարկի, եւ դատավորի հետ համերաշխ պիտի նեղստեն, թե ասածս դուրս է ինձ ներկայացված մեղադրանքի ծավալից, բայց սա ընդամենը մեջբերում է իրական գործից:

Հարց.

– Ինչպիսի՞ մասնակցություն եմ ունեցել 2008-ի նախագահական ընտրություններին նախորդող նախընտրական փուլին, բուն ընտրություններին եւ ինչ հարաբերությունների մեջ եմ գտնվել Նիկոլ Փաշինյանի հետ:

Պատասխան.

– Վերջինիս վերաբերվում եմ հարգանքով, համարում եմ ամենասկզբունքայինն ու անկեղծը:

Շնորհավոր ծնունդդ եւ բարի վերադարձ:

## ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ[7]

Այսօր Հայաստանում արյունով վերարտադրված, այսպես կոչված, իշխանությունների ինքնիրավ գործողությունների եւ չարաշահումների արդյունքում, բազմաթիվ մարդիկ իրենց քաղաքական հայացքների եւ գործունեության համար ենթարկվում են շինծու քրեական հետապնդումների կամ դրանից խուսափելու նպատակով դիմել են փախուստի: Նրանք հիմնականում մարդիկ են, որոնք Հայաստանի անկախության հաստատման եւ արտաքին վտանգից այն պաշտպանելու գործին նվիրվել են անմնացորդ՝ շատ հաճախ վտանգելով իրենց կյանքը, մարդիկ, որոնց համար մարդը բարձրագույն արժեք է, իսկ նրա սահմանադրական իրավունքների ու ազատությունների միջավայրի ձեւավորումը՝ կյանքի նպատակ: Հենց այդ նպատակի իրականացմանն է կոչված այս համաժողովրդական շարժումը:

Այս մարդկանց հետապնդելիս, նախաքննությունն իրականացվել եւ իրականացվում է սուբյեկտիվ, միակողմանի եւ թերի: Նույն կերպ են ընթանում դատաքննությունները, ուր դատախազները ու դատավորները համերաշխ ու պարտանանաչ կատարում են միակ վճիռ կայացնելու լիազորություն ունեցող արտակարգ դատարանի հանձնարարությունները:

Ես անձնական առումով որեւէ խնդիր չունեմ մեղադրանքը պաշտպանող դատախազ Աշոտ Նաղդյանի կամ դատավոր Երեմ Եսոյանի հետ, ավելին, մենք պայքարում ենք նաեւ նրանց քաղաքացիական ու մասնագիտական ազատությունների ու իրավունքների համար: Իրենք էլ

[7] *«Չորրորդ իշխանություն», 17.06.2008թ.:*

են պարտավոր պայքարել դրա համար եւ այդ դեպքում նույնիսկ հարգանքի կարժանանան: Պարտավոր են հենց հանուն իրենց գավակների, որ ինձ նման որեւէ մեկը նրանց այլեւս չասի՝ էս ինչ արհեստով եք ձեր երեխաներին պահում..., եւ որ այս դահլիճը վերածվի իրավական մտքի մրցակցության վայրի, որ այստեղ պարզ թվաբանությունն իր տեղը զիջի բարոյականությանն ու տրամաբանությանը, որ դատախազը մեղադրանքը պաշտպանելիս ղեկավարվի միայն օրենքի պահանջով՝ դատաքննության ընթացքում հետազոտված, թույլատրելի ապացույցների վրա հենված իր ներքին համոզմամբ: Իսկ դատավորի նկատմամբ բացառվեն կողմնակի ներգործություններ, եւ միայն օրենքին ենթարկվելով, իրավունքը պաշտպանելով, իր ներքին համոզմամբ իրականացնի արդարադատություն՝ կայացնի օրինական, հիմնավորված եւ պատճառաբանված դատավճիռ:

Բայց քանի դեռ այդպես չէ, եւ այստեղ հրապարակվելիք դատավճիռը կայացվել է ուրիշ տեղ եւ ուրիշի կողմից, ես խնդրանքով դիմում եմ պարոն Եսայանին. ինչ էլ որ ընթերցելու լինեք, թեկուզ արդարացման վճիռ, խնդրում եմ՝ չընթերցել դատավճռի այն մասը, ուր ցույց է տրվում, թե վճիռը կայացվում է Հայաստանի Հանրապետության անունից: Շնորհակալություն:

## ՊԱՏԱՍԽԱՆ «ԱՂՎԱՆՏԱՆԻՆ»[8]

Այն բանից հետո, երբ դատաքննության ընթացքում այլեւս չախչախված դատախազությունը «արտակարգ դատարանի» վճիռը Կենտրոնի դատարանի բերանով հրապարակելուց երկու օր առաջ իր կայքէջով հաղորդագրություն տարածեց, որ ես նախաքննության ընթացքում ընդունել եմ իմ մեղքը, ինձ համար այլեւս պարզ էր, որ, նախ, պատիժը դահլիճի երեւակայությունից դուրս է լինելու, եւ հետո՝ սա է լինելու Աժ նորաթռչ ժամանակավոր հանձնաժողովի, իշխանության բարձրախոսների՝ կաղապարված հանրապետականներ շարմազանովների, նիկոյանների եւ այլոց հիմնավորումը, որ ես քաղբանտարկյալ չեմ: Հա, իմիջիայլոց, Զոհրաբյան Նառային մոռացա:

Եւ որովհետեւ վերջիններիս համար իրավաքաղաքական պարզաբանումները դժվարընկալելի են, հայցելով ընթեցողների ներողամտությունը, պարզաբանումը կատարում եմ տպավորիչ եւ նրանց մատչելի մի համեմատությամբ:

Պատկերացրեք մի վինակ, երբ ընտանիքում եւ շրջապատում հարգված, առաքինի ու բարոյական տղամարդը հայտնվել է երկրնտրանքի առջեւ: Երկու ընկերուհիների ուղեկցությամբ նրան է մոտեցել թեթեւաբարո մի կին եւ առաջարկել կամ իրեն վճարել 100 դոլար, կամ էլ, հակառակ դեպքում, ինքը կպատռի զգեստը եւ այլն, կգնա ոստիկանություն եւ ընկերուհիների վկայությամբ կհայտնի, թե, իբր, այդ տղամարդը փորձել է իրեն բռնաբարել: Անհաւ այդ տղամարդը վճարում է 100

[8] *«Հայկական ժամանակ», 18.06.2008թ.:*

դոլարն ու դրա մասին հետագայում տեղյակ է պահում կնոջն ու շրջապատին, թե բա չեմ ասի՝ շաոից եմ պրծել:

Մնում է ավանդական մատաղը:

Եթե նախաքննության ընթացքում չասեի, որ, լինելով իմ նկատմամբ կիրառված գազի ազդեցության տակ, չեմ հիշում, բայց հնարավոր է, որ ինձ բերման պահանջ ներկայացրած ոստիկաններին հրել եմ, ու եթե այդպես է, այդ մասով ընդունում եմ մեղքս, ապա դատախազությունը քրեական հետապնդումը շարունակում էր 5-ից 10 տարի ազատազրկում նախատեսող 316 հոդվածի 2-րդ մասով, գործին կարում էր, իբր, իմ գործողության արդյունքում ոստիկանի ստացած մարմնական վնասվածքը հաստատող դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որի պարագայում անհնարին է դառնում որեէ բան ապացուցելը, հատկապես այն դեպքում, երբ քրեական հետապնդումը պայմանավորված է քաղաքական հայացքներով ու գործունեությամբ: Պաշտպանական այս հնարքի օգնությամբ ես հայտնվեցի անհամեմատ շահեկան վիճակում: Հիմա ընդհանրացնենք զուգահեռների համապատասխանությունները:

Հայոց դոլարը համապատասխանում է 316 հոդվածի 1-ին մասով մեղքն ընդունելուն, բռնաբարության փորձի մասին վկայությունը 5–10 տարի ազատազրկում նախատեսող 316 հոդվածի 2-րդ մասն է, թեթեւաբարո կինը՝ դատախազությունը, երկու ընկերուհիները՝ գործով վկա ոստիկանները, շաոի մեջ հայտնված տղամարդը, որ գերադասեց վնարել 100 դոլարը՝ ես եմ. մնում է այստեղից դուրս գամ, որ մատաղ անեմ:

Թեեւ այս զուգահեռն արտոնագրված է, այնուամենայնիվ՝ ես այն անվնաս օգտագործելու բույլատրություն եմ տալիս գլխավոր դատախազությանը, Մարտի 1-ի Աժ նորաթուխ ժամանակավոր հանձնաժողովին, Նիկոյանին, Շարմազանովին եւ «Ազատություն» ռադիոկայանին:

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ[9]

Եթե պատահի այնպես, որ ծերության դուռը բախող, սիբիրներում անհետ կորած լինելու պատճառով հովիվ պապին չտեսած հայ հովիվը մի օր շատ կարոտի իր ջահելությունը ու, պառավի փնթփնթոցներն արհամարհելով, հոտն առնի ու ֆշի սարն ի վեր՝ բարձր-բարձր՝ դեպի սահմանագիծ, կհասնի վաղուց կարոտած հարազատ վայրեր, որոնք հիմա վերածվել են մարդկային ձայնի իսպառ բացակայության, անհոգի լռության գոտիների, եւ որոնց գոյության մասին անտեղյակ է նույնիսկ տարածաշրջանի ամենամարտունակ հայկական փառապանծ բանակը:

Ու նստի ծերացող հովիվն իր ջահելության ժայռակատարին, նայի երկար-երկար, մտաբերի անցած-գնացած օրերը, հերթով վերհիշի նախկին գործընկերներին ու իր կամքից անկախ բարձրաձայն վերարտադրի հոգեհարազատ մի դրվագ. «Հեյ-հեյ, Մուստաֆա, զգույշ մնա, տարածքում գայլեր են երեւացել»: Ու երգեցիկ ձայնը նեղքի լռությունը՝ միախառնվելով ալպիական բազմատեսակ ծաղիկների անտեր բույրին, գնա բեկվի, կիրճերում մի շրջան տա, վերադառնա որպես արձագանք, լսելի դառնա հովվին ու էլի գնա հաջորդ շրջանը կատարելու: Իսկ ինքը մտնի գործընկերոջ դերի մեջ ու խաղ ասելով պատասխանի արձագանքին. «Սաղ-օլ գարդաշ...», եւ սա էլ գնա նույն ճամփով՝ կատարելու նույն շրջանը: Ու մինչ այդ խոսքերի բույրաթաթախ արձագանքները լամինար հոսքերով կհետապնդեն միմյանց, կբեկբեկվեն ժայռածերպերից, կնյութավորվեն, բեկյալ շրջաններ կտան տարածության մեջ ու

[9] *«Հայկական ժամանակ», 28.07.2008թ.:*

կմարեն՝ այդպես էլ միմյանց չհանդիպելով, հանկարծ ու, Աստված մի արասցե, նրանք լսելի կդառնան ոստիկանության կամ ԿԳԲ-ի տեղական կառույցի ղեկավարի հովանավորչությամբ այս կողմերում որսորդությամբ զբաղվող, այդ օրը ձախողված, պապի փեշակը մնջը պահող, 37-ականների ստուկաչի թոռանը: Սա էլ օրվա ձախորդության ինքնարդարացում փնտրելու մղումով որոշի, թե հենց երկխոսությունը որսատեղը հարամեց, գնա ու հայտնի՝ ուր որ հարկն է...

Հաջորդ օրը բոլոր հեռուստաալիքները, «Հ1»-ի դիրիժորությամբ, ձեն ձենի տված կազդարարեն. «Գոռիկ Գուրգենիչի ղեկավարած կանտորան շպիոն է բռնել, եւ նա հիմա նստած է Բոջոլյանի կողքին»: Իսկ հիշում եմ, չէ՞, թե ընդդիմությունը ոչ վաղ անցյալում ոնց էր զրպարտում այդ ծառայությանը՝ ասելով, թե, իբր, նա զբաղված է Ազատության հրապարակի ցուցարարների շրջանում սադրանքներ կազմակերպելով (դեռեւս 2 սադրիչ աշխատակից էլ բռնել էին որպես իրեղեն ապացույց): Ու այս երկիրը չի կարգավորվի, քանի դեռ Սահակյան Գալուստի անեռնագ՝ Աժ հավերժ պատգամավոր Բուռնաշի առաջարկությունը կյանքի չի կոչվել, եւ դրանց մի մասին Հայաստանից չեն վտարել:

Բարեբախտաբար, Սիբիրը մեր կենսատարածքից դուրս է: Բայց մինչեւ «Սիբիրը որպես ամսոռավայր համատեղ օգտագործելու մասին» հայ-ռուսական միջպետական համաձայնագրի ստորագրումն ու Աժ-ի կողմից վավերացումը, ուզում եմ մի երկու հարց ուղղել պաշտպանության նախկին, ամենաերկարակյաց նախարար Սերժ Սարգսյանին, գործող նախարար Սկյուռն Օհանյանին եւ գլխավոր սպայակույտի պետ Յուրի Խաչատուրովին:

Ինչպես պատահեց, որ Խաչիկ գյուղի զորամիավորման ռազրորկան ցրելու նպատակով հրամանատարի կրակոցներից ահաբեկված չորս քաղաքացիները խունապահար փախան, մոլորվեցին ու մնենայով հայտնվեցին Նախիջեւանի տարածքում:

Իսկ դա ինչ բաց ճանապարհ էր, ինչու էր բաց, ինչու մի արգելափակոց, մի ցուցանակ, մի զինվոր, մի դիմհար կամ, ծայրահեղ դեպքում, մի երկու ական չկար այդ ճանապարհին: Բա որ մի օր լուսաբացին Ահմեդն ու Մահմեդը, իրանական նարկոտիկի ազդեցության տակ հենց այնպես՝ «կայֆի համար», տանկով մտնեին Խաչիկ գյուղ, մի շրջան կատարեին ու վերադառնային:



Նախիջեւանում էլ դրել են ու երկու ամիս է՝ այդ չորս անտեր քաղաքացուց դիվերսանտ են կերտում:

Այդ նույն Նախիջեւանում 90-ականների սկզբին՝ հայ-ադրբեջանական հակամարտության պատերազմական փուլի սկզբնամասում երկիշխանություն էր: Պաշտոնական իշխանությունը Հեյդար Ալիեւն էր, իսկ ոչ պաշտոնականն «Ազգային ճակատը»՝ Ադրբեջանի նախագահ Էլչին Բեյի հովանավորությամբ: Առաջինի ցանկացած որոշմանը երկրորդը հակադրվում էր մինչեւ վերջ:

Հենց այդ ժամանակ էր, որ Քաջարանցի մի խումբ տղաներ, իրենց արարքը որակելով իբրեւ հերոսություն (ժամանակներն էին այդպիսին), գնացել ու հատել էին սահմանը, սպանել ու թաղել երկու ազերի հովիվների եւ, իբրեւ ռազմավար, քշել ու բերել հոտը:

Որպես սրա պատասխան՝ «Ազգային ճակատը» Օրդուբադ կայարանում կանգնեցրել էր Երեւան–Կապան մարդատար գնացքը, բանակցությունների արդյունքում երկու օրից թողել, բայց ուղեւորներից ընտրել էին 14 երիտասարդի ու պահել: Ընդ որում, 10-ին պահել էին ոստիկանությունում, իսկ 4-ին, իբրեւ պաշտոնական իշխանություններին չվստահելու դրսեւորում, անհայտ ինչ-որ տեղ տարել: Ահա եւ այս երիտասարդների դիմաց պահանջում էին հովիվներին՝ ողջ վիճակում:

Կարճ ժամանակ անց, Նախիջեւանի երկիշխանության համատեղ առաջարկով, մեր 14 երիտասարդներին փոխանակեցինք մեկ ազերու հետ, որին հայկական բանակի սաղմնավորման ակումբներում կանգնած մի քանի երիտասարդ բերել էին հենց իր տան միջից՝ 25 կմ խորանալով Նախիջեւանի տարածքում: Զշեղվելու համար մեկ ուրիշ առիթով կհիշատակեմ 14 մարդու կյանք փրկած այդ տղաների անունները եւ նրանց գործած սխրանքի մանրամասները, հիմա միայն ասեմ, որ այդ սխրանքի լուրն այնպիսի տարածում էր գտել Նախիջեւանում եւ այնպիսի ազդեցություն էր գործել իշխանության երկու թեւի վրա, որ նրանք լցվել էին վախի ու հարգանքի միախառնումից ծնված, մեզ համար շատ նպաստավոր, անբացատրելի մի զգացումով, որի արդյունքում այդ թեւերի միջեւ սկսվել էր հանգամանքների բերումով այնտեղ հավաքված գերիներին հնարավորինս արագ վերադարձնելու մրցակցություն:

Այս պայմաններում վերադարձվեցին Վայքի Խնձորուտ գյուղի երկու հովիվները, Գյումրիից Հաղրութի ռուսական սահմանապահ զորամաս

թոչող, Նախիջեւանում միջանկյալ վայրէջք կատարած ուղղաթիռից իջեցված երեք բաղամացիները, դեռ խորհրդային պետության հոգեվարքի շրջանում Արարատի ու Նախիջեւանի սահմանագծում Արաքս գետ ձկնորսության գնացած ու այնտեղից առեւանգված Սուլթանովը, հետն էլ՝ նրա ընկեր Սուրենի հերոսական փախուստի ու անհետ կորչելու մասին բացատրությունը, հայկական բեռները Նորաշենից (Իլիչեւսկ) բերելու մեկնած հայկական երկաթուղու մեքենավարները եւ նույնիսկ մեկ անգամ էլ՝ նրանց բաչալերելու համար հետները մեկնած երկաթուղու վարչության պետի տեղակալը: Եւս մի դեպք, որն առանձնակի հիշատակման ենթակա է: Երեւանից Մեղրի մեկնող երիտասարդ մի վարորդ առեւանգվել էր Գորիս–Կապան հատվածում ու տարվել Կուբաթլուի շրջան, ուր առանձին դաժանությամբ էին վարվում գերիների հետ՝ շատ հաճախ չտալով նույնիսկ դիակը: Ահա այս դեպքում օժանդակության ակնկալիքով դիմում ենք Նախիջեւանի իշխանությանը եւ արդեն մեկուկես ժամից սահմանի վրա դիմավորում ենք «Ազգային ճակատի» լիդերներից Մեջլիսի պատգամավոր Իլգարին, երկու հոգու ուղեկցությամբ: Մեր մեքենայով տեղափոխում ենք Մեղրիի ողջ լայնքով դեպի Ադրբեջանի սահման՝ ժամ առաջ Կուրաթլու հասնելու եւ մարդուն փրկելու նպատակով:

Ճանապարհին նրանք հայտնում են, որ պայմանավորվածություն ունեն եւ ցանկանում են զանգել Հեյդար Ալիևին: Դա շատ հնչտ էր, եւ մինչեւ 1998-ը իր ամբողջականությունը պահպանած երկաթուղու կապով զանգահարեցին Մեղրիի կայարանից: Մեկ-երկու ռոպե խոսելուց հետո հեռախոսը փոխանցեցին ինձ, եւ Հեյդար Բեյը (նրան այդպես դիմեց Իլգարը) բառացի ասաց հետեւյալը. «Ես ձեզ շատ եմ հարգում ու հավատում եւ խնդրում եմ՝ այդ տղաներն ինձ համար շատ թանկ ու հարազատ են, խնդրում եմ՝ այնպես արեք, որ նրանց որեւէ վատ բան չպատահի», հասկացնելով, որ այդ բարի գործի հեղինակը հատկապես ինքն է:

Երկու ժամից Իլգարն ու իր ուղեկիցները հրաժեշտ տվեցին մեզ սահմանագծի մոտ եւ ոտքով անցան չեզոք գոտին: Երեք օր անց նույն տեղում դիմավորեցինք չորս հոգու՝ կյանք էր փրկվել:

Հիմա մեր չորս բաղամացին հարազատ հայրենիքում վախեցել են, լեղապատառ փախել, մոլորվել, մեքենայով հատել բաց սահմանը ու հայտնվել այդ նույն Նախիջեւանում: Սրանք էլ ձեւեր են թափում ու չեն տա-



լիս: Ինչո՞ւ: Կարո՞ղ է դա ուրիշ Նախիջեւան է, տարածաշրջանի ամենամարտունակ բանակի կողմից Արաքս գետին սեղմվածը չէ:

Ինչո՞ւ այս խնդիրը չի լուծվում: Կարո՞ղ է խնդիրը լուծելու ձեւերի, տեղերի, ռեսուրսների մասին պատկերացման դեֆիցիտ ունեք, Զինարի գյուղի, Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհին կատարվող խայտառակությունները բացառելու մասին ինչ եք մտածում: Թե միջազգային հանրության հսկողության փաստով եք կաշկանդված, բա Մարտի 1-ին կաշկանդված չէիք: Թե ընդամենն ընկերներիս նախկինում սխրանք հանձնարարվող աբարքների մասին պատմելով՝ Աղվան Հովսեփյանին նոր բրեական հետապնդում սկսելու հնարավորություն տվեցի...

Երկխոսության ակնկալիքով՝ այս եւ վերը տրված հարցերի պատասխանն եմ ակնկալում պաշտպանության պատասխանատու հիշատակված անձանցից. կուզեն՝ հրապարակային, կուզեն՝ հասցեական:

Հա, քիչ մնաց նոր հասցես մոռանայի՝ «Վարդաշեն» բրեակատարողական հիմնարկ, թիվ 19 խուց:

## ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԽՈՒՄԲԸ ԾԽԱԾԱԾԿՈՒՅԹ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԻ[10]

Նախօրեին Սերժ Սարգսյանի կողմից ստորագրված կարգադրությամբ ձեւավորվել է «Մարտի 1»-ի խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովի առաջադրած խնդիրների իրագործմանն օժանդակող փաստահավաք խումբ: Համաձայն փաստաթղթի, խումբը բաղկացած է լինելու հինգ անդամից, որոնք առաջադրվում են իշխող քաղաքական կոալիցիայի, «Ժառանգություն» կուսակցության եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից ղեկավարվող քաղաքական ուժի կողմից, մեկ անդամ էլ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Այսպիսով, եթե մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգի՝ իշխանությունների առջեւ դրված պահանջներից մեկն իրագործվեց: Թեեւ եւրոպացի պաշտոնյան հստակ մատնանշել էր, որ խումբը չպետք է լինի միաբեւեռ:

Երեկ «ՁԻ»-ն զրուցեց իշխանության եւ խորհրդարանական ընդդիմության, ինչպես նաեւ Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցչի հետ՝ պարզելու, թե նրանցից ով ինչպես է վերաբերվում ձեւավորված փաստահավաք խմբին:

«Վարդաշեն» բրեակատարողական հիմնարկում գտնվող քաղբանտարկյալ ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆԻ կարծիքով.

[10] *«Ազգագրդ իշխանություն», 25.10.2008թ.:*



– Ճիշտ կլիներ, որ խումբն օրենքի ուժով ձեւավորվեր, քանի որ կարգադրությամբ որեւէ մարմնի ձեւավորումը նախագահի լիազորություններից դուրս է:

**– Այսինքն, Սերժ Սարգսյանն իրավունք չունե՞ր նման հանձնաժողով ձեւավորելու:**

– Ո՛չ, քանի որ դա սահմանադրությամբ նրան տրված լիազորություններով նախատեսված չէ: Սահմանադրության 55-րդ հոդվածում գրված է, որ նա իրավունք ունի կատարելու գործողություններ, որոնց համար լիազորված է սահմանադրությամբ եւ օրենքներով: Բացի այդ, կարծում եմ, որ եթե մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը փաստահավաք խմբի ստեղծման պահանջ ներկայացրեց այն պահից, երբ հասկացավ, որ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը միաբեւեռ է եւ կատարում է բացառապես իշխանությունների կամքը: Ակնհայտ է, որ եթե նույնիսկ «Ժառանգությունը» մասնակցեր ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին, դրանից էությունը չէր փոխվի: Եւ որպեսզի հավասարակշռված տեսակետներ արտահայտվեին, նա առաջարկեց ստեղծել այս փաստահավաք խումբը՝ հստակ նշելով, որ պետք է հավասարակշռված լինի խմբի կազմը. ընդդիմություն, իշխանություն եւ միջազգային փորձագետներ՝ հավասար ներկայացուցիչներով:

Եւ ամենակարեւորը՝ գաղտնիության մասին կուզենայի խոսել: Ինչ է նշանակում գաղտնիություն: Այդ խմբի աշխատանքները դառնում են մեզանից յուրաքանչյուրի դատավարության նման մի բան, երբ պաշտպանները պեղում են ինչ-որ բաներ, միջնորդություններ անում, ասում, որ պետք է հավասարություն պահպանվի, բայց դատավորները մերժում են դրանք՝ անելով միայն դատախազի ասածը: Նույն բանն է նաեւ այստեղ: Խումբը կաշխատի, բայց հանձնաժողովը կուզի՝ կօգտագործի, կուզի՝ չի օգտագործի նրանց հավաքած փաստերը: Դեռ մի բան էլ խմբի անդամները պարտավոր են գաղտնի պահել խմբի աշխատանքները:

**– Այսինքն, Դուք որեւէ հույս չե՞ք կապում խմբի հետ:**

– Ես կարծում եմ, որ կարճ ժամանակահատվածում հանձնաժողովը կարող էր եզրակացություն տալ: Բայց քանի որ չարվեց, դրա համար

Է այս խմբի ձեւավորումը ի հայտ եկավ, որպեսզի հերթական անգամ ձգձգվի խնդիրը: Ինչ նպատակով ստեղծվեց հանձնաժողովը՝ ծիածածկույթ ստեղծելու, նույն նպատակով էլ ձեւավորվում է խումբը: Իշխանություններն իրավիճակի փոփոխության բան են մտմտում, որպեսզի փորձեն մարսել իրենց կատարած հանցագործությունները:

## ՆԻԿՈՅԱՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ, ԿԱՄ՝ ՊԱՐԿ, ՈՐԻ ՄԵՋ ՄԱԽԱԹ Է ՊԱՀՎՈՒՄ[11]

Եթե 1609-րդ բանաձեւի պահանջները կատարելու ժամկետը լրանալու նախօրեին, բանաձեւի պահանջների կատարած չլինելն արդարացնելու եւ իրականությունը ողարկելու նպատակով ձեւավորված «Մարտի մեկի» հանձնաժողովի նախագահ Սամվել Նիկոյանին լրագրող Քրիստինե Խանումյանը 2008թ. հուլիսի 12-ին՝ հանձնաժողովի գործունեության մեկ ամիսը լրանալու կապակցությամբ ուղղել է նաեւ հետեւյալ հարցը. «Ձեր գործընկեր, պատգամավոր Ռաֆիկ Պետրոսյանը, որը նաեւ իրավաբան է, երեկ հայտարարել է, որ Ազատության հրապարակը փակելը ոստիկանության կողմից անօրինական է: Համամի՞տ եք այդ տեսակետին, եւ եթե՝ այո, ինչո՞ւ չեք պայքարում այդ անօրինականության դեմ»:

Նիկոյանը, նախ, ճմլկոտել է ու հորանջել, ապա՝ փորձել խուսանավել: Սակայն լրագրողը համառել է, եւ նա խուսափողական պատասխանի մեջ ասել է հետեւյալը. «Նման մոտեցումը, որ նա որդեգրել է, ո՞ր փաստերի հիման վրա է ասել: Որպեսզի այդ ամեն ինչին պատասխան տաս, օրենքը պետք է դնես քո առաջ, դիմումը նայես, որ դիմել են միտինգ անցկացնելու, քաղաքապետարանի պատասխանը, հիմնավորումները նայես, համեմատես օրենքի հետ, հետո նոր իրավական գնահատական տաս» («Հայկական ժամանակ», 12.08.2008թ.): Չեմ կարող ասել՝ Նիկոյանը հաշվենկատորեն է նշում հատկապես դիմում նայելու եւ հիմնավորումների մասին, թե դա այդ ժամանակ նրա կողմից օրեն-

[11] *«Հայկական ժամանակ», 08.11.2008թ.:*

ին ամբողջությամբ չտիրապետելու արդյունք է, բայց սա չէ էականը: Էականն այն է, որ Նիկոյանը, փաստորեն, գիտակցում է՝ գոյություն ունի ցուցարարների եւ իշխանությունների հարաբերությունները կարգավորող օրենք, եւ այս կամ այն կողմի գործունեության գնահատականը տրվում է այդ գործունեության՝ օրենքների հակադրման արդյունքում: Մեկ ուրիշ դեպքում Արման Դալոյանին տված հարցազրույցում Արծվիկ Մինասյանն ասել է. «...Ու պետք է պարզաբանում տալ, թե որքանով են օրենքի դրույթներին համապատասխան իրավապահներ կարողացել համարժեք միջոցառումներ կիրառել: Ի վերջո, մարտի 1-ի լուսադեմին կատարված գործողությունների հետեւանքն էր մարտի 1-ի երկոյան տեղի ունեցածը» («Հայք», 22.08.2008թ.): Փաստորեն, Նիկոյանն ի սկզբանե իմացել է իր անելիքը, իսկ Ա. Մինասյանը սահմանել էր եզրակացության հանգելու նշգրիտ բանաձեւը: Սակայն հանձնաժողովը, լինելով գործող ռեժիմի արտացոլանքը, քաջ գիտակցում էր, որ այդ նանապարհը կործանարար է ռեժիմի, հետեւաբար՝ նաեւ իր համար: Ուստի, բուն գործով զբաղվելու փոխարեն, նա սկսեց տեսարաններ ցուցադրել: Այն սկսվեց այս ամենը քաջ գիտակցող ընդդիմության՝ հանձնաժողովի մաս կազմելու հրաժարումը քննադատելու բազմասերիալից, վաղուց հանրապետականացած եւ համապատասխան հանդերձանք կրող ՀՀՇ-ի Գեւորիկին իրենց առաջարկելու պատճառով վիրավորվածության ցուցամոլ դրսեւորումներով, կատարելագործվեց եւ հասավ սղոցի գործադրմամբ պատվաստելու միջոցով, կամավորության սկզբունքով՝ մարդկային գիտակցությունը խոզի գիտակցությամբ փոխարինած շոթավարդանյաններին իբրեւ ձեռնասուն կապիկ պար ածելու տեսարանով: Հանձնաժողովականները սկսեցին անպտուղ ու ցուցադրական հանդիպումներ ունենալ ապօրինի ազատազրկված ընդդիմադիրների հետ, հանդիպումների ընթացքում իրենց «անաչառությունը» ցուցադրելու նպատակով նույնիսկ պատմել հանձնաժողովի ձեռքերումների մասին: Այսպես, Սամվել Նիկոյանը քաղաքանտարկյալներից մեկի ականջին շշնջացել է, թե իրենց հաջողվել է պարզել, որ ոստիկանության գործունեությունը հետապնդել է ոչ թե զենք-զինամթերք հայտնաբերելու նպատակով խուզարկություն կատարելը, այլ նստացույցը բռնությամբ ցրելու նպատակ, եւ որ հարձակումը սկսվել է ժամը 06:40-ին: Դրանից, իհարկե, քաղաքանտարկյալի վիճակը չի փոխվել: Արդյունքում, հանձնաժողովականներին հանդիպած բոլոր քաղաքանտարկյալները հիասթափվեցին հանձնաժողովի գործունեությունից, իսկ պատկառելի մի խումբ հանդես եկավ նրանց հետ հանդիպելուց հրաժարվելու հայտարարությամբ: Ի սկզբանե անհավասարակշիռ ձեւաչափով՝ որպես բրեական ռեժիմի գործիք նախատեսված լինելու պատճառով հեղինակազուրկ, իսկ հետագայում՝ հիմնական անելիքով զբաղվելու փոխարեն, բոլորին տեսանելի լժան ճնարքներով հեղինակություն ձեռք գցելու վարքագիծ դրսեւորելու հետեւանքով է, որ այս հանձնաժողովը չարժանացավ վստահության: Նաեւ հանձնաժողովի վստահելիության ցուցադրման մի վերջին ձախողված ձգտում էր ոմն խարդախ Հովակիմ Բարայանի հայտնությունը եւ, իբր, Մարտի 1-ի առնչությամբ իշխանությունների համար նպաստավոր՝ նոր «արժեքավոր» տեղեկությունների հրապարակայնացման փորձը հանձնաժողովի միջոցով: Սակայն շատ արագ պարզ դարձավ, որ Հովակիմը՝ կատարած խարդախությունների համար նախատեսված ծանր պատժից խուսափելու ակնկալիքով ցանկացած գործարքի պատրաստ, դատախազության ու ԿԳԲ-ի կողմից ուղղորդվող շարքային օգտագործվող է: Իսկ ինչ տեղի կունենար, եթե անկախ մի հանձնաժողով առաջնորդվեր Նիկոյանի պարզաբանած մոտեցումով եւ եզրահանգեր Արծվիկ Մինասյանի բանաձեւով, փորձենք վերլուծել:



## Անկախ հանձնաժողովի վերլուծության հիմք հանդիսացող հետընտրական գործընթացները եւ դրանց նախադրյալները

Նախընտրական շրջանում իշխանության գործելաոճը դրսեւորվում էր հետեւյալ հիմնական գծերով. ապօրինություններ, բռնություններ, ազատ կամքի արտահայտման իրավունքի ոտնահարում՝ կարիքավորներին ընտրակաշառք տալով, իսկ եկամուտ ունեցողներին՝ եկամտից զրկելու սպառնալիքով, անհավասար պայմաններ, քողարկված ու բացահայտ ընտրակեղծիքներ, ընտրության արդյունքների աղավաղումներ ու կեղծում: Ընտրություններից անմիջապես հետո այս ժամանակաշրջանը գրեթե նույնությամբ գնահատել են այժմ ռեժիմի մաս կազմող ՀՅԴ-ն՝ հանձին Վահան Հովհաննիսյանի, որը նաեւ, ի նշան բողոքի, թողեց ԱԺ փոխնախագահի պաշտոնը, եւ ՕԵԿ-ը՝ հանձին Հեղինե Բիշարյանի, ընդդիմության հանրահավաքում ունեցած ելույթով: Ապօրինությունների մեկ-

նարկը տրվեց 2007թ. հոկտեմբերի 23-ին: Այդ օրը՝ հոկտեմբերի 26-ի առաջին հանրահավաքի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով, Լևոն Տեր-Պետրոսյանի մի խումբ համակիրներ, առաջնորդվելով «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 6-ի 6-րդ եւ հոդված 7-ի 2-րդ կետերով, կազմակերպել եւ անցկացնում էին ոչ զանգվածային հրապարակային միջոցառում: Միջոցառման մասնակիցները բռնությամբ եւ հատուկ միջոցների գործադրմամբ բերման ենթարկվեցին ոստիկանություն: Շինծու քրեական հետապնդման արդյունքում մասնակիցներից 5-ին ներգրավեցին որպես մեղադրյալ՝ մինչեւ 5 տարի ազատազրկում նախատեսող ՔՕ 316 հոդվածի 1-ին մասի «հատկանիշներով» հարուցված քրեական գործով: Ոստիկանները ներկայացրել էին միջոցառումը դադարեցնելու ապօրինի պահանջ եւ չունեին բերման ենթարկելու որեւէ հիմք: Գոյություն ունեն հոկտեմբերի 23-ի՝ իշխանության ներկայացուցիչների ապօրինի եւ բռնի գործողությունների ապացուցողական նշանակությունը հաստատող նյութեր. նախ՝ ձայնագրություն, որի վերծանումը տպագրված է «Հայկական ժամանակ» օրաթերթում, ապաւ՝ տեսագրություն, որը տեղադրված է Մարտի 1-ի դեպքերի հայտնի տեսաերիզում: Առհասարակ, իշխանությունների ապօրինի եւ բռնի գործողությունների առումով, հոկտեմբերի 23-ը հանդիսանում է Մարտի 1-ի սկիզբը եւ նրա մանրակերտը: Ներքեւում ներկայացվող մյուս իրողությունների վերաբերյալ առկա են տեղեկություն արտահայտող տեղեկանքներ: Հանրահավաքների մասին տեղեկատվություն պարունակող բրոշյիկներ բաժանելու եւ փակցնելու համար ոստիկանության բաժիններ ապօրինի բերման, իսկ որոշ դեպքերում նաեւ բռնությունների են ենթարկվել տասնյակ ակտիվիստներ: Տերպետրոսյանական անթափոյց կողմնորոշում ունենալու համար տարբեր ձեւակերպումներով աշխատանքից ազատվել են տասնյակ քաղաքացիներ: Ողջ հանրապետության տարածքում տոտալ ճնշումների են ենթարկել Լևոն Տեր-Պետրոսյանի համակիրներին նախընտրական շտաբ տեղադրելու համար տարածք տրամադրելու համաձայնություն ունեցող քաղաքացիներին: Արդյունքում, որոշ քաղաքներում հնարավոր չի եղել շտաբ տեղադրել: Պայթեցվեց «Զորրորդ իշխանություն» թերթի խմբագրության մուտքը: Հրդեհվեց Գյումրիի «Ասպարեզ» ակումբը: Հրդեհվեց Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը Սիլիկյան թաղամասում: Հրդեհվեց Վանաձոր քաղաքում Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի մուտքի դուռը: Տեր-Պետրոսյանի մարզային նախընտրական հանդիպում-հանրահավաքները խանգարվում էին ռեժիմի հովանավորությամբ իրականացվող սադրանքներով: Ոստիկանությունը ոչ միայն չէր առաջնորդվում Օրենքի հոդված 8-ի 3 եւ 4 կետերով՝ չէր ապահովում օրինականությունն ու հասարակական կարգը, հանրահավաքի անցկացման վայրից հարկադրաբար դուրս չէին բերում հակաօրինական արարք կատարող կամ հասարակական կարգը խանգարող անձանց, այլեւ Թալինի դեպքով շինծու քրեական հետապնդման ենթարկեցին միջոցառման կազմակերպիչներին եւ նրանցից երեքին պատժեցին ազատազրկմամբ: Արվեց ամեն ինչ՝ նախընտրական քարոզչության ընթացքում ոչ մրցակցային՝ անհավասար պայմաններ ստեղծելու համար, որը հատկապես արտահայտված էր հեռուստատեսության պարագայում: Քվեարկության օրվա կարեւորագույն առանձնահատկությունն այն էր, որ ռեժիմի իշխանավարության ժամանակ անցկացված նախորդ ընտրությունների ընթացքում ստեղծված ոստիկանության, դատախազության, բանակի, ԱԱԾ-ի, պետական կառավարման այլ (հատկապես մարզային), տեղական ինքնակառավարման մարմինների եւ կրիմինալի համագործակցությամբ սպասարկվող կաշառավության, ահաբեկումների ու կեղծիքի մեքենան ոչ միայն կատարելագործվեց, այլեւ քաղաքական որոշում էր կայացվել՝ հատվածականության առաջամարտիկ, «Ապարան» հայրենակցական միության պատվավոր նախագահ, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի պատասխանատվությամբ ոչ միայն «վնասազերծել» Տեր-Պետրոսյանի վստահված անձանց, այլեւ անհրաժեշտության դեպքում ենթարկել շինծու քրեական հետապնդման: Արդյունքում, Պետրոս Մակեյանը, Աշոտ Զաքարյանը, Հարություն Ուռուտյանը, Սամվել Կարապետյանը, Սիմոն Ամիրխանյանը քաղբանտարկյալներ են: Նախընտրական շրջանում, քվեարկության օրը եւ արդյունքներն ամփոփելիս իշխանությունների կողմից քրեական ռեժիմին հատուկ վարագծի դրսեւորումը հասարակության կողմից մերժելի լինելով էր պայմանավորված փետրվարի 21-ից մինչեւ կատարված ինքնաբուխ, շուրջօրյա կոմբինացված (նստացույց, հանրահավաք, երթ) զանգվածային հրապարակային միջոցառումը: Այդպիսի միջոցառման օրինականությունը, առանց լիազոր մարմնին (Երեւանի քաղաքապետին)

գրավոր իրազեկելու, ապահովագրված է Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 10-րդ հոդվածի 1-ին կետով: Օր օրի ուժգնացող այդ միջոցառմանը զուգահեռ, Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը՝ օրենքով նախատեսված կարգով, բողոքարկում էր ընտրությունների արդյունքները եւ նախապատրաստվում դիմել Սահմանադրական դատարան, իսկ միջոցառման անազնացող թափից տագնապած իշխանությունն ամենատարբեր ապօրինի ու ցիրտ միջոցներով փորձում էր կասեցնել Համաժողովրդական շարժման վերելքը: Փետրվարի 21-ից մինչեւ 29-ը՝ առանց բավարար հիմքերի, ապօրինի բերման են ենթարկվել եւ ձերբակալվել ընդդիմության 25 ակտիվիստներ: Շինծու քրեական հետապնդումների արդյունքում նրանց մի մասը դեռեւս անազատության մեջ է՝ քաղբանտարկյալներ են: Փետրվարի 24-ին Քրեական օրենսգրքի 300 հոդվածով ԱԱԾ-ի կողմից հարուցված հիմնազուրկ քրեական գործի շրջանակներում ողջ հանրապետությունով մեկ սկսվեցին մասսայական խուզարկություններ ընդդիմության ակտիվիստների՝ հատկապես նրա երկրապահական թեւի ներկայացուցիչների բնակարաններում: Առանց բացատրության՝ տուգանային հրապարակ տարվեցին ու բանտարկվեցին Տեր-Պետրոսյանի համակիրներին պատկանող տասնյակ աննական օգտագործման մեքենաներ: Ընտրությունները կեղծելու միջոցով իշխանությունը բռնազավթած քրեական ռեժիմի առկայության եւ հոկտեմբերի 27-ի հետ նրա առնչության մասին հրապարակային կարծիք հայտնած եւ այդ իսկ պատճառով ապօրինի աստիճանազրկված, պաշտոնանկ արված եւ ազատազրկված Գագիկ Ջհանգիրյանի օրինակին հետեւեցին դիվանագիտական կորպուսի մի խումբ ներկայացուցիչներ, որոնք անիտիր ապօրինաբար պաշտոնանկ արվեցին: Իրենց գործընկերներ Խաչատուր Սուքիասյանի, Հակոբ Հակոբյանի, Սասուն Միքայելյանի եւ Մյասնիկ Մալխասյանի օրինակին հետեւեցին եւ Համաժողովրդական շարժմանը միանալու հայտարարությամբ հանդես եկան եւս 6 պատգամավորներ, որոնցից 5-ը, սակայն, ենթամների տակ հրաժարվեցին հայտարարությունից: Փետրվարի 26-ին ռեժիմի կողմից Հանրապետության հրապարակում կազմակերպվեց զորահավաք հիշեցնող հանրահավաք, ուր տոտալ մոբիլիզացիայով հավաքվեց իր ազդեցությանը ցանկացած առնչությամբ ենթարկվող ողջ կոնտինգենտը: Սակայն հավաքատեղիում վերջին անգամ հաշվառվելուց հետո մարդիկ հրապարակը լքում էին



խմբերով եւ գնում Ազատության հրապարակ՝ միանալու Համաժողովրդական շարժմանը: Հանրապետության հրապարակը դատարկվեց կայծակնային արագությամբ՝ դառնալով ապացույցն այն իրողության, որ ժողովուրդը ռեժիմի հենարանը չէ: Ազատության հրապարակը ցնծում էր, հաղթանակի ու ազատության շունչը թեւածում ու ճառագայթում էր բոլոր ուղղություններով: Համաժողովրդական շարժումը կայացած փաստ էր, նրա հաղթանակը՝ անկասելի: Փետրվարի 29-ին՝ ընտրությունների արդյունքները Սահմանադրական դատարանում բողոքարկելու դիմում ներկայացնելու օրը, Ռոբերտ Քոչարյանը, իր իսկ ծնած քրեական ռեժիմի ժառանգականության ապահովման օրինական այլընտրանքի բացակայության պայմաններում, Պետական համալսարանում «բազենների» հետ ունեցած նպատակային հանդիպման ժամանակ, նախապատրաստված հարցին պատասխանով ներկայացրեց Համաժողովրդական շարժումը բռնությամբ ճնշելու ծրագիր, որն իրագործվեց հաջորդ իսկ օրը՝ մարտի 1-ին, մթության ողի տակ:

## Մարտի 1-ի առավոտյան դեպքերի հետ կապված՝ ռեժիմի ապօրինի գործունեության լուսաբանումը

Իշխանության եւ զանգվածային հրապարակային միջոցառման մասնակիցների հարաբերությունները կարգավորող Օրենքի նպատակը «...քաղաքացիների... խաղաղ՝ առանց զենքի, ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելն է» (հոդված 1): Այն, որ ի սկզբանե իշխանությունները գիտակցել են, որ առանց լիազոր մարմնին գրավոր իրազեկելու անցկացվող միջոցառումն օրինական է, որովհետեւ ինքնարուխ է (Օրենքի հոդված 10, կետ 1), հաստատվում է այն փաստով, որ 9 օր շարունակվող շուրջօրյա նստացույցը, 9 երթ, 18 հանրահավաք ներառող միջոցառումը սահմանված կարգով դադարեցնելու պահանջ չի ներկայացվել: Եւ ճիշտ են վարվել, որովհետեւ Օրենքի հոդված 14-ի 1-ին կետի 1-ին ենթակետով դա արգելված է: Մարտի 1-ի առավոտյան իրադարձությունների կապակցությամբ հարուցված 62202508 քրեական գործով ի սկզբանե քրեական հետապնդում է իրականացվել նաեւ ՔՕ 225′ հոդվածի տարբեր մասերով ապօրինի հանրահավաքների հետ ունեցած

առնչությունների համար: Սակայն հետագայում այդ հոդվածով հարյուրավոր բոլոր անձանց նկատմամբ իրական հետապնդումներն անխտիր դադարեցվել են հիմքերի բացակայության պատճառաբանությամբ՝ ուղղակիորեն ապացուցելով, որ միջոցառումն օրինական է եղել: Մարտի մեկի առավոտյան նստացույցն ապօրինի ցրելուց հետո Ազատության հրապարակի մերձակայքում, իբր, զենությամբ հայտնաբերված զենք ու զինամթերքի առնչությունը ցուցարարների հետ՝ նախաքննությամբ ապացուցված չէ: Դեռ ավելին, փորձաքննության մարմինը, իր հերթին, իր նախաձեռնությամբ նման հետազոտություն չի կատարել: Հաշվենկատորեն թաքցվում է մարտի մեկի լուսաբացի իրադարձությունները պատկերող այն տեսագրությունը, ուր լսելի է Լևոն Տեր-Պետրոսյանի՝ ցուցարարներին ուղղված հորդոր հանդարտություն պահպանելու եւ համբերությամբ ոստիկանների կողմից ներկայացվելիք պահանջը լսելու վերաբերյալ: Իհարկե, դա որպես Ռոբերտ Քոչարյանին ուղղված պատգամ է հնչեցվել, բայց այլեւս Սամվել Նիկոյանի եւ Նաիրա Զոհրաբյանի միջոցով շրջանառվել է այն փաստը, որ մարտի 1–2-ին մարմնական վնասվածք ստացած իշխանության ներկայացուցիչներից եւ ոչ ոք հրազենային վնասվածք չի ստացել: Նույնն է թե՝ ընդդիմության ներկայացուցիչները զենք չեն գործածել: Ինչ է այլեւս պետք համոզվելու համար, որ միջոցառումը եղել է խաղաղ, առանց զենքի: Փաստորեն, նույնիսկ չունենալով հրապարակային միջոցառումը դադարեցնելու իրավունք, միեւնույն է, ոստիկանությունը դադարեցրել է, այն էլ՝ Օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված կարգի կոպտագույն խախտումներով.

– Չի սահմանել դադարեցման համար ողջամիտ ժամկետ:

– Միջոցառումը դադարեցնելու որոշման մասին բարձրախոսով չի տեղեկացրել մասնակիցներին: Նստացույցի հարկադիր դադարեցումն իրականացվել է գաղտագողի՝ մթության հողի տակ, բռնությամբ եւ հատուկ միջոցների գործադրմամբ: Վերջինիս հետ կապված՝ «Ոստիկանության մասին» անկատար օրենքի 31-րդ հոդվածում ասվում է. «Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը... խաղաղ, առանց զենքի չարտոնված հանրահավաքները խափանելու ժամանակ»:



## Նիկոյանի հանձնաժողովի անգործության հետեւանքները

Այս հանձնաժողովը Նիկոյանի տիրապետած մոտեցումով գիտակցաբար չգնահատեց (գուցե գնահատեց, բայց չհրապարակեց) մարտի մեկի լուսաբացի իրադարձությունները, որովհետեւ այդպես վարվելու դեպքում, բնականաբար, կհանգեր Ռաֆիկ Պետրոսյանի՝ մասնագետի իմիջը պահելու մղումով տված գնահատականին: Իսկ Արծվիկ Մինասյանի բանաձեւով առաջնորդվելու դեպքում՝ առավելագույնը ձեւավորվելուց մեկ-երկու ամսվա ընթացքում ստիպված կլիներ եզրակացնել, որ մարտի 1–2-ի արյունալի իրադարձությունների, այդ թվում՝ հատկապես 10 զոհերի (այս թիվը տարակուսելի է) հեղինակը, մեղավորն ու պատասխանատուն, նախ, Ռոբերտ Քոչարյանն է, նրա հետ միասին՝ նրա ապօրինի ծրագրերը կուրորեն իրագործած կամակատարները՝ Սերժ Սարգսյանը, նորամարդ Հովիկ Աբրահամյանը եւ այլք: Մինչդեռ հանձնաժողովը, հաշվենկատորեն զբաղված լինելով տեսարանների ցուցադրմամբ, փաստորեն, շեղում էր հանրության ու ետակառույցների ուշադրությունը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով միակողմանի, սուբյեկտիվ եւ թերի նախաքննության ու դատաքննությունների իրականացման համար, որի հետեւանքն դարձավ բազմաթիվ քաղաքանդարկյալների առկայությունը Հայաստանի Հանրապետությունում: Թե՛ նախաքննությունը, թե՛ դատաքննությունը պատվերով խուսանավեցին հետազոտել մարտի մեկի լուսաբացի իրադարձությունները: Այդ կապակցությամբ հարուցված 62202508 քրեական գործը որոշումով միացվեց, իսկ իրականում թաքցվեց այդ իրադարձությունների հետեւանքն՝ ռեժիմի ապօրինություններն ու բռնությունները չհանդուրժող, ըմբոստացած ժողովրդի օրինակելի ցասումն արյունով ճնշելու կապակցությամբ հարուցված 62202608 քրեական գործի մեջ: Նիկոյանի հանձնաժողովը, նախաքննությունը եւ դատաքննությունը ունեն կարեւոր մի ընդհանրություն՝ բոլորն էլ քրեական ռեժիմի կամակատարներ են: Փաստաբավամ խումբ ստեղծելու պատրվակով դեռեւս սեպտեմբերին եզրակացություն հրապարակել ցանկացող հանձնաժողովի գործունեության ժամկետը եւս չորս ամսով երկարաձգելու որոշումն իրականում պայմանավորված է այն հանգամանքով, որ այժմ իշխանահաճո որեւէ եզրակացություն չի ներվելու ժողովրդի կողմից: Ռեժիմը սա շատ լավ է գիտակցում: Այդ ան-

բարենպաստությամբ է պայմանավորված «Զինապարտության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու հետաձգումը նույնման ժամանակով: Իհարկե, հետաձգման այդ ժամկետը ոչ թե կանխատեսման, այլ երազանքի հուսահատ դրսևորման արդյունք է: Այն, որ Սերժ Սարգսյանի որոշումով ձևավորվող փաստահավաք խումբն անկեղծ նպատակներ չի հետապնդում, հաստատվում է Սամվել Նիկոյանի հետևյալ ազնիվ պոռթկումով. «Ուզում եմ ասել, որ եթե ԱԺ-ի որոշմամբ չի ձևավորվում խումբը, իհարկե, այդ փաստաթուղթը հանձնաժողովի համար իրավական տեսակետից չի կարող պարտադիր փաստաթուղթ լինել» («Զորավոր իշխանություն», 25.10.2008թ.):

Հ.Գ. Երբ աչքի էի անցկացնում 41 հաստափոր հատորներից բաղկացած բրեական «մայր գործի» նյութերը, տպավորություն ստացա, որ դա ընդամենը թղթի թափոն է: Այդ թափոնի մեջ նկատեցի հետաքրքրական բան: Ալեքսանդր Արզումանյանը, որի հեռախոսային խոսակցությունները պաշտոնապես գաղտնալսվել են փետրվարի 19-ից, փաստորեն, ըստ նյութերի, փետրվարի 29-ին ունեցել է մեկ հեռախոսային խոսակցություն, իսկ մարտի մեկի խոսակցությունների վերծանված նյութերում ոչ մի խոսք չկա մարտի մեկի լուսաբացի իրադարձությունների մասին: Այդ նյութերի մեջ գտա շատ լուսավոր մի բան՝ ժամը 17:36-ին տեղի ունեցած խոսակցության ժամանակ Քոչար Դավթյանը Արզումանյանին տեղեկացնում է. «Շատ մեծ ժողովուրդ է, Օպերայի կրկնակիի չափ, շատ լավ խելոք լսում է...»: Սա ռեժիմի ապօրինությունների ու բռնությունների դեմ ըմբոստացած մեծ ժողովուրդն է, որի պահանջները ցանկացած գիտակից իշխանություն անվերապահորեն կատարում է: Մեծ ժողովրդի հաղթանակն անկասելի է:

04.11.2008թ.

## ՀԱՅԱԴՈՒՔ ԸՆԴԴԵՄ ԵԽ ԵՐԿԴԻՄՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՆՀԵՏԵՒՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

(Հարցազրույց «Ժամանակ» թերթին)[12]

Նոյեմբերի 20-ին, երբ Երեւանում կլինի Եւրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը, խաղաղասիրակյալները մեկօրյա հացադուլ են անելու եւ հրաժարվելու են Համմարբերգի հետ հանդիպումից՝ ի նշան բողոքի:

Ինչպես մեզ հայտնեց խաղաղասիրակյալ Դավիթ Մաթեւոսյանը, բողոքի ակցիան ուղղված է լինելու «եւրոպական բյուրոկրատական կառույցների, մասնավորապես՝ Եւրախորհրդի երկդիմության եւ անհետեւողականության դեմ»:

**– Ինչո՞վ է պայմանավորված, որ հրաժարվում եք Համմարբերգի հետ հանդիպելուց: Եւրոպական կառույցներից հենց Համմարբերգն է ամենադեկվատն արձագանքել Հայաստանի հետընտրական իրադարձություններին:**

– Հայտարարության մեջ ձեւակերպել ենք գնահատականը, որ մեծագույն հարգանք ենք տածում նրա անձի նկատմամբ, գնահատում ենք նրա պաշտոնական բարեխղճությունը, եւ այս ակցիան բացառապես ուղղված չէ նրա անձի եւ նրա գործունեության դեմ: Ուղղակի նրա այցը առիթ է նման ակցիա անցկացնելու համար:

**– Ո՞րն է ձեր ակնկալած արձագանքը եւրոպական կառույցների եւ Համմարբերգի կողմից:**

[12] *«Ժամանակ», 19.11.2008թ.:*

– Անկեղծ ասած՝ անձամբ ես որևէ ակնկալիք չունեմ: Թերեւս, զուցե մի փիչ ավելի զգոնացնելու, զգաստացնելու նպատակ է հետապնդում, եթե իրենք կընկալեն:

**– Ո՞րն է եղել ձեր ակնկալիքը, որ չի արդարացվել, ինչի արդյունքում ստիպված եք եղել դիմել այս քայլին:**

– Մտքով կույրին անգամ հասկանալի է, որ մեր պայքարը ոչ թե իշխանական էլիտայի փոփոխության համար է, այլ քաղաքակրթական մոդելի փոփոխության: Այսինքն՝ մենք պայքարում ենք ասիական խանական համակարգից հատկապես հենց եւրոպական ժողովրդական մոդելի անցնելու համար:

Դա ապացուցվում է այն իրողություններով, որ Մարտի 1-ի առավոտյան բռնության եւ հատուկ միջոցների ազդեցությանը ենթարկված ցուցարարներ ոչ թե տուն փախան, այլ հավաքվեցին Ֆրանսիայի դեսպանատան մոտ՝ սաղմնավորելով ռեժիմի բռնի ու ապօրինի գործողությունների դեմ ինքնաբուխ համաժողովրդական ընդվզում: Այդ ընդվզումն, արդյունքում ճնշվելուց հետո, չմարեց, եւ խանական համակարգը չհանդուրժող տասնյակ հազարավորների բանակն, ըստ անհրաժեշտության, անմիջապես կհավաքվի պայմանական Ազատության հրապարակում: Նույնիսկ այսօր բանտերում պահվող տասնյակ քաղբանտարկյալներ չեն կոտրվում, այլ շարունակում են մասնակցել այդ պայքարին՝ այնպես, ինչպես կարողանում են: Սա կոնկրետ այդ պայքարի ձեւերից մեկն է: Եւ էս բոլորն ապացուցում է, որ իրոք այդ պայքարը քաղաքակրթության համար մղվող պայքար է:

Մինչդեռ ինչ արեց Եւրախորհուրդը: Ապրիլի 17-ին ընդունեց 1609 բանաձեւ, որի կատարման համար տրվեց ժամկետ մինչեւ ամառային նստաշրջան, վերջինս տեղի ունեցավ հունիսի 24-ին, այսինքն՝ երկու ամսվա ընթացքում պետք է բավարարվեին որոշակի պահանջներ: Քիչ է, որ չեն կատարվել այդ պահանջները ռեժիմի կողմից, Եւրախորհուրդն անմեղ հորթի հրճվանքով ասում է՝ ժամանակը սրանց քիչ ենք տվել, ժամանակի մեջ չեն տեղավորվել, 6–7 ամիս էլ են ավելացնում՝ մինչեւ հունվարյան ձմեռային նստաշրջան: 15 օր չի ավելացնում, 1 ամիս չի ավելացնում, ավելացնում է մի քանի անգամ ավելի շատ ժամանակաշրջան:



Սեպտեմբերին գնահատում է իշխանության գործունեության առաջընթացը՝ երկու կետով. մեկ՝ որ իշխանությունների կողմից ձեւավորվում է փաստահավաք խումբը, որը դեռ վերջերս կիսատ-պռատ, անհասկանալի, Սահմանադրության խախտմամբ ձեւավորված որոշմամբ էր, եւ երկրորդ՝ որ այդ «յոթի» մայր գործն ուղարկվել է դատարան: Նույնիսկ մինչեւ հիմա նյութերում մեղադրական եզրակացություն չկա, եւ փաստաբաններն ու մեղադրյալներն էդ գործին չեն ծանոթացել: Այս վերաբերմունքով Եւրախորհուրդը ջարդում է եւրոպական ժողովրդավարական քաղաքականություն հաստատելու ներուժը Հայաստանում: Եւ մեր այս ակցիան նրանց բքացրած զգոնությունն ակտիվացնելու նպատակ է հետապնդում:

**– Ինչքանո՞վ եք ծանոթ ներկա գործընթացներին: Ի՞նչ եք կարծում, դեռեւս արժե՞ հույսեր կապել էն կառույցների հետ, որոնց Հայաստանն անդամակցում է, եւ ընդհանրապես՝ ուժային կենտրոնների հետ, թե՞ ամեն ինչ ժողովրդի ձեռքում է:**

– Տեղյակ եմ՝ որքանով մամուլում է ներկայացվում: Ոչ միայն ես, այլեւ մյուսները, ում հետ կիսվում եմ, գնահատում են, որ Ղարաբաղի հակամարտության հետ կապված բայմ-աուրը (ընդդիմության հանրահավաքների ժամանակավոր դադար, Մ.Ն.) անհրաժեշտություն էր, բայց ամեն դեպքում՝ փոփոխություններն ավելի շատ պայմանավորված են ժողովրդով, նրա ակտիվ մասնակցությամբ:

Արտաքին գործոնները կարող են նպաստել, նույնիսկ պարտավոր են նպաստել. եւ մեր բոլորը դրանով է պայմանավորված, որ ոչ միայն չեն նպաստում ժողովրդավարական գործընթացին, այլեւ ավելի շատ իրենց գործունեությամբ նպաստում են, որ ռեժիմի կողմից կանխվի այս գործընթացը, Համազգային շարժման գործունեությունը մարի:

**– Կարծում եք, այդ պարագայում իսկապե՞ս Շարժումը կարող է դեպի մարում գնալ:**

– Այդ ուժը, որ մենք տեսել ենք, շոշափել ենք, հիմա էլ զգում ենք, եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլեւս բացառվում է Մարտի 1-ի կրկնությունը, նկատի ունեմ՝ սպանդի կազմակերպումը, վստահ եմ, որ չի մարի: Կարող է՝ ինչ-որ ժամանակ, աշխարհաքաղաքական զարգա-

ցումների հետ կապված սառեցում ապրի, բայց ակնհայտ է, որ զարգանալու եւ հաղթելու միտում ունի:

**– Ինչպիսի՞ն են բաղբանտարկյալների տրամադրությունները: Ինչպե՞ս է ազդել թայմ-աութը նրանց վրա:**

– Շատ նորմալ տրամադրություններ են, նույնիսկ հայտարարություններով են հանդես եկել մի շարք բաղբանտարկյալներ՝ հորդորելով, որ Շարժման ղեկավարությունն առաջնային չհամարի իրենց ազատման խնդիրը, այլ կենտրոնանա ավելի կարևորագույն հարցի՝ գերտերությունների տարածաշրջանային շահերի մրցավազքի արդյունքում հնարավորինս ֆիշ կորուստներ ունենալու խնդրի կարգավորման վրա:

Հարցազրույցը՝ Ծովինար Նազարյանի

## ՌԵԺԻՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ[13]

Կասկածից վեր է, որ գործող ռեժիմը պատմության մեջ հիշատակվելու է որպես հանցավոր, իսկ 1999թ. հոկտեմբերի 27-ն ու Մարտի 1-ի սպանդը՝ իր խարդավանք նախապատրաստություններով, 10 անմեղ զոհերով, բաղամացիների հալածանքներով, հետապնդումներով, խոշտանգումներով, արդարադատության հետ որեւէ աղերս չունեցող նախաքննություններով ու դատաքննություններով, հանդիսանալու են նրա կենդանի հուշարձանը: Այնպիսի հուշարձան, ինչպիսին ստալինյան բռնաճնշումներն են բոլշեւիկյան ռեժիմի համար, որը, առանց ուսումնասիրման եւ տարածման հատուկ ջանքերի, կենդանի պատմություններով՝ «37 թիվ» անվամբ, այժմ էլ հիշվում է եւ միշտ հիշվելու է: Գործող ռեժիմի կենդանի հուշարձանն ապօրինի ազատազրկվածիս գիտակցության մեջ խտանում է, բյուրեղանում ու կերպարանք ստանում: Դա մարդակերպ մի արարած է, որն արտաքուստ հիշեցնում է Ռ. Քոչարյանի եւ Ս. Սարգսյանի խառը կերտվածքը՝ նշգրիտ Մխչյանի մկան նմանությամբ: Նա կանգնած է արյունոտ գետնակտորին փռած, հապճեպ գործած արնաթաթախ խսիրի վրա, արյունոտ ձեռքերն առաջ պարզած, բարմ արնածոր զգեստներով: Նա կանգնած է այնպիսի դիրքով, ասես՝ պատրաստվում է խլել ամեն ինչ. կյանք, ազատություն, երջանկություն, ունեցվածք, հնարավորություն...

Արյունոտ գետնակտորը Հանրապետական կուսակցությունն է: Հապճեպ գործած արնաթաթախ խսիրը՝ «Բարգավաճ Հայաստանը»:

[13] *«Հայկական ժամանակ», 09.01.2009թ.:*

Արյունոտ զգեստներն իշխանական կոալիցիայի մաս կազմող եւ ռեժիմի կերակրատաշտի մոտ կանգնած կուսակցություններն են, որոնց վերապահված է ռեժիմի էության մերկությունը քողարկելու դերը: Ինքը՝ բուն կոթողը, հանգույց առ հանգույց, ջիղ առ ջիղ, մաս առ մաս, անուն առ անուն հատ-հատ հավաքված է հանուն կերակրատաշտի ռեժիմին ծնող ու արժեքներն ուրացող կամակատարներից: Դրանք հիշյալ կուսակցությունների պատասխանատուներն են, հանցագործ օլիգարխները՝ իրենց սափրագլուխ սպասավորներով, սուտ մատնություն կատարած, բռնություն, հատուկ միջոցներ ու հրազեն գործադրած ոստիկաններ, շինծու քրեական հետապնդումներ իրականացրած քննիչներ ու դատախազներ, պատվերով ապօրինի վճիռներ հրապարակած դատավորներ, արդարադատության պատասխանատուներ, տարատեսակ ընտրակեղծարարներ, իրականությունը քողարկողներ, խեղաթյուրողներ եւ այլն: Կոթողը մարմնավորող մարդկանց այս տեսակից գոյություն ունի նույնիսկ ամենաառաջատար երկրներում, սակայն, արժանիորեն զբաղեցնելով իր տեղը՝ կոչվում է հասարակության տականք եւ ձգտում է նվազագույնի: Նորանկախ մեր հայրենիքում ռեժիմի երկու պարագլուխները՝ այս տեսակը դարձնելով առաջատար, փաստորեն նրա համար ստեղծել են ինկուբացիոն պայմաններ:

Եւ հենց նման մոտեցմամբ էր հնարավոր իրականացնել ավտորիտար կառավարում ժողովրդավարության ձգտող երկրում, որի հետևանքների համար պարագլուխների հետ հավասար պատասխանատու է կամակատարների հիշյալ բանակը: Գուցեեւ հասկանալ կարելի է, թե ինչու «37 թվի» կամակատարները՝ հները, որոնց ջանքերով հնարավոր դարձավ ստալինյան բռնաճնշումների տեղայնացումը, անկախացումից հետո չբացահայտվեցին ու չներկայացվեցին հանրությանը, որովհետեւ այն Հայաստանը սովետատուական կայսերապետության մի մասնիկն էր, եւ այդպիսի մոտեցումը պարտադրված էր ու խրախուսվում էր այնտեղից: Ինչ վերաբերում է մերօրյա կամակատարներին՝ նորերին, որոնց գերակշիռ մասի եւ հների գենետիկ կապվածությանը դույզն-ինչ չեմ կասկածում, ապա սրանց բացահայտումը՝ անուն առ անուն, օրենքով պատասխանատվության ենթարկելը եւ դրանով իսկ բոլորին միասին հասարակության տականքի իրենց արժանի տեղը վերադարձնելը պարտադիր լուծման ենթակա ազգային անվտանգության կարեւորագույն խնդիր է: Իսկ այդ խնդրի անդառնալի լուծման գլխավոր պայմանը մեր արժեքային համակարգում ազատությունն ու հնարավորությունների հավասարությունը գլխավոր չափորոշիչներ դարձնելն է: Այս խնդրի լուծմանը մասնակից լինելը շատերիս համար դարձել է կյանքի նպատակ: Ցավով եմ ասում, բայց վստահ եմ, որ առաջիկայում քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ հանդիսացող մերօրյա կամակատարների ժառանգներն ամաչելու եւ երջանկության դեֆիցիտ են ունենալու հենց սրանց պատճառով:

Հ.Գ. Այս միտքը՝ մի քիչ ավել կամ պակաս, հնչել է վերաքննիչ դատարանում՝ նրա եոյակ կազմի ակտիվ խանգարելու պայմաններում: Իսկ այն պահին, երբ պարզություն մտցնելու նպատակով, որպես օրինակ, ներկայացրեցի, որ, ասենք՝ մեղադրող դատախազ Աշոտ Նաղդյանը այդ կոթողի ձախ ոտքի ճկույթի եղունգն է, իսկ արտակարգ դատարանի ապօրինի վճիռը հրապարակած առաջին ատյանի ձեւական դատարանի դատավոր Երեմ Եսոյանը՝ այդ եղունգի վրայի սնկային գոյացությունը, դատարանը ողջ կազմով հիստերիայի մեջ ընկավ: Ես միջանկյալ նետեցի, թե իզուր է նրանց վրդովմունքը մյուսների փոխարեն, որովհետեւ իրենք էլ իրենց տեղն ունեն այդ կոթողի մեջ եւ շուտով դրանում կհամոզվեն: Սակայն հիմա էլ չեմ շտապում ցույց տալ նրանց տեղը. թող ինքնուրույն որոնեն: Նրանց եւ մյուսների համար կյանքում ընձեռված ինքնուրույն գործելու բացառիկ հնարավորություն է սա:

Դ. Մաթեւոսյան
Քաղբանտարկյալ

## «ՄԵՆՔ ԹՔԱԾ ՈՒՆԵՆՔ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՎՐԱ»
(Հարցազրույց «Ժամանակ» թերթին)[14]

**– Պարոն Մաթևոսյան, ըստ Ձեզ՝ որո՞նք են ընդդիմության դերն ու անելիքները 2009 թվականին:**

– Դասական առումով՝ ընդդիմության դերի մասին խոսելուց առաջ պետք է ունենալ մի վիճակ, որում վերջինս քաղաքական համակարգի լիարժեք եւ անբաժանելի մաս է, եւ առաջին հերթին այդ փաստը գիտակցում է իշխանությունը: Հայաստանում ունենք մի վիճակ, երբ իշխանությունը բռնազավթած ռեժիմը ոչ միայն անընդունակ է ընկալելու այս պարզ ճշմարտությունը, այլեւ թշնամական վերաբերմունք ունի ընդդիմության գոյությանն անգամ, ինչի ապացույցը Մարտի 1-ի սպանդը, ընդդիմադիրների հետապնդումները, հալածանքները եւ, վերջապես, քաղբանտարկյալների առկայությունն է Հայաստանում: Ընդդիմությունն անխուսափելի ճանապարհ է՝ գալու մի իշխանության, որը նախեւառաջ պատասխանատվություն է ժողովրդի ազատ, խաղաղ եւ բարեկեցիկ գոյության: Իսկ այս ռեժիմը, որի պարագլուխները դեռ Կեւորկովի շրջանից իշխանություն ունենալու մոլուցքով տարված հնարամիտներ են, սա երբեք չեն գիտակցում: Հետեւաբար, նաեւ 2009թ. ընդդիմության կարեւորագույն անելիքը իշխանությունը՝ որպես պատասխանատվություն դիտարկող եւ ընդդիմության գոյության անհրաժեշտությունը՝ որպես մրցակցի գիտակցող ժողովրդի իշխանության ձեւավորումն է:

[14] *«Ժամանակ», 10.01.2009թ.:*



**– Ձեր կարծիքը «7-ի գործի» դատավարության վերաբերյալ: Ինչո՞ւ է իշխանությունը տարբեր միջոցներով փորձում ձգձգել այդ գործով ընթացող դատաքննությունը:**

– Մի առիթով արդեն ասել եմ, որ ծանոթ եմ «7-ի գործին», որն ինձ վրա թողել է թափոնի տպավորություն: Եթե անջատված գործերով իշխանությունները հաջողացրին մայր գործի էությունից դուրս անկապ մեղադրանքներ ներկայացնել եւ, չունենալով բավարար, թույլատրելի ապացույցներ, մարդկանց հատ-հատ ենթարկեցին ապօրինի պատիժների, ապա այս դեպքում ստիպված են լինելու դատաքննության ընթացքում հետազոտել իշխանության կողմից ցուցարարների նկատմամբ կատարված գործողությունները, որոնց անհամապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, միջազգային նորմերին եւ համապատասխան օրենսդրությանը՝ ակնհայտ է: Եւ ինչ-որ փուլից սկսած՝ մեր 7 քաղբանտարկյալ ընկերները եւ նրանց պաշտպանները ոչ միայն պաշտպանվելու խնդիր չեն ունենալու, այլեւ իրենք են մեղադրանքներ ներկայացնելու: Կարծում եմ, սա հասկանում են նաեւ իշխանությունները, հետեւաբար «7-ի գործը» կունենա նախորդներից միանգամայն տարբերվող անակնկալ վախճան:

**– Առաջիկայում ԵԽԽՎ հունվարյան նստաշրջանում քննարկվելու է Հայաստանի կողմից թիվ 1609 եւ 1620 բանաձեւերի պահանջների կատարումը: Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կվարվեն եւրապաշտոնյաները:**

– Կարծում եմ, ԵԽԽՎ-ն հունվարյան նստաշրջանում որդեգրելու է մի մոտեցում, որի գլխավոր տրամաբանությունը լինելու է՝ որպես ժողովրդավարության ինստիտուտ խայտառակվելուց փրկվելը:

**– Դուք ստորագրել եք քաղբանտարկյալների՝ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանին ուղղված կոչի տակ, պահանջելով նրա հրաժարականը: Ո՞րն է պատճառը, ինչո՞ւմ է թերացել Մարդու իրավունքների պաշտպանը:**

– ՄԻՊ-ին վերաբերող հայտնի հայտարարության տակ ստորագրած յուրաքանչյուր քաղբանտարկյալ վրդովվում է իրեն հաջ հայտնի իրողությունների վերաբերյալ ցանկացած լղոզված վերաբերմունքից: Քանի որ այս դեպքում Արմեն Հարությունյանը մեզ հետաքրքրում է ոչ թե որպես անձ, այլ որպես Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտ,

ապա այս դեպքում մեր վրդովմունքը եւ այն հրապարակայնորեն արտահայտելը հետապնդում են կարեւորագույն այդ ինստիտուտը փրկելու նպատակ:

**– Իշխանական տարբեր շրջանակներում շատ է խոսվում համաներում կիրառելու անհրաժեշտության մասին: Դուք, որ ամենից շատ եք զգում ազատության կարիքը, ինչպե՞ս եք վերաբերվում համաներման հնարավորությանը:**

– Մենք թված ունենք համաներման վրա: Մենք դրա մասին չենք էլ մտածում: Մենք ազատության մեջ, թե ազատազրկված վիճակում մտածում ենք, որ այն կարեւորագույն խնդիրը, որի մասին ասացի առաջին հարցում, պետք է հասցվի իր տրամաբանական ավարտին: Եթե մենք ազատության մեջ պետք է լինենք, եւ այդ խնդիրը չլուծվի, դա մեզ բացարձակապես պետք չէ: Կարեւորն այդ խնդրի լուծումն է: Դա մեզ համար կյանքի նպատակ է, եւ թող դա հաջ գիտակցեն իշխանությունները:

Հարցազրույցը՝ Արտակ Եղիազարյանի

## ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ[15]

Հիշում եմ, Մարտի 1-ի արդեն պատմական սպանդից հետո՝ արյունարբու Ռ. Քոչարյանի ձեռամբ մտցված 20-օրյա արտակարգ դրության ավարտից երեք օր առաջ, նույն արտակարգ դրությունը հողարկված երկարաձգելու նպատակով՝ մեկ օրվա ընթացքում ԱԺ-ն այնպիսի մի մոտեցմամբ ձեւախեղեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքը, որ գործնականում ընդդիմությունը զրկվեց օրինական զանգվածային հրապարակային միջոցառումներ անցկացնելու հնարավորությունից:

Ի դեպ, իմ խորին համոզմամբ, իշխանությունն այս օրենքի գոյության մասին իմացավ Մարտի 1-ի սպանդն իրագործելուց հետո եւ, փաստորեն, նաեւ վրեժ լուծեց օրենքից՝ գոյություն ունենալու համար՝ որպես իրենց գործողությունների ապօրինության հայելի:

Եւ ուրեմն, որքան էլ որ ռեժիմը նախամենության, դատարանների եւ նիկոյանական հանձնաժողովի դեմքով ի սկզբանե գիտակցաբար խուսանավել է իշխանության եւ ընդդիմության գործողությունները գնահատել վերոհիշյալ օրենքի համադրությամբ, ապա, միեւնույն է, Եւրոպայի համար ի սկզբանե պարզ էր, որ Հայաստանում իշխանությունն ավտորիտար է, օրենքից դուրս, Մարտի 1-ի նկատմամբ մոտեցումը՝ միակողմանի, սուբյեկտիվ եւ թերի: Բայց ելնելով այն տրամաբանությունից, որ յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր իշխանությանը, շարունակեց համբերությամբ ճիպոտով ուղղորդել մեզ դեպի ընտրովի ժողովրդա-

[15] *«Հայրենիք իշխանություն», 27.01.2009թ.:*

վարության եւրոպական քաղաքակրթական համակարգ, որն, իր կարծիքով, մեզ համար դեռ յոթ սարի հետեւում էր եւ այդ ճանապարհը պետք է անցներ կայունության անհրաժեշտ ու տեւական հանգրվանով, որի գինն իբրեւ այդ «կայունությունը պարգեւող» ռոբերտասերժական ռեժիմը հանդուրժելն էր:

Իհարկե, այս հարցում ծանրակշիռ ազդեցություն ունի դարաբաղյան հակամարտությունը՝ որպես Կովկասյան տարածաշրջանային աշխարհաքաղաքական պրոյեկտի իրացման խոչընդոտ, բայց նյութի ծավալից ու խճճվելուց զերծ մնալու նպատակով շարունակենք առանց այս կարեւորագույն հանգամանքի:

Եւ այսպես՝ Եւրոպան, որին հավանաբար թվում էր, թե ընդդիմության կենսունակությունը մարեց Մարտի 1-ի սպանդով, շարունակական հետապնդումներով ու հալածանքներով, սկսեց խաղալ ռեժիմի հետ այնպես, ինչպես խաղում է պապը շարաճի թոռան հետ՝ անտեսելով բազմաթիվ անկարգություններ, գովերգելով դրական յուրաքանչյուր կեսմայլը:

Այսպես գովերգվեցին Մարտի 1-ին ձեւախեղված «ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքի կիսատպռատ հետփոփոխությունները: Խանդավառությամբ ընդունվեց հունիսի 12-ին նիկոյանական ամուլ հանձնաժողովի ձեւավորումը, որով եւ արդարացվեց 1609 բանաձեւի պահանջների կատարված չլինելը, եւ կատարման նախատեսված երկամսյա ժամկետը երկարաձգվեց եւս 7 ամսով:

Դեռ սեպտեմբերին որպես առաջընթաց գնահատվեցին մայր գործը դատարան ուղարկելու փաստը եւ ինչ-որ անհայտ որոշմամբ փաստահավաք խումբ ստեղծելու իշխանությունների պատրաստակամությունը, որոնց արդյունքում ձեռնպահ մնացին աշնանային նստաշրջանում Հայաստանի հարցին անդրադառնալուց, մինչդեռ այդ «առաջընթացն» իրականացավ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին եւ այլն:

Հիմա էլ արդեն Եւրոպային «ֆոցնելու» մոլուցքով տառապող ռեժիմը՝ Մկան ստորագրությամբ, մի որոշում է շրջանառել ձմեռային նստաշրջանի նախօրյակին, թե ուղիղ մինչեւ փետրվարի 19-ը (ինչու հատկապես փետրվարի 19-ի հինգշաբթի օրը, կարծում եմ, լրագրողները պատասխանը կստանան Մկից) հատկապես պոտենցիալ ձայնազուրկ



ԵԽԽՎ պատվիրակության կազմից ձեւված հանձնախումբը փոփոխություն է պատրաստելու «Քրեական օրենսգրքի» 225 եւ 300 հոդվածների ձեւակերպումներում այն հաշվով, որ այս հոդվածներով ընդդիմության ներկայացուցիչներին առաջադրված մեղադրանքներն այդ նոր ձեւակերպումներից դուրս մնան: Իհարկե, այս փոփոխությունը մեկ օրում չի արվելու, բայց դա էական չէ:

Չէ, սա իշխանության (ռեժիմի) պարտություն չէ, սա պարզապես նրա պարտության հողարկումն է: Այլեւս Եւրոպայի համար մեր եւրոպականացման արագությունը որոշակի է դարձել, եւ նրա համբերության առանձգականությունը սահման է ձեռք բերել: Իսկ սա՝ շնորհիվ այն բանի, որ վերջինս հասկացել է, որ ընդդիմությունը ոչ միայն կենսունակ է, այլեւ գիտի մտածել, հաշվարկել, հետքայլ անել, եթե դա պահանջում է պետության գերակա շահը՝ հանուն որի նույնիսկ համբերությամբ զրկանքներ կրել ու հանդուրժել ապօրինի ազատազրկումը, որ ընդդիմությունը՝ ի հեճուկս ռեժիմի կողմից գործադրված համառ ջանքերի, ոչ միայն չպառակտվեց, այլեւ համախմբվեց ու ձեւավորվեց որպես կազմակերպություն: Եւրոպան հասկացել է, որ ժողովրդավարացման ներուժն ընդդիմության ու ժողովրդի մեջ է, եւ որ ռեժիմն այդ նանապարհի խոչընդոտն է:

Զգիտեմ, թե ինչ կորոշի այսօր ԵԽԽՎ-ն, բայց համոզված եմ, որ նրա համբերության առանձգականության սահմանը մինչեւ զարնանային նստաշրջան է: Եւրոպան գիտակցում է, որ թեեւ այլեւս իր կողմից որպես գործոն ընդունվող ընդդիմության ու ժողովրդի համբերությունն էլ ունի առանձգականություն, բայց այսքանից հետո հենց իր համար պատվաբեր չէ, որ նրանց համբերության առանձգականության սահմանը լինի ավելի մոտ, քան իրենն է:

Գարունը մոտ է:

Հ.Գ. Այն բանից հետո, երբ Համմարբերգի կողմից հնչեցվեց ռեժիմի գործունեության ապօրինության վերաբերյալ առաջին օբյեկտիվ գնահատականը, ռեժիմի մանկլավիկներն իրենց փողոցային որակներին հատուկ ձեւակերպումներով հայտարարեցին, թե «փոխանակ հարցերը իրար մեջ պարզելու, վրաներս տղա են բերել»:

Դեկտեմբերի 17-ին մոնիտորինգի հանձնաժողովի նիստից հետո, երկակի ստանդարտի կիրառությամբ փոխելով իրենց ոճը, հայտարա-

ռեցին. «Սա ինչ բան ա, երկակի ստանդարտներ են կիրառում, ինչու Ադրբեջանին ու Թուրքիային չզրկեցին, իսկ Հայաստանին ուզում են զրկել»:

Էս մասին շատ է խոսում նաեւ «Կենտրոնի» Պետրոս Ղազարյանը, երեւի հանձնարարել են: Հատուկ Պետրոսին ասում եմ՝ գործ չունես, էն անցած տարվա մութ ու ցուրտ տարիներիդ փորձանքին ես գալու, մեծ տղա ես, չես հասկանում, որ յուրաքանչյուրին գնահատում են իր հնարավորությունների ու ընդունակությունների համեմատությամբ, տվյալ դեպքում՝ ժողովրդավարացման:

Իսկ ռեժիմի մանկլավիկներին ասում եմ՝ ձեր ինչ խելքի բանն է երկակի ստանդարտներից խոսելը, ձեր ոճի մեջ մնացեք, ըստ որի՝ ձեր արածը ոտղակի բ...գ...ա:

Քաղբանտարկյալ Դավիթ Մաթեւոսյան

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԽՄԲԻՆ[16]

Այն, որ շուրջ չորս ամիս է՝ արդեն գործունեություն եք ծավալում, սակայն վերջը մշուշոտ է, գոնե չի խոսվում եզրակացության ժամկետների մասին, ինձ անհանգստացնում է: Չկարծեք, թե հույս ենք փայփայում օր առաջ ազատվելու մասին եւ այդ հույսը կապում ենք ձեր գործունեության հետ: Ամենեւին. ես եւ իմ տասնյակ քաղբանտարկյալ ընկերներն ապօրինի պատիժ անազատությունն արժանապատվորեն կրելը համարում ենք այս վիճակը չհանդուրժելուն ուղղված պայքարի մի բաղադրիչը եւ դրանով հաստատում մեր մասնակցությունը համաժողովրդական շարժմանը:

Անհանգստանում եմ, որովհետեւ կարծում եմ, թե ձեզ ներքաշել են մոլորության մեջ, եւ դրա նպատակը դարձյալ ժամանակ ձգելն է:

Ամենեւին ձեր խնդիրը չէ, թե ում կողմից են իրականացվել (նկատի ունեմ կոնկրետ անձի) 10 անձանց սպանությունները՝ դա նախաքննության մարմնի խնդիրն է: Բայց ձեր խնդիրն է հաստատել ակնհայտ մի նշմարտություն, որ նախաքննությունը միտումնավոր իրականացվել է միակողմանի, սուբյեկտիվ ու թերի, եւ ոչ միայն «Մարտի 1-ի» գործով, այլ դրանից կ առաջ: Համոզված եմ, եթե ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ Քոչարյանը չհրապարակեր, որ դեռ այն ժամանակ պաշտոնապես հայտարարված 8 զոհերից 3-ը զոհվել են հատուկ միջոցների կիրառության հետեւանքով, ապա նախաքննությունն իր նախաձեռնությամբ դա էլ չէր պարզելու: Համոզված եղեք, որ ռեժիմի պարագլուխ նույն Քոչարյանին հայտնի էին նաեւ բոլոր զոհերի սպանության հան-

[16] *«Հայկական ժամանակ», 17.02.2009թ.:*

գամանքները՝ դա հատուկ է ավտորիտար ռեժիմին, ուղղակի՝ նախաքննության մարմնի առջև խնդիր է դրվել թաքցնել այդ ամենը, ինչը եւ նրանք կատարում են ամենայն պատասխանատվությամբ:

Ձեր խնդիրը շատ ճստակ է.

– հենվելով Սահմանադրության (հատկապես հոդված 3-ի՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» դրույթի) եւ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» օրենքի վրա՝ տալ ընտրության արդյունքները Սահմանադրական դատարանում վիճարկող ընդդիմության նկատմամբ մարտի 1–2-ին իշխանության կողմից իրականացված գործողությունների իրավական գնահատականը՝ հաշվի առնելով բանակի նախօրոք ներկայությունը,

– հենվելով Սահմանադրության (հատկապես՝ հոդված 5-ի) եւ քրեադատավարական օրենսդրության վրա՝ տալ նախաքննության եւ դատաքննության մարմինների գործունեության գնահատականը Մարտի 1-ին եւ դրանից առաջ հարուցված գործերով, որոնք առնչվում են ընդդիմության ներկայացուցիչների քրեական հետապնդումներին:

Վստահ եմ, ձեր սպառած ժամանակի կեսն էլ բավարար էր՝ այս երկու գնահատականներով եզրակացություն տալու համար, որովհետեւ փաստերն անպատ են եւ ամենուր: Օրինակ՝ եթե ուսումնասիրեք 225 հոդվածի 1-ին մասով 5 տարի դատապարտված Գեորգ Ղազարյանի գործից փորձագետի եզրակացությունը, ապա կտեսնեք, որ ինչ-որ մեկի մեքենայի բեռնախցիկի՝ փորձաքննության ուղարկված գորգի վրա հայտնաբերվել են երկաթի միկրոմասնիկներ, որի արդյունքում նախաքննության մարմնի մոտ համոզմունք է ձեւավորվել, թե պայմանավորվածությամբ պայմանական ազատազրկված սեփականատիրոջ մեքենայի բեռնախցիկով տեղափոխվել են երկաթե ձողեր, որոնք օգտագործվել են մասսայական անկարգություններ կազմակերպելու համար: Իսկ Ազատության հրապարակի մատույցներից, իբր, հայտնաբերված ողորկ մակերեւույթ ունեցող զենք-զինամթերք եւ այլ առարկաներ փորձաքննության ուղարկելու որոշման մեջ մատնադրոշմային փորձաքննություն կատարելու պահանջ դրված չէ եւ չի կատարվել: Այսինքն՝ այդ առարկաների պատկանելությունը որոշելու նախաձեռնություն ցուցաբերված չէ: Սա՝ իմիջիայլոց. Գեորգին խոստացել էի, որ սրա մասին թերթում կգրեմ:



Ձեմ ուզում ձեր առջեւ դնել լրջագույն խնդիր՝ ընտրությունները, որի ածանցյալն է այս ամենը: Մի կողմ թողնելով համակարգված շարաշահումների եւ կեղծումների բազմաթիվ արձանագրված փաստերը՝ միայն այն, որ եւրակառույցների պատվերով Երեւանի մամուլի ակումբի փորձագետների կողմից անցկացված հետուստաքննկերությունների մոնիտորինգի արդյունքներով խախտվել է Սահմանադրական կարգի առանցքային հիմունքներից մեկը՝ ընտրական իրավունքի հավասարության սկզբունքը (հոդված 4), ուստի ոչ մի Եւրոպա, ոչ մի Ազարյան, ոչ մի Գագիկ Հարությունյան չի կարող եւ իրավասու չէ գնահատել, թե ինչ ազդեցություն կարող էր ունենալ այդ խախտումն ընտրության արդյունքների վրա: Սահմանադրությամբ նախատեսված կարգից տարբերվող որեէ այլ տարբերակով իշխանության զալն իշխանության յուրացում է: Ուստի, իշխանությունը յուրացված է Սերժիկ Սարգսյանի կողմից՝ հիշատակված եւ այլ անձանց օժանդակությամբ: Բայց սա այլեւս ժողովրդի գործն է, իսկ դրա մասին իմ կարծիքը կհայտնեմ հաջորդ հոդվածով:

Ինչեւէ, եթե առաջիկայում՝ մինչեւ նիկոյանական հանձնաժողովի գործունեության ժամկետի հերթական երկարաձգումը, փաստահավաք խումբը չհայտարարի վերոհիշյալ երկու գնահատականների հիման վրա ձեւակերպված եզրահանգման ողջամիտ ժամկետը (որը չի կարող լինել ավելի ուշ, քան ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի առաջիկա համապատասխան նիստը) եւ դրանով իսկ չկանխորոշի հիշյալ հանձնաժողովի գործունեության ժամկետի ողջամիտ երկարաձգումը, ուրեմն դում իրոք մոլորվել եք՝ ներքաշվելով դետեկտիվ խաղերի մեջ: Բայց որ ամենավտանգավորն է՝ մեխանիկորեն դառնալու եք այն գործիքը, որով գարնանային նստաշրջանում հերթական բանաձեւով երկարացվելու է նախորդ բանաձեւերի պահանջների կատարման ժամկետը: Ի դեպ, 1643 բանաձեւով այդ հողը նախապատրաստված է: Իսկ սա կնշանակի հայ հասարակության հերթական հիասթափություն նաեւ ձեզանից:

Մնամ ձեր նամակին սպասող...

Հ.Գ. Հերթով սկսում է լրանալ քաղբանտարկյալներիս՝ ապօրինի անազատության մեջ պահվելու առաջին տարին: «Վարդաշեն» ՔԿՀ-ում

յուրաքանչյուրս այդ տարելիցը նշելու ենք յուրովի: Ասենք՝ Աշոտ Զաքարյանին սեռազգետ սափրագլուխներն առևանգել էին, երբ նա ճաշում էր՝ պատվիրված խինկալին դեռ չկերած: Ուստի, փետրվարի 25-ին Աշոտի անազատության տարելիցը կնշենք խինկալու սեղանի շուրջ համախմբված:

## ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵԻ ԻՐԱՎՈՒՆՔ Է[17]

Հայության հայացքը միշտ է ուղղված եղել դեպի առաջադեմ Եւրոպա՝ նպատակ հետապնդելով նրանից սովորելը, փոխառնելը, յուրացնելը:

Ու քանի դեռ մեզ չի հաջողվել դա գլուխ բերել բավարար մակարդակով, մարդիկ շարունակում են հեռանալ Հայաստանից, ինչը մեզ համար ծանր ու անդառնալի կորուստ է: Մարդիկ չեն հեռանում դեպի արևելք, ասենք՝ Իրան, Իրաք ու Աֆղանստան: Ուստի, նրանք հեռանում են ոչ միայն կարիքից դրդված, այլ նաև ազատություն ձեռք բերելու գիտակցումով՝ դեպի Եւրոպա: Եւ սա նորություն չէ: Այս առումով հայ քաղաքական միտքը փայլատակել է շուրջ 250 տարի առաջ, ինչն արտացոլված է հետևյալ ձևակերպման մեջ. «Բաց անեն իրենց աչքերը եւ հասկանան ազատության իսկական նշանակությունը, որի մասին բոլոր ասիացիները ոչ մի գաղափար չունեն՝ սկսած աշխարհիս ստեղծվելուց մինչեւ այսօր: Դրան ապացույց՝ այն ընդարձակ երկրները, որոնք կառավարված են եղել հատ-հատ բռնակալների ձեռքով, բռնակալների, որոնք վայրի գազանների պես հոշոտում էին իրենց հպատակներին»: Եւ քանի որ արեւելքցիները չգիտեն, թե ինչ է ազատությունը, այս գրքի հեղինակը չէր կարող, ուրեմն, Ասիայում սովորել դրա նշանակությունը. ուստի նա գնաց Եւրոպա եւ բարեբախտաբար հասկացավ ի վերջո, որ ազատությունը կյանքի բոլոր բարիքների միակ աղբյուրն է»: Իհարկե, բարեբախտություն է, որ Հովսեփ Էմինը 250 տարի առաջ ոչ միայն հասկացել է այս ճշմարտությունը, այլեւ արձանագրելով դա՝ դարձրել է ժառանգություն:

[17] *«Հայկական ժամանակ», 20.02.2009թ.:*

Դժբախտություն է, սակայն, որ մեր օրյա իշխանավորները (այսուհետեւ՝ սրանք) ամեն օր, գիշեր ու զոր զվոնելով եւրոպաներում, դա էլ միշ է՝ եւրոպաներն են ամեն օր այստեղ գալիս ուսուցչի կարգավիճակով, համառորեն չեն ուզում ընկալել այս պարզ նշմարտությունը՝ տանելով մեզ դեպի կործանում:

Անկախությունն ազատություն ունենալու միջոց է: Եթե Հովսեփ Էմինը երազում ու տենում էր դա ունենալու համար, ապա այդ միջոցը սրանց տրված է: Մինչդեռ բուն նպատակին ծառայեցնելու փոխարեն, վրեժխնդիր լինելով այժմ էլ ազատության համար պայքարող՝ Հայաստանի անկախության ճարտարապետներից ու զինվորներից, անում են ամեն ինչ՝ ազատության ձգտող ժողովրդին կոտրելու համար: Ամենավտանգավորն այն է, որ սրանք զուրկ են ժողովրդի ու պետության առջեւ պատասխանատվություն ստանձնելու իրական գիտակցումից: Հանձարեղ է ասված՝ իրոք որ, գործնականում ունենք մոնոլ-բաբարական խանական համակարգ: Եւ այդ համակարգը պահպանելու համար սրանք, նույն Եւրոպային խաբելով, նրա աչքերին թոզ փչելով, երկդիմի ու կեղծավոր արարքներով, նրա բարեւարությունը շահագործելով՝ ժամանակ են ձգում եւ այդ ընթացքում անում առավելագույնը՝ քաղաքացու մեջ ազատության ձգտումը սպանելու, նրան հպատակ դարձնելու համար: Մի կողմ թողնենք այն իրողությունը, որ սրանց իրական գործունեությունը հակասության մեջ է եւրոպական ժողովրդավարական քաղաքակրթական արժեհամակարգի հետ, եւ այդ իսկ պատճառով, շարունակական մոնիտորինգի պայմաններում, Մարտի 1-ից հետո ընդունված առայժմ երեք բանաձեւերով ԵԽԿ-ն փորձում է «մոլորյալ» զավակին ուղղորդել դեպի ճիշտ ճանապարհ:

Խնդիրն այն է, որ այդ արժեհամակարգը կրելու անփոփոխելի պարտավորությունը մենք մեզ համար ստանձնել ենք մինչեւ ԵԽ-ին անդամակցելը՝ 1995 թվականի հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ: Իսկ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն: Դիտարկենք սահմանադրական կարգի մի քանի առանցքային հիմունքների եւ մեր իրականության անհամապատասխանությունները:

**Հոդված 2.** եւ **4.** «*ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդը իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների միջոցով, որոնք անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ*»: Ըստ էության, իշխանություն ձեւավորելու այլ ճանապարհ գոյություն չունի: Իսկ լինելու դեպքում՝ դա կոչվում է իշխանության յուրացում: Իրականում, ազատ ընտրական համակարգի փոխարեն գործում է համակարգված ընտրակեղծիքի մեխանիզմ (այլ ճանապարհ), եւ փաստորեն ժողովուրդը, զրկված լինելով ազատ ընտրություններով իշխանություն ձեւավորելու իրավունքից, զրկված է իշխանությունից: Այդ իսկ պատճառով, մարդկանց գիտակցության մեջ տիրապետում է այն տեսակետը, որ Հայաստանում չկան ազատ ընտրություններ, հետեւաբար՝ ընտրություններով հնարավոր չէ սրանցից ազատվել: Փաստորեն, սահմանադրական կարգի առանցքային այս նորմից հետեւում է, որ Հայաստանում՝ ոմանց օժանդակությամբ, իշխանությունը հաջորդաբար յուրացվել է Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժիկ Սարգսյանի կողմից: Պետք է հիասթափեցնեմ Արծվիկ Մինասյանին՝ 300 հողվածը հանելու նրա առաջարկության կապակցությամբ: Հոդվածի գոյությունը պայմանավորված է Սահմանադրության Հոդված 2-ով՝ իշխանության յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

**Հոդված 3.** «*Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք*»: Սահմանադրական այս դրույթի համեմատ՝ իրականությունը շրջված է գլխիվայր: Այսպիսի հակասահմանադրական իրականությունը հատկապես արտացոլվեց 2008-ի նախագահական ընտրությունների նախապատրաստման փուլից սկսած եւ շարունակվում է մինչեւ հիմա՝ այնպիսի ծայրահեղ դրսեւորումներով, ինչպիսիք են՝ խաղաղ, առանց զենքի հանրահավաքների ու երթերի արգելումը, հանրահավաքներին մասնակցել ցանկացող քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի բռնի սահմանափակումները, քաղաքական հայացքների եւ կարծիքն ազատ արտահայտելու համար քաղաքացիներին շինծու քրեական հետապնդումների, խոշտանգումների, ան-

մարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի ենթարկելը, ձերբակալելը, կալանավորելը, ազատազրկելը եւ այլն: Իսկ մարտի 1-ի առավոտյան խաղաղ նստացույցի ջարդով դադարեցումը եւ երեկոյան առայժմ հայտնի 10 զոհերով սպանդի իրագործումը՝ ընդհանրապես դուրս է Սահմանադրության պատկերացումներից: Համատարած անաբեկումների պատճառով սրանց կողմից մարտի 1-ին եւ հետո կատարված բազմաթիվ ապօրինություններ հայտնի կդառնան իշխանափոխությունից հետո:

**Հոդված 5.** «*Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով*»: Զբաղեցնելով մանրամասնությունների հետեւից, բոլորին էլ պարզ է, որ այս կարեւորագույն դրույթը չի գործում սրանց նպատակային ջանքերի շնորհիվ, որով եւ պայմանավորված է ավտորիտար ռեժիմի գոյությունը:

**Հոդված 8.** «*ՀՀ-ում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը: ՀՀ-ում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը*»: Թե բոլորի աչքի առաջ ինչպիսի խարդավանքներով են փորձում «Բջնի» հանքային ջրերի գործարանը խլել Սոմիասյաններից՝ սեփականատերերից, կամ տնտեսական մենաշնորհից օգտվող արտոնյալների (հանցագործ օլիգարխների) ինչպիսի կազմ կա Հայաստանում՝ ժողովուրդը ճանաչում է անուն առ անուն, որոնք եւ սահմանադրական այս դրույթին հակառակ իրականության վկայություններն են:

Կանգ առնենք, այսքանն անգամ բավարար է՝ ամփոփելու համար, որ Հայաստանում ժողովրդի իշխանությունը յուրացվել է սրանց կողմից, եւ չի գործում սահմանադրական կարգը:

Ո՞րն է ելքը: Ելքը մեզ հուշում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը համապարտադիր ուժ ունի ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների, այդ թվում եւ՝ Հայաստանի համար: Հռչակագրի նախաբանում ասվում է. «...որպես մարդկության վեհ նպատակ հռչակված է այնպիսի աշխարհի ստեղծումը (մեր դեպքում՝ աշխարհը



Հայաստանն է.- Դ.Մ.), ուր մարդիկ կփայլեն խոսքի ու համոզմունքի ազատությամբ եւ զերծ կլինեն վախից ու կարիքից, որպեսզի մարդը հարկադրված չլինի դիմելու ապստամբության ընդդեմ բռնակալության ու ճնշման՝ որպես վերջին միջոցի»: Իհարկե, ԵԽ-ի, ՄԱԿ-ի, ՀՀ ժողովրդի ու հանրաքվեով ընդունված Սահմանադրության նպատակները՝ բաղձալի Հայաստան ունենալու առումով, համընկնում են: Այսօր այդպիսի Հայաստանի ստեղծման գլխավոր խոչընդոտն իշխանությունը յուրացրած ռեժիմն է, որից ազատվելու պատասխանատուն, սակայն, ոչ ԵԽ-ն է եւ ոչ էլ ՄԱԿ-ը, այլ՝ մենք: Իսկ ճանապարհը մեկն է՝ ապստամբություն: Ապստամբությունն, ինչպես տեսաք, նաեւ իրավունք է, մեր դեպքում՝ նույնիսկ իրավական պարտականություն:

Մնում է ժամկետների առումով համաժողովրդական շարժման ղեկավարների եւ Հյուսիսային պողոտայում համախմբված՝ ապստամբության կորիզը կազմող մարդկանց պայմանավորվածությունը: Գարունը բացվում է...

16.02.2009թ.

## «ՎԱՐԴԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ[18]

Սա այն պարսպապատ ու զենքով պահպանվող տարածքներից մեկն է, ուր պահվում են բանտարկյալները:

Սա այն օջախներից մեկն է, ուր նախեւառաջ հենց բանտարկյալների, ապաեւ հիմնարկության աշխատակիցների շնորհիվ առարկայացավ քաղբանտարկյալ հասկացությունը, ճառագայթվեց, տարածում գտավ ու ամրապնդվեց որպես հասարակական գիտակցություն:

Այստեղ պահվող մարդիկ, որոնք մեր հասարակության մի հատվածն են, այստեղ են հայտնվել որեւէ արարք կատարելու հետեւանքով, որոնք որակվել են որպես հանցանք համապատասխան լիազորություն ունեցող այնպիսի անձանց կողմից, որոնք օրենքով արգելված եւ դատապարտելի միջոցներով վաստակելը դարձրել են վարքագիծ: Քաղբանտարկյալներից բացի, մնացյալին կարելի է բաժանել երեք խմբի:

– Մարդիկ, որոնք այստեղ են հայտնվել կոռումպացված արդարադատության մաղով անցնելուց՝ փողի ու հովանավորության զտումներից հետո: Սրանք անտեր ու հավելյալ միջոցներ չունեցող մարդիկ են (այլապես այստեղ չէին լինի) եւ ցուցանիշ ապահովելու միջոցներ են:

– Մարդիկ, որոնց հանցանք որակված արարքն ուղղված է եղել ռեժիմի հովանավորյալ այս կամ այն արտոնյալի նկատմամբ: Որպես կանոն, այս մարդկանց կատարած արարքը որակված է չափազանցումով, եւ տրված առավելագույն պատիժը նրանք կրում են մինչեւ վերջ:

[18] *«Ազգային իշխանություն», 07.03.2009թ.:*



– Մարդիկ, որոնք վայելում են ռեժիմի հովանավորությունը, սակայն հանցանք որակված արարքը ստացել է հասարակական հնչեղություն, եւ այստեղ են հայտնվել հենց այդ պատճառով՝ մինչեւ դրա մարումը: Որպես կանոն, սրանք ազատ են արձակվում դեռ կալանքի շրջանում, իսկ ծանր հանցագործությունների դեպքում՝ տարբեր հնարքների գործադրմամբ արարքը հնարավորինս մեղմ որակելուց եւ նվազագույն պատիժ նախատեսելուց հետո, հենց սրանց պատժի չկրած մասն են ավելի մեղմ պատժատեսակով փոխարինում կամ պայմանական վաղաժամկետ ազատում:

Այստեղ են պահվում նաեւ օտարերկրյա քաղաքացիները, հետեւաբար՝ այս հիմնարկն արտաքին աշխարհի համար ամենակարեւ ճանապարհն է եթե անդամ Հայաստանի քրեակատարողական համակարգի մասին պատկերացում ունենալու:

Ամենահիշարժան յուրահատկությունն այն է, որ այստեղ ամենաբազմազան ինֆորմացիան առատորեն ներթափանցում է զարմանալի օպերատիվությամբ: Ասածս հիմնավորելու համար ներկայացնեմ ամենաթարմ տեղեկություններից մեկը, ըստ որի՝ մարտի 1-ի հանրահավաքի նախօրյակին Չինաստանի դեսպանատնից զանգել են դռդի էդոյին եւ ասել, որ վերջինս փոխանցի իր տիրոջը, թե Չինաստանի դեսպանատունը պատրաստ է, ներքաղաքական լարվածության խորացման դեպքում, ապաստան տալ նրան: Եւ այս տեղեկությունը մեզ է հասնում նույն օրը:

Թե ինչու է այս տեղեկությունը մտել «Վարդաշեն» ՔԿՀ՝ չգիտեմ, գուցե նրա համար, որ այստեղ պահվում են նաեւ օտարերկրյա քաղաքացիներ, թեպետ չինացի չկա: Բայց կարող է, չէ, Չինաստանի նման պետության դեսպանն իրեն թույլ տա մտածել, որ «Վարդաշենի» տարածքը դեսպանատան տարածքի կարգավիճակով իրենցն է՝ այն նույն տրամաբանությամբ, որով Սերգեյ Միրոնովը Հայաստանը համարում է Ռուսաստանի ֆորպոստը՝ ծայրից ծայր: Թե ինչու են հենց դռդի էդոյի միջոցով փոխանցել այս պատրաստակամությունը (գուցե էդոն չինարեն գիտի) կամ թե ապաստան ասելով՝ դեսպանատունն են նկատի ունեցել, թե «Վարդաշենը», իհարկե՝ չինացիների գործն է: Ինձ մասնավորապես հետաքրքրում է՝ հասկացել է արդյոք մեծագույն բարերարի

համբավ ունեցող Գագիկ Մաոուկյանը, թե ինքն ինչի համար կարող է ապաստանի կարիք ունենալ, հետեւություններ արել է:

Լավ, շեղվեցինք, վերադառնանք «Վարդաշեն», ավելի ճիշտ՝ բեռակատարողական օրենսդրությամբ նախատեսված պայմաններին եւ այստեղի իրականության որոշ համեմատությունների:

Այս բնագավառում հարաբերությունները կարգավորող նոր օրենսդրությունն ընդունվել է 2004 թվին, բնականաբար՝ նպատակ հետապնդելով եւ շափորոշիչներին բնագավառի համապատասխանեցումը: Թեեւ աշխատակազմում կան օրենքով գործին գիտակ որոշ աշխատողներ, բայց, մնծագույն ցանկության դեպքում անգամ, նրանք չեն կարող որակ փոխել, որովհետեւ չկա նման պահանջ, իսկ աշխատողների մեծամասնությունը՝ օրենսդրությունից անտեղյակ, առաջնորդվում է «պետի հրամանն է» կարգախոսով: Ընդհանուր առմամբ, վարչակազմը, տեսականորեն ունենալով լրջագույն օրինական լիազորություններ, գործնականում զրկված է դրանցից եւ փաստորեն օժտված է պահակի կարգավիճակով:

Կատարենք մի քանի առանցքային դիտարկումներ.

1. Ըստ օրենքի (հոդվ. 73)՝ մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս մետր քառակուսուց, իսկ յուրաքանչյուր կացարանում պահվող մարդկանց առավելագույն քանակը չի կարող գերազանցել վեց հոգուց:

Այստեղ, սակայն, դատապարտյալների խտությունն անհամեմատ մեծ է: Կոնկրետության համար ասենք, որ, օրինակ՝ թիվ 9 կացարանում, ուր պահվում են նաեւ քաղբանտարկյալներ Վարդան Ղավալաբունցը, Տիգրան Մկրտչյանը եւ Քրիստափոր Էլազյանը, պահվող բանտարկյալների քանակն ութն է, իսկ կացարանի մակերեսը՝ ուղիղ 25 մ/քառ:

Այս պայմաններում մեկ օր, մեկ շաբաթ կամ մեկ ամիս չէ, որ ապրում են, այստեղ ապրում են տարիներով: Մեկուսարանում, ուր օրենքով յուրաքանչյուր խցում պահվողների թիվը չի կարող գերազանցել չորս մարդուց, հիմնականում պահվում են 5 հոգի, իսկ ռումինացիների խցում 6-ն են: Այս խցերի մակերեսը 13–14 քառ. մետր է: Միջանկյալ ասենք, որ քաջատեղյակների վկայությամբ՝ «Նուրարաշեն» ՔԿՀ-ի կլոր մասնաշենքի 25 քառ. մետր մակերես ունեցող յուրաքանչյուր խցում, նախատեսված 4-ի փոխարեն, պահվում են 15, երբեմն 18 մարդ, շատ



հաճախ՝ առանց մաքուր օդում օրենքով նախատեսված զբոսնելու հնարավորության: Այստեղ մարդը հումք է, բիզնեսի առարկա՝ փող աշխատելու միջոց, ուստիեւ առաջնորդվում են «որքան շատ, այնքան լավ» սկզբունքով:

Իսկ Հայաստանի կողմից պաշտոնապես ընդունված եւրոպական չափորոշիչներով՝ դատապարտյալին օրենքով նախատեսված պայմաններից վատ պայմաններում պահելը համարվում է խոշտանգում:

Այստեղ դատապարտյալներն ու աշխատակազմը այս վիճակի համար պատասխանատու ու մեղավոր են համարում 2006-ի հուլիսի 31-ին ՆՀ-163-ն նախագահի հրամանագրով կազմավորված անկախ հանձնաժողովներին: Տվյալ դեպքում՝ «Վարդաշենին» սպասարկող հանձնաժողովի նախագահ, տխրահռչակ Հովիկ Հունանյանին, որից եւս փչում է Մարտի 1-ի արյան հոտը: Բանն այն է, որ դատապարտյալների կեսից ավելին վաղուց արդեն փաստացի կրել է պատժի օրենքով սահմանված վաղաժամկետ պայմանական կիրառելու համար սահմանված ժամկետը: Այս կազմից դրական բնութագրվող եւ տույժ չունեցող դատապարտյալների վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հիմնարկի վարչակազմի միջնորդությունը դատարան ուղարկելուց առաջ, ինչպես նախատեսված է օրենքի 2006բ. լրոգված փոփոխումով, ներկայացվում է այս անկախ հանձնաժողովին: Մի կողմ թողնենք, որ առանց ազդեցիկ հովանավորի եւ նյութական շահագրգռման՝ այս հանձնաժողովի հավանություն տալու հնարավորությունը զրոյական է: Միջին վիճակագրությամբ, սրանք 10-ից 1-ի մասով են հավանություն տալիս միջնորդությունը դատարան ներկայացնելուն, ուր եւս գործում են համապատասխան սակագներ: Եւ հենց այս պահից սկսած՝ հիմնարկության վարչակազմը ձեռք է բերում պահակի կարգավիճակ, իսկ դատապարտյալների խտությունը մեծանում է:

2. Օրենքով՝ ուղղիչ հիմնարկի կանոնակարգի նպատակը սահմանված է նաեւ ազատության ու ազատազրկման մեջ գտնվելու միջեւ եղած հոգեբանական տարբերության հնարավորինս նվազեցումը, ինչպես նաեւ ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ կապի ապահովումը:

Սրանից ելնելով՝ դատապարտյալներին իրենց հաշվին կանոնակարգով թույլատրված է հիմնարկում տեղակայված տաքսաֆոնից յուրաքանչյուր օր՝ ժամը 10-ից 22-ը կապ հաստատել որքան ցանկանում են:

Մինչդեռ նույն կանոնակարգին կցված արգելված իրերի, առարկաների եւ սննդամթերքի ցանկ մտցնելով բջջային հեռախոսը, ոչ միայն հակասում են օրենքով սահմանված նպատակին, այլեւ փաստորեն պատժում են դատապարտյալի հարազատներին՝ ստիպելով նրանց՝ որեւէ տեղեկություն փոխանցելու նպատակով կատարելու ժամանակի, միջոցների եւ նյարդերի անտեղի վատնում:

3. Թեեւ նույն կանոնակարգով նախատեսված է, որ դատապարտյալների կացարանները կարող են խուզարկել նոր հանցագործություն կատարելը կանխարգելելու նպատակով, իսկ դատապարտյալի անձնական խուզարկություն նախատեսված է միայն ազատ տեղաշարժվելու համար նախատեսված տարածքի սահմանը որեւէ նպատակով հատելու եւ տեսակցությունների դեպքերում, բայցեւայնպես՝ աշխատակիցների մի խումբ ամեն օր, նույնիսկ երբեմն օրական մի քանի անգամ մտնում է կացարաններ ու առանց հիմնավորման խուզարկում խցերն ու դատապարտյալներին՝ որպես միակ նպատակ հետապնդելով բջջային հեռախոսների հայտնաբերումը: Իսկ հեռախոսները հայտնաբերելով չեն սպառվում:

Վերջերս, նորանշանակ՝ դատապարտյալների հետ շփվելուց խուսափող պատասխանատու աշխատողների նախաձեռնությամբ, դատապարտյալների աչքի առաջ աշխատողներին բաժանել են երկու խմբի: Առաջին խումբը ճամալրված է հանուն աշխատանքը չկորցնելու վերադասի ցանկացած հրաման կուրորեն կատարողներից: Երկրորդ խումբը՝ ծառայության բերումով, դատապարտյալների հետ ուղղակի եւ անուղղակի շփվողներից է: Ամեն օր առաջին խումբը խուզարկում է երկրորդ խմբին (երբեմն նույնիսկ՝ տարածքից դուրս կանգնած նրանց մերենաները)՝ հիմնարկ մտնելուց եւ դուրս գալուց առաջ: Ամեն օր առաջին խումբը ստորացնում է երկրորդ խմբին՝ գիտակցելով հանդերձ, որ ստորանում է նաեւ ինքը:

Նյութն առատ է, այս թեման կարելի է երկար շարունակել, սակայն չմանրամասնի եւ ավարտելով ասենք, որ այսմանից հետո էլ՝ ամենաատանելին մնում է «Հայլուրը»:

## ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ ԸՆԴԱՌԱՋ[19]

### Կոալիցիոն ցուցակը գլխավորում է Սերժիկ Սարգսյանը

Իզուր է Պարույր Հայրիկյանը փորձում մամրագործել Սերժիկ Սարգսյանին՝ Մարտի 1-ի արյան ողջ մեղքն ու պատասխանատվությունը տալով Ռոբերտ Քոչարյանին: Սերժիկ Սարգսյանը նույնքան մեղավոր ու պատասխանատու է, նրա ձեռքերը նույնքան արյունոտ են, որքան Քոչարյանինը: Եւ սա ոչ միայն մարտիմեկյան սպանդի, այլ նաեւ 1999թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործության առումով: Դեռ ավելին, իշխանությունն արյան գնով ժառանգելուց հետո՝ հենց նա է հազարավոր քաղաքացիների հանիրավի հալածելու, շատերին շինծու քրեական հետապնդումներով մինչեւ այսօր բանտերում պահելու, քաղաքացուն հպատակ դարձնելու նպատակով վախի մթնոլորտը թանձրացնելու հիմնական պատասխանատուն:

Հենց այդ նպատակով է, որ առանց այն էլ կոռումպացված եւ հեղինակություն չունեցող ոստիկանությունը, անվտանգության ծառայությունը, դատախազությունն ու դատարանները վերածվեցին մարդու արժանապատվության, հիմնական ազատությունների ու իրավունքների ոտնահարման նպատակով գործածվող գործիքի, իսկ նրանցում ընդգրկված աշխատակիցների մեջ մինչեւ վերջ վերացնելով մասնագետին՝ դարձրեցին կույր կամակատարներ: Այդպիսի մի գործիքի վերածվեց Երեւանի քաղաքապետի պաշտոնը: Միայն 2008թ. մարտի 1-ից հետո՝ քաղաք-

[19] *«Ազգրոդ իշխանություն», 07.04.2009թ.:*

պետի ապօրինի որոշումներով արգելվել են շուրջ հարյուրի հասնող զանգվածային հրապարակային միջոցառումներ:

Առհասարակ, ի հեռուկս Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ պարբերության, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք առաջնորդվում են ոչ թե Սահմանադրությամբ եւ օրենքներով, այլ հանուն ռեժիմի կորպորատիվ շահի սպասարկման՝ գործում են Սերժիկ Սարգսյանի կողմից տրվող ապօրինի հրահանգներով: Հայաստանում իրականացվում է ավտորիտար կառավարում, եւ ըստ անհրաժեշտության՝ փաստացի ռեժիմի պարագլուխներն են գլխավոր դատախազը, դատավորը, ...գյուղապետը եւ, բնականաբար, Երեւանի քաղաքապետը:

Հետեւաբար, Երեւան քաղաքի ավագանու առաջիկա ընտրությունների կոալիցիոն ցուցակն իրականում գլխավորում է Սերժիկ Սարգսյանը, կամ՝ նա է իրական քաղաքապետի թեկնածուն: Վերջինս Երեւանի քաղաքապետի իր տեղապահին ընտրել է իրեն ամենահոգեհարազատ ուժի՝ հանցավոր օլիգարխիայի ներկայացուցչին: Սա, այլեւ, Սերժ Սարգսյանի կողմից որդեգրած կուրս է եւ երկրորդն է Տիգրան Թորոսյանին Մուկ Հովիկով փոխարինելուց հետո: Երվանդ Զախարյանին Սեւ Գագոյով փոխարինելու արդյունքում երեւանցիների վիճակը ոչնչով չի փոխվում: Միակ փոփոխությունն այն է լինելու, որ քաղաքապետարանում մանրմուռ կենցաղային հարցեր լուծելու «մանդատ» ունեցող անձանց տեսակարար կազմը փոփոխվելու է հօգուտ քաղաքային ու փողոցային հեղինակությունների:

## Նախագահական ընտրությունների 2-րդ փուլը՝ Երեւանում

Մինչդեռ երեւանցիներն արդեն համակարգային փոփոխություններ են ուզում եւ, Տեր-Պետրոսյանի առաջադրմամբ՝ առաջիկա ընտրությունները դիտարկում են իբրեւ համակարգային փոփոխությունների հնարավորություն՝ համապետական ընտրություններ, եթե կուզեմ՝ նախագահական ընտրությունների երկրորդ փուլ:

Հենց սա հասկանալով է, որ ռեժիմն ընտրություններին գնում է կոալիցիոն «ապահարզանով»՝ առանձին-առանձին, նախեւառաջ դյուրացնելու համար երեւանցիներին համոզելը, թե սա ընդամենը Երեւանը



մաքուր պահելու պատասխանատվություն ստանձնելու մրցակցություն է: Դա արդեն ազդարարել է «էգ աոյուծի» դեմքով հանդես եկող ՕԵԿ-ը: ՀՅԴ-ն, Արմեն Դուլյանի ձեռամբ, օրինվել է որպես «կոալիցիոն ամենաընդդիմադիր», որն էլ իր հերթին փորձ է անում ներկայացնել, թե «ժառանգության» էլեկտորատը համակրում է Դաշնակցությանը, որովհետեւ, ըստ Արմեն Ռուստամյանի, Բաֆֆի Հովհաննիսյանը համարյա դաշնակ է: Լուրեր են շրջում, թե լարված «մրցակցություն է» սպասվում սերժանտացած հանցածին ՀՀԿ-ի ու 2007թ. ԱԺ ընտրությունների նախօրյակին 420 թե 440 հազար անդամ ունենալու մասին հայտարարած, սակայն՝ կարտոֆիլ, տուկի թել ու ընտրակաշառք բաժանելով ու առողջապահական գործառույթներ իրականացնելով ընդամենը 204 հազար ձայն կորզած ԲՀԿ-ի միջեւ:

Ի դեպ, որոշակի շրջանակների համաձայն՝ այս կուսակցությունն ունի անդամատոմս ունեցող 10000 անդամ:

Սա դեռ սկիզբն է, եւ այս ամենը հետապնդում է հասարակական գիտակցությունը բնեցնելու նպատակ:

Եւ հենց այդ տեսանկյունից՝ ռեժիմի համար առանձին-առանձին հանդես գալը ամենաձեռնտու տարբերակն է, որովհետեւ.

1. Հանդես գալով մի քանի դեմքով, ռեժիմը ձեռք է բերում նույնքան խոսափող՝ երեւանցիներին համոզելու համար, որ այս ընտրություններն իրենց էությամբ թաղապետի ընտրություններ են: Ըստ անհրաժեշտության՝ Հանրապետականը նույնիսկ կարող է աֆորանալ, որ մաքրելու ու աղբահանելու գործում ինքն ամենահմուտն ու փորձառուն է՝ հիշեցնելով, թե ինչ օպերատիվությամբ մաքրեց քաղաքը մարտիմեկյան սպանդից հետո՝ կենտրոնի թաղապետ Սեւ Գագոյի գլխավորությամբ:

2. Օրենքով թույլատրված եւ չթույլատրված բոլոր միջոցներով հնարավորինս շատ կոալիցիոն ձայն կորզելը հնարավոր է հենց առանձին հանդես գալու դեպքում: Հասկանալի է, չէ՞, որ միասնական հանդես գալու դեպքում Արթուր Բաղդասարյանը եթե կոչ անի առանց այն էլ նոսրացած օրինացներին, որպեսզի նրանք քվեարկեն հանուն Սերժիկ Սարգսյանի տեղապահ Սեւ Գագոյի, ապա նույնիսկ Հեղինե Բիշարյանը դա չի անի, ինչ մնաց, թե՝ վերջինիս բարեկամները: Կամ՝ ո՞րն է երաշխիքը, որ միասնական մասնակցելու դեպքում հուսախաբված

ՀՅԴ-ական կամ ՕԵԿ-ական հանձնաժողովի անդամը կկեղծի Սեւ Պագոյի օգտին:

3. Առանձին հանդես գալով, յուրաքանչյուր կուսակցության ցուցակում ընդգրկված թեկնածուները, մի կողմից՝ մոլորված միջկոալիցիոն թատերականացված մրցակցությունից, մյուս կողմից՝ ավազանու անդամ դառնալու հավանականությամբ կամ այլ շահագրգռվածությամբ (անձնական) կփորձեն մոբիլիզացնել իրենց շրջապատը՝ մեխանիկորեն փորձելով նրանց դարձնել Սերժիկի ռեժիմի պահպանության կողմնակիցներ: Այս դեպքում մոլորվածների թիվը մի քանի անգամ շատ է, իսկ ցուցակում ընդգրկված չլինելու դեպքում դեռ հարց է՝ նրանցից յուրաքանչյուրը գոնե իր ձայնը կտա՞ ռեժիմին, թե՞ ոչ:

4. ՀԱԿ-ի կողմից ընտրատարածքային հանձնաժողովներ ներկայացված դիմում-բողոքների մեծամասնությունը չի քննարկվի, որովհետեւ հանկարծ պարզ կդառնա, որ ավելի «շուտ գրանցված» եւ հերթի դրված կոալիցիոն դիմում-բողոքների քննարկման համար կպահանջվի ավելի շատ ժամանակ, քան օրենքը նախատեսում է բողոքների քննարկման համար: (Այս նրբությունը, ի դեպ, հուշեցին «Ժառանգություն» կուսակցության մշտապես մեզ այցելող պատգամավորները՝ մարտի 23-ի վերջին այցելության ժամանակ, իրենց փորձից ելնելով):

5. ՀԱՍԿ-ը ներդրվել է ոչ միայն ՀԱԿ-ի հետ շփոթություն առաջացնելու, այլեւ հատկապես ՀԱԿ-ի քվեներով ՀԱՍԿ-ի համար ձեւավորած տրցակների բացահայտման դեպքում՝ դա որպես շփոթմունք ներկայացնելու նպատակով:

Ըստ երեւույթին, մենք գործ ունենք մեկ մարմնով ու մի քանի գլխիկով հանդես եկող ռեժիմ կոչված հրեշի հետ, որի իսկական գլուխը թաքցված է որովայնի մեջ: Եթե այդպես չէ, ապա գոնե կրթության համակարգի պատասխանատու ՀՅԴ-ն լրջորեն կընդվզեր դպրոցներին «100% ցուցակներ» պարտադրելու ՀՀԿ նախաձեռնության դեմ: Իսկ եթե նրա սիրտը ցավում է այդ համակարգի համար, ապա դուրս կգար կոալիցիայից՝ իրոք դառնալով ընդդիմադիր:

Հենց այն, որ կոալիցիոն կուսակցությունների ցուցակները չեն գլխավորում առաջին դեմքերը՝ հաստատումն է այս ամենի: Մինթե հավատում եք, որ Արթուր Բաղդասարյանը, Հրանտ Մարգարյանը, Վահան Հովհաննիսյանը չէին երազի դառնալ Երեւանի քաղաքապետ:



Ահա այսպիսի բաներ: Կոալիցիոն կուսակցությունների առանձին հանդես գալու կեղծությունը բացահայտվում է նաեւ վերջերս Եւրոպայից վերադարձած իշխանության ներկայացուցիչների այն հայտարարությամբ, թե, իբր, մոնիտորինգի հանձնաժողովը ողջունել է Երեւանի ավագանու ընտրություններին իշխանական կոալիցիայի առանձին-առանձին մասնակցությունը՝ այն դեպքում, երբ Պրեսկոտի ու Կոլումբիևի հայտարարության մեջ նման ձեւակերպում գոյություն չունի:

## Ընտրակեղծիքների դեմ պայքարի մեխանիկան

Ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա կասկածից վեր է, որ հանգամանքներն անհամեմատ ավելի նպաստավոր են, քան 2008թ. նախագահական ընտրություններից առաջ:

Ընդդիմությունը՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները, ամեն ինչ պիտի անի հանրությանն առավելագույնս բացատրելու, որ սա իր էությամբ համապետական ընտրություն է՝ համակարգային փոփոխությունների հնարավորություն:

Տեր-Պետրոսյանն օժտված է նշմարտությունը կեղծիքից զատելու բացառիկ տաղանդով, որի շաղախը խոսքի պարզությունն ու մտքի անկեղծությունն է: Հենց այդպես՝ մեկ համոզիչ ելույթով փարատվեց տարիներ շարունակ շահարկված եւ մարդկանց գիտակցության մեջ խոր նստվածք թողած «մութ ու ցուրտ տարիների» կործանարար մեղադրանքը...

Այն, որ քվեարկությունից առաջ ունենալու ենք հաղթանակի հավատով խանդավառված ժողովուրդ՝ միանշանակ է: Բայց վերջնական հաղթանակն ամրագրելու համար սա քիչ է: Դրա համար անհրաժեշտ է, նախ, հասցնել ընտրողների գիտակցությանը, որ հաղթանակը պայմանավորված է նրանցից յուրաքանչյուրի մասնակցությամբ: Եւ երկրորդ՝ պետք է գիտակցել, որ սա ոչ միայն ընտրություն է, այլեւ կռիվ՝ ընտրակեղծիքների կատարելագործված մեքենայի դեմ, եթե կուզեք՝ պայքար կազմակերպված հանցագործության դեմ:

Իսկ հաղթանակ կարելի է ամրագրել, եթե, նախ, ՀԱԿ ցուցակում ընդգրկված եւ չընդգրկված յուրաքանչյուր ոք գիտակցի, որ այս դեպքում ընդդիմությունը հանդես է գալիս Լեւոն Տեր-Պետրոսյան, Ստեփան Դեմիրճյան, Լեւոն Ջուրաբյան դեմքով, իսկ ինքն այս պայքարի շորոշող

մասնակիցն է: Որ հետագայում՝ իսկական ընտրություններին մասնակցելիս, ցուցակները լինելու են վարկանիշային, եւ որ այդ վարկանիշը ձեւավորվում է այս պայքարի ընթացքում ստանձնած կոնկրետ պատասխանատվությամբ, ներդրած ջանքերով ու ընդունակություններով եւ ապահոված արդյունքով:

Պատասխանատվության հիմնական օբյեկտն ընտրական տեղամասն է: Տեղամասում կեղծիքները կանխելու համար պետք է տիրապետել կեղծիքի մեխենայի հնարավոր բոլոր խարդախ ձեռնարկումներին եւ ձեռք բերել խախտումներն արձանագրելու հմտություն:

Պետք է հաշվի առնել, որ ռեժիմի կեղծարարների բանակը՝ տեղամասի դրսում եւ ներսում, համալրված է եւ արդյունք է ապահովում զորությունն ապահովող փողոցային հեղինակությունների եւ հիմնարկություններից ընդգրկված կամակատար-կեղծարար հանձնաժողովականների համագործակցությամբ, որոնց երաշխավորում է պետական մեխենան: Սակայն, առանձին-առանձին վերցրած՝ նրանցից յուրաքանչյուրը կատարած կեղծիքի համար ակնկալվող պատասխանատվությունից սարսափում է հոգու խորքում:

Ուստի կեղծիք կանխելու ամենազորավոր միջոցը՝ սահմանված կարգով եւ անձնավորված արձանագրելը, իսկ տեղամասից դուրս եւ ներսում կեղծիքն ու կեղծարարին տեսագրելը (բջջային հեռախոսով), ունի լրջագույն կանխարգելիչ նշանակություն: Ակնհայտ է, որ որքան ուժեղ է ընդդիմությունը, այնքան մեծ են իշխանությունից կաղչած ռեժիմի կողմից նախապատրաստվող կեղծումները: Եթե 2007թ. Ա.Ժ ընտրությունների ժամանակ ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն միմյանց հետ «մրցակցելու» եւ միմյանց շտաբներ պայթեցնելու պայմաններում՝ ՀՅԴ-ի ու ՕԵԿ-ի հետ միասին, Երեւան քաղաքում «ստացել» են շուրջ 231 հազար ձայն, երբ մասնակցությունը եղել է 403 հազար ընտրող, ապա նախորդ՝ նախագահական ընտրություններին Երեւան քաղաքում մասնակցությունը դարձել է 540 հազար ընտրող, եւ կոալիցիոն թեկնածուները միասին «ստացել են» 345 հազար ձայն:

Ժամանակն ու ռեսուրսները բավարար են կեղծիքի մեխենային հակազդող համակարգ կազմակերպելու համար: Հակառակ դեպքում՝ ռեժիմին այլ բան չի մնա, քան Երեւան քաղաքում ընտրողների «մասնակցությունը» 700 հազարի հասցնելը:

## ՀԱՂԹՈՂ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼՈՒՑ ՀԻՇՏ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՊԱՐՏՎԱԾ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԴԱԴԱՐՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼՈՒՑ

(Հարցազրույց «Զորբորդ իշխանությանը»)[20]

*2008թ. մարտի 1-ի առավոտյան ձերբակալվեց քաղբանտարկյալ Դավիթ Մաթեւոսյանը: Նրան մեղադրանք առաջադրվեց ՀՀ Քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ դիմադրություն իշխանության ներկայացուցչի նկատմամբ: Մաթեւոսյանը դատապարտվեց 3 տարվա ազատազրկման եւ արդեն մեկ տարուց ավելի է պատանդ է պահվում «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում: Նրա հետ զրուցեցինք ներքաղաքական իրավիճակի շուրջ:*

**– Մեկ շաբաթից ավելի է, ինչ ոստիկանական ուժերը տեռորի են ենթարկում ՀՀ այն քաղաքացիներին, որոնք ցանկություն են հայտնում մասնակցելու Հյուսիսային պողոտայում մինչեւ վերջերս անցկացվող քաղաքական զրոսանքներին: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս իրողությունը:**

– Որքան էլ ռեժիմը փորձի իսպառ ստրկացած հեռուստատեսության միջոցով, իսկ եւրոչինովնիկների պարագայում՝ հրաշամանուկից հրեշի վերածված Դավիթ Հարությունյանի հորթային ժպիտով ու քաղցր լեզվով քողարկել իր էությունը, միեւնույն է, նա չար ուժ է: Իսկ չար ուժի վախենալու բնազդն արագ է գործում: Նախագահի աթոռն այնքան գնով ժառանգելու տարելիցի ժամանակաշրջանում՝ վրացական ու մոլդովական իրադարձությունների ֆոնին, իրենց չհանդուրժող մի քանի

[20] *«Զորբորդ իշխանություն», 15.04.2009թ.:*

հոգու միասին կանգնելն ընկալվում է որպես բազմահազարանոց պոտենցիալ հանրահավաք կամ երթ: Իրողությունը շատ ուժի վախի վտանգն է:

**– Խոսակցություններ կան, որ իշխանությունը որոշել է «7-ի» մասնատված գործով արագ դատավարություններ անցկացնել եւ դատավճիռներ կարդալ մինչեւ ԵԽԽՎ գարնանային նստաշրջանը: Այս խոսակցություններն, ըստ Ձեզ, հիմք ունե՞ն:**

– Դեռ հունվարին մի առիթով բերբերից մեկին տված հարցազրույցում ասել էի, որ ծանոթ եմ այդ գործին եւ դա անվանել էի թղթի թափոն՝ կարծիք հայտնելով, որ այդ գործի դատավարությունը կստանա անակնկալ ընթացք, քանի որ այդ մեղադրանքը պաշտպանել փորձելու դեպքում «մեղադրյալները» ցուցադրաբար վերածվելու են նույն այդ հոդվածների հատկանիշներով ռեժիմին մեղադրողների: Այս վիճակում, գործը տարանջատելով, նոր փոփոխված մեղադրանքով դատաքննությունն առանձին-առանձին շարունակելով, տղաներին անհատապես պատժելով, ռեժիմն արտամուտ արհեստականորեն թուլացնում է քաղաքական բաղադրիչը: 7-ի հետ հիմա՝ մեկ տարի անց, վարվում են այնպես, ինչպես շինծու քրեական հետապնդումներով արդեն դատապարտված շուրջ 5 տասնյակի հասնող յուրաքանչյուրիս հետ: Ի դեպ, այդ հոդվածով՝ 225-ի 1-ին մաս, վաղուց արդեն ունենք երեք կամ չորս դատապարտված քաղբանտարկյալներ, ինչը Մարտի 1-ի գործի սուբյեկտիվ նախաքննության հետեւանքն է: Այսինքն, ըստ նախաքննության՝ յոթ անձանց կազմակերպած զանգվածային անկարգության արդյունքում եղել են մարդկային զոհեր, իսկ չորս անձանց կազմակերպած միեւնույն զանգվածային անկարգությունը եղել է առանց մարդկային զոհերի: Այդպես չի լինում:

Ձեմ բացառում, որ մինչեւ ԵԽԽՎ գարնանային նստաշրջանի մեկնարկը առանձնացված շինծու գործերից մեկի դատաքննությունն ավարտեն՝ «մեղադրյալին» ենթարկելով պայմանական պատժի, եւ նրան որպես քաղաքական հայացքների համար անազատության մեջ գտնվողներին ազատ արձակելու ժամանակատար միտում ներկայացնելով՝ Պրեսկոտի եւ Կոլումբիեի մոնիտորինգի հանձնաժողովի միջոցով Հայաստանի հարցի քննարկումը տեղափոխեն ամառային նստաշրջան:



Եթե, իհարկե, ռեժիմի եւրոդիմակ Դավիթ Հարությունյանն այլ՝ ավելի հարմար լուծում չի մտածել: Այսինքն՝ նպատակը դա է: Զմոռանանք, որ վերջինս Եւրոպայից մի խաբար էլ էր բերել, ըստ որի՝ մոնիտորինգի հանձնաժողովը ողջունել է Երեւանի ավագանու ընտրություններին կոալիցիոն կուսակցությունների առանձին-առանձին մասնակցելը (ինչի մասին Պրեսկոտի եւ Կոլումբիեի հայտարարության մեջ որեւէ տեղեկություն չկա), ինչպես նաեւ ընդդիմության մասնակցությունը ժողովրդավարացման գործընթացներին՝ ակտիվացում, իհարկե՝ «ռեժիմի ջանքերով պայմանավորված»:

**– ՀՀԿ-ն այս օրերին արդեն զբաղված է առաջիկա ընտրությունների կեղծման «աշխատանքներով»: Իշխանության՝ ընտրությունների մասնակցության տեխնոլոգիան եւ ձեռագիրը չեն փոխվել: Դուք է՞լ եք այդ կարծիքին:**

– Ձեն էլ կարող փոխել, որովհետեւ այս կուսակցություն Սերժիկ Սարգսյանի եւ նրա հետ միասին հանցավոր օլիգարխիայի ներկայացուցիչների մուտքով՝ այն իսպառ դադարեց զաղափարական կուսակցություն լինելուց: Ուստի, նրա պայքարի զինանոցում վերացավ մինչ այդ էլ կաղացող դասական քաղաքական պայքարի մեթոդների գոյությունը: Եւ մնացին ընտրակաշառքը, ընտրակեղծիքը, զորությունը, եկամուտ ստանալու ակնկալիքից զրկվելու սպառնալիքը, շանտաժը՝ այն ամենը, ինչը հատուկ է կրիմինալին: Սակայն հանգամանքներն ընդդիմության համար նպաստավոր են, քան երբեւէ: Իսկ հաղթելու առաջին պայմանը ռեժիմի գոյությունը եւ այս վիճակը չհանդուրժող քաղաքացիների ակտիվ մասնակցությունն է ընտրություններին՝ այն վստահությամբ, որ հաղթանակն իր հետ բերելու է համակարգային փոփոխություններ:

**– Դուք խոսում եք հաղթանակից, մինչդեռ Սերժ Սարգսյանն իր վերջին ասուլիսում հեգնանքով հայտարարեց, որ եթե ընդդիմությունը հաղթի՝ նա այլեւս դադարում է ընդդիմություն լինելուց եւ իշխանության մաս է կազմում: Ինչպե՞ս կմեկնաբանեք այս հայտարարությունը:**

– Ինձ համար նույնիսկ զզվելի է մեկնաբանել մի մարդու ասածները, որի մեջ վերացել են մարդկային բարոյական առաքինությունները, իսկ ուրացողությունը, կեղծիքն ու սուտը կազմում են նրա վարքագծի

հիմնական բաղադրիչներ: Բայց, միեւնույն է, այդ հեգնախառն արտահայտության ենթատեքստից անգամ երեւում է, որ ինքն էլ հոգու խորքում այս ընտրությունները համարում է իբրեւ համապետական ընտրություններ՝ ընդհուպ նախագահական ընտրությունների երկրորդ փուլ: Որովհետեւ ինչ բացատրություն էլ որ նա տա, միեւնույն է, միայն մի դեպքում է ընդդիմությունը դադարում ընդդիմություն լինելուց: Հաղթող ընդդիմությունը դադարում է ընդդիմություն լինելուց ճիշտ այնպես, ինչպես պարտված իշխանությունը դադարում է իշխանություն լինելուց:

**– Այս օրերին իշխանական քարոզչամեքենան ակտիվորեն շրջանառում է այն միտքը, թե ամեն ինչ պետք է անել, որ այս ընտրություններին հանկարծ Մարտի 1-ի սցենարը չկրկնվի: Անընդհատ կոալիցիոն ուժերի ներկայացուցիչները սրա մասին են բարձրաձայնում: Ի՞նչ նպատակ է հետապնդում այս քարոզչությունը:**

– Առաջին հերթին սա հոգեբանական նշանակություն ունի եւ արվում է ընտրությունների շրջանում հասարակության քաղաքական ակտիվությունը զսպելու նպատակով: Բայց նաեւ ունի սեփական մեղքն օտարելու նպատակ՝ հասարակության հիշողությունը բթացնելու միջոցով: Չպետք է մոռանալ, որ Մարտի 1-ը սկսվել է դեռ լույսը չբացված իշխանությունը ներկայացնող ոստիկանական ուժերի կողմից խաղաղ նստացույցի մասնակիցների նկատմամբ հատուկ միջոցների կիրառմամբ, գոնեիկ ուժի գործադրմամբ, Սահմանադրության եւ օրենքների ոտնահարումով եւ ավարտվել առնվազն 10 անձի սպանությամբ: Չպետք է մոռանալ եւ չպետք է ներել: Եւ սա նախեւառաջ պետք է արտահայտվի այս ընտրություններին հաղթելու վճռականությամբ մասնակցելով:

Հարցազրույցը՝ Գոհար Վեզիրյանի

## ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՈՒԺ[21]

Ռոբերտ Քոչարյանի ժառանգորդ Սերժիկ Սարգսյանը մուտք գործեց Հանրապետական կուսակցություն՝ մի խումբ բեռական անցյալով օլիգարխների ուղեկցությամբ, որն ավարտվեց կուսակցության վարքագծի բեռականացումով:

Այստեղ մնացած հատուկենտ գաղափարականները, առաջնորդվելով կուշտ ապրելու բնազդով, ոչ միայն չփորձեցին դիմակայել, այլեւ ստորաքարշանալով՝ վերածվեցին կուսակցության բեռական վարքագծի ողղակման գործիքի: Մականուն չունենալու համար ափսոսանք հայտնած Գալուստ Սահակյանը չկարողացավ թաքցնել եւ, ի հեռուկս ԵԽ-ի՝ հայտարարեց Հայաստանն իսլամական աշխարհին միացնելու իր երազանքի մասին: Միակ բացառությունը, ուշացումով եւ մարտիմեկյան սպանդի պատասխանատվությունը կիսելով, դարձավ Տիգրան Թորոսյանը: Վերջինս, թեեւ ԱԺ նախագահի աթոռը Մուկ Հովիկին զիջելուց վիրավորված, այնուամենայնիվ, հեռանալով կուսակցությունից՝ ներբազատվեց բեռականներին ստորաքարշորեն ծառայելու խարանից եւ փորձեց ապաշխարել:

«Բարգավաճ Հայաստանը» ծնվեց 2007 թվականի ԱԺ ընտրությունների նախօրյակին՝ «Իմ կուսակցությունը ժողովուրդն է» կեղծ կարգախոսով իշխանությունը բռնազավթած Ռոբերտ Քոչարյանի եւ Գագիկ Ծառուկյանի բիզնես հարաբերությունից: Եթե այդ շրջանում Քոչարյանը նույն ակտիվությամբ հարաբերվեր մեկ այլ պոլիցայ-օլիգար-

[21] *«Հայկական ժամանակ», 28.05.2009թ.:*

խի հետ, միևնույն է, արդյունքում դարձյալ կծնվեր իրական վարագծով «Բարգավաճ Հայաստանը»: Ընդօրինակելով հյուսիսային գործընկեր եղբոր մոտեցումները, չվստահելով անգլիական թագուհի դառնալ չցանկացող նախագահի աթոռի ժառանգորդ Սերժիկ Սարգսյանի ազնիվ խոսքին՝ Ռոբերտ Քոչարյանը ծնեց «Բարգավաճ Հայաստանը», որ ՀՅԴ-ի հետ պետք է լիներ այն քաղաքական լծակը, որով ինքը պետք է իրականացներ երիտասարդ թոշակառու չդառնալու ծրագիրը: Քոչարյանն իշխանությունը փոխանցեց Սարգսյանին ժողովրդի արյան գնով եւ, համաժողովրդական շարժման կայուն գոյության ու միջազգային հանրության ազդեցության պայմաններում, այնուամենայնիվ, դարձավ երիտասարդ թոշակառու:

Ըստ էության, մինչեւ վերջերս Հանրապետականը եւ «Բարգավաճը» նույն նշանակությամբ երկու հակաժողովրդական գործիքներ էին, մի դեպքում՝ Սարգսյանի, մյուս դեպքում՝ Քոչարյանի ձեռքին: Քոչարյանի, վստահ եմ, անվերադարձ հեռանալուց հետո, վերջինիս եւ Ծառուկյանի մերձավոր Մուկ Հովիկին ԱԺ նախագահ կարգելով՝ Սերժ Սարգսյանը փաստորեն միավորեց այդ ուժերը (ձեւականորեն թողնելով առանձին), իսկ Մկանը, ԱԺ նախագահից բացի, դարձրեց իշխանական կերակրատաշտի շուրջ համախմբված գոյությունների «միտքը, պատիվը եւ խիղճը»:

Հիմա շատերին թվում է, թե Հանրապետականն ու «Բարգավաճը» Երեւանի ավագանու ընտրությունների շուրջ կատաղի մրցակցում են, որն ընթանում է կոշտ բախումներով: Միամիտ չլինեք, նրանց միջեւ նման բախումներ եղել են 2007-ի ԱԺ ընտրությունների ընթացքում. Հանրապետականի ջանքերով պայթեցվեց «Բարգավանի» երկու շտաբ, որը հետագայում հանգեցրեց Ուսուրդների միության նախկին նախագահ Սայաթ Դավթյանի սպանությանը: Թե այն ժամանակ, թե հիմա ՀՀԿ-ԲՀԿ ներքին օդակներում ծեծուջարդով զարգացող հարաբերությունները քաղաքական պայքարի հետ որեւէ առնչություն չունեն: Ակնհայտ է, որ երկուսի համար էլ իբրեւ հասարակության հետ անմիջական շփման միջնորդ են իրական տարրերը՝ հատկապես ընտրական գործընթացների ընթացքում: Հատկապես այդ շրջանում, օգտվելով վերեւներից տրված անպատժելիության իմունիտետից, բաց չթողնելով փող աշխատելու հիանալի հնարավորությունը, սրանք ոչ միայն ընտ-



ռակաշտոքի ու զորության միջոցով զբաղվում են ձայնորսությամբ՝ բռնանալով ընտրողի կամքի ազատ արտահայտման իրավունքի վրա, այլեւ օգտագործում են հրաշալի հնարավորությունը՝ փողոցում ինքնահաստատվելու եւ ավելի մեծ ազդեցություն ձեռք բերելու համար: Հենց այստեղից էլ առաջ են գալիս բախումները: Սա ապացուցվում է նրանով, որ այս բախումները կրում են նաեւ ներկուսակցական բնույթ. այդպիսի ցցուն օրինակ է ՀՀԿ-ի ցուցակի 43-րդ համարի կողմից 101-րդ համարի սպանությունը: Այդ բոլոր բախումները իրական տարրերի միջեւ, իհարկե, տեղի են ունենում ձայներ կեղծելու իրավունքի դաշտում մրցակցելիս: Այս վիճակը ձեռնտու է ռեժիմին այնքանով, որքանով դա նպաստում է աճուրդասափի խորացմանը՝ մի կողմից, եւ մյուս կողմից՝ թողնում է մրցակցության տպավորություն: Այս ամենը հետապնդում է մեկ նպատակ՝ Համաժողովրդական շարժման կասեցում ոչ քաղաքական մեթոդներով: Սակայն ռեժիմի հիմնական ռեսուրսը մնում են հողարկված կեղծիքները, որոնց նա տիրապետում է Հանրապետական կուսակցության միջոցով: Դա արդյունավետ գործում է Հանրապետական թաղապետերի, պոլիցայ-օլիգարխների, ԿԲՀ-ի, իրական տարրերի ու պետական մեքենայի համագործակցությամբ: Հողարկված կեղծիքի էությունն այն է, որ կեղծիքի մեքենայի օգնությամբ քվեարկություն է կատարվում ցուցակներում առկա, սակայն հանրապետությունից բացակայող, գոյություն չունեցող եւ քվեարկության չգնացած ընտրողի փոխարեն: Այս ասպարեզում ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն համերաշխ են, նույնիսկ համագործակցում են: Զարմանալի բան չկա. այստեղ ՀՀԿ-ին չեն խանգարում ՕԵԿ-ը եւ ընդդիմադիր համարում ունեցող ՀՅԴ-ն, նույնիսկ՝ աջակցում են: Կեղծիքի մեքենայի դեմ պայքարելու է միայն ՀԱԿ-ը՝ վստահված անձերի միջոցով ու «ժառանգություն» կուսակցության հանձնաժողովների անդամների միջոցով: Այս համակարգի դեմ կարող է պայքարել նաեւ այս վիճակը չհանդուրժող Հայաստանի քաղաքացին, որը ոչ միայն տեր կկանգնի իր ձայնին, ոչ միայն կհորդորի իր մերձավորներին՝ վարվելու նույն կերպ, այլեւ կեղծիքների մասին կհայտարարի բարձրաձայն, օգնելով վստահված անձին՝ դա ձեւակերպել որպես խախտում: Վստահ եմ՝ այս երեք ուժերի համագործակցությունը պսակվելու է հաղթանակով:

## ԳԼԽԱՎՈՐԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԵՆ
(Հարցազրույց «Ժամանակ» թերթին)[22]

**– Պարոն Մաթևոսյան, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի ներքաղաքական իրավիճակը՝ հատկապես Սերժ Սարգսյանի ամերիկյան վերջին հանդիպումների ֆոնին:**

– Իմ կարծիքով, վերջին կամ նախավերջին հանդիպումներով պայմանավորված՝ որևէ բան չի փոխվելու: Որովհետև երկու ակնհայտ բան գոյություն ունի, և խոսքը վերաբերում է ԼՂ հակամարտության կարգավորմանը, որովհետև մնացածը ածանցյալ են: Մեկ՝ Ռոբերտ Քոչարյանը բանակցություններից դուրս թողեց Ղարաբաղը, այդպիսով 2 հայկական + 1 ադրբեջանական և 1 միջազգային հանրություն ֆորմատի փոխարեն ձևավորելով 1 հայկական, 1 ադրբեջանական կողմ ֆորմատը: Սերժ Սարգսյանի «նախաձեռնողական» քաղաքականության արդյունքում, երբ Թուրքիայի հետ ստորագրեցին հայտնի արձանագրությունները (Ցյուրիխյան ուրացում), Թուրքիան անուղղակիորեն դարձավ գործոն և դարձավ ԼՂ հակամարտության կարգավորման ուղղակի կողմ: Ակնհայտ է, որ այդ հակամարտության կարգավորման առումով այսօր գոյություն ունի միջազգային հանրության հավասարակշռված շահագրգռվածությունը, և այսօր հարցի գլխավոր դիրիժորը նրանք են, ու այս պայմաններում նրանք հաշվի են նստում ոչ միայն իրենց աշխարհաքաղաքական շահերի ու նաև Ադրբեջանի կողմից ներկայացվող պա-

[22] *«Ժամանակ», 17.04.2010թ.:*



հանջների, այլ նաև արդեն Թուրքիայի աշխարհաքաղաքական շահի և նրա կողմից անմիջականորեն ներկայացվող պահանջների հետ:

**– Պարոն Մաթևոսյան, Սարգսյանի և Օբամայի հանդիպումն ինչպե՞ս եք գնահատում: Այդ հանդիպումից հետո կարծիքներ հնչեցին, թե դրանով Օբաման իր աջակցությունը հայտնեց Սարգսյանին:**

– Դրանք դիվանագիտության մեջ ընդունված ձևակերպումներ են: Ինչ է նշանակում՝ փաստացի աջակցություն հայտնեց:

**– Օրինակ՝ Օբաման ասաց, որ ինքը սատարում է հայկական ժողովրդավարությունը:**

– Դա ենթատեքստով կարելի է հասկանալ: Իհարկե՝ սատարում է, բայց կա՞ Հայաստանում ժողովրդավարություն:

**– Այսինքն՝ Դուք կոնկրետ Սարգսյանին ցուցաբերված աջակցություն չե՞ք տեսնում:**

– Ես հասկանում եմ, որ նաև Օբաման Սերժ Սարգսյանին պետք է գուրգուրի՝ այնքան ժամանակ, մինչև վերջինս լուծում կտա համապատասխան հարցին: Այդ պրիզմայով ինչեր ասես կարող է ասել: Եվ ես չեմ ուզում, որ մենք խնդիրը դրվագներով գնահատենք, քանի որ կան գլխավոր երկու գնահատականներ, որոնք ես արդեն նշեցի, մեկ՝ Քոչարյանը դուրս թողեց Ղարաբաղը, և երկրորդ՝ Սերժ Սարգսյանը Թուրքիային փաստացի կողմ դարձրեց:

**– Լոնդոնի և Օբամայի հետ հանդիպումներից հետո Սերժ Սարգսյանը հանկարծակի արձակուրդ գնաց: Հիմա էլ հայտարարեց, որ ապրիլի 20-ին Սարգսյանը հանդիպում է ունենալու Մեդվեդևի հետ: Ըստ Ձեզ՝ այս ամենը զուգադիպությո՞ւն է, թե՞ ԼՂ հարցում ինչ-որ պրոցես է սկսվել:**

– Ես վստահ եմ, որ գոյություն ունի ինչ-որ պրոցես, ավելի նիշտ՝ գոյություն ուներ, դա շարունակական է և քանի գնում՝ այնքան խտանում է:

**– Պարոն Մաթևոսյան, այս համատեքստում Համաժողովրդական շարժման կենսունակությունն ինչպե՞ս եք տեսնում, եթե միջազգային հանրությունը Սարգսյանից զիջումներ ստանալու ակնկալիքով վերջինիս «սատարի ու պահի», այդ դեպքում ընդդիմության կենսունակությունը ու ապագան վտանգվո՞ւմ են:**

– Ես վստահ եմ, որ Հայ ազգային կոնգրեսն ունի այն նվազագույն անհրաժեշտը, որով միշտ էլ կարող է սկսել քաղաքական գործընթացներ եւ հասնել հաջողության: Բայց միայն պայմանավորված այն կարեւորագույն հանգամանքով, որ գոյություն ունի ժողովրդի եւ պետության գերակա շահ. այսօր կա որոշակի սպասողական վիճակ: Պետության եւ ժողովրդի համար կորուստները նվազագույնի հասցնելու համար է այս սպասողական վիճակը:

**– Պարոն Մաթեւոսյան, իսկ մտավախություն չունե՞ք, որ այդ սպասողական վիճակը կարող է նաեւ հուսահատություն առաջացնել:**

– Եթե նույնիսկ այդպես պետք է լինի, ապա դա ավելի լավ է, քան եթե այս երկրում լինի քաղաքացիական պատերազմ եւ քաղաքացիական պատերազմով պայմանավորված պատերազմ՝ Ադրբեջանի հետ: Կամ էլ, որ այդպիսի քաղաքական մշակույթի ներդրում կամ հաստատում լինի, ինչպիսին Ղրղզստանում է: Կոնգրեսը գիտակցաբար է մոտենում այդ ամենին, եւ իր համար գլխավոր խնդիրը որոշակի խմբի քաղաքական հավակնություններ չեն: Գլխավորը, ասացի, պետությունն ու ժողովուրդն են:

**– Այսինքն՝ Կոնգրեսը բացառո՞ւմ է զարգացումների դրդզական սցենարը Հայաստանում:**

– Կոնգրեսն ի սկզբանե է բացառել: Եթե հիշում եմ, Համաժողովրդական շարժման առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը քաղաքականություն վերադառնալուց անմիջապես հետո բացառեց դարպասներ ջարդելու սցենարը: Եւ այն բոլոր մարդիկ, որոնք համախմբված քայլում են նրա հետ, դա շատ հստակ հասկանում եւ գիտակցում են:

**– Ռոբերտ Քոչարյանը վերջին շրջանում կարծես թե մեծ քաղաքականություն վերադառնալու նկրտումներ ուներ: Ըստ Ձեզ՝ այդ նկրտումները դեռ ուժի մե՞ջ են:**

– Ես մտածել անգամ չեմ ուզում Քոչարյանի մասին: Բայց Քոչարյանի հետ կապված մեկ բան կարող եմ ասել: Նա հատկապես վերջին շրջանում եւ ընդհանրապես չի խոսել դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման մասին: Կամ՝ չի խոսել այն մասին, թե ինչպիսի գնահատական է տալիս Սերժ Սարգսյանի՝ այդ մասով վարած քաղաքականությանը: Հետեւաբար, այն, ինչ հիմա անում է Սերժ Սարգսյանը՝ ԼՂ հակամարտության կարգավորման հարցում, դա Ռոբերտ Քոչարյանի գործունեության շարունակությունն է: Եթե կուզեք՝ պարտադրված շարունակությունը: Իսկ ինչ վերաբերում է Քոչարյանի ջղաձգումներին, դրանք ես ընդամենը գնահատում եմ որպես՝ ապագայի համար, պատմության մեջ այդ հարցի «սերժիկյան» լուծումից տարանջատվելու փորձ:



**– Այսինքն՝ Քոչարյանը տեսնում է, որ Սարգսյանը գնում է ԼՂ հիմնախնդրի լուծման եւ ուզում է տարանջատվե՞լ:**

– Սարգսյանն անելու է այն, ինչը կաներ Քոչարյանը, եթե ինքը լիներ փաստացի իշխանություն: Դրանք հնարավոր չէ տարանջատել: Բայց շատ լավ հասկանալով այս բոլորը, չտալով որեւէ գնահատական այս մասով՝ Քոչարյանը փորձում է պատմության մեջ տարանջատվել այն արդյունքներից, որը մենք ունենալու ենք: Ձվերցնել այդ պատասխանատվությունը՝ սա է խնդիրը: Բայց ես գիտեմ մի բան՝ այս ժողովուրդը իրավունք չունի հանդուրժելու Ռոբերտ Քոչարյանի վերադարձը: Ինքս՝ որպես քաղաքացի, քաղաքական իմաստով ինձանից կախված ամեն ինչ անելու եմ, որպեսզի Ռոբերտ Քոչարյանի նման մեկ այլ դիկտատոր երբեւէ չվերադառնա իշխանության ղեկին:

## ԲԱՆԱԼԻՆ ՀԱԿ-Ի ԵՒ ԲՀԿ-Ի ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՌԱՋԻԿԱ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Հարցազրույց «Իլուր» կայքին)[23]

**– Պարոն Մաթեոսյան, երեկ Սերժ Սարգսյանը հերթական խորհրդակցությունն է անցկացրել, այս անգամ դատախազության եւ նախաքննության մարմինների աշխատանքների վերաբերյալ: Որքանո՞վ է սա պայմանավորված առաջիկա նախագահական ընտրություններով:**

– Նախ, ընտրությունները մի կողմ թողնենք: Եթե Սերժ Սարգսյանն այդ գնահատականը տար առաջին անգամ գործող նախագահ դառնալուն պես, ինչ-որ տեղ կհասկանայի, բայց հիմա ցանկացած բնազավառի գնահատական տալիս՝ լինի կառավարության ատկատների, հարկայինի, բանակի կամ դատախազության գործունեության մասին, դա, նախեւառաջ, իր գնահատականն է: Ինքն ապացուցել է, որ ավկորդ է որպես նախագահ եւ չի կարող այս պետությունը եւ ժողովրդին տանել անհրաժեշտ ճանապարհով: Այսինքն, քաղաքական առումով Սերժ Սարգսյանը տալիս է իր հինգ տարվա գործունեության գնահատականը, եւ հասարակությունն այդպես պետք է ընկալի: Եւ, բնականաբար, այդ խորհրդակցությունը նախընտրական շրջանի տպավորություն է թողնում, կամ՝ այդպես էլ կա:

**– Կոնգրեսն արդեն կես տարի է, ինչ խորհրդարանական ուժ է: Առաջիկա ընտրությունների հետ կապված՝ ի՞նչ զարգացումներ են հնարավոր**

[23] *iLur.am, 30.10.2012թ.:*



**քաղաքական դաշտում ընդհանրապես, եւ խորհրդարանում մասնավորապես:**

– Մի բան կարող եմ ասել. անկախ նրանից, որ Կոնգրեսի խմբակցության կազմում ներկայացված է 7 հոգի եւ հաշվի առնելով խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների պոտենցիալը, միանշանակ է, որ գործող իշխանության եւ, մասնավորապես, նրա թեկնածու Սերժ Սարգսյանի իրական գործունեությունը վեր կհանվի, եւ այդ առումով շատ նպաստավոր է Կոնգրեսի ներկայացվածությունը Ազ-ում:

**– Իսկ այլ քաղաքական ուժերի հետ համագործակցության կոնտեքստո՞ւմ:**

– Իհարկե, ես հնարավոր, նույնիսկ անհրաժեշտ եմ համարում, որ բոլոր այն ուժերը, որոնք չեն հանդուրժում այս վիճակը եւ նրա զլխավոր մեղավորներին, պետք է հնարավորինս լայն համագործակցությամբ փորձեն ձերբազատվել կոռումպացված եւ արյունոտ այս իշխանություններից:

**– Բայց կարծիքներ են հնչում, որ կան ուժեր, որոնց հետ, անգամ Սերժ Սարգսյանի հրաժարականին հասնելու նպատակի համար, չպետք է համագործակցել:**

– Գերխնդիրը Սերժ Սարգսյանի անձը չէ, այլ սահմանադրական կարգի հաստատումը եւ վերականգնումը: Իսկ քաղաքական ուժերը բացառված չեն, այսինքն՝ այնպիսին չեն, ինչպես ծնվել են: Նրանք պրոցեսների ընթացքում ենթարկվել են փոփոխությունների՝ դրական կամ բացասական: Հանրապետական կուսակցությունը, օրինակ, բացասական էվոլյուցիա է ապրել: Սահմանադրական կարգի վերականգնման առումով լինելով առաջանցիկ քաղաքական ուժ՝ Հայ ազգային կոնգրեսը պետք է օրինակ ծառայի եւ, ներողամիտ լինելով՝ հնարավորություն տա, որ ասպարեզում եղած ուժերը, դրական էվոլյուցիա ապրելով, գիտակցեն, որ անհրաժեշտ է սահմանադրական կարգի գործունեության ապահովում: Հենց դա է համագործակցության ընդհանուր հայտարարը:

**– Ի՞նչ է կարողանալու Կոնգրեսը հակադրել իշխանական քարոզչամեքենային: Վերջին շրջանում հատկապես խոսվում է Կոնգրեսի ներսում լարվածության, կարեւորագույն քաղաքական հարցերում կոնսենսուսի**

**բացակայության մասին: Խոսքը հատկապես նախագահական ընտրություններում ԲՀԿ-ի հետ հնարավոր համագործակցության մասին է, ինչի մասին հնչեցրել է Լևոն Զուրաբյանը: Ի՞նչ կասեք այս կապակցությամբ:**

– Այդ զերելսական քարոզչությանը հակադարձելու միակ ձևն այն է, որ գտնենք այն բանալին, որը կապահովի հասարակության պոռթկումը: Այդ բանալին Հայ ազգային կոնգրեսի եւ ԲՀԿ-ի համագործակցությունն է առաջիկա նախագահական ընտրություններում, որը, իմ կարծիքով, հաղթական սցենար է մի պարագայում՝ եթե միասնական թեկնածուն լինի Լևոն Տեր-Պետրոսյանը: Ինչ վերաբերում է ԲՀԿի հետ համագործակցության մասին այս կոնտեքստում Լեւոն Զուրաբյանի հայտարարություններին, ապա վստահ եմ, որ դրանք բխում են Կոնգրեսի քաղխորհրդի որոշումներից եւ արտահայտում են Լեւոն Տեր-Պետրոսյանի վարած քաղաքականության էությունը:

**– Բայց անընդհատ հայտարարում են, թե Կոնգրեսում հակադիր կարծիքներ գոյություն ունեն, նույնիսկ շատ լուրջ հակասություններ կան:**

– Ընդհանրապես, կարծիք ունենալու եւ արտահայտելու հնարավորությունը Կոնգրեսի գլխավոր հարստություններից մեկն է: Ես ուղղակի համոզմունք ունեմ, որ ամենահակադիր երկու կարծիք քննարկելու դեպքում կարելի է հղկել եւ ձեռք բերել նաեւ դրա ընդհանուր հայտարար, որը կհանդիսանա նպատակասլաց քաղաքական գործունեության շարժիչ ուժը, ինչը եւ կարող է նշածս պոռթկման համար բավարար պայման դառնալ:

Հարցազրույցը՝ Քրիստինե Խանումյանի

## ԱՍՏԾՈ ԻՇԽԱՆԱՀԱՃՈ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԸ[24]

«Հայկական ժամանակ» օրաթերթի հունվարի 30-ի համարից տեղեկանալով, որ, ըստ էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տեր Վահրամ քահանա Մելիքյանի հայտարարության, կաթողիկոսն իշխանություններին դիմումներ է ուղղել ՀՀ քաղբանտարկյալների ազատ արձակելու միջնորդությամբ (նաեւ՝ 2008թ. մարտի 1-ի դեպքերի պարագայում), պարտս եմ համարում իրականությունը պարզորոշ դարձնելու նպատակով ներկայացնել հետեւյալը.

«Վարդաշեն» ՔԿՀ-ում հայտնված քաղբանտարկյալների կազմում էր նաեւ Վարդան Ղավալաբարունցը՝ պարկեշտ ու բարեկիրթ մի անձնավորություն: Մինչ հանիրավի ազատազրկվելը, Վարդանն աշխատել էր էջմիածնում, որտեղ հիշում եմ՝ որպես եզնիկ սրբազանին կցված մեքենայի վարորդ: Վարդանը վաղ երիտասարդական տարիքում վարել էր նախկին ՆԴ նախարար, հարգարժան Վանո Սիրադեղյանի ծառայողական ավտոմեքենան:

Մարտի մեկին Վարդանը մի շարք երիտասարդների հետ՝ Նիկոլ Փաշինյանի հորդորով, գնացել էր կանխելու ներդրված սափրագլուխների՝ քաղաքապետարանի մոտ կազմակերպած սադրանքը (վերջիններս ծեծի էին ենթարկում քաղաքապետարանի մուտքը հսկող ոստիկաններին):

Քրեական գործի հիմքում դրված էր ծեծված ոստիկանի ցուցմունքը, ըստ որի՝ երբ գետնին ընկած վիճակից նա բարձրացել էր գլուխը, տեսել էր գլխավերեւում կանգնած Վարդանին՝ ձեռքերը բարձր պահած, եւ

[24] *iLur.am, 09.02.2013թ.:*

գործին կցված էր ոստիկանի նկարագրածին համապատասխանող մի լուսանկար:

Վարդանին, ՀՔԾ-ում ղեկավարների մասնակցությամբ ծեծելով՝ ստիպել էին ցուցմունք գրել, որ ինքը պայմարի հրապարակում է հայտնվել եզնիկ սրբազանի պահանջով: Վարդանը չէր ենթարկվել ռեժիմի ներկայացուցիչների ստոր պարտադրանքին եւ հայտնվել էր բանտում:

Բանտարկությունը չխոչընդոտեց Վարդանին, որ վերջինս իր կապերով ձեռք բերի հենց այն տեսագրությունը, որից տպագրված էր քրեական գործին կցված լուսանկարը: Անձամբ դիտել եմ այդ տեսագրությունը, ուր հստակ պատկերված են Վարդանի ամբողջ շարժն ու գործողությունները: Պարզորոշ երևում է, թե ինչպես է վերջինս մոտենում գետնին տապալված ոստիկանին հարվածող սափրագլխին եւ փորձում զսպել նրան: Սափրագլուխը շրջվում ու այնպիսի ուժգնությամբ է հարվածում Վարդանի դեմքին, որ վերջինս ցնցվում է՝ հետ-հետ գնալով ու բնազդաբար բարձրացնելով ձեռքերը, հազիվ պահպանում է հավասարակշռությունը: Անա հենց վերջին այս դրվագն էր պատկերված քրեական գործին կցված լուսանկարում: Այսինքն, լուսանկարը կցող մարմնի ձեռքի տակ եղել էր Վարդանի անմեղությունը հաստատող տեսագրությունը, սակայն նրանք կատարել էին քաղաքական պատվեր: Քաղաքական պատվեր կատարեցին նաեւ դատական ատյանները, որոնք հրաժարվեցին հետազոտել պաշտպանական կողմի ներկայացրած տեսագրությունը: Բայց սա այլ թեմա է:

Վարդանը հիշյալ տեսանյութը փոխանցեց եզնիկ սրբազանին:

Վերջինս այն դիտելուց հետո ոգեւորված փոխանցել էր, թե անմեղությունը ապացուցող տեսագրությունն առաջիկա օրերին կներկայացնի Վեհափառին, եւ համոզմունք էր հայտնել, որ այնուհետեւ հաշված օրերի ընթացքում կլուծվի Վարդանի ազատության հարցը:

Վարդանը ոգեւորված էր ավելի, քան հնարավոր էր պատկերացնել: Սակայն որոշ ժամանակ անց տխրեց ու տեւական ժամանակ թաքցնում էր տխրության պատճառը: Մի օր էլ, շատ համառելուս արդյունքում, խոստում կորզելով, որ գաղտնի կպահեմ, պատմեց հետեւյալը. Վեհափառը, տեղեկանալով եղելության մասին, եզնիկ սրբազանին ասել էր. «Ասա՝ թող ներման դիմում գրի»: Սրբազանը խնդրել էր Վարդանին՝ գաղտնի պահել այդ տեղեկությունը:



Եթե չլինեիր հիշյալ հայտարարությունը, ես չէի խախտի տվածս խոստումը: Այնուամենայնիվ, հայցում եմ ընկերոջս ներողամտությունը:

Հ.Գ. Համոզված եմ՝ նաեւ հոգեւոր առաջնորդների նման վարքագծից է սնանկանում Սերժիկ Սարգսյանի ու նրա միջավայրի մտածելակերպը, եւ դրանից է, որ վերջիններս, արհամարհելով իրենց իսկ իրագործած, իրենց ճակատներին խարանված հայտնի իրողությունները (Սահմանադրական դատարան դիմած քաղաքական ուժի նկատմամբ բռնություն գործադրելը, այդ ընթացքում առնվազն տասը անմեղ մարդ սպանելն ու հաշվենկատորեն սպանությունը չբացահայտելը, բազմաթիվ մարդկանց հանիրավի ազատազրկելն ու տարիներով բանտերում պահելը, վերահսկելի մեխանիզմների գործածությամբ եկամուտ վաստակելու հնարավորությունից զրկելու եւ այլ սպառնալիքներով ու ընտրակաշառքով մարդկանց քվեարկություն պարտադրելն ու բարոյազրկելը, դրա հետեւանքի համատարած վախն ու անտարբերությունը, կոռուպցիայի ու մենաշնորհների արմատավորման, ինչպես նաեւ՝ ազատ մրցակցության բացակայության հետեւանքի աղքատությունն ու արտագաղթը եւ այլն)՝ արտաքին աշխարհի համար ցուցադրվող բատերականացված քարոզարշավի ընթացքում գործածում են իրենց էության հետ անհամատեղելի արտահայտություններ. խոսում են մրցակցային դաշտից, ազատ ընտրություններից-բանից:

Իսկ Սերժիկ Սարգսյանն Արարատի մարզում հայտարարում է. «Ազատ Հայաստանը կարող է լինել ապահով Հայաստան, ազատ՝ պաշտոնյաների եւ գործարարների կամայականություններից, ազատ՝ ապօրինություններից ու բռնությունից, ազատ՝ գրաքննությունից եւ հավատաքննությունից, ազատ՝ օրենքի եւ արդարադատության խտրական կիրառումից, ազատ՝ ամբարտավան ու սկսնակ գործիչների սին խոստումներից...»:

Լսելիս՝ շրջապատիս մոտ տպավորություն ստեղծվեց, թե Սերժ Ազատիչը հորն էր հիշել:

3.02.2013թ.

Դավիթ Մաթեւոսյան

նախկին քաղբանտարկյալ, ՀԱԿ

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԵԿ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ, ԿԱՄ՝ ՀԵՏԵՒՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ[25]

Հերթական նախագահական ընտրություններն ավարտվեցին, եւ ի դեմս Բաֆֆի Հովհաննիսյանի՝ հայ ժողովուրդն ունեցավ հերթական ընտրված նախագահը...

Այս անգամ, սակայն, հետընտրական շրջանը նախորդից տարբերվում է նրանով, որ ռեժիմի գեբելսյան քարոզչամեքենան աջուձախ թմբկահարում է, թե քվեարկությունն ու ձայների հաշվարկն անցկացվել են օրենքի տառին համապատասխան, հակառակ դեպքում՝ ընտրությունների արդյունքները վիճարկող Բաֆֆի Հովհաննիսյանի թիմը վերահաշվարկի ու անվավեր ճանաչելու դիմումներով կհեղեղեր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները: Այս մոտեցումը, նախ, թմբկահարեց Խորով Հարությունյանը, ապա՝ համընդհանուր տարածում գտավ ռեժիմի սպասարկուների շրջանում: Վերջինիս եւ սրա նման ջայլամներին հիշեցնում եմ՝ նախորդ նախագահական ընտրություններին հաջորդող շրջանում Տեր-Պետրոսյանի թիմը, ուր ընդգրկված էին նաեւ շուրջ 4500 վստահված անձինք, այդպես էլ վարվել էին՝ գնացել էին դասական իրավական ճանապարհով: Փետրվարի 29-ին Սահմանադրական դատարան ներկայացվեցին կեղծիքը մերկացնող հիմնավոր նյութեր: Հենց հաջորդ օրվա մարտի մեկի սպանդով՝ գործող ռեժիմն առնվազն տասը մարդկային կյանքի հետ ոչնչացրեց իրավական գործընթացը:

[25] *iLur.am, 04.03.2013թ.:*



Բաֆֆի Հովհաննիսյանը հաղթել է, իսկ այդ հաղթանակը թղթի վրա արձանագրվել է միայն այն տեղամասերում, որտեղ հնարավոր է եղել իրականացնել լուրջ վերահսկողություն: Ես սա ասում եմ կոնկրետ տեղամասի վերահսկողության պատասխանատվությունը ստանձնածի դիրքից եւ իրավունքով:

10/9 տեղամասում քվեարկության եւ ձայների հաշվարկման ողջ ընթացքում ես եղել եմ Հրանտ Բագրատյանի վստահված անձի կարգավիճակով, ինձ աջակցել են երկու լրագրող եւ ՀԱԿ հանձնաժողովի անդամը: Մեր առջեւ դրված խնդիրն է եղել թույլ չտալ բացակա ընտրողների փոխարեն կատարել բազմակի քվեարկություն, ինչն ապահովել ենք ընտրողների հաշվառման երկու մատյաններ մշտական հսկողության տակ պահելով: Տեղամասում իրականացվել է «կարուսել» կոչվող հայկական կեղծարարական հնարքը, որովհետեւ հաշվարկի արդյունքում պարզ է դարձել, որ օգտագործված քվեաթերթիկների թիվը մեկով ավելի էր քվեարկածների ստորագրությունների թվից: Սա նշանակում է, որ տեղամասից մեկ քվեաթերթիկ դուրս է բերվել հենց հանձնաժողովի աջակցությամբ: Սրանում ներքուստ համոզված էր անգամ հանձնաժողովի ամենափոքրաքանակ անդամը՝ «Օրինաց երկրից»: Իսկ հանձնաժողովի «Ժառանգության» անդամն այնքան ազնիվ էր, որ պնդում էր, թե այդպիսի բան ուղղակի հնարավոր չէ, քանի որ տեղամաս մուտք գործած յուրաքանչյուր ընտրողի տրվում է մեկ քվեաթերթիկ: Սա եւ գերհոգնածությունն էին պատճառները, որ բավարար ջանքեր չգործադրվեցին հիշյալ փաստը արձանագրել տալու համար:

Սակայն կարողացանք արձանագրել տալ այն փաստը, որ խոնավ անձնագրերի միջամտությամբ անձնագրի վերջին էջին դրված դրոշմն անհետանում է: Արձանագրության տակ ստորագրեցին հանձնաժողովի բոլոր անդամները, եւ կա համապատասխան քաղվածք:

Ամենափոքրաքանակ հանձնաժողովի անդամը, անձնագրի վերջին էջի փոխարեն, ձգտում էր դրոշմակնքել անձնագրի կազմը: Վերադասի հետ հեռախոսային իրավական կոնսուլտացիայից հետո նրան պաշտպանում էր հանձնաժողովի նախագահը: Բայց լրագրողական տեսախցիկների հայացքի ներքո եւ օրենսգրքի համապատասխան դրույթի ակնհայտության ուժով կարողացանք հաղթահարել այս իրավիճակը: Հաջորդ

օրը միայն հասկացա, որ այդ անիմաստ, կախարդական, անհետացող թանաքը կազմի վրայից ավելի հեշտությամբ կարելի է մաքրել:

Ձայների հաշվարկի ընթացքում երբ ակնհայտ դարձավ Բաֆֆի Հովհաննիսյանի առավելությունը, հանձնաժողովի նախագահը վերջինիս օգտին տրված քվեաթերթիկներն անվավեր դարձնելու հուսահատ մի փորձ ձեռնարկեց: Անվավեր ճանաչելու նպատակով քվեարկության էր դնում այն քվեաթերթիկները, որոնց հակառակ կողմում հանձնաժողովի անդամների կողմից դրված անհատական կնիքներից մեկի հետքը լողզված կամ դժվարընթեռնելի էր: Այնուամենայնիվ, նրան հաջողվեց այդ ճանապարհով Բաֆֆի Հովհաննիսյանի քվեաթերթիկներից 10–15-ն անվավեր համարել:

Հարկ եմ համարում ասել նաև, որ հանձնաժողովի իշխանահպատակ անդամներն այդ նախաձեռնությանը կողմ էին քվեարկում դժկամությամբ:

Այսքանից հետո տեղամասում գրանցված 1896 ընտրողներից քվեարկությանը մասնակցեցին 839-ը (մասնակցությունը 44,25 % էր՝ Երևանի 54,05 %-ի դիմաց):

Բաֆֆի Հովհաննիսյանը ստացել էր 449 ձայն (56 %), իսկ Սերժիկ Սարգսյանը՝ 276 (34.5 %): Անվավեր քվեաթերթիկներ՝ 38:

Վստահեցնում եմ, որ եթե չլիներ վերահսկող խմբի ծախսնդիր գործունեությունը, հանձնաժողովի նախագահի նկատմամբ իրավական գիտելիքների առավելությունը լրագրողական տեսախցիկի հսկողության ներքո, միջազգային դիտորդների տեսական ներկայությունը, որոնց արդյունքում ուղղակի բացառվեց բացակա ընտրողների փոխարեն «քվեարկելու» հնարավորությունը, ապա այդ տեղամասում մասնակցությունը պակաս չէր լինի 1100-ից՝ իր բոլոր հետեւանքներով: Դա արվելու էր տեղամասի առջեւ խմբված երիտասարդների ջանքերով, որոնք բազմակի քվեարկություն էին կատարելու բացակա ընտրողների փոխարեն: Իմ օրինական պահանջով, ի դեպ, ոստիկանության ներկայացուցիչները՝ վերջիններիս խնդրելով, փորձում էին հեռացնել օրենսգրքով արգելված տարածքից, բայց արդյունքի չէին հասնում:

Թռուցիկ հայացքով անգամ տեսանելի է, որ Սերժիկ Սարգսյանի «հաղթանակած» տեղամասերում մասնակցությունն ակնհայտ բարձր է: Նման արդյունք հնարավոր է եղել ապահովել ոչ միայն ընտրակաշառքի ու այն վերահսկող կարուսելի, այլեւ հատկապես բացակա ընտրողների փոխարեն քվեարկելու շնորհիվ: Սա ապացուցվում է այն իրողությամբ, որ ռեժիմն ընտրողների ռեգիստրում համառորեն պահպանում է հանրապետությունից մշտապես բացակայողներին, գաղտնի է պահում ստորագրված ցուցակները եւ գործածում է անհետացող թանաք:

Պարզ է, որ վերահսկողություն՝ ինչպիսին իրականացվեց 10/9 տեղամասում, հնարավոր չէ կազմակերպել համատարած:

Ակնհայտ է, որ կոնկրետ գործառույթ իրականացնող հանձնաժողովի անդամը չի կարող տեսնել, թե ինչպես իր գործընկերները՝ համագործակցելով կրիմինալի հետ, բացակա ընտրողների հաշվին ավելացնում են իշխանության ձայները: Չի կարող կանխել ազատ քվեաթերթիկի դուրսբերումը՝ կարուսել իրականացնելու նպատակով:

Այդ ամենն անգամ հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը չեն կարող լիարժեք վերահսկել քվեարկության գործող կարգի պայմաններում:

«Ընտրական օրենսգրքում» հաշվենկատորեն պահպանված սողանցքերը հնարավորություն են տալիս գործող իշխանությանը՝ հողարկված կեղծիքների ու վարչական ռեսուրսի շարաշահման արդյունքում ունենալ շուրջ 30 %-ի առավելություն:

Միամտություն է կարծել, թե գործող ռեժիմը երբեք քաղաքական կամք կցուցաբերի եւ կկազմակերպի ազատ ու թափանցիկ ընտրություններ, որովհետեւ նա ուղղակի նման կամք չունի:

Հետեւաբար, այսօր խորհրդարանում արտացոլված ընդդիմադիր քաղաքական ուժերը՝ «Ժառանգությունը», ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն եւ ՀԱԿ-ը, պարտավոր են համախմբվել «Ընտրական օրենսգրքում» հրատապ փոփոխություններ կատարելու նպատակի շուրջ: Այն փոփոխությունների, որոնց քննարկումը նախորդ աշնանը տապալվեց իշխանության նախաձեռնությամբ՝ ընդդիմության հրավիրած արտահերթ նստաշրջանը բոյկոտելու միջոցով: Այդ փոփոխությունների արդյունքում կբացառվեն բազմակի քվեարկությունն ու կարուսելը, հնարավորություն կընձեռվի վերահսկողություն իրականացնել մեկ անձի՝ նույնիսկ մեկ հանձնաժողովի անդամի կողմից եւ այլն...

Ընդդիմությունը պարտավոր է նման նախաձեռնությամբ հանդես գալ հենց հիմա՝ Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցելու փոխարեն, իսկ ավելի ճիշտ՝ այդ ընտրություններին չմասնակցելու գնով:

## ՈՒՐԻՇ ԵԼՔ ՉԿԱ[26]

Օրեր առաջ Ժիրայր Լիպարիտյանը կարեւորագույն մի բացահայտում արեց, ըստ որի՝ 1997թ. հունիսի 14-ին՝ Ղարաբաղյան ղեկավարության նախաձեռնությամբ եւ առաջարկությամբ, Հայաստանի ղեկավար կազմի հետ համատեղ, եզրահանգել են, որ փուլային կարգավորումը Ղարաբաղի ու Հայաստանի համար ընդհանուր դիրքորոշում է:

Իսկ հետագայում՝ համատեղ եզրահանգման սկզբունքներին համապատասխանող առաջարկը, որ ներկայացվել է կողմերին ԵԱՀԿ կողմից՝ մերժել են, նախ, ԼՂ նույն ղեկավարությունը, Ռոբերտ Քոչարյանն ու Վազգեն Սարգսյանը եւ վերջում՝ Սերժ Սարգսյանը:

Այս բացահայտումը թարմացրեց հիշողությունս այդ օրերի մասին:

Շատերին է հայտնի, թե ինչ զարգացում ունեցավ այս գործընթացը մինչեւ նախագահի հրաժարականը: Սակայն կան դետալներ, որոնք այդ շրջանում հայտնի են դարձել ինձ, եւ նպատակահարմար եմ համարում հրապարակել.

- Սամվել Բաբայանը հյուրընկալվեց Իրանի Իսլամական Հանրապետությունում: Թե ում նախաձեռնությամբ եւ ինչ մակարդակի հանդիպում ունեցավ՝ չգիտեմ: Բայց գիտեմ, որ նրա վերադարձից հետո իրանական կողմը մի քանի անգամ ավտոշարասյունով վառելիք եւ այլ ապրանքներ (ծածկոցներով փողարկված էին) ուղարկեց Ղարաբաղ՝ Խոջալուի կամրջով, շրջանցելով Հայաստանը: Նույն կամրջով էր անցել ու դարձել Բաբայանը: Եւ այս գործարքից է բխում անվտանգության խորհրդի ընդլայնված նիստում Վազգեն Սարգսյանի հետեւյալ կարծիքը. *«Հնարավոր չէ Հայաստանը լրիվ մեկուսացնել: Մեզ կօգնեն Ռուսաստանը եւ Իրանը: Իսկ եթե ինչ-ինչ պատճառներով Ռուսաստանը դադարեցնի զենքի մատակարարումը, ապա մենք կենք կստանանք Իրանից»:*

- Չգիտեմ, ում նախաձեռնությամբ ու հրահանգով Սյունիքի մարզի բաղամապետերն անակնկալ այցելեցին Ղարաբաղ: Ես դրա մասին իմացա Մեղրիի եւ Ագարակի բաղամապետերի ինձ ուղղված հարցումից, որով փորձում էին նշտկել այցելության նպատակը: Ես Սյունիքի փոխմարզպետն էի: Նպատակի անորոշությամբ պայմանավորված՝ վերջիններս հրաժարվեցին մեկնել: Սիսիանի, Գորիսի, Կապանի եւ Քաջարանի բաղամապետերը մեկնել էին եւ լսել Ղարաբաղի որոշ ղեկավարների կողմից Տեր-Պետրոսյանին պախարակող արտահայտություններ: Այս այցելությունը, ըստ էության, Ղարաբաղի ու Հայաստանի մի հատվածի միակարծության ցուցադրություն էր:

- Եթե հիշտ եմ հիշում՝ 1998թ. հունվարի 20-ին պատասխան այցով Սյունիքի բաղաքներում հայտնվեցին Ղարաբաղի ներկայացուցիչներ: Նպատակը՝ հասարակության մեջ կարծիքի տարածումն էր Տեր-Պետրոսյանի հրաժարականի անհրաժեշտության մասին: Այցելության երկրորդ օրն իմ նախաձեռնությամբ հանդիպեցի Ղարաբաղի՝ Կապանում գտնվող ներկայացուցիչների հետ, բացատրեցի նրանց արարքի իմ ընկալումը եւ առաջարկեցի մյուս բաղամներում գտնվող իրենց ընկերների հետ վերադառնալ Ղարաբաղ: Ընկալեցին եւ ըմբռնումով մոտեցան՝ ասելով, որ այդ առաքելությունն անձամբ իրենց սրտով չի: Նաեւ շշնջացին, որ նախագահի հրաժարականի դեպքում նախագահ է դառնալու Քոչարյանը:

- Սիսիանում արդյունք արձանագրվել էր: Կոմունիստների դահլիճային ժողովի ժամանակ՝ նանաչված, ռազմական, ոչ կոմունիստ մի գործիչ հնչեցրել էր Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի պահանջը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը «լսեց» նրան, բայց հրաժարականի մեջ ամրագրեց հետեւյալ արտահայտությունը. «...Իշխանության նգնաժամում Արցախի հարցի արծարծումն ընդամենը պատրվակ է, խնդիրը շատ ավե-

[26] *28.01.2017թ.:*

լի խորն է եւ կապված պետականության հիմնաղբյուրների, խաղաղության ու պատերազմի այլընտրանքի հետ...»:

* * *

Թվում էր, թե Նախագահի հրաժարականից հետո Վազգեն Սարգսյանը, Լեոնարդ Պետրոսյանը, Սամվել Բաբայանը, Արկադի Ղուկասյանը, Ռոբերտ Քոչարյանը եւ Սերժ Սարգսյանը՝ ուս ուսի տված, կմոբիլիզացնեն իրենց ուժերը եւ Հայաստանը կդարձնեն Իսրայել: Իսկ ինչ կատարվեց.

**1. Վազգեն Սարգսյանի** հոետորաբանությունն ու վարագիծը փոխակերպվեցին: Շարադրենք դրանք ժամանակային հաջորդականությամբ.

*– Շրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Ամեն ինչ կախված է կառավարության աշխատանքի ճիշտ կազմակերպումից եւ ուժերի մոբիլիզացիայից (1998թ. հունվարի 9-ի Ակ ընդլայնված նիստ):*

*– Այլ հարց է՝ ես հրաժարական կտամ, թե՝ ոչ: Ես հրաժարական չեմ տա (1998թ. հունվար, հայտնի ասուլիս, Ալվարդ Բարխուդարյանի՝ Վազգենին պաշտոնից հեռացնելու մասին հարցի պատասխան):*

*– Գնահատել, հարգել ու գնահատում եմ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Իմաստուն եւ բարոյական մարդ ու գործիչ է: Լեւոն Տեր-Պետրոսյանը հեռացավ՝ իր հետ տանելով իր համոզմունքները, թողնելով դաշտը մեզ: Եթե որոշեր չհեռանալ, ոչ ոք չէր կարող հեռացնել... Եթե ինքը ինձ հեռացներ՝ որպես պաշտպանության նախարար, ես հեռանալու էի... (1999թ. հունվարի 29, ՀՀԿ 5-րդ համագումարի ելույթից հատված):*

*– Ես չեմ ուզում դառնալ նախագահ, Աժ նախագահ, վարչապետ: Ես ուզում եմ մնալ պաշտպանության նախարար (նույն ելույթից):*

*– Նույն տարվա մայիսի խորհրդարանական ընտրություններին մասնակցեց Կարեն Դեմիրճյանի հետ կազմած դաշինքով եւ դարձավ վարչապետ: (Հագիվ թե գանվի մեկը, որը կարող է կասկածի տակ դնել Կարեն Դեմիրճյանի խաղաղասիրական էությունը):*

*– Վարչապետ Վազգեն Սարգսյանը 1999թ. մեկնեց ԱՄՆ եւ հանդիպեց փոխնախագահ Ալբերտ Գորի հետ: Ուղեկցողների վկայությամբ՝ Վազգենը Գորին խնդրել էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ սահմանը բացելու համար: Միաժամանակ խոստանալով, որ կարող են առանց վճարի բաց սահմանով անհրաժեշտ քանակով ցեմենտ առաքել Թուրքիա՝ այնտեղ տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքները վերացնելու համար: Նաեւ առաջարկել էր այդ սահմանի բացմանը զոհաբերել ԱՄՆ կողմից Ադրբեջանի նկատմամբ կիրառվող 907 բանաձեւը: Այս բանաձեւը կիրառվում էր 1992 թվականից եւ ուղղված էր Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ կիրառվող շրջափակումներն ու ուժի կիրառումը դադարեցնելուն: Դա խոչընդոտ էր ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի համագործակցությանը:*

Վազգեն Սարգսյանը դարձավ հոկտեմբերի 27-ի աճաբեկչության զոհ:

**2.** Նույն աճաբեկչության զոհը դարձավ **Լեոնարդ Պետրոսյանը**: Այն ժամանակ լուրեր էին շրջում, որ վերջինս չի ողջունել Քոչարյանի նախագահ դառնալու գաղափարը:

**3. Սամվել Բաբայանը** 2000 թվականին մեղադրվեց Արցախի նախագահ **Արկադի Ղուկասյանի** դեմ մահափորձի համար եւ դատապարտվեց 14 տարի ազատազրկման:

**4. Ռոբերտ Քոչարյանը.**

Զմանրամասնելով նրա 10 տարվա նախագահության գորշ անցյալը, կենտրոնանամ նրա կողմից Ղարաբաղին կարգավորման մանդատից զրկելու մի հետեւանքի վրա: Թե ինչ հանգամանքներից դրդված Քոչարյանը կատարեց այդ անդարձելի քայլը՝ չծավալվենք, բայց պարզ է, որ դա անելիս նա ոգեշնչված էր Վազգեն Սարգսյանի հետեւյալ ձեւակերպումով. «Անկարելի է Ռոբերտ Քոչարյանի հրաժարականը: Առանց Ռոբերտ Քոչարյանի՝ կունենանք մեզ չվստահող Արցախ, իսկ առանց Արցախի ժողովրդի՝ Արցախի հարցը լուծել հնարավոր չէ»: Այսպես նա պատասխանել էր 1998թ. հունվարի հայտնի ասուլիսի ժամանակ Ալվարդ Բարխուդարյանի հարցին, թե արդյոք հնարավո՞ր է վարչապետ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկությունը:

Ղարաբաղին զրկելով կարգավորման մանդատից, Քոչարյանը լուծեց մի խնդիր, որով Հայաստանն ուղղակի պետք է սպասարկի հակամարտությունը չկարգավորելու Ղարաբաղի տնտեսակետը, դրանով իսկ ամրապնդելով ղարաբաղյան կլանի իշխանությունը Հայաստանում: Ղարաբաղի համար ավելի վստահելի հայաստանյան գործիչներ, քան Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Վազգեն Սարգսյանն էին իրենց վաստակով, դժվար է երեւակայել: Վազգենը վախենանվեց Հայաստանում իրական իշխա-

նություն ունենալու պայմաններում: Տեր-Պետրոսյանին բռնությամբ զրկեցին իշխանության գալու ռեալ հնարավորությունից՝ հեղկելով անմեղ մարդկանց արյուն:

**5. Սերժ Սարգսյանը** իշխանությունը վերցրեց արյունով.

– Ժամկետներ նշելով՝ հրապարակեց մի շարք զարգացման ծրագրեր, որոնք չեն իրագործվել.

Իրան–Հայաստան երկաթուղի

Նոր ատոմակայան

Մեղրիում նավթավերամշակման գործարան

Իրանի հետ համատեղ հիդրոէլեկտրակայան Արաքս գետի վրա

Գյումրիի տեխնոպարկ, Դիլիջանը տարածաշրջանային ֆինանսական կենտրոն եւ այլն...

Յուրաքանչյուր վարչապետի հետ նոր երազանքներ՝ ազատ տնտեսական գոտի եւ կրկին Ռուսաստանի հետ այլընտրանքային ճանապարհի որոնումներ: Չեմ զարմանա, եթե հայտարարվի, որ այդ ճանապարհը հանդիսանալու է հարավ–հյուսիս ճանապարհի շարունակությունը եւ անցնելու է ամբողջ Վրաստանի եւ Կովկասյան լեռների ընդերքով:

– Երբեք տարբեր բրեական գործերով մի քանի տասնյակ մարդիկ են հայտնվել բանտերում (Շանթ Հարությունյանի եւ ընկերների գործով անմարդկային պատիժներ են կիրառվում): Բոլոր երբեք դեպքերում էլ կատարված-չկատարված, ծրագրված-չծրագրված գործողությունների հիմքում ընկած է ընտրություններով իշխանություն փոխելու անհնարինության համոզմունքը: Բանտերում տեղ չկա, համաներում չի իրականացվում:

– Նա կեղծելով փոխեց Սահմանադրությունը՝ իր իշխանությունը երկարաձգելու միակ նպատակով:

– Տեղի ունեցավ ապրիլյան պատերազմ, որի հետեւանքով ոչ միայն ունեցանք մարդկային ու տարածքային լուրջ կորուստներ, այլեւ բացահայտվեց, որ տարիներ շարունակ «տարածաշրջանի ամենամարտունակ» հորջորջված բանակը բազում թերություններ ունի:

Փաստորեն, Ռոբերտ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը ձեւավորեցին ստատուս քվոյի, իսկ ավելի նշգրիտ՝ **պատերազմի սպառնալիքի** վրա հենված **բրեաոլիգարխիկ ռեժիմ** (միջազգային վերջին ձեւակերպմամբ՝ հիբրիդային, ավտորիտարի եզրին), իսկ ավելի պատկերավոր՝ **երկգլխանի**



**հրեշ**: Նրանք իշխանության շարաշահմամբ յուրացրին միլիարդավոր դոլարների կարողություն, որն անգամ ներդրում չդարձավ Ղարաբաղում:

Տեր-Պետրոսյանի հրաժարականի վերոհիշյալ ձեւակերպումն ամբողջությամբ իրականություն դարձավ:

Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստից անցել է 19 տարի: Ընդդիմախոսների ճնշեցրած 14 կարծիքների հիմնազուրկ լինելու վերաբերյալ Տեր-Պետրոսյանի պարզաբանումներն ապացուցված են կյանքով:

Սթափվելու ժամանակն է, այլապես կյանքով ապացուցված հիմնազուրկ կարծիքներով նույն շրջապտույտի մեջ կրկին մտնելը, մեղմ ասած, խելամիտ չէ:

Առաջիկա ԱԺ-ի ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացնող, պատասխանատվություն ու քաղաքական գիտակցություն ունեցող ուժերը պարտավոր են վերջապես գիտակցել, որ տարիներ շարունակ սահմանին երիտասարդների օրումեջ զոհվելու փաստով եւ ապրիլյան պատերազմով ապացուցված է ստատուս քվոյի սնանկությունը: Կույր համառությամբ ստատուս քվոյի շարունակումը կործանարար ճանապարհ է Ղարաբաղի ու Հայաստանի համար:

Եթե գիտակցում են, ապա պարտավոր են դիրքորոշվել հենց հիմա՝ ընտրություններին ընդառաջ, դրանով իսկ նպաստելով խաղաղություն հաստատելու **հասարակական պահանջի ձեւավորմանը**: Ուրիշ կլիմ չկա:

Եւ վերջում՝ մի խորհուրդ: Ձեր քաղաքական գիտակցությունը թարմացնելու նպատակով զոնե մեկ անգամ էլ կարդացեք Լեւոն Տեր-Պետրոսյանի «Պատերազմ, թե խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածը:

## ԻՐԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ է

(Հարցազրույց «Իլուր» կայքին)[27]

**– Պարոն Մաթևոսյան, «Կոնգրես-ՀԺԿ» դաշինքի հիմնական ուղերձն արդեն բոլորին հայտնի է՝ խաղաղություն: Հայտնի են նաև վերջին ամիսներին ենչած արձագանքներն ուղերձին: Հիմնական ընդդիմախոսները պնդում են, թե ժողովուրդը միահամուռ կերպով, իբր, մերժում է խաղաղության ու փոխզիջման գաղափարը: Ի՞նչ կասեք սրա մասին:**

– Կարծում եմ, որ էդպես ասողները կտրված են իրականությունից: Ժողովրդի այն մասը, որն ուղղակի առնչվում է հակամարտության հետ, որը սահմանին կանգնած զավակներ ունի, այսինքն՝ ժողովրդի հասարակ հատվածը, խաղաղություն է ուզում: Ենթագիտակցական մակարդակում բոլորը խաղաղություն են ուզում, ավելին՝ նրանք տառապում են, ամեն առավոտ լույսը բացվելուն պես սրտատրոփ սպասում են, թե ինչ է գուժելու ՊԲ լրատվական ծառայությունը: Ի դեպ, նույն վիճակն Ադրբեջանում է: Ինչ վերաբերում է մեր համարձակությանը՝ ընտրություններին գնալ այս կարգախոսով: Նախ՝ սա իրատեսություն է: Մենք կարծում ենք, եւ նոր չէ, որ էդպես ենք կարծում, մշտապես խոսել ենք խաղաղության անհրաժեշտության մասին, մշտապես ասել ենք, որ առանց խաղաղության Հայաստանը չի կարող զարգանալ, եւ այդ ճամփարաժանն սկսվել է 1997-ին ու հանգուցալուծվել 1998-ի հունվարի 8–9-ի Անվտանգության խորհրդի նիստում: Հիմա՝ որն է մեր նպատակը. նախագահ Տեր-Պետրոսյանի դասական նեակերպմամբ, առնվազն ողջամտության կրակը վառ պահելու նպատակ ենք հետապնդում, բայց նաեւ հասկանում ենք, որ եթե իշխանությունները չեն գիտակցել, կոնկրետ՝ Ռոբերտ Քոչարյանի իրավահաջորդ Սերժ Սարգսյանի վարչակազմը չի գիտակցել, որ 98 թվականի իրենց մոտեցումները ձախողվել են, որ Տեր-Պետրոսյանի հիմնավորումներն ամբողջությամբ իրականացել են, ապա մենք ենք իրենց փոխարեն դա անում, մենք ենք խաղաղության անհրաժեշտության վերաբերյալ հասարակական կարծիք ձեւավորում: Մենք սա անում ենք, որովհետեւ, հակառակ իրենց պնդումների, Արցախի անկախությունը որեւէ պետության կողմից ճանաչված չէ, որովհետեւ այսօր Արցախում բնակչության քանակի մասին ցուցանիշները (չեմ ուզում թիվ հրապարակել) հուսադրող չեն, որովհետեւ Արցախի հենարան Հայաստանի Հանրապետության պարտքը կազմում է 5 մլրդ դոլար, որովհետեւ 1997–98թթ. ուստարվա 598 հազար աշակերտների համեմատ՝ հիմա սովորում է 300 հազարը, որովհետեւ զինադադար ասվածի շրջանում 2000-ի կարգի մարդկային կորուստներ ունենք, եւ տարեկան պաշտոնական տվյալներով՝ 40–50 հազար մարդ է արտագաղթում:

Այս պայմաններում Հայաստանն իրոք չի կարող զարգանալ, եւ խաղաղությունը մեզ պետք է թթվածնի պես: Միայն խաղաղ պայմաններում է հնարավոր ունենալ ներդրումներ, տարածաշրջանային ծրագրերին մասնակցության հնարավորություններ: Արդեն շատ բան ենք կորցրել այդ ուղղությամբ՝ Բաքու-Ջեյհան նավթամուղը կարող էր անցնել Հայաստանի տարածքով, պատկերացրեք՝ Ադրբեջանի ամենակենսական ենթակառուցվածքներից մեկը, ֆինանսական զարկերակը: Այսօր Ախալքալաք-Կարս երկաթուղին ու Ադրբեջանի տարածքով դեպի Իրան երկաթուղին են կառուցվում, դեռ գուցե հնարավոր լինի խաղաղություն հաստատելու դեպքում կասեցնել դրանց գործարկումը ու փոխարինել Հայաստանի տարածքով անցնող երկաթուղով: Ամեն դեպքում, Հայաստանն արդեն մեկուսացել է, անդառնալի կորուստներ է կրել եւ այսպես շարունակելու դեպքում՝ ավելի է մեկուսանալու: Մենք հավատարիմ ենք բոլոր հարեւանների հետ բարեկամություն անելու մեր կարգախոսին ու կարծում ենք, որ օր առաջ պետք է խաղաղություն հաստատել Ադրբեջանի հետ եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, դա միայն մեր պետության շահերից է բխում:

[27] *iLur.am, 06.03.2017թ.:*

**– Քննադատողների հիմնական պնդումներից մեկն էլ հետևյալն է՝ մենք խաղաղ ենք ու խաղաղության քարոզի կարիք չունենք, եւ պետք է առաջին հերթին խաղաղության պատրաստել Ադրբեջանին: Հենց Սերժ Սարգսյանն էլ վերջերս ասաց, որ մենք պատրաստ կլինենք խաղաղության այն ժամանակ, երբ դրան պատրաստ կլինի Ադրբեջանը: Դուք ասացիք, որ Ադրբեջանն էլ է խաղաղություն ուզում: Ինչպե՞ս պետք է երկու երկրների ժողովուրդները վստահ լինեն, որ փոխզիջման գնալով՝ ավելի անպաշտպան չեն դառնում:**

– Ինչ-որ բան զիջելով՝ Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակը դարձնում ենք միջազգայնորեն ճանաչված, եւ դա է իրական հաղթական արդյունքը, իրական հաղթանակը խաղաղության մեջ է: Իհարկե, Ադրբեջանը ետ չի մնում ռազմական հոետորաբանությամբ, բայց երբ մեր նորանշանակ պաշտպանության նախարարը շրջանառության մեջ է դնում «ազգ-բանակ» հայեցակարգը, հետո նույն մարդը դառնում է իշխող ուժի առաջին համարը, դա նշանակում է, որ իշխանությունն ազդակ է ուղարկում՝ մենք պատրաստ չենք խաղաղության: Բայց ինձ, անկեղծ ասած, չի հետաքրքրում երկու իշխանությունների հոետորաբանությունը: Ես տեսնում եմ, որ երկու ժողովուրդների մեջ կա խաղաղություն հաստատելու շրարձրաձայնվող պահանջ: Չբարձրաձայնվող, որովհետեւ երկու երկրներում էլ տարիներ ի վեր գերելության պրոպագանդան է աշխատել: Բայց ինձ համար մի չափանիշ կա՝ հարեւան Վրաստանում, որտեղ թե՛ Հայաստանից, թե՛ Ադրբեջանից բազմահազար տուրիստներ են գնում, երկու ժողովուրդների ներկայացուցիչները լողում են նույն լողափին, ապրում են նույն հյուրանոցում, եւ չի եղել մի դեպք, որ հայերն ու ադրբեջանցիներն ընդհարվեն իրար հետ՝ հայհոյեն իրար, վիրավորեն կամ վնասեն, չկա նման բան: Դա ամենամեծ վկայությունն է այն բանի, որ այս երկու ժողովուրդները պատրաստ են խաղաղության, որ նրանք անհամատեղելի չեն, ինչպես ասում էր Ռոբերտ Քոչարյանը: Հիմա ասում ենք՝ «երբ Ադրբեջանը պատրաստ լինի»: Նույն կերպ էլ այնտեղ կարող են ասել՝ «երբ Հայաստանը պատրաստ կլինի», ու այսպես, անընդհատ «պասերով» իրար փոխանցենք պատերազմի հոետորաբանությունը:



**– Այսինքն, մինչեւ մենք մեր խաղաղության ուղերձը չուղարկենք, չենք կարող ակնկալել, որ հակառակ կողմում կանգնածները նույնպես քայլ կանեն, այդպե՞ս է:**

– Մենք գիտակից ժողովուրդ ենք, իսկ գիտակից ժողովուրդները, ինչպես, ասենք, Եւրոպայում, արդեն տեւական ժամանակ է, որ խնդիրները պատերազմով չեն լուծում: Մենք պետք է առաջին քայլն անենք՝ օգտագործելով այս ընտրությունների հնարավորությունը: Ես վստահ եմ, որ մեր քայլը միջազգային հանրության կողմից արձագանք կգտնի: Պետք է իշխանությունները նախաձեռնողականություն դրսեւորեն ու խաղաղության պատրաստեն ժողովրդին: Մի բան, որ հիմա իրենց փոխարեն անում ենք մենք:

**– Դուք անձամբ մասնակցել եք Արցախի ազատագրական պատերազմին, եւ Ձեր դիրքորոշումն այդ առումով շատ հատկանշական է: Դուք նաեւ ներկայացնում եք Սյունիքի մարզը, մարզ, որը սահմանակից է Ադրբեջանին եւ անմիջականորեն իր վրա է կրում 1990-ականների պատերազմի հետեւանքները եւ կրելու է հնարավոր նոր պատերազմինը: Ինչպե՞ս են Սյունիքում մարդիկ վերաբերվում խաղաղության գաղափարին:**

– Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո խաղաղության անհրաժեշտության համատարած գիտակցություն կար: Ոչ միայն Սյունիքում, ամենուր: Հետո, դարձյալ պետական քարոզչամեքենայի ազդեցության տակ, այս տրամադրությունները փոխվեցին: Ամեն դեպքում, խաղաղությունը մարդու բնական ձգտումն է, մարդը ծնվում է խաղաղ ու բարեկեցիկ ապրելու համար, եւ այդպես ապրելու համար ուղղակի պետք է դիրքորոշում ունենալ: Ես չեմ հավատում բոլոր այն մարդկանց, որոնք հակառակվում են խաղաղության գաղափարին ու արտահայտվում են դրա մասին: Դա շատ վտանգավոր է, ուղղակի արկածախնդրություն է: Այս ժողովուրդները միմյանց հետ, միմյանց մեջ ապրել են դարեր շարունակ, հիմա էլ, ինչպես ասացի, օտար երկրներում համերաշխ ապրում են հարգանքով: Այստեղ էթնիկական անհամատեղելիության հարցն անիմաստ է: Կամ՝ Իրանից մեզ հետ առեւտրային կապեր ունեցող հազարավոր էթնիկ ադրբեջանցիներ կան, հաճույքով հարաբերվում են մեր ժողովրդի հետ, մի ամբողջ վարորդական համքարություն կա, որն այդ կապերից է եկամուտ ստանում: Նույն մարդիկ են, ուղղակի երկու կող-

մի իշխանությունները թշնամու կերպար ստեղծելու խնդիր ունեն, որն օգնում է իրենց, նախ՝ գալու իշխանության, հետո՝ պահելու այդ իշխանությունը:

Ինչ վերաբերում է պատերազմին իմ մասնակցությանը, 1991-ին Վազգեն Սարգսյանի հորդորով նշանակվել եմ Մեղրիի ոստիկանապետ՝ Մեղրիի շրջանի պաշտպանությունը համակարգելու լիազորություններով: Ոստիկանության կազմում այդ ժամանակ բանակի սաղմն էր, եւ հետագայում իշխանությունների ջանքերով ստեղծված պրոֆեսիոնալ բանակի, կամավորականների ու ոստիկանության համատեղ ջանքերով պաշտպանել ենք շրջանը: Եղել է մի դեպք, որը հիշ էր մնում խուճապային տրամադրություն առաջացներ Մեղրիում, 1992-ի ամռանը, եւ եթե ժամանակին հմուտ գործողություններով չչեզոքացնեինք վտանգը, կկորցնեինք ամենակարեւոր բարձունքներից մեկը, եւ չի բացառվում, որ այդ դեպքում Մեղրին կորցնեինք: Բայց մեկ օրում այդ վտանգը չեզոքացվեց, ընդ որում՝ այնպես, որ այլեւս երբեք չհամարձակվեցին Մեղրիի հանդեպ ոտնձգություն անել: Բայց մի կարեւոր հանգամանք կա. անգամ պատերազմական այդ շրջանում մարդկային շփումները չվնասվեցին: Իմ աշխատասենյակում դրված էր հեռախոս, որը երկաթուղու կապի միջոցով միացած էր ադրբեջանցիների հետ, եւ յուրաքանչյուր միջադեպի դեպքում ես անմիջապես կապվում էի Նախիջեւանի ներքին գործերի նախարարի հետ կամ հարեւան շրջանի ոստիկանապետի հետ, եւ անում էինք մեզանից կախված ամեն ինչ, որ թշնամանքը չխորանա: Այսինքն, պատերազմական պայմաններում անգամ՝ մենք ձգտում էինք խաղաղության: Անգամ այն դեպքից հետո, որը նկարագրեցի, բարձունքի պաշտպանության գործողությունից երկու ժամ հետո անմիջապես հանդիպում նախաձեռնեցինք ու բանակցություններ ունեցանք նրանց հետ: Այդ հարաբերությունների արդյունքում տասնյակ մարդկանց կյանքեր են փրկվել, գերեվարված մարդիկ՝ հովիվներ, մեքենավարներ եւ այլք, արագորեն ազատ են արձակվել:

**– Դուք նաեւ ընդգրկված եք Կոնգրես-ՀԺԿ դաշինքի տարածքային ցուցակում, իսկ նախորդ ընտրություններին մեծամասնականով առաջադրվելու փորձ եք ունեցել: Կխնդրեմ ներկայացնեք ձեր ընտրական տարածքում գոյություն ունեցող վիճակը եւ Ձեր տեսակետը նոր ընտրակարգի**



**վերաբերյալ՝ ինչ առավելություններ է տալիս կամ ինչ խնդիրներ է ստեղծում:**

– Նախ՝ ընտրական նոր համակարգը խորամանկորեն մտածված մի համակարգ է, որը շատ ավելի մեծամասնական է, քան բուն մեծամասնականն էր: Բայց էստեղ մի նրբություն կա. իշխանությունը պահելու շարժառիթով խառնարդարանական համակարգի անցում կատարելով՝ վերացրին նաեւ նախագահական ընտրությունները: Բոլոր նախագահական ընտրություններում ժողովուրդը, անկախ իշխանության ջանքերից, շատ հիշտ է կողմնորոշվել. այլ բան, որ այդ արդյունքները հնարավոր չի եղել փրկել: Եթե հիմա հասարակությունը գիտակցի, որ այս ընտրություններն իրենց նշանակությամբ անգամ ավելին են, քան նախագահական ընտրությունները, եւ դրսեւորեն այնպիսի վարքագիծ, ինչպիսին նախկինում նախագահական ընտրությունների ժամանակ են դրսեւորել, այս խորամանկ մտածված համակարգը կարող է շաշխատել: Ինչ վերաբերում է իրավիճակին, ես երկու օրով եղել եմ տարածաշրջանում եւ հասկացել եմ հետեւյալը. իրականությունը շատ հողարկված է: ընտրողներից ոչ ոք չի համարձակվում բացահայտ արտահայտել իր նախասիրությունները, թե ում է պատրաստ տալ ձայնը, բացի ՀՀԿ-ից: Եւ սա իր պատճառներն ունի. եթե մի մարզում մարդուն, իր կամքին հակառակ, եկամտից զրկելու սպառնալիքով պարտադրում են անդամակցել ՀՀԿ-ին, եթե Քաջարանի նման քաղաք-գործարանում ուղղակի աշխատանքի ժամին մարդկանց նկարում են, որ անխտիր բոլորին ՀՀԿ-ի տոմս տան, դա նշանակում է, որ ՀՀԿ-ն դադարել է կուսակցություն լինելուց, դա ավելի շատ համաճարակ է: Հիմա իրավիճակը շատ ավելի բարդ է, քան նախկինում, երբ մասնակցում էինք մեծամասնական ընտրություններին: Հիմա ամեն ինչ կախված է ընտրողներից: Ես կոչ եմ անում նրանց՝ գիտակցել, որ այլեւս Հայաստանում նախագահական ընտրություններ չեն անցկացվելու, որ այստեղ որոշվում է նաեւ իրենց խաղաղ ու բարեկեցիկ գոյության խնդիրը: Եթե մեր ընտրողները կարողանան ընտրել նպատակն ու ծրագիրը, հետո փնտրեն անձերին, դա իրոք կլինի համապետական ընտրություն: Հակառակ դեպքում, եթե նախ անձերով մոտենան ընտրությանը, ապա դա կլինի գյուղապետի ընտրություն: Կոչ եմ անում, որ լուրջ վերաբերվեն այս ընտրություններին:

## ԿՈՉ ԸՆՏՐՈՂԻՆ[28]

**ՀԱՐԳԵԼԻ՛ ԸՆՏՐՈՂ**

Հարգանքի է արժանի այն իշխանությունը, որն ապահովում է ժողովրդի կայուն խաղաղությունն ու բարեկեցիկ զարգացումը: Բարեկեցիկ կյանքի գլխավոր նախապայմանը ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ է:

Ղարաբաղյան կլանը Հայաստանում իշխանության է եկել 1998 թվականին՝ հակադրվելով Լևոն Տեր-Պետրոսյանի խաղաղության ծրագրին ու հասնելով նրա հրաժարականին: Այդ իշխանությունը Հայաստանում ամրապնդվել է 1999թ. հոկտեմբերի 27-ի Ազգային ժողովի սպանդով, որի զոհը դարձան նաև Աժ նախագահ Կարեն Դեմիրճյանն ու վարչապետ Վազգեն Սարգսյանը, իսկ 2008թ. մարտի 1-ի ոճրագործության արդյունքում, 10 անմեղ մարդկանց արյան գնով, վարչապետ Սերժ Սարգսյանը Ռոբերտ Քոչարյանից ժառանգեց կրկնակի արյունոտ ու հանցագործ տարրերի հետ սերտաճած իշխանությունը:

Իշխանության գալով Հայաստանում՝ այս մարդիկ հայտարարել են, թե առանց Ղարաբաղի հակամարտության կարգավորման էլ, շրջափակման ու թշնամանքի պայմաններում կարելի է ապահովել Հայաստանի ու Ղարաբաղի զարգացումը:

Արդյունքում այսօր ունենք.

• Ջինաղաղարի պայմաններում սահմաններում զոհված ավելի քան 2000 մարդ:

[28] *facebook.com/notes/282482012882306/, 12.03.2017թ.:*



• 1997–98 ուսումնական տարում 1-ից 10-րդ դասարաններում սովորող 592 հազար աշակերտների համեմատ՝ այժմ սովորող ընդամենը 300 հազար:

• Հայաստանի պետական պարտքը կազմում է վեց միլիարդ դոլար:

• Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի անձնական կարողությունը գնահատվում է ավելի, քան Հայաստանի պետական պարտքն է (նրանց կողմից Ղարաբաղում չի արվել եւ ոչ մի անձնական ներդրում):

• Համատարած անարդարություն, կոռուպցիա, կեղծարարություն, տնտեսական մենաշնորհներ, արտոնյալների դաս, աղքատություն, հուսահատություն, տարեկան 40–50 հազար քաղաքացիների արտագաղթ:

Սա պատերազմի սպառնալիքի ու գործող իշխանության կոռումպացված լինելու հետեւանքն է:

Հանրապետական կուսակցության առաջնորդ Սերժ Սարգսյանը կեղծիքներով փոփոխեց Սահմանադրությունը եւ վերացրեց նախագահական կառավարման համակարգը: Նպատակը մեկն է. Հանրապետական կուսակցության եւ նրա շուրջ ձեւավորվող խորհրդարանական մեծամասնության միջոցով իր ձեռքում պահել պետության կառավարման բոլոր լծակները:

Հայաստանում նախագահական ընտրություններ այլեւս չեն անցկացվելու:

Ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններն իրենց նշանակությամբ փոխարինում են նախագահական ընտրություններին:

Հարգելի՛ ընտրող, ինչպիսի ցուցակով, ինչ դիմակով էլ որ ընտրություններին ներկայացված լինի Հանրապետական կուսակցությունը, միեւնույն է, նա շարունակելու է մնալ Սերժ Սարգսյանի կամքի սպասավորը: Նույնպիսին կլինեն նաեւ այն ուժերը, որոնք պատրաստակամ են Հանրապետական կուսակցության հետ կազմել հետընտրական դաշինք:

Հատուկ մշակված խորամանկ ընտրական համակարգով ձեզ մղում են ընտրություն կատարելու ոչ թե գաղափարների, ծրագրերի ու նպատակների, այլ անձերի միջեւ:

«ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ» քաղաքական դաշինքն ընտրություններին մասնակցում է «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» կարգախոսով:

Թեեւ ապրիլյան պատերազմն ապացուցեց, որ մեր ժողովուրդը վտանգի դեպքում կարողացավ համախմբվել եւ խափանել հակառակորդի

ձգտումները, բայց կարճատեւ պատերազմի պատճառած կորուստները լրացնում են մեր այն համոզմունքը, որ Ղարաբաղի հակամարտության խնդիրը պետք է լուծել օր առաջ՝ բանակցությունների սեղանին դրված փոխզիջումային տարբերակով:

Միայն այս դեպքում է հնարավոր ապահովել Հայաստանի ու Արցախի բարեկեցիկ զարգացումն ու ապահովությունը: Այդպես է հնարավոր վերջ դնել երկու հարեւան ժողովուրդների կորուստներին ու տառապանքներին:

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման այլընտրանքը պատերազմն է, որի հետեւանքները կործանարար են հակամարտության բոլոր կողմերի համար:

Հարգելի ընտրող, եթե դու շարունակաբար ուզում ես ապրել քո օջախում խաղաղ ու բարեկեցիկ կյանքով, եթե քո ցանկությունն է, որ Ղարաբաղում բնակվող մեր ազգակիցները անվտանգ ու հարատեւ ապրեն իրենց պապական բնօրրանում, նշանակում է՝ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» կարգախոսը բխում է քո նպատակից:

Ուրեմն, խղճիդ պարտք չմնալու մղումով քայլ կատարիր՝ հեռու մնա ծուղակն ընկնելու գայթակղությունից, հաշվի մի՛ առ, թե որ քաղաքական ուժը որ անձով է ներկայացել ընտրություններին, որքան էլ որ նա քեզ բարեկամ, ընկեր կամ անգամ կերակրող լինի:

Մի կողմ թող անձերին, ընտրիր քո նպատակին համապատասխանող ծրագիր ունեցող քաղաքական ուժը, որից հետո միայն ընտրություն կատարիր այդ ուժի թեկնածուների միջեւ:

Հաշվի առ, որ Ազգային ժողովում «ԿՈՆԴՐԵՍ-ՀԺԿ» դաշինքի ազդեցիկ ներկայությունն անգամ կնշանակի, որ ձեւավորվել է խաղաղություն հաստատելու հասարակական պահանջ, որի հետ չի կարող հաշվի չնստել ցանկացած իշխանություն, ինչ ուժերից էլ որ բաղկացած լինի:

Դավիթ Մաթեւոսյան
ԱԺ պատգամավորության թեկնածու
ԱԺ առաջին գումարման պատգամավոր (1995–99 թթ.)
նախկին քաղբանտարկյալ (2008–2009 թթ.)

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄՈՎ[29]

Լուսաբացից առաջ գրոհի մասնակիցները բաժանվեցին երկու խմբի ու անմիջապես ստացան մարտական հանձնարարություն. մթության քողի տակ անհապաղ շարժվել բարձունքն ի վեր, դիրքավորվել, գրոհը սկսել լուսաբացին՝ բարձունքի հեռահար հրետանային եւ նռնականետային նախապատրաստությունից հետո եւ բարձունքն ազատագրել մինչեւ կեսօր:

Խոշլիդաղ կոչվող բարձունքը մեզ համար ուներ բացառիկ ստրատեգիական նշանակություն: Կորցրել էինք նախորդ օրը՝ 1992թ. օգոստոսի 16-ին, հակառակորդի անակնկալ գրոհով: Խոշլիդաղը՝ Մեղրիի եւ Օրդուբաղի շրջանների միջեւ, Զանգեզուրի լեռնաշղթայի իշխող բարձունքներից մեկն է, մոտ 2700 մետր բարձրությամբ: Այնտեղից պարզ եղանակին, վաղ առավոտյան՝ Նախիջեւանի վրայով փորձառու աչքը կարող է տեսնել Արարատ լեռը, փորը՝ մեծի ֆոնին:

Հակառակորդի վերահսկողության տակ էին մնացել մեր ունեցած երկուական Դ-30 հրանոթներից եւ ԲՄ-21 Գրադ հրթիռային համակարգերից մեկականը: Գրոհը սկսելուն պես շրջանի հասանելի հատվածի վրա սկսեց տեղալ հակառակորդի արձակած արկերի ու հրթիռների տարափը, թեեւ ունեինք սահմանային բախումների ժամանակ բնակավայրերը չհրետակոծելու պայմանավորվածություն: Ակնհայտ էր, որ սա սովորական դիրքային կռիվ չէր: Հակառակորդն իշխող Խոշլիդաղից եւ իրենց հիմնական հենակետ հանդիսացող գերիշխող Գողթանասարից բիրախավորել էր Մեղրիի շրջանի տեսանելի բոլոր բնակավայրերը: Գողթա-

[29] *iLur.am, 17.07.2017թ.: Հոդվածի մի մասը քաղված է այդ պահին անտիպ՝ «Մկիզբ» հուշերից (խմբ.):*

նասարից օգնության էին շտապում հակառակորդի զինված խմբեր, որոնք, դեռ մարտի դաշտ չհասած, հաջողությամբ չեզոքացվում էին մեր միակ Դ-30-ի ճշգրիտ կրակով: Բարեբախտություն էր, որ հակառակորդի հրետանավորներն արհեստավարժ չէին, եւ նրանց արձակած հարյուրավոր արկեր ու հրթիռներ պայթում էին բնակավայրերից հեռու՝ լեռնալանջերին: Շեղումն այնքան մեծ էր, որ մի քանի տասնյակ արկ ու հրթիռ բնկան Իրանի տարածք: Մեղրիի շրջանի տարածքը կուրորեն հրետակոծվում ու հրթիռակոծվում էր նաեւ արեւելյան՝ Զանգելանի կողմից: Սակայն այդ ուղղությամբ նրանց համար տեսանելի բնակավայրեր չկային, եւ ազդեցությունը մեծ չէր: Հակառակորդի արձակած արկերի ու հրթիռների ընդամենը մի չնչին մասն ընկավ բնակավայրերի շրջակա այգիներում, մի քանի արկ հասավ Մեղրի քաղաքի ծայրամասեր, մեկը դիպավ հիվանդանոցին: Առանց պայթուցիչի մի արկ Մեղրիում ցցվել էր բնակելի տան ներսի պատի մեջ: Նույնպիսի մի արկ էլ Վարհավարում ծակել էր տան տանիքը, առաստաղը, հատակը, անդրադարձել նկուղի հատակից ու հայտնվել մածունի պարկի մեջ: Էլի կգտնվեն նման մանր վնասներ, բոլորը չեմ հիշում:

Հակառակորդը հայտնաբերել էր մեր հրետանին: Նրան ուղղված առաջին պայթյունները շեղ էին մեկ կիլոմետրի չափով, բայց դանդաղ՝ ասես սողալով, մոտենում էին: Վերջին մի հրթիռ ցցվեց հողի մեջ՝ հրանոթին շատ մոտ, չպայթեց, հավանաբար առանց պայթուցիչի էր: Բայց հանկարծակի արգելակման հետեւանքով առաջացած հարվածային ալիքը տեղահան արեց հրանոթի մոտ կանգնած շտապ օգնության մեքենայի ապակիները:

Կեսօրին մոտ բարձունքն ազատագրված էր, սակայն հակառակորդի հրետանին չէր լռում: Ռադիոկապով դիմեցի Օրդուբադի ղեկավարությանը. «Շարունակենք, թե՞ բանակցենք»: Հրետանին լռեց:

Բարձունքում ցնծություն էր՝ հաղթանակ էին տոնում: Ղեւոնդի վաշտի տղաները, ոստիկանությունը, արդեն ժամկետային զորակոչով կազմավորված Լիճքի առաջին վաշտը՝ կապիտան Հայկ Կարապետյանի գլխավորությամբ, ու բազմաթիվ կամավորներ: Ներկաների ոգեւորությանը հինգ րոպե մասնակցելուց հետո գնացի հակառակորդի վարչական եւ ռազմական գլխիկոր ղեկավարների հետ բանակցելու՝ **պատերազմի մեջ խաղաղություն փնտրելու**:



Ցավոք սրտի, զոհի մասնակիցներից երկուսը՝ Գեւորգն ու Հրաչը, զոհվեցին: Գեւորգը դիրքի պատասխանատուն էր: Բարձունքը կորցնելուց հետո չէր իջել, դիրքավորվել էր մի կրակոց հեռավորության վրա ու լուսաբացին միացել զոհողներին:

Հակառակորդի խոստովանությամբ՝ նրանց զոհերը 26-ն էին:

Հետո միայն հասկացանք. Շուշին ու Լաչինը կորցնելուց անմիջապես հետո Ադրբեջանում նախագահ էր դարձել Էլչիբեյը, որը ծագումով Մեղրիի հարեւան Օրդուբադի շրջանից էր: Այստեղ համատարած նրա կուսակիցներն ու համակիրներն էին, որոնց նկատմամբ Նախիջեւանի ղեկավար Հեյդար Ալիեւն ազդեցություն չուներ:

Կարծես թե այս հարձակումն ուղիղ երկու ամիս առաջ բացված, Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքի ձախողված պատասխանն էր:

Մինչդեռ մեր բնակավայրերի արդյունավետ հրետակոծումը կարող էր խուճապ ծնել...

Պատերազմի այս դրվագը Մեղրիում երկար ժամանակ հիշում ու գնահատում էին, համարում էին Մեղրիի փրկության օր: *(Հետաքրքիր մի զուգադիպությամբ՝ 1920թ. սեպտեմբեր–հոկտեմբերին, նույն Խոշլիդաղի շրջակայքում, Նժդեհի գլխավորած Կարճևան Կաքավաբերդի աշխարհազորը ետ էր մղել թուրք զորավար Խալիլ փաշայի գլխավորած զորագունդը, որը, ուստ բոլշեւիկների հետ դաշնակցած՝ նպատակ էր հետապնդում ճեղքել Մեղրին Արաքսի երկարությամբ՝ միացնելով Նախիջեւանը Ադրբեջանին)*:

Հիմա՝ 25 տարի անց, այդ օրը մոռացության է մատնվել: Նոր սերունդը գրեթե չգիտի դրա մասին: Ականատեսները հետընտրական խումհարի մեջ են, Հանրապետականից զզվելով՝ ձայն են տվել նրան ու նրա հեղինակած պատերազմի խրանիչ ազգ-բանակ արկածախնդրությանը: Մինչդեռ որոշ կամ թոռանը բանակ ճանապարհելիս բաժակ են բարձրացնում միայն խաղաղության համար:

Հ.Գ. Ժամանակները փոխվել են: Գործող իշխանությունների նպատակային ջանքերով, բարոյական առաքինություններին ու մտածելակերպին փոխարինելու են եկել փողոցային կեղտոտ բարքերը: Հետեւողական քարոզչությամբ նոր սերնդին Ադրբեջանի նկատմամբ կույր ատելություն են ներշնչում: Նույն մոտեցումը ցուցաբերում են Ադրբեջանում:

Մինչդեռ իրականում՝ 90-ականների սկզբին, պատերազմի պայմաններում անգամ եղել է խաղաղ գոյակցության անկեղծ ու գործնական ձգտում: Անհրաժեշտությունից ելնելով, կոնկրետ խնդիրներ կարգավորելու նպատակով, սկսած 1991 թվականից մինչեւ զինադադար, Մեղրիի ու Օղուրբադի, նույնիսկ Նախիջեւանի միջեւ եղել են մի շարք սահմանային հանդիպումներ:

## ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՕՐՀԱՍԸ[30]

Երեւան–Բաքու երկաթուղու վերջին՝ Ջուլֆա–Մինջեւան հատվածը կառուցվել է հրատապ, երկրորդ աշխարհամարտի առաջին շրջանում եւ շահագործման է հանձնվել 1941թ. աշնանը: Նույն շրջանում՝ ամերիկյան ներդրումների հաշվին, Իրանում բարելավվել ու կառուցվել են նավահանգիստներ, ավտոճանապարհներ, երկաթուղի: Ջուլֆան եւ Մեղրիով անցնող Երեւան–Բաքու երկաթուղին մեծ դեր են խաղացել պատերազմի շրջանում՝ Իրանով ՍՍՀՄ-ին մատակարարվող ամերիկյան բեռների տեղափոխման համար:

Ընդհանուր առմամբ, 17 մլն տոննա ամերիկյան մատակարարումներից Իրանով է անցել 4.2 մլն տոննա, որի ծանրակշիռ մասը՝ հիշյալ ճանապարհով:

Առհասարակ, հայկական երկաթուղին կապող օղակ է՝ մի կողմից Ռուսաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի, մյուս կողմից՝ Իրանի եւ Թուրքիայի միջեւ:

Թեեւ Մեղրիի հատվածում երկաթուղին միագիծ էր, եւ հանդիպակաց շարժվող գնացքները հարկադրված էին կայարաններում սպասելով ճանապարհը զիջել միմյանց, բայց փոքր, գրեթե զրոյական թեքության հաշվին ապահովվում էր հսկայական բեռնաշրջանառություն: Տեսնել է պետք, թե ինչ ծավալուն ու բարեխիղճ աշխատանք է կատարվել ժամանակին՝ Արաքսի ձախակողմյան ափի ուղղաձիգ ժայռերից մի քանի մետր հորիզոնական լայնություն կորզելու համար: Մինչեւ 1971թ. Նախիջեւանի ջրամբարի շահագործումը, Արաքսը մայիսի վերջին այնքան

[30] *iLur.am, 27.10.2017թ.; aniarc.am, 11.08.2021թ.:*

էր վարարում, այնպես էր կատաղում, որ ջուրը տեղ-տեղ ծածկում էր երկաթուղին, բայց երկաթուղու աշխատանքը գրեթե չէր ընդհատվում:

Երկաթուղու գործունեության վերջին տարիներին յուրաքանչյուր ուղղությամբ օրական անցնում էր 20-ից 23 շարժակազմ: Յուրաքանչյուր շարժակազմի բեռնավորված վագոնների նվազագույն քանակը 50-ից ավելի էր:

Մի քանի ամիս շարունակ՝ ամեն օր կեսգիշերին աշխատանքից տուն գնալուս ճանապարհն անցնում էր Մեղրիի կայարանով: Այնտեղ ինձ պարտաճանաչ սպասում էր կայարանապետ Ժորա Հայրապետյանը: Բարեխիղճ կայարանապետը՝ մի գավաթ թեյ հյուրասիրելուն զուգահեռ, ինձ էր հանձնում թղթի մի կտոր, որում հաշվառված էր Մեղրիով անցած ու Նախիջևան մտած հայկական բեռներ տեղափոխող վագոնների քանակը, ընդ որում՝ մազութի վագոններինն առանձնացված: Ձմեռ էր՝ 1992թ. սկիզբը, ջերմակայաններն աշխատում էին մազութով, որը ծայրը ծայրին հասցվում էր անիվների վրա: Առավոտյան այդ տվյալները հաղորդում էի վերադասին, որը համեմատվում էր Երևան հասած բեռների տվյալների հետ՝ պարզելու համար, թե արդյոք Նախիջևանում չեն յուրացվում հայկական բեռները: Ապրիլի կեսին Մեղրիով անցնող բեռները Երևան չհասան, եւ երկաթուղին դադարեց գործել:

Կարճ ժամանակ անց Մեղրի այցելեց ձեռավորվող բանակի նորանշանակ գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանը՝ բարձրաստիճան սպայակազմի ուղեկցությամբ: Արեւելյան սահմանի պաշտպանվածության ուսումնասիրության ժամանակ իմանալով, որ չգործող երկաթուղին սահմանագծում երբեւեկելի է, մտավախություն հայտնեց, թե զրահապատ գնացքի ներխուժումը կործանարար կարող է լինել Մեղրիի համար: Նա պնդեց, որ սահմանագծի վրա երթեւեկության խոչընդոտումը պարտադիր է: Հենց նույն պահին՝ նրանց ներկայությամբ, սահմանագծի մոտ շրջող կամրջակի ճեծանների տակ տեղադրված ամոնիտի պայթեցումով փարատվեց գեներալի մտավախությունը:

Արաս գետի վրա լողացող կամրջի գործելուն պես՝ իրանական Ջուլֆայի երկաթուղու ղեկավարը ժամանեց Մեղրի եւ ասաց, որ մեր թույլտվությամբ ուզում են Մինջևանում մնացած 250 վագոն իրանական բեռները Մեղրիով տեղափոխել Ջուլֆա: Ասաց, որ ադրբեջանական կողմը համաձայն է: Մենք, իհարկե, ասացինք, որ բեռները հազիվ թե պահ-



պանված լինեն, բայց անմիջապես ընդառաջեցինք եւ համատեղ ջանքերով վերականգնեցինք սահմանագծի պայթեցված հատվածը: Դրանից անմիջապես հետո՝ 1992թ. հունիսի սկզբին, կազմակերպվեց եռակողմ հանդիպում հայկական, իրանական եւ ադրբեջանական պատվիրակությունների մասնակցությամբ: Քննարկումը տեղի ունեցավ սահմանամերձ ուղեկալում: Ադրբեջանական պատվիրակությունը՝ գեներալ Քյազիմովի գլխավորությամբ, եկավ երկաթուղով՝ ոտքով: Մենք նրանց դիմավորեցինք սահմանագծին ու ուղեկցեցինք ուղեկալ: Դրավոր արձանագրվեց, որ բեռների տեղափոխման խոչընդոտները վերացված են, եւ որոշվեց հաջորդ օրվանից սկսել բեռների տեղափոխումը: Հանդիպման ավարտին՝ մեր վաշտի մի քանի զինվորի ուղեկցությամբ, նանապարհեցինք ադրբեջանական պատվիրակությանը, իսկ մենք՝ իրանական պատվիրակության հետ, մեքենաներով շարժվեցինք դեպի Մեղրի: Ուղեկալից հազիվ երկու հարյուր մետր էինք հեռացել՝ ադրբեջանական դիրքից սկսեցին մեզ ուժգին գնդակոծել: Այդ դիրքից մեր նանապարհի մոտ 100 մետրանոց մի հատված էր տեսանելի: Բարեբախտություն էր, որ ոչ ոք չտուժեց: Գնդակոծության պահին ադրբեջանական պատվիրակությունը դեռ սահմանագիծ չէր հասել: Ուղեկցող տղաները, սակայն, ռադիոկապով ցուցում ստացան շարունակել ուղեկցումը: Իրանական պատվիրակության ղեկավարն անմիջապես արձագանքեց. «Դուք ճիշտ էիք, ուրեմն Մինջեւանում ոչ մի բեռ էլ չի մնացել»:

Մեկ շաբաթ անց երկաթուղու կապով միացավ Նախիջեւանում տեղակայված ռուսական 75-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ Մարկելովը: Այն նույն դիվիզիայի, որը մինչեւ 1991թ. օգոստոսի 8-ը պաշտպանում էր Մեղրիի ադրբեջանաբնակ Նյուվադի գյուղի կենսագործունեությունն Ադրբեջանի կազմում: Նա խնդրեց օժանդակել Մեղրիով տեղափոխմանը այլեւս սենդամբերի դեֆիցիտ ունեցող դիվիզիայի Մինջեւանում մնացած մեկ վագոն պահածոն: Հաջորդ օրը նա իմ հյուրն էր, իսկ նրա մի քանի ենթականեր քարշակով շարունակեցին ճանապարհը դեպի Մինջեւան: Վերադարձան նախատեսվածից շատ ուշ: Քաշիշոցների էին ենթարկվել: Հազիվ էին գործը գլուխ բերել: Պատմեցին, որ, բացի իրենց պատկանող վագոնից, մնացած բոլոր վագոնները կանգնած էին բաց դռներով՝ դատարկ: Սա Մեղրիով անցած վերջին գնացքն էր:

Երկաթուղու չգործելու արդյունքում Հայաստանը հայտնվեց խոր շրջափակման մեջ: Սկսվեց էներգետիկ ճգնաժամը: Առաջիկա ձմեռը ծանր էր լինելու: Այդ ձմռանն ընդառաջ էր, որ ՆԳ նախարար **Վանո Սիրադեղյանը** ռազմիկանապետերի խորհրդակցություն հրավիրեց եւ իրեն հատուկ խորիմաստությամբ արտասանեց ընդամենը մեկ նախադասություն. «Ձեր աշխատանքի գնահատման առաջին չափանիշը լինելու է այն, որ ձեր պատասխանատվության տարածքներում ցրտից ու սովից մարդ չմահանա»...

**Լեռն Տեր-Պետրոսյանի** պաշտոնավարման շրջանում, Սյունիք հանախակի այցելող առաջատար երկրների դեսպաններն առաջին հերթին հետաքրքրվում էին, թե արդյոք պահպանվո՞ւմ է երկաթուղին: Ստանալով համոզիչ պատասխան, որ հնարավոր է Կապանից ազատագրված տարածքներով երկաթուղով երթեւեկել Մեղրի՝ բավարարված հեռանում էին:

**Ռոբերտ Քոչարյանի** պաշտոնավարման շրջանում՝ 2003 թվականից սկսած, ապամոնտաժվեց ողջ երկաթուղին՝ Կապանից մինչեւ Մեղրի:

Նյուվադիի բարդ ու դժվարանցանելի ճանապարհի այլընտրանք կիսակառույց ճանապարհը շարունակելու փոխարեն՝ թույլատրեցին մեքենաներին երթեւեկը քանդված երկաթուղու Շվանիձոր-Նյուվադի հատվածի հարթակով:

**Սերժ Սարգսյանի** պաշտոնավարման ընթացքում, նախ, Ագարակի կոմբինատի հիմնականում չգործող, ցուցադրական նպատակներով կառուցված հետադարձ ջրամատակարարման խողովակաշարը հատվածաբար անցկացվեց երկաթուղու հարթակով:

2015–2016 թթ. կառուցվեց դեռ 1996 թվականից նախագծվող՝ Մեղրի գետից ջրընդունմամբ, Արմաֆ հովտի գյուղատնտեսական նշանակության հողերի ինքնահոս ոռոգման ծրագրի ձախակողմյան ճյուղը: Սակայն, այլընտրանքի առկայության պայմաններում, Լեհվազ գյուղից մինչեւ Նյուվադի ձգվող խողովակաշարի հիմնական մասն անցկացվել է երկաթուղու առանցքով:

Վերջին ամիսներին իրականացվում է Մեղրիի մասային կետից սկսած՝ Արմաֆի ափով երկաթուղու հարթակին զուգահեռ ձգվող միջպետական ճանապարհի 7–8 կմ հատվածի անիմաստ լուսավորության մի ծրագիր: Հավանաբար՝ արտաքին պարտքի բեռն ավելացնելու նպատակով: Այս ծրագրի լարման տրանսֆորմատորները եւս տեղադրված են հենց երկաթուղու հարթակի վրա:



Հիմա կառուցվում է ինքնահոս ոռոգման վերոհիշյալ ծրագրի դեպի Ագարակ ձգվող աջակողմյան ճյուղը: Շուրջ 10 կմ երկարությամբ, մոտ 400 մմ տրամագծով խողովակաշարը ուղղակիորեն անցկացվում է երկաթուղու առանցքով:

Առաջիկայում՝ մի օր անպայման կարգավորվելու է Ղարաբաղյան հակամարտությունը: Սրան հետեւելու է այլեւս ռուսական, ադրբեջանական եւ վրացական երկաթուղիներն Իրանին ու Թուրքիային կապակցելու մենաշնորհը կորցրած հայկական երկաթուղու վերականգնումը: Որ թվարկածս կառույցները խոչընդոտելու են երկաթուղու վերականգնմանը՝ կասկածից վեր է: Ոչ ոք երկաթուղի չի շահագործի բարձր ճնշումային խողովակաշարի վրա:

Թե ինչու են այլընտրանքի առկայության պայմաններում կառուցապատումներն արվում երկաթուղու վրա՝ խոչընդոտելով երկաթուղու հետագա վերականգնումը, թող իշխանությունները բացատրեն:

Իսկ առաջատար երկրների դեսպաններ շարունակո՞ւմ են հետաքրքրվել երկաթուղով...

Հ.Գ. Երբ Հայաստանում որեւէ առիթ բաց չեն թողնում տարածաշրջանային զարկերակ հանդիսացած երկաթուղուն հերթական մահացու հարվածը հասցնելու, պաշտոնապես հայտարարվել է նրա այլընտրանքներից մեկի՝ Բաֆու–Ախալքալաք–Կարս երկաթուղին հոկտեմբերի 30-ից շահագործելու մասին: Իսկ Պակիստանը հայտարարել է, որ ցանկանում է միանալ Ադրբեջանի, Իրանի եւ Ռուսաստանի երկաթուղիները միավորող «Հյուսիս–Հարավ» տրանսպորտային միջանցքի նախագծին: Այս միջանցքի ավարտը եւս մոտ է: Ակտիվորեն կառուցվում է Ադրբեջանն Իրանին կապող վերջին՝ Աստարա–Ռեշտ հատվածը:

## ՈՂՋ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ՏՈՒԺԵԼ ՄԱՐՏԻ 1-ԻՆ
## (Հարցազրույց «Սիվիլներ» կայքին)[31]

**– «Սիվիլնեթ»-ի տաղավարում այսօր հյուրընկալել եմ Դավիթ Մաթեւոսյանին՝ ՀԱԿ-ից: Բարեւ Ձեզ, պարոն Մաթեւոսյան: Դուք հեռուստատեսություններ հաճախակի չեմ այցելում, եւ ուզում եմ շատ կարճ ներկայացնել Ձեզ. Դուք անկախությունից հետո եղել եք Մեղրիի ոստիկանապետ, ապա ընտրվել եք Ազգային ժողովի պատգամավոր 95 թվականին, հետո դարձել եք մարզպետի տեղակալ Սյունիքում, միշտ եղել եք Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, նրա կողքին եւ համաժողովրդական շարժման օրերին այն մարդկանցից էիք, որ փողոցից տուն չէր գնում, եւ մարտի մեկի առավոտյան՝ իշխանության մարմիններին դիմադրություն ցույց տալու մեղադրանքով, Դուք եւս անազատության մեջ եք հայտնվել, փաստորեն՝ քաղբանտարկյալ եք եղել մոտավորապես մեկուկես տարի: Ճիշտ էր, չէ՞, այն ամենն, ինչ ներկայացրի:**

– Այո: Մի բան կարող եմ լրացնել. նաեւ եղել եմ Տեր-Պետրոսյանի ընտրական շտաբի անդամ, դա 2007–2008 թվականների ընտրությունների ժամանակ էր:

**– Ինչպե՞ս հայտնվեցիք ազատության մեջ, ամբողջությամբ այդ պատիժը կրեցի՞ք... չգիտեմ ինչ պատիժ էր:**

– Ազատությա՞ն, թե անազատության:

[31] *«Սիվիլնեթ», 12.07.2018թ.:*



**– Չէ, ազատության մեջ, անազատությունից հետո. ամբողջությամբ Ձեր պատիժը կրեցի՞ք, «պատիժ» բառը, իհարկե, կարող եմ նաեւ չակերտների մեջ դնել, ամնիստիայո՞վ դուրս եկաք, ինչպե՞ս դուրս եկաք:**

– Մեր անազատության մեջ հայտնվելուց հետո Տեր-Պետրոսյանը եւ նրա շուրջը մնացած մյուս գործիչները պայքարում էին մեր ազատության համար, ի հենուկս իշխանությունների ստահոդ տեղեկությունների՝ փորձում էին ներկայացնել իրականությունը, ինչման որ դա հնարավոր էր, եւ ահա այդ պայքարի արդյունքում ԵԽԽԿ-ի բանաձեւեր ընդունվեցին, մարդու իրավունքների հանձնակատարն այցելեց Հայաստան, եւ ենշումների ներքո համաներում անցկացվեց, այդ համաներումով դուրս եկանք գրեթե բոլորս, շատ քչերը մնացին՝ հինգից տասը տարով ազատազրկվածները: Ես այդ առաջին համաներումով դուրս եկողների մեջ էի:

**– Այդ օրերին Դուք, բնականաբար, վստահ էիք, որ իշխանությունները Ձեզ հալածում են, Դուք անմեղ եք, եւ հակառակը՝ իշխանություններն են ապօրինությունների դիմել, Մարտի մեկի ոճրագործության դիմել՝ ինչպես Դուք եւ Ձեր համակիրներն են հաճախ ներկայացնում: Այո՞, հավատ կար, չէ՞, որ Դուք անմեղ եք, եւ իշխանություններն են մեղավոր:**

– Ոչ թե հավատ կար, այլ համոզմունք կար. մեզանից յուրաքանչյուրը, հատկապես բանտային կյանքի մի շրջանում, երբ դատավճիռը մտնում է իրավական ուժի մեջ... այսպես ասեմ՝ երբ բոլորս հայտնվում ենք մի տեղում, ազատորեն շփվում ենք իրար հետ, քննարկում ենք, բնականաբար, բոլորիս գլխով անցածը, եւ պարզ էր դառնում, որ ակնհայտորեն շինծու քրեական հետապնդումով բոլորին հասցրել էին բանտ, ընդ որում՝ այդ գործընթացը մարտի մեկին չէր սկսվել, այդ գործընթացը, եթե չեմ սխալվում, սկսվել էր դեռ փետրվարի 23-ին...

**– Դուք նկատի ունեք այդ հայտնի հանդիպո՞ւմը՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ:**

– Չէ, նկատի ունեմ, որ մեր տղաների մի մասը մինչեւ մարտի մեկն էր ազատազրկվել շինծու մեղադրանքներով: Որպեսզի մերկապարանոց չինչի. ասենք՝ Հուսիկ Բաղդասարյանն ազատազրկվել էր, որովհետեւ տանը հայտնաբերել էին որսորդական խանութից ձեռք բերած մեկ օրինական հրացան՝ իր փամփուշտներով, բայց համարել են, որ փամփուշտներն ապօրինի զինամթերք են. զենքը չէին կարող, զենքը վկայական ունի:

Անգամ պաշտպանի միջնորդությամբ արտադրող գործարանի կողմից տրված տեղեկանքը, որ այս գործի փամփուշտները նախատեսված են այս մակնիշի որսորդական հրացանից կրակելու համար, հիմք չէր ծառայել դատարանում, եւ Հուսիկը ազատազրկվել էր երեք տարի ժամանակով: Բոլորը, բոլորը շինծու մեղադրանքներով էին ազատազրկված:

**– Հասկանալի է երբ Դոմ լսեցիք, որ արդեն վարչապետ դարձած, մինչ այդ էլ, իհարկե, Նիկոլ Փաշինյանն Ազգային ժողովում նախաձեռնել էր Մարտի մեկի հետ կապված տարբեր գործընթացներ, եւ երբ դարձավ վարչապետ (ինչո՞ւ եմ ասում, որովհետեւ Նիկոլ Փաշինյանն էլ էր նույն այդ ձեր խմբի մեջ եղել, նույնպես անազատության մեջ էր հայտնվել, իհարկե՝ այլ մեղադրանքով), երբ իմացաք, որ նա Մարտի մեկի նոր հետաքննություն է սկսել, ի՞նչ մտածեցիք, ասացիք՞ եկել է ժամանակը, հա՞, հիմա թող իրենք հասկանան, թե ինչ է նշանակում այս ամեն ինչը: Ի՞նչ մտածեցիք Դոմ:**

– Չէ, նախ՝ Նիկոլի վարչապետ դառնալու պահին համոզված էի, որ նրա համար կոռուպցիայի դեմ պայքարը եւ Մարտի մեկի բացահայտումը լինելու են քաղաքական առաջնահերթություն, եւ շատ ուրախ եմ, որ ամեն դեպքում եկավ այդ ժամանակաշրջանը, որովհետեւ Մարտի մեկի բացահայտումը նոր Մարտի մեկի կանխարգելում է, հասկանում եմ, առանց դրա՝ այս երկիրը ժողովրդավարական չի դառնա: Նաեւ համոզված եմ, որ Նիկոլն ամեն ինչ կանի՝ Հայաստանում ազատ ընտրություններով իշխանություն ձեւավորելու համար:

**– Ճիշտ է, ճիշտ սկսեց Նիկոլ Փաշինյանը, «Նիկոլ Փաշինյանը» չասեմ...**

– Վարչապետը:

**– Հա: Ի վերջո, նա, այսպես ասեմ, քաղաքական խնդիր է դրել, նույնիսկ տարբեր առիթներով ասել է, որ իր կյանքի խնդիրն է Մարտի մեկի բացահայտումը: Այս գործողությունը, որ սկսվեց՝ Մարտի մեկի հետ կապված նոր հետաքննությունը, ճիշտ էր սկսել Միքայել Հարությունյանից, որը տվել էր հայտնի 0038 հրամանը: Ճի՞շտ էր Ռոբերտ Քոչարյանից սկսելը, ճի՞շտ էր Խաչատուրովից սկսելը: Ինչո՞ւ եմ այս անուններն ասում. որպեսզի մեզ դիտողները նաեւ հասկանան, որ այս շղթայի մեջ չկա շահառուի անունը, որը Մարտի մեկից ամենաշատն է օգտվել, նա**



**ստացավ տասը տարվա իշխանություն... Այո, նաեւ Սերժ Սարգսյանը. սա նորմա՞լ է, թե՞ նորմալ չի:**

– Ամեն դեպքում մի բան ակնհայտ է, որ Հատուկ քննչական ծառայությունում ձեւավորված Մարտի մեկի նոր քննչական խումբն ակնհայտորեն ցուցաբերում է մասնագիտական սկզբունքայնություն, եւ ընդամենն ուսումնասիրելով այն նյութերը, որոնցով ժամանակին դատապարտվել ենք մենք, եւ ուրիշ որակում են կպցրել, տեսնում եմ, որ այդ գործի մեջ բազմակողմայնությունը՝ լրիվությունը, եւ օբյեկտիվությունը բացակայում են, ընդհակառակը՝ դա սուբյեկտիվ, միակողմանի, քաղաքական պատվերով իրականացրած նախաքննություն էր, որի զուտ մասնագիտական պատասխանատուներին պետք է բվարկեմ՝ Աղվան Հովսեփյան, Անդրանիկ Միրզոյան եւ Վահագն Հարությունյան: Կարող եմ ասել, որ անձամբ ես քննության ընթացքում նկատել եմ, որ թե հետաքննության մարմինը, թե նախաքննության մարմնի ներկայացուցիչ քննիչը փորձել են օգտակար լինել անձերի՝ այդ գործերում պահելով նյութեր, որոնք կարող էին ուղղակի վերացնել: Հիմա այդ նույն իրական գործերը, պահպանված փաստերն ու փաստաթղթերը բավական են՝ այդ իմ ասած եզրահանգմանը գալու համար: Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանին եւ Ռոբերտ Քոչարյանին, ես չեմ ուզում նրանց առանձնացնել, դրա համար այսպես եմ ասում...

**– Ինչո՞ւ չեմ ուզում առանձնացնել: Որովհետեւ համարում եք...**

– Որովհետեւ նրանք միասին են գործել. եթե Ռոբերտ Քոչարյանը, իրավաբանորեն, ներքին զորքերի, ոստիկանության, բանակի շարժողն է՝ այսպես ասած, ապա Սերժ Սարգսյանը նրանց հետ առնչվում է անձնական ազդեցությամբ: Չմոռանանք, որ Սերժ Սարգսյանը եղել է ազգային անվտանգության (ազգային անվտանգությունը մոռացա նշել) ներքին գործերի, հետեւաբար նաեւ ներքին զորքերի, նաեւ բանակի ղեկավար եւ ուներ անձնական ազդեցություն, պլյուս՝ այստեղ մի օղակ կա, որ Մարտի մեկին առավել վատ դերակատարում է ունեցել, ես ուղղակի ասում եմ՝ առավել վատ, ամենավատ դերակատարումն է ունեցել կրիմինալը: Ա՛յ սա ուղղակի Սերժ Սարգսյանի տակ է եղել, բայց այնքանով, որքանով քրեական գործում, ասենք, երեւում է 0038 հրամանը, որը ստորագրել է Հարությունյանը՝ այն ժամանակվա պաշտպանու-

թյան նախարարը, բնականաբար, ֆենչական ծառայությունը պետք է հրավիրի Հարությունյանին, որովհետև խաչատուրովը կայազորի պետն էր, նրան էլ պետք է հրավիրի: Ուզում եմ ասել՝ վաղաժամ ենթադրություններ անել, որ տարանջատում կա Սարգսյանի եւ Քոչարյանի միջեւ, ճիշտ չեմ համարում, որովհետև երեւում է, որ մասնագիտական սկզբունքայնությունն ամեն դեպքում պահպանում են: Դիտեմ, հիմա տասը տարվա մոռացության բան կա Մարտի մեկի վրա...

– **Չկա մոռացության բան, Մարտի մեկը, կարծում եմ...**

– Դրվագներ, փաստեր... Ես հենց հիմա ուզում եմ Ձեր եթերից Հատուկ ֆենչական ծառայությանը երկու հուշում անել:

– **Արեմ:**

– Անեմ: Մեկը վերաբերում է Սահմանադրական դատարանին: Զմոռանամ, որ կան վիկիլիֆսյան փաստաթղթեր, որտեղ, ասենք, աշխարհի ամենամեծ ու հզոր պետության պաշտոնական թղթավարության մեջ երեւում է, որ Սահմանադրական դատարանի անդամներից մեկը հանդիպել է դիվանագիտական...

– **Ընդ որում, ի՞նքն է խնդրել այդ հանդիպումը:**

– Ի՞նքն է խնդրել այդ հանդիպումը:

– **Այո, Վալերի Պողոսյանը:**

– Վալերի Պողոսյանը հանդիպել է եւ խոսել է այն ենթամների մասին...

– **Ամերիկացի դիվանագետի հետ:**

– Այո... որոնք կիրառվում են Սահմանադրական դատարանի անդամների նկատմամբ, եւ եթե դրանք չլինեին, ընդհանրապես որեւէ դատարան ներքին համոզմունքով է վճիռ կայացնում, եթե չլինեին սահմանադրական ենթամները. Սահմանադրական դատարանը հակված էր ընտրությունների առումով նման որոշում չկայացնել, չապասարկել իշխանության շահը, այսպես ասեմ...

– **Այո: Ընդ որում, այնտեղ նշվում էր մի մարդու անուն, որն էլ զանգել սպառնացել է՝ Արմեն Գեւորգյանը:**

– Շատ լավ: Հետեւաբար, ես հիշեցնում եմ մի հատված Հատուկ ֆենչական ծառայության Մարտի մեկի նոր ձեւավորված խմբին, մինչեւ



Քոչարյանը կբարեհաճի ժամանել, կամ՝ չի ժամանի, մինչեւ Սերժ Սարգսյանին կհրավիրեն, հրավիրել ֆենչության նախ Վալերի Պողոսյանին, Սահմանադրական դատարանի մյուս անդամներին, որոնց մասին կհուշի Վալերի Պողոսյանը, Սահմանադրական դատարանի նախագահին՝ վերջին հաշվով, որն անընդհատ՝ ծնված օրվանից ինչ-որ պոստերի է մնում, եւ նաեւ Արմեն Գեւորգյանին: Ո՞վ է տվել այս հրահանգը, ո՞վ է տվել. ես հետեւում եմ ձեր հաղորդումներին, նայում եմ, որ, ասենք՝ Հարությունյանն ինքնուրույն հրաման է ստորագրել: Ինքն իրավազո՞ր էր ինքնուրույն հրաման ստորագրելու: Հասկանո՞ւմ եք, այդ գործընթացին մասնակցել են այդպիսի հինգ ուղղություններ, ես մեկն էլ ավելացրի՝ կրիմինալի մասին է խոսքը, այդ հինգը միասին որոշեցին, որ պետք է գնան հենց այնպես առաջացած «մասսայական անկարգությունն» ճնշեն: Եւ մի բան. ուրեմն, Մարտի մեկի մասին խոսելիս, չգիտես ինչու, ստատրը տրվում է Քոչարյանի ներկայացրած այն դրվագով, որ ավտոբուսի ճնշեւից դուրս էին գալիս եւ կրակում ժողովրդի վրա: Մարտի մեկը սկսվում է ընտրությունների օրը նշանակելու օրվանից, այդ անհավասար պայմանները, որ ստեղծված էին նախագահի թեկնածուների համար, այդ բանակի միավորումները, որ մինչ այդ հրամանն արդեն խաղամում էին, հասկանո՞ւմ եք...

– **Դուք տեսե՞լ եք դա:**

– Ես հստակ հիմա այս եթերից ասում եմ, որ ընտրությունների նախորդ օրը մի ստորաբաժանում տեղակայվել է կրկեսում, որի մասին նույն Միխայել Հարությունյանը կարող էր եւ չիմանալ, Սերժ Սարգսյանն իր ազդեցությամբ կարո՞ղ էր դա անել: Հասկանո՞ւմ եք՞ ինչ եմ ասում:

– **Ճիշտ է: Դուք լսե՞լ եք: Որովհետեւ ես սա լսել եմ Արցախում, ընդ որում լսել եմ Արցախի հրամանատարներից մեկից, որն ասում էր, թե ինքն ամաչում է, որ Մարտի մեկին Արցախից են տարել ե՛ւ զորք, ե՛ւ նաեւ աշխարհազոր, այսինքն՝ երկու տեսակ, եւ նույնիսկ նշվում են հրամանատարների անունները:**

– Ես չգիտեմ, ես Արցախից տեղեկություն չունեմ. խոսքը Հայաստանում դիսլոկացված զորամիավորումների մի խմբի անդամների մասին է, որոնք, հավանաբար, անձնական կապեր եւ շահագրգռվածություն ունեին, այսպես ասեմ, իշխանությունը պահպանելու: Ուրեմն, Մարտի մեկը նաեւ շարունակվում է զանգվածային հրապարակային միջոցառումների մա-

սին օրենքի խախտումով, հասկանում եմ: Այն, ինչ արել է Կոնգրեսն այդ ժամանակ (դեռ Կոնգրես չէր՝ Տեր-Պետրոսյանի թիմը), կետ առ կետ համապատասխանել է տվյալ ժամանակ գործող զանգվածային հրապարակային միջոցառումների մասին օրենքին, որը շատ ավելի լայն հնարավորություններ էր ստեղծում մարդու ազատության եւ իրավունքների համար, եւ այդ օրենքն էլ փոխեցին հետագայում: Ուրեմն, մինչեւ Մարտի մեկը կալանավորումները, ես արդեն Հուսիկի մասին ասացի, լուսահոգի Սմբատ Այվազյանը, Աշոտը Ջաքարյան, Հովիկը Հարությունյան, Ջհանգիրյան Գագիկը, այդ բոլորը նախօրոք են կալանավորվել, այսինքն՝ վախ սփռելու համար: Հետո փորձեցին փետրվարի 26-ին կազմակերպել հանրահավաք, թե՝ տեսեք-տեսեք, մեր շուրջն ավելի շատ ժողովուրդ է հավաքվում, քան՝ ձեր, այսինքն՝ մենք ենք կրել այդ ընտրություններն իրականում: Հանրապետության հրապարակի հանրահավաքը փլվեց, եւ բոլորը եկան միացան համաժողովրդական շարժմանը, այստեղ էլ ֆիասկո ապրեցին, որից հետո փետրվարի 29-ին մենք Սահմանադրական դատարանի նյութերը, բողոքը մուտքագրեցինք Սահմանադրական դատարան, նույն օրը Քոչարյան Ռոբերտը հայտարարեց... մի քիչ էլ իրոնիա կար դրա մեջ, հիշում եմ...

**– Ուսանողների հետ էր կարծեմ հանդիպում:**

– Ուսանողների հետ հանդիպման ժամանակ, Ղարաբաղյան շարժման հսկայական ձեռքբերումը, որ սերունդներն անպայման կգնահատեն, անկախությունից սկսած, Ղարաբաղի ազատագրումից սկսած, նախկին Թատերական հրապարակին պարգեւել էր նոր անուն՝ Ազատության հրապարակ, իսկ Ռոբերտ Քոչարյանը հատուկ մի իրոնիայով ասաց, որ Թատերական հրապարակի թատերական ներկայացումը կամ պետք է հիմա մարի, կամ պետք է ոստիկանական միջամտում ցուցաբերեն: Եւ ցուցաբերեց ոստիկանական միջամտություն. դեռ լույսը չբացված՝ հաջորդ օրը, որովհետեւ Սահմանադրական դատարան նյութերի մուտք անելով՝ ակնհայտ էր այլեւս, որ այս մարդիկ ամեն ինչ անում են զանգվածային հրապարակավ միջոցառումների օրենքի բոլոր դրույթները պահպանելով եւ սահմանադրական հանապարհով, մենք որեւէ ուրիշ խնդիր չունեինք, մենք Ազատության հրապարակում ոչ մեկի ազատ տեղաշարժի իրավունքը չսահմանափակելով, սպասում էինք մինչեւ Սահմա-



նադրական դատարանի նիստը: Է՛ս էր: Եւ Մարտի մեկ անելով, հատուկ դրություն մտցնելով, տեղեկատվության նախադեպը չունեցող սահմանափակումներ մտցնելով՝ անցկացվեց Սահմանադրական դատարանի նիստ, որի մի անդամ պատմել էր, թե ինչպես կայացվեց այդ վճիռը: Էս է:

**– Շատերն են խոսում, գուցե ոչ շատ բարձրաձայն, բայց երեկ, օրինակ, իմ հյուրն Արմեն Մարտիրոսյանն էր «Ժառանգությունից», եւ, ի դեպ, հիշեցնեմ, որ «Ժառանգությունը» այդ օրերին շատ կարեւոր գործ էր կատարում, միացել էր համաժողովրդական շարժմանը, եւ եթե դուք չունեիք Ազգային ժողովում մանդատներ, իրենք ունեին, եւ այդ իմաստով իրենց դերակատարությունը ես շատ եմ գնահատել, հատկապես նրանց, ովքեր այդ օրերին Հրապարակից տուն չէին գնում:**

– Մենք էլ ենք գնահատում, նույն Արմենին ենք գնահատում, որը մարմնական վնասվածք ստացավ:

**– Այո, ճիշտ է, եւ Արմեն Մարտիրոսյանն ասաց՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին էլ է պետք կանչել հարցազրույցի: Ի՞նչ եք կարծում, Լեւոն Տեր-Պետրոսյանը կարեւոր բաներ ունի՞ ասելու, թե՞ չունի:**

– Նախ, մի բացթողում ունեցա եւ ուզում եմ հիշեցնել, որ Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների նախնական արդյունքները հայտարարելուց հետո՝ այն ժամանակվա նախագահի երկու թեկնածուներից մեկի ներկայացուցիչ Բիշարյանը, արդյունքներով երրորդ տեղը գրաղեցնող կուսակցության պատասխանատուն, Ազատության հրապարակում հայտարարեց ընտրությունների կեղծված լինելու մասին, եւ մյուս թեկնածուն՝ դաշնակցության թեկնածու Վահան Հովհաննիսյանը, վայր դրեց Ազգային ժողովի փոխնախագահի լիազորությունները եւ նույնպես հայտարարեց ընտրությունների կեղծված լինելու մասին, սա էլ այսպես. կապ չունի, թե հետո ինչ տեղի ունեցավ: Հիմա՝ Տեր-Պետրոսյանի մասին. նախ՝ առաջին իսկ հնարավորություն ընձեռելուց հետո, քիչ առաջ հիշատակեցինք, որ, բացի պաշտոնական տեսակետից, որեւէ բան հաղորդելու իրավունք չունեինք հատուկ դրության պայմաններում, առաջին իսկ հնարավորության դեպքում Տեր-Պետրոսյանը հարցազրույց կազմակերպեց, ասուլիս հրավիրեց...

**– Իրենց տանը:**

– Իրենց տանը՝ այո, եւ իրեն հայտնի մանրամասներ պատմեց՝ ինչ որ տեսել էր: Նույն բանը ես եմ տեսել, եւ իրարից անկախ՝ կարող ենք նույն բանը պատմել, ինչ որ տեսել ենք: Որեւէ ոտիք Տեր-Պետրոսյանը բաց չի թողել, հատկապես Մարտի մեկի հիշատակի օրերին հրապարակային ինֆորմացիա է տրամադրել եւ ասել իր տեսակետն ու վերլուծությունները: Ես կարծում եմ, Հատուկ քննչական ծառայության խնդիրն է որեւէ մեկի հրավիրելը, բայց եթե անհրաժեշտություն են տեսնում Տեր-Պետրոսյանին հրավիրելու, ես վայրկյան անգամ չեմ կասկածում, որ Տեր-Պետրոսյանը՝ առանց վարանելու, նշված օրը նշված տեղը կներկայանա եւ ցուցմունք կտա ըստ անհրաժեշտության:

**– Եւ ամենավերջում. Մարտի մեկն ասոցացվում է մարդկային կյանքի կորուստների, բռնության, կեղծիքի, չբացված գաղտնաց, մի խոսքով՝ Մարտի մեկը մեր օրացույցում սովորական օր չէ, ի՞նչ պետք է անել, որ այդ օրը փոխվի մեր հիշողության մեջ, ի՞նչ պետք է անել:**

– Նախ՝ պետք է բացահայտվի իրականությունը, ամբողջ իրականությունը ժողովուրդը պետք է իմանա: Ամբողջ ժողովուրդն է տուժել Մարտի մեկին, մեր զարգացման ընթացքն է տուժել Մարտի մեկին, բայց ամեն դեպքում կան ամենաշատ տուժած ընտանիքներ, որոնք հարազատ են կորցրել. կարծում եմ, օր առաջ պետք է նրանց փոխհատուցման խնդիրը լուծվի:

**– Մեկ անգամ Տեր-Պետրոսյանը հայտարարեց մեկ միլիոն դոլար տալու մասին:**

– Այո... Դե, չափերից չխոսենք, բայց ամեն դեպքում՝ որպեսզի նրանք գնահատված զգան իրենց, որպեսզի նրանց երեխաները հասկանան, որ իրենց հայրերն իրենց ապագայի համար պայքարելիս կյանք են կորցրել, որի արդյունքում իրենք ապրել են շատ ավելի վատ պայմաններում, քան կապրեին իրենց ծնողների կենդանության ժամանակ... Դա առաջնահերթություններից մեկն է:

Հարցազրույցը՝ Թաթուլ Հակոբյանի
(վերծանված է տեսանյութից)

## ԹԱՎԱՆ ՉԻ ԵՂԵԼ, ԵԹԵ ԹԱՎԱՆԱԾ ԼԻՆԵԻ, ԻՆՉ ԿԿԱԽԵԻՆ
(Հարցազրույց 24NEWS կայքին)[32]

*«Դա անհեթեթություն է ուղղակի»,*– 90-ականների սկզբին Մեղրիում վագոնների թալանի վերաբերյալ մեղադրանքներին 24News-ի հետ զրույցում այսպես արձագանքեց ազատամարտիկ, Սյունիքի նախկին փոխմարզպետ, 2017 թվականին Կոնգրես-ՀԺԿ դաշինքի ցուցակով պատգամավորության թեկնածու առաջադրված Դավիթ Մաթեւոսյանը: Նա 1991 թվականի ապրիլին Մեղրիի ոստիկանապետի պաշտոնն էր զբաղեցնում: *«Իմ կարեւորագույն գործառույթներից մեկը երկաթուղու նկատմամբ վերահսկողության իրականացումն էր: Երկաթուղին մեզ պետք էր օգուտքի պես: Ես իմ աշխատաժամանակի մի մասը հատկացնում էի երկաթուղու անվտանգության ապահովմանը: Մենք ուղղակի փայփայում էինք այդ երկաթուղին, որովհետեւ դրանով օրական անցնում էր 20-ից ավելի շարժակազմ, որոնց 80 տոկոսը գալիս էր Հայաստան: Երկաթուղին Մեղրիով անցնում էր ընդամենը 48 կմ երկարությամբ հատվածով: Այն Ագրբեջանից մտնում էր Մեղրի, Մեղրիից Նախիջեւան եւ նոր գալիս Երեւան: 1992 թվականի ձմռան ընթացքում ես ամեն օր տուն եմ եկել ոչ շուտ, քան գիշերը 24:00-ին: Որպես կանոն, ես այդ ժամին եղել եմ երկաթուղում, որտեղ ինձ սպասում էր լուսահոգի կայարանապետ Ժորա Հայրապետյանը: Նա ինձ տալիս էր թղթի վրա կատարած գրառումը՝ Մեղրիով անցած եւ Հայաստան հասցեագրված վագոնների վերաբերյալ թվաքանակը եւ առանձնացված մագութը»,*– պատմեց Մաթեւոսյանը: Ամեն առավոտ նա այդ տվյալների մասին զեկուցել է այն ժամանակ նախագահի խորհրդական Աշոտ Մանուչարյանին:

[32] *24news.am/news/29953, 29.03.2019թ.:*

*«Բալանսը միշտ պահպանված էր. քանի վագոն անցնում էր Մեղրիով, այդքան հասնում էր Երեւան: Հետագայում՝ 1992-ի մարտի 24-ին Հեյդար Ալիեւը թուրքական կողմի հետ տնտեսական համագործակցության վերաբերյալ հուշագիր ստորագրեց, որով բացվեցին տրանսպորտային կոմունիկացիաները: Եւ Թուրքիան Նախիջեւանին 100 մլն դոլար վարկ տրամադրեց: Նախիջեւանը երկաթուղուն այլընտրանք ունեցավ, որի պարագայում Ադրբեջանում քաղաքական որոշում կայացրին երկաթուղու գործունեությունը դադարեցնել եւ Հայաստանը մոցնել կատարյալ շրջափակման մեջ: Ապրիլի սկզբից մենք նկատեցինք, որ Մեղրիով անցնող բեռների մի մասը Երեւան չէր հասնում: Սկզբում քիչ էին, հետո սկսեցին շատանալ, իսկ հետո մենք նկատեցինք, որ շարժակազմերը, որպես կանոն, բացակայում էին. տարերայնորեն անցնում էր շոգեքարշը՝ հետեւի մասում կապած 5-6 վագոն, որոնց վրա ադրբեջանցիների անուններ էին գրված: Այսինքն, Նախիջեւանի ադրբեջանցիները գնում էին՝ ինչ-որ մարդկանց վճարում եւ գրա դիմաց ստանում մի վագոն հայկական բեռ»,–* նշում է նա: Այդ ժամանակ Աշոտ Մանուչարյանը Մաթեւոսյանին ասում է, որ եթե այդկերպ շարունակվի՝ Նախիջեւանն ամբողջությամբ կլցվի հայկական բեռներով, եւ ավելի լավ է՝ փակեն երկաթուղին: Այդ հրահանգը կատարելու շրջանակներում Դավիթ Մաթեւոսյանը բաց է թողել 2 շոգեքարշ՝ կցված փոքր քանակությամբ վագոններով:

*«Եկավ հերթական մի շարժակազմ՝ մոտ 20 վագոնով, ես ճանապարհեցի՝ հրահանգելով այլեւս չանցնել այստեղով, որովհետեւ թույլ չենք տալիս, վերջ: Հետագայում շրջխորհրդի գործկոմի նախագահ ենք Անդրեասյանը մեկնել է Երեւան, գնացել կառավարություն, որտեղ օպերատիվ շտաբի նիստ է տեղի ունեցել՝ այդ բեռների ճակատագիրը որոշելու համար: Դիզվառելիքը եւ բենզինն ամբողջությամբ հատկացվել են լեռնահումքային արդյունաբերությամբ զբաղվող ձեռնարկություններին: Օպերատիվ շտաբի որոշմամբ՝ բեռները վերաբաշխվեցին, հիմնականում թողնվեցին Սյունիքին: Ես էլ շարշարվել եմ, անընդհատ հսկողություն եմ իրականացրել, մինչեւ որ բեռները կտանեին»,–* հիշում է Մաթեւոսյանը: Նա պատմեց նաեւ, որ մի անանուն նամակի հիման վրա, նախ, Մեղրի է եկել նախագահի վերահսկողության ծառայության պետ Կարապետ Ռուբինյանը: Նամակ է եղել, ըստ որի՝ Մեղրիի վագոններ թալանում են: Ռուբինյանը տեսել, համոզվել է, որ նման բան չկա եւ ետ է գնացել:



*«Հետո եկել էին դատախազությունից երկու հոգի, նրանցից մեկն էլ Սոկրատ Հովսեփյանն էր, որը հիմա ասում է, թե Մեղրիում վագոնները թալանվել են: Այն ժամանակ ես ընդհանրապես հրաժարվել եմ նրան որեւէ բան ասելուց, որովհետեւ անհեթեթություն եմ համարել: Այն ժամանակ պետական մարմիններում կային բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք չէին գիտակցում, թե ինչ վիճակում է գտնվում անկախացումը նոր սկսած Հայաստանը, եւ սպասարկում էին Սովետական Միության շահը: Մինչեւ հիմա նրանք մնացել են այնտեղ. նրանց «գնացքը» գնացել է, նրանք մնացել են Սովետական Միության կայարանում»,–* պատկերավոր շեշտում է Մաթեւոսյանը:

Նա ընդգծում է նաեւ՝ իրեն այս կամ այն հարցում մեղադրելու շատ փորձեր են եղել. *«Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման ամբողջ ընթացքում անընդհատ ուսումնասիրել են, որ ինչ-որ բան գտնեն ինձ վրա, որպեսզի տանեն, փակեն: Ինձ բազմաթիվ անգամ հրավիրել են Գլխավոր դատախազություն, որեւէ բան չեն գտել: Եթե ես մի վագոն թալանած լինեի՝ ինձ կտանեին, կկախեին: Բայց իհարկե, ոչինչ չեն գտել, չեղած բանն ինչպե՞ս կարող էին գտնել»,–* հարց է ուղղում Մաթեւոսյանը: Ընդհանրապես նա կարծում է, որ եթե վագոնների թալանի մասին որեւէ մեկը խոսում է, ավելի լավ է խոսեն ընդհանուր առմամբ երկաթուղու թալանի մասին:

Հիշեցնենք, որ օրերս Արարատի մարզի Այգեստան համայնքի ղեկավար Սոկրատ Հովսեփյանը նշել էր, թե 90-ականների սկզբին Մեղրիում պաշտոնյաները վագոններ էին գողանում: Ինքն այդ ժամանակ Գլխավոր դատախազության ընդհանուր հսկողության բաժնի դատախազի պաշտոնն է զբաղեցրել: Հովսեփյանը մեղադրում էր, մասնավորապես, ներկայում ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնող Անդրանիկ Քոչարյանին: Այս առնչությամբ Մաթեւոսյանը մեզ հետ զրույցում շեշտեց. *«Անդրանիկ Քոչարյանն այդ ժամանակահատվածում պաշտպանության փոխնախարարի պաշտոնն էր զբաղեցնում եւ, իր պաշտոնից ելնելով, կարող էր որեւէ առնչություն ունենալ Մեղրիի հետ: Իսկ թալան չի եղել, որին այս կամ այն կերպ առնչված լիներ Անդրանիկ Քոչարյանը»:*

Դավիթ Մաթեւոսյանի խոսքով՝ *«2002–2004 թթ. ընթացքում՝ Ռոբերտ Քոչարյանի իշխանության տարիներին, Մեղրիի ողջ հատվածում երկաթուղին քանդեցին եւ վերացրին: Ավելի լավ է՝ մարդիկ դրա մասին խոսեն...»:*

## ԻՄԱՍՏՈՒՆ ԳՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹՆՋՈՒԿԸ[33]

ես իրավաբան չեմ: Բայց գիտեմ, որ իրավաբանության հիմքն ու, հետևաբար, արդարադատության շարժիչ ուժը տրամաբանությունն է ու բարոյականությունը:

Վերջերս՝ մի խորհրդաժողովի ժամանակ, նախկին արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանն իր կլույթը սկսեց հետևյալ ձևակերպումով. «Շատ հազվադեպ է, որ Սահմանադրությունը չի պահանջում մեկնաբանություն...»:

Մի հողվածով ես նրան անվանել եմ անպարար: Հիմքում ընկած էր հետևյալ իրողությունը: 2005թ. Սահմանադրության փոփոխության հանրաքվեի ժամանակ, գործող նախագահ, տխրահռչակ Ռոբերտ Քոչարյանը՝ տեղամասային հանձնաժողովի անդամների, ընտրողների ու լրագրողների ներկայությամբ, կատարեց բաց քվեարկություն:

Դավիթ Հարությունյանը մեկնաբանեց, որ ընտրական օրենսգրքի պահանջ հանդիսացող «քվեարկության փակ գաղտնիությունը» ոչ թե պարտականություն է, այլ իրավունք: Նա նախաձեռնեց օրենսգրքի փոփոխություն ու ավելացրեց հետևյալ ձևակերպումը. «Քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն»: Ստացվեց, որ մինչև այս փոփոխությունը կատարված բաց քվեարկությունն ընտրախախտում չէր ու միայն փոփոխությունից հետո դարձավ ընտրախախտում: Հնարամիտ Դավիթ Հարությունյանը գտավ մի մեկնաբանություն, որով սրբագրեց Ռոբերտ Քոչարյանի հերթական ծանծաղամտությունը: Անպարարություն չէ: Հիմա նա նույն բանն է անում: Նայիր կլույթի շարունակությունը ու կհամոզվես ինքդ:

Սահմանադրությունը կարող է մեկնաբանվել, եթե նման լիազորություն տալիս է հենց սահմանադրությունը: Մինչդեռ Սահմանադրական դատարանն անգամ օժտված չէ նման լիազորությամբ: Որովհետև մեկնաբանելի սահմանադրության դեպքում Սահմանադրական դատարանի որոշումներն ու եզրակացությունները պետք է լինեն վիճարկելի, այլապես սահմանադրական արդարադատությունն անկատար ու խոցելի կլինի: Մինչդեռ Սահմանադրության հոդված 170-ի ուժով այդ որոշումներն ու եզրակացությունները վերջնական են:

Հետևաբար, նման լիազորությամբ Սահմանադրական դատարանի դեպքում Սահմանադրության բոլոր դրույթները պետք է ձևակերպված լինեին այնքան հստակ, որ մեկնաբանության տեղ չթողնեին: Մեկնաբանելի սահմանադրության դեպքում՝ Սահմանադրական դատարանը կդառնա ավելորդ կառույց, քանի որ այդպիսի կառույց գոյություն ունի, դա Վճռաբեկ դատարանն է:

Գործող Սահմանադրությունն այնքան խնդրահարույց է, որ նրա ուղղը հիմա էլ չոքել է հենց Սահմանադրական դատարանում:

Սահմանադրության նախագծի քննարկումների ժամանակ՝ դրա հեղինակներն ու գովազդողները հասել էին խնձորեկ գյուղ: Գյուղի իմաստուններից մեկը մոտավորապես այսպիսի մի միտք արտահայտեց, թե՝ մենք օգուտ չունենք Սահմանադրությունը փոխելուց, դուք ուզում եք փոխել ձեզ համար: Գովազդողները հակադարձեցին գյուղացուն, ամփոփեց Սահմանադրության հայրերից Հրայր Թովմասյանը հետևյալ պատկերավոր պատմությամբ: Ասաց՝ պատկերացրեք, որ մեկը համ տրակտորն է վարում, համ վառելիքն է լցնում, համ կատարած աշխատանքն է գնահատում, ու նրան ոչ ոք չի վերահսկում: Այս վիճակը նման է հին Սահմանադրությանը: Մեկ այլ դեպքում, երբ մեկը տրակտորն է վարում, մյուսը վառելիքն է հաշվառում, իսկ երրորդը կատարված աշխատանքի ծավալն ու որակն է գնահատում՝ համապատասխանում է նոր Սահմանադրությանը: Այսինքն՝ հին Սահմանադրությունը վատն է, իսկ նորը՝ կատարյալ:

Այս պարզաբանումն այնպես ազդեց խնձորեսկցիների վրա, որ, գյուղովի առնամարելով իրենց համագյուղացի իմաստունի կարծիքը, ցու-

[33] *newsline.am, 09.07.2019թ.:*

ցակային թվի 98 տոկոսով մասնակցեցին քվեարկությանը եւ միաձայն «այո» ասացին փոփոխությանը:

Իմաստուն գյուղացին դեռ այն ժամանակ էր գլխի ընկել, որ նրանք Սահմանադրության հեղինակները, այնպես են ձևել Սահմանադրության անցումային դրույթների ժամանակացույցը, որ Հրայր Թովմասյանը հին Սահմանադրության ուժով կարգվի Սահմանադրական դատարանի նախագահ եւ վեց տարվա փոխարեն պաշտոնավարի մինչեւ 65 տարին լրանալը կամ 2035 թվականը:

Այսինքն՝ ունենալով բոլոր հնարավորությունները, Սահմանադրական դատարանի նախկին եւ ԲԴԽ ապագա նախագահ Գագիկ Հարությունյանի թափուր տեղն այնպես համալրել, որ, ի պատիվ նոր Սահմանադրության՝ նույն Հրայր Թովմասյանը ՍԴ դատավոր ընտրվեր 12 եւ ՍԴ նախագահ՝ 6 տարով, նախապատվությունը տվեցին հին Սահմանադրությանը՝ հանուն իրենց անձնական ու կուսակցական շահի: Սա կազմակերպված անբարոյականություն է:

Համամիտ եմ ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանի հայտնի դիմումի հետեւյալ մտքին. «...այս հարցի քննարկման լավագույն ձեւաչափը Դատարանի դատարանակազմական լիազորություններով օժտված սահմանադրական մարմինների քննարկման եւ համախոհությամբ լուծման տիրույթում է՝ Դատարանի անդամների եւ դատավորների մասնակցությամբ...»:

Սակայն դա հնարավոր կլինի, եթե կազմակերպված անբարոյականության գլխավոր շահառու Հրայր Թովմասյանը, հետեւելով իր ավագ գործընկեր Գագիկ Հարությունյանի օրինակին, օր առաջ հրաժարվի ՍԴ նախագահի ու անդամի լիազորություններից ու լռի:

Եւ հենց Սահմանադրական դատարանի անդամներն են պարտավոր հորդորել նրան՝ այդպես վարվել:

## ՄԱՐՏԻ 1-Ի ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆՈՎ

(Հարցազրույց «Առաջին լրատվական» կայքին)[34]

**– Ողջույն, շարունակում ենք աշխատանքը առաջին լրատվականի եթերում: Մարդու իրավունքների եւրոպական դատարանը հրապարակել է Մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ հերթական վճիռն ընդդեմ Հայաստանի: Խոսքը ՀԱԿ ներկայացուցիչ, 2008-ի մարտի մեկին ազատազրկված Դավիթ Մաթեւոսյանի գործի մասին է, եւ դա հաստատել է, որ Մաթեւոսյանի իրավունքները խախտվել են, արդար դատաքննության իրավունք, հավաքների, միավորման ազատություն եւ այլն: Տաղավարում նախկին քաղբանտարկյալ Դավիթ Մաթեւոսյանն է: Բարի օր:**

– Բարեւ Ձեզ:

**– Պարոն Մաթեւոսյան, նախ կխնդրեմ նշել՝ ե՞րբ, ի՞նչ մեղադրանքով դուք կալանավորվեցիք, ազատազրկվեցիք:**

– Ես բերման եմ ենթարկվել մարտի մեկի առավոտյան:

**– Ազատության հրապարակից:**

– Ազատության հրապարակից դուրս. Ազատության հրապարակում ես ընդառաջ եմ գնացել իշխանական ուժերի մոտեցող մի խմբի, բացատրել եմ, որ իրենց գործողություններն ապօրինի են, նրանց կողմից գործադրվող հատուկ միջոցների սպառնալիքի տակ, բոլորի հետ միասին, հավանաբար՝ վերջինը, լրել եմ Ազատության հրապարակը, օգնու-

[34] *1in.am, 04.11.2019թ.:*

թյուն եմ ցույց տվել գլխից վնասված մի քաղաքացու՝ արնահոսող, ճանապարհել եմ հիվանդանոց ու մի քիչ ուշացած փորձել եմ հասնել հետապնդվողներին, և ընդամենը Հանրապետության հրապարակ չհասած, Աբովյան փողոցով էի իջնում, ինձ մոտեցել են, առաջարկել են գնալ ոստիկանություն՝ ինձ ուղեկցող երկու ընկերների հետ, մենք էլ շատ հանգիստ գնացել ենք, մեղադրանքը ներկայացվել է իշխանության ներկայացուցչի դիմադրություն...

**– Այդ հոդվածով են գրեթե բոլորը, այո՞:**

– Ըստ էության, մեծամասնությունը՝ այո:

**– Իսկ այս վճռով՝ Ձեզ համար պարզ է, որ արդարությո՞ւն է վերականգնվում եւ այլն, տարիներ անց, նաև Մարտի 1-ի վերաբերյալ սա ի՞նչ նշանակություն ունի. քրեական գործի մասին է խոսքը:**

– Գիտեմ... Արդարության վերականգնման մասին խոսելը միայն դրանով՝ դեռ շուտ է, ի դեպ, ես կարող էի չհասցնել էդ գործն ուղարկել Մարդու իրավունքների եւրոպական դատարան, հասցրել եմ ուղարկել վերջին օրը: Իմ գործում թույլ է տրվել երկու կոպտագույն սխալ, որը չեմ կարծում՝ անգրագիտության արդյունք է, կարծում եմ՝ ինչ-որ մարդիկ միտումնավոր են արել, կարող էին այդ սխալները թույլ չտալ, կարող էին գործն էնքան հմտորեն սարքել, որ կառչելու տեղ չլիներ:

**– Իսկ Ձեզ համար դրա բացատրությունը ո՞րն է:**

– Կարծում եմ՝ գիտակցաբար, այսինքն՝ էդ համակարգի մարդկանցից ինչ-որ մեկը, որին հոգեհարազատ չէ իշխանության այդ մոտեցումը, հավանաբար նաեւ ճանաչել է՝ գիտակցաբար է արել...

**– Տեղ է թողել, որպեսզի...**

– Ինձ հետ բերման ենթարկված երկու քաղաքացիներ կային քրեական գործում, ի դեպ՝ միասին էինք բերման ենթարկվել ոստիկանություն, էն ժամանակ նախաարարություն էր հավանաբար՝ չեմ հիշում. համենայն դեպս՝ տեղակալի մակարդակով ստորագրությամբ կցված նյութերում երեւում է, որ ինձ հետ միասին քաղաքացիներ էլ են բերման ենթարկվել: Կարող էին չկցել գործին. մենք անընդհատ պնդում էինք, որ էդ քաղաքացիներին հրավիրեն հարցաքննության, որպես վկա ներգրավեն գործի մեջ, եւ բոլոր ատյաններում հրաժարվում էին դա անել: Հիմա եթե չլիներ, եթե էդ երկու մարդու անունը հանեին գործից, ես ասելու բան չէի ունենա, հասկանում եմ...



**– Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը վճռաբեկ բողոքներ է ներկայացրել Ձեր վերաբերյալ 2008 թվականի ընթացքում կայացված մեղադրական վճիռների դեմ. նախ կխնդրեմ նշեք, թե ինչ փուլում է այս գործը, այնուհետեւ նախկին քաղաքանտարկյալների արդարացման այս գործընթացի մասին կխոսենք:**

– Չեմ կարող ասել, չեմ հասցրել ստանալ, ինձ ուղարկել է դատախազությունը: Ես Մեղրիից պլանավորած գալիս էի, որ պաշտպաններիս հետ միասին ինքս ուղարկեմ այդ բողոքը, եւ իմացա, որ դատախազությունն ուղարկել է բողոքը, իհարկե՝ կրկնօրինակն էլ ուղարկել է ինձ, բայց քանի որ ուղարկվել է Մեղրիի հասցեյով, ես ֆիզիկապես չեմ հասցրել կարդալ, բայց ամեն դեպքում ենթադրում եմ, որ հիմքում ընկած է Մարդու իրավունքների եւրոպական դատարանի՝ իմ իրավունքների խախտումը ճանաչելու փաստը:

**– Տեսեք, Ձեզ արդարացնելու հիմքում Մարդու իրավունքների եւրոպական դատարանի վճիռն է, Դուք հասցրել եք ժամանակին դիմել կամ ունեցել եք այդ հնարավորությունը դիմելու...**

– Այո:

**– Բայց ինչպես Ձեր նախկին խոսքում ակնարկեցիք՝ չեք կարող համարել արդարությունը վերականգնված, քանի դեռ բոլորի հանդեպ իրավունքները չեն վերականգնվել:**

– Այո, միանշանակ:

**– Ինչպե՞ս են վարվելու, ի՞նչ է լինելու այն անձանց հետ, այն նախկին քաղբանտարկյալների հետ, որոնք չեն հասցրել, հնարավորություն չեն ունեցել դիմելու ՄԻԵԴ:**

– Այո, ես շարունակեմ... նաեւ՝ նրանց գործերը հմտորեն են սարքվել, նաեւ՝ մարդ կա, որ որոշակի ենթադրությունների տակ մեղք է ընդունել, մենք չգիտենք՝ ինչ վիճակում է եղել էդ մարդը, բայց կարող եմ մի բան ասել. բոլոր գործերում՝ բոլոր անձանց նկատմամբ ի սկզբանե մեղադրանք է առաջադրվել չարտոնված հավաքներին մասնակցելու հոդվածով, հետագայում բոլորը հանվել է, որովհետեւ մեր գործողությունները, մեր՝

բաղամացիններիս գործողությունները, Տեր-Պետրոսյանի համակիրների գործողությունները որեւէ ձեւով չէին խաչվում այն ժամանակվա օրենքի հետ, այսինքն՝ մեր գործողությունները բոլորը եղել են օրինական: Մարտի մեկի առավոտյան, չասեմ, որ մինչեւ մարտի մեկն արդեն տասնմեկ, թե տասներկու մարդ էին կալանավորել ամենատարբեր շինծու մեղադրանքներով, էս բոլորը բաղամական հետապնդում էր, հասկանում եմ, ու հիմա մարտի մեկի առավոտյան իշխանությունների՝ պետական իշխանության կողմից կազմակերպված ձեւով կատարված հանցագործության արդյունքում, որպես հետեւանք եղել են մարտի մեկի ցերեկվա դեպքերը: Եթե իշխանությունները մնային Սահմանադրության շրջանակներում, գործեին օրինակելի, որեւէ նման բան չէր լինի, հատկապես որ նախորդ օրը՝ փետրվարի 29-ին նախագահի թեկնածու Տեր-Պետրոսյանը դիմել էր Սահմանադրական դատարան՝ վիճարկելու, այսինքն՝ ընդդիմությունը գնում էր հստակ իրավական ճանապարհով: Ուժ կիրառեցին, որն ունեցավ հետեւանքներ, եւ նրանք գիտեին այդ հետեւանքները, նպատակը դա էր, նպատակն արտակարգ դրություն մտցնելն էր, որպեսզի Սահմանադրական դատարանը չհամարձակվի տուրք տալ հանրության ճնշմանը, այսքան բան:

**– Իշխանության գործողությունների ուղղակի մուժողներից եք Դուք, եւ Ձեր խոսքում կարծես ակնարկ եմ նկատում, որ Ռոբերտ Քոչարյանը, որը հիմա կանգնած է դատարանի առաջ՝ մեղադրվում է սահմանադրական կարգը տապալելու մեջ եւ հիմնականում զինված ուժերի ներգրավման հարցն է, այսպես ասած՝ օրակարգում ներգրավել են, թե չեն ներգրավել, ինչպես են ներգրավել, հետո պարզվեց, ըստ նրանց, Սահմանադրությունը թույլ է տալիս ներգրավել ու էսպես շարունակ... Դուք նաեւ նկատի ունեք, որ սահմանադրական կարգի տապալմամբ չէ՞ միայն, որ Քոչարյանը պետք է կանգնի կամ նստի ամբաստանյալի աթոռին, այլ պետք է հենց սկսել այդ առավոտյան իրադարձությունից:**

– Այո, միանշանակ կարծում եմ, բայց նաեւ տեսնում եմ, որ էդ մասով հիմքեր նախապատրաստվում են, մասնավորապես՝ վերջերս Հատուկ քննչական ծառայության հայտարարությունից իմացանք, որ բոլոր այն հեքիաթները, որ պատմում էին Ազատության հրապարակում հավված ընդդիմադիրների մասին, թե նախօրոք զենք-զինամթերք են կուտակում եւ այլն, էդ բոլորը ձեւակերպվել են հետին ամսաթվով...

**– Նախարարի փոխվելուց հետո...**

– Այո, այո, Հայկ Հարությունյանի փոխվելուց հետո: Եւ կարծում եմ, Հայկ Հարությունյանի հետ կատարված վերջին դժբախտությունը՝ լինի սպանություն, թե ինքնասպանություն, պետք է փնտրել էդտեղ: Ես ծանոթ եմ նրա մի ցուցմունքի հետ, որտեղ ասում է, որ առավոտյան գործողությունների հետ կապված՝ ինքը նույնիսկ հանձնարարել էր, որ էդ ստուգումներից հետո թույլ տան՝ մարդիկ շարունակեն իրենց հավաքները: Հայկն իրականության հետ առերեսվելու խնդիր ուներ. նա կամ պետք է հետեւեր Միխայել Հարությունյանի հանապարհին, այսինքն՝ փախչեր, կամ պետք է առերեսվեր իրականության հետ, կամ եղավ էն՝ ինչ որ եղավ:

**– Որեւէ այլ տարբերակ Ձեզ համար քննարկելի՞ է Հայկ Հարությունյանի հետ տեղի ունեցածի մասով:**

– Ես չեմ կարող քննարկել. երկու վարկած կա՝ սպանություն կամ ինքնասպանություն, ինքնասպանության որոշումը կայացնողը ինքն է, որ չառերեսվի, իսկ սպանության որոշում կայացնողը նա է, ում հետ պետք է առերեսվեր:

**– Գեւորգ Կոստանյան, Գեւորգ Մեհրյան. սրանք նույնպես անուններ են, որ վերջերս մեզ հայտնի դարձան տարբեր իրադարձությունների փաստերի կեղծման մասով: Խոսքը կրկին մարտի 1-ից 2-ը իրադարձությունների մասին է, Մարտի 1-ը բավականին ծավալուն, բազմաշերտ հանցագործություն է, եւ առանցքային դեմքեր՝ նախկին պաշտոնյաներ, որոնք անցնում են այս գործով, հաշողացրել են լրել Հայաստանը եւ հիմա տարբեր տեղերում ապաստան են գտել, տարուկ տեղավորվել են եւ պարբերաբար հոխորտում են արտերկրից: Մեկը գեներալի իր նամուսի մասին է հիշում, էն մյուսն իրեն իրավունքի ջատագովի տեղ դրած է խոսում. ըստ Ձեզ՝ մենք հասնելո՞ւ ենք այս գործի ամբողջական բացահայտմանը: Առանցքային դեմքերը չկան, այսպես ասած՝ փախած են Հայաստանից, չէ՞ որ միայն Ռոբերտ Քոչարյանով չէ պայմանավորված: Ռոբերտ Քոչարյանին՝ որպես գլխավոր գերագույն հրամանատար, այո՛, դատարանը կորոշի պատժել, թե ոչ, բա մյուսնե՞րը:**

– Առաջին հերթին պայմանավորված է Ռոբերտ Քոչարյանով, դա անհերքելի է, մյուսների մասով կ պետք է տանել բացահայտումը. հիմա Վահագն Հարությունյանը՝ ամենավատ դերակատարներից մեկը, փախուստի մեջ է, բայց նա մեղադրվում է մի բանի համար, որ փոխվել են ապացույցները, գործում առկա ապացույցները, հատկապես սպանությունները բացահայտելու մասով անհրաժեշտ ապացույցներ փոխվել են: Եթե չեն փոխվել, էդ մարդն ինչո՞ւ է խուսափում: Այլ բան է, թե երբ հետախուզմամբ կհայտնաբերեն, երբ կբերեն, երբ արդարադատության առաջ կկանգնեն, կկանգնեն, թե չեն կանգնի, բայց կարևորը գործի իրական հանգամանքների բացահայտումն է: Ոչինչ, որ էդ Հարությունյանն ամբողջ կյանքը փախած ապրի, ոչինչ, դա էլ է պատիժ, բայց հանրությունը վերջապես պետք է իմանա ճշմարտությունը, բացահայտումն այդ առումով շատ կարևոր է:

**– Իսկ ինչպե՞ս եք վերաբերվում էլի նույն Քոչարյանի, այսպես ասած, մարտավարությանը, երբ որոշակիորեն փորձում են, այսպես ասած՝ նրա աջակիցների միջոցով վախի մթնոլորտ տարածել, որոշակի հավաքներ են իրականացնում, փորձում են հնարավորինս մարդկանց կոնսոլիդացնել, ինչը նրանց մոտ, բնականաբար, չի ստացվում:**

– Փողի վրա խարսխված գործողությունների փորձ էր, որը փաստորեն ի սկզբանե ձախողված է, դա հնարավոր չի, որովհետև գաղափարական հիմք չկա: Դե հիմա փորձում են. փող ունեն, շատ փող ունեն, թող փորձեն՝ ինչ ասեմ, անցած էտապ է: Քոչարյանն անցած էտապ է:

**– Իսկ Ռոբերտ Քոչարյանը միայն այս մեղադրանքո՞վ պետք է կանգնի դատարանի առջև:**

– Դիտեմ, Քոչարյանը սովոր էր, ի սկզբանե բազմաթիվ անգամ Սահմանադրություն է խախտել, օլիգարխիա է ձևավորել, պետական միջոցների յուրացմամբ իշխանավորներ են հարստացել, էդտեղ շատ գործ կա անելու, բայց ես չպետք է որոշեմ, պետք է շատ լուրջ աշխատել, էդ բոլոր խնդիրները պետք է ջրի երես բարձրացվեն, որ մեր երկիրը հետագա զարգացում ունենա, հասկանում եմ: Դա շատ կարևոր է, բայց դրա պատասխանատուն, պատասխանատուները պետք է շատ լուրջ մոտենան, շատ բարդ է, ամեն ինչ արել են հնարամտորեն, ամեն ինչ արել են հողարկելով: Ես հասկանում եմ՝ շատ դժվար է, բայց մեկ է՝ հանրության



գիտակցության մեջ դա նստվածք է տվել, պետք է բավարարել հանրության պահանջը:

**– Իսկ դատական պրոցեսի կամ դատական այս ընթացքի վերաբերյալ ի՞նչ մտավախություն ունեք: Երբ սկսվեց Մարտի 1-ի գործը, շատ էին խոսում, որ մեղադրող կողմն այդքան լավ պատրաստված չէ, մեղադրող կողմում հանդես են գալիս անձինք, որոնք նախկին համակարգի պաշտոնյաներ են եղել, այդ գործը ընթանում է այն դատաիրավական համակարգը, որը նախկինում կեղծել է Մարտի 1-ի իրական գործերը, այստեղ Դուք մտավախություն չունե՞ք, որ ի վերջո գուցե այս պրոցեսը մի շրջափուլ մտնի, որտեղ ակնկալիքները հետևանքային կլինեն բոլորի համար՝ հասարակության համար, առաջին հերթին՝ Մարտի 1-ից տուժած անձանց համար, արդարադատության իրականացման վերականգնման համար:**

– Ես չեմ կարծում, թե այդպիսի բան կլինի: Ամեն դեպքում էն փաստը, որ Հանրապետության երրեմնի նախագահը տևական ժամանակ գտնվել է բանտում, ընդ որում՝ արտաքին ճնշումներով զուգորդված...

**– Կարծում եք կա՞ն արտաքին ճնշումներ:**

– Դա ակնհայտ էր: Ինչ-որ բաներ ակնհայտ էին, չեմ ասում՝ ինչ կարգի ճնշումներ, բայց ամեն դեպքում՝ ռեալիկի կարգով ճնշումներ կային, եւ էդ ճնշումներն ազդում էին էդ ձեր ասած՝ նախկին համակարգի ներկայացուցիչների վրա, բայց ոչ՝ քաղաքական իշխանության վրա, դրա համար կ լսեմ քաղաքական իշխանության կամքն է կարևոր, պետք է ստեղծել իրավական պետություն եւ վերջ, ուրեմն՝ պետք է ստեղծել, ով էլ որ դրա համար պետք է պատասխան տա, եւ սա նիշտ ճանապարհ է:

**– Կամքը կա...**

– Կամքը կա, միանշանակ:

**– Կամքը կա նաև Սահմանադրական դատարանի հարցը լուծելու հարցում, բայց տեսնում ենք, որ չի լուծվում. Մասնավորապես՝ դրա նախագահ Հրայր Թովմասյանը, շատերի բնորոշմամբ, ուզուրպացրել է Սահմանադրական դատարանը, շարունակում է կառչած մնալ իր պաշտոնին եւ որեւե ձեւով տեղի չի տալիս՝ այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի եւ հենց անձնավորված՝ Հրայր Թովմասյանի նկատմամբ**

**չկա հանրային վստահություն: Հրայր Թովմասյանը, այսպես ասած, հեղափոխական արժեքների եւ հեղափոխական իշխանության մաս չի կազմում, բայց տեղի չի տալիս, եւ կամքի առկայության դեպքում կ՝ իշխանությունը չի կարողանում նրա հարցը լուծել:**

– Ես մի դրվագ եմ հիշում, երբ Հրայր Թովմասյանը թեւերը բշտած հանրային բնաբարկումներ էր կազմակերպում եւ ներկայացնում էր նոր սահմանադրության առավելությունները: Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղում մի գյուղացի նրան ասաց՝ էդ ինչ որ դուք անում եք՝ ձեզ համար եք անում, ինչ եք եկել՝ մեր գահլան տանում: Մոտավորապես այսպես ասաց, ու միայն իրեն չէ՝ բոլոր ներկայացնողներին: Ուրեմն, նա առաջամարտիկի դեր ստանձնեց, վեր կացավ եւ էս մարդուն սկսեց բացատրել տրակտորի օրինակով, թե՝ գիտեմ, հայրիկ, նայեմ, հին սահմանադրությամբ պատկերացրեմ մի դաշտ է, մի տրակտորավար, մի տրակտոր, էս տրակտորավարը հա՛մ հողն է հերկում, հա՛մ ասում ու ասում՝ էսքան եմ հերկել, հա՛մ դիզվառելիքն է լցնում, ասում է՝ էսքան եմ լցրել, հասկանում ե՞մ ամեն ինչն ինքն է գնահատում, իսկ նոր սահմանադրությամբ մի հոգի դիզվառելիքն է հատկացնում, մեկը չափում է կատարած աշխատանքը, մյուսը տրակտորն է վարում: Ա՛յ էսպիսի տպավորիչ խոսքերով ասաց՝ մեզ համար չենք անում, ձեզ համար ենք անում, որ արդար լինի, արդար հասարակություն ստեղծենք: Հետո ինքը գնաց, ես հիմա չեմ մտնում իրավական նորությունների մեջ, բայց հետո ինքը գնաց եւ, ժողովրդական լեզվով ասած՝ շուստրիությամբ դարձավ Սահմանադրական դատարանի նախագահ՝ հին օրենքով: Պարզ է, որ էդտեղ կան իրավական խախտումներ, որի համար հիմա՝ Հրայր Թովմասյանի մեղքով, գործընթացներ են սկսում: Ուզում եմ ասել՝ այդ գյուղացին հանրությունն է: Հրայր Թովմասյանը նայել է էդ գյուղացու աչքերին եւ ասել է, որ էս նոր սահմանադրությունը լավ սահմանադրություն է ու գնացել է՝ հնով դարձել Սահմանադրական դատարանի նախագահ: Նա բարոյական իրավունք չունի մեկ վայրկյան անգամ էդ աթոռը զբաղեցնելու, եւ որպեսզի այս երկրում ավելորդ ջրեր չպղտորի, ես իրեն հենց հիմա հորդորում եմ՝ օր առաջ գիտակցի եւ հրաժարական տա: Ընդ որում, ես չեմ գնահատում, որ իշխանություններն են ճնշում Հրայր Թովմասյանի վրա, որ նա հրաժարական տա: Ես գիտակցում եմ, տեսնում եմ, որ հանրությունն է ճնշում իշխանությունների վրա, որ պարտադրեն Հրայր Թովմասյանին՝ հրաժարական տալ: Ես իշխանություն չեմ՝ հանրության ներկայացուցիչ եմ եւ պնդում եմ, որ նա պետք է հրաժարական տա:



**– Դրեթե նույն տրամաբանությունն է կարծես, երբ Ռոբերտ Քոչարյանն ասում էր, թե ինչպիսի դրախտային հայրենիք է մեզ ժառանգել, բայց ինքն էստեղ չէր ապրում: Նշեցիք, որ իշխանությունները ճնշում չեն գործադրում, որ Հրայր Թովմասյանը հեռանա, քանի որ դրա համար առկա են բոլոր նախադրյալները՝ չկա հանրային վստահություն, կան իրավական գործընթացների կոպտագույն խախտումներ եւ լիքը խնդրահարույց պրոցեսներ: Իսկ հակառակ համբարը պնդում է, որ Հրայր Թովմասյանը մնա:**

– Ընդհակառակը, քաջալերում են, որ մնա, որպեսզի էս երկրում հստակությունը չկայանա, հիմնական գործով զբաղվելու փոխարեն՝ մարդիկ զբաղվեն էսպիսի երկրորդական գործերով: Իհարկե՝ քաջալերում են, եթե չքաջալերեին, կարծում եմ՝ Հրայր Թովմասյանն էդքան գիտակցություն ուներ, որ պետք է գնար, ու կախվածություն դրա համար չէր լինի:

**– Այսինքն, պետք է ծառայություն մատուցի այն անձանց, ում միջոցով...**

– Հավանաբար: Հավանաբար՝ այն, ում միջոցով դարձել էր ցմահ Սահմանադրական դատարանի նախագահ:

**– Վերադառնալով քաղբանտարկյալների արդարացման գործընթացին, ինչի մեկնարկը տրված է, եւ հեղափոխությունից հետո ինչը դիտարկվում էր հենց այս տրամաբանության մեջ, եւ տարբեր իրավապաշտպաններ, քաղհասարակության ներկայացուցիչներ, որոնք հանդիպումներ ունեցան դատախազությունում գլխավոր դատախազ Արքուր Դավթյանի հետ, բավականին տպավորված լին գլխավոր դատախազի պատրաստակամությամբ, տեղեկատվությամբ եւ գործին ընթացք տալու պրոցեսից. քաղբանտարկյալներից բացի՝ Հայաստանում տարիներ շարունակ եղել են նաեւ անձիք, որոնցից խոշտանգումներով, տարբեր միջոցներով կորզել են ցուցմունքներ, ենթարկել հետապնդումների, հաշվեհարդարներ տեսել. այս անձանց իրավունքներն ինչպե՞ս են վերականգնվում:**

– Գիտեմ, մինչեւ էդ անձանց իրավունքներին անդրադառնալը՝ ես էդտեղ մի վերապահում ունեմ. չգիտեմ՝ ով ինչպես է տպավորվել, բայց ես տպավորված չեմ եւ շատ դժգոհ եմ էդ գործընթացից:

– **Ինչո՞ւ:**

– Որովհետեւ գլխավոր դատախազությունը նոր իրողությունների պայմաններում, որոնք ես համարում եմ նոր ի հայտ եկած պայմաններ, մասնավորապես մեկի մասին խոսեցինք՝ ոստիկանությունում հետին թվով էդ սցենարը թղթին տալը, մյուսը՝ փամփուշտների պարկուճների փոխանակման փաստը, մյուսը՝ բոլոր քրեական գործերում ճավամներին մասնակցելու պատճառով հետապնդումներ սկսելը: Էս բոլոր մարդիկ, որոնք հետապնդվել են Մարտի 1-ի շրջանակներում Մարտի 1-ից առաջ եւ հետո, էսպես ասեմ՝ էս բոլոր մարդկանց նկատմամբ կիրառվել է ոչ թե քրեական հետապնդում, այլ՝ քաղաքական: Հիմա էն համակարգը, որի մեջ աշխատում են Ձեր թվարկած էն նախկին մարդիկ, նաեւ վերցրել են... հիմա իմ գործի օրինակով ասեմ. ընդունենք՝ Վճռաբեկ դատարանն ընդունել է վարույթ, հաջորդ քայլը՝ քննարկելու է, թե չի քննարկելու, հետո որոշելու է, որ պիտի ուղարկի առաջին ատյանի կամ ընդհանուր իրավասության դատարան, չգիտեմ՝ հիմա ոնց է կոչվում: Հիմա չի բացառվում, որ էդ գործը մակագրվի էն դատավորին, որն ինձ ազատազրկման որոշում է կայացրել, չի բացառվում, որ նոր հանգամանքներում, ասենք, դատախազությունից ներկայացուցիչը լինի էն դատախազը, որը պաշտպանել է իմ միջնորդությունը: Չի կարելի էս ճանապարհով գնալ, չի կարելի: Կամ պետք է դատական իշխանության պատասխանատուները, էդ թվում՝ գլխավոր դատախազը, Վճռաբեկ դատարանի նախագահը նստեն, էս նոր ի հայտ եկած հանգամանքներն ի մի բերեն, հասկանան, որ այս բոլոր մարդիկ՝ ցուցակով, քաղաքական հետապնդման են ենթարկվել՝ կեղծ քրեական հետապնդման շղարշով, որը սպասարկել են իրենք՝ նույն դատախազությունը, նույն Վճռաբեկ դատարանը, բոլոր ատյանները, քննչական ծառայությունը, հասկանում եմ, հետաքննության մարմինները... Բոլորին փչացրել են, ընդ որում՝ բոլորին պարտադրել են, բոլորն իրենց կամքին հակառակ են էս բոլոր քայլերը արել: Հենց էնպես չէ, որ օրինակ բերեցի, որ իմ գործում թույլ տված էդ բացերը պատահականություն չեն, էդքան են կարողացել օգնել, այսինքն՝



ճնշումներին ենթարկվել են, բայց ինչ-որ մի տեղ փորձել են օգնել: Էս մարդկանց՝ ցուցակով, քրեական հետապնդման, քաղաքական հետապնդման ենթարկելու հիմքով դնեն ու արդարացնեն: Եթե իրենք չեն կարողանում սա անել, եթե իրենք չեն ուզում գնալ ինքնամաքրման ճանապարհով, խոսքս համակարգին է վերաբերում, անձերին մի կողմ թողնենք, ես չեմ էլ ասում, թե էդ անձերն ինչ պատասխանատվության պետք է ենթարկվեն, բայց իրենք պետք է գիտակցեն որ երբեք այլեւս էդպիսի կամակատարություն չպետք է անեն: Ուրեմն՝ խնդիրը պետք է լուծել Ազգային ժողովում: Ազգային ժողովում պետք է ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որն ուսումնասիրի էս նյութերը, կազմի էն անձանց ցուցակը, որոնք քաղաքական հետապնդման են ենթարկվել եւ դատապարտվել: Կամ՝ կապ չունի. միայն դատապարտվածները չեն, որ տուժածներ են. եւ բոլորի նկատմամբ, ինչպես արվել է ստալինյան բռնաճնշումներից հետո. հո չէ՞ն նստել նույն գործերը վերցրել ուղարկել տոյկաներին, միլիոնավոր մարդիկ են եղել, արդեն իրենց արդարացրել են, դրել որոշել են, որ հակասովետական են՝ ագիտացիայի-պրոպագանդայի հոդվածով, չգիտեմ՝ այլ պետությանը լրտեսական ծառայություն մատուցելու հոդվածով եւ այլ հոդվածներով մարդիկ միաժամանակ պետք է ազատ արձակվեն: Հիմա Մարտի 1-ի շուրջ հետապնդված բոլոր մարդիկ քաղաքական հետապնդման են ենթարկվել: Ա՛յ, էս հիմքով բոլորին պետք է ազատ արձակել, որովհետեւ շատ անարդար բան է հիմա՝ իմ գործը կընդունեն, կտանեն կարդարացնեն, իսկ իմ խցակից ընկերոջ գործը, որը «մեղքն» ընդունել է, ես նախորդ լրատվամիջոցին մանրամասներն ասել եմ՝ երբ որ մարդուն ասում են՝ մայրդ մահացել է, մեղքդ ընդունիր՝ թողնենք գնաս տիրություն անես ընտանիքիդ, հետո խաբում են՝ տանում փակում են, մի հատ էլ ծանր բանտային հիվանդություն է վաստակում... Հիմա էս մարդը չպետք է արդարացվի... Էս եմ մտածում... Հստակ պետք է լինի դատական իշխանության քաղաքական մոտեցումը, եթե գնում ենք ինքնամաքրման ճանապարհով, եթե՝ ոչ, ուրեմն՝ օրենսդիր իշխանությունն այստեղ անելիք ունի: Ես ամենեւին բավարարված չեմ, ես, անկեղծ ասած, թքած ունեմ՝ էս ճանապարհով գնալու դեպքում ինձ կարդարացնեն, թե չեն արդարացնի: Նույնիսկ ասում եմ՝ մի՞ արդարացրեք, անհարմար է, որ ինձ արդարացնեն, իմ խցակից ընկերոջը չարդարացնեն: Սա է իրականությունը:

**– Համակարգային լուծում եմ պահանջում:**

– Անպայման:

**– Իսկ արդարացումներից հետո, ի՞նչ եմ կարծում, պետությունն այստեղ որոշակի նավելյալ անելիքներ ունի՞. այդ մարդիկ ապօրինի ազատազրկվել են, նրանց կյանքի, առողջության վրա է անդրադարձել, շատերը հիվանդություններ են ձեռք բերել...**

– Դա պետության գործն է, պետության հնարավորությունների, իրենք կորոշեն:

**– Իսկ դուք նման պահանջ չե՞ք դրել:**

– Ես՝ ամենևին: Բայց, ամեն դեպքում, բոլոր այն մարդիկ, խոսքս պաշտոնյաներին է վերաբերվում, որոնք ի պաշտոնե նպաստել են, որ էս մարդիկ քաղաքական հետապնդման ենթարկվեն, կարծում եմ՝ բոլոր նրանց անունները պետք է հրապարակայնորեն տարածվեն, եւ նրանք դրանից հետո հետևություն անեն՝ իրենք իրավունք ունեն այդ համակարգերում աշխատելու, թե ոչ:

**– Դե՛, նրանց անունները համենայն դեպս հանրային մակարդակում հայտնի են:**

– Այո՛, այո՛, գիտեք՝ էդտեղ վաղեմության ժամկետ էլ կա. էսպես, թե էնպես՝ նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի լինելու, բայց հանրությունը պետք է իմանա, ավելի ճիշտ՝ էդ համակարգի մյուս աշխատողները պետք է իմանան, որ չի կարելի նման ճանապարհով գնալ:

**– Կանխարգելիչ միջոցներ կիրառեն:**

– Անպայման:

Հարցազրույցը՝ Ժիրայր Ոսկանյանի
(վերծանված է տեսանյութից)

## ՎԵՀԱՓԱՌԻ ՍՐՏԻ ԽՈՍՔԸ[35]

2008 թվականի ամռանն էր: Նախագահի թեկնածու Տեր-Պետրոսյանին աջակցելու իրական մեղադրանքով բանտում հայտնված քաղբանտարկյալներս կուռ միասնություն էինք: Հնարավորինս մասնակցում էինք քաղաքական պայքարին, հայտարարություններ անում, նաև հնչությամբ հաղթահարում բանտային դժվարությունները՝ մեկս բոլորի եւ բոլորս մեկի համար պայքարելով:

Վարդանը մեզանից մեկն էր: Նա մասնագիտությամբ վարորդ էր: Եղել էր ՆԳ նախարար, հարգարժան Վանո Սիրադեղյանի վարորդը: Ձերբակալման պահին վարել էր եզնիկ սրբազանի ծառայողական մերենան: Վերաքննիչ դատարանը եւս չտեսնելու տվեց քրեական գործում առկա տեսագրությունը, որում ակնհայտ երեւում է, թե ինչպես, ճեղքելով խառնամբոխը, Վարդանը կշտամբելով մոտենում է ոստիկանին ծեծի ենթարկող հաստագլխին եւ նրա կողմից ուժգին հարված ստանում դեմքին: Ծեծվող ոստիկանին պաշտպանելու փորձ կատարած Վարդանի պատիժը մնաց անփոփոխ՝ չորս տարի ազատազրկում, այդ նույն ոստիկանին ծեծելու մեղադրանքով:

Եզնիկ սրբազանը, Վարդանին օգտակար լինելու նպատակով, տեսագրությունը ցույց է տալիս Վեհափառին եւ խնդրում օգնել: Նա դիտում է տեսագրությունը, մտորում եւ վերջապես պատասխանում. «Ասա՝ թող Վարդանը ներման դիմում գրի»: Հավանաբար գնահատելով, որ տվյալ իրավիճակում Վարդանին օգնելու այլ ճանապարհ գոյություն չունի, որ

[35] *facebook.com/davit.matevosyan.5201/posts/2618853775050859, 17.04.2020թ.:*

այդ հարցով որեւէ ատյանի դիմելու դեպքում ոչ միայն մերժում ու կշտամբանք, այլեւ նույնիսկ պատիժ է ստանալու:

Հիմա Վեհափառը հրապարակային հորդորել է փոխել Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը: Մեր սրտով է, թե ոչ, իր սրտի խոսքն է ասել: Ասելուց առաջ համոզված է եղել, որ, անկախ այն բանից, կհարգվի այդ հորդորը, թե ոչ, իրեն ոչինչ չի սպառնում, որովհետեւ իրավիճակ է փոխվել:

Վեհափառի հորդորը դժբախտություն չէ: Դժբախտություն է, որ Վարդանը եւ շատերը մինչ օրս չեն արդարացվել, որ Վարդանի դեմ հարկադրաբար սուտ ցուցմունք տված ոստիկանը, քաղաքական պատվերով շինծու նախաքննություն, դատախազական հսկողություն ու դատաքննություն իրականացրած պաշտոնյաները չեն ապաշխարել, որ հիշյալ քաղբանտարկյալների արդարացման գործընթացն իրականացվում է բարոյականությունից ու տրամաբանությունից զուրկ իրավաբանական մեթոդներով՝ չշաղկապելով 2008 թվականի նախագահական ընտրությունների շուրջ տեղի ունեցած դեպքերի իրավական գնահատականի հետ:

Եթե այս ամենը կատարված լիներ, ապա հազիվ թե Վեհափառի սրտի խոսքը նման բովանդակություն ունենար...

Հ.Գ. Վարդանի մեղադրական եզրակացությունն ու հիշյալ տեսագրությունը մեկուկես տարի առաջ անձամբ եմ հանձնել ՀՔԾ պետին:

## ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԱԾ-ԻՆ[36]

Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի գիտի, որ նախորդ իշխանության (Ռոբերտ Քոչարյան-Սերժ Սարգսյան) վերարտադրության միակ հնարավորությունը՝ ընտրությունից ընտրություն կատարելագործվող ընտրակեղծիքի մեքենան էր:

ԱԱԾ-ն դիմել է ՀՀ քաղաքացիներին՝ ընտրակաշառքի հայտնի գործով տեղեկություններ ստանալու ակնկալիքով: Սա նշանակում է, որ նախորդ իշխանության տիրապետության ներքո գործած ԱԱԾ-ն՝ ինքն էլ լծված է եղել համակարգային ընտրակեղծարարությանը: Այլապես նրա պահոցներում կուտակված կլինեին քաղաքական պատվերով ընթացք չստացած ծավալուն նյութեր, որոնք, նախկինների հեռացումից անմիջապես հետո՝ հանուն ազգային անվտանգության, առանց հրահանգի կդրվեին շրջանառության մեջ:

Համակարգային ընտրակեղծարարությունը բաղկացած էր մի քանի հիմնական հնարք հանցագործությունից: Ընտրակաշառքը դրանցից մեկն էր, որը թույլատրված էր նաեւ նախկին իշխանության դաշնակից ուժերին, այն էլ՝ քվոտավորված: Ծառուկյանի գլխավորած ուժը դրանցից մեկն էր: Որ, օրինակ, բացակա ընտրողի փոխարեն քվեարկելու հնարք-հանցագործությունը թույլատրված չէր դաշնակից ուժերին, ապացուցվում է այն իրողությամբ, որ 2012 թվականին, Հայ ազգային կոնգրեսի հետ միասին, ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն եւս դիմեցին ՍԴ՝ ստորագրված ցուցակների հրապարակայնությունն արգելող հոդվածները հակասահմանադրական ճանաչելու նպատակով:

[36] *newsline.am, 25.06.2020թ.:*

Բացակա ընտրողի փոխարեն քվեարկությունը համակարգային կիրառություն գտավ այն բանից հետո, երբ Ռ. Քոչարյանի նախագահության սկզբնական շրջանում օրենքի ուժով ընտրողների ստորագրած ցուցակները գործնականում անհասանելի դարձրին արդյունքները վիճարկող կողմի համար:

Սկսած 2003 թվականից. ընդդիմությունը շարունակաբար պայքարել է եւ պնդել, որ կամ ստորագրված ցուցակները պետք է հասանելի լինեն, կամ ընտրողների ռեգիստրից հանվեն վեց ամսից ավելի Հայաստանից բացակայող ընտրողների տվյալները, իհարկե՝ պահպանելով նրանց քվեարկելու իրավունքը: Իշխանությունը հակադրվել է՝ պատճառաբանելով, թե «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքն ընդունվել է 2002թ., եւ Հայաստանից բացակայողների բազան ամբողջական չէ: Իսկ այս բանավեճում ներգրավված միջազգային հանրությանը մխիթարել է քվեարկության ժամանակ ընտրողի անձնագրի վերջին էջին դրոշմ դնելը: Ճիշտ է, դրոշմի համար կիրառվող բանաձը կախարդական էր՝ անհետացող:

Տեղամասում կատարվող հնարք-հանցագործությունները շատ հանախ նկատելի էին միջազգային առաքելություններին: Ուստի նախորդ իշխանությունը սկսեց ավելի շատ կենտրոնանալ տեղամասից դուրս կատարվող հնարք-հանցագործությունները կատարելագործելու վրա, եւ 2017թ. խորհրդարանական «ռեյտինգային» ընտրությունների նախօրյակին սա այնման կատարյալ էր, որ իշխանությունը հրաժարվեց բացակա ընտրողների փոխարեն քվեարկելուց եւ վստահաբար ստորագրված ցուցակները դարձրեց մատչելի:

Եթե 2003թ. նախագահական եւ խորհրդարանական խայտառակ ընտրությունների ժամանակ բնակիչների ռեգիստրը դեռ կայացած չէր, ապա հետագայում՝ ԱԱԾ տրամադրության տակ եղած բացակայողների տվյալների ոչ ամբողջական պաշտոնական բազան գնալով ավելի ազդեցիկ է դարձել 2007, 2008, 2012, 2013 թթ. համապետական ընտրությունների, ինչպես նաեւ 2015թ. սահմանադրական հանրաքվեի ժամանակ:

Ուստի, «Քրեական դատավարության օրենսգրքի» արդարացի քննություն իրականացնելու պահանջից ելնելով, ԱԱԾ-ին առաջարկում եմ կատարել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտում: Այդ նպատակով անհրաժեշտ է առնվազն առգրավել ԿԸՀ-ում հիշյալ ընտրություններին վերաբերող ստորագրված ցուցակները եւ համեմատել տվյալ պահին Հայաստանից բացակայողների պաշտոնական տվյալների բազայի հետ (ոչ պաշտոնական, ամբողջական բազային տիրապետում է միայն ՀՀԿ-ն): Միաժամանակ ուսումնասիրել իշխանության կողմ ձայների տրցակները՝ այնտեղ մրցակիցների կողմ քվեաթերթիկներ հայտնաբերելու նպատակով:

Վստահ եղեք, որ դա կդառնա նախորդ իշխանության գործունեության իրավամաղամական գնահատականի հիմքը:

## ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆՆ ԶԳՈՆ ՊԱՀԵԼՆ Է

(Հարցազրույց «Իլուր» կայքին)[37]

**– Դուք մեկն եք այն քաղբանտարկյալներից, որ Կառավարությանն ուղղված հայտարարություն են հրապարակել՝ ՍԴ դատավորի պաշտոնում Վահրամ Ավետիսյանի առաջադրման առիթով: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է, ըստ Ձեզ, այսպիսի հակասական թեկնածություն առաջադրելու Կառավարության շարժառիթը:**

– Չեմ կարծում, թե այս թեկնածուի առաջադրման հարցում պետք է շարժառիթ փնտրել: Եթե շարժառիթ լինի, ապա հանրային ընդվզմամբ գործընթացը հազիվ թե հաջողվի կանխել: Կարծում եմ, արժանի թեկնածուի փնտրտուքի շրջանակներում՝ իշխանության ներսից մեկն ուղղակի առաջարկել ու գովաբանել է: Հետո թեկնածուի վերաբերյալ կարծիք են հարցրել ԱԱԾ-ից, եւ դեռեւս դեպի հեղափոխական արժեքներ չդիրքավորված ԱԱԾ-ն՝ ՀՐԵ-ական չափորոշիչներով շատ բարձր է գնահատել Վահրամ Ավետիսյանին: Մարդը միջավայրի արդյունք է, իսկ Վահրամ Ավետիսյանը ձեւավորվել է մի միջավայրում, որը դատական իշխանությունը 100 տոկոսով ենթարկեց Քոչարյանի ու Սարգսյանի կամքին: Կարծում եմ, նման մարդկանց պատասխանատվությունն անարմատ է: Եթե այդպես չէ, եւ նա ի վիճակի է հանրային շահը բարձր դասել անձնական շահից, ապա, գնահատելով ստեղծված իրավիճակը, ուղղակի պարտավոր է զսպել ՍԴ դատավոր դառնալու ցայթքկությունը: Եթե հարցը վերաբերեր նշանակման, ապա անձամբ ես չէի ան-

[37] *iLur.am, 28.07.2020թ.:*



հանգստանա: Համոզված եմ, որ եթե որեւէ մեկը շեղվի հեղափոխության ուղեծրից, ապա Նիկոլ Փաշինյանը դա երկար չի հանդուրժելու: Բայց ՍԴ դատավոր ընտրում են 12 տարով, եւ սխալվելը կարող է ճակատագրական լինել: Սա է անհանգստության աղբյուրը:

**– Ի՞նչ լուծում կառաջարկեիք, եւ ընդհանրապես՝ որո՞նք են դատաիրավական ոլորտի ռազմավարական լուծումները, որ դեռ չեն տրվել:**

– Մի բան հաստատ գիտեմ, որ 2008թ. մարտի մեկի իրական պատկերը գլխիվայր շրջվեց՝ նախորդների կողմից դատական համակարգի անկախությունը իսպառ ոչնչացնելու միջոցով: Եւ դա հնարավոր է եղել դատական համակարգի ներկայիս հիմնական դերակատարների հնազանդության պայմաններում: Հեղափոխությունից հետո նրանք պետք է կարողանային (կարողանան) տոգորվել նոր մտածողությամբ, լծվեին (լծվեն) գործին եւ վերականգնեին (վերականգնեն) Մարտի մեկի իրական պատկերը: Սա կլինի դատաիրավական ոլորտի կարգաբերման ամենակարճ ճանապարհը: Առայժմ այստեղ դիմադրությունն ակնհայտ է:

**– Ի՞նչ անելիք ունի այստեղ հասարակությունը:**

– Հասարակության զորը իշխանությանը զգոն պահելն է, որն էլ նա բարեխղճորեն անում է:

## ՀԻՄԱ՝ ԱՎԵԼԻ ԼՈՒՐՋ[38]

Որքան հասկացա՝ Ռոբերտ Քոչարյանի մտքով անցել է փողոցներ փակելով իշխանափոխություն իրականացնել: Տպավորությունս այնպիսին է, որ նա կանգնած է Կապանի խարխլված երկաթուղային կայարանում ու ոտքերն է հաշվում, թե գնացքն իրեն երբ կհասցնի Մեղրի: Սա այն դեպքն է, որ գնացքը ո՛չ թե գնացել է, այլ ուղղակի գնա՛ցք չկա, չի՛ լինելու, որովհետեւ Կապան–Մեղրի երկաթուղին հենց նրա նախագահական հրահանգով է հիմնահատակ քանդվել: Հույս չկա՝ իրականության զգացողությունը նրա մոտ այլեւս չի վերականգնվի...

Հիմա՝ ավելի լուրջ:

ԱԺ-ում պատգամավորների հարցերին պատասխանելուց հետո ՍԴ դատավորի թեկնածու Վահրամ Ավետիսյանը՝ հոր մասով հարցին ի պատասխան, լրագրողին ասել է. «Մասնագիտական հարթության մեջ նայեմ. վնիռները բեկանվում են ինչ հիմքով, որեւէ մեկը ուսումնասիրել է... արձանագրվում է տվյալ ժամանակաշրջանում թույլ տրված իրավունքի խախտում, թե նոր երեւան եկած հանգամանքներ են առկա, որոնց ուժով այդ որոշումները վերանայվում են»:

Իմ գործով Վճռաբեկ դատարանն արդարացման վճիռ է կայացրել, որը, սակայն, ես դեռ չեմ ստացել: Բայց ձեռքիս տակ առկա ՀՀ գլխավոր դատախազի վճռաբեկ բողոքի «3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները» բաժնում ընդգծված է. «...2) առերեւույթ առկա է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտում:

[38] *newsline.am, 01.08.2020թ.; artsakh.news, 02.08.2020թ.: Հրապարակվել է նաեւ davitmatevosyan.com կայքում «Պատասխան Վահրամին» վերնագրով:*



...3. Սույն հոդվածի իմաստով՝ առերեւույթ առկա է մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար խախտում, եթե՝ 1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը» (ուղիղ մեջբերում):

Ո՛չ մի խոսք նոր երեւան եկած հանգամանքի մասին: Կարծում եմ, Մարտի մեկի մյուս բողոքներով ես Վճռաբեկ դատարանի արդարացման դատավճիռների հիմքում դրված է իրավունքի խախտման հանգամանքը: Եւ կարծես նոր երեւան եկած հանգամանքների դեպքում գործն ուղարկվում է առաջին ատյան՝ նոր դատաքննության:

# ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՁԱԿ
# ՆԱՄԱԿՆԵՐ

# ՍԿԻԶԲ
## (ինչպես որ եղել է)

### Նախաբան

*Գիշերային քարուքանդ ճանապարհը երկար-երկար էր: Գուցե նաև այն պատճառով, որ Երևանից Մեղրի անցա թվացյալ ամայության միջով, միայնակ ճեղքելով թանձր մթությունը: Հայրենիքը շրջափակման մեջ էր: Վառելիքի բացակայության պատճառով շարժվող մեքենաներ հազվադեպ էին հանդիպում՝ անգամ ցերեկով: Մթության մեջ բնակավայրերն աննկատ էին մնում էներգետիկ ճգնաժամի պատճառով: Նրանց գոյության մասին ավելի շատ իմանում էի չխնամված ու կրակոցներից ծակծկված ճանապարհային նշաններից: Դա, իհարկե, ոչ թե պատերազմի, այլ շատերի ինքնահաստատման հետևանք էր: Տուն հասա գիշերվա ժամը չորսին: Հոգնած էի, աչքերս փակվում էին: Մերոնք՝ հակառակ մշտական հորդորներիս, չէին քնել, սպասում էին՝ ինչպես միշտ: Առաջարկեցին անվել, հրաժարվեցի: Խնդրեցի, որ ինձ առավոտյան արթնացնեն ժամը 8-ին: Մայրս անվստահ հայացքով նայեց ինձ ու ասաց, որ նախորդ օրը ծագումով մեղրեցի, սովետական շարքային մի գրող տասնյակ անգամ զանգահարել ու ցանկացել է ինձ հետ խոսել: Իմանալով, որ Երևանից վերադառնալու եմ, ասել է, որ առավոտյան շուտ կզանգի:*

*– Բայց շա՜տ աներես մարդ է երևում, որ մինչ այդ զանգի՝ ինչ անեմ: Խնայիր որդուդ,– ասացի:*

*Առավոտյան ժամը 7-ին մայրս ձայն տվեց: Դժվարությամբ արթնացա:*

*– Աներեսը համառում է, ոչինչ չի ուզում ընկալել, գուցե խոսես, պրծնենք սրանից,– ասաց նա:*

*Մորս խնայելու մղումով վերցրի հեռախոսը:*

*– Ես չգիտեի, որ դու էլ ես այդ հերոսական դրվագներին մասնակցել, երեկ եմ իմացել,– ասաց:*

*– Հետո՞,– արձագանքեցի:*

*– Լսել եմ, որ այդ թեմաներով նշումներ ունես արած: Ես հիմա գիրք եմ գրում այդ մասին, ե՞րբ հանդիպենք՝ վերցնեմ քո նշումները, որ օգտագործեմ,– գործն արդեն գլուխ բերածի վստահությամբ հարցրեց նա:*

*– Ձե՛մ տա,– չոր պատասխանեցի:*

*– Ինչպե՞ս թե՝ չե՛ս տա, պահում ես, որ ինչ անես,– մերժվածի չարությամբ հարցրեց նա:*

*– Լսի՛ր ինձ ուշադիր: Քո ասած ժամանակաշրջանը դեռ ընթացքի մեջ է, օբյեկտիվ չէ, ավելին՝ ամոթ է այդ մասին հիմա գիրք գրելը: Իսկ նշումներ արել եմ, որ չմոռանամ: Մի 25–30 տարի հետո, եթե ողջ լինեմ, կարողանամ սառը դատողությամբ վերլուծել ու շարադրել ամենը՝ ինչպես որ եղել է, որպեսզի իմ երեխաներն ու նրանց սերնդակիցները իմանան ճշմարտությունը: Վերջ, այս թեման փակվա՛ծ է,– ասացի, դրեցի լսափողը ու քնեցի: Նա տպագրեց այդ գիրքը, որը ես չեմ տեսել ու, բնականաբար, չեմ կարդացել:*

*Բայց եկել է ժամանակը իմ մասով ու չափով հաշվետու լինելու զավակներիս ու այլուս պատասխանատվություն ստանձնած նրանց սերնդակիցներին: Միայն թե՝ ամենը շիտակ ու օբյեկտիվ:*

* * *

Հանգամանքների բերումով զրոսաշրջիկի կարգավիճակով 1987թ. դեկտեմբերի վերջին մեկնել էի Բուլղարիա: Խումբը գլխավորում էր ընկերս՝ Վաղոն: Մեծ հաշվով, մեզանից բացի, խմբի հետաքրքրության շրջանակը խիստ նեղ էր՝ միայն առեստուր: Նրանք իրենց ազատ ժամանակը վատնում էին հետները քարշ տված ծանր ճամպրուկների պարունակությունը իրացնելու վրա:

Երկուսով բուլղարահայերի հետ շփվելու որոնումների մեջ էինք: Առաջին շփումները հիասթափեցնող էին, հոգեհարազատության նշույլ անգամ չկար, կամ՝ կեղծ էր: Մի օր խմբավարը, որը տեղյակ էր մեր որոնումներից, ասաց, որ ինքն ունի մի պատկառելի հայ հարևան, որին տեղեկացրել է մեր մասին, և վերջինս պատրաստակամություն է հայտնել երեկոյան մեզ ընդունել իր տանը...



Հանելի և իմաստալից հանդիպում էր: Տանտերը, որ 55–60 տարեկան լրջախոհ, գրագետ ու մտահոգ տղամարդ էր՝ մեզ անակնկալ մատուցեց՝ ասելով, թե շուտով Ղարաբաղը կմիանա Հայաստանին, որ այդպես է խոստացել Միխայիլ Գորբաչովը: Տեղեկության լրջությունը գնահատելու նպատակով հնչեցված բոլոր հարցերը շրջանցեց խորհրդավորությամբ: Միայն ասաց, որ լուրը հստակ է, և որ խնդիրը կլուծվի երկու ամսվա ընթացքում: Մենք սրա մասին առաջին անգամ լինի՞ լսում...

...1988թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդի նստաշրջանը ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան որոշում ընդունեց. Մարզխորհուրդը դիմեց ադրբեջանական ԽՍՀ, հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ գերագույն խորհուրդներին՝ մարզն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու առաջարկությամբ: Հենց այդ օրը դարձավ երևանյան բազմահազարանոց հանրահավաքների մեկնարկի սկիզբը:

Ադրբեջանը սրան պատասխանեց 1988թ. փետրվարի 27–29-ի Սումգայիթի հայ ազգաբնակչության ջարդերով ու տեղահանությամբ:

Երևանն ալեկոծվում էր, ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ սկսված էր...

Շարժումը տարածվեց Հայաստանով մեկ, բնականաբար՝ հասնելով նաև հեռավոր Մեղրի: Արկածախնդրության պակաս չէր զգացվում, կոմունիստական իշխանության պատասխանատուները չգիտեին ինչ անել, կարկամել էին: Հիշում եմ, շրջկենտրոնի վարչական շենքի դիմաց՝ վիթխարի սոսիների տակ Մեղրիի համար արտառոց բազմություն էր հավաքվել: Հստակ օրակարգ չկար: Հանկարծ մեկը մոտեցավ ազատ բարձրախոսին և դեմքի մտահոգ արտահայտությամբ բացականչեց. «Ժողովո՛ւրդ, առաջարկում եմ բոլորով պպզել (կքանստել)»: Ու բոլորը կքանստեցին...

Ժողովուրդը հանապարհ ուներ գնալու: Ժողովուրդը հանապարհ էր ընկել: Ժողովուրդն արկածախնդրությունից զերծ, խիզախ ու գրագետ առաջնորդների կարիք ուներ:

Հրապարակում հավաքված, ցասումով լի ու ընդհանուր հայտարար ունեցող բազմահազար մարդիկ, որ այլևս վերածվել էին ազատատենչ ժողովրդի, խայտաբղետ առաջնորդացու թեւերից նախապատվությունը տվեց 11 հոգուց բաղկացած այն խմբին, որը տվյալ՝ խիստ փակուղային իրավիճակում Ղարաբաղի համար պայքարը շարունակելու հնարա-

վորությունը տեսնում էր ժողովրդավարական խնդիրների համար պայքարի համատեքստում: Համեմատելու համար ընդգծենք, որ «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիր Իգոր Մուրադյանը՝ այդ նույն իրավիճակում, իրեւ լուծում՝ ժողովրդին կոչ արեց բենզինով լցված շշերով ու երկաթյա ձողերով հարձակվել Նախիջեւանի վրա:

Մայիսին ըմբոստացած շիտակ մարդկային բազմությունից ծնվեց «Ղարաբաղ» կոմիտեն, որը գլխավորեց հայ ժողովրդի պայքարը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու համար թափ առնող Ղարաբաղյան շարժումը:

## Ինքնապաշտպանություն եւ զենք-զինամթերքի որոնումներ

Սումգայիթի ոճրագործությունից հետո հեռանկարը մշուշոտ էր: Իրավիճակից թելադրված՝ «Ղարաբաղ» կոմիտեն կոչ արեց զինվել եւ նախապատրաստվել ինքնապաշտպանության: Կարեւեանի ինքնապաշտպանության կազմակերպիչը ես էի: Այն ժամանակ 28 տարեկան էի ու գյուղի սովխոզի դիրեկտորը: Հարթափող որսորդական հրացաններ, ինքնաշեն նռնակներ, բնակավայրի շուրջ զիշերային հերթապահություն: Զգիտես ինչու, հարձակում էինք սպասում հենց սարի կողմից ու հատկապես գիշերով: Մեկ օրվա մեջ Ղետնդ Հովհաննիսյանի հետ գնացել ենք Երեւան ու վերադարձել: Ճանապարհը՝ 1500 մետրից բարձր, գրեթե անթափանց խիտ մառախուղով էր պատված, բայց նպատակը տանում էր: Ավտոմատ էին խոստացել, սուտ դուրս եկավ՝ խաբեցին: Գոնե կարողացանք «Գրողների միությունից» եւ Աբովյանից զինվորական շինելներ ու բավականաչափ որսորդական զինամթերք ձեռք բերել: Գյուղի զենք ունեցող տղաների պարկուները լցվեցին:

Շտարն իմ աշխատասենյակն էր: Երեկոյան երիտասարդներով հավաքվում էինք այնտեղ ու մնում մինչեւ կեսգիշեր: Երկու-երեք հոգի մեր տնից ստանում էին զենքերն ու շինելները եւ գնում գիշերային հերթափոխի: Լսողությունները լարած՝ գիշերն անցկացնում էին գյուղից բարձր գտնվող հեռուստաաշտարակի մատույցներում, հերթով հանգստանալով ու տաքանալով աշտարակի հերթապահի սենյակում: Երկու հոգի մնում էին շտաբում, ուր տեղադրված էր տագնապ ազդարարող սարքի կոճակը:



Ագարակում ու Մեղրիում մի քանի խմբեր կային, որոնք իրենց բնակության վայրերում նույնն էին անում, ինչ որ մենք, եւ միաժամանակ՝ միմյանց հետ գլխավորը դառնալու մրցակցության մեջ էին: Քանի որ, այնուամենայնիվ, խորհրդային կարգեր էին, եւ նույնիսկ վատ զինված խմբի գոյությունն օրենքից դուրս էր, ուստի բնական էր, որ այդ խմբերի գոյությունը ողողակված խրախուսվում էր շրջանի կոմունիստական վերնախավի կողմից: Իսկ առանձին պաշտոնյաներ հովանավորում էին առանձին խմբերի:

Զենքի ու զինամթերքի որոնումները համատարած էին ու դարձել էին կյանքի առաջնահերթություն: Պապիս եղբայրը՝ ակադեմիկոս Արտաշես Մաթեւոսյանը, իրավիճակի թելադրանքով մի գաղտնիք բացեց, որը, սակայն, իր ասելով՝ որոշել էր գերեզման տանել: Նկարագրեց ժայռածերպերում պահված պապիս պատկանած մարտական զենքի տեղը: Երկու օրվա որոնումների արդյունքում գտա՝ հրաշալի պահպանված: Ամեն մի գտած զենք ոգի էր կազդուրում եւ ուրվագծվող պատերազմի հաղթական ավարտ ներշնչում:

Մեղրիում էր գտնվում «Սասուն» անունով զինված մի ջոկատ՝ օգնության էր եկել: Ջոկատի հրամանատարը Աֆոն էր (Ալֆրեդ Ներսիսյան): Մի օր դատախազն ինձ հանդիպեց ու ասաց, որ ինչ-որ մարդիկ ուզում են Իրանից զենք բերել, բայց չգիտեն՝ սահմանով ինչպես անցկացնել: Հաշվի առնելով որ ես աշխատանքի բերումով երկաթե վարագույր սահմանը հատելու ու Արմսին մոտենալու իրավունք ունեի՝ հարցնում էր, թե արդյոք կարող եմ կազմակերպել:

– Զգիտեմ,– ասացի,– նրանց հանդիպելուց հետո կարող եմ ասել:

Հանդիպեցինք: Աֆոն ու բուլղարահայ գրող Սեդա Սեւանն էին: Իմ մեքենայով տարա ու ցույց տվեցի սահմանի այն հատվածը, որով հնարավոր էր անցկացնել: Պայմանավորվեցինք, որ ես նրանց քարտեզ եմ ուղարկում այդ հատվածի նշագծումով եւ այդ հատվածի լուսանկարը՝ զենքերը դնելու տեղի նշումով: Ես հանձն առա զենքերը նշագծված կետ հասցնելու դեպքում՝ դրանց դուրսբերումը երկշերտ երկաթե վարագույրից, իսկ նրանք՝ իմ հորդորով խոստացան բոլորին ասել, որ ես անհնարին եմ համարել այդ նախագծի իրագործումը: Ես իմ խոստումը կատարեցի, տարածքի լուսանկարիչն Արմեն Ավետիսյանն էր, հետագայում՝ տեւական ժամանակ մեր գյուղի գյուղապետը: Սեդան մեկ անգամ էլ

եկավ Մեղրի՝ հավաստիանալու համար, որ սահմանի անցկացումը երաշխավորված է: Ես իմ մեքենայով նրան Երեւան տարա: Հետագայում նա Բուլղարիայում Հայաստանի դեսպանը դարձավ եւ մի պատահական հանդիպման ժամանակ ասաց. «Ես համոզված էի, որ այդ գործը գլուխ չի գալու, որովհետեւ դաշնակները հայրենիքն ընդամենը խոսքով են սիրում: Եթե մենք չերաշխավորեինք սահմանով անցկացնելը, ապա ձախողման պատճառը դա էր համարվելու»[39]:

## Տեղահանություն

Ղարաբաղյան շարժման սկզբին Մեղրիում ադրբեջանաբնակ էին Նյուվադի, Ալդարա, Վարդանիձոր, Մարալզամի գյուղերն ամբողջությամբ, Լեհվազ գյուղը՝ մասնակի (գյուղով անցնող գետակի աջակողմյան հատվածը): Ադրբեջանցիներ էին ապրում նաեւ «Կարենեան» (Ագարակ) կայարանի մերձակայքում՝ կայարանից դեպի Մեղրի երկաթգծի ու ավտոճանապարհի միջակայքում՝ փայտաշեն խրճիթներում, որը բնակավայր չէր համարվում եւ անուն չուներ: Շվանիձորի եւ Ալդարայի կայարաններում էլ էին ապրում մի քանի ընտանիքներ: Կայարաններում նրանց ներկայությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Մեղրիով անցնող երկաթուղին ենթակա էր ոչ թե Հայաստանի երկաթուղու վարչությանը, այլ Ադրբեջանի: Ընդհանուր հաշվով, շրջանի ազգաբնակչության շուրջ 25%-ն ադրբեջանցի էր: Շրջանի գրեթե բոլոր տնտեսությունների կթվոր-անասնապահները ես ժամանակավոր բնակվող ադրբեջանցիներ էին՝ մեծամասամբ Լաչինից, որովհետեւ հայերն այդ աշխատանքից ուղղակի հրաժարվում էին:

Սումգայիթի ջարդերն առիթ դարձան պատասխան գործողությունների: Սկսվեցին ադրբեջանցիների տեղահանությունները նաեւ Մեղրիում: Առաջին թիրախը «Կարենեան» կայարանի հարեւանությամբ՝ ինքնաշեն, փայտաշեն, ապօրինի շինություններ հանդիսացող տնակներում բնակվող ադրբեջանցիներն էին, որոնց ներկայությունն, ըստ էության, ապօրինի էր: Նրանք, առանց բացառության, հաշվառված էին Ադրբեջանում, իսկ

[39] *Քիչ անց մի այլ առիթով Դավիթ Մաթեւոսյանն ասում է, որ այդ նախաձեռնությունը չէր հաջողվել (խմբգ.):*



սովետում հաշվառումը համարվում էր «օրինականության» սրբություն սրբոցը՝ ազատ տեղաշարժի սահմանափակման գլխավոր լծակը: Տվյալ բնակավայրում հայտնված, սակայն հաշվառում չունեցող անձն ընկալվում էր որպես կասկածելի՝ համարյա հանցագործ: Ահա եւ այս հանգամանքից ելնելով էլ, տեղի դեռ սովետական իշխանությունները՝ համազգային պահանջի ազդեցությամբ գնահատելով այդ տարածքի «հակասանիտարական ու համաճարակածին» բնույթը, ինքնապաշտպանական խմբերի ուղեկցությամբ առաջարկեցին ապօրինի բնակիչներին՝ առաջադրված ժամանակահատվածում ազատել տարածքը, վերադառնալ հիմնական բնակության վայրեր եւ հնարավորություն տալ իրականացնելու սանիտարական միջոցառումներ: Բնակիչները թեւ հավաքել էին իրերը, սակայն համառում էին ու չէին հեռանում: Ակտիվիստներից մեկը գտավ երբ՝ վառեց եզրի անբնակ ու խարխուլ խրճիթներից մեկը, որով եւ ազդարարվեց նրանց մեկնելու անխուսափելիությունը: Բնակիչներ միանգամից լցվեցին գնացքը եւ ընթացքից տեսան, թե ինչպես քամին ակտիվորեն տարածեց կրակը, եւ հաշված ռոպեների ընթացքում փայտաշեն բնակատեղին վերածվեց մոխրակույտի: Սանիտարական խնդիրը լուծված էր...

Մյուս գյուղերի համար, բնականաբար, սանիտարական այս մարումն անազանգ էր:

Նրանք գիտակցում էին, որ վաղ թե ուշ պետք է հեռանան եւ հավանաբար՝ որքան շուտ, այնքան անվտանգ: Շրջանի իշխանությունները, որ իրենց վարքագծով փորձում էին դուր գալ նաեւ հրապարակում ծնունդ առնող ապագա իշխանությանը, շատ հմուտ գործեցին: Խմբերի միջոցով անընդհատ խտացնում էին օդում կախված սպառնալիքը, սակայն իրենց պատասխանատվության տարածքում բռնություն թույլ չէին տալիս: 1988թ. նոյեմբեր-դեկտեմբերին Մարալզամի, Վարդանիձոր, Լեհվազ եւ Ալդարա գյուղերի ադրբեջանցի բնակիչներն՝ ունեցվածքով հանդերձ, հեռացել էին: Հետագայում նրանց հնարավորություն տրվեց ետ գալու եւ ավարտին հասցնելու իրենց անշարժ գույքի փոխանակման կամ վաճառքի գործառույթը: Ողջ Հայաստանում մնաց միայն Նյուվադին՝ ամենամեծ ու սահմանամերձ ադրբեջանաբնակ գյուղը, որին իր պաշտպանության տակ առավ սովետական կենտրոնական իշխանությունը:

Հ.Գ. Վերջնականապես Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու շրջանում՝ 1828 թվականին, արեւելյան Հայաստանի տարածքում բնակչության թիվը 120 հազար էր, որից հայերը 40 հազար էին: Հետագայում պետականորեն կազմակերպված հայերի ներգաղթի շնորհիվ (միայն Իրանից ներգաղթեց 30 000 հայ), 1890 թվականին հայերը հազիվ հասնեցին մեծամասնություն կազմելու սահմանագիծը:

Մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը՝ 20-րդ դարի սկիզբը, հայերն ու ադրբեջանցիներն իրականացրել են փոխադարձ էթնիկ զտումներ: Իսկ Առաջին Հանրապետության շրջանում դա բուռն թափ է ստացել: Որոշակի նկատառումներից կլինելով՝ սովետական իշխանությունների կողմից 1948–53 թթ. Հայաստանից տեղահանվել եւ հիմնականում Քուռ-Արաքսյան իջվածք է տեղափոխվել շուրջ 100 հազար ադրբեջանցի:

Անկախացած Հայաստանը փաստացի ծնվեց որպես ազգային պետություն՝ վերոշարադրյալ իրողությունների շնորհիվ, որոնցից, սակայն, ամենաէականն ու վերջնականը՝ խորհրդային իշխանության հոգեվարքի շրջանում հայ-ադրբեջանական փոխադարձ զտումներն էին:

## Կախաղան

Տեղաբնակ ադրբեջանցիների տեղահանությունը դարձել էր մրցակցային միջավայր Մեղրիի եւ Ագարակի ինքնապաշտպանական ջոկատների ու անհատների ինքնահաստատման համար:

Ինքնահաստատման մյուս միջավայրը գենի հայթայթումն էր: Խմբերից մեկը՝ ոչ առանց ներսի օժանդակության, ոստիկանության բաժնից հաջողեցրել էր դպրոցների ռազմագիտական ուսուցողական ավտոմատները վարպետ խառատների օժանդակությամբ վերականգնել ու դարձնել մարտական: Այս ամենն, իհարկե, գաղտնի էր պահվել: Մյուս խումբը տեղեկություն էր ստացել, թե, իբր, հիշյալ ավտոմատները ոստիկանությունը վաճառել է: Աննկական հետաքննությամբ պարզել էին, որ դրանք, իբր, «վաճառել է» ծագումով ղարաբաղցի կապիտան Վիգեն Ներսիսյանը, ու նրան հոչակել էին «ազգի դավաճան»: Զբաղարարվելով այսմանով՝ իրենց վերապահել էին դատական իշխանության լիազորություններ՝ վճիռ էին կայացրել եւ որոշել էին ի կատար ածել:



Քաղաքի կենտրոնի մեծ չինարի ծառի ճյուղից պարան էին գցել, մի ծայրը օղակել Վիգենի վզին, մյուսը կապել մեքենայի ետնամասին: Ոստիկանության աշխատողի հրապարակային կախաղանի տեսարան էին ցուցադրել, իսկ ոստիկանությունն ի զորու չէր կանխել այդ խայտառակությունը: Միայն ավտոմատները տարած խմբի տղաների թաքուն խոստովանության շնորհիվ «դահիճները» հետ կանգնեցին ավտոմատների անհետացման հետ որեւէ առնչություն չունեցող Վիգենին կախելու մտադրությունից:

Ջենքը՝ գենք, բայց գենքը պետք է նաեւ կրակեր, որ ինքնահաստատումն ամբողջանար...

Այդ առումով հիշատակման արժանի է երկու դեպք:

## Փիր

Փիր՝ պարսկերեն նշանակում է սրբատեղի: Լեհվազ գյուղի վարչական տարածքում՝ «Բուղամար» կոչվող վայրում, դեպի Նախիջեւան սահմանային լեռնազանգվածի ստորոտի գեղատեսիլ մի բացատում էր գտնվում այդ սրբավայրը:

Փիրը, ըստ երեւույթին, հարգանք վայելող, ճգնավոր, կուսակրոն հոգեւորականի գերեզմանի վրա կառուցված շինություն էր, գուցեեւ՝ դամբարան: Թե ով եւ երվանից է այդտեղ թաղված՝ չեմ կարող ասել: Ինչեւէ, այդ կառույցը տարածաշրջանի հավատացյալ ադրբեջանցիների հոչակավոր սրբատեղին էր: Նախիջեւանի կողմից այնտեղ գալիս էին ոտքով, լեռնային դժվարանցանելի կածաններով՝ հաղթահարելով մոտ 3000 մետր բարձրությամբ լեռնանցքն՝ անցնելով մի 25–30 կմ նանապարհ: Գալիս էին ոտաբոբիկ, համենայն դեպս՝ այդպես էին տեղ հասնում: Գիշերակացի համար պայմաններ էին ստեղծել, ուր եւ գիշերում էին ու վերադառնում հաջորդ օրը:

Աշնանը, հավանաբար՝ իմամ Հուսեինի հիշատակի օրը, որ հայտնի է իբրեւ «Շահսեյ-վախսեյ», մոտ 1000 հավատացյալ էր լինում Փիրում: Մի մասը ոտքով էր գալիս, մի մասը՝ գնացքով ու մեքենաներով: Այդ թեման մշտապես քննարկման առարկա էր շրջանի կուսակցական վերնախավի համար: Իրեւ աթեիստներ՝ հավատարիմ կուսակցության որդեգրած կուրսին, ուխտագնացությունն արգելող որոշումներ էին կայացնում,

ոստիկանական շուրջօրյա հսկողությամբ արգելափակոցներ էին տեղակայում, կուտակումներ էին առաջանում: Հետո իսլամական պաշտամունքի սպասավոր մոլլան անձամբ հանդիպում ու առանձնազրույց էր ունենում կուսակցության շրջկոմի քարտուղարի հետ ու... բոլոր ուխտավորները հասնում էին Փիր:

Ահա եւ այդ խառնաշփոթ իրավիճակում ինքնահաստատվելու ու հայրենասեր դառնալու ավելի հարմար թիրախ, քան Փիրն էր, դժվար էր գտնել: Խմբերից մեկը պայթեցրեց Փիրն ու փառավորվեց: Իհարկե՝ շրջանի ղեկավարության գիտությամբ: Պատրույգը վառել էր Ստրաֆիլաց Սեյրանը (Սեյրանը խառնածին էր. հայրն ադրբեջանցի էր, մայրը՝ հայ)՝ կամավոր, իր ցանկությամբ:

Կիարժեք հայ դառնալու բարդույթը հաղթահարելու ցուցադրություն...

Բայց իսլամ դավանողներն այս դեպքը չպիտի համարեն խտրականություն: Եթե Փիրը ոչնչացվեց կոմունիստական իշխանության մայրամուտին, ապա Կարենեանի վարչական տարածքում գտնվող «Մեծ խաչ» կամ «Նուխուդի Սուրբ Հովհաննես» հռչակավոր սրբատեղին հիմնահատակ քանդեցին կոմունիստական իշխանության արշալույսին՝ Կարենեանի կոլխոզի հիմնադիր նախագահ Ջավադ Կեռիի (Եգոր Գլումովի հոր պապի՝ Գևորգի) գլխավորությամբ: Կոմունիստ ակտիվիստները դա քանդեցին շինափայտը կոլխոզի կարիքների համար օգտագործելու հիմնավորմամբ:

## Դիվերսիա

Փիրի պայթեցումից հետո, մեկ այլ խումբ որոշեց կատարել ավելի ծանրակշիռ, բայց թույլատրելի մի գործողություն: Շրջանի տարածքում հարմար նախագիծ չգտնելով՝ շրջկոմի քարտուղարի թույլտվությամբ ընդլայնեցին աշխարհագրությունը: Ձինված խումբն անցավ Կապանի շրջան, Կարմրաքարից կլ անցավ եւ դարանակալեց անտառում՝ Ջայզամի կոչվող վայրում գտնվող ադրբեջանցիների կովերի ֆերմայի ճանապարհի մատույցներում: Սառնաարտոռեն գնդակոծեցին ֆերմայի ուղղությամբ գնացող մեքենան, որի մեջ կթվորուհիներ ու անասնապահներ էին: Վերադարձին Կապան չհասած՝ մտան մի ճաշարան սնվելու: Բնականաբար, այս ամենն անհետ չէր մնացել, եւ Կապանում աղմուկ էր բարձրացել: Ճաշարան հասան նաեւ Կապանի ինքնապաշտպանական խմբի տղաները, որոնք մեղրեցիներին մեղադրեցին իրենց պատասխանատվության տարածքում գործողություն կատարելու համար: Լուրջ ընդհարում եղավ, ձեռնամարտի բռնվեցին, կապանցիների ջոկատի ղեկավարի գլուխը պատռվեց, արյուն հոսեց, բայց բանը զենքի գործադրման չհասավ. հարգեցին միմյանց հայ լինելու փաստը:

## Երկաթուղի

Արաքսի ամբողջ երկայնքով ձգվում էր երկաթուղին՝ Երեւանից Բաքու, այնտեղից՝ Ռուսաստան–Եւրոպա, Ջուլֆայով Իրան, Երեւանից Թիֆլիս–Ռուսաստան, Դյումրիով Կարս: Երկաթուղու Մեղրիով անցնող նյուղը, փոքր բեռության հաշվին, ապահովում էր մեծ բեռնաշրջանառություն, շարժակազմի վագոնների թիվը հասնում էր 75-ի: Յուրաքանչյուր վագոնի բեռնատարողությունը՝ 50 տոննա: Միջին հաշվով, Երեւանի ուղղությամբ օրական անցնում էր 20–23 շարժակազմ: Երկաթուղին կառուցվել էր ցարական կարգերի ժամանակաշրջանում, սակայն Ջուլֆա–Մինջեւան հատվածը բոլշեւիկյան հեղափոխության հետեւանքով մնացել էր անավարտ: Այդ հատվածը շահագործման է հանձնվել երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1943 թվականին եւ եղել է Իրանի տարածքով ՍՍՀՄ-ին տրված ամերիկյան օգնությունը փոխադրելու հիմնական ճանապարհներից մեկը:

Այսպես մանրամասնեցի, քանի որ հիմա այդ երկաթուղին Մեղրիում եւ ազատագրված տարածքներում գոյություն չունի: Հորադիզ–Մինջեւան հատվածը քանդվել է 95–96 թվականներին՝ Ղարաբաղի իշխանությունների նախաձեռնությամբ, իսկ Մեղրին Մինջեւանով Կապանին միացնող հատվածը 2003թ.՝ Ռոբերտ Քոչարյանի նախագահական ցուցումով (տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյան):

Ղարաբաղյան շարժման շրջանում վերոհիշյալ խմբերի ներկայացուցիչները՝ հատկապես Ազարակում ձեւավորված Շարժման հարթակից շատ հաճախ հրապարակային հայտարարում էին, որ իրենք գնալու են պայթեցնեն երկաթուղու թունելը: Այսպես լինում էր հատկապես Ադրբեջանից հայերի նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հերթական լուրի տեղ հասնելուց հետո: Այս մարդիկ եւ նրանց այդպիսի ցուցում

տվողներ ենթագիտակցաբար երկաթուղին համարում էին Ադրբեջանինը: Նրանց վրա սթափ մարդիկ կարողանում էին ազդեցություն գործել, եւ վերջիններս բավարարվում էին գիծը փակելով, ասենք՝ մի մեքենա հող լցնելով: Այնուամենայնիվ, պայթեցման մի փորձ եղավ: Մի երիտասարդ երկաթուղու շրթող կամրջակի հենձանների տակ ժամային մեխանիզմով պայթուցիկ սարք էր տեղադրել: Պայթյունի նախատեսված ժամից տեւական ժամանակ էր անցել, երիտասարդը վերադարձել էր, որ վերացնի հնարավոր անսարքությունը, ու տեղ էր հասել պայթյունի պահին: Տեղում մահացել էր: Կամրջակն առանձնապես չէր վնասվել, բայց ապահովության համար հենձանները շատ արագ փոխեցին:

Երկաթուղու նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգությունից անմիջապես հետո Մեղրիում էր հայտնվում ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանը[40]: Նրա շարունակական այցելությունների արդյունքը հավանաբար չբավարարեց Կենտրոնին, եւ երկաթուղու Մեղրիի հատվածի հսկողությունը ռազմականացվեց Երեւանի մայրաքաղաքային գնդի միջոցով: Բոլոր կայարանները, կիսակայարանները, թունելները, շրթող կամրջակները, հենապատերը, բետոնե կիսաբաց սրահները մշտական զինված հսկողության տակ էին: Ամբողջ երկաթուղին տեսադաշտում պահելու անհրաժեշտությունից կլինելով՝ մի կրակոց հեռավորությամբ տեղակայվում էին միջանկյալ պահակակետեր: Այս ամենն ուժեղացված էր շոշ զրահամեքենաներով:

«Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամների կալանավորումից հետո (1988թ. դեկտեմբեր) Մեղրիում հայտնվեցին մոսկովյան քննիչներ եւ ոստիկանության բաժնում նստած սկսեցին քննել տարբեր մարդկանց՝ հատկապես երկաթուղուն առնչվող հարցերով: Նրանք որեւէ հաջողություն չունեցան եւ դեռ ավելին՝ հայտնվեցին հուսահատ վիճակում: Ղեւոնդ Հովհաննիսյանը, որ հանախ էր հանդիպում ինձ հետ, հերթական անգամ քննության կանչվելուց հետո պատմել է հետեւյալը. զգալով, որ քննիչները հուսահատված են՝ ի պատասխան ռուսերեն հնչած հարցի, հայերեն աղմուկ է բարձրացնում՝ ասելով. «Էդ ո՞ւմ ես հայհոյում, ո՞ւմ մորն

[40] *Վլադիմիր Մովսիսյանը ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար է եղել 1990թ. ապրիլից մինչեւ հոկտեմբեր, մինչ այդ գլխավորել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալի պաշտոնը (խմբգ.):*



ես հայհոյում, ես քո մերը...», ու քննիչի վրա է նետում մոխրամանը: Միջադեպին ներկա հայ ոստիկանները պատմում էին, որ Ղեւոնդի հեռանալուց հետո նրա աղմուկի թարգմանությունը լսած ռուս քննիչներն արդարանում էին՝ երդվելով, որ իրենք չեն հայհոյել: Մի կարճ ժամանակ անց քննություն կատարողները Մեղրիից ընդմիշտ հեռացան: Քաղաքական որոշումը կայացված էր, Շարժման ղեկավար կազմն ազատ արձակվեց:

## Իշխանությունը փողոցում

Կոմունիստական իշխանությունը հոգեվարքի մեջ էր: Ներկուսակցական ինտրիգները տեսանելի էին ամենուր: Կոմկուսի շրջկոմի պլենումի նախօրեին՝ շարքային մեկը բարձրացավ Ազարակ քաղաքում գործող Շարժման հարթակ եւ հայտարարեց. «Ես առաջարկում եմ, որ մեր ռայկոմի քարտուղարը լինի ներկայիս երկրորդ քարտուղարը՝ մեր հայրենակիցը»: Հրապարակում հավաքվածները ծափահարություններով շնորհավորում են այդտեղ ներկա՝ շփոթված, երկարահասակ երկրորդ քարտուղարին: Նույն պահին՝ կարծես գետնի տակից ծլում է շրջկոմի գործող կարճահասակ քարտուղարը...

Շրջկոմի պլենումի ընթացքում փակ գաղտնի քվեարկությամբ որոշվում էր բյուրոյի կազմը, ապա նրանցից՝ շրջկոմի քարտուղարները: Բյուրոյի անդամության թեկնածու, տեղացի, երկարահասակ երկրորդ քարտուղարը անհրաժեշտ ձայներ չհավաքեց եւ անգամ բյուրոյի անդամ չդարձավ:

Երկաթուղու անվտանգությունն ապահովող կառույցի գլխավոր գտնվում էր Ադրբեջանում, մինչդեռ դա ստորաբաժանումներ ուներ Մեղրիում, որոնց տեղացիներն անվանում էին «գարնիզոն»: Այդ գարնիզոններում էին պահպանվում երկաթուղու անվտանգությունը կազմակերպելու համար նախատեսված զենքերը: Ազգամիջյան բախումների հավանականությամբ պայմանավորված՝ Մոսկվայից հանձնարարել էին, որ գարնիզոններում պահվող զենքերը ոստիկանության միջոցով հավաքեն եւ ուղարկեն կենտրոն: Մեղրիի ոստիկանությունն էլ կատարել էր հրամանը. գարնիզոնի ողջ զինանոցը՝ շուրջ 70 միավոր զենք, վերցրել ու 1990թ. հուլիսին ուղարկել էին Երեւան: Դրանք բառոյապես մաշված, հին մոդե-

լի զենքեր էին, հիմնականում ՊՊՇ ավտոմատներ եւ նագան ատրճանակներ: Այս փաստը հայտնի էր դարձել այլեւս «վաստակ» ունեցող խմբերից մեկին: Սրանք գնացել ու ներխուժել էին ոստիկանության բաժին, մի թղթե պարկ ցեմենտ դրել հերթապահ մասում, ասել, որ ամոնիտ է, միացրել էլեկտրական պայթուցիչը, լարերը ձգել շենքից դուրս մեքենայի մարտկոցի մոտ եւ պահանջում էին վերադարձնել ու իրենց հանձնել զարնիզոնից տարված զենքերը, իսկ բաժնի պետին հայրենիքի դավաճանության համար դատապարտել գնդակահարության: 1990թ. օգոստոսն էր, եւ Լեոն Տեր-Պետրոսյանն արդեն ընտրվել էր Գերագույն խորհրդի նախագահ: Տեր-Պետրոսյանը հեռախոսով անձամբ միացավ հերթապահ մաս, խոսեց ջոկատի համաղեկավարի հետ: Վերջինս զլխիկոր ու կարմրատակած լսեց ու ասաց, որ հասկացավ, բայց խնդրեց, որ նախագահը նույն բաներն ասի մյուս ղեկավարին ու լսափողը փոխանցեց նրան: «Լսում եմ քեզ, ինկեր Պետրոսյան»,– բառացի արձագանքեց վերջինս ու լուռ լսեց: Հետո հավամվեցին ու գնացին:

Հաջորդ օրը մեկ այլ ջոկատի հրամանատար հայտարարեց, թե ոստիկանությունը գրաված ջոկատի գործողությունները հրահրված են եղել ԿԳԲ-ից, եւ իր ջոկատով ներխուժեց ԿԳԲ-ի բաժանմունք: Նրանք էլ հակադարձեցին, որ ԿԳԲ ներխուժելու գործողությունը հրահրել է ոստիկանությունը...

## Փրկության ճանապարհը

Պատմությունից հայտնի է, որ Դավիթ Բեկի ժամանակաշրջանում Մեղրին արեւմուտքից պաշտպանող բանակը տեղակայված էր Կարճեւանի սարում: Արաքսի ափով Մեղրին Նախիջեւանին կապող ճանապարհը, Արաքս գետի կատաղի վարարումով պայմանավորված, ընդհատումներով էր գործում: Այդ պայմաններում ստրատեգիական նշանակություն ուներ սարով անցնող Կարճեւան–Քյոթամ արահետ-ճանապարհը, որն անցնում էր հետեւյալ տեղանուններով կոչվող վայրերով. Կարճեւան, Նեքի գաղիգ (ներքին բարձունք), Վոյի գաղիգ (վերին բարձունք), Ընգզի տակը (ընկուզենու տակ), Բանդար (դժվարանցանելի), Պաղանը քար (կարկանդակի քար), Գիրգիբե, Բերակ ջուր (բարակ ջուր), Թաք մախի (միայնակ գիհի), Նեքի գետի դրաղը (ստորին գետափ),



Վոնանի արխաջ (հետույքով ընկնելու վայրի փարախ), Գիրիզմոտ (գերեզմանոց), Դավթա շիտոռ (Դավիթի փոսորակ), Վոյի գետի դրաղը (վերին գետափ), Բաբան ախպուր (Բաբանի աղբյուր), Ցորտ ախպուր (սառն աղբյուր), Թրռ ջուր (բրու ջուր), Կաղց ախպուր (կաթնաղբյուր), Սով վղատեղ (սեւ հողատեղ), Աղբաբա քար (Աղբաբի քար), Զրխաչրխ (ծեզածեզ՝ անտառի ավարտ), Մուծ կալբեկ (մեծ կալատեղ՝ բացատ է), Փստեգ կալբեկ (փոքր կալատեղ), Վարդը քոլ (վարդի թուփ), Ջիրակն (ջրի աչք), Ելի յուրդ (քամոտ լեռնանցք), Գոռուտ (գերեզմանատեղ), Պահանակ (գերեզմանատուն), Քյոթամ: Այդ ճանապարհը Վոյի գետի դրաղում (վերին գետափ) հյուղավորվում էր եւ կրկին միանում Վարդը քոլում (վարդի թուփ)՝ անցնելով Կարճեւան գետակի ձախ ափով հետեւյալ վայրերով. Քրեչի, Կարմիր գիղեցի (կարմիր եկեղեցի), Լեշկարի տնարի (զորանոցներ), Մարութաց արխաջ (Մարությանների փարախ), Հանդ ախպուր (հանդ աղբյուր):

Լեշկար՝ պարսկերեն է, նշանակում է՝ բանակ: Լեշկարի տնարի՝ բանակի տներ՝ բանակատեղի, զորանոց: Հենց այստեղ է եղել Դավիթ Բեկի բանակի զորանոցը: Լեշկարի տնարին՝ գետակի ձախ ափին, արեւահայաց լանջի բլրակի գագաթի հարթությունն է, որտեղից երեւում է ողջ տարածքը: Նրանից քիչ ներքեւ՝ Կարմիր գիղեցից վեր, անտառի միջից հառնում է մի հպարտ լեռնազանգված: Կարմիր գիղեցին (եկեղեցի) իրականում կոչվում է Սուրբ Զորավոր, իսկ այնտեղ գերեզման կա:

Առաջին հանրապետության վախճանին՝ Օլթիի ավանտյուրայից հետո, 1920թ. աշնանը թուրքական բանակը մի շնչում Նախիջեւանով հասավ Մեղրիի սահմանագիծ: Եւ հենց վերոհիշյալ արահետ ճանապարհի Ելի յուրդ (քամոտ լեռնանցք)–Գյոռուտ (գերեզմանատեղի) հատվածում հանդիպեց Նժդեհի գլխավորած Կարճեւան–Կաքավաբերդ միացյալ ինքնապաշտպանական ուժերի համարձակ դիմադրությանն ու ետ շպրտվեց:

Այնպես որ՝ պատմության իմացությունը հուշում էր Կարճեւանից դեպի Նախիջեւանի սահմանագիծ սարով ճանապարհ կառուցելու անհրաժեշտությունը: Հատկապես որ Օրդուբադով նման գործող ճանապարհ կար, որը սպասարկում էր Գողթանասարի (սոյուղ) գագաթին տեղակայված սովետական բանակի հակաօդային պաշտպանության ռադիոլոկացիոն հզոր հենակետը:

Մեր կողմից բարձրադիր սահմանագիծ Խոշլի տանող ճանապարհի առաջին հատվածը կառուցվել էր 1975–76 թթ.՝ Կարճեւանից մինչեւ Վռնանի գաղիգ (ձորի կատարի հետնամասը), իսկ մինչեւ Փրեչ՝ 1980-ականների առաջին կեսին: Այս հատվածը կառուցվել է սովխոզի ֆերմայի կաթը մեքենայով տեղափոխելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Մինչ այդ անասնապահական ֆերմայի փոխադրումներն իրականացնում էին ձիերով ու ջորիներով:

Կարճեւանի սովխոզը ես ղեկավարում էի 1985 թվականից: Շատ էի շարչարվել ու կարողացել էի Կարճեւանի դուզի մելիորացիայի համար Երեւանից բերել հատուկ տեխնիկա, որի մեջ կար ճապոնական հզոր «Կամացու» ֆիրմայի բուլդոզեր: Այդ առիթն օգտագործելով, պայմանավորվեցի ջոկատի տնօրենի հետ՝ մելիորացիան ավարտելուց հետո շարունակել ճանապարհի կառուցումն այդ բուլդոզերով: Սակայն աշխատանքները դեռ չավարտված, ամենազոր ռայկոմի քարտուղարի կարգադրությամբ բուլդոզերը հատկացրին ճանապարհաշինական կազմակերպությանը, իսկ ինձ ստիպում էին ստորագրել դեռ չավարտված աշխատանքների ավարտական ակտը: Ես դիմադրում էի ու համառում: Հավանաբար, իմ նկատմամբ ունեցած ներքին համակրանքն էր պատճառը կամ փոխարինող չգտնելու հեռանկարը, որ ինձ չազատեցին աշխատանքից: Երկար համառելու ջանքերով կարողացա համոզել քարտուղարին, որ սարի ճանապարհը կառուցելու նպատակով տասն օրով տրամադրեն «Կամացուն»: Արդեն 1988 թվականն էր, նա կ գիտակցեց պոտենցիալ վտանգի հնարավորությունը եւ դրանով պայմանավորված՝ ճանապարհը շարունակելու անհրաժեշտությունը: Մինչեւ Փրեչ կառուցված ճանապարհն այնքան նեղ էր, որ «Կամացուն» չէր կարող առանց ճանապարհը բարելավելու առաջ շարժվել, ստիպված էինք այդ ամբողջ հատվածը լայնացնելով առաջ շարժվել: Ընդ որում, որոշ հատվածներում ամենազոր թվացող տեխնիկան ի զորու չէր մշակել կարծր ժայռերը, ստիպված էինք օգնել նրան՝ ժայռերը պայթեցնելով: Սասուն անունով թալինցի մեքենավարը լեռնային պայմաններում աշխատելու փորձ չուներ, վախենում էր: Նրան փորձ ու համարձակություն ներշնչելու նպատակով մեկ օրով հրավիրեցի կապանցի փորձառու մեքենավար Իլյային: Սասունը գիշերում էր մեր տանը: Լույսը չբացված, Սամվել Կարապետյանը մեզ ՈՒԱԶ-ով բարձրացնում էր սար, ու աշխատում էինք մինչեւ



մութն ընկնելը: Մի խոսքով, 10 օրում կարողացանք ճանապարհը հասցնել «Լեշկարի տնարի»: Թեեւ շարունակությունը հեշտ էր, որովհետեւ գրունտը փափուկ էր, եւ սովորական բուլդոզերով էլ էր հնարավոր շարունակել:

Մի օր ինքնապաշտպանական ջոկատներից մեկի հրամանատար Ղեւոնդ Հովհաննիսյանին, որն իմ դասընկերն էր, ասացի, որ արկածախնդրությամբ զբաղվելու փոխարեն հարկավոր է հետամուտ լինել եւ շարունակել ճանապարհը մինչեւ սահման: Նա, որ, ի տարբերություն մյուսների, բնականից օժտված էր պատասխանատվության գիտակցումով, շատ արագ ընկալեց ճանապարհի կարեւորությունը: Հարցը բարձրացվեց շրջանի ղեկավարության առաջ, քարտուղարը նույնն էր, եւ 1990-ի ամռանը ճանապարհը շարունակվեց մինչեւ Խոշլի՝ Սոյուղի հանդիպակաց գագաթը:

Խոշլիից մինչեւ Ռեյկա (բարձունք Նախիջեւանի տարածքում, ադրբեջանական արախամերձ հենակետերի թիկունքում, այդ հենակետերը բարձունքից պարզ տեսանելի են) ճանապարհահատվածը կառուցվել է 1992թ. ամռանը՝ Խոշլին կորցնելուց եւ նեւ վերցնելուց հետո, իմ անձնական նախաձեռնությամբ, հսկողությամբ ու ներկայությամբ՝ հակառակորդի ինտենսիվ կրակի տակ: Մեքենավարներն Արմոն ու Բորիկն էին, երկուսն էլ Կուրիս գյուղից:

Այդ ճանապարհը դարձավ Մեղրիի փրկության ճանապարհը, առանց որի դժվար կլիներ կազմակերպել պաշտպանությունը, հիմա էլ է պաշտպանական նշանակության ստրատեգիական ճանապարհ:

## Հատուկ գունդ

Զինված եւ կանոնադրային հարաբերությունից զուրկ ջոկատները հանրապետության ողջ տարածքում կարող էին շարիք դառնալ եւ խորացնել անիշխանությունը, եթե ճիշտ ժամանակին միջոցներ չձեռնարկվեին: Լեւոն Տեր-Պետրոսյանը Գերագույն խորհրդի նախագահ է ընտրվել 1990թ. օգոստոսի 4-ին: Վազգեն Մանուկյանը վարչապետ է դարձել օգոստոսի 13-ին: Արդեն օգոստոսի 21-ին կառավարությունը որոշում է ներքին գործերին առընթեր հատուկ ստորաբաժանումներ ստեղծելու մասին: Դա 800 հոգանոց հատուկ գունդն էր, որը ձեւավորվեց կամավորու-

թյան սկզբունքով, եւ արդեն հոկտեմբերի 5-ին նրանց երդման արարողությունն էր: Մեղրիից գնդում ներառվեցին 36 հոգի՝ Ղեւոնդի գլխավորությամբ եւ վերադարձան Մեղրի որպես վաշտ ու տեղակայվեցին Մեղրիի փոքր թաղում գտնվող շրջկոոպի նորակառույց վարչական շենքում: Վաշտի հրամանատարը թալինցի Լենդրոշ Տոնոյանն էր, տեղակալը՝ Ղեւոնդը: Հատուկ գնդում չընդգրկված մյուս ջոկատայինները Ղեւոնդի հասցեին պարբերաբար չարախոսել էին, դրա համար էլ նրան հրամանատար չէին նշանակել:

Բայցեւայնպես, հատուկ գնդում չընդգրկված ջոկատայիններն այլեւս օրենքից դուրս էին: Դրանով էր պայմանավորված հենց օգոստոսի վերջին ՀԱԲ-ի գինաթափումը:

Ամեն դեպքում ձեւավորվել էր մի կառույց, որը պատասխանատու էր շրջանի պաշտպանության համար: Իրավաբանորեն այդ վաշտը ոստիկանության ստորաբաժանում էր եւ կոչվում էր Մեղրիի ՆԳ բաժնի ՊՊԾ (պարեկապահակային ծառայություն) վաշտ: Այն նույն ոստիկանության, որի ներկայացուցչին փորձում էին կախել հրապարակի բարձր ծառից, կամ՝ որ երկու ամիս առաջ պայթեցնելու սպառնալիքով ներխուժել էին ջոկատայիները: Բնականաբար, ոստիկանապետի հետ նրանք համատեղելի չէին: Ղեւոնդ Հովհաննիսյանը պնդում էր ոստիկանապետի փոփոխությունը, իբրեւ ոստիկանապետ մատնացույց անելով տեղակալ Ռուբիկ Ստեփանյանին, եւ արդեն տեւական ժամանակ անձամբ էր շահագործում նրա անձնական օգտագործման մեքենան:

Որպես գյուղի ինքնապաշտպանության պատասխանատու՝ ես, բնականաբար, հաճախ էի լինում վաշտում, մասնակցում քննարկումներին: Իմ բոլոր առաջարկությունները մի առանձին ոգեւորությամբ էր ընդունում վաշտապետ Լենդրոշ Տոնոյանը: Նա միաժամանակ «Սասուն» ջոկատի հրամանատար Աֆոյի տեղակալն էր: Վերջինս ինձ գիտեր Սեւդա Սեւանի հետ Արաքսով զենք անցկացնելու չհաջողված նախաձեռնությունից: Մի օր էլ Լենդրոշն ասաց, որ Մեղրի է գալիս Գերագույն խորհրդի պաշտպանության ու ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Վազգեն Սարգսյանը եւ ցանկություն է հայտնել հանդիպել ինձ հետ: Ես առաջին անգամ էի հանդիպում Վազգենին: Ջրուցեցինք: Վազգենին ասացի, որ իր նկատմամբ իմ հարգալից վերաբերմունքը պայմանավորված է Հրանտ Մաթեւոսյանի գնահատականով: Վազգենի հանձնաժողովի նախագահ



դառնալուց հետո, պատգամավոր Հրանտ Մաթեւոսյանն ասել էր մոտավորապես հետեւյալը. «Քանի որ պաշտպանության հանձնաժողովի նախագահը իմ սիրած տղան՝ արձակագիր Վազգեն Սարգսյանն է, ապա ես հանգիստ եմ ու համոզված, որ պաշտպանությունը կկազմակերպվի ինչպես որ հարկն է»: Իմ պատմելուց Վազգենը հուզվեց: Ինձ թվաց, որ այդ մասին նա առաջինն ինձանից իմացավ: Շատ ոգեւորված էր, որ Վարպետը հրապարակավ իրեն այդքան բարձր է գնահատել: Դա նրան հավանաբար ավելի էր պարտավորեցնում:

Հետո Վազգենն ինձ միանգամից առաջարկեց ստանձնել ոստիկանապետի պարտականությունները: Անմիջապես մերժեցի՝ պարզաբանելով, որ այդ համակարգից գաղափար անգամ չունեմ: Վազգենը մեկնեց:

## Իշխանություն անիշխանության մեջ

Որպես սովխոզի տնօրեն՝ ինչ-որ առումով ես նանաչված էի Շարժման ղեկավարության կողմից: Նույն 1990 թվականի գարնանամուտին՝ հակառակ սովետական գաղափարախոսության, տնտեսության հողերը բաժանել էի ժողովրդին, իսկ դրա մասին Ազատության հրապարակում բարձրանայնել էր Վանո Սիրադեղյանը: Իհարկե, սա մի առանձին թեմա է: Բայց, հավանաբար, նաեւ այս հանգամանքն էր նպաստել, որ 1991թ. գարնանը Վազգենը կրկին այցելեց Մեղրի: Նրա այցն անակնկալ էր: Ինչ-որ մարդկանց հետ ուղիղ մեր տուն եկավ: Մինչ մերոնք հյուրասիրության պատրաստություն կտեսնեին, նա գրկեց փոքրիկ որդուս ու ինձ առաջարկեց առանձնանալ: Երեքով առանձնացանք:

Վազգենը որդուս գլուխը շոյելով տեւական ժամանակ լուռ ինձ էր նայում, ասելիքն էր ձեւակերպում: Հետո մի շնչում ասաց հետեւյալը. «Ես էլ պաշտպանությունից բան չեմ հասկանում էնպես, ինչպես դու ոստիկանությունից բան չես հասկանում: Բայց ես գիտակցաբար մտել եմ պատասխանատվության տակ, որովհետեւ էդ պատասխանատվությունը փողոցում անտեր գցած ա: Ես գիտեմ՝ դու պատասխանատվության գիտակցում ունես, եւ դա է կարեւորը: Ես մենակ ինչ կարող եմ անել: Ես ուզում եմ, որ մենք միասին վերցնենք այդ պատասխանատվությունը: Դրա համար դու պետք է կարգավիճակ ունենաս, էնպես՝ ինչպես ես ունեմ: Առանց կարգավիճակի պատասխանատվություն վերցնել չի լինի:

Մեղրին շատ կարեւոր է: Ես ուզում եմ, որ դու լինես Մեղրիի ոստիկանապետը, եւ քո հիմնական անելիքը՝ նախեւառաջ, պաշտպանության կայացմանն աջակցելը պիտի լինի: Ես խնդրում եմ, որ մենք հենց հիմա որոշում կայացնենք, ճիշտ որոշում»: Մենք երեքով կայացրինք Վազգենի առաջարկած որոշումը:

1991 թվականի ապրիլի 16-ի առավոտյան ժամը 10-ին պետք է ներկայանայի Ներքին գործերի նախարարի կադրերը սպասարկող տեղակալին: Պարտաճանաչ մտա ընդունարան ու ներկայացա: Հրահանգեցին սպասել: Երկար սպասեցի՝ մեկ-մեկուկես ժամ: Առաջին կես ժամից սկսած ներսումս սկսեց ափսոսանք սաղմնավորվել Վազգենին տված խոստմանս համար: Բոլոր առ բոլոր սաղմը մարմնավորվում էր, եւ երբ այլեւս սպասել էի շուրջ մեկուկես ժամ, եւ հիասթափությունս հասել էր գագաթնակետին, ընդունարանի պատասխանատուին ասացի, որ մեկնում եմ, ու դուրս եկա: Դեռ չէի լքել հարկաբաժնի միջանցքը՝ վերջինս ձայն տվեց, թե փոխնախարարն ինձ է սպասում: Ներս մտա: Դեմքի կեղծ խստությամբ վրաս նայելով՝ մի քանի անիմաստ հարց տվեց: Ես էլ ասացի, որ ես չեմ պայքարում ոստիկանապետ դառնալու համար, ուղղակի խոստացել եմ պատասխանատվություն վերցնել ու եկել եմ: Նա էլ իմ համարձակությունից ակնհայտ զարմացած՝ ասաց, որ ես կարող եմ գնալ, եւ որ իրենք որոշում կկայացնեն: Դուրս եկա, նստեցի մեքենայի ղեկին ու միանգամից ուղեւորվեցի Մեղրի: Եղանակն անբարենպաստ էր՝ անձրեւ ու մառախուղ, բայց, հավանաբար, մտքերով տարված կորցրել էի ժամանակի ու տարածության ընկալումը եւ սթափվեցի, երբ ոստիկանը կանգնեցրեց մեքենան: Որոտանի ոլորանների բարձրակետն էր, Երեւանից հեռացել էի շուրջ 260 կմ: Մինչ նա կմոտենար, մտածեցի, որ հիմա ասելու է, թե ճանապարհը վտանգավոր է եւ առաջարկելու է վերադառնալ ու գնալ Տաթեւով: Այդպես հաճախ էր լինում: Ոստիկանը մոտեցավ, հարցրեց անունս եւ ասաց, որ անմիջապես պետք է վերադառնամ Երեւան՝ ՆԳ նախարարություն: Բնականաբար՝ առարկեցի: Վերջինս խնդրեց իր մեքենայի կապի միջոցով խոսել Գորիսի ոստիկանությունում գտնվող ՆԳ նախարարի խորհրդական ԳԳ-ի հետ: Նա ինձ փոխանցեց, որ Վազգենը խնդրում է իր հետ միասին վերադառնալ Երեւան, եւ որ դա շատ կարեւոր է: Վերադարձանք: Վազգենը սպասում էր փոխնախարարի աշխատասենյակում՝ առանց նրա: Նրա դիմաց այլայլված հայացքով նստած էր Մեղրիի շրջխորհրդի գործկոմի նախագահը: Բարեւեցի ու նստեցի: Վազգենը միանգամից ասաց. «Նա ասում է, որ եթե Դավիթին նշանակեմ ոստիկանապետ, ապա դու աշխատելու ես իրենց դեմ, ինչ կասես»:

– Ես չեմ երազել դառնալ ոստիկանապետ, ես համաձայնել եմ վերցնել փողոցում զցած պատասխանատվությունը: Մտքովս չէր կարող անցնել, որ որեւէ մեկի դեմ գործունեություն ծավալելու նպատակով դառնամ ոստիկանապետ, եւ ուրախ կլինեի, եթե այդ պատասխանատվությունը վերցներ մեկ ուրիշը,– ասացի:

– Լսեցիր,– ասաց Վազգենը,– հիմա առաջարկում եմ միասին վերադառնալ Մեղրի եւ միասին վերցնել այդ պատասխանատվությունը:

Նա առանց մեքենա էր, առաջարկեցի մեկնել միասին: Երկաթուղու կայարանի մոտ նայեց ժամացույցին՝ երեկոյան 9-ին մոտ էր, եւ ասաց, որ դեռ գնացքը չի մեկնել, ինքը ձանձրանում է մեքենայից եւ ուզում է մեկնել գնացքով: Ես Մեղրի վերադարձա միայնակ...

Ապրիլի 17-ին նշանակվեցի Մեղրիի ոստիկանապետ՝ ստանձնելով նաեւ վաշտի բազայի վրա շրջանի պաշտպանական ստորաբաժանման կայացմանն օժանդակելու ու նրա ղեկավարի հետ պաշտպանությունը համակարգելու լրացուցիչ պատասխանատվություն:

Ոստիկանությունն՝ հոգնած ու նվաստացած ոստիկաններով, որոնք, սակայն, հատկապես բարձր կոչում ու պաշտոն ունեցողները, ներքուստ շարացած էին այն իրողությունից, որ իրենց պետք են կարգել համակարգի հետ կապ չունեցող ինչ-որ մեկի:

Ինչպես ողջ հանրապետությունում՝ միջավայրը հագեցած էր ծայրահեղականությամբ ու հատկապես արկածախնդրությամբ:

## Փորձություն

Շրջանում ամեն ինչ բնականաբար նույնն էր, ընդամենը ոստիկանապետ էր փոխվել, այն էլ՝ արհեստավարժին փոխարինել էին համակարգի հետ որեւէ առնչություն չունեցող մեկով: Բնականաբար, լավատեսության հանրային սպասելիքը բացառված էր, էլ չասած, որ ամենայն հավանականությամբ իշխում էր իմ նախորդման՝ գուցեեւ կործանման սպասելիքը:

Հազիվ 10 օրվա ոստիկանապետ էի: Աշխատանքային օրն ավարտվել էր: Ես աշխատասենյակում էի: Կրակոցի ձայներ լսվեցին: Հրահանգեցի օպերատիվ խմբի անդամներին՝ մեկնել կրակոցների ուղղությամբ եւ պարզել, թե ինչ է կատարվում: Մոտ 15 րոպե անց աշխատասենյակ մտավ օպերատիվ խմբի ղեկավար մայորը եւ հեգնական տոնով բառացի ասաց. «Վաշտի տարածքում ձերոնք են՝ իրար մեջ, մենք ոչինչ չենք կարող անել»: Կշտամբեցի, թե ինչ ասել է մերոնք կամ ձերոնք, մեկնա նստեցի ու գնացի վաշտ: Վաշտի գրեթե բոլոր 36 անդամները ահաբեկված կանգնած էին հրապարակում: Վեց հոգի՝ հատուկ գունդ չմտած նրանց նախկին ընկերները, ատրճանակներն օդում ճոճելով հայհոյանքներ էին տեղում նրանց հասցեին՝ հատկապես Ղեւոնդի, ու մերթընդմերթ օդ կրակում: Նրանցից երեքը՝ ղեկավարի հետ միասին, մոտ երկու ամիս առաջ Երեւանում գինված ավազակային հարձակման փորձ էին կատարել ինչ-որ խանութում, տերերի կողմից արժանացել դիմադրության (դանակը մտցրել էին ղեկավարի որովայնը, մյուսի ուսին կացնով էին հարվածել, երրորդին էլ լավ ծեծել էին), մարմնական վնասվածքներ ստացել, պառկել հիվանդանոցում, ապաքինվել եւ նոր էին վերադարձել մայրաքաղաքից: Գործն իրավական ընթացք չէր ստացել, լեզու էին գտել, ժամանակներն այդպիսին էին: Ժամանակները փոխվեցին Վանո Սիրադեղյանի նախարար նշանակվելուց հետո:

Ինչեւ, մոտեցա ղեկավարին, որը ոստիկանությունը գրված խմբի համաղեկավարն էր՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ հեռախոսով խոսողը, եւ ասացի. «Ձեր գործողությունները օրենքից դուրս են եւ ուղղված են պետական կառույցի դեմ, որի կայացմանը ես կոչված եմ աջակցել. եթե դու անձնապես չես ընդունում Ղեւոնդին, դա չի նշանակում, որ ես չպիտի աջակցեմ այդ կառույցի կայացմանը: Ով էլ որ լինի այդտեղ՝ Ղեւոնդը, դու, թե մեկ ուրիշը, ես պաշտպանելու եմ այդ կառույցը: Եւ առաջարկում եմ ձեզ՝ հավաքվեք ու գնացեք այստեղից»: Մի պահ թվաց, թե խոսքերս տեղ հասան, բայց խաբուսիկ էր. «Ես քեզ վրա էլ մուր ունեմ»՝ ասաց, անակնկալ հարձակվեց վրաս եւ ատրճանակի պոչով փորձեց հարվածել: Ես կարողացա խուսանավել եւ, ակամայից, պատասխան հարված հասցրի: Հարվածը դիպուկ ստացվեց, նա ընկավ ու կորցրեց գիտակցությունը: Ինչ-որ մեկն ասաց՝ մեռավ: Բոլորը պապանձվեցին:



– Հիվանդանոց հասցրեմ, ես ոչնչի առաջ կանգ չեմ առնելու, կարգուկանոն պիտի լինի,– ասացի, նստեցի մեքենան ու վերադարձա բաժին:

Ղեւոնդն ու տեղակալս նրան հասցրել էին հիվանդանոցի ճանապարհին գտնվող տեղակալիս եղբոր տուն եւ բժիշկներին բերել այնտեղ, իբր՝ որ աղմուկ չլինի:

Երեկոյան ժամը 10-ի մոտ, Աֆոյի հետ տուն գնալիս, Ազարակից դուրս գալու պահին ճանապարհը կտրեցին, սպասում էին մի 25–30 հոգով: Ուշքի եկածն, իբր, ուզում էր ավտոմատով կրակել ինձ վրա, ինչ որ մարդիկ չէին թողնում: Աֆոյի ներկայությունը դրական նշանակություն ունեցավ, միջադեպն ավարտվեց խաղաղ խոսակցությամբ, խոսակիցս խոստովանեց, որ իմ նկատմամբ որեւէ խնդիր չունի, որ Ղեւոնդն է մեղավոր: Բայց մեծ հաշվով նրա մեջ խոսում էր խանդը՝ Ղեւոնդի վաշտի հրամանատար դառնալու փաստով պայմանավորված:

Էսպիսին էր իրականությունը, էսպիսին էին մարդիկ, եւ այս միջավայրում գործելով՝ պետք էր օրինականություն հաստատել եւ պաշտպանել շրջանն արտաքին վտանգից: Այս միջադեպը, բարեբախտաբար, դրական ընթացք ունեցավ, կարող էր նաեւ անկանխատեսելի հետեւանքների հանգեցնել...

## Նյուվադի

Նյուվադին, այն ժամանակվա պատկերացումներով, ոչ միայն Մեղրիի, այլեւ Հայաստանի ամոթն էր: Ադրբեջանից բռնությամբ կամ բռնության սպառնալիքով տեղահանվել էին բոլոր հայերը, Հայաստանից՝ բոլոր ադրբեջանցիները, իսկ Նյուվադին՝ լինելով Մեղրիի արեւելյան սահմանամերձ գյուղ, մնում էր ադրբեջանցիներով բնակեցված եւ փաստացի ընդգրկված էր Զանգելանի շրջանի վարչական տարածքում: Նրա ռազմական անվտանգությունն ապահովում էր Նախիջեւանի 75-րդ մոտոհրաձգային դիվիզիայի մի ստորաբաժանում՝ 100 հոգանոց աննակազմով եւ 12 զրահամեքենաներով: Նույն դիվիզիայի ներկայացուցիչները գործուղվել էին Մեղրիի տարածքում գտնվող վեց սահմանապահ ուղեկալներ, յուրաքանչյուրում՝ 20-ական զինվոր եւ մեկ զրահամեքենա: 75-րդ դիվիզիան համարվում էր սովետական ԿԳԲ-ի ստորաբաժանում, գործում էր պրեզիդենտ Գորբաչովի ուղիղ ենթակայությամբ, եւ փաս-

տորեն Մեղրիում ներկայացված էր 220 զինծառայողով եւ 18 զրահամեքենայով: Նյուվադիի խնդիրը համակարգում էր անձամբ Աղրբեջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Պոլյանիչկոն:

Գործնականում Հայաստանում չկար այն ուժը, որ կարողանար ազատագրել Նյուվադին ռուսական ռազմական ներկայությունից, առանց որի նյուվադեցիները չէին հեռանալու: Տվյալ քաղաքական իրողության պայմաններում ռուսական ուժերը չէին թողնի Նյուվադին, եթե իրենց մաշկի վրա չզգային վտանգի սպառնալիք:

Մինչեւ ոստիկանապետի կարգավիճակով պատասխանատվություն ստանձնելս երկու նման փորձ եղել էր: Մեկը՝ 1990թ. ապրիլի 24-ին, որ ավարտվել էր վարեւավարցի Սուրիկի զոհվելով, իսկ մյուսը՝ դրանից առաջ, մարտի վերջին տասնօրյակում. Երեւանից եկած ջոկատների եւ տեղի ուժերի համատեղ նախաձեռնություն էր: Բազավորվել էին Կալերում եւ Նյուվադին գրավելու վարժանքներ էին անցկացնում: Սակայն ինքնաշեն նռնականետի փորձարկման ժամանակ նռնականետը պայթեց, երկու հոգի զոհվեցին, մի քանիսը վիրավորվեցին, եւ դրանով ավարտվեց Նյուվադիի առումը:

Մայիսի 4-ն էր 1991 թվականի: Վազգեն Սարգսյանի հանձնարարությամբ, թե թույլտվությամբ, Մեղրի եկավ «Սասունցիների» զինված ջոկատը՝ Աֆոյի գլխավորությամբ եւ «Աշտարակի» ջոկատը՝ Վահան Պապոյանի գլխավորությամբ: Այս երկու ջոկատներին տեղավորեցինք Մարգիի երեխաների ամառային հանգստյան ճամբարում: Հրամանատարական խորհրդակցությունն իմ աշխատասենյակում էր տեղի ունենում: Բացի հիշյալ երկու ջոկատների հրամանատարներից, քննարկումներին մասնակցում էին նաեւ Ղեւոնդը՝ որպես Մեղրիի վաշտի հրամանատար ու նրա հորդորով՝ զինկոմ Կարեն Աֆոյանը, որը աֆղանական կռվի փորձ ուներ: Որոշվեց, որ մայիսի 5-ի երեկոյան՝ մթության հողի տակ, Շվանիձորի կողմից սարի կիսակառույց ճանապարհով մոտենում ենք Նյուվադիին ու դիրքավորվում: Մայիսի 6-ի լուսարացին՝ ժամը 5:00-ին, Աշտարակի ջոկատին պատկանող ինքնաշեն ալազանային հրթիռային երկու համակարգերի գործարկմամբ սկսվում է հարձակումը: Այս որոշումից հետո Կարեն Աֆոյանը որոշակի «մասնագիտական» հաշվարկներ կատարեց ու հրապարակեց մեր եւ հակառակորդի զոհերի, վիրավորների ու անհայտ կորածների հավանական տվյալները եւ կանխա-



տեսեց, որ ժամը 12-ին մարտը կավարտվի մեր հաղթանակով: Սա մայիսի 4-ի երեկոյան էր:

Հաջորդ առավոտ կառավարական կապով ինձ զանգահարեց Վազգեն Սարգսյանը եւ հայտնեց, որ ռուսները, «Օղակ» օպերացիայի շրջանակներում, ծրագրել են ձերբակալել ու զինաթափել Հայաստանում առկա զինված խմբերը, եւ որ այդ նպատակով Հայաստան են բերվել դեսանտային ստորաբաժանումներ: Հրահանգեց չնախաձեռնել որեւէ գործողություն, եւ ջոկատների մնալը Մեղրիում՝ ռուսական ռազմական զորներկայության պայմաններում, վտանգավոր է, եւ հիշտ կլինի, որ նրանք մթության հողի տակ վերադառնան: Անմիջապես հրավիրեցի հրամանատարական խորհուրդ եւ բառացի փոխանցեցի Վազգենի հրահանգը: Կարճ լռությունից հետո առաջինը խոսեց Աֆոն. «Հերիք եղավ, սա էլ արդեն քանի անգամ մենք ուզում ենք Նյուվադին գրավել, Վազգենը խանգարում ա: Ոչ մի բանի առաջ կանգ չենք առնելու եւ իրագործելու ենք մեր որոշումը»: Մյուսները եւս բորբոքված ու վիրավորված՝ տղայական կեցվածքով խոսեցին ու ողջունեցին Աֆոյի դիրքորոշումը: Ես մնացի միայնակ: Հետո՝ իրենց որոշմանը շատարելու պատճառով, ինձանից նեղացած լռեցին աշխատասենյակս ու գնացին նախապատրաստվելու:

Այդ օրը, ըստ ծրագրի, Մարգիից պետք է շարժվեին ժամը 10-ին: Ես աշխատասենյակում նստած միացրել էի այն ժամանակ բոլորիս համար միասնական ոստիկանական ռադիոկապը եւ սպասում էի: Առաջին կոնտակտը եղավ մոտ ժամը 11-ին: Աֆոն տեղեկացնում էր Ղեւոնդին, որ տասը րոպեից կմիանան՝ ճանապարհը միասին շարունակելու համար: Կես ժամից Աֆոն վրդովված կապի դուրս եկավ եւ հարցրեց, թե ուր է Ղեւոնդի վաշտը: Ղեւոնդը պատասխանեց, որ Աֆոյենք թող մեկնեն, իսկ իրենք հետո կմիանան՝ գործ ունեն: Աֆոն զայրացած աղմկեց, հետո կապը կորավ, անհասանելի էր: Ղեւոնդի գործը շրջխորհրդի գործկոմի նոր «Վիլիս» մեքենան պաշտպանության համակարգ փաստացի տեղափոխելն էր: Հավանաբար նա հաշվարկել էր, որ առանց այդ մեքենայի Նյուվադիի առումը կձախողվի: Վաշտի տղաներով գնացել ջարդել էին ավտոտնակի դռան փականը, հանել մեքենան եւ Շվանիձոր մեկնել հատկապես այդ մեքենայով: Ղեւոնդի շարժվելուց անմիջապես հետո շարժվեցի նաեւ ես: Տեղ հասա թեժ վեճի պահին: Նախ արտահայտեցի

նեղացածությունս առ այն, որ առանց ինձ են մեկնել «մարտի»: Հետո դիմեցի Կարեն Աֆոյանին.

– Փաստորեն, եթե մենք հենց հիմա դադարեցնենք այս վեճը եւ շարժվենք, ապա նախատեսված ժամը 5-ի փոխարեն՝ ժամը 6-ից շուտ չենք հասցնի հարձակվել, ճիշտ է:

– Ճիշտ է,– պատասխանեց Աֆոյանը:

– Այդ դեպքում զոհերի, վիրավորների, անհետ կորածների կանխատեսածդ թվականն ու հաղթանակի հավանականությունը նույնը կմնան, թե փոփոխության կենթարկվեն:

Կարենը ներկաների հարցական հայացքների ներքո մի քիչ մտածեց, հավանաբար մտքում հաշվարկեց եւ պատասխանեց.

– Զոհերի, վիրավորների եւ անհետ կորածների թվականը կկրկնապատկվի, իսկ հաղթանակի հավանականությունը կլինի 50/50:

– Այդ դեպքում ինչ եք կարծում,– դիմեցի հրամանատարներին,– արժե առանց հաղթելու հավանականության նման կորուստների գնալ, գուցե մեկ օր հետաձգենք եւ հարձակվենք ճիշտ ժամին:

Բոլորը համաձայնեցին: Որոշեցինք, որ Վահան Պապոյանի տեղակալ Համլետ Թանգամյանի պատասխանատվությամբ՝ աչք ծակող ծանր տեխնիկան թաքցնում ենք անտառում, իսկ մնացյալը ետ են գնում՝ պատրաստվելու հաջորդ օրվան: Ետ գալուն պես՝ Վահան Պապոյանը մեկնեց Երեւան, կարեւոր գործ ուներ:

Առավոտյան Ոսկեպարում շուրջկալի մեջ ընկած 11 ոստիկանների գոհվելու, իսկ մյուսներին գերեվարելու եւ Ադրբեջան տանելու մասին լուրը համատարած հայտնի էր բոլորին, իսկ քաղաքում վիտում էին ռուսական բանակի օպերատիվ աշխատողներն ու գործակալները: Փողոցում չկար մեկը, որն այդ շրջանում այդքան մոդայիկ ռազմական հագուստ կրեր: Վետնդի վաշտի ավագը «մոռացել» էր կատարել իր ամենօրյա պարտականությունը՝ սենդամբերմ տանել Մարգիի ջոկատայիններին: Նրան մի կերպ գտան ու ինձ մոտ բերեցին: Քաղաքացիական հագուստով էր: Ես զայրացած էի, իսկ նա արդարացավ՝ ասելով. «Հիմա ձեզ մոտ մտնելիս հակահետախուզության ռուս աշխատակիցը ինձ նկարեց»: Ես զարմացած նայեցի նրան:

– Հետո՞ ինչ, որ նկարեց, ձախորդ օրերը կանցնեն կգնան, իսկ դու պատմության մեջ կմնաս,– կատակեցի:



Սա էլ թե՝ չէ, էդպես չնկարեց, ուղղակի տեսավ որ ձեզ մոտ մտա:

Շարունակելն անիմաստ էր, սենդամբերմն ուղարկեցի իմ ծառայողական մեքենայով:

Անտառում մնացածների ու տեխնիկայի մասին ոչ ոք չէր հիշում: Մութն ընկնելուն պես ոստիկանական մեքենայի լուսային ազդանշանը միացրած, վարորդիս՝ Միշա Պետրոսյանի հետ մեկնեցինք Շվանիձորի անտառ եւ ուղեկցեցինք անտառում գիշերած ջոկատայիններին ծանր տեխնիկայի հետ: Նախօրոք պայմանավորված լինելով Մարգիից իջած ջոկատայինների հետ՝ հանդիպեցինք Լեռնվազի լիցքակայանում, լիցքավորեցին մեքենաները եւ գիշերը մեկնեցին Երեւան: Տարիներ անց Համլետ Թանգամյանը Մեղրիի զորամասի հրամանատարն էր: Մեղրիում ինձ հետ չէր շփվում, խուսափում էր, ես ընդդիմադիր համբավ ունեի: Մի անգամ Երեւան–Մեղրի հանապարհին՝ Սարավանում պատահաբար հանդիպեց, կանգնեցրեց մեքենան, իջավ, գրկախառնվեց ու ասաց. «Ես երբեք չեմ մոռանա, որ դու իմ կյանքը փրկել ես»...

Ոսկեպարի դեպքի օրվա երեկոյան ինձ այցելեց ռուս սահմանապահների հակահետախուզության պետը՝ գնդապետ Մուշիրին, մի լուրջ ու ծանրակշիռ մարդ, որին, սակայն, շատերը չէին սիրում՝ հատկապես ռուսական բանակի հայ սպաները: Նա ասաց, որ տարածքը հսկողության տակ է, եւ իրենց ամեն ինչ հայտնի է: Ասաց, որ մեծ քանակությամբ տեխնիկա՝ ալազանային հրթիռներով կահավորված, թաքցրել ենք Կարճեւանի մոտ՝ հանքահետախուզական բունելում: Ես «անկեղծ» զարմանք արտահայտեցի, թե նրանք որքան օպերատիվ ու ճշգրիտ տեղեկություններ ունեն: Քանակությունը տասն անգամ չափազանցված էր՝ դեզինֆորմացիան տեղ էր հասել: Հետագայում այդ մարդու հետ իմ հարաբերությունները շատ անկեղծ ու մարդկային էին, եւ նա հաճախ էր ինձ փոխանցում մեզ համար շատ արժեքավոր տեղեկություններ: Նրա մայրը հայ էր:

Շատ ակտիվ գործունեություն էր ծավալում 75-րդ դիվիզիայի հատուկ բաժնի պետ Սուխաչովը, որը նախկինում եղել էր Մեղրիի սահմանապահ զորամասի հատուկ բաժնի պետը եւ, բնականաբար, լուրջ կապեր ուներ մեզ մոտ: Մայիսի 7-ին նա այցելեց ինձ, նրբորեն ակնարկում էր դեսանտ իջեցնելու հավանականության մասին, խոսում էր սպառազինության մեր ունեցած ծավալների ու թաքստոցի մասին, որը, սակայն, նույնն էր՝ ինչ նախորդ դեպքում:

Մայիսի 25-ին Զանգեզանից, իսկ հունիսի 7-ին Օրդուբադից նույնաբովանդակ հեռագրեր ստացանք. պահանջում էին ներկայացուցիչ ուղարկել, որին ցույց կտային մեր զինված խմբավորումների հասցրած էկոլոգիական վնասը:

Հունիս ամսին՝ Նյուվադիի հարցով Նախիջևանում տեւական ժամանակ բնակվում էր ԽՍՀՄ ԿԳԲ-ի գլխավոր վարչության 18-րդ բաժնի պետ, գնդապետ Տիխոնովը, որը հանդիպումներ ունեցավ մեզ հետ: Այս հանդիպումներին վերադասից կցված էր եւ հաճախ մասնակցում էր նաեւ Գերագույն խորհրդի պատգամավոր, պաշտպանության հանձնաժողովի անդամ Վահան Շիրխանյանը: Նախօրոք քննարկելով եւ խորհրդակցելով, միմյանց փոխլրացնելով՝ Տիխոնովին մատուցեցինք, որ Նյուվադիի եւ նրա ռուս պահապանների սպառնալիքը ոչ թե տեղական իշխանություններն են, այլ մեր վերահսկողությունից դուրս գոյություն ունեցող անկառավարելի եւ անտեսանելի զինված խմբավորումները: Եւ որ նրանց գոյության ծնող միակ պատճառն այն փաստն է, որ Նյուվադին՝ լինելով Մեղրիի գյուղ, ռուսական ռազմական աջակցությամբ ենթարկվում է Զանգեզանին: Որ նրանց ծայրահեղական գործողությունները վտանգավոր են ոչ միայն նյուվադեցիների, այլ Նյուվադիում տեղակայված ռուս զինծառայողների համար: Որ եթե մենք համատեղ ջանքերով լուծենք Նյուվադիի ենթակայության վերականգնման հարցը եւ, առանց ռուսական ռազմական ներկայության՝ այլ տարբերակով, նյուվադեցիների հետ համաձայնեցված կարողանանք կազմակերպել նրանց անվտանգության խնդիրը, ապա անկառավարելի զինված խմբավորումների գոյությունը սնող պատճառն ուղղակի գոյություն չի ունենա: Տիխոնովն ընկալեց, կամ՝ գուցե այդ հանապարհը բավարարում էր նաեւ իրենց:

Մայիսի 28-ին՝ Նյուվադիի ռուսական սահմանապահ ուղեկալում տեղի ունեցավ առաջին հանդիպումը: Մեր կողմից հանդիպմանը մասնակցում էին գործկոմի նախագահ Ենոք Անդրեասյանը, վաշտապետ Ղեւոնդ Հովհաննիսյանը, ՆԳ նախարարի խորհրդական Գրիգորյան Գրիգորը (ԳԳ) եւ ես: Նյուվադիի ղեկավարների հետ ներկա էին նաեւ Զանգեզանի իշխանությունները, որոնց մենք մեղադրեցինք իրենց հանրապետությունից դուրս գործունեություն ծավալելու եւ դրանով նյուվադեցիներին վտանգի ենթարկելու համար:



Առաջ քաշեցինք գլխավոր խնդիրը. Նյուվադին Մեղրիի վարչական տարածքում է, պետք է ենթարկվի Մեղրիի վարչակազմին, իսկ մարդիկ պետք է ապրեն ու աշխատեն իրենց բնակության վայրում:

Նրանք բարձրացրին անկառավարելի զինված խմբավորումներից գյուղը պաշտպանելու հարցը:

Ես հանրապետության ղեկավարության հետ մշակված պատասխան ունեի: Առաջարկեցի ռուսական ռազմական ներկայությունը փոխարինել 10 զինված ոստիկանով:

Նյուվադեցիներն անմիջապես առարկեցին:

Այդ դեպքում առաջարկեցի մեկ տասնյակ երիտասարդ նյուվադեցիների սահմանված կարգով ընդգրկել ոստիկանության պարեկապահակային ծառայություն, որոնց միջոցով եւ կիրականացվի գյուղի օրինական պաշտպանությունը:

Նրանք մտածելու ժամանակ խնդրեցին:

Բանակցելով աղրբեջանցիների հետ՝ մենք հասել էինք հիմնական նպատակին՝ ցույց էինք տվել ռուսներին, որ մեր կողմից Նյուվադիի նկատմամբ որեւէ վտանգավոր նպատակ գոյություն չունի, հետեւաբար նրանց ներկայությունը Նյուվադիում ավելորդ էր:

Նյուվադեցիների հետ երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ հուլիսի 9-ին: Տիխոնովին փոխարինել էր զնդապետ Շիրակոպոյասը: Հանդիպումն անարդյունք էր, որովհետեւ նյուվադեցիները դեռ պատասխան չունեին:

Հուլիսի 13-ին Շիրակոպոյասը եկավ ու փոխանցեց նյուվադեցիների պատասխանը. «Նյուվադին որոշել է սպասել մինչեւ սեպտեմբերի 21-ը. եթե Անկախության հանրաքվեի արդյունքում Հայաստանը դուրս գա ԽՍՀՄ կազմից, ապա Նյուվադին դուրս կգա Հայաստանի կազմից»:

Ես արձագանքեցի, որ եթե Նյուվադին բանակցային գործընթացով չի ցանկանում վերականգնել իր վարչական ենթակայությունը, ապա ես չեմ կարող պատասխանատվություն կրել նյուվադեցիների եւ նրանց պահապան ռուս զինվորականների անվտանգության համար, քանի որ մինչ այս պահը զինված խմբավորումների միակ զսպող գործոնը հուսադրող բանակցություններն էին: Առանց այդ բանակցությունների նրանք դառնում են անկառավարելի:

Նույն օրը երեկոյան, Ենոքի ու Ղեւոնդի հետ քննարկելով, խորացրինք այս միտքն ու ռուսական սահմանապահ զորամասի ղեկավարության

միջոցով փոխանցեցինք նյուվադեցիներին, որ պաշտոնապես հանում ենք մեզանից պատասխանատվությունը նրանց անվտանգության համար:

Հուլիսի 14-ի առավոտյան Նախիջեւանից եկան Շիրակոպոյասը ու դիվիզիայի հրամանատարի տեղակալ Մարկելովը: Վերջինս ուղղակիորեն գոռիկ տոնով պահանջեց ետ վերցնել այդ հայտարարությունը: Ղեւոնդի հետ լեզվակռիվ եղավ, ինչ էր մնում իրար ծեծեին, նրանք բնավորությամբ իրար շատ նման էին: Կռվերը հանդարտվեցին, եւ Շիրակոպոյասը հայտնեց, որ իրենք իրավիճակը զեկուցել են վերադասին եւ հուլիսի 15-ի ընթացքում ակնկալում են պատասխան՝ իրենց հետագա անելիքի վերաբերյալ: Մի բան այլեւս հասկանալի էր. ռուսները վախենում են հատկապես իրենց համար:

Հուլիսի 16-ին եկան Շիրակոպոյասն ու 75-րդ դիվիզիայի շտաբի պետ, գնդապետ Մորոզովը եւ հայտնեցին բաղձալի լուրը: Վերադասի հանձնարարությամբ իրենք կլինեն Մեղրիի ողջ տարածքը, ընդ որում՝ դիվիզիայի ղեկավարության որոշմամբ, դա կիրականացվի հուլիսի 23-ից 26-ի ընթացքում:

Մենք արձագանքեցինք, որ այդ դեպքում նյուվադեցիները կարող են հանգիստ մնալ ու ապրել Նյուվադիում: Շիրակոպոյասն ասաց, որ այդ լուրն արդեն հայտնել են Նյուվադիի կոլխոզի նախագահ ու ընդգծված լիդեր Մալ Ամանովին, եւ նա պատասխանել է, թե իրենք կմնան ու կապրեն, իսկ անհրաժեշտության դեպքում կպայքարեն:

Սակայն մենք համոզված էինք, որ առանց ռուսների նյուվադեցիները մնացողը չեն, եւ որ այս որոշումը դեռ վերջնական չէ, եւ Ադրբեջանի ղեկավարությունը, հատկապես Պոլյանիչկոն՝ փորձելու են ազդել այս որոշման վրա:

Երկար խորհելուց հետո, գնահատելով, որ ռուսները շատ լավ հասկանում են, որ իրենց դուրս գալու որոշմամբ պայմանավորված՝ նյուվադեցիներն ստեղությամբ են լցվելու իրենց նկատմամբ, որոշեցինք Նյուվադիի թիկունքում կազմակերպել մարդկանց վնաս չպատճառող այնպիսի մի դիվերսիոն գործողություն, որը ռուսները կդիտարկեին որպես նյուվադեցիների վրեժխնդրություն: Նախատեսված էր հեռագրասյուն պայթեցնելու միջոցով հոսանքազրկել ռուսական հենակետերից մեկը, կամ՝ եթե դա բարդ լինի, ապա լեռներով շրջանցել Նյուվադին Զանգելանի



կողմից, ապահով հեռավորությունից մի քանի կրակահերթ արձակել ռուսական դիրքերից մեկի ուղղությամբ:

Հուլիսի 18-ին խումբը մեկնեց, կատարեց հանձնարարությունը ու վերադարձավ:

Հուլիսի 19-ին եկավ Մարկելովը ու հայտնեց, որ զինծառայողներ Ավերինն ու Գրիգորենկոն անհետացել են Նյուվադիից: Ես ձեռքիս տակ եղած քարտեզի վրա գծեցի այն պայմանական սահմանը, որից դեպի Մեղրի ընկած հատվածում պատրաստակամ էի կազմակերպել որոնողական աշխատանքները: Նաեւ կարծիք հայտնեցի, որ հնարավոր է նյուվադեցիներն են առեւանգել՝ իրենց հեռանալը կանխելու նպատակով: Նա հատկապես այդ կարծիքին էր: Հաջորդ օրը երեկոյան եկավ Մարկելովը եւ շատ հուզված տեղեկացրեց, որ գյուղի մոտ գտել են կորածների դիակները: Նա ասաց, որ իրենք ընդհանրապես չեն ուզում մնալ Նյուվադիում, սակայն վերադասն անորոշ ձգձգում է:

Ես ասացի, որ ժամկետ խախտելն անպատճառ հանգեցնելու է բախումների, բայց խոստացա ինձանից կախված ամեն ինչ անել՝ կանխելու համար:

Հունիսի 24-ին Նյուվադի եկավ Ադրբեջանի կենտկոմի երկրորդ քարտուղար Պոլյանիչկոն, ինչի մասին իմացանք նրա մեկնելուց հետո: Արդյունքում՝ ռուսները հայտարարված ժամկետում դուրս չեկան:

Մեր ունեցած ինքնաշեն մեկհրթիռանի ալազանային համակարգը տարանք Մեղրի–Քաջարան լեռնանցք, ընտրեցինք նույնատիպ տեղամ, նշանառության համակարգ տեղադրեցինք, նշգրտեցինք ու փորձարկեցինք: Մեկ կիլոմետրի վրա շեղումը չէր գերազանցում 20–25 մետրը: Գյուղին դիպչելու համար փայլուն արդյունք էր:

Հուլիսի 28-ի ուշ երեկոյան՝ ժամը 9-ից 10-ի միջակայքում մի քանի հրթիռ արձակեցինք գյուղի վրա:

Հուլիսի 29-ին Ղեւոնդի հետ այցելեցինք ռուսական սահմանապահ զորամաս եւ հայտնեցինք, որ ռուսական կողմից պայմանավորվածությունը խախտելու հետեւանքով՝ ոչ ֆորմալ զինված ուժերի մոտ կորցրել ենք վստահությունը եւ շրջանում առկա ռուս զինծառայողների անվտանգությունը չենք կարող երաշխավորել: Դա վերաբերում էր հատկապես իրենց:

## Արմեն Արշակյանի լեգենդը

Աֆօն ջոկատով եկավ Մեղրի՝ մեր հրավերով ու Վազգենի հանձնարարությամբ, ըստ անհրաժեշտության աջակցելու Նյուվաղիի հարցի լուծմանը: Վաշտում Ղևոնդի մոտ, երեքով պիտի հանդիպեինք օգոստոսի 2-ի կեսօրին: Ներս մտա. Ղևոնդն աստիճաններով վազեվազ իջնում էր հայնոյանքներ տեղալով: Հարցրի, թե ինչ է պատահել, ասաց՝ ես դրանց մերը՝ արդեն ՍՈՒ-երով են խփում Ղարաբաղին, ու շարունակեց հանապարհը: Աֆօյից իմացա, որ վերջինս Ղևոնդին մանրամասներ է պատմել ռուսական զինուժի ու ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից համատեղ անցկացվող «Օղակ» օպերացիայի մասին, վերջինս էլ կատաղել է ռուսների վրա ու դուրս եկել:

Վերադարձա աշխատասենյակ: Զանգեց սահմանապահ զորամասի հակահետախուզության պետը՝ գնդապետը: Հրամանատարը Ռուսաստանում էր: Ասաց. «Ղևոնդն իր տղաներով զինված ներխուժել է զորամաս, ծեծի ենթարկել հայ ենթասպային, զինաթափել անցակետի զինծառայողներին եւ ինքն է կարգավորում զորամասի եղումուռը, նորանշանակ շտաբի պետն էլ Ղևոնդի պես խենթ է, ասում է՝ գնում եմ գնդակահարեմ, հազիվ եմ զսպում»:

Գնացի: Դարպասը բացեցին, ներս մտա: Ղևոնդը հետագա անելիքը չէր հաշվարկել եւ ակնհայտ շվարած էր:

Մոտեցա ու ասացի. «Ապրե՛ս, դու գրեթե ապացուցեցիր, որ միակ անկառավարելի զինված խմբավորումը հենց դու ես: Ոչ ոքի հետ չչփվե՛ս, ոչինչ չխոսե՛ս՝ մինչեւ կգամ»: Ասացի ու գնացի շտաբ:

Շտաբի պետն իրոք հիստերիայի մեջ էր, նրան զսպում էր Մուջիրին, ներկա էին հրամանատարի բոլոր տեղակալները, որոնք ակնհայտ սարսափած էին: Բոլորը միաբերան գանգատվում էին Ղևոնդի արածից: Ես ուշադիր լսեցի ու ասացի հետեւյալը. «Ես Ղևոնդին շատ լավ եմ ճանաչում, նա առանց պատճառի նման բան չէր անի, ես դեռ նրա հետ չեմ խոսել, համբերեք, առայժմ պետք չի որեւէ բան եզրակացնել եւ առավել եւս զեկուցել վերադասին: Ես վերադառնամ անցակետ, խոսեմ նրա հետ, հասկանանք պատճառը, միասին բնդարկենք՝ հետո նոր կզեկուցեմ իրականությունը»:



Վերադարձա անցակետ, Ղևոնդին ներկայացրի այս ընթացքում հորինածս լեգենդը, ընկալեց, մտավ դերի մեջ, եւ միասին վերադարձանք շտաբ, ուր Ղևոնդի հետ ներկայացրինք հետեւյալը.

«Մեղրիում է հայտնվել ոմն Արմեն Արշակյանի գլխավորած վրիժառուների խումբ՝ մինչեւ ատամները զինված: Արշակյանը ծագումով արեւմտահայ է, խմբի անդամները՝ Շահումյանից, Գետաշենից, Ղարաբաղից: Նրանք վրեժխնդրությամբ են լցված ավելի շատ ռուսների, քան ադրբեջանցիների նկատմամբ, որովհետեւ համարում են, որ ձեր աջակցությամբ է, որ ադրբեջանցիները կարողացել են իրենց բռնությամբ տեղահանել: Դրա համար եկել են ռուսական զորամասը գրավելով ձեզանից վրեժխնդիր լինելու: Բարեբախտություն է, որ հանդիպել են Ղևոնդին: Ղևոնդը բացատրել է, որ սա մեր պատասխանատվության տարածքն է, որ այս մարդիկ իրենց նորմալ են պահում, որ վերջապես՝ այդ զորամասի տարածքում կանայք ու երեխաներ էլ են ապրում: Ու եթե այս մարդիկ իրենց վատ պահեն, մենք ինքներս ենք ի վիճակի գրավել այդ զորամասը: Արմեն Արշակյանն էլ ասել է, որ դուք ի վիճակի լինեիք, մինչեւ հիմա գրված կլինեիք: Ղևոնդն էլ ասել է, որ ինքը հենց հիմա կգնա կգրավի, որպեսզի ապացուցի, որ ի վիճակի է: Եւ իրականում գնացել է այս ֆայլին՝ միայն նրանց անկանխատեսելի գործողությունները կանխելու նպատակով»:

Քար լռություն տիրեց: Նայեցի նրանց ու ասացի.

– Հիմա պետք է միասին մտածենք, թե ինչ ենք անելու, բայց, կարծում եմ, արժե, որ նախ շնորհակալություն հայտնենք Ղևոնդին:

Բոլորը Ղևոնդի ձեռքն էին սեղմում ու շնորհակալություն հայտնում: Հետո առաջարկեցի, որ իրենք այս իրավիճակը զեկուցում են վերադասին, զորամասի տարածքից դուրս չեն գալիս, իրականացնում են ուժեղացված ծառայություն, իսկ ես ու Ղևոնդը վերադառնում ենք, հանդիպում ու բանակցում ենք Արմեն Արշակյանի հետ՝ փորձելով նրան պահել մեր ազդեցության դաշտում:

Ղևոնդի պատմելուց նրանք պատկերացրին, որ Արշակյանի ջոկատի զինանոցը համալրված է նաեւ ԱՐՀ-ով ու ՊՏՈՐՀ-ով: Ընդ որում, Ղևոնդը պատմելիս անուն չէր ասում, ուղղակի նկարագրում էր որպես իրեն անծանոթ զինատեսակ, անունը նրանք էին գուշակում:

Օգոստոսի 3-ի առավոտյան՝ ժամը 8-ին զանգեց զորամասի հրամանատար, գնդապետ Ռակովիչ Նիկոլայ Սերգեեւիչը եւ խնդրեց ինձ այցելել զորամաս: Նա գիշերն էր վերադարձել մի տասնյակ գնդապետների հետ: Բոլորով միասին ինձ հետ քննարկեցին իրավիճակը եւ երաշխիք էին ուզում զորամասի անվտանգության համար: Ասացի, որ նախորդ օրվա պես մեզանից կախված ամեն ինչ կանենք, սակայն՝ Արշակյանի Մեղրիում գտնվելու պայմաններում երաշխիք տալը շատ բարդ է: Պատմեցի, որ նախորդ օրը Ղեւոնդի հետ միասին հանդիպել ենք նրա հետ եւ, դատելով զրույցից՝ առայժմ Ղեւոնդի կատարածով բավարարված, զորամասի վրա հարձակում չի ծրագրում, բայց նաեւ չի պատրաստվում հեռանալ Մեղրիից:

Նրանք խնդրեցին հանդիպում կազմակերպել Արշակյանի հետ: Ես հանդիպման կազմակերպումը փորձելու խոստումով հեռացա:

Աֆոյի եւ Ղեւոնդի հետ քննարկեցինք իրավիճակը: Եզրահանգումը միակն էր. եթե Արշակյանի հետ հանդիպում տեղի էր ունենում, ապա նախորդ օրվա ամբողջ պատմությունն արժանահավատ էր դառնում: Արշակյանի դերը վերապահված էր Աֆոյին:

Մեկնեցի զորամաս եւ տեղեկացրի, որ Արշակյանը պատրաստ է մեկ ժամից հանդիպել հենց զորամասում, բայց զգուշացնում է, որ ինչ-որ բան այնպես չընթանալու դեպքում զորամասը կոչնչացվի:

Հանդիպումը կայացավ: Աֆոյի արտաքին տեսքը համապատասխանում էր հորինված պատմությանը: ՆԱՏՕ-ական զինվորական հանդերձանք, սասունցու բեղեր, կոտրատված, կցկտուր ռուսերեն (ինձ երկար ժամանակ թվում էր, թե Աֆոն հատուկ է այդպես խոսում՝ դերի մեջ է մտել, տեւական ժամանակ անց պարզվեց, որ հենց դա է Աֆոյի հարազատ ռուսերենը): Գնդապետները երկար-բարակ համոզում էին Աֆոյին՝ ձեռնպահ մնալ զորամասը գրավելու մտքից: Ես ու Ղեւոնդն աջակցում էինք նրանց: Աֆոն խոսում էր կցկտուր, ձեռքը մազերին կամ բեղերին հպելով, նայում անորոշ ուղղությամբ: Գնդապետները նայում էին նույն ուղղությամբ՝ հավանաբար մտածելով, որ վտանգն այդտեղ է թաքնված:

Արմեն Արշակյանն ասաց իր վերջին խոսքը. «Ես կմնամ Մեղրիում, եւ ձեր ու ռուսական մյուս զինվորականների նկատմամբ վերաբերմունքը կախված կլինի ընդամենը մեկ բանից, թե Ղարաբաղում եւ նրա շրջակայքում որքան արագ իր վերաբերմունքը կփոխի ռուսական բանակը»:



Գնդապետները խոստացան անմիջապես իրավիճակը զեկուցել կենտրոն եւ մեկնաբանեցին, որ Ղարաբաղի ու նրա շուրջ ռուսական զորքերի վերաբերմունքն անպատկառ հրամանատարների կամայականության հետեւանք է (շատ նման էր մեր զինված անկառավարելի խմբավորումներին):

Օգոստոսի 6-ին ուղղաթիռով եկավ Վազգեն Սարգսյանը:

Բերել էր նյուվադեցիներին ուղղված թռուցիկ-կոչեր: Ուղղաթիռից պետք է նետեինք Նյուվադիի վրա: Այդ նպատակով օդանավակայանում բոլորով ուղղաթիռ էինք բարձրանում, հանկարծ Վազգենը շրջվեց ու ինձ ասաց, թե պետք չի, որ ես բարձրանամ ուղղաթիռ: Ես՝ շվարած, ինչ-որ տեղ վիրավորված, հարցական նայեցի Վազգենին: Նա էլ թե՝ հանկարծ ուղղաթիռը կխփեն, մեզանից մեկը թող կենդանի մնա: Թռուցիկների բովանդակությունը մոտավորապես այն էր, որ նյուվադեցիները հանգիստ կարող են ապրել ու աշխատել իրենց ծննդավայրում, եւ պետք չէ, որ նրանք ենթարկվեն թուրք էմիսարների սադրիչ ազդեցությանը:

Նույն օրը երեկոյան Շիրակոպոյասին փոխարինած Կրապիրինն ընկերաբար հայտնեց, որ վերադասից ցուցում են ստացել նախապատրաստելու Նյուվադիից ստորաբաժանման դուրսբերումը:

Օգոստոսի 7-ին գործկոմում տեղի ունեցավ պաշտոնական հանդիպում, որին ռուսական կողմից մասնակցում էին Կրապիրինը, Մեղրիի սահմանապահ զորամասի ղեկավարությունը եւ 75-րդ դիվիզիայի ղեկավարությունը: Դիվիզիայի հատուկ բաժնի պետ Սուխաչովը տեղեկացրեց, որ օգոստոսի 8-ին՝ մինչեւ օրվա վերջ, ստորաբաժանումն ամբողջությամբ դուրս կբերվի Նյուվադիից: Ասաց նաեւ, որ այդ օրը՝ ժամը 14-ին Ղարաբաղում խորհրդակցություն անցկացնելուց հետո Պոլյանիչկոն կթռչի Զանգելան եւ 16.30-ին խորհրդակցություն կանցկացնի, որին կմասնակցեն նաեւ իրենք:

Նույն օրը երեկոյան Ղեւոնդի վաշտի ու Աֆոյի ջոկատի տղաներն արդեն Շվանիձորի կողմից դիրքավորված էին Նյուվադիի բարձունքում: Վազգեն Սարգսյանն ուղարկել էր նաեւ միլիցիայի հատուկ նշանակության ջոկատը՝ ՄՀՆՋ-ն, որը գիշերը կհասներ Մեղրի:

Եկել էր նաեւ ԳԳ-ն, որին հանդիպեցի օգոստոսի 8-ի լուսաբացին՝ Նյուվադիի բարձունքում: Տղաները մթության հողի տակ արդեն իջել էին ու աննկատ դիրքավորվել գյուղի մատույցներում: Ռուսական զրահամեքենաները գործարկել էին շարժիչները եւ պատրաստվում էին հեռա-

նալ: Գյուղում վայնասուն էր, նյուվադեցիները լռում էին գյուղը ռուսներից առաջ: ԳԳ-ն իջավ դիրքավորված տղաների մոտ: Պայմանավորվածության համաձայն՝ ես վերադարձա ու ՄՀՆՋ-ի հետ շարժվեցի Արմախի ափով՝ կապերով: Առաջին զրահամեքենայի վրա նստած էինք ես ու ՄՀՆՋ հրամանատարի տեղակալ Արծրուն Մարգարյանը: Հետևից եկող երկու զրահամեքենաներն ավելի մեծ էին ու դանդաղկոտ: Հրահանգեցինք նրանց հանգիստ ու զգույշ գալ, իսկ մենք շտապեցինք: Երևաց Նյուվադիի սահմանապահ ուղեկալը: Այնտեղ կայանած՝ Նյուվադիից դուրս բերված բոլոր 12 զրահամեքենաները միանգամից գործարկեցին շարժիչները եւ մեզ վերջին նշանառության տակ: Ես հրահանգեցի զրահամեքենան կանգնեցնել, ցատկեցի գետնին եւ թաշկինակս թափահարելով վագրով մոտեցա, ներկայացա, բացատրեցի, որ ՄՀՆՋ-ի հետ գնում ենք ապահովելու Նյուվադիի անվտանգությունը:

Մտանք գյուղ: Այնտեղ միայն սարից իջած մեր տղաներն էին՝ Ղեւոնդի ու Աֆոյի գլխավորությամբ: Աֆոն ասում էր, որ այսուհետ այս գյուղը պետք է կոչել Նոնաձոր...

Գյուղի բոլոր տներն ու բակերը մամուռ ավլած էին, ավելները՝ դարպասների անկյուններում դրված: Բոլոր դարպասները կողպված էին՝ բանալիները դարպասների շրջանակների վերին անկյուններում խփված մեխերից կախված: Այգիները խնամված էին ու բերքառատ:

Նյուվադեցիներին տեղավորել էին Զանգեզանի Վեժնավիր գյուղի մոտ՝ փախստականների ճամբարում: Օգոստոսի 10-ին Նյուվադիի ուղեկալում տեղի ունեցավ նրանց հետ վերջին հանդիպումը: Մաիլ Ամանովը չէր եկել: Պատվիրակները պախարակում էին նրան եւ ժամանակին Մեղրիին չենթարկվելու ողջ պատասխանատվությունը բարդում Ամանովի վրա: Խոսում էին ուղղաթիռից նետված թռուցիկ-կոչերի մասին: Հարցնում էին, թե ովքեր են արդյոք այդ թուրք էմիսարները, որի մասին գրված էր կոչում: Նրանք ուզում էին վերադառնալ...

## Հեյդարը

Անընդհատ զբաղված էինք Նյուվադիով: Ռուսական ժողովրդավարական ուժերը հատկապես հետաքրքրված էին Նյուվադիով: Եկել եւ շաբաթներով այդ տարածքում ուսումնասիրություններ էին անում ՌԴ պետդումայի երեք պատգամավորներ՝ Պապկով, Շարաթ եւ մի կին: Եկավ նաեւ ռուսական «Նովոյե վրեմյա» ամսագրի լրագրող, «Մեմորիալ» իրավապաշտպան կենտրոնի ներկայացուցիչ Նիկոլայ Կալինկինը: Նրա ուսումնասիրության թիրախը նյուվադեցիներին բռնի տեղահանելու փաստեր որոնելն էր: Վերջինիս պահում էի մեր տանը: Ինձ հետ ամեն օր Նյուվադի էի տանում ու բերում:

Նյուվադիի կայարան հանդիսացող Բուդդադուզում մնացել էր ադրբեջանական մի ընտանիք՝ Հեյդարի ընտանիքը: Ես ուղղակի փայփայում էի նրանց եւ հորդորում, որ հանկարծ չգնան: Նա հրաշալի պոմպավար էր: Ինքնակամ հանձն առավ պոմպակայանի շահագործման ու Բուդդադուզի նռան այգիների ոռոգման գործը: Սննդամթերք ու անհրաժեշտ պարագաներ էի ուղարկում՝ ինչի կարիք որ ունենում էր: Հիշարժան է Նիկոլայի հանդիպումը Հեյդարի եւ նրա ընտանիքի անդամների հետ: Նիկոլայը նրանց հետ զրուցեց առանց մեզ, որ ենշում չլինի: Նրանք համոզել էին Նիկոլային, որ հայկական կողմից Նյուվադիի նկատմամբ որեւէ ոտնձգություն չի եղել, որ այդ ամենը կազմակերպել է Մաիլ Ամանովը՝ Մեղրիի վարչական ենթակայությունից դուրս եղած ժամանակ, կոլխոզից կատարած յուրացումները մարսելու նպատակով, որ անգամ գյուղի վրա արձակված կրակոցները նա է կազմակերպել: Ասել էր, որ եթե համագյուղացիներ հետեւեին իրենց օրինակին եւ մնային, ապա կարող էին իրենց նման հանգիստ ապրել:

Նիկոլայը հավատացել էր Հեյդարին, բայց պնդում էր, որ գնա Վեժնավիրի փախստականների ճամբար եւ հանդիպի նյուվադեցիներին: Ես անընդհատ ձգձգում էի՝ պատճառաբանելով, որ վտանգավոր է: Նա պնդում էր, եւ ես խոստացա մեկ-երկու օրվա ընթացքում կազմակերպել նրա անցումը: Հաջորդ օրը՝ օգոստոսի 19-ին հայտնի դարձավ, որ Մոսկվայում իրականացվում է հեղաշրջման փորձ ԳԿՉՊ անվամբ: Նիկոլային հասկացրի, որ հիմա Մոսկվան Նյուվադիից կարեւոր է, եւ ինքն այնտեղ ավելի պահանջված է: Նիկոլայը գնաց ու մի քանի շաբաթ անց փոստով ուղարկեց ամսագրի հերթական համարը, ուր Նյուվադիի վերաբերյալ գետեղված էր ծավալուն մի հոդված, վերնագրված՝ «Депортации не было»:

Հոդվածում տեղադրված էին Հեյդարի ու նրա կնոջ լուսանկարները:

Մի օր գնացի Հեյդարին տեսակցելու. մենակ էր, կնոջն ու երեխաներին գնացքով ճանապարհել էր, ասաց՝ դպրոց ա, բան ա՝ էստեղ ոնց մնան: Ինքը տխուր էր: Հարցրի՝ նեղացնող չի՞ եղել, ասաց՝ չէ: Մի հավատարիմ շուն ուներ, միշտ հետն էր, տիրոջը մենակ չէր թողնում: Մի օր ասացին, որ Հեյդարն անհետացել է: Գնացի, շունն ու կովը կային, ինքը չկար: Ոչ մի տեղեկություն չկարողացա իմանալ: Թեեւ Նյուվադին բալանչիներից պաշտպանելու համար շուրջօրյա ոստիկանական պահակակետ էր գործում, բայց միեւնույն է՝ շուրջբոլորը բալանչիներ էին վխտում, բերեն էին գողանում:

Մինչեւ հիմա համոզված չեմ, որ Հեյդարը հեռացավ: Հեռանալու համար նրան ոչինչ չէր կաշկանդում: Հեռանալիս շունն ու կովն էլ հետը կտաներ, ինձ տեղյակ կպահեր: Ներքին համոզմունք ունեմ, որ բալանչիներից մեկը նրանով ինքնահաստատվեց...

Հեյդարի անհետանալուց հետո միայն հասկացա. բարեբախտություն էր, որ նյուվադեցիներ հեռացան ռուսներից առաջ...

Նյուվադին բնակեցվում է: Այդ նպատակով Ենոք Անդրեասյանի հետ գնացինք Ծաղկաձոր, Աղվերան, Արարատի գյուղեր՝ փախստականներ հավաքագրելու: Նյուվադեցիների հետ բանակցությունների ժամանակ այնտեղ առկա էր 178 տուն, եւ ապրում էր 935 մարդ: Որքա՞ն կարող էինք բնակեցնել մեզնից: Դժվար էր, հեռու էր, խուսափում էին: Նյուվադին մասնակի բնակեցվեց գետաշենցիներով: Գյուղի վարչական ղեկավար նշանակվեց Մեխակը, կոլտնտեսության ղեկավար՝ Ռաֆոն: Նյուվադիում անգամ անցկացվեց կառավարության արտագնա նիստ՝ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ:

Նյուվադիի հետ կապված բոլոր խայտառակները մեր ու զաղտնի: Նյուվադին ազատագրելուց մեկ-երկու օր անց խուճապահար ինձ մոտ եկավ ԿԳԲ-ի բաժանմունքի պետը եւ հարցրեց, թե արդյո՞ք նիշտ է, որ Նյուվադին ազատագրված է: Դրական պատասխանը լսելուն պես հուզվեց ու ասաց. «Խայտառակվեցի, կոմիտեի նախագահ Հուսիկ Հարությունյանը հենց նոր զանգել հարցնում էր, ես էլ ասում եմ՝ չէ, որ նման բան լիներ, ես ձեզ զեկուցած կլինեի: Նա էլ թե՝ դու տեղյակ չես, գնա նշտիր»:

Հետագայում Տեր-Պետրոսյանն ինձ պատմել է, որ Դերագույն խորհրդի նիստի ընդմիջմանն իրեն մոտեցած ԿԳԲ-ի պետ Հուսիկ Հարությունյանին հայտնել է Նյուվադին ազատագրելու լուրը, սա էլ հերքել է՝ ասելով, թե դա հնարավոր չէ, նման բան լիներ՝ առաջինն ինքը կզեկուցեր: Բայց Նախագահը պնդել է, եւ նա հայտնվել է անհարմար վիճակում:



## Փորձություն փորձության ետեւից

Օգոստոսի վերջին Վազգեն Սարգսյանը հետ կանչեց ՄՀՆՋ-ին, որը Նյուվադիի թեւում իրականացնում էր ավտոճանապարհի եւ երկաթուղու միջակայքում Աղրբեջանի հետ սահմանի պաշտպանությունը: Այդ հատվածի պաշտպանությունը տեղի ուժերով կազմակերպելու նպատակով, Վազգենի գիտությամբ, թողեցին նաեւ զրահամեքենաներից մեկը՝ ՄՏԼԲ-ն: Զրահամեքենան ուներ մի շարք թերություններ, որոնք վերացնելու եւ նոր մարտկոցներ տեղադրելու խնդրանքով անձամբ դիմեցի Ագարակի կոմբինատի տնօրեն Լյուդվիգ Համբարձումյանին: Վերջինս հարգանքով ընդառաջեց եւ հանձնարարեց հանքի պետին: Այդ զրահամեքենայի ձեռքբերումն իրադարձություն էր մեզ համար, եւ Ղեւոնդն անձամբ տարավ հանքի արհեստանոց՝ թերությունները վերացնելու: Որոշ ժամանակ անց նա զանգահարեց եւ ասաց, որ հանքի պետն իմիջիայլոց է վերաբերվում եւ ձգձգում է վերանորոգումը: Ես հորդորեցի չբորբոքվել եւ նորից կապվեցի տնօրենի հետ: Վերջինս զարմացավ եւ խոստացավ արագ կարգավորել: Ղեւոնդը կրկին կապվեց, ասաց՝ հրաժարվում է մարտկոցներ տրամադրել: Նորից կապվեցի, նորից զարմացան ու խոստացան...

Երրորդ անգամ Ղեւոնդը զանգ չտվեց ինձ... 1991թ. սեպտեմբերի 10-ն էր: Շրջանի պաշտպանությանն աջակցելուն ուղղված տնօրենի հանձնարարությունը չկատարած հանքի պետը մեկ ապտակ ստացավ Ղեւոնդից: Պահը բաց չթողեցին, անմիջապես կազմակերպեցին կոմբինատի ամբողջական գործադուլ՝ Ղեւոնդի հեռացման պահանջով: Կազմակերպիչները չէին երեւում:

Հաջորդ օրվա լուսաբացին հերթապահը հեռախոսով զեկուցեց, որ Մեղրիի երկաթուղային կայարանում հայերի եւ ադրբեջանցիների բախում է եղել, եւ օպերատիվ խումբը մեկնել է դեպքի վայր:

Տեղի էր ունեցել հետեւյալը. Մինչեւանից Ջուլֆա բեռնատար գնացք ուղեկցած երկաթուղու անվտանգության երեք աշխատակիցներ, որոնք, գործող կարգի համաձայն, իրավունք ունեին վերադառնալու Մինչեւան՝

ցանկացած հանդիպակաց ուղղությամբ շարժվող գնացքով, նստել էին առաջին պատահած Երևան–Կապան մարդատար գնացքը: Նրանք կրում էին իրենց ամրացված «նագան» տեսակի ատրճանակներ եւ ունեին համապատասխան վկայականներ: Ազարակի կայարանում գնացքը շարժվելու պահին ուղեւորներին, դիմավորողներին ու նանապարհողներին անծանոթ ինչ-որ մեկը վագոնի բաց դռնից ներկայանում է որպես գորիսեցի եւ ասում, որ գնացքում զինված թուրքեր կան՝ ահաբեկում են հայերին: Մինչ գնացքը կհասներ Մեղրիի կայարան, «ահաբեկիչ թուրքերին» սպասում էր ստվար ամբոխը: Երեք ադրբեջանցիներն անգամ չեն դիմադրում, նույնիսկ պաշտպանվելու քայլ չեն կատարում: Ամբոխը սրանց քարշ տալով իջեցնում է գնացքից, դաժան ծեծի ենթարկում: Ոստիկանության օպերատիվ խումբը հազիվ խլում է նրանց գազազած ամբոխից ու տեղափոխում մեկուսարան: Երկաթուղին անմիջապես կանգ առավ: Երկաթուղու կապով Նախիջեւանի ՆԳ նախարար Մահմեդովը կապ հաստատեց եւ ասաց, որ մեքենավարները վախենում են եւ հրաժարվում են երթևեկել Մեղրիով, եւ որ, նախ, անհրաժեշտ է վերադարձնել պատանդներին: Ես հավանություն տվեցի եւ պատրաստակամություն հայտնեցի նրանց անմիջապես վերադարձնել: Պայմանավորվեցինք, որ կոնկրետ ժամի նրանց կհանձնեմ այդ նպատակով Մինջեւանից Ալվանքի կայարան գնացող քարշակին: Կայարանից վերադարձա եւ հանձնարարեցի հերթապահին, որ վերջինս հետեւի՝ արդեն բժշկական օգնություն ստացած պատանդներին նախապատրաստեն հանձնելու, այսինքն՝ հնարավորություն տան լվացվելու, մաքրելու արյունոտված հագուստը:

Այս հրահանգից չէր անցել 15 րոպե, ուղիղ կապով միացած հերթապահը զեկուցեց, որ ինձ մոտ բարձրացան երեք հոգի, նրանք, որ պատրաստվում էին Մեղրի քաղաքի կենտրոնում շինարի ծառից կախել ոստիկանության կապիտան Վիգենին: Իմ հարցին, թե առանց ինձ զեկուցելու եւ թույլատրելու՝ ինչո՞ւ է թույլ տվել նրանց ինձ մոտ բարձրանալ, պատասխանեց՝ չենթարկվեցին: Բացվեց աշխատասենյակիս դուռն ու շարքով ներխուժեցին: Առաջին մտնողն անմիջապես հոխորտաց.

– Դու քանի՞ զլխանի ես, որ առանց մեր թույլտվության էդ թուրքերին որոշել ես տանես տաս,– ասաց ու սպառնալից, անթարթ հայացքով աչքերիս մեջ նայելով՝ շարունակեց,– խելոք մնա, թե չէ կկորցնենք քեզ:



Մի բան պարզ էր, որ սրանց անհնար էր խոսքով բան հասկացնել, որ կոլմինացիոն պահ էր, եւ հարկավոր էր հնարավորինս արագ հանգուցալուծել ստեղծված իրավիճակը: Ես էլ չհասկացա՝ ինչպես ստացվեց, բայց, նախ, կանգնեցի աթոռին, որին նստած էի, բարձրացա սեղանին, ցատկեցի հատակին ու գերբնական ուժով ապտակեցի ինձ «կորցնողին»: Սա տապալվեց գետնին՝ կորավ սենյակի անկյունում: Անակնկալի եկած՝ ձեւացնում էր, թե կորցրել է գիտակցությունը: Դիրքավորված շրջվեցի դեպի մյուս երկուսը եւ հարցրի, թե արդյոք իրենք էլ են ուզում արժանանալ ընկերոջ նակատագրին: Վերջիններս շփոթված ու ակնհայտ հարգալից տոնով առարկեցին:

– Որ այդպես է, վերցրեք ձեր ընկերոջը, հեռացեք ու մոռացեք այստեղ առանց թույլտվության որեւէ հարցով ինձ մոտ գալու մասին,– ասացի:

Առանց խոսքի՝ բարձրացրին տապալված ընկերոջը, մտան թեւերի տակ ու, ոտքերը գետնով քարշ տալով, հեռացան:

Քիչ հետո իջա հերթապահ մաս՝ ստուգելու, թե արդյո՞ք կարգի են բերել պատանդներին: Հերթապահ մասի պատասխանատուների անզգուշության պայմաններում՝ վաշտի զինվորներ Ղետնդի փոքր եղբայրն ու մեկ ուրիշը ծեծում էին ադրբեջանցիներին: Հարկադրված էի՝ անպաշտպան մարդկանց ծեծողներին մի քանի պարզաբանում անելուն զուգընթաց, վռնդել բաժնից: Պայմանավորված ժամին պատանդներին հանձնեցի: Վերադառնալուն պես ինձ մոտեցան առաջինին քարշ տվող այն երկուսը եւ ասացին, որ նա չէր ուզում ասել այն, ինչ ասաց, սխալմունք էր, եւ որ երեքով ինձ շատ են հարգում:

Առավոտյան երկաթուղին սկսեց գործել:

Մեկ ամիս շարունակ Նյուվադիի ազատագրումը բարձր գնահատող մարդիկ ոչ մի հնարավորություն բաց չէին թողնում՝ ազդեցության տակ ընկնելու եւ խոչընդոտելու մեր բնականոն գործունեությունը:

Նույն օրը՝ սեպտեմբերի 11-ին Քաջարանի երկրապահ տղաներ Կապուտջուղի փեշով անցնում են Նախիջեւանի տարածք, սպանում երկու ադրբեջանցի հովվի, թաղում ու ճշում բերում ոչխարի հոտը՝ մի 1000 գլուխ: Սեպտեմբերի 12-ի լուսաբացին Երեւան–Կապան մարդատար գնացքը պահեցին Օրդուբադի կայարանում եւ հովիվներին ու հոտը վերադարձնելու պահանջ ներկայացրին: Զգիտեին, որ հովիվները ողջ չեն:

Նույն սեպտեմբերի 11-ին Մեղրիի տարածքում անհայտ չարագործը գնդակոծել էր բեռնատար մի գնացք, եւ մի արտառոց դեպք էր տեղի ունեցել Վայքում: Արդյոք զուգադիպությո՞ւն էր՝ չգիտեմ:

Բնականաբար, սեպտեմբերի 12-ին զբաղված էի Օրդուբադում գերված ուղեւորների խնդրով, երբ զանգեց գործկոմի նախագահը եւ ասաց, որ կոմբինատի գործադուլի կազմակերպիչը՝ իր համախոհների հետ, գրավել են գործկոմը եւ պահանջում են լուծարել Ղեւոնդի ղեկավարած կառույցը, որը բանակի սաղմն էր:

Ես բացատրեցի, որ, նախ, կառույցը բանակի սաղմն է, որի լուծարողը ես չեմ, ոչ էլ՝ շրջխորհրդի գործկոմը, եւ իմ լիազորությունների շրջանակներում առաջարկեցի բրեական հետապնդում սկսելու նպատակով ապահովել երկու հայտարարություն: Ապտակի միջոցով՝ կոմբինատի ղեկավարության կամ տուժողի կողմից, իսկ գործկոմը գրավելու փաստով՝ գործկոմի նախագահի ստորագրությամբ:

Կոմբինատի ղեկավարությունը հայտարարություն ներկայացրեց, իսկ գործկոմը՝ հայտարարության փոխարեն հաջորդ օրն ինձ հրավիրեց գործկոմի դահլիճում հավաքված բազմությանն ապտակի գործով բացատրություն տալու: Դահլիճ մտա այն պահին, երբ ելույթ ունեցողը արտասանեց հետեւյալ վերջին նախադասությունը. «Ես առաջարկում եմ, որ ես լինեմ շրջանի միլիցիան, իսկ Եղիշ Կարապետյանը՝ շրջանի դատախազը»: Եղիշ Կարապետյանն այն ժամանակ 60-ամյա, «բելազի» ճանաչված վարորդ էր: Ելույթ ունեցողը հետագայում երկու անգամ ազատագրվեց: Առաջին անգամ 50 հազար դոլար խարդախությամբ յուրացնելու համար, իսկ երկրորդ անգամ՝ Իրանից Հայաստան թմրանյութ ներկրելու գործով:

Ինչեւ, նրա ելույթից հետո ամբիոն բարձրացա, որպես ՆԳ բաժնի պետ՝ հակիրճ ներկայացրի տեղի ունեցածի ինձ հայտնի մանրամասները, բրեական գործի իրավական ընթացքն ու հնարավոր հեռանկարն՝ այնքան, որքան հասցրել էի յուրացնել մի քանի ամսում: Տեղեկացրի 300-ից ավելի մեր հայրենակիցների Օրդուբադում գերված լինելու մասին, հանդուրժողականության ու գերվածների խնդրով զբաղվելու հնարավորություն տալու կոչ արեցի ու իջա ամբիոնից: Շատերն ըմբոնեցին, մի քանիսը ոռնացին, բայց դա ինձ ամենեւին հետաքրքիր չէր:



## Պատանդների վերադարձման մանրամասներ

Առաջին հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 12-ին: Մեր կողմից մասնակցում էինք ենքը, Ղեւոնդը, ես, Կապանի շրջխորհրդի ու քաղխորհրդի նախագահները, որոնք Գերազույն խորհրդի պատգամավորներ էին, եւ Կապանի ոստիկանապետը: Ադրբեջանական կողմը գլխավորում էր Նախիջեւանի ՆԳ նախարար Մահմեդով Մահմեդը: Մենք գործի դրեցինք Նյուվադիում փորձարկված անկառավարելի զինված խմբավորումների տարբերակը: Որ նրանց ձեռքի գործն է, որ նրանք բախվել են Կապանի ոստիկանության աշխատակիցների հետ, թողել են հոտը եւ խաշվել սարերը:

Մենք պատրաստակամություն հայտնեցինք հաջորդ օրվա ընթացքում կազմակերպել ոչխարների տեղափոխումն ու հանձնումը: Պայմանավորվեցինք առավոտյան մեզ են հանձնում երեխաներին, կանանց ու ծերերին, իսկ մյուսների վերաբերյալ բանակցությունները շարունակում ենք ոչխարները հանձնելուց հետո:

Սեպտեմբերի 13-ի ցերեկվա առաջին կեսին բերեցին երեխաներին, կանանց ու ծերերին: Նրանք ակնհայտ շոյված էին ադրբեջանցիների ցուցաբերած մարդկային վերաբերմունքից եւ հիասթափված՝ մեզանից: Հավատացել էին, որ մենք իրենցով ընդհանրապես չենք հետաքրքրվել, անգամ հրաժարվել ենք իրենց հարցով բանակցել:

Իմացանք նաեւ, որ պատանդներին պահում են գնացքի մեջ, գնացքն էլ տնօրինում են Ազգային հակատի (ԱՃ) ներկայացուցիչները:

Կապանից բերեցին ոչխարները՝ մի 200 գլուխ պակաս: Հետագա խոսակցություններն անպտուղ էին, բոլոր առաջարկներն առանց հիմնավորման մերժվում էին, վճռականության պակաս կար: Բանակցողներիս շուրջը պտտվում էին ինչ-որ մարդիկ, մոտենում ականջ էին դնում մեր խոսակցությանը, հեռանում, հավաքվում իրար գլխի, նորից մոտենում: Ես ու ենքն իրարից անկախ նկատել էինք այս իրողությունը: Քննարկեցինք ու քայլ կատարեցինք: Մոտեցա ականջ դնողներից մեկին՝ Իլգար էր անունը, ու խոսկլու փորձ կատարեցի: Ես խոսում էի ռուսերեն, նա՝ մայրենի լեզվով: Կցկտուր էի հասկանում: Իմացա, որ ԱՃ-ից են, առաջարկեցի բանակցել նրանց հետ: Նա ներողություն խնդրեց եւ հեռացավ: Նրան անմիջապես շրջապատեցին ընկերները: Մի տասը բոպեից մոտե-

ցան եւ ներկայացան որպես ԱՃ ղեկավարներ. Օրդուբադի գործկոմի նախագահ Ռովշանը, մեջլիսի պատգամավորներ Ֆարաջն ու Իլգարը: Ասացին, որ գնացք կանգնեցնողն իրենք են եւ իրենք են պատասխանատվություն կրում պատանդների անվտանգության համար: Մենք առաջարկեցինք մեզ ուղեկցել կայարան եւ հնարավորություն ընձեռել հանդիպել պատանդների հետ: Նրանք տարակուսեցին, մի քիչ հապաղեցին ու համաձայնեցին հանդիպում կազմակերպել պատանդների ներկայացուցիչների հետ՝ յուրաքանչյուր վագոնից մեկ հոգու, Օրդուբադ քաղաքում՝ ինչ-որ մեկի տանը:

Այդ պահին բանակցություններին լրակլաց ներկա Օրդուբադի ԿԳԲ-ի պետը մայրենի լեզվով հոխորտաց, նստեց մեքենան ու շարժվեց մեզանից առաջ:

Ես ու Ենոք Անդրեասյանը՝ ԱՃ տղաների հետ իրենց մեքենայով մեկնեցինք Օրդուբադ: Օրդուբադում իրարանցում էր: Նեղլիկ երկրորդական փողոցներից կենտրոնական փողոց էին լցվում զինված ու աճաբեկված մարդիկ: Իլգարն իջավ մեքենայից, խոսեց առաջին պատահած մի քանիսի հետ, զայրացած ինչ-որ բաներ ասաց նրանց ու վերադարձավ: Նա ասաց, որ մեզանից առաջ եկած ԿԳԲ-ի պետը տարածել է, թե զինված հայերը գրոհում են Օրդուբադը (Եթե չեմ սխալվում՝ ԿԳԲ-ի պետի ազգանունն Ախունդով էր: Հետագայում ինձ հետ մտերմացած Իլգարը պատմել է, որ նրան վտարել են Օրդուբադից, այնտեղ վերացրել ԿԳԲ-ն եւ տարածքը տրամադրել ԱՃ ակտիվիստներից մեկին՝ իբրեւ բնակարան):

ԱՃ-ի ակտիվիստներից մեկի տանը հանդիպեցինք գնացքից բերված ներկայացուցիչների հետ: Սկզբում նեղսրտած էին, կարծես հավատացել էին, որ իրենցով զբաղվող չկա: Բայց անմիջապես ոգեւորվեցին ու միմյանց խանգարելով ասում էին. «Ես ասում էի, չէ՞, որ չի կարող պատահել, որ մեր ղեկավարները մեզանով չզբաղվեն»: Գլխավոր ներկայացուցիչը կարեւանցի հաղթանդամ ու բարի Բոկան էր: Գնացքում դեռ պահվում էին 92 տղամարդիկ:

Սեպտեմբերի 14-ի հանդիպմանը մեր կողմից մասնակցեցին նաեւ Վազգեն Սարգսյանը, ԴԽ պատգամավորներ Դավիթ Վարդանյանն ու Ազատ Արշակյանը, փոխվարչապետ Գեւորգ Վարդանյանը: Հանդիպումն անարդյունք էր: Ադրբեջանական կողմը միանշանակ պնդեց, որ մինչեւ չվերադարձվեն հովիվները՝ պատանդները մնալու են:



Կոմբինատի գործադուլի կազմակերպիչները հաշվենկատորեն օգտագործեցին Վազգեն Սարգսյանի ներկայությունը, անգամ այս պայմաններում սադրելով նոր դժգոհություն: Օղանավակայանից սահման բանակցությունների մեկնելիս, Ագարակ քաղաքի եզրին երկու տասնյակ մարդ փակեց ճանապարհը. պահանջում էին Վազգեն Սարգսյանի անհապաղ հանդիպումը կոմբինատի կոլեկտիվի հետ, որ նրան ներկայացնեն իրենց պահանջները: Բացատրեցինք, որ կարեւոր հանդիպումից ուշանալն անթույլատրելի է, ու պայմանավորվեցինք հանդիպել Ագարակի մշակույթի տանը՝ 92 պատանդի հարցով բանակցելուց հետո: Այսքանից հետո անգամ՝ միջպետական ճանապարհի Ագարակի խաչմերուկից դուրս գալիս ճանապարհը փակելու ես մեկ ձախողված փորձ կատարվեց:

Սահմանային հանդիպումից հետո գնացինք մշակույթի տան բազմամարդ դահլիճ: Ասեղ գցելու տեղ չկար: Պահանջը մեկն էր. Ղեւոնդին հեռացնել ասպարեզից:

Խոսեցինք հավամվածների հետ, անգամ Վազգենը խոսեց իրավական պետություն կառուցելու անհրաժեշտության մասին եւ այս կոնտեքստում խոստացավ Ղեւոնդին օրենքով պատժել: Օդանավակայանի ճանապարհին իմ մեքենայի առջեւից գնացող մեքենան կտրուկ արգելակեց: Իջավ զազազած Վազգենն ու նստեց իմ մեքենան: Հարցրի՝ ասաց. «Ես ամեն մի սրիկայի հետ ճամփա չեմ գնա»:

Ղեւոնդի հասցրած ապտակի մանրամասներին շտիրապետող Ազատ Արշակյանը մեղադրել էր Վազգենին: Ժամանակից առաջ ընկած ասել էր, որ Ղեւոնդի վաշտին դեռ գոյություն չունեցող պաշտպանության նախարարությունից եթե մարտկոց տրամադրեին՝ այդ միջադեպը տեղի չէր ունենա: Վազգենը դեռ ԴԽ-ի պաշտպանության հանձնաժողովի նախագահն էր:

Մեկ շաբաթ ամեն օր ապարդյուն բանակցություններ էին: Ադրբեջանական կողմը՝ կանխազգալով, որ հովիվներն սպանված են, պահանջում էր դիակները: Մենք զգուշանում էինք իրականությունը խոստովանելու հնարավորությունից: Վերջապես մեզ հանձնեցին ես 78 հոգու, հավանաբար հաշվարկելով, որ անիմաստ միջոցներ են վատնում: Մնացած 14 երիտասարդներից 10-ին տեղափոխեցին ոստիկանության մեկուսարան, իսկ չորսին Ազգային ճակատը տարավ անհայտ ուղղությամբ: Վերջին 14-ի համար դրված էր կատեգորիկ պայման. մինչեւ չվերադարձնենք հո-

վիվներին՝ ողջ, թե մեռած, որեւէ հանդիպում տեղի չէր ունենալու, նաեւ՝ ուշացրած յուրամանչյուր օրը նվազեցնում է պատանդների ողջ մնալու հավանականությունը: Հատկապես՝ շոռսինը:

Երկար քննարկելուց հետո որոշեցինք խոստովանել, որ հովիվներն սպանված են ու թաղված իրենց իսկ տարածքում: Առավելագույնը, որ մեզ առաջարկեցին բանակցությունների արդյունքում հետեւյալն էր. մենք ասում ենք դիակների տեղը, նրանք կազմակերպում են սպանված հովիվների թաղումը, որից մեկ շաբաթ անց, երբ կհանդարտվեին կրքերը, նրանք վերադարձնում էին բոլոր տասնչորսին: Գիտակցում էինք, որ որեւէ երաշխիք չկար, ընդամենն ազնիվ խոստում է, բայց այլընտրանք չկար, ու հարկադրված էինք համաձայնել:

Հովիվների թաղման բափորը վերածվեց ամբոխի՝ «արյան դեմ արյուն» կարգախոսով: Ադրբեջանական կողմը խոստովանեց, որ տվյալ իրավիճակում, հասարակական կարծիքի նման պայմաններում 14-ի վերադարձն իրենց համար համարժեք է ինքնասպանության: Բայց խոստացան ամեն ինչ անել նրանց անվտանգությունն ապահովելու համար:

Անհրաժեշտ էր փոխել հասարակական կարծիքը...

## Փորձ առաջին

Միտքն առաջարկեցին Կապանի ղեկավարները. վճարել արյան գինը:

Հանդիպեցի Օրդուբադի ռատիկանապետ Ֆաիկի հետ, որը պատասխանատվություն էր ստանձնել ոստիկանությունում պահվող 10 պատանդների անվտանգության համար (Ֆաիկը չափազանց բարի ու զգայուն մարդ էր: Նրա մայրը հայ էր: Այդ մասին ասել էր կայարանապետ Ժորայի հարսը՝ Ժենյան: Ժենյան ծագումով Նախիջեւանից էր, Ֆաիկի հետ նույն դպրոցում էին սովորել):

Բարեւեցի ու առանց ծավալվելու փոխանցեցի Ժենյայի բարեւը: Հետո խնդրեցի համոզել սպանված հովիվների հարազատներին՝ գնահատելու արյան գինը: Ֆաիկը խոստացավ փորձել:

Մի քանի օր անց զանգահարեց ու ասաց, որ անհրաժեշտ է հանդիպել, բայց առանց փողկապավորների: Ասացի, որ ինձ հետ կլինի միայն Ղեւոնդը: Կապանի ղեկավարները շատ հանախ եւ անակնկալ գալիս էին Մեղրի՝ պատանդների մասին տեղեկություն ստանալու (պատանդների



մի մասը Կապանից էր): Հաշվի առնելով այդ իրողությունը՝ նախ հանդիպեցի գործկոմի նախագահ Ենոք Անդրեասյանի հետ, տեղեկացրի սպասվելիք հանդիպման մասին եւ խնդրեցի, որ հերթական անակնկալի դեպքում զսպի կապանցիների սահման գալու համառությունը:

Հանդիպումը խոստումնալից էր: Ֆաիկը հանդես եկավ նախաբանով առ այն, որ ինքը չի ուզում կեղտոտվել, որ արյան գնի փոխհատուցման գումարին ինքը մատով անգամ չի դիպչի: Եւ հենց այն պահին, երբ պիտի ասեր մեզ շատ հետաքրքրող գումարի չափը, որից մենք առհասարակ զուրկ էինք, մեր կողքին կանգնեցին «Վոլգա» մակնիշի մեքենաներ, եւ իջան փողկապավորները:

Ֆաիկը լռեց: Մոտեցան: Ենոքի ուղեկցությամբ եկածներից մեկը լրջագույն տոնով ասաց. «Ես՝ Գեւ պատգամավորս, զգուշացնում եմ, որ ձեր արածը ապօրինություն է, եւ դուք դրա համար պատասխան եք տալու»: Ես միջամտեցի: Կարճ ու անախորժ խոսակցություն տեղի ունեցավ: Նրանք հեռացան:

Ֆաիկն ասաց, որ չնայած այդ տարբերակը շրջանառության մեջ էր դրված, սակայն նման վերաբերմունքի պայմաններում ինքը հրաժարվում է:

Փորձը ձախողվեց: Վերադարձանք: Ենոքը պատմեց, որ ինքը ոչ մի կերպ չի կարողացել բացատրել հյուրերին, նրանք համառել են, եւ ինքը նրանց հետ եկել է՝ զոնե ճանապարհին համոզելու նպատակով: Ասաց նաեւ, որ ինքանից շատ վիրավորված էին՝ «բուրի» ներկայությամբ իրենց կշտամբելու համար:

Եղածը եղած էր: Օրդուբադում հասարակական կարծիքի փոփոխության միակ անվտանգ տարբերակը ձախողված էր:

Ստիպված էինք ընտրել հարցի լուծման վտանգավոր տարբերակը՝ պատանդ բերելը...

## Փորձ երկրորդ

Երկաթուղու Մեղրիի հատվածի անվտանգությունն ապահովում էր Երեւանի մայրաքաղաքային գնդի մի գումարտակ: Գումարտակի սպասարկումն իրականացվում էր ավտոմոբիլային տրանսպորտով՝ Նախիջեւանի տարածքով:

Ծրագիրը հետեւյալն էր. եթե զնդի հրամանատար Սիդորովը տրամադրեր ներքնակներով բարձած բեռնատար մեքենա, ապա նրանց մեջ թաքնված, կենտրոնի տրամադրած հատուկ պատրաստություն անցած աշխատակիցները երասխով կթափանցեին Նախիջեւան եւ հանապարհին առեւանգած ադրբեջանցիների հետ դուրս կգային Մեղրի: Իմ խնդիրը Սիդորովին համոզելն էր: Այդ նպատակով, Երեւան մեկնելուց առաջ Ղեւոնդի հետ քննարկեցինք այն տարբերակը, թե ինչ պիտի անենք, եթե մեքենայի հարցի լուծված լինելու դեպքում վերադասը չկատարի իր իսկ տված խոստումը: Որոշեցինք այդ դեպքում նրանց փոխարինել վաշտի ու ոստիկանության աշխատակիցներով:

Երեւան մեկնեցի պահածոների գործարանի տնօրեն Գրիշա Գրիգորյանի հետ, որը Սիդորովի հետ ընկերական հարաբերությունների մեջ էր: Նրան հրավիրեցինք Զանգվի ձորում գործող եզակի սննդի օբյեկտներից մեկում հաշելու: Գրիշան չէր խմում, ես աննկատ գլուխ էի պահում: Առաջին շիշը սպառվելուն պես հարցրի, թե արդյոք կկատարի իմ խնդրանքը: Պատասխանեց, որ անգամ կյանքը կտա: Երկրորդ շշի ավարտին ձեւակերպեցի խնդրանքս: Անմիջապես խոստացավ կատարել: Հաշի ավարտին առաջարկեցի, որ, նախ, ինձ ծանոթացնի տրամադրվելիք մեքենայի ավագի հետ եւ իմ ներկայությամբ նրան հանձնարարի հաջորդ օրվա անելիքը: Գնացինք զորամաս: Եկավ բարետես մի կապիտան: Մանոթացրեց եւ ասաց, որ իր ամենավստահելի աշխատակիցն է: Հանձնարարությունը ձեւակերպեց մարդասիրության տեսանկյունից՝ հանուն 14 հայ երիտասարդի փրկության: Կապիտանը խոստացավ բարեխղճորեն կատարել հանձնարարությունը. հաջորդ օրը ժամը 16-ին ներքնակներով բարձած մեքենայով լինել Երասխում՝ իմ տրամադրության տակ: Վարորդին ոչինչ չէր ասվում: Բազմոցին նստած զնդապետը մի բաժակ էլ խմեց վաղվա գործի հաջողության կենացն ու թնեց: Ներքին մի զգացողություն ունեի, որ սթափվելուց հետո չեղարկելու է իմ ներկայությամբ տրված հանձնարարությունը: Կապիտանին առաջարկեցի զորամասի տարածքում զրոսնելով ինձ ուղեկցել մինչեւ անցակետ: Քայլեցինք: Ես էլ իմ հերթին բացատրեցի ստացած հանձնարարության կարեւորությունը եւ հատկապես բացատրեցի, որ իր անելիքը սխրանք է, եւ որ եզակի մարդկանց է վիճակված սխրանք գործել: Նա այս մտքից շատ ոգեւորված էր: Հետո ասացի, որ այդ սխրանքի համար ինքը Մեղրիում կպարգեւատրվի աշխատավարձի կրկնապատիկի չափով: Նա այնման ոգեւորված էր իր առաքելությամբ, որ խոստացավ հանձնարարության չեղարկման դեպքում անգամ օժանդակել մեզ: Պայմանավորվեցինք հանդիպել ժամը 11-ին՝ զորամասի դարպասից դուրս: Անցակետի մոտ հրաժեշտ տվեցինք միմյանց: Նա գնաց կազմակերպելու հրամանատարի հանձնարարած մեքենան ներքնակներ բարձելու գործը, իսկ ես գնացի ՆԳ նախարարություն՝ զեկուցելու գործի խոստումնալից ընթացքի մասին:

Խոստացան, որ զորամասից մեքենայի դուրս գալու դեպքում գործողություն իրականացնող խումբը ժամը 17.00-ին կլինի Երասխում:

Գիշերը Ղեւոնդի հետ պայմանավորվեցի, որ առավոտյան ժամը 11-ից կազմուպատրաստ ՆԳ Մեղրիի բաժնում սպասում են իմ զանգին:

Ժամը 11-ին Գրիշայի հետ կանգնած էինք զորամասի դարպասի դիմաց: Ճիշտ նույն ժամին «Ուրալ» մակնիշի մեքենան մոտեցավ դարպասին, որը կիսաբացվեց ու անմիջապես փակվեց: Մեքենան ետ գնաց: Հետո եկավ կապիտանն ու ասաց, որ Սիդորովն արգելել է տվյալ համարով մեքենայի ելքը զորամասի տարածքից: Դառնացա՝ ասելով, որ սթափ Սիդորովի հետ անիմաստ է խոսել: Կապիտանն անակնկալ մատուցեց՝ ասելով, որ ինքն ինչ-որ բան է մտածել, ու ներս գնաց: Քիչ անց դուրս եկավ նույն մեքենայով, բայց փոխված համարով: Ես խնդրեցի նրան՝ դանդաղ ուղեւորվել դեպի Երասխ ու սպասել, եւ շտապեցի ՆԳՆ:

Մերժեցին: Հիմնավորեցին, որ հատուկ նշանակության ջոկատը հրաժարվում է, քանի որ չեն կարող վստահել մի ծրագրի, որն իրենք չեն նախապատրաստել: Եթե նախապես հաշվարկած չլինեինք այս ընթացքը, գուցեւ հիասթափությունս ավելի մեծ լիներ: Տեղում զանգեցի Ղեւոնդին եւ հրահանգեցի ամբողջ կազմով անհապաղ ու հնարավորինս արագ հասնել Երասխ: Տղաներին դիմավորեցինք կապիտանի հետ:

Պատասխանատվության բեռը ծանրանում էր հոգուս վրա: Մտածեցի՝ ավելի նիշտ է անձամբ գնալ: Ղեւոնդն առարկեց, պնդեց, որ ինքը կգնա: Հերթով բարձրացան մեքենա եւ անհետացան թափքի ներքնակների ծալքերում: Ղեւոնդ Հովհաննիսյանը, Սուրիկ Հայրապետյանը եւ Բուդոկ Վարդանը՝ վաշտից, իսկ Հրաչ Մարգարյանն ու Նավասարդ Օհանջանյանը՝ ոստիկանության Մեղրիի բաժնից: Մեքենան շարժվեց: Ես տղաների եկած Վիլիսի ղեկին՝ լիցքավորված ինքնաձիգը ծնկներիս, ուղեկցեցի նրանց մինչեւ հայկական անցումային կետ: Կանգնել էի հարմար դիրքով, մեքենայի

դուռը բաց, մի ոտքս մեքենայի ներսում, մեկը՝ դրսում, մատս ավտոմատի ձգանին, ավտոմատը մեքենայի մեջ պահած: Մեքենան առանց զննության անցավ միմյանցից 50 մետր հեռավորությամբ տեղակայված անտեղյակ հայկական ու միջանկյալ ռուսական անցակետերով եւ կանգ առավ ադրբեջանականի փակ ուղեփակոցի առաջ: Ադրբեջանցի սահմանապահներից մեկը մոտեցավ կապիտանին, իսկ մյուսը՝ թափին: Վերջինս ոտքը դրեց թափի բարձրանալու համար նախատեսված շղթային, կանգնեց նրա վրա եւ գլուխը խոթեց թափից ներս: Շունչս պահած, կրակելու պատրաստ սպասում եմ: Թվաց, թե կասկածում է, թվաց, թե շատ երկար զննեց, բայց չէ՝ իջավ ու բացեց ուղեփակոցը:

Մեքենայի ղեկին ամբողջ թափով շտապում եմ Մեղրի: Ողջ ընթացքում մի բան եմ փափագում տղաները փորձության չենթարկվեն, եւ ափսոսում էի, որ ինքս չգնացի. այդպես պատասխանատվությունը փոքր կլիներ...

Մեղրիի լեռնանցքից ռադիոկապով միացա բաժնի հերթապահին:

– Ինչ կա,– հարցնում եմ:

– Վատ է,– պատասխանում է:

Սիրոս կտոր-կտոր է լինում, հազար ու մի բան եմ մտածում մի ակնթարթում:

– Ինչ է եղել,– հարցնում եմ:

– Տղաներն անցել են սահմանը, դեռ բաժին չեն հասել, բայց պատանդ չեն բերել,– պատասխանում է Սիրոս տեղն ընկավ: Անչափ ուրախ էի, որ տղաները ողջ ու առողջ վերադարձել էին, ոչինչ, որ ձեռնունայն...

Իմ աշխատասենյակում թեթեւ նշեցինք տղաների վերադարձը: Նախիջեւանը կտրած-անցածները բարդույթավորված էին, որ առաջադրանքը կատարել չէր հաջողվել, իսկ կապիտանը մթագնել էր: Ինչ-որ պահի վերջինիս հրավիրեցի հանգստյան սենյակ եւ առաջարկեցի վերցնել խոստացածս պարգեւավճարը: Հրաժարվեց: Ասաց՝ նախ հանձնարարությունը չենք կատարել, եւ երկրորդ՝ եթե ես վերցնեմ գումարը, կդառնամ վարձու հանձնարարություն կատարող, մինչդեռ ես ուզում եմ համարվել ձեզանից մեկը:



## Փորձ երրորդ

Տղաները մոլորված էին, մեղքի զգացում ունեին՝ նման հնարավորությունը ռացիոնալ չօգտագործելու համար: Պնդում էին, որ անհրաժեշտ է կրկնել, եւ որ հենց իրենք պիտի լինեն պատանդ բերողը: Սիդորովի տարբերակը բացառված էր: Սակայն նա ուներ Մեղրիում տեղակայված գումարտակ, որի հրամանատարը ծնունդով ղարաբաղցի հայ տղա էր: Վագիֆ էր անունը: Մայոր Վագիֆը շափազանց զգուշավոր մարդ էր եւ խուսափում էր տեղացիների հետ շփումներից: Հանդիպեցի նրան եւ առաջարկեցի օգնել: Սարսափահար մերժեց: Ստիպված էի բացատրել, որ իր ծառայակից որոշ ռուսներ իրենից ավելի հայ են: Համաձայնեց: Ինքն անձամբ կլիներ մեքենայի ավագը:

Պահածոների գործարանում նրան տրամադրած մեքենայի թափքում պատրաստեցինք զրահապատ խուց, որի մեջ պետք է տեղավորվեին տղաները: Խուցը ծածկվում էր դեղնով լի արկղերով, եւ սահմանը հատելիս տպավորություն կթողներ, թե Մեղրիից միրգ են տանում Երեւան՝ զորամասի կարիքների համար: Մեկնելուց անմիջապես առաջ Բոլդոկ Վարդանը հրաժարվեց՝ պատնառաբանելով, որ Ղեւոնդն իրեն թույլ չի տվել Նյուվաղիից խաղող բերել: Նրան փոխարինեց Վալերիկ Համբարձումյանը (Շարոն): Պետք էր շարժվել այն հաշվով, որ Օրդուբադի տարածքում գործեին մթության հողի տակ: Տեղավորվեցին, ու մեքենան շարժվեց: Նրանց զուգահեռ շարժվեց ադրբեջանցիների անցակետով անցնելու ու վերադառնալու ժամանակ տղաների անվտանգությունն ապահովող խումբը, որը պետք է դիրքավորվեր անցակետի մատույցներում եւ բացահայտվելու դեպքում չեզոքացներ վտանգը: Այդպես արվել էր նաեւ նախորդ անգամ: Վագիֆը, Ղեւոնդն ու ես կապի մեջ էինք: Նախ հայտնեցին, որ խցի մի հանգույց թերի է եռակցված եւ վտանգավոր է: Կանգնեցինք, մեքենան բեռնաթափեցինք, ճամփեզրին գտած երկաթե լարերով կապկպեցինք, միրգը բարձեցինք ու նորից շարժվեցինք: Տասը րոպե անց նորից տագնապ էր, հիմա էլ արկղերից դեղձի հյութ էր կաթում տղաների վրա: Նորից կանգնեցինք ու բեռնաթափեցինք, արկղերի տակ ծածկոցներ փռեցինք, նորից բարձեցինք: Մեքենան հասավ սահմանային անցակետ ու անմիջապես վերադարձավ: Ճանապարհը փակել էին ծանր բետոնե խորանարդներով, բաց չթողեցին: Նոր որոշում էին կայաց-

ռել. անցակետում մշտապես կանգնեցրել էին վերամբարձ կռունկ, որի միջոցով առավոտները բացում էին ճանապարհը, իսկ երեկոյան ժամը 10-ին փակում:

Այս տարբերակն այլեւս վտանգավոր էր կիրառվը. շատերն էին տեղյակ:

## Փորձ չորրորդ

Օրդուբադում Աճ փաստացի իշխանությամբ պայմանավորված՝ ընդգծված հակառուսական տրամադրություններ էին: Մեղրիի սահմանապահ զորամասի հինգ ուղեկալ գտնվում էր Նախիջեւանի տարածքում: Այդ ուղեկալները Մեղրիի զորամասին ենթարկվում էին Օրդուբադում տեղակայված պարետության միջոցով: Պարետը Կոստին ազգանունով մայոր էր: Օրդուբադցիք պարետատան աշխատողներին վոնդել էին, բայց բնակավայրերից հեռու ուղեկալները դեռ պահպանվում էին: Կոստինը շարունակում էր ի պաշտոնե մնալ պարետ, բայց արդեն Մեղրիի զորամասում էր ապրում՝ գնում-գալիս էր ուղեկալներ: Կոստինի կինը՝ Նելին, համարձակ մի գեղեցկուհի էր, որը պարբերաբար ինքնաղատում էր զորամասի ղեկավարությանը՝ ամուսնուն միայնակ ու անպաշտպան թողնելու համար: Միաժամանակ ատելությամբ էր լցված ադրբեջանցիների նկատմամբ:

Հրավիրեցի Նելիին, բացատրեցի իրավիճակը եւ խնդրեցի օգնել՝ խոստանալով շռայլ պարգեւատրություն: Անմիջապես համաձայնեց՝ չկարեւորելով գումարը: Միասին մտածեցինք սցենարը. դեռեւս պարետ ամուսնու հետ մեկնում են Օրդուբադ եւ նստում որեւէ խորովածանոցում: Հարբած ձեւացող ամուսնու ներկայությամբ մոտ է թողնում իր գեղեցկությամբ տարված տղամարդու եւ, պատճառաբանելով ամուսնու ներկայությունը, առաջարկում հետագա հանդիպման հետեւյալ տարբերակը: Իբր, ամուսինը հաջորդ օրը գործի բերումով առավոտից երեկո լինելու է Մեղրիի սահմանակից ուղեկալում, որի հրամանատարի գեղեցկուհի կինն իր ընկերուհին է: Այնպես որ՝ հնարավոր է հանդիպել հաջորդ օրը, ուղեկալի մոտակա աղբյուրի մոտ, ծառերի մեջ, խորովածի շուրջ: Ինքը կհրավիրի ընկերուհուն, իսկ նա՝ ընկերոջը:

Առաջարկեցի հրավիրել ամուսնուն եւ խնդրել նրա աջակցությունը: Ասաց. «Համարեք, որ նա արդեն տվել է իր համաձայնությունը»: Օրդուբադում ծախսելու համար Նելիին տվեցի անհրաժեշտ գումար ու ճանապարհեցի:



Հաջողության դեպքում, տեղամին քաջածանոթ հոս ուղեկցությամբ, Ծիրանի ձորից լեռնային արահետով անցնում ու դարանակալում էինք աղբյուրի շրջակայքում:

Հաջորդ օրվա երեկոյան Նելին ամուսնու հետ եկավ ու տեղեկացրեց, որ պայմանավորվել են հաջորդ օրը՝ ժամը 2-ին հանդիպել աղբյուրի մոտ: Ասաց նաեւ, որ իրենց ուշ վերադառնալու պատճառով՝ երկու զավակները մանկապարտեզից հետո անտեր են մնալու: Պայմանավորվեցինք, որ առավոտյան երեխաներին ինձ հանձնելուց հետո են մեկնում:

Առավոտյան բերեց որդիներին: Անմիջապես ուղարկեցի մեր տուն: Նրանց հանապարհելուց հետո նախապատրաստվեցինք եւ արդեն ուզում էինք մեկնել Ծիրանի ձոր, ներս մտավ Նելին: Ասաց, որ աղրբեջանցիք սահմանային անցակետում բետոնե ծանր խորանարդներն առավոտից չեն հանել, հանապարհը չեն բացում: Նելին չէր ստում, մի քանի օր փակ մնաց: Ռուսների հետ ծանր բանակցություններից հետո, նորից ցերեկները սկսեցին բացել հանապարհը: Նելիի ավագ որդին մեր տանն իրեն շատ էր ազատ զգացել, ինչը դուր չէր եկել երկամյա որդուս: Տեւական ժամանակ բողոքում էր. «Էն Դենիսը եկավ, մեր հոնը կերավ»: Մայոր Կոստինին ռուսներն ազատեցին աշխատանքից: Նրան ընդունեցինք Ղեւոնդի վաշտ՝ ծառայության: Նրա փորձը բավականին օգտակար եղավ մերոնց: Նա բարեխղճորեն ծառայեց մինչեւ զինադադար՝ մասնակցելով Հորադիզի մարտերին:

## Հաջողված փորձ

Շուրջ երկու շաբաթ պատանդ բերելու որոնումների մեջ էինք, սակայն արդյունք չկար: Ադրբեջանցիները շարունակում էին պնդել, որ հասարակական կարծիքը բարենպաստ չէ, որ «արյան դեմ արյուն» կարգախոսը մասսայական բնույթ է կրում, եւ որ այդ պայմաններում 14 հայ պատանդներին վերադարձնելու մասին շշուկ լինելու դեպքում անգամ իրենք ի զորու չեն լինի ապահովել նրանց անվտանգությունը: Միակ լուծումը մնում էր պատանդ վերցնելով՝ Օրդուբադում հասարակական տրամադրությունների դրական փոփոխությանը նպաստելը:

Գտանմ մի նոր տարբերակ: Սահմանագծին՝ Գողթանասարի կատարին, շուրջ 3200 մետր բարձրության վրա տեղակայված էր ԽՍՀՄ հակաօդային պաշտպանության կարևորագույն ռադիոլոկացիոն հենակետերից մեկը: Այստեղից վերահսկվում էր օդային օբյեկտների շարժը Միջին Արևելքում: Վարչական ենթակայության առումով հենակետը Հայաստանի տարածքում էր: Սակայն, նրան սպասարկող բարդ լեռնային ճանապարհը կառուցված էր Նախիջևանի կողմից, հետևաբար՝ մատչելի էր նրանց համար: Ճանապարհը տարվա մեջ գործում էր վեց ամիս: Այդ ընթացքում ամենազանազան մեքենաներով սննդի ու վառելիքի ձմեռային պաշար էին կուտակում: Առաջին ձյան հետ ճանապարհն անանցանելի էր դառնում: Հենակետի շինությունները, կացարաններն ու պահեստները ստորգետնյա էին: Վերգետնյա էին պատվող ու նոնվող հսկա ռադիոլոկատորները, որոնցից ամենավերջինն ու խոշորը տեղակայված էր սպիտակ ու երկնաբեր գմբեթի տակ: Ընդհանուր ցանցից սնվող էլեկտրական սնուցում գոյություն չուներ: Էլեկտրականությունը ստանում էին տեղում՝ ստորգետնյա շինություններում տեղադրված տասնյակ գեներատորների միջոցով: Նման մի հենակետ էլ գործում էր Նախիջևանի ու Եղեգնաձորի սահմանային բարձունքներից մեկի վրա, իսկ հենակետերի կառավարումն իրականացվում էր Նախիջևանի Կիվրաղ բնակավայրում տեղակայված ՀՕՊ զորամասից: Հենակետում մշտապես մնացող զինվորական սպասարկող կազմը փոքրաթիվ էր: Նրանց հետ հարաբերություն հաստատած մի քանի որսորդներ՝ քարայծեր որսալու նպատակով աշնանը բարձրանում էին այնտեղ ու, անհրաժեշտությունից ելնելով, գիշերում նրանց մոտ: Հետները տանում էին միրգ ու օղի, որի համար տարվա կեսն աշխարհից մեկուսացած այդ մարդիկ շատ շնորհակալ էին լինում: Այդ որսորդներից էին Սարգիս Քառյանն ու Մայիս Բոլյանը: Նրանց առաջարկեցինք օժանդակել հետաքրքիր մի ծրագրի իրագործմանը. սովորականի նման բարձրանում են Գողթանասար, օղի ու միրգ են նվիրում, հայտնաբերում են ամենաաչքաբաց զինվորին, ֆինանսավորում են եւ առավոտյան ճանապարհում Օրդուբադ: Վերջինս փոստից զանգում է տուն ու խոսում հարազատների հետ, գնում է խորովածանոց ու սնվում, շփվում է մարդկանց հետ եւ առաջարկում վճարի դիմաց իրեն մեքենայով Գողթանասար բարձրացնել: Խոստանում է նաև՝ տեղ հասնելուն պես որպես լրավճար տալ կարտոֆիլ, ալյուր, շաքար,



կարագ, պահածո՝ ինչ կցանկանան, միայն թե իրեն հենակետ բարձրացնեն: Առաջարկում է նաեւ՝ Գողթանասարից միայնակ չվերադառնալու համար ընկերներ վերցնել:

Որսորդները զինվորին Օրդուբադ ճանապարհելուն պես՝ ռադիոկապով պիտի տեղյակ պահեին մեզ, մենք էլ բարձրանայինք ու մի հարմար տեղ դարանակալեինք...

Հոկտեմբերի 10-ի լուսաբացին նրանք գնացին: Հաջորդ առավոտ տեղեկացրին, որ ամեն ինչ կարգին է: Տղաների մի խումբ ուղարկեցինք անմիջապես: Ես, Ղեւոնդն ու Սուրիկ Հայրապետյանը մեկնեցինք ավելի ուշ: Վիլիսով Վարեավարի սարով գնացինք մինչեւ ճանապարհի վերջին կետը՝ «Զխուռ յաթաղ»: Մինչեւ լեռնանցքի սահմանագիծ, որի հակառակ կողմով անցնում էր հենակետը սպասարկող ավտոճանապարհը, պետք է քայլեինք: Տղաներին պայմանավորված ժամին հանդիպելու համար անհրաժեշտ էր տեմպով քայլել: Նախ, պետք է գտնեինք այն արահետը, որով հավատացյալ ադրբեջանցիները ոտարորիկ ուխտի էին գալիս «Փիր»: Սկիզբը՝ մինչեւ արահետին հասնելը, կտրուկ վերելք էր: Ղեւոնդը դանդաղում էր. մի կողմից՝ թթվածնի քաղցը, մյուս կողմից՝ ծնկների ցավը խանգարում էին արագ քայլել: Նրան համընթաց գնալու դեպքում կարող էինք ուշանալ ու ձախողել ծրագիրը: Հազիվ համոզեցինք վերադառնալ ու սպասել մեքենայի մոտ, իսկ մենք շարունակեցինք ճանապարհը արագ քայլով: Միացանք տղաներին ու միասին դարանակալեցինք բլրակի վրա, որի ստորոտով անցնում էր ճանապարհը:

Մեքենայի ձայն լսվեց: Ժայռերի արանքով, մեծ թեքությամբ ցած գալարվող նեղլիկ ճանապարհի երևացող վերջնամասում բանակային «Ուրալ» նշմարվեց: Լույս օրն ավարտվում էր: Օրվա ճանգչող արեւի գծած լույսի ու ստվերի բաժանարար գիծը մեքենայի հետ բարձրանում էր լանջն ի վեր: Նրանք միաժամանակ անցան մեր կողքով: Թափքում մարդ կար: Մայիսն ու Սարգիսը ճանաչեցին՝ աչքաբաց զինվորն էր: Երբ հաջորդ ոլորանում մեքենան շրջվեց ետնամասով դեպի մեզ, տղաները ձեռքի շարժումով զինվորին մեզ միանալու հրահանգ տվեցին: Զինվորն անմիջապես ընթացքից ցատկեց՝ գլորվելով հայտնվեց ստվերում: Հետո կանգնեց ու փոքրոտ շորերը թափ տալով վազեվազ միացավ մեզ: Հարբած էր: Ասաց՝ որեւէ մեկը որեւէ պայմանով չհամաձայնեց իրեն մեքենայով բերել: Լռություն տիրեց՝ էլի՞ ձախողել էինք:

Անմիջապես նոր միտք ծնվեց:

– Մեքենան վերադառնալու է, թե մնալու է հենակետում,– հարցրինք զինվորին:

– Բարձած կարտոֆիլն անմիջապես դատարկելու է ու վերադառնա,– պատասխանեց:

– Մնում ես մեզ հետ:

«Ուրալով» գնում ենք պատանդ բերելու՝ որոշված էր: Հանկարծ նկատեցինք կարտոֆիլ բերող երկրորդ մեքենան: Միաժամանակ սկսեց իջնել կարտոֆիլից դատարկված առաջինը: Լույսին փոխարինած ստվերը դանդաղ խտանում էր: Ցրտում էր: Թեթև էինք հագնված. գետնին կպած, դողալու աստիճան մրսելով սպասում էինք, թե որտեղ կհանդիպեն մեքենաները: Բարեբախտություն էր՝ հանդիպեցին մեզանից վերև, կանգնեցին, մի քանի բառ փոխանակեցին ու շարժվեցին: Միանգամից կտրեցինք ճանապարհն ու անձնակազմին հրահանգեցինք իջնել: Վարորդը պապանձվել էր: Մեքենայի ավագը՝ էստոնացի ռուս կապիտանը, փորձեց հակադրվել: Քաոյան Սարգիսը նրա վրա պարզեց լիցքավորած ավտոմատն ու սկսեց գոռալ: Միջամտեցի, հորդորելով զերծ մնալ ինքնագործունեությունից ու բռնությունից, ապա թեւանցուկ անելով կապիտանին՝ քաշեցի մի կողմ, բացատրեցի, որ իրեն ու վարորդին որևէ վտանգ չի սպառնում, ընդամենը հարկավոր է, որ նրանք երկու-երեք ժամով մեքենան գիջեն մեզ և մինչև մեր վերադարձը՝ տղաների մի մասի հետ մնան տեղում և լինեն նրանց պատվավոր հյուրը: Կապիտանը սկսեց խնդրել, թե նոր է վերադարձել նպատակային արձակուրդից, որի ընթացքում հազիվ է համոզել կնոջը և հետը բերել զորամաս:

– Կնոջդ խոստացած ժամին այսօր տանը չես լինի՝ դա ակնհայտ է, բայց տուն հասնելուն պես՝ նրան կտաս մեկ ամսվա աշխատավարձիդ չափով լրացուցիչ գումար և կփարատես նեղացածությունը,– եզրափակեցի:

Բոլոր տղաներն էին ուզում «Ուրալով» գնալ: Իսկ այնտեղ անորոշությունն էր. հաջողության դեպքում՝ սխրանքը, ձախողվելու դեպքում՝ մահը կամ գերությունը:

Իմ որոշումով, Սուրիկ Հայրապետյանի գլխավորությամբ մնացին իրենց հանձնարարությունը կատարած ռազմղները՝ Ալիկ Ծատրյանն ու Աբո Ղուկասյանը: Նրանց խնդիրն էր հյուրասիրել և հսկել կապիտանին



ու վարորդին և կանխել երկրորդ մեքենայի վերադարձը՝ մեզ չհանգարելու նպատակով:

Իմ գլխավորությամբ մեկնում էին Վալերիկ Համբարձումյանը (Շարո), Ատոմ Հովհաննիսյանը, Հովսեփ Մարտիրոսյանը, Դանիել Պապյանը և աշխարաց զինվորը:

Մոտակա Գանձակ գյուղը մեկ ժամվա հեռավորության վրա էր: Շարոն հրաշալի էր վարում մեքենան կածանից հիշ տարբերվող այդ ճանապարհով: Ճանապարհը հազիվ էինք կիսել, մթնեց: Մթության մեջ նկատեցինք մեր ետևից եկող երկրորդ մեքենայի լույսերը: Տղաները չէին կանխել նրա վերադարձը: Շտապեցինք: Հասանք գյուղ, շեղվեցինք հիմնական ճանապարհից ու մտանք գյուղի կենտրոն: Իջանք մեքենայից: Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի մոտ էինք: Հուշաղբյուր ու նստարան կային: Լվացվեցինք, ջուր խմեցինք, նստեցինք ծխելու՝ մինչև կանցներ մեր ետևից եկող մեքենան: Գյուղում լռություն էր, անցուդարձ չէր նկատվում: Մեքենայի անցնելուց հետո՝ աղմուկից զերծ մնալու նպատակով դուրս եկանք գյուղից և փակեցինք շրջկենտրոն տանող ճանապարհը: Մտածում էինք վերցնել առաջին պատահած մեքենայի ողջ կազմը: Սպասեցինք կես ժամից ավելի՝ մեքենա չեկավ:

Քննարկեցինք համարձակ մի տարբերակ. սպասում ենք մինչև կեսգիշեր, որ բոլորը քնեն, գնում ենք Օղուրպաշ, գտնում ոստիկանությունը, գերում հերթապահ ոստիկաններին ու ձերբակալվածներին, ազատում այնտեղ պահվող 10 հայ պատանդներին և վերադառնում Մեղրի՝ Արաքսի ափով, ըստ անհրաժեշտության գերի վերցնելով սահմանային անցակետի զինվորներին ևս: Վալերիկ Համբարձումյանը բացատրեց, որ այդ նպատակի համար մեքենայում եղած վառելիքը չի բավարարի:

Վերադարձանք գյուղ և ընտրեցինք մի տուն, որը ճանապարհի մոտ էր. քիչ թե շատ շքեղ, համեմատաբար մեկուսի, և դիմացին կանգնած գրեթե նոր «Վիլիս» մեքենան հուշում էր, որ տանտերն ունևոր է: Կանգնեցինք ճանապարհի վրա՝ տնից մոտ 50 մետր հեռավորությամբ: Գործի դրեցինք աշխարաց ռուս զինվորին, որը խումհարի մեջ էր եւ անընդհատ օդի էր պահանջում: Զեռակերպեցինք ասելիքը եւ ուղարկեցինք:

– Զորամասից կարտոֆիլ ենք բերել ու վաճառում ենք կիլոգրամը 50 կոպեկով (կարտոֆիլի գինը երկու ռուբլի էր),– առաջարկել էր:

– Մենք կարտոֆիլ ունենք, բայց հիմա հարեւաններին կտեղեկացնեմ,– պատասխանել էր:

Հազիվ էր գինվորը մեզ փոխանցել պատասխանը, երբ բացվեց տան դարպասը եւ մեր ուղղությամբ քայլեց միջահասակ ու հսկա մի տղամարդ, հասակը մոտ 190 սմ, քաշը՝ 120 կգ: Դեռ չէր հասել մեզ՝ դարպասը կրկին բացվեց: Կինն էր, հարեւաններին ձայն տալով քայլում էր ամուսնու ետեւից:

Տղաներին հրահանգեցի մի քանի քայլ ետ կանգնել: Մոտեցավ. թեւի տակ պարկ կար:

– Կարտոֆիլ եմ ուզում, ձեր բախտը բերեց, առաջինն եք, բարձրացեք ու ջոկեք,– ասացի, վերցրի թեւատակի պարկն ու նետեցի թափքի մեջ:

Ոտքը դրեց մեքենայի ետեւի անիվին, ձեռքը տարավ դեպի թափքի վերին եզրը, բայց դեռ չկռչած՝ զգուշացավ, հետ քաշվեց ու փորձեց հեռանալ:

– Ո՞ւր,– հարցրի:

– Գնամ հարեւանիս կանչեմ,– դողացող ձայնով ասեց ու փորձեց քայլել կնոջն ընդառաջ:

– Կանգնի՛ր, բան եմ ասում,– մոտեցա ու բռունցքով ուժգին ու հանկարծակի հարվածեցի կրծքավանդակի ստորին հատվածին:

Հսկան տապալվեց, գլորվեց ու ընկավ ճամփեզրի փոսորակը: Կինը, որ արդեն մոտ էր եւ տեսավ այս ամենը, վայնասուն բարձրացրեց՝ գյուղն իրար խառնեց: Բոլորով միանգամից վրա հասանք վախից թուլացած, շնչակտուր ու կարծես կրկնակի ծանրացած հսկային, հազիվ բարձրացրինք, տեղավորեցինք թափքում, եւ հմուտ վարորդն ամբողջ թափով մեքենան տարավ սարն ի վեր: Մեր ուղղությամբ սկսեցին կրակել, բայց համոզված էինք, որ վախեցնելու նպատակ էին հետապնդում:

Հասանք տղաներին: Մեծ ոգեւորություն էր: Ամենաշատը ոգեւորվել էր գինովցած ռուս կապիտանը: Մի կողմ քաշեցի, խոստացած գումարը հազիվ համոզելով գրպանը խոթեցի, բացատրեցի իրենց սպասվող վտանգի մասին ու խորհուրդ տվեցի չվերադառնալ զորամաս: Առաջարկեցի վերադառնալ ու գիշերել Գողթանասարի հենակետում: Տաք էր գլուխը, կտրուկ մերժեց՝ հայհոյելով ադրբեջանցիներին: Նրանցով զբաղվելու ժամանակ չունեինք, ուր որ էր՝ լեռնանցք կհասնեին մեզ հետապնդողները, իսկ մեզ ամենեւին պետք չէր բախում:



Ճանապարհ ընկանք: Մեզ համար հեշտ էր՝ տուն էինք գնում: Ադրբեջանցի հսկայի ոտքերը երերում էին, ծնկները՝ ծալվում: Շալակել հնարավոր չէր՝ ուղղորդում էինք, օգնում էինք ձեռքից քաշելով, հրելով, խնդրում էինք, համոզում: Անունը Սալեխ էր, Սալեխ դայի էինք ասում: Բացատրում էինք, թե ինչ նպատակով ենք իրեն տանում, որ իրեն ոչ մի վտանգ չի սպառնում, որ ինքն առաջիկա մի քանի օրերին լինելու է մեզ համար ամենակարեւոր ու արժեքավոր մարդը: Անհույս էր, ոտքերը քարշ տալով հազիվ էր փոխում ու անընդհատ մղկտում: Այդպես դանդաղ քայլում էինք դեպի մեքենաները: Դեռ ճանապարհի կեսը չէինք անցել, երբ ռադիոկապով փոխանցեցին, որ Օրդուբադի ոստիկանապետ Ֆաիկը երկաթուղու կապով ուզում է խոսել հետս: Հանձնարարեցի փոխանցել, որ վերադառնում եմ Երեւանից, տեղ կհասնեմ մի քանի ժամից, եւ եթե հրատապ է՝ հասնելուն պես կկապվեմ: Մեղրիի կայարանապետ Ժորա Հայրապետյանի միջոցով կրկին փոխանցեցին, որ ես ոչ մի Երեւան էլ չեմ գնացել, այլ Գանձակ եմ գնացել, եւ մեր արածը շատ վատ հետեւանքներ է ունենալու: Տաքլուխ կապիտանին բռնել էին: Նրան հյուրասիրողները հավանաբար շատ էին անկեղծացել, սա էլ իր հերթին պատմել էր իր իմացածը: Հասանք մեքենաներին, ուր կրակի մոտ նստած սպասում էր Ղեւոնդը: Նա անկեղծորեն գրկեց Սալեխ դայիին՝ ինչպես հարազատ հեռուն: Հասանք Գուդեմնիս ու Վարհավար գյուղերի միջակայքում գտնվող աղբյուրին, ուր սեղան ու նստարաններ կային: Բացի կապիտանին հյուրասիրողներից, մյուսներս շատ քաղցած էինք: Նստեցինք: Ղեւոնդը Սալեխ դայիին օղի լցրեց: Սա փորձեց հրաժարվել, չստացվեց: Երկու բաժակ խմեց, լեզուն բացվեց. «Ես արդեն համոզվեցի, որ ինձ վտանգ չի սպառնում, իսկ ինձ ընտրելով՝ ձեր բախտը բերել է: Ես վեց աղջիկ ունեմ, վեցն էլ ամուսնացած են, փեսաներս էլ ճանաչված ու հարգված մարդիկ են: Կտեսնեմ, թե ինչ են բերելու այդ Ազգային ճակատի գլխին»: Հասանք Մեղրի: Ոստիկանության ու վաշտի ամբողջ կազմը հավաքված սպասում էր: Սալեխ դայիին տեղավորեցինք ամենաանվտանգ հյուրանոցում՝ ոստիկանության մեկուսարանում ու գնացինք հանգստանալու:

Քայլ կատարելու հերթն ադրբեջանական կողմինն էր, համբերությամբ սպասում էինք: Հոկտեմբերի 16-ին Հայաստանում նախագահական առաջին ընտրություններն էին: Առավոտյան քվեարկեցի ու մնկնեցի աշխատավայր: Քիչ հետո զանգեց կայարանապետը ու փոխանցեց, որ Նախիջեւա-

նի ԱՃ լիդեր ու Ադրբեջանի մեջլիսի պատգամավոր Ֆարաջն ուզում է հեռախոսով խոսել ինձ հետ մեկ ժամից: Մեկնեցի կայարան ու սպասեցի կայարանապետի հետ՝ նրա աշխատասենյակում: Ֆարաջը զանգեց ու առաջարկեց Սալեխ դայիին փոխանակել 14 պատանդներից 4-ի հետ: Հավանաբար այն շորսի, որոնց ԱՃ-ն պահում էր մեզ անհայտ վայրում: Պատասխանեցի անմիջապես ու վերջնական.

– Մեզ համար ընդունելի փոխանակման սկզբունքը միակն է՝ բոլորին բոլորի հետ: Եթե դուք առաջարկում եք մեկ հոգուն փոխանակել շորսի հետ, ապա համբերեք, կբերենք երեք հոգու եւ հետո միայն կփոխանակենք բոլորին բոլորի հետ, երկու հոգի էլ պարտ կմնաք,– ավարտելուն պես դրեցի լսափողը, բայց մնացի կայարանում:

Կես ժամ չանցած՝ կրկին զանգեց Ֆարաջն ու ասաց. «Համաձայն ենք, ժամը 13.00-ին փոխանակենք Սալեխին բոլոր տասնչորսի հետ»:

Սալեխ դային նիշտ էր զուշակել: Փոխանակման ժամանակ Օրդուբադի ոստիկանապետ Ֆաիկն ասաց, որ հասարակական տրամադրությունների շրջադարձ է տեղի ունեցել: Մարդիկ, համատարած պախարակելով ԱՃ-ին՝ ասում էին. «Պատանդը հայերի նման են վերցնում՝ տան միջից, թե չէ գնացքից մարդ իջեցնելու համար ձեզ հերոս էիք երեւակայում»:

Մարդատար գնացքն Օրդուբադում կանգնեցնելու պահից դադարել էր երկաթուղու գործունեությունը: Պատանդների փոխանակումից երկու օր անց՝ հոկտեմբերի 18-ին տեղի ունեցավ հերթական հանդիպումը Նախիջեւանի հետ: Նպատակը երկաթուղու վերագործարկումն էր: Նրանց կողմից մասնակցում էին եւ իշխանությունը՝ ի դեմս ՆԳ նախարար Մահմեդով Մահմեդի, եւ ԱՃ-ն՝ ի դեմս մեջլիսի պատգամավոր Ֆարաջի: Մեծ հաշվով մենք բարձր էինք գնահատում նրանց գործունեությունն այն առումով, որ կարողացել էին բարդագույն իրավիճակում ապահովել 14 պատանդների անվտանգությունը: Երկուսին էլ հրավիրեցինք Մեղրի: Մի ինչ վարանեցին, բայց հավանաբար ամաչեցին ու համաձայնեցին: Ենոք Անդրեասյանի հետ միասին եկանք Մեղրիի հրապարակ: Իջանք մեքենայից ու համատեղ շփվեցինք հրապարակում եղած մարդկանց հետ: Այդ օրը պատանդներից Սիմոն Մուրադյանի հայրը՝ Վանիկ Մուրադյանը, որդու վերադարձի կապակցությամբ հաշկերույթ էր կազմակերպել եւ մեզ՝ ղեկավարներիս հրավիրել: Առնասարակ նման միջոցառումների չէի մասնակ-



ցում: Բայց այս դեպքում՝ նախօրոք զանգելուց ու տեղեկացնելուց հետո, մասնակցեցինք ադրբեջանցի հյուրերի հետ:

## Երկաթուղու վերագործարկումը

Նույն օրը, երբ մենք բանակցում էինք երկաթուղին վերագործարկելու հարցի շուրջ, Բաքվում Ադրբեջանի Գերագույն խորհուրդն անկախություն հոչակեց: Մինչ այդ խորհրդային բանակն անկախացող Հայաստանի տարածք Մեղրիում պաշտպանում էր չանկախացող Ադրբեջանի երկաթուղու անվտանգությունը: Այդ պահից սկսած՝ բանակը դադարեց վերահսկել երկաթուղին ու կենտրոնացավ Մեղրիի գարնիզոնում՝ զբաղվելով միայն ինքն իր պաշտպանությամբ: Ադրբեջանական կողմն անվտանգության երաշխիքներ էր ուզում երկաթուղու վերագործարկման համար: Նախկինի պես բանակային անվտանգությունը հնարավոր չէր կազմակերպել թե անձնակազմի, թե տեխնիկական սակավության առումով: Ի պաշտոնն անվտանգության երաշխավորը դարձա ես, խոստանալով սկզբնական շրջանում մի քանի օր յուրաքանչյուր շարժակազմ ուղեկցել լուսային ազդանշանով կահավորված ոստիկանական մեքենայով: Լավ գիտակցելով, որ մեկ ոստիկանական մեքենայով հնարավոր չէ ապահովել երկաթուղու անվտանգությունը, այնուամենայնիվ՝ համաձայնեցին: Քանի որ, մի կողմից՝ երկաթուղու գործունեության վերականգնումը խիստ անհրաժեշտ էր նաեւ իրենց, մյուս կողմից՝ իրենց Մեղրի տանելու մեր համարձակությունը գնահատեցին իրավիճակի բացարձակ տիրապետում: Արդյունքում, հոկտեմբերի 24-ին երկաթուղին վերագործարկվեց բեռնափոխադրումների մասով, իսկ նոյեմբերի 5-ից գործեցին նաեւ մարդատար գնացքները:

## Ռուսական վերաբերմունքի փոփոխություն

Ադրբեջանի անկախության հոչակումից դեռ երկու օր առաջ՝ 1991թ. հոկտեմբերի 20-ին, Ադրբեջանի կառավարությունը N 226Բ որոշումով իրենց տարածքում գործող խորհրդային ռազմական ունեցվածքի գույքագրման պահանջ դրեց: Արգելվեց Նախիջեւանի տարածքով Մեղրիում տեղակայված թիվ 2393 սահմանապահ զորամասի սպասարկումը: Նոյեմ-

բերի 6-ին զորամասի 16 ուղեկալներից 10-ն անցավ Ադրբեջանի ենթակայության տակ: Վերադասի ցուցումով մենք օգնեցինք ռուսներին դուրս գալ նեղ վիճակից, հատկապես կազմակերպեցինք ավելացած անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների տեղափոխումը Մեղրիով Երևան: Նույնն արվել էր Արարատի շրջանում: Նոյեմբերի 24-ին սահմանապահ զորամասի հրամանատար, գնդապետ Ռակովիչ Նիկոլայ Սերգեյիչն այցելեց մեզ և հայտնեց, որ հետայսու, անհրաժեշտությունից ելնելով, իրենք էլ կաջակցեն մեզ: Միաժամանակ ասաց, որ ինքն անձամբ կարող է զինվորի կարգավիճակով մեզ հետ միասին սահման պահել, սակայն զինվորական, զենք ու զինամթերք չի կարող տրամադրել: Դրանից հետո մի քանի անգամ նա եկել է ինձ մոտ և ասել, որ մեքենա է ուղարկում Երևանից համազգեստներ բերելու, և հարցրել է, թե որքան և ինչ չափսերի համազգեստ է անհրաժեշտ մեզ: Արդյունքում, Ղևոնդի վաշտին ու ոստիկանության անձնակազմին ապահովում էր զինվորական համազգեստով:

Ես նրա առաջ դրեցի զինամթերքով օժանդակելու խնդիր: Ասաց, որ իր ուժերից վեր է և միայն սահմանապահ զորքերի վարչության պետ, գեներալ Բաբենկոյի համաձայնությամբ կարող է օժանդակել: Ասացի, որ նա էլ իր հերթին կմերժի: Ինքն էլ՝ դուք ձեր կշիռը չգիտեք, չի մերժի: Բաբենկոյին գեներալ-մայորի կոչում շնորհել էր ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Մեղրիի մաքսատան բացման օրը՝ 1991թ. մայիսի 6-ին, Ռակովիչի ներկայությամբ Բաբենկոյին ասացի. «Քո հրամանատարը շատ վախկոտ է ու ժլատ, մեզ զինամթերք չի տալիս»:

Սա խոժոռված նայեց Ռակովիչին ու հարցրեց. «Ինչու՞ չես օգնում»: Վերջինս խորամանկորեն արդարացավ. «Իսկ ինչպես ձեռակերպեմ»: «Ես պիտի քեզ սովորեցնեմ. դուրս գրիր զինավարժությունների վրա»,– պատասխանեց գեներալը:

Հետագայում հրամանատարը մեզ պարբերաբար հրավիրում էր հրաձգարան: Միասին կրակում էինք, հետո առանձին, շշուկով ասում էր. «Երեկոյան 9-ին քո ծառայողական մեքենան կուղարկես, բայց թող ոչ ոք չիմանա»: Հաջորդ օրը Ղևոնդին հրավիրում էի հանգստյան սենյակ ու նրան տալիս արկղերով փամփուշտներ, ձեռքի նռնակներ, փողատակ ու հաստոցային նռնականետերի նռնակներ: Նա ոգեւորվում էր ու հարցնում՝ որտեղից, ասում էի՝ Վազգենն է ուղարկել, թեև նախորդ օրը հրաձգարանում միասին էինք կրակել:



## Ուղղաթիռի կործանման հետեւանքները

1991թ. նոյեմբերի 20-ին Ղարաբաղում՝ Մարտունիի մոտ ընկավ մի ուղղաթիռ, որի անձնակազմն ու ուղեւորները՝ 22 հոգի, զոհվեցին: Նրանց մեջ էին Ադրբեջանի ՆԳ նախարարը, գլխավոր դատախազը, փոխվարչապետը, պատգամավորներ, սովետական բարձրաստիճան զինվորականներ, Ղարաբաղի ՆԳ նախարարն ու դատախազը (հայ չէին), Ռուսաստանից ու Ղազախստանից դիտորդներ, լրագրողներ: Ադրբեջանը որոշեց, որ դա տեռորիստական ակտի հետեւանք էր, եւ ընկավ հիստերիայի մեջ: Նոր օրյա սուգ հայտարարվեց:

Այս դեպքը հետեւանքներ ունեցավ նաեւ Մեղրիի համար:

Նախ, նոյեմբերի 22-ին Զանգելանի սահմանագծի մոտ՝ ջրող երկաթբետոնե խողովակում տեղադրված մեծաքանակ ամոնիտով պայթեցրին ավտոճանապարհը: Ձեւավորվել էր խոր ու անհաղթահարելի փոս: Հաջորդ առավոտյան Կապանից տեղեկացրին, որ Երեւան–Կապան գնացքը պատանդ են պահել Մինջեւանում: Գնացքի մեջ ընդամենը մեկ տասնյակ ուղեւոր կար: Օդուրաղի դեպքից հետո դեռ վստահությունը չէր վերականգնվել, քչերն էին համարձակվում գնացքով երթեւեկել: Զանգելանի հետ մենք հարաբերություններ չունեինք: Ռուսների աջակցությամբ շուրջ երեք տարի Նյուվադին Զանգելանի վարչական տիրապետության տակ պահելու, ապա կորցնելու ու փախստականներ վաստակելու հետեւանքով նույնիսկ թշնամաբար էին տրամադրված: Ղևոնդի հետ խնդիրը քննարկելով գնացինք արեւելյան սահման: Որոշեցինք նախ կարգաբերել ու փորձարկել Ներքին զորքերից ժառանգած МТЛБ-ի (բազմանշանակ, թեթեւ զրահապատված քարշակ) կովշը (շերեփ): Վաշտի տղաները տեղադրեցին, ստուգեցին ու փորձարկեցին՝ արդարացրեց: Այդ պահին եկավ ռուս պատգամավորներ Պապկովի ու Շաբաթի հետ նյուվադեցիների հարցերով զբաղվող կինը: Նա ռմբով գնում էր նյուվադեցիների համար: Նրան ներկայացրինք գնացքի պատմությունը եւ խնդրեցինք փոխանցել պաշտոնական Զանգելանին, որ եթե նշված ժամին գնացքը չհասնի Կապան՝ մենք միջոցներ կձեռնարկենք: Կինը չհամաձայնեց բանավոր փոխանցել

որևէ միտք, բայց ասաց, որ կարող է նամակ հանձնել: Վերոնիշյալ բովանդակությամբ մի նամակ գրեցի ու, կնոջն օգտակար լինելու համար՝ մեքենայով տեղափոխեցինք մինչ նանապարհի պայթեցրած հատվածը: Նամակում նշված ժամին կապվեցինք Կապանի հետ եւ իմացանք, որ գնացքը չի հասել: Գնացինք պայթեցված հատված ու МТЛБ-ով լցրինք փոսը՝ որքան որ հնարավոր էր: Համենայն դեպս, քարշակն ու Վիլիսը կարողացան անցնել: Այդ պահին արդեն մութ էր: Այդպես մթության մեջ, մեզ անծանոթ ասֆալտապատ նանապարհով շարժվեցինք դեպի Ջանգեզան: Առջևից գնում էր քարշակը՝ տանելով Ղետնդին ու ենթականերին, իսկ ետեւից՝ Վիլիսը, Սուրիկ Հայրապետյանը՝ ղեկին, ես՝ կողքը: Դժվար է ասել՝ որքան էինք գնացել: Հանկարծ մոտ տարածությունից սկսեցին գնդակոծել քարշակը: Հետևեց պատասխանը: Քարշակի բոլոր հնարավոր կրակակետերից կրակում էին հակառակորդի կրակոցների ուղղությամբ: Ես էլ էի կրակում՝ կիսով չափ մեքենայից դուրս եկած, մեկ ձեռքով նրանից կառչած: Հանկարծ հակառակորդը միանգամից լռեց: Տեղ հասանք Վեժնավիրի պաշտպանական հենակետն էր: Բոլորը փախել էին: Շարունակելն անիմաստ էր: Շրջվեցինք ու վերադարձանք: Մեքենայի լուսարձակների տակ տեսանելի էին քարշակի դիմացի գրահին ցցված փամփուշտների տասնյակ պողպատյա միջուկներ: Մեղրի հասնելուն պես կապվեցինք Կապան՝ գնացքը հասել էր: Մինչդեռ, այս ամենից անտեղյակ Կապանի ղեկավարները տարածում էին, որ իրենք են հեռախոսակապով լուծել խնդիրը:

Կործանված ուղղաթիռի հաջորդ հետեւանքը ցավալի էր ու դժվար հաղթահարելի:

## Մարդաորս

Նոյեմբերի 23-ին Ռոստանի ոլորանների վերին մասից՝ «Մազրա դուզ» կոչվող հատվածից, Կուբաթլուի զորամասի ռուս զինվորականների աջակցությամբ առեւանգել ու Կուբաթլու էին տարել Ազարակի ճանճաշինական վարչության Երեւանից վերադարձող «Կամազ» մեքենան, վարորդ Մարտիկ Գեւորգյանին, կնոջը՝ Թամարային ու եղի հարեւանուհուն (Փանոսաց Սամոյի կնոջը):



Փորձում էինք պատանդներին ետ բերել բանակցությունների միջոցով: Արդյունք չկար, որովհետեւ, ինչպես հետո պարզվեց, նրանց խոշտանգել ու սպանել էին անմիջապես:

Մեղրիում արբանում էր ստեղծված արկածախնդրությունը:

Դեկտեմբերի 6-ին, իրենց զորխեցի ընկերների հետ միասին, Փանոսաց Սամոն ու Վայրի Անդիկն առեւանգեցին երկաթգիծը շահագործող վեց անպաշտպան բանվորների ու փախցրին Գորիս: Նրանք նույնիսկ ադրբեջանցի չէին՝ Նախիջեւանի թյուրմալեզու բաղամացիներ էին, որոնց հատուկ ընտրել էին Մեղրիի տարածքում գիծը շահագործելու համար: Ի պատասխան՝ երկաթուղին դադարեց գործել, իսկ Նորաշենում գերեցին հայկական բեռները տեղափոխելու նպատակով այնտեղ գտնվող հայ մեքենավարներին: Մեծ ջանքերի գնով վերադարձրինք երկաթուղու բանվորներին, եւ դեկտեմբերի 13-ին երկաթուղին վերագործարկվեց: Բնականաբար, ազատ արձակվեցին հայ մեքենավարները:

Բայց ես չէի երաշխավորում Բաքու–Նորաշեն մարդատար գնացքի անցումը Մեղրիով, որը 107 ուղեւորներով արդեն մեկ շաբաթ կանգնած էր Մինջեւանում: Մի կողմից՝ սա մի կարեւոր լծակ էր հայ պատանդների վերադարձն ակտիվացնելու համար, մյուս կողմից՝ իրոք վտանգավոր էր:

Ամեն օր ինձ զանգում էր Նախիջեւանի ՆԳ նախարար Մահմեդովը եւ խնդրում բաց թողնել տվյալ մարդատար գնացքը: Գնացքում, բնականաբար, հիմնականում նախիջեւանցիներ էին, որոնք, իրոք, հայտնվել էին ծանր վիճակում: Ես առարկում էի՝ պատճառաբանելով, որ վտանգավոր է:

Դեկտեմբերի 16-ին Գորիս–Լաչին սահմանագծին նախատեսված էր հանդիպում Լաչինի ոստիկանապետի հետ՝ նրա աջակցության ակնկալիքով: Գորիս մեկնելուց առաջ մոտեցավ մի «սրտացավ գործիչ», նա՝ որ կազմակերպել էր կոմբինատի գործադուլը: Հարցրեց, թե արդյոք հնարավոր չէ՞ գնացք կանգնեցնել ու պատանդ վերցնել: Բացատրեցի, որ դեռ այլ հնարավորությունները սպառված չեն, որ հիմա իսկ մենք ենք բանակցությունների, որ բեռնատար գնացքից մեքենավարներին վերցնելու պատասխանն անմիջապես կտան Նորաշենում՝ մեր մեքենավարներին գերելով: Ինչ վերաբերում է մարդատար գնացքին, ապա առանց իմ երաշխիքի չի անցնելու: Իսկ նրանից մարդ վերցնելը հնարավոր է դիտարկել որպես մի վերջին, անպատվաբեր ու անկանխատեսելի հետեւանքներով լի հնարավորություն:

Գորիսում իմացանք, որ Բաքու–Նորաշեն մարդատար գնացքը Մեղրիի կայարանում կանգնեցրել է ամրոխը: Մինչ մենք Գորիսից մեքենայով կհասնեինք, իրավիճակը փրկել էր Վազգեն Սարգսյանը, որը եկել էր ուղղաթիռով՝ ՄՀՆՋ-ի (միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ) ուղեկցությամբ: Փրկել էր այն իմաստով, որ չէին հասցրել մարդ սպանել, բայց անսահման բռնություններ ու բռնաբարություն էին եղել: Վազգենի գլխավորությամբ բոլորին իջեցրել էին վագոններից ու հավաքել մեկ մուտք ունեցող սպասասրահում, որ կարողանան պաշտպանել: Առանձնացրել էին 12 հոգու՝ Նախիջևանի հաշվառում չունեցող քաղաքացիներ, եւ տեղափոխել ոստիկանության մեկուսարան՝ որպես պատանդ, եւ այդ գնով համոզել ամրոխին, որ մյուսներին գնացք նստեցնեն եւ հանապարհեն Նախիջեւան:

Ղեւոնդի հետ Գորիսից Մեղրիի կայարան հասնելով՝ դարձանք ականատեսը հետեւյալ տեսարանի. Վազգենի ուղեկիցներն ու ոստիկանները կրկնակի կենդանի պատ էին կազմել, որի միջակայքով ադրբեջանցի ուղեւորներին մեկ-մեկ՝ թեւանցուկ արած տեղափոխում էին գնացք: Վազգենն անձամբ էր ուղեւորներին ուղեկցում: Սպասասրահից դուրս բերվող յուրաքանչյուր ուղեւորի ուղղությամբ, կենդանի պատերի աջունախ կողմերից հարձակվում էին մի քանի հոգի ու, պատ կանգնած աշխատակիցներին հրելով՝ հարվածում նրանց: Հարվածներ էին ստանում նույնիսկ ուղեկցողները: Հարվածեցին անգամ Վազգենին: Հարվածողը Կուրաթլու տարված վարորդ Մարտիկ Գեւորգյանի որդին էր: Վազգենը հարվածողի ով լինելը իմանալուն պես ներողամտություն դրսեւորեց, անգամ հուզվեց: Մոտենալուն պես հարկադրված էինք համաչափ ուժ կիրառել անպաշտպան ուղեւորներին ակնհայտ բռնության ենթարկողների նկատմամբ, որից հետո ամբոխը որոշ չափով սթափվեց:

Ուղեւորներին գնացքում տեղավորելուն պես՝ երկաթուղու կապով Մահմեդովին տեղյակ պահելուց հետո, գնացքն անձամբ ուղեկցեցի մինչեւ սահմանային անցակետ: Սա Մեղրիով անցնող վերջին մարդատար գնացքն էր: Անցակետում ինձ սպասում էր Օղուբաղի ոստիկանապետ Ֆաիկը: Նա բարձրացավ գնացք, շփվեց ուղեւորների հետ եւ ասաց, որ մի քանի հոգի Մեղրիի կայարանում հասցրել են փախչել մարդատար գնացքից ու թաքնվել բեռնատար գնացքի քարշակի մեջ, նաեւ հաստատեց բռնությունների ու բռնաբարության մասին տեղեկությունը: Ես առաջարկեցի, որ անցակետում եղած ադրբեջանցիներից մեկը գա ինձ հետ, կանչելով խոսի թաքնվածների հետ, այլապես նրանք կարող են մեզ չհավատալ եւ դուրս չգալ թաքստոցից: Վախեցան: Առաջարկեցի՝ որպես ժամանակավոր ու կամավոր պատանդ, իրենց մոտ թողնել իմ տեղակալ Սենիկ Համբարձումյանին, որ համաձայնեն: Եկանք կայարան, մոտեցանք շոգեքարշին, ներկայացուցիչը մայրենի լեզվով ինչ-որ բան ասաց, եւ թաքնվածները դուրս եկան: Նրանք, նաեւ ցրտից պատսպարվելու նպատակով, թաքնվել էին քարշակի դեռ տաք շարժիչների սրահում: Նրանց տարա սահման ու հանձնեցի Ֆաիկին: Ես ներքուստ ամաչում էի տեղի ունեցածի համար, նրանք ինձ էին նայում շնորհակալ հայացքներով...

Ամբողջ գիշեր կայարանում էինք եւ հեռախոսային բանակցություններ էինք վարում Նորաշենում պահված հայ մեքենավարների փոխանակության շուրջ: Բոլորի հետ կարծես ընդհանուր հայտարար գտնվում էր, բացի Նորաշենի ԱՃ-ի ղեկավար Շահմարդանից: Վերջապես համաձայնության եկանք ու ոստիկանության մեկուսարանում եղած 12 ադրբեջանցիներից 6-ին փոխանակեցինք մեքենավարների հետ, Մեղրիի սահմանագծին: Նրանց հետ էր նաեւ հայկական երկաթուղու վարչության պետի տեղակալը (եթե չեմ սխալվում՝ Ասլանը), որը մեքենավարներին քաջալերելու նպատակով՝ նրանց հետ մնկնել էր Նորաշեն: Երեւան գնաց նաեւ Վազգենը՝ իր թիմով:

Կայարանապետը խոստովանեց, որ գնացքն անցնելու երաշխիք տվել է ինքը՝ իմ անունից, հավատալով «սրտացավ գործչի» խոսքերին, թե, իբր, ինձ հետ պայմանավորվել են: Միասին որոշել էին հերոսանալ...

Կուբաթլուն տվեց մի կնոջ դիակ՝ կիսաայրված, աննանաչելի: Ասացին, որ վարորդի կինն է՝ Թամարը: Հարազատները չճանաչեցին եւ հրաժարվեցին թաղել: Մեղրիում քաոս էր: Ինչ-որ մեկն առաջարկել էր դիակը տանել ու դնել գործկոմի նախագահի աշխատասենյակում: Տարել էին: Հետո հարազատներից մեկը առամնաշարից էր ճանաչել, եւ այդ հանգամանքով պայմանավորված՝ գործկոմից դիակն իջեցրին ու կազմակերպեցին թաղումը:

Խորհրդային իշխանության հոգեվարքի շրջանում, տեղաբնակ ադրբեջանցիների ճարահատյալ արտագաղթի ընթացքում աշխի ընկած ջոկատայիններ, որոնք անկախության շրջանում շմտան պետական ստրուկտուրաներ՝ ակտիվացել էին: Խորամանկները՝ չերեւալով, ծրագրեր էին

դնում շրջանառության մեջ, պարզունակները՝ հողարկվելով, գերվածների հարազատների ներկայությամբ իրագործում էին:

Գործիքից հետո հաջորդ թիրախը ոստիկանությունն էր: Տարածել էին, թե որոշել են մեկուսարանում պահվող վեց ադրբեջանցիներին թաքուն վերադարձնել:

Հարազատներից եկան եւ ասացին, որ ինձ չեն վստահում եւ ուզում են ադրբեջանցիներին տանեն ու իրենք պահեն, մինչեւ երկու գերիների հարցը պարզվի:

Բացատրեցի, որ դա շատ վտանգավոր է, որ ես նման պատասխանատվություն չեմ վերցնի: Թվաց, թե հասկացան ու գնացին:

Հաջորդ օրն ամբոխը շրջափակեց ոստիկանության մուտքը: Ծրագրված էր լինգերով ջարդել մեկուսարանի դուռը եւ սպանել ադրբեջանցիներին: Ոստիկաններն ու վաշտի տղաները՝ ծեծվող պատի վերածված, հագիվ էին դիմադրում ու պահում շենքի մուտքը: Ծանոթ, ընկեր, բարեկամ՝ մարդիկ համատարած ամբոխի էին վերածվել՝ խելագար ու անկառավարելի: Նույնիսկ կարողացան ճեղքել աշխատակիցների պատնեշը, հասնել դռանը ու լինգը մտցնել փակ դռան փեղկի արանքը: Երկու անհայտ ճակատագրի ու կիսաայրված դիակի պայմաններում ուժի կիրառումն անթույլատրելի էր: Անթույլատրելի էր նաեւ նրանց նպատակի իրագործումը: Ելքը գտավ Ղեւոնդը: Իր վրա կենտրոնացնելով ամբոխի ուշադրությունը՝ ասաց. «Ժողովո՛ւրդ, ճո ազգովի մարդ չենք սպանելու: Կոնկրետ ո՞վ է ուզում ադրբեջանցի սպանել՝ թող մնա, ես ապահովում եմ այդ հնարավորությունը, ովքեր չեն ուզում՝ հինգ քայլ ետ գնան»: Բոլորը հինգ քայլ ետ գնացին. ամբոխը սթափվեց:

Ես, օգտվելով սթափության միջակայքի ընձեռած հնարավորությունից, ինձ մոտ հրավիրեցի լինգով դուռը ջարդող, գերված Մարտիկ Գեւորգյանի եղբորը՝ Ռուբիկին, որն իմ դասընկերուհու հայրն էր:

– Ինչո՞ւ չօգտագործեցիր եղբորդ վրեժը լուծելու հնարավորությունը,– հարցրի:

– Ես չեմ կարող մարդ սպանել, այն կ՝ անմեղ,– պատասխանեց:

– Այդ դեպքում սա ինչ է, ինչո՞ւ ես լինգն առել ու առաջ ընկել:

– Ասում են՝ դու ուզում ես նրանց թաքուն հանձնել:

– Ո՞վ է ասում:

– Բոլորը:



– Շատ լավ, դու՛, ինձ հարազատի պես ճանաչելով հանդերձ, չես վստահում եւ հավատում ես վերացական բոլորին: Ես քեզ վստահում եմ: Պայմանավորվում ենք այսպես: Երեկոյան ժամը 6-ին կգաս ինձ մոտ, եւ քեզ արձանագրությամբ կհանձնեմ ադրբեջանցիներից մեկին՝ կազմակերպելով ձեր տեղափոխումը ոստիկանական մեքենայով: Կպահես ձեր տանը՝ որքան որ անհրաժեշտ է: Դու ես լինելու պատասխանատվությունը կրողը նրա կյանքի ու առողջության համար: Եթե նրան որեւէ բան պատահի, պատասխան ես տալու օրենքի առաջ: Համաձայն ես:

– Համաձայն եմ,– պատասխանեց:

– Հիմա դուրս ես գալիս, հավաքվածներին ասում ես, որ քեզ բավարարում է մեր պայմանավորվածությունը եւ այլեւս այստեղ անելիք չունես: Վերցնում ես բարեկամներիդ ու հեռանում: Ես քեզ կսպասեմ ժամը վեցին,– պայմանավորվեցինք:

Ռուբիկ Գեւորգյանը կատարեց պայմանավորվածությունը, ու բոլորը ցրվեցին:

Ամենաբարդը, սակայն, առջեւում էր. համոզել ադրբեջանցուն, որ նա՝ իր կամքով, գնա այդ քայլին: Ընտրեցի վայելչակազմ, 35 տարեկանի մոտ մի երիտասարդի: Զինվորական ծառայությունը վերջացնելուց հետո նա հաստատվել էր Ռուսաստանում եւ, տեւական բացակայությունից հետո, վերադարձել էր տեսակցելու ծնողներին: Համոզելը բարդ էր, բայց կարողացա հավատացնել, որ այդ քայլով նա մոտեցնում է իր եւ մյուս հինգի ազատությունը, որ նրան որեւէ վտանգ չի սպառնում, եւ որ առավելագույնը երեք օրից նա կվերադառնա: Այս երաշխիքների միակ հիմքը իմ ներքին համոզմունքն էր:

Անվտանգության նկատառումներից ելնելով, մինչեւ ժամը 6-ը, նախ, խոսեցի Ռուբիկի փեսայի հետ, ապա՝ տան վրա հողարկված հսկողություն ծրագրեցինք: Ռուբիկի ու հարազատների մասով հանգիստ էի, մտավախությունս կողմնակի միջամտությունն էր:

Ռուբիկը եկավ ուղիղ ժամը 6-ին ու ետ գնաց ադրբեջանցու հետ: Երկու օր անց կրկին եկավ:

– Ես չհամարձակվեցի իմ մեքենայով բերել, խնդրում եմ, կազմակերպիր այդ մարդու տեղափոխումը ոստիկանություն: Անմեղ ու բարի այդ մարդուն կերակրել ենք այն ամենով, ինչ մենք ենք կերել, լողանալու հնարավորություն ենք տվել, քնեցրել ենք սպիտակեղենով հարդարված ան-

կողնում: Կինս արտասվում է, ասում է. «Տար, կգան՝ կսպանեն այս անմեղ մարդուն, մեզ կգցեն նոր փորձանքի մեջ»,– հուզված պատմեց նա:

Անմիջապես տեղափոխեցինք: Ադրբեջանցին տպավորված էր:

Երկաթուղին գործարկելու խնդիր կար, ինչը հնարավոր չէր կազմակերպել առանց վեց ադրբեջանցիներին վերադարձնելու: Վազգեն Սարգսյանը վեցին փոխարինող երեք այլ ադրբեջանցի ուղարկեց: Վեցին վերադարձրինք, եւ բեռնատար գնացքները սկսեցին աշխատել:

Երեք ադրբեջանցիներից երկուսը՝ Բաբաեւ Սաֆարն ու Աղաեւ Իլհամը, հազիվ հասն տարեկան ռազմագերիներ էին: Մեկը կարճահասակ էր, մյուսը՝ երկարահասակ: Երրորդը միջահասակ մարդ էր՝ խորհրդային տարիներին ազատազրկման դատապարտված. բանտից էին հանել՝ ուղարկել: Մեկուսարանում տեղավորելուց մի քանի օր անց բաժնի ավագ էդիկ Ահարոնյանը շշուկով տեղեկացրեց, որ երկու ռազմագերիները հիգիենայի առումով անմխիթար վիճակում են: Զգիտեմ, թե որտեղ էին պահել երիտասարդ ռազմագերիներին, բայց ամբողջ ընթացքում՝ շուրջ երկու ամիս նրանք չէին լողացել: Էդիկը խոսում էր կարեկցանքով: Առհասարակ, նա այդ բաժնի սկզբունքային աշխատակիցներից մեկն էր, որի նկատմամբ միշտ հարգանքով եմ լցված եղել: Ավելորդ բամբասանքներից խուսափելու նպատակով՝ առանց ծավալվելու, իր հերթապահության գիշերը նա կազմակերպեց, եւ ռազմագերիները լողացան ու փոխեցին հագուստները: Այդ գիշեր նրանց մեջ արթնացավ տուն վերադառնալու կորած հույսը:

Մի քանի օրից եկավ Ղեւոնդը եւ ասաց, որ Փանոսաց Սամոն ու իր շրջապատը նորից չեն վստահում ոստիկանությանը եւ ուզում են պատանդներին իրենք պահեն: Պատասխանեցի, որ ես էլ նրանց չեմ վստահում ու չեմ տա: Առաջարկեց՝ որպես լուծում երեքին էլ ոստիկանությունից վաշտ տեղափոխել: Դարձյալ մերժեցի՝ հիմնավորելով, որ Վազգենն ինձ է վստահել նրանց, եւ ես միայն ոստիկանությունում պահելու դեպքում կարող եմ հանգիստ լինել նրանց անվտանգության համար: Առավոտյան զանգեց Վազգենը եւ ընդհանուր զրույցի վերջում ասաց. «...Ղեւոնդը շատ ա ուզում ադրբեջանցիներին իր մոտ պահի»: Տարան...

Երկու օրից այցելեցի վաշտ: Առաջին հարկի աստիճանավանդակի տակ, անցնող-դառնողի աչքի առաջ, գազանանոցի վանդակ հիշեցնող փոքրիկ ու ցածր ցանցապատ խցում կծկված էին երկու ռազմագերիները: Երրորդը չկար: Խոստովանեց, որ ոստիկանությունից բերելուն պես, Փոքր թաղի ձորում, Սամոյի ու ընկերների հետ գնդակահարել ու թաղել են բանտից բերված «արժեք չունեցող» մեկին, որ մեր նկատմամբ վստահությունը բարձրանա, որ կարողանանք փրկել մյուս երկուսին, որոնք ատիճանավանդակի տակ ժամանակավոր են պահվում, եւ հենց հիմա նրանց համար մի առանձին սենյակ են նախապատրաստում:

Ներքին զգացողություն ունեի, որ երիտասարդ երկուսին էլ են սպանելու: Ուստի ժամանակ ձգելու, հայերին սթափեցնելու ու ադրբեջանցիներին արժեւորելու նպատակով առաջարկեցի հետեւյալ տարբերակը. ռազմագերիներն իրենց ձեռքով նամակ են գրում հարազատներին, որ իրենք ողջ են եւ կարող են վերադառնալ տուն, եթե հարազատները գտնեն Կուբաթլու տարված հայերին: Այդ նամակներն ուղարկում ենք Մեղրիի կայարանից՝ ադրբեջանցի մեքենավարների միջոցով: Որերորդ անգամ բացատրեցի, որ եթե անգամ պարզվի՝ Կուբաթլուում գերված մեր հայրենակիցները ողջ չեն, ապա փոխանակությամբ՝ գերի ընկած ուրիշ հայերի կյանքը կփրկենք:

Հաջորդ օրը Ղեւոնդը տեղեկացրեց, որ նամակներն ուղարկել են, բայց ռազմագերիներին հանձնել է Սամոյին, իսկ վերջինս խոստացել է նորմալ պայմաններում պահել եւ սպասել նամակների պատասխանին:

## Հայրը

Հունվարի վերջին իմացա, որ, ձանձրանալով նամակների պատասխանին սպասելուց եւ համոզված լինելով, որ Կուբաթլու տարված մյուս երկու հայերը ողջ չեն, նրանց վրեժը լուծած լինելու վճռականությամբ սպանել, այրել ու թաղել էին այդ դեպքի հետ որեւէ առնչություն չունեցող Սաֆարին ու Իլհամին: Մեկին՝ «Խաչի ձորում»՝ Ագարակի վերին հատվածում, մյուսին՝ Ալվանքի քարհանք տանող ճանապարհին:

Փետրվարի սկզբին Մահմեդովը հրավիրեց հանդիպման: Նա ներկայացրեց միջին տարիքի, կարճահասակ, հասարակ մի մարդու եւ խնդրեց լսել նրան: Վերջինս ինձ տվեց մի լուսանկար ու նամակ: Լուսանկարում երիտասարդ ռազմագերիներն էին: Նրանք կանգնած էին տերեւաթափ պտղատու ծառերի ֆոնին, մշտադալար ձիթենու, թե դափնու տակ,

իսկ հեռվում հստակ երևում էր Ագարակի լեռնահարստացման կոմբինատի պոչամբարը: Նամակի բովանդակությունը ինձ հայտնի էր...

Հետո սպանված կարճահասակ ռազմագերու Հայրը ներկայացրեց իր հարեւանությամբ կանգնած երիտասարդին ու ասաց. «Գորիսեցի այս հայ երիտասարդը մի քանի ամիս է ապրում է մեր տանը: Այն պահից, երբ իմացել ենք որդուս գերվելու մասին: Առաջին պահին նրան համարել եմ որդուս փրկության միակ հույսը: Նրա նկատմամբ հոգ եմ տարել ամենայն պատասխանատվությամբ. քնել է ինձ հետ նույն սենյակում, առանց նրա երբեք հաց չեմ կերել: Իսկ հիմա՝ ամիսներ անց, նա այնքան հոգեհարազատ է դարձել ինձ, որ համարում եմ իմ որդին»: Նրա խոսելու ողջ ընթացքում հայ երիտասարդը, որի անունը Վալեր էր, երախտապարտ հայացքով ու գլխի դրական շարժումով հաստատում էր Հոր ասածները: Իսկ ես զգում էի, որ Հոր արտահայտած յուրամանչյուր բառից ավելի է ծանրանում հոգիս ճնշող մեղքի բեռը: Նա շարունակեց. «Հիմա ակնհայտ է, որ գերված որդիս ձեր տարածքում է, իսկ հարգարժան Մահմեդովը ասել է, որ դու բարի մարդ ես: Իմ ուժերից վեր է գտնել Կուբաթլիում գերված հայերին, խնդրում եմ՝ բեր որդուս, բեր փոխանակենք իմ այս հայ որդու հետ: Ես նրան շա՛տ կկարոտեմ, բայց նա ընտանիք ու զավակներ ունի, եւ ինքն էլ նրանց է կարոտել»:

Բեռը շատ ծանր էր, բայց պետք էր նուրբ ու հուսադրող պատասխան տալ, ուստի ասացի. «Այո, հարգարժան Մահմեդովը իրոք գիտի, որ, անկախ ազգային պատկանելությունից, մարդն ինձ համար արժեք է, սակայն ձեր ներկայացրած փաստերն ինձ համար անակնկալ են: Հետեւաբար, ես խոստանում եմ վերադառնալուն պես անմիջապես միջոցներ ձեռնարկել ձեր որդուն որոնելու ու վերադարձնելու նպատակով, իսկ արդյունքների դեպքում անմիջապես կկապվեմ Մահմեդովի հետ»:

Հայրը երկար չէր սպասել: Լաչինի ոստիկանապետի միջոցով հանդիպել էր Գորիսի ոստիկանապետ Միշա Խոյլունցին եւ խնդրել Մեղրիում փնտրել իր որդուն: Ադրբեջանցի Հոր մոտ գտնվող գորիսեցու բարեկամները դուրս էին նկել Փանոսաց Սամոյի վրա եւ խնդրել՝ հանուն իրենց հարազատի փրկության, տալ ռազմագերուն: Սա էլ՝ իր ընկերների հետ միասին, իրենց յուրահատուկ կարեւորությամբ որոշել են «լավություն» անել: Վերցրել ու հերթական ոտնձգությունն են կատարել երկաթուղու նկատմամբ՝ մտածելով, որ ցանկացած ադրբեջանցի փոխանակելի է ցանկացած գորիսեցու հետ: Փանոսաց Սամոն, Վայրի Անդիկը, Թիքեռ Վաչոն, չեմ հիշում՝ էլ ով «խաչով» գնացել անցել էին «Ծիրանի ձոր» եւ առեւանգել մի խեղճ ու վտիտ երկաթուղայինի: Վերջինս բուրմեն էր եւ ֆիզիկական աշխատանքի ֆիզ պիտանի: Ուստի, ընկերների որոշումով, նրա գործը օջախի վրա թեյ պատրաստելն ու տաք պահելն է եղել: Նրան առեւանգել էին, երբ գծերը կարգաբերող ընկերները տեսադաշտից հեռու էին եղել: Միշտ զարմացել եմ, թե ինչպես էր ոտքերը քարշ տալով հազիվ քայլող այդ վտիտ մարդը հաղթահարել այդ բարդ լեռնային անցումը: Գծի հերթական հատվածը կարգաբերելուց հոգնած աշխատանքային խումբը վերադարձել էր թեյի շուրջ հանգստանալու ու տեսել էր թեյնիկով օջախն անտեր: Մինչեւ աշխատանքային օրվա ավարտը սպասել էին, հետո համոզվելով, որ առեւանգել են, մեզ իմաց տվեցին երկաթուղին կանգնեցնելով: Տարվածը, բնականաբար, փոխանակության համար պիտանի չէր, ետ բերեցինք, եւ երկաթուղին սկսեց գործել:

Մի վերջին փորձ նախաձեռնեց Մահմեդովը 1992թ. փետրվարի 28-ին: Հանդիպման ժամանակ նա տվեց երկու հայի անուն՝ Ծատրյան Սուրեն եւ Պետրոսյան Աշոտ, առաջարկեց նրանց փոխանակել Բաբաեւ Սաֆարի ու Աղաեւ Իլնամի հետ: Իմ պատասխանը դարձյալ անորոշ էր: Այդ հանդիպումից երկու օր առաջ ազատագրվել էր Խոջալուն, որը դարձավ Մութալիբովի հրաժարականի հիմնական առիթը: Հանդիպման վերջում Մահմեդովն ինձ թեւանցուկ արեց, առանձնացանք ներկաներից, ու բառացի ասաց հետեւյալը. «Ես գիտեմ, որ դու հրաշալի հարաբերություններ ունես ձեր ղեկավարների հետ: Ձեր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը իմաստուն մարդ է: Մեր Հեյդար Ալիեւն էլ է իմաստուն մարդ, եւ նա խոստանում է՝ նախագահ դառնալու դեպքում, Ղարաբաղի հակամարտությունը կարգավորել խաղաղ, քաղաքական հանապարհով: Դրա համար, նախ, պետք է ազատվել Մութալիբովից, եւ այդ հարցում դուք օժանդակած կլինեք, եթե ՁԼՄ-ներով գովեք Մութալիբովի վարած քաղաքականությունը»: Ես հարցրի, թե արդյոք վստահ է, որ Մութալիբովի հրաժարականի դեպքում Ալիեւին կհաջողվի դառնալ նախագահ, նա պատասխանեց, որ իրենք վստահ են դրանում: Սա էր հանդիպման բուն նպատակը:

Հայրը՝ Գորիս–Լաչին սահմանագծի հերթական հանդիպման ժամանակ ասել էր, որ ինքը համոզված է՝ իր որդին սպանվել է Մեղրիում: Առաջարկել էր գորիսեցուն փոխանակել որդու ոսկորների հետ: Նորից աշխա-

տել էր պատանդ գորիսեցու հարազատներ՝ Խոյլունց Միշա, Ղևոնդ, Փանոսաց Սամո կամուրջը: Տարել էին ոսկորները: Հանդիպման ժամանակ Հայրը բացել էր, նայել ու հիասթափված արտաբերել. «Սրանք իմ որդու ոսկորները չեն, իմ որդին կարճահասակ էր, դոմ բերել եմ երկարահասակ մարդու ոսկորներ, դոմ նամուս չունեմ»: Հետո արցունքոտ աչքերով մոտեցել էր գերի գորիսեցուն, գրկել նրան, համբուրել, խեղդվող ձայնով ասել. «Վերադարձիր ընտանիքիդ գիրկը», ու մյուսներին առանց հրաժեշտ տալու հեռացել էր...

Մահմեդովի հետ հիշատակված հանդիպումից շատ կարճ ժամանակ անց հայտնի դարձավ, որ հավանաբար դեռ 1989 թվականին, Արարատի շրջանից երկու քաղաքացի՝ Սուրեն Ծատրյանն ու Վալերի Սուլթանովը, մեկնել են Արաբս գետից ձուկ որսալու ու չեն վերադարձել, գերվել են Նախիջևանի կողմից: Հաջորդ իսկ հանդիպմանը Մահմեդովի առաջ դրեցի նրանց վերադարձնելու խնդիրը: Սուլթանովին վերադարձրեց, իսկ Սուրենի մասին պատմեց, որ նա, իբր, եղել է ֆիզիկապես շատ ուժեղ, անհնազանդ ու ագրեսիվ երիտասարդ: Այդ պատճառով մեկուսարանում նրա ձեռքը մշտապես շղթայել են մետաղական մահճակալի գլխի խողովակին: Մի գիշեր էլ նա հանել է մահճակալի գլուխը, հենց դրանով հարվածել ու չեզոքացրել երկու հսկիչներին ու փախել Նախիջևանի ջրամբարի ուղղությամբ: Որոնումներն արդյունք չեն տվել, հավանաբար սահմանն անցել է:

Սուլթանովը, որը մասնագիտությամբ բարձրակարգ զոդող էր եւ գերության ընթացքում նրան երբեմն մասնագիտական աշխատանքով ծանրաբեռնել էին ու հետը շփվել, վերադառնալուց հետո պատմել էր, որ իրեն մի անգամ հանձնարարել են փոս փորել ու թաղել մի սպանված գերու, եւ ասել են, որ այդ հայ գերուն ուղարկել էին դարաբաղյան ճակատից՝ ինչ-որ մեկի հետ փոխանակելու համար: Հավանաբար՝ Աշոտ Պետրոսյանն էր...

## Երկու ատրճանակ, չորս գրահամեքենա

Այդ օրը՝ 1992թ. մարտի 13-ին տուն եկա սովորականի նման գիշերվա կեսին:



Գիշերվա ժամը 4-ի հեռախոսազանգն ընդհատեց քունս. Վազգեն Սարգսյանն էր: Ասաց. «Առավոտյան ռուսական ստորաբաժանումը, որ հսկում է երկաթուղին, վերադառնում է Երեւան: Բացի մարդ սպանելուց՝ ինչ ուզում եք արեմ, զրահամեքենաներ պետք է պահել Մեղրիում»:

– Լա՛վ,– ասացի, դրեցի հեռախոսը, զանգեցի Ղեւոնդին,– շուտ հագնվիր ու դուրս արի փողոց, կարեւոր գործ ունենք:

Ծրագիրը նախագծելով գնացինք Մեղրիի գարնիզոն, որը շրջապատված էր փշալարով եւ ուժեղացված հսկողություն էր իրականացվում: Յուրաքանչյուրս կրում էինք մեզ ի պաշտոնե ամրացված մեկական ատրճանակ: Արաքսի կողմից մոտեցանք դռնակին, որի գլխին կարմիր ներկած երկաթե աստղ կար, պաշտոնապես ներկայացանք զգոն ժամապահին ու հրահանգեցինք կանչել հրամանատարին: Սա էլ թե՝ հրամանատարը քնած է, իսկ ինքն իրավունք չունի նրան արթնացնելու:

– Մենք էլ պիտի քնած լինենք հրամանատարիդ նման, բայց այնպիսի իրավիճակ է, որ եթե հինգ րոպեից հրամանատարդ արթուն չլինի ու մեզ հետ լուծումներ չփնտրի, մեր կամքից անկախ՝ հնարավոր է այնպիսի բան կատարվի, որ ստիպված կլինեք բոլորով արթնանալ: Միայն չգիտեմ՝ բոլորդ ողջ կմնամ, թե՝ չէ,– ասացի:

Ժամապահը ներս վազեց, ետ եկավ, բացեց դռնակն ու մեզ ներս հրավիրեց:

Ազգությամբ օս հրամանատարը հսկա էր, մարզված: Մեկ հարվածով երկուսիս հաստատ կտապալեր: Ներկայացանք ու ներկայացրինք իրավիճակը. զինված խմբավորումներին հայտնի է դարձել վաղը Մեղրին լքելու ձեր որոշման մասին, համախմբվել են, որոշել են լուսաբացին շրջապատել ձեզ եւ ողջ զինտեխնիկան, զենքն ու զինամթերքը հանձնելու պահանջ ներկայացնել, իսկ պահանջը չկատարելու դեպքում՝ իրենց նպատակին հասնել զորամիավորման վրա զինված հարձակում գործելով:

Հսկան ակնհայտ խուճապի մատնվեց, մի պահ մտածմունքների մեջ ընկավ, ապա հարցրեց, թե ինչ կարելի է անել դրանից խուսափելու համար: Նա մեզ ընկալեց որպես յուրայինի, անգամ մեր մեջ տեսավ իրենց փրկությունը:

Մենք խորհուրդ տվեցինք անհապաղ իրավիճակը ներկայացնել վերադասին: Սա էլ իր հերթին հակառաջարկեց, թե այդ ժամին ինչպես զեկուցի: Մենք շատ հանգիստ բացատրեցինք, որ այստեղ կյանքի ու մահ-

վան խնդիր է, իսկ ինքը վախենում է զեկուցել: Հսկան զեկուցեց: Հետո մենք ասացինք, որ թեև այդ խմբավորումների հետ գործ ունենալը շատ բարդ է, բայց հիմա երկուսով կգնանք ու կփորձենք նրանց հետ բնակել արյունահեղությունից խուսափելու ինչ-որ տարբերակ ու կրկին կվերադառնանք արդյունքների մասին տեղյակ պահելու: Գնացինք ու վերադարձանք մեկ ժամից: Ասացինք հետեւյալը. թեեւ շատ բարդ էր այս պայմանավորվածության հասնելը, բայց սա առավելագույնն էր, որ կարողացանք պայմանավորվել. դում Մեղրիին եք բողնում ձեր ունեցած բոլոր չորս զրահամեքենաներն ու մեկ АГС-ն (հաստոցային ինքնաձիգ նռնականետ) եւ մնացյալով անվտանգ հեռանում եք Երեւան: Հակառակ դեպքում, եթե անգամ մենք Մեղրիի տարածքում ուղեկցենք ձեզ եւ կարողանանք ապահովել ձեր անվտանգությունը, միեւնույն է, նրանք խոստանում են Մեղրիից դուրս դարանակալել եւ նռնականետով խոցել զրահամեքենաները, եւ որպես ասածների հավաստիացում՝ նրանք մեզ ցույց տվեցին երկու նռնականետ եւ կոմուլյատիվ հրթիռներ: Ընդ որում, մենք այս տարբերակը քննարկեցինք եւ համաձայնեցինք ձեզ փոխանցել մի պայմանով, որ ձեր համաձայնելու դեպքում՝ զրահամեքենաներն ու АГС-ն հանձնում եք պետական կառույց հանդիսացող վաշտին: Սա էլ զեկուցվեց վերադասին:

Առավոտյան ուղղաթիռով եկավ Հայաստանում ռուսական ռազմական միավորման գլխավոր շտաբի պետ գեներալը: Հրավիրեց մեզ, մի քիչ գեներալավարի աղմկեց, հետո սկսեց քննարկել սպառազինությունը Մեղրիում պահելու հիմքը: Մենք ասացինք, որ ցանկացած հիմք կարող ենք՝ որպես օժանդակություն, լրացուցիչ հաստատել մեր ստորագրություններով ու կնիքներով: Գեներալը հրահանգեց զարնիզոնի ռազմական միավորի ղեկավարին՝ ոչ մի քայլ չհեռանալ տեղից մինչեւ իր վերադարձը, իսկ մեզ խնդրեց անել հնարավորը՝ արյունահեղությունից խուսափելու համար, եւ ուղղաթիռով վերադարձավ Երեւան:

Հաջորդ առավոտ Մեղրիում վայրէջք կատարեց երկու ուղղաթիռ: Մեկում գեներալն էր, մյուսում՝ Վազգեն Սարգսյանը, մի քանի հոգու ուղեկցությամբ:

Գեներալը բերել էր լուծումը. արձանագրություն էր կազմվում, որ չորս զրահամեքենաները ֆիզիկապես մաշված են այնքան, որ ի վիճակի չեն լեռնանցքներ հաղթահարելով ինքնուրույն տեղաշարժվել Երեւան, ուստի



թողնվում են Մեղրիում, յուրաքանչյուրի մեջ նռնակների մի տրցակ պայթեցնելու միջոցով հետագա շահագործման համար ոչ պիտանի դարձնելով: Պայթեցման գործողությունը կատարվել է տեղական իշխանությունների ներկայացուցիչների ներկայությամբ, որի համար էլ արձանագրության տակ ստորագրում ու կնիք էինք դնում գործկոմի նախագահ Ենոք Անդրեասյանն ու ես:

Ես անմիջապես հարցրի՝ իսկ АГС-ն:

Նա էլ թե՝ АГС-ի համար նման պատճառաբանությունն օբյեկտիվ չէ: Համառեցի՝ դա պայմանավորվածության խախտում է: Գեներալը խոստովանեց, որ АГС-ն դեռ նախորդ օրն է հետը տարել, որովհետեւ իր ուժերից վեր է համարել մեզ հանձնելը, բայց համաձայնեց АГС-ի փոխարեն թողնել УРАЛ մակնիշի մեկ մեքենա: Համաձայնեցինք: Շուրջ մեկ ամիս անց սահմանապահ զորամասից կարեւոր մի պաշտոնյա ինձ ասաց, որ զարնիզոնին պատկանող բենզատար մեքենան չեն տեղափոխել Երեւան՝ անվադողերի խիստ մաշված լինելու պատճառով, եւ հանձնել են սահմանապահներին: Ինձ մոտ հրավիրեցի սահմանապահ զորամասի հրամանատարին եւ ասացի, որ այդ մեքենան զորամասի հաշվեկշռից դուրս է, ուստի տիրազուրկ է եւ պատկանում է մեզ, պետք է վերադարձնել: Վերադարձրեց նոր անվադողերով:

Ինչպես, Մեղրիի պաշտպանությունը հարստացավ եւս չորս զրահամեքենայով, զինվորական ամենագնաց մեքենայով եւ բենզատարով:

Վազգենի հետ եկած Աֆոն պատմեց, որ նույն խնդիրը դրված է եղել Իջեւանից հեռացող, երկաթուղին հսկած ստորաբաժանման համար, սակայն Իջեւանի տղաները գլուխ չեն հանել, որից Վազգենը շատ էր դառնացել:

Այդ օրը մի արտառոց բան էլ տեղի ունեցավ: Զարնիզոնի մոտ հավաքվածների մեջ էր նաեւ շրջանի զինկոմ Կարեն Աֆոյանը: Նա սկսեց շատ ակտիվ խոսել զրահամեքենաների մասին: Անընդհատ պատմում էր, թե Աֆղանստանում ինքը БМП-2-ով ինչ հրաշքներ է գործել: Վազգենը լսեց-լսեց, հետո ասաց. «Կարեն, Աֆղանստանում քո արածներով մեր ներկայիս վիճակը չի թեթեւանում, ես էստեղից թռչելու եմ Ղարաբաղ, եթե իրոք դու այդքան կարող ես, արի հետս տանեմ, իմացածդ սովորեցրու տղերքին»: Կարենն անհարմար վիճակի մեջ ընկավ, մի պահ շփոթվեց, հետո ամոթից ասաց, որ կգնա: Մինչ մենք զբաղված էինք զրահա-

մեքենաների ընդունումը ձեռակերպկու խնդիրներով, գնաց տուն, հավաքեց իրերը, եկավ ու Վազգենի հետ թռավ Ղարաբաղ: Կարճ ժամանակ անց իմացանք, որ Կարեն Աֆոյանը զոհվել է: Զոհվել էր БМП-2-ի զրահի վրա կանգնած պահին՝ հակառակորդի БМП-2-ի ուղիղ նշանառությամբ կրակոցից...

## Սահմանների ամրապնդում

Դեռ 1991-ի նոյեմբերի 6-ին Իրանի սահմանը հսկող ռուս սահմանապահները դուրս էին հրվել Ադրբեջանից: Մեղրիի սահմանապահ զորամասի նախկին Վեժնավիրի ուղեկալը, որը Մեղրիի կողմից հաշված՝ առաջինն էր Զանգելանում, դարձել էր Մեղրիի հետ սահմանը հսկող ադրբեջանական զորամաս: Որպես սրա հակակշիռ, մենք անհապաղ հենակետ դրեցինք Մեղրի–Զանգելան սահմանագիծ լեռնազանգվածի գագաթին, որը գտնվում էր երկաթուղու ու ավտոմոբիլային ճանապարհի միջակայքում եւ պայմանականորեն անվանեցինք 44: Հենակետ 44-ից շատ լավ երեւում էր Վեժնավիրի ուղեկալը: Ի պատասխան՝ ադրբեջանական կողմը, օգտվելով իր կողմից համեմատաբար մեղմ ռելիեֆի ընձեռած հնարավորությունից ու ճանապարհի առկայությունից, մինչեւ ամառ աստիճանաբար դիրքավորվեց Մեղրի–Զանգելան սահմանագծի գրեթե ողջ երկայնքով: Հենակետ 44-ը հաճախ էր ենթարկվում գնդակոծության: Հրանգային զինատեսակներով կրակում էին դիրքերից ու Վեժնավիրի ուղեկալից, իսկ խորից՝ մեզ անհայտ կետից երբեմն արկակոծում էին: Կապանի Եղվարդ գյուղի մոտ՝ 1992թ. հունվարին հայ-ադրբեջանական ճանդիպում էր կազմակերպվել, որին մասնակցում էինք նաեւ Ենոքը, Ղեւոնդն ու ես: Իմանալով, որ հանդիպմանը մասնակցում է նաեւ Զանգելանի ոստիկանապետը, մոտեցա, ծանոթացա ու արտահայտեցի վիրավորվածությունս առ այն, որ մենք միմյանց հետ շփվում ենք հարեւան շրջանի սահմանագծում՝ այն դեպքում, երբ մյուս հարեւանի՝ Օղուզբադի հետ հանդիպում ենք մշտապես, ըստ անհրաժեշտության: Առաջարկեցի՝ որպես առաջին քայլ, պայմանավորվել առաջին հանդիպման օրն ու ժամը: Պայմանավորվեցինք:

Միակ հանդիպումը կայացավ 1992թ. փետրվարի 2-ին: Միանգամից առաջարկեցի անցնել մեր տարածք՝ Նյուվադիի Քյարիզի մոտ, ուր խորված ծի կրակն արդեն վառվում էր, եւ զրուցել նաշի սեղանի շուրջ: Ամոթխած Ջաֆարովն առարկեց՝ պատճառաբանելով ժամանակի սղությունը: Միանգամից ի շահ հարեւանության՝ առաջարկեցի միասին գնալ մինչեւ Վեժնավիր գյուղ, զրուցել թեյի շուրջ, ինքն էլ ժամանակ կշահի: Ամոթից համաձայնեց: Մեզ ու Ջաֆարովին ուղեկցողներին, որոնք միմյանց հետ հասցրել էին ծանոթանալ ու զրուցում էին, թողեցինք սահմանագծին ու մեր մեքենայով՝ Ղեւոնդի հետ հետեւեցինք Ջաֆարովին: Վեժնավիր չհասած, բայց շատ մոտ, վերջին ջրբաժան գծի վրա, ճանապարհի աջ կողմի փոքրիկ հարթանման տարածքում Մեղրիի սահմանագծի ռազմական միավորները համակարգող ադրբեջանական շտաբն էր: Ժամանակի համեմատ բավական կապիտալ կառույցներով ու կահավորված: Իսկույն հասկացանք, որ նախորդ նոյեմբերի գիշերային փոխհրաձգությունն այստեղ էր եղել: Հրանոթն անմիջապես նկատեցինք: Այստեղից դեպի մեր կողմը նայելիս տեսանելի էր հենակետ 44-ի լեռնազանգվածի որոշակի հատված: Թեյի սեղանը պատրաստ էր: Աչք ծակեց շամարի առատությունը, որը մեզ մոտ դեֆիցիտ էր: Թեյ խմեցինք, շտապող Ջաֆարովին հրաժեշտ տվեցինք ու վերադարձանք սահմանագիծ: Այնտեղ մնացած հայ ու ադրբեջանցի զինվորականները թղթախաղով էին տարված: Մերոնք հարստացել էին:

Նախիջեւանի թեւում՝ դեռ 1991թ. դեկտեմբերի 26-ին, Գողթանասարի հակաօդային պաշտպանության հենակետն անցավ ադրբեջանցիներին: Մեր տեղեկություններով, այնտեղ մշտապես ծառայում էր 70 հոգի: Այնտեղ էին տեղափոխել 2 պազանային հրթիռային համակարգ, փորձել, սակայն բարդ ու սառած ճանապարհով չկարողանալով զգաթ բարձրացնել հակակարկտային հրանոթներ, թողել էին Գանձակ գյուղի մոտ:

Կոմունիկացիաների բացակայության պատճառով, բացի ճանապարհից, ձմռանը շուրջ 3000 մետր բարձրության վրա դժվար էր հակակշիռ հենակետ ստեղծելը: Ուստի, այդ պահին հարկադրված էինք բավարարվել միայն ցածր գոտում՝ Արաքսի ափին, Ծիրանի ձորի մոտ ավտոճանապարհի ու երկաթուղու շրջակայքում հիմնել պաշտպանական հենակետ: Վաղ գարնանը՝ արեւահայաց լանջով բարձրացող ճանապարհի բացվելուն պես, բուլդոզերով քաշելով՝ խոշոր տեղափոխեցինք մի քանի անվավոր տնակ ու հիմնեցինք խոշոր հենակետը: Անգամ այդ ժամանակ տնակների տեղափոխումը հագեցած էր բարդություններով: Այնտեղ բարձրաց-

վեց նաև միակ հակակարկտային 100 մմ-ոց հրանոթը, որը թեև նշանառության համակարգ չուներ, բայց տանկի 100 մմ-ոց արկերը նրանով գործածվում էին, հետևաբար՝ մարտական հրանոթ էր: Խոշլին հրաշալի հենակետ է, այստեղից՝ անգեն աչքով, ինչպես ափի մեջ, տեսանելի է Օրդուբաղի շրջանի բնակավայրերի մեծ մասը, ներառյալ՝ շրջկենտրոն Օրդուբաղը:

Վաղ գարնանը կենտրոնից հատկացրին երկուական հրանոթ՝ Д-30 եւ գրադ՝ БМ-21, առանց բուսոլի (հրետանավորի կողմնացույց) եւ աղյուսակների: Հրետանավոր չունեինք: Մտածում էինք օգտագործել հրացանի սկզբունքով՝ հանել սարերի գագաթները եւ ուղիղ նշանառությամբ կրակել երեւացող թիրախներին: Ռազմական գիտելիքին ու փորձին փոխարինում էին հաղթելու վճռականությունն ու ոգին: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ ու հրավերով Ռուսաստանից Հայաստան էր եկել հայ սպայակազմը: Մեկը մյուսի ետեւից եկան նրանցից մի քանիսը, խոսեցին առանց աղյուսակներ ու բուսոլ հրետանի գործածելու անհնարինության մասին, նույնիսկ զովեցին հրացանի սկզբունքով հրետանին գործածելու մեր ձգտումն ու գնացին: Հերթականը Յուրի Խաչատուրովն էր, եկավ աղյուսակներով ու բուսոլներով: Կոնկրետ խնդիր կար լուծելու. Կապան քաղաքն ինտենսիվ հրետակոծվում էր, առաջարկում էին, որ Մեղրիից խփենք Մինջեւանին, որ ցավ զգան ու դադարեցնեն Կապանի հրետակոծումը: Լեռնային դժվարանցանելի ճանապարհը բուլդոզերով ձյունից մաքրելով՝ գրադը Նյուվադիով հասեցինք Կապանի սահմանագիծ, որ բարձրությունների տարբերության հաշվին Մինջեւանը հասանելի դառնա գրադի համար: Խաչատուրովն սկսեց հրետանավորի հաշվարկներով նախապատրաստել Մինջեւանի հրետակոծությունը, իսկ ես ուշադիր հետեւում էի: Ռազմական ամբիոնում սովորած որոշ գիտելիքներ եւ գեոդեզիայի փայլուն իմացությունն ինձ օգնեցին հիմնավոր ընկալել Խաչատուրովի կատարած հաշվարկների իմաստը: Նա հաջորդ օրն ինձ ու Ղեւոնդին հրավիրեց Լիճ գյուղ՝ զորամասի փոխակերպվող նախկին մանկատուն, ցույց տալու անկախ Հայաստանի առաջին զորակոչիկներին ընդունելու նախապատրաստությունը: Մի հարմար պահի խնդրեցի Խաչատուրովին՝ լսել ու գնահատել, թե արդյոք նիշտ եմ ընկալել հրետանու գործածության տրամաբանությունը: Պատասխանեց, որ չունենալով ռազմական մասնագիտական ակադեմիական կրթություն՝



բացատրում է, որ հասկացած լինեմ: Համառեցի ու, հիմնավորելով՝ հերթականությամբ թվարկելի կոորդինատներով հրետանին գործածելու տրամաբանությունը: Խաչատուրովը զարմացած պնդում էր, որ ես հաստատ ռազմական մասնագիտական կրթություն ունեմ: Այդ շրջանում Մեղրի եկան գեներալներ Նորատ Տեր-Գրիգորյանցն ու Գալիբալթայանը՝ մի խումբ գնդապետերի ու փոխգնդապետերի ուղեկցությամբ: Ուսումնասիրեցին արեւելյան ու արեւմտյան պաշտպանական գծերը եւ իրենց հիացմունքն արտահայտեցին հենակետերի ճշգրիտ տեղակայման համար: Նրանց միակ անհանգստությունը Զանգեզանի կողմից այլեւս չգործող երկաթուղու բաց լինելու իրողությունն էր: Մտածում էին, որ Բաքվի կողմից մտնող զրահագնացքը կարող է վտանգավոր լինել Մեղրիի համար: Նրանց անհանգստությունն անձամբ փարատեցի՝ հենց իրենց ներկայությամբ վերջին սահմանապահ ուղեկալից հետո պայթեցնելով երկաթուղու մի հատված, նրա տակով անցնող ջրող կառույցի հեծանների միջակայքում տեղավորելով մեկ պարկ ամոնիտ: Զանգեզանի ուղղությամբ եւս մի հիմնական հենակետ դրվեց հուլիսի երկրորդ կեսին՝ Խոշլին կորցնելուց ու ետ վերցնելուց հետո:

## Երկաթուղու դադար

Թե ինչ ջանքերի գնով էր շահագործվում երկաթուղին, թե ինչպես էր ամեն մի արկածախնդրության հետեւանքով կանգ առնում, ինչպիսի շարչարանքով էր վերսկսում աշխատանքը՝ արդեն բավարար նկարագրվել է: Ըստ էության, արխազական երկաթուղու չգործելու պայմաններում՝ սա բեռնափոխադրումների ապահովման միակ կապն էր: Մի քանի ամիս շարունակ, ամեն օր կեսգիշերին աշխատանքից տուն ճանապարհն անցնում էր Մեղրիի կայարանով: Այնտեղ ինձ պարտաճանաչ սպասում էր կայարանապետ Ժորա Հայրապետյանը: Բարեխիղճ կայարանապետը, մի գավաթ թեյ հյուրասիրելուն զուգահեռ, ինձ էր հանձնում թղթի մի կտոր, որում հաշվառված էր Մեղրիով անցած ու Նախիջեւան մտած հայկական բեռներ տեղափոխող վագոնների քանակը, ընդ որում, մազութի վագոններինը՝ առանձնացված: Զմեռ էր՝ 1992թ. սկիզբը, ջերմակայաններն աշխատում էին մազութով, որը ծայրը ծայրին հասցվում էր անիվների վրա: Առավոտյան այդ տվյալները հաղորդում էի վերադասին, որը հա-

մեմատում էր Երեւան հասած բեռների տվյալների հետ՝ պարզելու համար, թե արդյոք Նախիջեւանում չեն յուրացվում հայկական բեռներ: Մինչեւ 1992թ. ապրիլ չեմ հիշում մի դեպք, որ բեռներ Երեւան չհասնեին: Ապրիլի կեսին Մեղրիով անցնող բեռները Երեւան չհասան, եւ երկաթուղին դադարեց գործել: 1992թ. մարտի 24-ին Նախիջեւանի առաջնորդ Հեյդար Ալիեւը Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հետ ստորագրեց տնտեսության ոլորտում համագործակցության արձանագրություն, որի արդյունքում սկսեցին գործել տրանսպորտային կոմունիկացիաները, բացվեցին օդային չվերթեր Նախիջեւանի ու Թուրքիայի միջեւ, եւ տրամադրվեց 100 մլն դոլարի վարկ: Ահա եւ՝ այս համաձայնագրից հետո, այլեւս ինքնաշրջափակման վտանգ չունենալով, ապրիլի սկզբից հայկական բեռների մի մասը տեղ չէր հասել: Մեղրիով անցնող վագոնների վրա սկսեցին նշմարվել կավիճով գրառված ադրբեջանական անուններ (Али, Вали, Байрам...), որոնք գնալով ավելի էին շատանում, եւ դրանք, որպես կանոն, մնում էին Նախիջեւանում: Ակնհայտ էր, որ Ադրբեջանում խաղաքաղաքական որոշում էին կայացրել երկաթուղու գործունեությունը Հայաստանի համար դադարեցնելով՝ ենթարկել կատարյալ շրջափակման: Նախագահի խորհրդական Աշոտ Մանուչարյանը հրահանգեց երկաթուղին փակել Մեղրիում, որ հայկական բեռների հաշվին չշահի Նախիջեւանը: Ապրիլի կեսերին համատարած ադրբեջանցիների անուններով գրառված 22 վագոնից բաղկացած շարժակազմը ժամանեց Մեղրիի կայարան: Մեքենավարից պահանջեցի փաստաթղթերը. համատարած հայկական բեռներ էին՝ հիմնականում վառելանյութ: Հրահանգեցի անջատել վագոնները քարշակից եւ հետանալ: Մեղրիով անցնող վերջին ադրբեջանցի մեքենավարն առանց խոսքի հնազանդվեց:

Քանի որ այդ բեռների տեղափոխումը մեծ ծախսերի հետ էր կապված, ուստի կառավարության օպերատիվ շտաբը վերաբաշխեց այդ ապրանքների հիմնական մասը՝ թողնելով դրանք Մեղրիում եւ Կապանում: Այդ նիստին մասնակցեց նաեւ գործկոմի նախագահ Ենոք Անդրեասյանը: Որոշ ժամանակ անց նա զանգեց ինձ ու տխուր ձայնով ասաց, որ Երեւանից մարդիկ են եկել եւ ուզում են գործկոմում հանդիպել ինձ հետ: Նախագահի վերահսկողության ծառայության պետ Կարապետ Ռուբինյանն էր, Վալերի Պողոսյանը եւ ուրիշ երկուսը եւս: Դեռ չէի հասցրել բարեւել, Ռուբինյանն ասաց. «Հիմա մենք գնում ենք տեսնելու նորարաց



մամասուն ու լողացող կամուրջը, մինչեւ վերադառնանք դու Ենոքին կալանավորած լինես»: Ես նախ հարցրի՝ արդյո՞ք ինքը գլխավոր դատախազն է, որ ինձ նման ցուցում է տալիս (այն ժամանակ կալանքի թույլտվությունը տալիս էր դատախազությունը), հետո պարզելով, որ խնդիրը վերաբերում է երկաթուղու բեռներին, պարզաբանեցինք իրականությունը, տեղեկացրինք օպերատիվ շտաբի վերաբաշխման որոշման մասին, որից նրանք նույնիսկ տեղյակ չէին, եւ վերջիններս ամաչելով հեռացան: Նրանց Մեղրի այցելելու համար հիմք էր ծառայել կոմունիստական շրջանի պարապ մնացած ժողովրդական վերահսկողության ղեկավարի եւ նրա շրջապատի նամակը, ըստ որի՝ իբր Ենոքն այդ բեռները վաճառել էր:

## Օգնություն Կապանին

Կապան քաղաքը շատ ծանր դրության մեջ էր, հաճախակի էր «Град» հրթիռներով ենթարկվում հրետակոծության: Երբեմն նույնիսկ ռմբակոծում էին ռազմական ինքնաթիռներով: Խոսակցություններ կային, որ երբեմն առիթ տալիս էին մերոնք, ներքաղաքական իրավիճակը մեղմելու նպատակով՝ Կապանի երկու վարչական ղեկավարներից մեկը հրահանգում էր ՆԳ բաժնում ծառայող իր ընկերոջը՝ գնալ եւ ոչ ակնհայտ պայմաններում կրակահերթ արձակել ադրբեջանական գյուղի ու դիրքերի ուղղությամբ: Վերջինս բարեխղճորեն կատարում էր, եւ անմիջապես ստանում էին պատասխանը: Ասում էին...

Մի անգամ անձամբ եմ ականատես եղել, թե ինչպես Դավիթ Բեկ գյուղի մոտ ձախողվեցին ԱԺ փոխնախագահների մակարդակով մեկնարկված բանակցությունները, որովհետեւ Կապանի կողմից՝ ուղիղ բանակցողների գլխավերեւով «Град»-ի հրթիռները սկսեցին թռչել Կուբաթլու քաղաքի ուղղությամբ:

Բանակցողները վերադարձան եւ պատսպարվեցին քաղաքի ռմբապաստարանում: Պատասխանը թեժ էր՝ ամենուր տեսանելի էին պայթյունից վեր բարձրացող փոշու ամպեր, այրվում էին շինություններ ու տներ:

Ռմբապաստարան եկավ Կապանի ղեկավարների ջանքերով պաշտպանությունը գլխավորելու հրավիրված մորուքավոր գնդապետը, որը չգտավ իր արածի հողարաշխ բացատրությունը: Ղեռնդը ԱԺ փոխնա-

խազանի եւ բանակցային թիմի մյուս անդամների ներկայությամբ լիցքավորած ատրճանակն ընդհուպ մոտեցրեց բանակցությունները ձախողած գնդապետի ճակատին եւ սպառնաց գնդակահարել: Վերջինս արտաբերեց. «Я тебя приглашаю на дуэль»:

Կապանում անգամ դրամահավաք էին իրականացնում ինքնապաշտպանությունը կազմակերպելու, զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: Այլ տեղերից հրավիրում էին չոկատներ, սովետական բանակի զորացրված բարձրաստիճան սպաներ, վճարում ու կերակրում էին, սակայն, միեւնույն է, վիճակը հաճախ էր թեժանում, լինում էին զոհեր ու վիրավորներ:

1992թ. ապրիլի 25-ին ինձ զանգահարեց Կապանի ՆԳ բաժնի պետ Էդիկ Բարսեղյանը, որն ավելի հայտնի է որպես Լոնդիկ, եւ բառիս բուն իմաստով՝ լացակումած ասաց. «Ախպե՛ր, ցա՛վդ տանեմ, ժողովրդին կոտորում են, աղաչու՛մ եմ՝ հասե՛ք, փրկե՛ք...»:

Բարդ իրավիճակ էր: Նախորդ օրը Գողթանասարի ադրբեջանական դիրքերից անընդմեջ գնդակոծել էին Խոշլիի մեր դիրքերը: Բարեբախտություն էր, որ զոհեր չունեինք: Օրդուբաղի հետ մշտապես լինելով կապի մեջ, դեռ չէինք կարողացել հանդիպել ու պարզաբանել տեղի ունեցածը: Կապվեցի Ղեւոնդի հետ, պատմեցի եղելությունը, ընդարկեցինք եւ որոշեցինք Խոշլիում եւ մյուս հենակետերում պահպանելով ուժեղացված ծառայություն, ոստիկանությանը տալով ըստ անհրաժեշտության օպերատիվ աջակցելու հրահանգ, անհապաղ մեկնել Կապան: Հարցրի, թե որքան ժամանակից վաշտը պատրաստ կլինի շարժվելու: Անմիջապես պատասխանեց. «Մեկ ժամից շարժվում ենք»:

Մեղրիի վաշտը զրահամեքենաներ ձեռք էր բերել ընդամենը 40 օր առաջ, որից Ղեւոնդը շատ էր ոգեւորվել: Յուրաքանչյուր զրահամեքենա կցել էր կոնկրետ աննկազմի: Տղաներն օրուգիշեր մարզում, ներկում, կարգաբերում, օգտագործում ու վարժվում էին:

Կապանից ստացած զանգից չորս ժամ հետո մտանք Կապան: Շրջխորհրդի գործկոմում փողկապավոր հայրենասերների պակաս չկար, բոլորը պատրաստ էին բաշալերել կովողներին, իսկ կռվելու էինք մենք ու Սիսիանի վաշտը՝ Հովիկ Ազոյանն ու Աշոտ Մինասյանը: Պարզվեց, որ նախորդ օրը՝ ապրիլի 24-ին, Կապանի վաշտը կոնֆլիկտի մեջ է մտել հակառակորդի հետ, որի հետեւանքով խոցվել է վաշտի միակ զրահամեքենան, եւ ամբողջ կազմը զոհվել է:



Ռազմական խորհուրդը գլխավորում էր ծագումով կապանցի գեներալ Մուրազ Սարուխանիչը: Նրան ամեն վայրկյան ընդհատում ու ցուցում էին տալիս փողկապավորները: Ինչեւէ, գեներալը կարողացավ Կապանի բարբառով ու տեղանուններով ձեւակերպել ռազմական առաջադրանքը: Խնդրեցի քարտեզի վրա ցույց տալ: Նա մատը քարտեզի վրա դրեց Կապան քաղաքի վրա, սահեցրեց դեպի հարավ՝ ասելով. «Ըստի քունումբ», անցավ Արաքս գետը, շրջվեց ու մատը սահեցնելով ետ բերեց մինչեւ Կապանի օդանավակայանի դիմացի աղրբեջանական գյուղեր Աղբենդն ու Ղազանչին, շարունակելով. «Ըստի կամբ, ուրաք թխումբն, դուք չունչումբ»: Հավանաբար, գեներալի տեսողությունը ծերացել էր:

Որոշվեց այսպես. Ղեւոնդն ու Ազոյանը օդանավակայանի կողմից զրահամեքենաներով հնարավորինս մոտենում են գյուղերին եւ դիրքավորվում: Աշոտ Մինասյանն ու ես՝ Սիսիանի ու Մեղրիի վաշտերի տղաների հետ, տեղանքին քաջածանոթ Բուլուշի եղբայր Սեյրանի խմբի ուղեկցությամբ մեքենաներով գնում ենք Գեղանուշ գյուղով, Ուռած քարի մոտով միանում ենք Ծավ տանող ճանապարհին, բաժանվում երկու խառը խմբի, մեկն Աշոտի գլխավորությամբ մոտենում է գյուղին ձորով, մյուս խումբը՝ իմ գլխավորությամբ, շարժվում է Ծավ–Կապան ճանապարհին զուգահեռ, եւ մոտենում ենք գյուղին ճանապարհի կողմից ու դիրքավորվում: Լուսաբացին՝ միաժամանակ, երեք կողմից սկսում ենք հարձակումը: Արդեն ուշ էր, հոգնած էինք, տեղավորվեցինք քնելու: Պայմանավորված ժամին հավաքվեցինք որոշված տեղում, եկան ավտոբուսները: Գեղանուշ գյուղում արդեն լուսացել էր: Մինչեւ հասանք տեղ, բաժանվեցինք, բավական ուշացել էինք: Ճանապարհից բարձր՝ թմբերի լանջերով, կուզեկուզ, լոտ ու ուշադիր շարժվում էինք առաջ: Վերջին թումբն էր, որից հետո ճանապարհը՝ երկու թմբերի արանքով, թմբերի շղթայի ձախ լանջից անցնում էր աջ լանջ եւ դառնում գյուղի ճանապարհամերձ դիրքից տեսանելի: Հանկարծ ուժգին կրակ տեղաց մեզ վրա, նկատել էին: Առաջին անգամ էինք հայտնվում նման տեղատարափ կրակի տակ, սարսափելի էր: Մենք մի 50 մետր ետ քաշվեցինք ու փամփուշտների տարափից պատսպարվեցինք բլրով, սակայն նռնականետերով շարունակ կրակում էին, նռնակները պայթում էին մեր գլխավերեւում: Անփորձ էինք, չէինք հասկանում, հետո միայն վերլուծեցինք, որ հակատանկային կոմուլյատիվ հրթիռներ էին արձակում մեզ վրա, որոնք մոտ 300մ հեռավորության վրա

պայթելով՝ ինքնավերանում էին ուղիղ մեր գլխավերեւին: Այնքան ինտենսիվ էին կրակում, որ չէինք կարողանում գլուխներս գետնից կտրել, կպել էինք գետնին, փորձել, մի բուռ էինք դարձել: Մի հրթիռ պայթեց ուղիղ գլխավերեւս, ու մի ծանր բան ընկավ մեջքիս, թվաց՝ պիտի մեռնեմ կամ գոնե վիրավորվեմ, բայց՝ չէ, ձեռքս տարա, շոշափեցի մեջքս, արյուն չկար: Իմ կողքին պառկած էր Վալերի Համբարձումյանը՝ Շարոն, նրա ականջից արյուն էր գալիս՝ կոնտուզիա էր ստացել, իսկ մեջքիս ընկնողը հրթիռի պոչն էր, որն այդ պահին ընկած էր իմ ու Շարոյի արանքում: Տղաների մի մասը մեր կապանցի ուղեկիցների հետ պատսպարվել էին հաջորդ բլրի ետնամասում: Պարզվեց, որ ուղեկցող խմբի զուսպ, հայրենասեր ու քաջ Սեյրանը գլխից վիրավորվել է, բայց գիտակցությունը տեղն է: Որոշեցինք, որ ուղեկցող տղաները Սեյրանին ու Շարոյին Գեղանուշի ձորով տեղափոխեն Կապանի հիվանդանոց: Հետո ես ու Սիսիանի տղաներից մեկը, որ ինքնաշեն նռնականետ էր կրում (ԱՐՀ), ճանապարհով սողեսող դուրս եկանք երկու բլուրների միջեւ, որտեղից գյուղն ու ճանապարհի կողմի հենակետը պարզորոշ երեւում էին, հարմար տեղավորվեցինք: Մեկս մյուսին փոխարինելով, հերթով բարձրանում էինք պառկած տեղից, ես ինքնաձիգով կրակահերթ էի արձակում հենակետի վրա, իսկ նա նռնակ էր արձակում: Այդպես մեզ վրա գրավեցինք հակառակորդի ուշադրությունը, որից օգտվելով՝ մյուս տղաները ճանապարհով մոտեցան հենակետին մոտ 100 մետր հեռավորության վրա եւ կրակի տարափ տեղացին նրանց դիրքերին: Բոլորը կրակում էին ինքնաձիգներով, իսկ Կոստինը՝ միակ պրոֆեսիոնալ զինվորը, նռնականետով: Արդեն մութն ընկնում էր, հակառակորդը լռեց: Մեր խումբը հավաքվեց գյուղի եզրին՝ առաջին տան մոտ: Գյուղը ձորի մեջ էր, եւ մութն ընկնելուն պես տեսանելի էր, թե ինչպես հակադիր լանջով, լուսածիր փամփուշտներ կրակելով՝ գյուղի պաշտպանները հեռացան գյուղից: Վաղուց կենտրոնի հետ կապ չունեինք, մարտկոցները լիցքաթափվել էին: Աշոտի խումբը գյուղի վերին հատվածում էր՝ ձորի մեջ: Սիսիանի տղաները որոշեցին գնալ ու միանալ իրենց հրամանատարին. բացատրեցի, որ վտանգավոր է գիշերով գյուղ մտնելը, հնարավոր է՝ նույնիսկ յուրայիններ միմյանց ուղղությամբ կրակեն: Զլսեցին: Մյուսներին հրահանգեցի մնալ տեղում եւ սպասել իմ վերադարձին կամ իրենց փոխարինմանը: Բոլորս հոգնած ու քաղցած էինք: Տեղանքին քիչ թե շատ ծանոթ Սամի դայից Հրաչիկի տղա



Սամոյի հետ քայլեցինք Կապան: Հասանք շրջխորհուրդ, զեկուցեցի գեներալին հանձնարարության կատարված լինելու մասին: Որոշեցին, որ փոխարինող են ուղարկում: Տղաներին ավտոբուսներով ետ բերեցին: Սիսիանի տղաներից մեկը որովայնի շրջանում հրազենային վիրավորում էր ստացել:

Գիշերը միջազգային աղմուկ էր եղել. մեր գործողությունը մեկնաբանվել էր որպես Հայաստանի կողմից հարձակում եւ ադրբեջանական տարածքների զավթում, ինչը, փաստորեն, ստվերում ու խանգարում էր ղարաբաղյան պայքար միջազգային ատյաններում ազգերի ինքնորոշման պրիզմայով ներկայացնելու նուրբ գործին: Առավոտյան ասացին, որ ստիպված են եղել լուսաբացին թողնել գրավված գյուղերը: Ամեն դեպքում մենք մեր գործն արել էինք, ձեռք էինք բերել մարտական փորձ, ամրապնդել մեր մարտական ոգին, որը մեզ շատ էր անհրաժեշտ, իսկ ադրբեջանցիները երեւի դաս քաղեցին:

Զրահամեքենաներից ու ավտոմեքենաներից բաղկացած մեր շարասյունը Կապան քաղաքի միջով դանդաղ ընթանում էր դեպի Մեղրի: Մայրերին կանգնած մարդիկ ողջունում էին մեզ, շնորհակալություն հայտնում, անգամ ծաղիկներ նետում մեր ուղղությամբ ու «հերոս մեղրեցիներ» անվանում: Շենքերի պատուհաններից ու պատշգամբներից բազմաթիվ մարդիկ էին մեզ ողջունում՝ ձեռքերի թափահարումով: Ժողովրդի դրական գնահատականը մեծ պարգեւ է:

Վերադառնալուն պես կապվեցի Օրդուբաղի հետ, պայմանավորվեցինք հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին հանդիպել: Նրանք արդարացան՝ պարզաբանելով, որ Գողթանասարի ռազմական ստորաբաժանումներն ուղիղ ենթարկվում են Բաքվին եւ գործել են այնտեղի ցուցումով: Ասացին՝ թեւ իրենք փորձել են կանխել, բայց չեն կարողացել: Մեկ ամիս առաջ էր՝ մարտի 23-ի գիշերը, ժամը 2-ին գնացքից գնդակոծել էին Ծիրանիձորի հենակետը:

## Մայիսյան զարգացումներ

Մեղրիի ռուսական սահմանապահ զորամասի հետախուզության պետ Օքարի Ջանիբեկի Մուշիրին, որի մայրը հայ էր, օգնելու նպատակով՝ խիստ գաղտնի պայմաններում անձամբ ինձ էր փոխանցում իրեն հայտ-

նի դարձած մեզ համար կարևոր տեղեկություններ: Մասնավորապես, դեռ մարտի երկրորդ տասնօրյակում նա փոխանցել էր, որ Շարուրից սկսած՝ զինված խմբեր են կուտակվում Օրդուբադում, և բացի տեղի ուժերից, այնտեղ արդեն առկա են 120 զինյալներ, որոնք շարունակում են ավելանալ: Հստակ ասաց, որ առաջիկա 1.5 ամսվա ընթացքում նախատեսում են հարվածել Մեղրիին՝ գործածելով հեռահար զինատեսակներ:

Սակայն աշունը գարունից շուտ եկավ՝ մայիսի 8–9-ին ազատագրվեց Շուշին, իսկ մայիսի 18-ին՝ Լաչինը:

Մուջիրիի պնդմամբ, մայիսին Մեղրիին հարվածելու նախողումը կամ, ինչպես ցույց տվեց ժամանակը՝ հետաձգումը, ոչ թե պայմանավորված էր Շուշիի ու Լաչինի կորստով, այլ հենց Լաչինի ազատագրման օրը, նրա ստվերում մնացած՝ Արարատի կողմից իրականացված ռազմական գործողությամբ, որի արդյունքում մերոնք տիրապետեցին Երասխի սահմանային իշխող բարձունքներին: Այդ մարտերը տեւեցին մեկ շաբաթ: Ադրբեջանը փորձում էր ինչ-որ մաս վերադարձնելով հավասարակշռություն հաստատել, չստացվեց: Մայիսի 23-ին Ալիեւը միակողմանիորեն հայտարարեց մարտական գործողությունները դադարեցնելու մասին:

Այդ ամիսը, սակայն, սկսվել էր ոչ պակաս կարևոր մի իրադարձությամբ. մայիսի 6-ին Մեղրիում՝ Արաս գետի վրա բացվեց Հայաստանն Իրանին կապող լողացող ժամանակավոր կամուրջը, որով սկիզբ դրվեց Հայաստանի խոր շրջափակման ճեղքմանը:

## Վերջին գնացքը

Լողացող կամրջի գործարկումից օրեր անց գործկոմի նախագահ Ենոք Անդրեասյանը հրավիրեց և ներկայացրեց հյուրերին: Իրանական Ջուլֆայի երկաթուղու պատասխանատուներն էին: Խնդրում էին հնարավորություն ընձեռել Մինջեւանում կուտակված շուրջ 250 վագոն իրանական բեռները Մեղրիի տարածքով փոխադրելու: Ասացին, որ ադրբեջանական կողմը համաձայն է: Ենոքի հետ քննարկեցինք եւ, բնականաբար, համաձայնեցինք՝ համոզմունք հայտնելով, որ հազիվ թե բեռները պահպանված լինեն: Ասացինք նաեւ, որ կա մի տեխնիկական խոչընդոտ՝ հենց սահմանագծին երկաթուղին վնասված է, եւ մեր միջոցները սուղ են, առանց աջակցության չենք կարող վերացնել այդ խոչընդոտը: Դա այն



խոչընդոտն էր, որ առաջացել էր բանակի հիմնադիր գլխավոր շտաբի պետ Նորատ Տեր-Գրիգորյանցի անհանգստությունը փարատելու նպատակով գծի այդ հատվածը պայթեցնելու եղանակով, եւ որից անցել էր շուրջ մեկ ամիս: Նրանք պատրաստակամություն հայտնեցին օժանդակելու: Հետագա մի քանի օրերին, գործկոմի նախագահի նախաձեռնությամբ եւ իրանական կողմի աջակցությամբ, խոչընդոտը վերացվեց: Դրանից անմիջապես հետո՝ 1992թ. հունիսի սկզբին կազմակերպվեց եռակողմ հանդիպում հայկական, իրանական եւ ադրբեջանական պատվիրակությունների մասնակցությամբ: Քննարկումը տեղի ունեցավ Սղրդի սահմանամերձ ռուսական ուղեկալում: Ադրբեջանական պատվիրակությունը՝ գեներալ Քյազիմովի գլխավորությամբ, պիտի գար երկաթուղով՝ ոտքով, բայց ուշանում էր: Մտածելով, որ հավանաբար վախենում են, գծով քայլելով՝ Ղեւոնդի հետ ընդառաջ գնացինք: Նրանց խումբը կանգնած էր սահմանագծից մի կրակոց հեռավորության վրա, իրենց տարածքում: Կանգնեցինք սահմանագծին, կանչեցինք, ձեռքով մոտենալու նշան արեցինք: Եկան, բայց դժկամությամբ. կարծում եմ, եթե չգնայինք, չէին գալու՝ պատճառաբանելով, որ դիմավորող չի եղել, թեեւ նման պայմանավորվածություն չկար: Ինչեւէ, դիմավորեցինք սահմանագծին ու ուղեկցեցինք ուղեկալ: Փաստաթուղթ նախապատրաստվեց, եռակողմ ստորագրվեց: Արձանագրվեց, որ բեռների տեղափոխման խոչընդոտները վերացված են, եւ հենց հաջորդ օրվանից մեկնարկում է իրանական բեռների տեղափոխումը: Հանդիպման ավարտին՝ մեր վաշտի մի քանի զինվորի ուղեկցությամբ, ճանապարհեցինք ադրբեջանական պատվիրակությանը, իսկ մենք՝ իրանական պատվիրակության հետ, մեքենաներով շարժվեցինք դեպի Մեղրի: Ուղեկալից հազիվ երկու հարյուր մետր էինք հեռացել՝ ադրբեջանական դիրքից սկսեցին մեզ ուժգին գնդակոծել: Այդ դիրքից մեր ճանապարհի մոտ 100 մետրանոց մի հատված էր տեսանելի: Բարեբախտություն էր, որ ոչ ոք չտուժեց: Մենք նման իրավիճակներ շատ էինք տեսել, վախ չունենք, բայց շատ զարմացած էինք, որ իրեն հրաշալի դրսեւորեց միակ կինը՝ Տանյա Հովհաննիսյանը, որը ներկա էր արձանագրությունը մեքենագրելու նպատակով: Գնդակոծության պահին ադրբեջանական պատվիրակությունը դեռ սահմանագիծ չէր հասել: Ուղեկցող տղաները, սակայն, ռադիոկապով ցուցում ստացան շարունակել

ուղեկցումը: Իրանական պատվիրակության ղեկավարն անմիջապես արձագանքեց. «Դում ճիշտ կիմ, ուրեմն՝ Մինջևանում ոչ մի բեռ էլ չի մնացել»:

Մեկ շաբաթ անց երկաթուղու կապով միացավ Նախիջևանում տեղակայված ռուսական 75-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ Մարկելովը: Այն նույն դիվիզիայի, որը մինչև 1991թ. օգոստոսի 8-ն ապահովում էր Մեղրիի ադրբեջանաբնակ Նյուվադի գյուղի կենսագործունեությունն Ադրբեջանի կազմում: Նա խնդրեց օժանդակել, որ Մեղրիով տեղափոխեն արդեն սենդամբերի դեֆիցիտ ունեցող դիվիզիայի Մինջևանում մնացած մեկ վագոն պահածոն: Հաջորդ օրը նա իմ հյուրն էր, իսկ նրա մի քանի ենթականեր քարշակով շարունակեցին նանապարհը Մինջևան: Վերադարձան նախատեսվածից շատ ուշ: Քաշիշոցների էին ենթարկվել: Հազիվ էին գործը գլուխ բերել: Պատմեցին, որ, բացի իրենց պատկանող վագոնից, մնացած բոլոր վագոնները կանգնած էին բաց դռներով՝ դատարկ: Իրենց մեղադրել են հայերին աջակցելու համար, չեն հավատացել, որ արկղերի մեջ եղածը պահածոներ են՝ բացել ու ստուգել են: Անգամ կասկածել են, որ պահածոների տուփերի մեջ փամփուշտներ են՝ նախատեսված հայերի համար, տուփերն ընտրովի բացել ու ստուգել էին: Սա Մեղրիով անցած վերջին գնացքն էր:

## Թեժ ամառ (խոշտի անկումն ու առումը)

1992թ. մայիսի 15-ի Տաշքենդյան համաձայնագրով սովետական բանակի ունեցվածքը բաժանվեց անկախացած հանրապետությունների միջև: Հայաստանի ու Ադրբեջանի բաժինները նախատեսված էին հավասար քանակությամբ՝ 220-ական տանկ, 220-ական զրահամեքենա, 220-ական հրանոթային միավոր, 100-ական ռազմական ինքնաթիռ: Սակայն, սրան նախորդող գարնանային ժամանակահատվածում, սովետական ռազմաբազաների պահեստներում պայթյունների շքեր էր տեղի ունեցել, ընդ որում՝ Ադրբեջանում մի քանի անգամ ավելի շատ: Յուրաքանչյուր ռազմապահեստի պայթյունից հետո պարզվում էր, որ սպառազինության գերակշիռ մասը ոչնչացել է: Որոշ տեղեկություններով՝ մինչև Տաշքենդյան համաձայնագրի ստորագրումը, Ադրբեջանը մարդկային կապերի, փողի եւ օղու նպատակասլաց գործածությամբ ձեռք էր բերել մի քանի հարյուր միավոր տանկ, զրահամեքենա ու հրանոթ: Բայց ամենակարեւորը՝ օգտվելով ՍՍՀՄ փլուզման հետեւանքով բանակում առաջացած անտերությունից, հարյուրավոր արհեստավարժ զինվորականներ պատրաստակամ էին գործածելու այդ տեխնիկան, բնականաբար՝ վճարի դիմաց եւ Ղարաբաղի դեմ: Ադրբեջանում սովետական բանակի ներկայությունն ու սպառազինությունը մի քանի անգամ գերազանցում էին Հայաստանում տեղաբաշխվածից, որովհետեւ դրանք առաջին հերթին նախատեսված էին Թուրքիայից ՆԱՏՕ-ական հարձակումը դիմակայելու տրամաբանությամբ: Հայաստանը համարվում էր առաջնագիծ եւ հարձակման դեպքում անմիջապես վերածվելու էր մարտադաշտի, որը սպասարկվելու էր Ադրբեջանից:

Ուստի, թեեւ մայիսին Ադրբեջանը կորցրել էր Շուշին ու Լաչինը, երկրում քաղաքական ու ռազմական ճգնաժամ էր, բայց, միեւնույն է, նա ուներ մի քանի անգամ ավելի ու մի կարգ բարձր սպառազինություն եւ վերջինս գործածող սովետական բանակի վարձու մասնագետներ:

Հունիսի 7-ին էլչիբեյն ընտրվեց նախագահ եւ արդեն 5 օր հետո անսպասելի ու հուժկու հարձակում կազմակերպեց Ղարաբաղի հյուսիսային ուղղությամբ: Արդեն օգոստոսին ադրբեջանական զինուժը գրավել էր Ղարաբաղի գրեթե կեսը: Անմասն չմնաց նաեւ Մեղրին:

Թեեւ Նախիջեւանի առաջնորդ Հեյդար Ալիեւը վարում էր ինքնուրույն քաղաքականություն եւ նախապատվությունը տալիս էր խաղաղության ապահովմանը, բայց այստեղ կար մի շատ նուրբ հանգամանք: Բանուն խնդիր էր դրել «Ազգային նակատի» միջոցով վերջ տալ Ալիեւի ազդեցությանը: Էլչիբեյը ծագումով Մեղրիի հարեւան Օրդուբադի շրջանի Քալաֆի գյուղից էր, եւ Օրդուբադում նրա ազդեցությունը բավականին ուժեղ էր՝ այն աստիճան, որ մինչեւ նրա նախագահ դառնալն Օրդուբադի շրջանային իշխանությունն արդեն տնօրինում էր ԱՃ-ն: Գործկոմի նախագահ էր ընտրվել Ռովշանը՝ ԱՃ-ից: Օրդուբադից էր նաեւ Նախիջեւանի ԱՃ-ի առաջնորդ Ֆարաջը, որը մասնագիտությամբ դեղագործ էր եւ Բաքվի մեջլիսի պատգամավոր: Նույն մեջլիսի օրդուբադցի մյուս պատգամավոր ուսուցիչ Իլգարը եւս ԱՃ-ից էր, որն էլչիբեյի նախագահ դառնալուց հետո նշանակվեց Օրդուբադի ոստիկանապետ: Այս մարդկանց մասին ես գիտեմ անձնական շփումներից: Թեեւ առերեսույթ Ալիեւի հետ նրանք

պահում էին հավասարակշռված հարաբերություններ, բայց ցանկացած պահի պատրաստ էին կատարել Բամվի ցանկացած հանձնարարություն:

Հուլիսի 10-ի կողմերը՝ մի օր ոստիկանության իմ աշխատասենյակ եկավ Ղևոնդն ու ասաց, որ Երևանից՝ ՊՆ գիտությամբ, եկել է մի ջոկատ՝ սահմանների պաշտպանությանն աջակցելու նպատակով: Քանի որ վաշտի տղաները հոգնած են, ինչպես նաև պիտի մասնակցեն իրենց գործընկեր Սերոժի հարսանիքին, ուստի մտածում է նրանց փոխարինել այդ ջոկատով: Թեև Ղևոնդի վաշտն այլևս ոչ թե ոստիկանության, այլ նորաստեղծ ՊՆ ենթակայության տակ էր, բայց, այնուամենայնիվ, կարևորագույն հարցերով նա մշտապես խորհրդակցում էր ինձ հետ: Այդ ջոկատը, որն իրեն «Շանթ» էր կոչում, բացարձակապես մարտական փորձ չուներ, բաղկացած էր բացառապես ուսանողներից, որոնք զբաղվում էին ալպինիզմով: Նրանք ՊՆ-ից ստացել էին ինքնաձիգներ և զրությամբ զործուղվել Ղևոնդի տրամադրության տակ: Լավ ապահովված էին: Եկել էին իրենց պատկանող փակ «Ուրալ» մակնիշի մեքենայով, ունեին ալպինիզմի համար անհրաժեշտ ամեն ինչ, պահածոյացված սնունդ և անգամ բենզինով գործարկվող փոքրիկ գեներատոր՝ էլեկտրականություն ստանալու համար:

Ղևոնդին հիշեցնելով նախկինում ունեցած ինֆորմացիան Մեղրիի վրա հնարավոր հարձակման վերաբերյալ, նաև հիշատակելով Ղարաբաղում առկա փաստացի իրավիճակը, խորհուրդ տվեցի՝ առանց տեղանքին ծանոթ փորձառու զինվորների, չվստահել սահմանի պաշտպանությունը տեղանքին անծանոթ, անփորձ ուսանողներին:

Օգոստոսի 15-ի ավարտին հաշված ռոպևներ էին մնացել: Սովորականի նման փակեցի երրորդ հարկում գտնվող աշխատասենյակիս դուռը և իջա հերթապահ մաս: Տուն էի գնում: Սովորաբար տուն գնալ-գալու ճանապարհին ես էի վարում մեքենան՝ բենզին խնայելու նպատակով: Կարճեւան էի գնում Մեղրիի Փոքր թաղով՝ օդանավակայան տանող ճանապարհով: Այսպես ճանապարհը երկու անգամ կարճ էր Ազարակով անցնող ճանապարհից: Վարորդը՝ Միշա Պետրոսյանը, բանալին ինձ փոխանցելով ասաց, որ հենց այդ պահին Խոշլիում գտնվող վաշտի զինվոր Գեորգը ռադիոկապով խոսում էր Ղևոնդի հետ, եւ որ, դատելով նրանց խոսակցությունից, մեր հենակետի ուղղությամբ կարծես կրակոցներ կան: Նստեցի մեքենայի մեջ, ռադիոկապը միացված էր: Ճանապարհի կեսին նորից լսվեց նրանց խոսակցությունը: Գեորգն ասում էր, որ նրանք նորից կրակում են, իսկ Ղևոնդը հանձնարարում էր՝ շարունակվելու դեպքում, իբրեւ նախազգուշացում հակակարկտային հրանոթով խփել Ագուլիսի թռչնաֆաբրիկային: Ես միջամտեցի՝ ասելով, որ դրա փոխարեն ավելի լավ է, պայմանավորվածության համաձայն, ռադիոկապով կապվել Օրդուբադի հետ եւ տեղեկացնել միմյանց վրա չկրակելու պայմանի խախտման մասին: Լռություն տիրեց:

Առավոտյան Գորիս պիտի գնայի ինչ-որ ֆնանարկման մասնակցելու նպատակով: Կապվեցի Ղևոնդի հետ, ասաց՝ ամեն ինչ կարգին է: Հորդորեցի զգույշ լինել, զերծ մնալ արկածախնդրությունից եւ մեկնեցի Կապան: Այնտեղից Կապանի ոստիկանապետի մեքենայով, Տաթեւի ճանապարհով միասին գնացինք Գորիս, որովհետեւ հիմնական ճանապարհը, որի կեսից ավելին սահմանագիծ է, անցնում էր Ադրբեջանի տարածքով եւ այդ ժամանակաշրջանում համարվում էր շատ վտանգավոր: Արդեն վերադարձին Կապանի ոստիկանության ճանապարհային հենակետի հերթապահը բաժնի պետ էդիկ Բարսեղյանին հարցրեց, թե արդյոք իր հետ է Մեղրիի պետը, եւ փոխանցեց, որ Մեղրիում ինչ-որ դիրք ենք կորցրել, եւ Մեղրիի տարածքը հրետակոծվում է: Հասանք Կապան, անմիջապես նստեցի իմ մեքենան եւ շարժվեցի հնարավորինս արագ: Մենակ էի: Քաջարանում վերցրի նամփեզրին կանգնած Արմեն Թումանյանին, որը հաջորդ օրվա մարտական գործողությունների ակտիվ առաջամարտիկներից մեկը դարձավ: Միանգամից գնացի Փոքր թաղ՝ վաշտ: Բարձրացա Ղևոնդի աշխատասենյակ, որը երկրորդ հարկում էր, ներս մտա: Նա նստած էր, արմունկները սեղանին հենած, գլուխը խոնարհած ափերի մեջ, խեղճացած, խուսափող հայացքով:

Հարցրի՝ ինչպես է պատահել: Մեղադրեց «Շանթ» ուսանողական ջոկատին, ասաց՝ հանկարծ տեսել են, որ ադրբեջանցի զինվորներն արդեն մտնում են խրամատներ, խուճապի են մատնվել ու նահանջել, բայց այնտեղ եղած մի քանի փորձառու վաշտի զինվորները դիրքավորվել են մի կրակոց հեռավորության վրա:

Կորցրել էինք Խոշլիդաղ կոչվող բարձունքը, որը մեզ համար ուներ բացառիկ ստրատեգիական նշանակություն: Խոշլիդաղը Մեղրիի եւ Օրդուբադի շրջանների միջեւ Զանգեզուրի լեռնաշղթայի իշխող բարձունքներից մեկն է, մոտ 2700 մետր բարձրությամբ: Այնտեղից՝ ինչպես ափիդ

մեջ, հստակ երևում են շրջկենտրոն Օրդուբադը, մերձակա գյուղերը, երկաթուղին, միջպետական ավտոճանապարհը, իսկ վաղ առավոտյան՝ պարզ եղանակին Նախիջևանի վրայով փոռձառու աչքը կարող է տեսնել անգամ Արարատ լեռը, փոքրը՝ մնծի ֆոնին: Հակառակորդի վերահսկողության տակ էին մնացել մեր ունեցած երկու ԲՄ-21 Գրադ հրթիռային համակարգերից եւ երեք Դ-30 հրանոթներից մեկականը:

Պատասխանատվությունն անհելի էր, եւ ես Ղևոնդին փոխանցեցի ճանապարհին նախօրոք մտածածս ու վերլուծածս. «Նախեւառաջ հրամանատարի կեցվածքն ընդունիր, հրահանգիր, որ վաշտի անձնակազմը հնարավորինս արագ հավաքվի «Լեշկարի տնարում», որտեղ կկազմակերպվենք, մթության հողի տակ կմոտենանք, կդիրքավորվենք եւ լուսաբացին՝ հրետանային նախապատրաստությունից հետո, կսկսենք հարձակումը: Հետդ կվերցնես մեր ունեցած միակ հաստոցային նռնականետը (ԱՐՀ), Նյուվաղիի կողմից բերել տուր հրանոթը, որպեսզի լույսը չբացված լինի այնտեղ՝ ուր կասեմ ռադիոկապով. ես գնում եմ ոստիկանություն, մարտին մասնակցելու հանձնարարություն տամ անձնակազմին, կապվեմ Լիճի գումարտակի հրամանատար Հայկ Կարապետյանին, որ նրանք կ նախապատրաստվեն, հետո գնալու եմ տուն, փոխվեմ ու բարձրանամ «Լեշկարի տնարի»: Իմացած եղիր, եթե վաղը, մինչեւ կեսօր՝ անգամ իմ ու քո կյանքի գնով ետ չվերցնենք խոշլիդաղը ու հետեւաբար թույլ տանք, որ Մեղրիում խուճապ սկսվի, ապա ավելի լավ է ինքնասպան լինենք»:

Մտա ոստիկանություն: Անձնակազմը ռադիոկապով տրված հրահանգով հավաքված էր՝ զինվորական հանդերձանքով եւ ուտելիքի պաշարով: Բացակայում էին արձակուրդում գտնվող երեք հոգի: Կապիտան Ներսիսյանից բացի (նրան, ում «շարժման տղաները» ժամանակին փորձում էին կախել չինարի ծառից, իսկ հիմա՝ ամենաօրհասական պահին կարծես գոյություն չունեին), որը հերթապահ էր եւ պիտի շարունակեր հերթապահությունը ըստ անհրաժեշտության՝ մինչեւ մեր վերադարձը: Տեղանքին քաջածանոթ մայոր Վոլոդյա Ազատյանը պետք է կազմակերպեր «Բաշ Յուրդում» տեղակայված Դ-30 հրանոթի գործածությամբ փոքր եւ մեծ Գողթանասարերի երեւացող ճանապարհահատվածի հրետակոծությունը, այդպիսով խաբարկելով հակառակորդի թիկունքային աջակցությունը: Մյուսներն ստանում էին ինքնաձիգերը, տեղավորվում մեքենաներում, գնում Լեշկարի տնարի եւ սպասում ինձ: Աշխատակիցներից մեկն ասաց, որ ուզում են կրել նաեւ տաբկային ատրճանակները, սակայն փոխարինող քարտերը հետները չեն վերցրել, ուստի թույլտվություն խնդրեց, որ դրանք ստանան ինքնաձիգերն ստանալու կարգով, նույն մատյանում ստացողի անունն ու զենքի համարը գրանցելով ու ստորագրելով: Թևեւ հերթապահից ատրճանակներն ստանալն ու հանձնելը իրականացվում էին տվյալ աշխատակցի եւ նրան հրամանով ամրացված տաբկային ատրճանակի տվյալներ պարունակող փոխարինող քարտի միջոցով (կամ քարտն է գինանոցում ատրճանակը աշխատակցի մոտ, կամ՝ հակառակը), բայց իրավիճակից ելնելով թույլատրեցի:

Լեշկարի տնարի ժամ առաջ հասնելու անհրաժեշտությունը բխում էր այն մտավախությունից, որ խոշլիդաղը գրված ազերիները՝ մտադրվելու դեպքում, մեր բացակայությունից օգտվելով կարող էին իջնել ձորն ի վար, մոտենալ բնակավայրերին եւ թեկուզ հեռահար կրակոցներով ակտիվացնել սաղմնավորված խուճապը:

Գյուղամիջին տղամարդկանց շփոթված բազմություն էր հավաքված՝ երեւի ողջ գյուղը: Իջա, բարեւեցի, զրուցեցի՝ փորձեցի սառնասրտություն ու հաղթանակի հավատ ներշնչել: Գնացի տուն, պատրաստվեցի ու բարձրացա Լեշկարի տնարի: Վաշտի տղաները՝ ոստիկանները, տեղանքին քաջածանոթ որսորդներն ու կամավորները հավաքված սպասում էին: Որոշ ժամանակ անց՝ Հայկ Կարապետյանի գլխավորությամբ եկավ Լիճի վաշտը, որն ամբողջությամբ համալրված էր անկախ Հայաստանի առաջին զորակոչիկներով:

Ներկաներին բաժանեցի երկու խմբի: Առաջինը՝ Հայկ Կարապետյանի գլխավորությամբ, որը պետք է մթության հողի տակ, տեղանքին քաջածանոթ վաշտի տղաների ուղեկցությամբ գագաթին մոտենար դիմացից՝ Իլիչաթաղի կողմից: Երկրորդը՝ իմ տեղակալ Հրաչիկ Մարգարյանի գլխավորությամբ, տեղանքին քաջածանոթ կարենանցի որսորդ Հովիկ Մարության ուղեկցությամբ, պիտի մոտենար ձախից՝ «Քամոտ լեռնանցքի» կողմից:

Այդ անհելի բարձունքին աննկատ հնարավոր էր մոտենալ ու դիրքավորվել միայն մթության հողի տակ, այլապես կորուստներն անխուսափելի կլինեին, իսկ դեռ տեղ չհասած՝ կորուստների բերով հնարավոր կլիներ շարունակել հաղթական գրոհը՝ խիստ կասկածելի էր: Իմ խնդ-

ռանքով, Լեշկարի տնարի էին եկել նաեւ այդ պահին Մեղրիում գտնվող երկու նանաչված ֆիդայի: Նրանք այն ժամանակվա փառաբանված ջոկատներից մեկի հրամանատարն ու տեղակալն էին: Ջոկատ, որ մասնակցել էր Խոջալուի ու Շուշիի ազատագրմանը, եւ դրա մասին նրանք պատմում էին ծանոթ, թե անծանոթ բոլոր զրուցակիցներին: Ահա եւ երկու հիմնական խմբերի մարտական ոգին բարձրացնելու նպատակով՝ նրանցից յուրաքանչյուրին կցեցի խմբերից մեկին:

Փոքրիկ մի խումբ՝ պահածոների գործարանի տնօրեն, տեղանքին ծանոթ կարճեւանցի Գրիշա Գրիգորյանի գլխավորությամբ, ուղարկեցի Խոջիդաղից դեպի Մեղրի իջնող Կարճեւան–Կուրիսի վարչական տարածքների սահմանագիծ՝ ջրբաժան գծի վրա գտնվող Խոջիդաղի հարեւան բարձունքը, որին տեղացիները «Իյուղ» են անվանում (Իյուղ՝ նշանակում է խրտվիլակ): «Խոջիդաղի» եւ «Իյուղի» միջեւ «Ալիշաթաղ» փարախն է: «Իյուղից» բավական լավ երեւում է ոչ միայն նախորդ օրը կորցրած Խոջիդաղը, այլեւ Գողթանասարից Խոջիդաղ սահմանագծի բեկյալի ամեն մի մանրուք: Գրիշա Գրիգորյանը պետք է ուղղորդեր իմ արձակած հրանոթի արկերը Խոջիդաղի գագաթը զրաղեցրած հակառակորդի եւ նրանց Գողթանասարից օգնության շտապող ուժերի վրա:

Տեղանքին քաջածանոթ պատասխանատուները՝ առանց լապտեր միացնելու, խմբերին հասցնում էին նախատեսված վայրեր, ուր վերջիններս դիրքավորվում ու սպասում էին լուսաբացին եւ մտնում մարտի մեջ միայն հրետանային նախապատրաստությունից հետո, երբ հակառակորդի նամբարը խուճապի մատնված կլիներ:

Ես նախատեսել էի հրանոթը տեղադրել հենց Լեշկարի տնարում: Խմբերին ճանապարհելուց հետո բացեցի քարտեզը, որ նախապատրաստվեմ, բայց ձեռքիս տակ եղած քարտեզի վրա Լեշկարի տնարին արտացոլված չէր: Բնականաբար, արտացոլված չէր նաեւ ավտոճանապարհը, որը կառուցվել էր քարտեզի տպագրությունից 10 տարի անց: Ինձ անհրաժեշտ էր գտնել ճանապարհին հարակից, քարտեզի վրա նշգրիտ արտացոլված փոքրիկ մի հարթություն, ուր հնարավոր կլիներ տեղակայել հրանոթը: Գտա այդ կետը: Այդ վայրը Կարճեւանում անվանում են «Վոնանի գաղիգ», որը գտնվում է «Բիրդի» կոչվող լեռնազանգվածի ուղիղ կատարի ետնամասում: «Բիրդին» Կարճեւանից արեւմուտք գտնվող լեռնազանգվածի աջ մասն է, ձախ մասից տարանջատվում է հայտնի ջրվեժով, որին տեղացիները Ծոր են անվանում: «Վոնանի գաղիգը» հարմար էր այնքանով, որ, նախ, ճանապարհն անցնում է հենց նրա միջով, հարթ է եւ հակառակորդի դիրքերից ու գրավված Խոջիդաղից չի երեւում:

Վերադարձա «Վոնանի գաղիգ»: Լուսաբացը մոտ էր, հրանոթն ու Ղեւոնդը դեռ չկային: Ռադիոկապով ասաց, որ Նյուվադիից հրանոթի տեղափոխման ընթացքում տեխնիկական դժվարություններ են եղել, հաղթահարվել են, թեեւ ուշացումով, բայց, այնուամենայնիվ, արդեն մոտենում են: Հասան. Ղեւոնդը, Զարիկաց Սուրոն, Ռոյը, Կարլենաց Հովիկը եւ իմ հրետանավոր օգնական Սամվելը: Երկրորդ օգնական Արմենն արդեն ձեռքից վիրավորվել էր: Մինչեւ նրանց հասնելը եկել էին կամավորներ՝ մարտին միանալու պատրաստակամությամբ: Կարճեւանից եկել էին անգամ տարեց որսորդներ Գարեգին Մուրադյանը՝ ծնված 1906թ., Հայկ Գեւորգյանը՝ ծնված 1914թ. եւ Լեւոն Գրիգորյանը՝ ծնված 1923թ.: Ղեւոնդին հրահանգեցի, բացի տարեց որսորդներից, օգնական Սամվելին, ներկաների մեջ տարիքով ավագ Սամվել Բաղալյանին (ոստիկանության անձնագրային սեղանի պետն էր), Նիկիտա Գրիգորյանին եւ արկ տեղափոխողներին, մյուսներին առաջնորդի առաջնագիծ: Սա կլիներ երրորդ խումբը: Նրանք պետք է հաստոցավոր նռնականետն ու նռնակները բարձրացնեին «Իյուղ»՝ Գրիշայի մոտ, որտեղից Ղեւոնդն անձամբ պիտի նռնակակոծեր Խոջիդաղի գագաթը: Ասացի՝ տեղ հասնելուն պես, մինչեւ Ղեւոնդը կնախապատրաստի նռնականետը, ես քարտեզից դուրս կբերեմ եւ նրան ռադիոկապով կփոխանցեմ Իյուղից Խոջիդաղ նշգրիտ հեռավորությունը, գագաթների բարձրությունների տարբերությունը եւ նշանառության պարամետրերը:

Տարեց որսորդները դիմադրում էին, ուզում էին իրենք գնալ առաջնագիծ, ասում էին՝ ինչ լինելու է, թող իրենց լինի: Ես նրանց մատնացույց արեցի ստվերաշատ մի հսկա գիհենու ծառ եւ հորդորեցի իբրեւ պահեստայիններ նստել այդ ծառի ստվերում ու սպասել՝ խոստանալով, որ եթե անհրաժեշտություն լինի՝ միասին կգնանք առաջնագիծ: Մինչ ես հրահանգավորում ու ճանապարհում էի Ղեւոնդի գլխավորած խմբին, հրետանու օգնականներս փորձում էին մոնտաժել հրանոթը: Մոտեցա, տեղադրեցի բուսոլը (կողմնացույց). խափանվել էր, սլաքն անշարժացել էր, հավանաբար՝ առանց փակելու տեղափոխելու հետեւանքով: Մոտածեցի հաշվարկները կատարել առանց բուսոլի՝ Խոջիդաղից

հարավ ընկած, քարտեզի վրա արտացոլված, Նախիջեւանի սահմանագծի վրա գտնվող «Ծակ Քար» տեղանուն ունեցող լեռնազանգվածը իբրեւ հեռավոր մեոյալ կետ դիտարկելու եւ նրա նկատմամբ անկյուն կառուցելու միջոցով: Սակայն այդ լեռնազանգվածը բավական տարածական է եւ, իմ գտնվելու վայրից դիտարկելիս, ընդգծված իշխող գագաթ չի նշմարվում: Մինչդեռ Խոշլիդաղի փոքր մակերեսով հենակետը ճշգրիտ ռմբակոծելու համար անհրաժեշտ էր շատ բարձր ճշգրտություն: Արագ որոշեցի տեղափոխել հրանոթը 50 մետր առաջ եւ տեղադրել ուղիղ ճանապարհի մոտ, պայթեցված ժայռաբեկորի տակ, որտեղից տեսանելի էր Խոշլիդաղի կատարը: Թեեւ այս տարբերակը խիստ վտանգավոր էր հենց ինձ համար, բայց տվյալ դեպքում այլընտրանք չկար: Հրանոթը նորից կցեցինք «Ուրալին», դժվարությամբ տեղափոխեցինք հիշյալ կետը եւ բահերով սկսեցինք որոշակի հողային հարթեցման աշխատանքները, որպեսզի կարողանանք տեղակայել: Մինչ օգնականներս զբաղված էին այդ գործով, հեռադիտակով սկսեցի զննել Խոշլիդաղի կատարը: Անմիջապես հայտնաբերեցի կապիտան Կարապետյանի խմբին՝ գագաթին շատ մոտ դիրքավորված: Այդ հանգամանքը հատկապես Գրիշան հաստատեց ռադիոկապով: Փաստորեն, արկի բեկորները շատ ավելի հեռվում կարող են խոցել մարդուն, քան խմբի հեռավորությունն էր կատարից: Արագ կապվեցի Ղեւոնդի հետ, նա արդեն հասնում էր: Փոխանցեցի նշանառության պարամետրերը եւ հրահանգեցի անհապաղ սկսել առատ ու խիտ նոնակակոծումը, միաժամանակ Գրիշայի միջոցով ուշադիր դիտարկել եւ տեղեկություն փոխանցել դեպի Խոշլիդաղ հակառակորդի օգնական ուժերի տեղաշարժի մասին: Ղեւոնդը սկսեց, եւ ես հեռադիտակով տեսնում էի, թե ինչ ճշգրիտ են պայթում նոնակները, որոնց բեկորները չէին կարող վտանգավոր լինել մեզնից համար: Ենթադրելով, որ Ղեւոնդի նոնակակոծումից հակառակորդը պիտի նահանջի ու դիրքավորվի գագաթի ետնամասում՝ մեր հարձակման երեք ուղղությունների հակառակ կողմում, որոշեցի մի քանի բեկորային արկ ուղարկել այդ տարածք, վստահ լինելով, որ դրանց բեկորները չեն կարող վտանգավոր լինել մեզնից համար: Հազիվ կիսմ մի քանի արկ ուղարկել, երբ Ղեւոնդն ու Գրիշան սկսեցին տեղեկություններ հաղորդել հակառակորդի հենակետերի եւ տեղաշարժի մասին: Առաջինը՝ Գողթանասարից դեպի Մեղրի ընկած մի կետից հակառակորդի գործող ԲՄ-21 Գրադ



հրթիռային համակարգն էր: Ղեւոնդն ու Գրիշան կոորդինատներով ուղղորդել չգիտեին, բացատրում էին տեղանունների նկատմամբ պոտենցիալ թիրախի ունեցած դիրքը՝ նկարագրելով: Ղեւոնդը ծնվել ու մեծացել էր Կուրիս գյուղում եւ այդ վայրի տեղանունները բավական լավ գիտեր: Ես՝ բոլորը չէ, որ հստակ գիտեի: Այդ պատճառով նրա ասածը ճշգրտում էի բեկյալ սահմանագծի գագաթների թվարկումով՝ սկսած Գողթանասարի կողմից: Ասենք՝ 4-րդ եւ 5-րդ բեկումների միջակայքում, 4-րդից հաշված 1/3-ի վրա: Հիշում եմ, որ ԲՄ-21-ին ուղղված երկրորդ արկի պայթյունից հետո Ղեւոնդը չորս մետր աջ, թե ձախ՝ ճշգրտելու հրահանգ տվեց: Ես ժպտացի, որովհետեւ 5 կմ հեռավորության վրա պայթյունի փոշու մեջ հնարավոր չէ գնահատել չորս մետրը: Ու ես այդ տրամաբանությամբ ուղղորդեցի 20 մետրով, ու երրորդ արկը շրջեց Գրադը: Մեկ այլ դեպքում նա ուղղակի ասաց. «Հիշո՞ւմ ես, որ ես ու դու 7-րդ դասարանն ավարտելուց հետո հորդ ու հորս հետ գնացել էինք որսի, հայրդ մի քարայծ որսաց, այ հենց էդ մասով մի 40–50 հոգով գալիս են դեպի Խոշլիդաղ»: Ահա ես այս ամենը վերծանում էի, ճշգրտում ջրբաժան գծի բեկյալի սկզբունքով, ընտրում նրանց քայլին համընթաց առաջիկա հնարավորինս հարթ ու քարտեզի վրա արտացոլված կետը, հաշվարկները կատարում այդ կետի նկատմամբ, ուղղորդում հրանոթն այդ կետի վրա, աղյուսակից նայում արկի թռիչքի տեւողությունը, վերածում քայլքի հեռավորության ու Ղեւոնդին ասում, որ հիշյալ կետից հենց այդ հեռավորության վրա գտնվելու դեպքում տեղեկացնի ռադիոկապով: Ղեւոնդի հրահանգով արձակված առաջին արկն ընկավ օգնության շտապող օգնական խմբի մեջ: Կրկնեցինք: Ղեւոնդը ցնծում էր: Տեսարանը հավանաբար շատ դաժան էր, բայց ինչ արած՝ պատերազմ էր, եւ զոհասեղանին էր դրված Մեղրիի ճակատագիրը: Այսպես շարունակ:

Գրոհը սկսելուն պես շրջանի հասանելի հատվածի վրա սկսեց տեղալ հակառակորդի արձակած արկերի ու հրթիռների տարափը, թեեւ ունեինք սահմանային բախումների ժամանակ բնակավայրերը չհրետակոծելու պայմանավորվածություն: Ակնհայտ էր, որ սա սովորական դիրքային կռիվ չէր: Հակառակորդն իշխող Խոշլիդաղից եւ իրենց հիմնական հենակետ հանդիսացող գերիշխող Գողթանասարից թիրախավորել էր Մեղրիի շրջանի տեսանելի բոլոր բնակավայրերը: Բարեբախտություն էր, որ հակառակորդի հրետանավորները արհեստավարժ չէին, եւ նրանց

արձակած հայրուրավոր արկերն ու հրթիռները պայթում էին բնակավայրերից հեռու՝ լեռնալանջերին: Շեղումն այնքան մեծ էր, որ Ագարակ քաղաքի ուղղությամբ արձակված արկերի ու հրթիռների հիմնական մասը պայթում էր Իրանի տարածքում: Մեղրիի շրջանի տարածքը կուրորեն հրետակոծվում ու հրթիռակոծվում էր նաև արեւելքից՝ Զանգելանի կողմից: Սակայն այդ ուղղությամբ նրանց տեսանելի բնակավայրեր չկային, եւ ազդեցությունը մեծ չէր: Հակառակորդի արձակած արկերի ու հրթիռների ընդամենը մի չնչին մասն ընկավ բնակավայրերի շրջակա այգիներում, մի քանի արկ հասավ Մեղրի քաղաքի ծայրամասեր, մեկը դիպավ հիվանդանոցին: Առանց պայթուցիչի մի արկ Մեղրիում ցցվել էր բնակելի տան ներսի պատի մեջ: Նույնպիսի մի արկ էլ Վարենավարում ծակել էր տան տանիքը, առաստաղը, հատակը, անդրադարձել նկուղի հատակից ու հայտնվել քամած մածունի պարկի մեջ: Էլի կլինեին նման մանր վնասներ, բոլորը չեմ հիշում:

Հերթական հաշվարկն էի կատարում մեքենային դրված քարտեզի վրա, երբ կողքիս հայտնվեց լեգենդար ֆիդայապետը՝ տխուր ու ջղանգված արտահայտությամբ: Հանկարծակիի եկած՝ բնազդաբար հարցրի. «Ինչ է պատահել, հո վիրավոր չես»: Նա ձեռքը տարավ դեպի ձախ կողը ու հազիվ լսելի ձայնով ասաց. «Այստեղ թարախապալար է զոյացել, ուժգին ցավում է»: Ես էլ հորդորեցի շուտ իջնել եւ զբաղվել առողջության վերականգնմամբ: Հետո առաջին խմբի պատասխանատուները հայտնեցին, որ իրենց քաջալերող կարգված լեգենդար ֆիդայապետի տեղակալն էլ՝ դեռ դիրքավորման վայր չհասած, թաքնվել էր ժայռածերպերում ու ասել, որ այդտեղից առաջ չի գնա, ու մինչեւ մարտի ավարտը մնացել էր այդտեղ:

Հակառակորդը հայտնաբերել էր նաև մեզ՝ հրետանավորներիս: Մեր ուղղությամբ արձակված 50-ին մոտ արկերի ու հրթիռների առաջին պայթյունները շեղ էին մեկ կիլոմետրից ավելի, բայց դանդաղ՝ ասես սողալով, մոտենում էին: Վերջին մի հրթիռ ցցվեց հողի մեջ՝ հրանոթին շատ մոտ, չպայթեց, հավանաբար առանց պայթուցիչի էր: Բայց հանկարծակի արգելակման հետեւանքով առաջացած հարվածային ալիքը տեղահան արեց հրանոթի մոտ կանգնած շտապ օգնության մեքենայի ապակիները: Մյուսը պայթեց հրանոթից 20 մետր վեր՝ ժայռաբեկորների արանքում: Դրադի հրթիռ էր, ռեակտորի մնացորդը գլորվելով ընկավ ճանապարհի մեջ, թեթեւ դիպավ ոտքիս կոնքին, դեռ տամ էր ու թեթեւակի այրեց: Ես բանի տեղ չդրեցի, անգամ չխոսեցի դրա մասին:

Կեսօրի մոտ բարձունքն ազատագրված էր, սակայն հակառակորդի հրետանին չէր լռում: Ռադիոկապով՝ Գրիշայի միջոցով, միջնորդավորված դիմեցի Օրդուբադի ղեկավարությանը. «Շարունակենք, թե՞ գալիս եք հանդիպման»: «Գալիս ենք»,– եղավ պատասխանը: Հրետանին լռեց:

Ցավոք սրտի, գրոհի մասնակիցներից երկուսը՝ Գեորգն ու Հրաչը, զոհվեցին: Գեորգը դիրքի պատասխանատուն էր: Բարձունքը կորցնելուց հետո չէր իջել, դիրքավորվել էր մի կրակոց հեռավորության վրա ու լուսաբացին միացել Հրաչիկ Մարգարյանի խմբին:

Բարձունքում ցնծություն էր՝ հաղթանակ էին տոնում. Ղեւոնդի վաշտի տղաները, ոստիկանությունը, արդեն ժամկետային զորակոչով կազմավորված Լիճքի առաջին վաշտը՝ կապիտան Հայկ Կարապետյանի գլխավորությամբ, ու բազմաթիվ կամավորներ:

Ներկաների ոգեւորությանը հինգ տոպե միանալուց հետո Ղեւոնդին հրահանգեցի մնալ տեղում ու վերականգնել պաշտպանությունը, իսկ ես գնացի Արաքսի ափ, սահմանագծի վրա հանդիպելու հակառակորդի վարչական եւ ռազմական պատասխանատուների հետ:

Հանդիպումը կայացավ ժամը 17-ին, Արաքսի ափին, սահմանագծի վրա: Նրանք եկել էին հինգ հոգով՝ Օրդուբադի գործկոմի նախագահ Ռովշանը, ոստիկանապետ Ֆաիկը եւ էլի երեք հոգի, մեկը՝ զինվորական: Եկել էին ավելի շուտ, կանգնած էին շարքով, գլխիկոր: Մոտեցա, բարեւեցի եւ, փոքձելով ոտաք հայացքները, միանգամից ասացի. «Դուք պայման եք խախտել, հայրուրավոր արկեր եք արձակել մեր բնակավայրերի վրա, բայց մենք հավատարիմ մնալով մեր պայմանավորվածությանը, նույնիսկ մեկ արկով չենք պատասխանել: Եկել եմ ձեր աչքերի մեջ նայելով հավաստիացում ստանալու, որ այլեւս նման բան չի կրկնվի, այլապես զգուշացնում եմ, որ եթե մեկ անգամ էլ նման բան պատահի, ապա պատասխանը լինելու է ուժգին ու մինչեւ վերջ, բացառվելու է նման հանդիպման հնարավորությունը»: Միմյանց ընդհատելով՝ երդվում էին, որ այլեւս նման բան տեղի չի ունենա: Արդարանում էին՝ ասելով, որ հարձակումը նախաձեռնել են Բաքվից եկած ստորաբաժանումներ, որոնց վրա իրենք ազդեցություն չունեն: Տեսարանը շատ նման էր կապիտուլյացիայի...

Հակառակորդի խոստովանությամբ՝ նրանց զոհերը 26-ն էին:

Մինչդեռ մեր բնակավայրերի արդյունավետ հրետակոծումը կարող էր ճակատագրական լինել:

(Հետամրիր մի զուգադիպությամբ՝ 1920թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, նույն Խոշլիդաղի շրջակայքում, Նժդեհի գլխավորած Կարճեւան-Կամավաբերդի աշխարհազորը ետ էր մղել թուրք զորավար Խալիլ փաշայի գլխավորած զորագունդը, որը, ռուս բոլշեւիկների հետ դաշնակցած նպատակ էր հետապնդում նեղմել Մեղրին՝ Արաբսի երկարությամբ, միացնելով Նախիջեւանը Ադրբեջանին):

Վերադարձին, հենց ռադիոկապը հասանելի դարձավ, փոխանցեցին, որ Մեղրի է եկել գնդապետ Յուրի Խաչատուրովը եւ գործկոմում ինձ է սպասում: Միանգամից գնացի նրա մոտ: Կարճ ներկայացրի տեղի ունեցածը՝ բնականաբար, տեղեկացնելով սահմանային հանդիպմանս մասին: Նա անմիջապես՝ զինվորականին հատուկ վերամբարձ տոնով արձագանքեց. «Ո՛չ մի բանակցություն, ես ձեզ հրամայում եմ վերցնել այդ իշխող բարձունք Գողթանասարը»: Ես շատ հանգիստ ու ժպտալով պատասխանեցի. «Եթե հենց հիմա դում գլխավորեմ այդ գրոհը, ես անձամբ վերցնում եմ ինքնաձիգս եւ առաջինն եմ գնում դեպի Գողթանասար, բայց նախ պարզենք, թե ինչ է մեզ տալու Գողթանասարի գրավումը, երբ Խոշլիդաղից երեւում են ավելի կարեւոր բնակավայրեր ու կոմունիկացիաներ: Խոշլիդաղից Գողթանասար ուղիղ գծով 6–7 կմ է, վերցնելուց հետո առանց ճանապարհ ունենալու ինչպես ենք սպասարկելու 3147 մետր բարձրություն ունեցող այդ գագաթը պահողներին՝ այն դեպքում, երբ նրանք ունեն այդ ճանապարհը: Ես կարծում եմ, որ դա անիմաստ որոշում է եւ մեզ միայն նորանոր զոհեր է «պարգեւելու»: Համոզված եմ, որ Խոշլիդաղի առումը մեծ ու վերջնական դաս է հակառակորդի համար, եւ շարժե խաբարել այդ ձեռքբերումը»: Խաչատուրովն արագ համաձայնեց, եւ մենք միասին բարձրացանք Խոշլիդաղ: Նույն երեկոյան երկար քննարկեցինք իրավիճակը եւ որոշեցինք բոլոր դիրքերում ամրապնդել պաշտպանությունը: Խաչատուրովը համակարգում էր, Արայիկ Թումանյանը, որ հետո դարձավ Լիճքի գումարտակի հրամանատար, կազմակերպում էր Զանգեզանի թեի՝ Դաւ Բարայի հատվածի ամրապնդումն ու պաշտպանությունը, ես հանձն առա Խոշլիդաղը, իսկ երկու կողմից արաբսամերձ հատվածներում կազմակերպում էր Ղեւոնդը: Շրջխորհրդի



գործկոմի նախագահ ենոք Անդրեասյանը օժանդակում էր տրանսպորտով, շինարարական նյութերով եւ այլն:

Խոշլիդաղի հենակետում, նախ, կտրուկ ավելացրի պաշտպանների թիվը: Բացի վաշտից ամրակցված հիմնական զինծառայողներից, այստեղ ներառեցինք Վանաձորից գործուղված Վարդանի ջոկատը, Մեղրիի ոստիկանության մի ստորաբաժանում, Կարճեւանից կամավորներ: Ռուսական սահմանապահ զորամասից ձեռք բերեցի մի քանի պատրաստի երկաթբետոնե մոնոլիտ պահակետ, տեղափոխեցինք բարձունք եւ տեղադրեցինք անհրաժեշտ դիտակետերում: Դրա մեջ պատսպարված զինվորը գրեթե անխոցելի էր: Ազարակի կոմբինատից խնդրեցինք մեկ բուլդոզեր եւ սկսեցինք ճանապարհ կառուցել Խոշլիդաղից Խարխատ, մոտ երեք կիլոմետր խորանալով հակառակորդի տարածք՝ հիմնեցինք հենակետ: Այս հենակետից, որին վաշտի տղաները «ռեյկա» անվանեցին, պարզորոշ տեսանելի էին հակառակորդի արաբսամերձ հենակետերի թիկունքն ու տեղաշարժը, եւ դա մեզ տալիս էր հսկայական առավելություն: Այնտեղ մենք ունեինք մշտական ներկայություն, որը սկզբնական շրջանում իրականացնում էին Կարճեւանի կամավորները: Ճանապարհը բավականին դժվար էր առաջ գնում, բուլդոզերն ուժեղ չէր՝ ապարները դիմադրում էին: Այդ հատվածներում փոքրիկ փոսորակներ էինք անում եւ ամոնիտի գործածությամբ պայթեցումներ անում: Պայթեցումները անձամբ էի իրականացնում: Շատ հաճախ՝ հատկապես պայթեցումներից հետո, Գողթանասարից սկսում էին մեր ուղղությամբ կրակել խոշոր տրամաչափի գնդացիրներով: Այդ հեռավորության վրա՝ բուլդոզերի հոնդյունի ներքո կրակոցի ձայները չէին լսվում: Շրջակայքը մշտապես ուշադիր դիտարկում էինք եւ, փամփուշտների գետնին դիպչելու հետեւանքով բարձրացած փոշին նկատելուն պես՝ պատսպարվում էինք բուլդոզերի կողքի ետնամասում: Կրակում էին, որովհետեւ չէին հանդուրժում, որ փաստացի ներխուժում ենք իրենց տարածք:

Ազարակի կոմբինատն ու Հանքաշինական վարչությունը հանձն առան կառուցել մեկական ստորգետնյա ապաստարան՝ հրետակոծության դեպքում պատսպարվելու համար: Մեկը կառուցեցին Խոշլիդաղում, մյուսը՝ ռեզերվայինը, մեկ կմ դեպի թիկունք «Սարհա» կոչվող տարածքում: Բուլդոզերով հողը կտրում էին մի երեք մետր խորությամբ, պատերի տակ իրար կպած տնկվում էին կաղնու կեղեւահանված այուներ, նրանց վրա

իրար կպած շարում էին կաղնու ամուր հեծաններ, ապահովում ջրամեկուսացումը եւ վերեւից ծածկում մոտ մեկ մետր բարձրությամբ հողե շերտով: Արդյունքում ունեցանք գուցեեւ մութ ու անշում, բայց հրետակոծությունից պատսպարվելու համար հուսալի երկու ստորգետնյա կացարան, յուրաքանչյուրը մոտ 40 մ² մակերեսով: Հետագայում դրանք զինվորները քանդեցին՝ փայտանյութը որպես վառելափայտ օգտագործելու նպատակով:

Խոշլիդաղ տեղափոխեցինք ԲելԱզի երկու մաշված անվադող եւ անհրաժեշտ քանակությամբ ամոնիտ: Անվադողերը տեղադրեցինք դեպի Քոթամի ձոր գլորելու հարմարությամբ, ներսի կողմից կապկով տեղադրեցինք ամոնիտը՝ իրար կպած պարկերով, պայթուցիչն ու հաշվարկած երկարությամբ բիկֆորդյան ֆուղը: Նպատակ էինք հետապնդում՝ ձորի կողմից հարձակման դեպքում, այրել բիկֆորդյան ֆուղը եւ անվադողը ճիշտ պահին գլորել հարձակվողների ուղղությամբ:

Խոշլիդաղը հետ վերցրինք 1992թ. օգոստոսի 17-ին: Հետագա օրերին Արամի աջ ափով Նախիջեւանը Բաքվին կապող իրանական հանապարհով դեպի Բաքու էին գնում շարժվելու ունակություն ունեցող բազմաթիվ ու բազմատեսակ տրանսպորտային միջոցներ՝ բարձված տնային իրերով, անկողինների կապերով եւ լցված մարդկանցով: Նախիջեւանում իսկական խուճապ էր:

Օրեր առաջ՝ օգոստոսի 8-ին, ադրբեջանական զինուժը գրավել էր Արծվաբերդը, իսկ երկու օր առաջ՝ օգոստոսի 15-ին, Վազգեն Սարգսյանը հանդես էր եկել Ղարաբաղը փրկելու նպատակով 500 մահապարտ հավաքագրելու հայտնի կոչով: (Այդ օրը կառավարական կապով կապվեցի Վազգենին եւ հայտնեցի Ղարաբաղ մեկնող մահապարտների ջոկատին Գորիսում միանալու պատրաստակամությանս մասին: Վազգենն անմիջապես առարկեց՝ Մեղրիի անառիկությունն ավելի կարեւոր է, եւ դու պետք է պաշտպանես Մեղրին):

Մարդկային կերպարները պատկերավոր դարձնելու նպատակով հիշատակման արժանի են հաջորդ օրերի հետեւյալ իրողությունները:

«Շանթ» ջոկատի նկատմամբ ձեւավորվել էին խիստ բացասական հասարակական տրամադրություններ, որոնք անընդունելի էին ինձ համար: Նրանց համարում էին երկու զոհերի մեղավորներ: Այս տրամադրությունները բորբոքում էր հատկապես Ղեւոնդը: Նա պահանջում էր հայրենիքի դավաճանության հոդվածով դատապարտել այդ տղաներին: Նրանցից երեքը թեթեւ վիրավորվել էին եւ մեկ օր մնացել հիվանդանոցում: Դուրս գրվելու պահին պարզվել էր, որ ավագ Ֆրոյ սենյակում ի պահ հանձնված ինքնաձիգներն անհետացել են: Բուժքույրը որեւէ առնչություն չունեւ: Կասկածելի պատասխանատուին հրավիրեցի ինձ մոտ եւ կարճ ժամանակ տվեցի՝ պարզաբանելով, որ կամավոր չներկայացնելու դեպքում բեռական հետապնդման կենթարկվի: Ներկայացրեց:

Հաշվեհարդարից խուսափելու նպատակով այդ տղաներին ստիպված պատսպարեցի ոստիկանությունում, մինչեւ վաշտի Ռոյը Խոշլիից կիջեցներ նրանց մեքենան: Մեքենան վնասվել էր եւ ժամանակ էր պետք վերականգնելու համար: Անգամ այդ տղաներից մեկի հայրն էր իմացել դրա մասին եւ եկել Մեղրի: Մեքենան պատրաստ լինելուն պես նրանց ճանապարհեցի:

Մարտի օրերին ոստիկանության հերթապահ Ներսիսյանը, որը մարտի մասնակից աշխատակիցներին ստորագրությամբ հանձնել եւ ստացել էր ինքնաձիգներն ու ատրճանակները, հերթափոխը հանձնելիս պարզել էր, որ Ֆենիչ Արմեն Սիմոնյանի ատրճանակն անհետացել է: Պարզվեց, որ պատռված է մատյանի այն էջը, ուր գրագրված էր ատրճանակը հերթապահին հանձնելու փաստը, ինչն, ի դեպ, հիշողությամբ հաստատում էր ատրճանակը ֆենիչից ստացած Ներսիսյանը: Հենց կռվի թեժ պահին հերթապահ մաս ելումուտ էր արել ընդամենը մեկ մարդ՝ արձակուրդում գտնվող երեք աշխատակիցներից մեկը:

Ջուգահեռ ներկայացնում եմ Խոշլիդաղը կորցնելու եւ ետ վերցնելու դեպքերի ականատես եւ մասնակից Նիկիտա Գրիգորյանի անձնական, թարմ շարադրված հուշերը.

## Խոշլիի առումը

«Ամառային սովորական օր էր, 1992թվ. 16.08: Հայ-ադրբեջանական ամբողջ սահմանագծում մեծ լարվածություն կար: Նույն վիճակն էր նաեւ Մեղրիի եւ Օրդուբադի շփման սահմանային գծում: Ագարակից ներքեւ, դեպի Արամս գետի ուղղությամբ գտնվող «22 հեկտար» կոչվող այգիների հարեւանությամբ գոմի հիմքի բետոնային աշխատանքներ էինք կատարում: Կեսօրին մոտ ամեն ինչ սովորական էր: Որոշ ժամանակ հետո

օդում անսովոր խշշոց-սուլոցներ լսվեցին: Վայրկյաններ շանցած, Արաֆսի աջ ափին՝ պարսկական կողմում պայթյուններ լսվեցին: Արկերից մեկը պայթեց երկաթգծի թունելի դիմացի կիրճերում: Առնազանիր կրկնապատկեց-եռապատկեց պայթյունի անավոր ձայնը: Իրանի տարածքում մեկը մյուսի ետևից պայթում էին շարագույժ արկերը: Մի քանի արկ պայթեց իրանական ուղեկալի հարեւանությամբ: Երկուսը պայթեցին պարսկական մաքսատնից դեպի հարավ-արեւմուտք լեռան ստորոտում գտնվող միակ ծառախմբի օազիս հիշեցնող տարածքի աջ ու ձախ կողմերին:

Լուրեր հասան մեզ՝ իբր Մեղրիում ռումբեր են ընկել բնակելի շենքերի վրա: Աշխատանքներն ավարտեցինք: Գնացինք Մեղրի՝ որեւէ տեղեկություն իմանալու: Թե Ագարակում, թե Մեղրիում ժողովրդի մեջ տագնապն աննկարագրելի էր: Մեղրիում զոհեր, վիրավորներ չկային: Ազերիների կողմից անկանոն արձակված ռումբերից առժել է ընդամենը մեկ զոմ, եւ մի ռումբ մխրճվել էր Մեղրիի հիվանդանոցի պատի մեջ ու չէր պայթել: Մոտակա լուսամուտների ապակիները փշրվել էին:

Ամենուր խուճապ էր, անիմաստ զրույցներ: Որոշեցինք հանդիպել Մաթեւոսյան Դավիթին, որեւէ բան իմանալ: Այդ տարիներին Մաթեւոսյան Դավիթն աշխատում էր Մեղրիի շրջանի ներքին գործերի բաժնի պետի պաշտոնում: Միաժամանակ նրան էր վստահված Մեղրիի շրջանի սահմանների ինքնապաշտպանության գործերը: Այդ օրը նրան կանչել էին խորհրդակցության: Դեռ չէր եկել: Որոշեցինք մտնել Մեղրիի Փոքր բաղի տարածքում գտնվող վաշտը եւ որեւէ ինֆորմացիա իմանալ: Գրիշան ու Նորիկը բարձրացան երկրորդ հարկ՝ Ղեւոնդի մոտ: Հեռախոսով Ղեւոնդը խոսում էր ինչ-որ մեկի հետ: Ներքեւում պարզ լսվում էր նրա խոսակցությունը: Ավելի ճիշտ՝ զոռզոռում էր ինչ-որ մեկի վրա: Ձայնի մեջ մեծ տագնապ կար: Խոսակցությունից հասկացա, որ ազերիները «Պալատկան» գրավել են: «Պալատկան» մեր պաշտպանական ջոկատների կենտրոնն էր: Այդտեղից վերահսկվում էր բավականին մեծ սահմանային տարածք: Դիրքը գտնվում է «Խոշրի» սարազագաթի արեւելյան կողին: Այդպիսի հարմարավետ եւ մեծ առավելություն ունեցող տեղանքի կորուստը հասկանալի էր առանց մեկնաբանությունների:

Սուտ ու անիմաստ լուրեր էին տարածում տագնապած ժողովրդի մեջ: Գնալով տագնապը մեծանում էր: Բոլորն անհամբեր սպասում էին Մաթեւոսյանին: Ասացին, որ դուրս է եկել:



Անտեղյակությունն ու անգործությունը կրծում էին ներսս: Պետք էր պատրաստվել սար բարձրանալու համար: Ցանկացած պահի ազերի հրոսակախմբերը կարող էին իջնել ցածրադիր գոտիներ: Այդ դեպքում մեր վիճակն ավելի էր բարդանում:

Վերադարձանք Ագարակ: Գրիշան գնաց Կարճեւան: Տանը հավաքեցի ուսապարկս, ինչ որ գտա: Հասա Կարճեւան: Գյուղի հրապարակում ասեղ գցելու տեղ չկար: Իրար գլխի հավաքված խոսում, քննարկում էին վիճակը: Ամեն նոր մարդ կամ մեքենա գալուց՝ մարդկանց հոսքն ալիքի նման թափվում էր այդ կողմ: Դրան հաջորդում էր արդեն քանիներորդ անգամ կրկնված հարցերի տարափը: Մարդիկ անհանգիստ էին, տագնապած: Մի քանիսը ռուսերդական զենքերով էին: Ամեն մեկն իր կարծիքն էր ասում սար գնալու վերաբերյալ: Ասացին, որ Գրիշան ու էլի տղաներ նիվայով արդեն սար են բարձրացել:

Մաթեւոսյանի ծառայողական ավտոմեքենայով շարժվեցինք իրենց տնից: Դեռ բավական լուսային օր ունեինք: Գյուղամիջում Մաթեւոսյանն իջավ ավտոմեքենայից: Մի անսովոր սառնասրտությամբ նա զրուցեց մարդկանց հետ, որից հետո կարծես մարդկանց դեմքերին որոշակի հանգստություն իջավ: Գյուղի տարեցներից Արզումանյան Վազգենը, որն անմիջապես կանգնած էր Մաթեւոսյանի մոտ՝ ասաց.

– Դավիթ ջան, հիմա ինչ անենք, քո հրահանգներին ենք սպասում: Ամբողջ գյուղով կազմ ու պատրաստ ենք:

Մաթեւոսյանը կարճ ու կոնկրետ հուսադրեց ու թույլ ժպտաց: Վազգեն պապը թույլ դողացող ձեռքը հարգալից դրեց Մաթեւոսյանի ձեռքին:

– Հանգիստ եղեք,– ասաց Մաթեւոսյանը:

Ավտոմեքենան այս ու այն կողմ թեքվելով բարձրանում էր սար տանող փոշոտ, փոսերով ու թմբերով լի ճանապարհով:

Ճանապարհին հանդիպեցինք եղբոր՝ Գրիշային: Նա արդեն հասցրել էր իր նիվայով գյուղի կամավորների մի խմբի հասցնել վերեւ՝ «Լեշկարի տնարի»: Այնտեղից բերում էր վիրավոր Արմենին՝ կարճեւանցի Վիլիկի քրոջ տղային: Նա հրազենի վնասվածք էր ստացել: Մտքերի կարճ փոխանակությունից հետո շարժվեցինք:

Լեշկարի տնարի տարածքն ամենահարմար տեղանքն էր ջոկատներ կազմելու եւ կազմակերպելու գործողությունների նախապատրաստական աշխատանքները:

Մաթեոսյանը հանձնարարություններ էր տալիս եւ միաժամանակ առանձին հարցուփորձ անում դիրքերից փախած-փրկված տղաներին:

Անընդհատ կամավորներ էին գալիս: Եկավ շտապ օգնության բրիգադը: Նրանք անմիջապես առաջին օգնությունն էին ցույց տալիս դիրքերից փրկված-փախած տղաներին եւ ուղարկում Մեղրի:

Դաշտային շտաբն աշխատում էր խիստ ծանրաբեռնված ռեժիմով: Մաթեոսյանն անընդհատ ռացիայով խոսում էր: Յուցումներ էր տալիս, ինչ-որ բաներ պահանջում: Անհրաժեշտ էին զենք, զինամթերք եւ էլի շատ բաներ՝ կապի հետ առնչվող:

Եկան Կարճեւանի կամավորները՝ մի քանի բեռնատարի թափքերին տեղավորված: Կազմակերպված ստացան ամեն ինչ եւ գնացին իրենց հանձնարարված ուղղություններով: Նրանց հարեւանությամբ պետք է դիրքավորվեր Լիճքի վաշտը՝ կապիտան Հայկի գլխավորությամբ:

Դեռ սարալանջից գալիս էին դիրքը լքած «Շանթի» տղաներ: Եւ այսպես, հերթապահություն իրականացնող ամբողջ խմբից զենքերով էին վաշտի տղաներ՝ Արմենը, Գեւորգը, մյուս Գեւորգը, ռուս սպան, Ղազարը եւ մի երեք հոգի «Շանթից»:

Յուրաքանչյուր ջոկատի հետ դիրք էին ուղարկում տեղանքին լավ ծանոթ մեկ կամ մի քանի կարճեւանցու:

Մաթեոսյանի մշակած տակտիկայով ջոկատները՝ լույսը դեռ չբացված, պետք է լինեին իրենց դիրքերում: Եթե գիշերային տեղաշարժերը հաջող են ստացվում, եւ հակառակորդը ոչինչ չի նկատում, ապա մեր ջոկատներն օդակի մեջ կառնեն բարձունքը եւ կազմ-պատրաստ կսպասեն լուսաբացի գործողություններին: Ջոկատներին թիկունքից կօգնի հաուբիցան:

Եւ այսպես՝ ջոկատները բաժանված են.

Միլիցիայի առաջին ջոկատը պետք է գործողություններ իրականացնի ձախ թեւից՝ Մարգարյան Հրաչ, Օհանջանյան Նավասարդ, Կարապետյան Աշոտ, Մինասյան Արմեն, Մարուքյան Հովհաննես (Կարճեւան)՝ ուղեկցող:

Մի խումբ կամավորներ տարբեր բնակավայրերից՝ Արմեն Թումանյանը, Դերոյաց Ռոմիկը, Կաղենաց Արթուրը, բոլորի անունները չեմ հիշում:

Այդ օրը հենակետում «Շանթի» տղաների հետ հերթապահում էին նաեւ Գեւորգը (Կուրիս, զոհվեց), Գեւորգը (պարտիզան), ռուս սպան.



նրանք դիրքավորվել էին ձախ թեւում, եւ նրանց պիտի միանար առաջին ջոկատը:

Միլիցիայի երկրորդ ջոկատը՝ Պետրոսյան Մկրտիչ (ԴԱԻ Միշիկ), Սիմոնյան Արմեն (Ֆենիչ), Մելո, Մարտիրոսյան Աշոտ, Գրիգոր Ավետիսյան, Ահարոնյան Էդիկ, Ահարոնյան Գրենիկ, Մատրյան Վոլոդյա, Թումանյան Ալիկ (հեռուստատեսության պետ):

Լիճքի վաշտի հետ՝ հրամանատար Հայկի գլխավորությամբ, պետք է զբաղեցնեին կենտրոնական ուղղությունը: Գլխավոր ուղղությունը կենտրոնն էր: Այդ պատճառով նրանց միացան վաշտի տղաներ, կամավորականներ Մեղրիի Փոքր թաղից՝ Ահարոնյան Խաչիկ, Ավետիսյան Սամվել, Մանուկյան Հովիկ, Փարսաղանյան Հովիկ, Եղիազարյան Գագո:

Պաշտպանության գիծը լրացնելու գնացին Կարճեւանի կամավորները: Համարձակությամբ եւ վճռականությամբ լցված այս տղաներն այնպես են տպավորվել իմ հիշողության մեջ, որ միշտ հիշելու առիթների ժամանակ առանձին հուզմունք եւ հպարտություն եմ ապրում: Անուններ չեմ տալիս: Նրանք բոլորն էլ ինձ համար հերոսներ են բարիս բուն իմաստով: Կարճեւանի կռվի հերոսներն ամբողջ նակատի տղաներն էին եւ նրանց հետ Կարճեւան գյուղից բոլոր նրանք, ովքեր զենքը ձեռքներին այդ օրհասական պահին սատար կանգնեցին հարազատ հողին:

Մի հոգի պետք է գիշերով աննկատ տեղավորվեր Սահրա կոչվող տեղանքի արեւելյան մասի գագաթի հյուսիս-արեւելյան լանջին: Տեղանքը ճանաչող եւ տեղանուններն իմացող մարդ էր պետք: Մաթեոսյանի հետ քննարկելուց հետո այդ ուղղությամբ գնաց կարճեւանցի Գրիգորյան Գրիշան:

Բոլորը մանրամասն տեղեկացված եւ զգուշացված էին՝ անել այն հնարավորն ու անհնարը, որ հակառակորդը չնկատի ոչ մի շարժ: Լույսը բացվելուն պես ջոկատներն իրենց դիրքերում կազմ ու պատրաստ պետք է սպասեին հրահանգի...

Դիրքային տեսակետից հակառակորդի վիճակը նախանձելի էր: Մենք մի առավելություն ունենք, մենք մեր հողի համար ենք այստեղ: Մենք չհաղթելու իրավունք չունեինք: Նեռքեւում մեր գյուղերն են, մեր ընտանիքները:

Գիշերը կիսվում էր: Ջոկատներն առաջ էին գնում շատ դանդաղ: Մթության մեջ այդպիսի դժվարին տեղանքում մեծաթիվ դժվարություններ էին հանդիպում:

Ամբողջ գիշեր Մաթեոսյանը կապի մեջ էր ջոկատների հրամանատարների հետ: Մի պահ նա կապի մեջ էր Գեորգի հետ: Գեորգի խոսքերից հասկացանք, որ ազերիները կրակելով, հայհոյելով իջնում էին ներքեի գոտի: Շատ մոտ էին, եւ առաջարկում էր կրակ բացել նրանց վրա: Երկրորդ կապի ժամանակ իմացանք, որ ազերիները ետ են գնում իրենց գրաված դիրք:

Լարված գիշեր էր: Հակառակորդն ամբողջ գիշերը լուսածիր փամփուշտներով անկանոն կրակում էր:

Հեռվում հորիզոնի եզրագիծը կամաց-կամաց ընդգծվում էր: Լուսանում էր:

Ըստ վերջին ռադիոկապի, ջոկատներն իրենց ամրագրված տարածքներում սպասում էին հրահանգների: Առայժմ ամեն ինչ ընթանում էր ըստ Մաթեոսյանի պլանի: Նա վերջին հրահանգները տվեց բուժանձնակազմին օգնող կամավորներին: Ներքեի գոտիներ իջնող ավտոմեքենայով ետ ուղարկեց մի քանի անվստահելի մարդկանց:

Ժամը 5-ին հաուբիցան տեղում էր: Սկսեցինք նախապատրաստել եւ աշխատանքային վիճակի բերել: Աշխատանքները դեռ չավարտած՝ հրահանգ եղավ դադարեցնել:

Թաքստոցից կրակելու համար անհրաժեշտ սարքը՝ բուսոլը, չաշխատեց: Մաթեոսյանը որոշեց հաուբիցան տեղադրել բաց տարածքում: Ժամը 6-ին գրոհը պետք է սկսվեր, մինչդեռ հրանոթը դեռ իր տեղում չէր: Արագ կցեցինք ԴԱԶ-66-ի հետեւից: Տեղափոխման ժամանակ ճանապարհի մեծ թեքության պատճառով ինչ մնաց ավտոմեքենան ու հրանոթը ձորը գլորվեն: Այստեղ աչքի ընկավ վարորդ Ռոյը: Մի պահ իրար նայեցինք եւ անմիջապես անցանք հրանոթի տեղադրման աշխատանքներին:

Այդտեղ էր, որ տեսանք մի անմոռանալի տեսարան:

Դարավոր եղեւնու (մարխի) տակ կանգնել էին Կարնեւանի տարեց որսորդները: Նրանք իրենց որսորդական հրացաններով եւ փամփշտակալներով կարծես թե նոր, ավելի ուժեղ, համարձակ տրամադրություն էին ներարկում մեզ: Հիշում եմ՝ որսորդներ Մաթեոսյան Ղեւոնդ, Գեւորգյան Հայկ, Գրիգորյան Լեւոն Ռ. եւ Գարեգին Մուրադյան: Մաթեոսյանը նրանց հորդորեց, որ իջնեն գյուղ եւ այնտեղ սպասեն մեզ:

Ռացիայի մարտկոցը փոխեցինք, եւ Մաթեոսյանը մոտեցավ հաուբիցային: Սամվելն արդեն մարտական վիճակի էր բերել, ու մնում էր մի քանի պարտադիր մանրամասնություն:

Մինչ հրանոթը լրիվ մարտական վիճակի կբերեինք, դիրքերից լսեցինք մեկը մյուսին հաջորդող կրակոցներ: Մարտը սկսվեց: Ձորերն արձագանքեցին: Կրակոցներն ուժեղացան: Պարզվեց, որ Լիճի վաշտի զինվորներից մեկն անզգուշությամբ կրակել էր:

Մաթեոսյանի ծառայողական ավտոմեքենան կանգնած էր հրանոթի մոտ: Ավտոմեքենայի վրա դրված էին քարտեզներ: Դրանք գեոդեզիական քարտեզներ էին: Նրանց վրա բազմաթիվ գրանցումներ կային տեղանքի բարձրությունների մասին: Մաթեոսյանն ավարտեց առաջին հաշվարկները եւ մոտեցավ հրանոթին: Հետո Սամվելին կրակելու նշան արեց: Հաուբիցան ոռնաց ու ցնցվեց՝ փոշու ամպ բարձրացնելով: Ծխի հետ միասին նրա փողից դուրս թափվեցին չոր ու փշրված տերեւներ հիշեցնող անհասկանալի բաներ: Մաթեոսյանը նայեց ժամացույցին: Այդ պահին թվում էր, թե արկը մի ամբողջ հավերժություն գնում է ու տեղ չի հասնում: Լսվեց պայթյուն եւ արձագանք: Ռացիայի աշխատանքն սկսվեց: Դիրքերից պահանջեցին 150–200 մետրի նշանում: Հրանոթը նորից ոռնաց...

Հիշում եմ՝ երրորդ արկի պայթյունից հետո ռացիայի մյուս կողմից կատարված արտահայտությունը: Ղեւոնդն անչափ էր ոգեւորվել արկի դիպուկ կրակոցից եւ պահանջեց «քսան մետր ձախ» (սա այն դեպքն է, երբ պետք էր ոչնչացնել Գողթանասարից Մեղրին հրթիռակոծող Գրադը, եւ Ղեւոնդը պահանջեց ճշգրտում չորս մետրով, իսկ ես ժպտացի, որովհետեւ համոզված էի, որ 5 կմ-ի վրա, այն էլ պայթյունի փոշու մեջ հնարավոր չէ նշմարել չորս մետրը, ուստի ես չորսի փոխարեն ուղղորդեցի 20 մետրով): Մաթեոսյանի դեմքին վերջապես թույլ ժպիտ երեւաց: Նա գոհունակությամբ նայեց Սամվելին, նայեց մեզ:

Մարտը գնալով թեժանում էր: Նորանոր նշանակետեր էին ռմբակոծվում: Ճակատային գծի օդակը գնալով ճնշում էր հակառակորդին: Մի կողմից հրանոթի դիպուկ կրակոցները, մյուս կողմից ԱՐՀ-ի արդյունավետ կրակահերթերը խուճապ էին առաջացրել ազերիների մեջ: Նրանք թակարդն ընկած գազանի նման կրակի տակ վերցրին մեր հրանոթը:

Մեկը մյուսի ետեւից հակառակորդի արկերը սուրալով անցնում էին մեր գլխավերեւով: Պարզ երեւում էր օդում սուրացող գրաղի արկերի երկրորդ աստիճանի պայթող սեւ ծուխը: Շատ տհաճ պահեր սկսվեցին: Արկերն սկսեցին պայթել մեր շրջապատում: Տարածքն սկսեց վառվել: Անտանելի ծուխը լցվել էր ամենուր: Մեզ փրկում էր այն հանգամանքը, որ տեղանքի բնությունը, հսկա քարերն իրենց վրա էին վերցնում պայթող արկերի բեկորները: Տագնապը գնալով մեծանում էր: Դիմացի սարալանջի ամեն մի ստվեր կասկածելի մարդու էր նման: Անգամ Մաթեւոսյանը երկու հոգու վոնդեց այդտեղից: Խուճապը մեղմացավ:

Հակառակորդի հրետանին ուժեղացրեց կրակը: Մաթեւոսյանը խոսում էր դիրքերի հետ: Տեղեկանում իրավիճակին: Հերթական հաշվարկն էր անում, եւ հրանոթը ասում էր իր խոսքը: Մի պահ նա հրահանգեց, որ լիցքավորելուց անմիջապես հետո սպասարկող անձնակազմը թաքնվի քարերի եւ նանապարհի կողային եզերքում: Ամոթի զգացումը հաղթեց վախի զգացողությանը: Տղաները հայացքներով քաջալերեցին մեկը մյուսին, եւ յուրաքանչյուրն անցավ իր պարտականություններին:

Սարալանջին մեր շոկատները բավականին մոտեցել էին հակառակորդի դիրքերին, թեժ մարտ էր գնում: Ծուխն ամպի նման լցվել էր ձորերը: Հասել էր անտառածածկ լանջերին: Դիրքերից անընդհատ զինամթերք էին պահանջում: Մատակարարվող զինամթերքը հաուբիցայի մոտ ձեռքով տեղափոխում էինք մյուս կողմը եւ բարձում դիրքերից եկած ավտոմեքենաները:

Լեռնագագաթին երեւում էր ԱՀՀ-ի նոնակների պայթյունների ծուխը: Աջ թեւի տղաներն են կրակում: Աջ թեւին օգնում էին Կուրիսի կողմից մի քանի դիպուկահարներ՝ Հովիկը, Մայիսը եւ Արայիկը:

«Բաշ Յուրդից» սկսեց աշխատել մեր երկրորդ հրանոթը: Ջոկատի պետն էր Ազատյան Վոլոդյան: Ջոկատի անձնակազմը՝ վարհավարցի Իշխան, Կարապետյան Վրեժ (Կարճեւանից), Հովակիմյան Մարտիկ (Բոկա), Էդիկ (Ճլե), Գառնիկ եւ Պաշա (Փոքր Թաղից): Երկու հրանոթների նշանառության տակ էր վերցված ազերիների թիկունքից գնացող համալրումը: Ասեմ, որ հակառակորդը չկարողացավ գոնե մեկ անգամ անցնել հաուբիցաների կրակագիծը: Հիմնականում հակառակորդի կոորդինատները Ղեւոնդին հաղորդում էր Գրիգորյան Գրիշան: Նա էլ իր հերթին հաղորդում էր Մաթեւոսյանին:



Եւս մի քանի մարտական ժամեր:

Բերեցին առաջին վիրավորներին: Որոշ ժամանակ հետո լսեցինք Հրաչի զոհվելու լուրը: Հրաչի դին շտապ օգնության մեքենայով տարան Մեղրի:

Ահավոր սոլոցով մի ռումբ ընկավ երկրորդ շտապ օգնության ավտոմեքենայից ոչ հեռու: Բարեբախտաբար՝ չպայթեց, բայց ավտոմեքենայի ապակիները փշրվեցին, իսկ ծառերը տերեւաթափ եղան:

Մինչեւ մենք ոտքի կկանգնեինք, արկերով բեռնատարը չկար: Վարորդի նյարդերը տեղի էին տվել, եւ քշել գնացել էր հեռու: Թվում էր, մենք արդեն մի ամբողջ հավերժություն պատերազմի մեջ ենք, որը ոչ վերջ է ունենալու, ոչ վերջաբան: Բոլորս արդեն հարմարվել էինք պայթյուններին ու կրակոցներին եւ վառվող ու ծխացող տարածքների ազդեցիկ տեսարաններին:

Հրանոթը պատրաստ էր կրակելու, Մաթեւոսյանը ռադիոկապով խոսում էր: Միլիցիայի հերթապահը զեկուցեց, որ վարչապետը կապի մեջ է եւ հարցնում է, թե ինչով կարող է օգնել: Մաթեւոսյանն ասաց, որ իրենց օգնությունը չխանգարելն է:

Նորից մեկը մյուսի ետեւից հերթական արկերը սուրում էին եւ պայթում հակառակորդի դիրքերում, որտեղից համառորեն ուզում էին օգնության գալ: Նորից ռադիոկապ վերեւի դիրքերի հետ: Այս անգամ ոչ թե կոորդինատներ ասացին, այլեւ.

– Ազերիները փախչո՞ւմ են...

Կարծես ոչ մեկս չէր հավատում իր լսածին:

– Թուրքերը փախչո՞ւմ են:

Երազ էր, թե իրականություն: Հաջորդ պահին մի հաճելի զգացում կարծես փաթաթվեց հոգուս: Բոլորիս ուրախությանը չափ չկար:

– Հաղթեցի՞նք:

Ու՝ գնաց ցնծությունը:

Եւս մի քանի արկ սուրաց՝ ճեղքելով օդը, ազդարարելով հաղթական ավարտը: Դրվեց հաղթական վերջակետը Կարճեւանի կռվի: Այս հաղթանակը մեր ժողովրդի հաղթանակն է: Հմուտ եւ իր ժողովրդին նվիրված մարդկանց հաղթանակն է:

Ակամա հիշեցի Կարճեւանի հրապարակում հավաքված գյուղացիների հայացքները: Խուճապ եւ անորոշ վինակ, հարցական հայացքներ, անօգնական եւ ամեն գործողության պատրաստ, միայն թե...

Մարտի երբ վճռված է: Զոհվեցին Գեւորգը՝ Կուրիսից եւ Հրաչը՝ կարճեւանցի Մայիսի տղան:

Լեռնագագաթին՝ «Պալատկայի տարածքում» ջոկատների տղաները վայելում էին հաղթանակը: Շնորհավորում էին միմյանց, գրկախառնվում, գոռում-գոչում: Զորերը զնգում էին նրանց ուրախ ձայներից: Մեկը մյուսին ցույց էին տալիս ազերիների պատառոտված սեւ բանկոնները, ծածկոցները: Բանկոնների թեւերին թուրական դրոշներ կային: Ծածկոցներն արյունոտ էին ու ծվատված: Վրանի հարեւանությամբ թափթփված էին նռնակներ, ինքնաձիգներ, փակաղակներ, փամփուշտների արկղեր, ուսապարկեր, քնապարկեր, տարբեր հագուստներ: Վրանի ներսում անկանոն լցված էին ծածկոցների արյունոտ կույտեր: Տպավորությունն այնպիսին էր՝ կարծես այդտեղ էին հավաքել վիրավորներին: Անտանելի հոտ էր գալիս արյամբ շաղախված շորերից: Ազերիների դիրքավորված տեղերում թափթփված էին միանգամյա օգտագործման բազմաթիվ ներարկիչներ: ԱԳՍ-ի բեկորներն այնքան էին ծվատել վրանը, որ ներսից երկինքը երեւում էր: Վրանից հարավ-արեւմուտք լեռնալանջի թեքությունների վրա պարզ երեւում էին հակառակորդի փախուստի հետքերը: Նրանց ոտքերի տակ լանջերի խոտածածկույթն ամբողջությամբ վերածվել էր սորացած հողի (հավանաբար դրանք առաջացել էին դիակները խունապահար քարշ տալով տանելու հետեւանքով): Նրանք փախել էին՝ հագիվ իրենց հետ տանելով վիրավորներին եւ զոհերին: Հետագայում պարզվեց, որ նրանք տվել են շուրջ 30 զոհ:

Ջոկատայինները կամաց-կամաց խաղաղվեցին: Նրանց հոգնած դեմքերին խաղաղություն էր իջել: Նրանք զրուցում էին, ինչ-որ ոգեւորված բաներ պատմում իրար: Իսկ պատմելու բան ինչքան ուզեք:

Հերթապահություն իրականացնելու համար Մաթեւոսյանը հանձնարարություններ տվեց, եւ մենք էլ ճանապարհվեցինք: Լիշկարի տնարում ավտոմեքենաները սպասում էին կամավորներին: Տղաներն ուրախ, ձեռքերի շարժումներով ողջունում էին Մաթեւոսյանին: Ավտոմեքենան օրորվելով մեկ աջ, մեկ ձախ՝ իջնում էր թեք լանջով:

Մարտի ընթացքում հաճախ թվում էր, թե ինչ-որ անծանոթ ֆիլմ եմ նայում: Դա այդպես չէր, հասկանում էի պահի լրջության աստիճանը: Բայց սա էլ նման էր ֆիլմի նկարահանումների: Ուղղակի այստեղ ամեն ինչ կատարվում էր մեկ դուբլով: Կրկնության հնարավորություն չկար:



Չկար նաեւ սխալվելու իրավունք: Մեր նկարահանող ռեժիսորը ճիշտ, հստակ գործողություններով պատվով կատարեց բոլոր աշխատանքները, եւ մենք հաղթեցինք:

Մաթեւոսյանը զինվորական կրթություն չուներ: Միայն շարժման տարիներին ձեռք բերեց այդ հմտությունները:

Տանն Անահիտն ու երեխաները սպասում էին անհամբեր: Արդեն ուշ էր, սակայն երեխաները չէին քնել: Գրկախառնվեցինք: Ուրախ էինք: Նրանց աչքերում անհանգստություն ու կարոտ կար: Խոսելու շատ բան կար: Միգուցե դա էր պատճառը, որ չգիտեի ինչից սկսել: Լռությունն անկոչ հյուրի պես կարծես մտել էր տուն: Նորից գրկեցի երեխաներին, համբուրեցի...

Մեկը մյուսին ընդհատելով՝ նրանք սկսեցին պատմել իրենց տեսածի, լսածների մասին: Ովքեր որտեղ քանվեցին իրենց զենքերով: Ոմանք ինչ-որ տեղ էին շտապում իրենց ավտոմեքենայով եւ ուրիշ շատ-շատ պատմություններ: Ամեն անգամ վազել են հիվանդանոց, որ իմանան, թե շտապ օգնության ավտոմեքենան ինչ վիրավորներ է բերել ճակատից: Եւ մայրիկին թարմ տեղեկություններ են բերել: Պատմում էին ռումբերի պայթյուններից ստացած տպավորությունների մասին: Խոհանոցի սեղանին օդիով լիքը շիշ կար: Ժպտացի ինքս ինձ: Նախորդ օրը լցրել էի սար տանելու համար: Շտապելուց մոռացել, թողել էի սեղանին: Ինչու Անահիտը սեղանից շիշը չէր վերցրել, այդպես էլ չպատասխանեց: Դե ինչ, այսքանից հետո մի բաժակ օդին չէր խանգարի:

Երկար զրուցեցինք Անահիտի հետ: Ուշ էր: Երեխաները քնել էին իմ անկողնում: Գլխիս մեջ անավոր խառնաշփոթ էր: Որոտ, ծուխ, սուրացող արկերի նվաստացնող խշշոց, անընդհատ ռացիայի ճչացող ձայները...

Դաժան էր, բայց դիմացանք,

Կրակ էր, բայց շայրվեցինք,

Դժվար էր, բայց հաղթեցինք:

Հաղթահարեցինք կյանքի հերթական փորձությունը: Հազար ափսոս, որ զոհվեցին մեր երկու լավագույն տղաները: Նրանց մասին դեռ կխոսենք...»:

Խոշորի դեպքերի առնչությամբ իր թարմ, բայց՝ ցավոտ, անավարտ հուշերն է շարադրել կարճեւանցի **Գրիշա Գրիգորյանը**՝ այդ դեպքերի ականատես եւ մասնակից, որը մեջբերում եմ ստորեւ.

«16 օգոստոսի 92թ.

Ես հրավիրված էի Լիճի զինվորական գումարտակի հրամանատարի մատաղին: Ժամը 12-ին իմ մեքենայով հասա գումարտակ: Հայկը զինվորների հերթական խմբի հետ շարային պարապմունքներ էր անցկացնում: Ինձ տեսնելուն պես մոտեցավ, բարեւեց եւ, ցույց տալով նանապարհով Տաշտունի ուղղությամբ՝ ասաց, որ տղաներն այնտեղ են, ես գնամ, իսկ ինքը կգա հիշ հետո:

Գնացի: Այնտեղ էին Լյուդվիգ Համբարձումյանը՝ Ազարակի պ/մ կոմբինատի տնօրեն, Սահակ Համբարձումյանը՝ Մեղրիի քաղաքապետ եւ լիճեցի մի քանի տղա:

Ժամը երկուսից հետո լսվեցին կրակոցների ձայներ, որոնք սակայն սովորական թվացին: Ժամը 6-ին շարժվեցի Մեղրի, Տաշտունի խաչմերուկից վերցնելով մեքենայի սպասող մի երիտասարդի: Լեհվազ գյուղի մոտակայքում պայթյունների ձայներն ավելի ուժգնացան, եւ հասկացա, որ հրետակոծում են Մեղրի քաղաքը: Պանրի գործարանի աջ սարալանջը ծխի ու բոցերի մեջ էր: Մի հիշ ներքեւ իջնելուց հետո ամեն ինչ պարզ դարձավ՝ հրետակոծվում էր հիվանդանոցի ու ինքնարկանիների թաղամասի շրջակայքը: Հրետակոծությունը գնալով սաստկանում էր ու տարածվում:

Ես անմիջապես գնացի վաշտ ու բարձրացա հրամանատար Ղեւոնդ Հովհաննիսյանի մոտ: Նա մենակ նստած էր իր տեղը՝ գլուխն ափերի մեջ առած, մտածում էր: Ինձ նկատելուն պես ներս հրավիրեց եւ առաջարկեց նստել: Ես հարցրի, թե մեր դիրքերն ինչ վիճակում են, եւ ինչից է սկսվել այս ամենը: Նա հայհոյեց ինչ-որ խմբի, ապա նայելով հիվանդանոցի կողմը՝ ասաց. «Սրիկաները տեղը գտել են, արկերն արդեն հասնում են քաղաքի ծայրամասի բնակարանների մատույցներին»: Իսկ այդ պահին արկերը պայթում էին հիվանդանոցի եւ Խալվար Դարա թաղամասի միջակայքում:

Ղեւոնդին առաջարկեցի տարհանել հիվանդանոցն ու հիշյալ թաղամասի բնակիչներին: Կարծես թե նա հենց դրան էր սպասում, առանց բառ ասելու վերցրեց հեռախոսը եւ ասաց. «Օհանյանին ասեմ, թող շտապ տարհանեն հիվանդանոցն ու դրան հարող թաղամասի բնակչությանը»:

Մի քանի րոպեից ներս մտավ Աֆօն: Նա նույնպես անհանգիստ էր եւ առաջարկեց շտապ կապվել պաշտպանության նախարարի հետ, բայց



չստացվեց: Ղեւոնդն ասաց, որ տղաներին արկեր ու զինամթերք է ուղարկել, բայց առայժմ լրացուցիչ ուժեր չեն ուզել:

Աֆօյի հետ իմ մեքենայով դուրս եկանք շրջագայելու եւ ուսումնասիրելու վիճակը: Հասանք մինչեւ Վարհավար, ուր ասացին, որ գյուղի շրջակայքում բավական շատ արկեր են պայթել: Վերադարձի ճանապարհին մտանք հիվանդանոց, տեսանք պահակն ու մի քանի տղաներ տագնապահար կանգնած: Նրանք մեզ ցույց տվեցին վիրահատարանի խոցված պատը եւ ասացին, որ դիպել է, երբ դեռ չէին հասցրել բոլորին տարհանել նկուղ: Աֆօյի հետ եկանք գործադիր կոմիտե, որի առջեւ տագնապահար բազմություն էր հավաքվել: Խոսեցինք հետները, փորձեցինք սրտապնդել: Գործկոմում անելիք չկար, երկար չմնացինք:

Վերադարձանք վաշտ, ժամը 8.30 էր, բավականին բազմություն էր հավաքվել: Բարձրացանք Ղեւոնդի մոտ, նա կապի միջոցներով բարձրաձայն խոսում ու հայհոյում էր՝ չգիտես ում: Այլայլված տեսք ուներ: Լուրը ցնցեց բոլորիս, թուրքերը գրավել էին Խոշլիի դիրքերը, մերոնք ցիրուցան են եղել Կարճեւանի սարում, շատերի հետ կապ չկա: Բոլորիս մի պահ թվաց, թե դա սխալմունք է, գուցե սխալ ենք հասկացել, բայց դա էր իրականությունը:

Ես զգացի Դավիթի կարիքը: Բայց ասացին, որ նա Գորիսից դուրս է եկել, ճանապարհին է:

Ղեւոնդն անընդհատ փորձում էր ռացիայով կապվել դիրքի տղաների հետ, բայց լսվում էին կցկտուր խոսակցություններ: Մեզ ամեն ինչ պարզ դարձավ՝ խուճապահար փախած մարդիկ չեն կարողանում նիշտ տեղեկություն տալ: Իսկ երբ իմացանք, որ նախորդ օրը պոստի է գնացել 20 հոգանոց անփորձ «Շանթ» ջոկատը, ամեն ինչ պարզ դարձավ:

Սարը Բոտինքը պատեց մարմինս: Ես քաջ գիտակցում էի, թե ինչ հետեւանքներ կարող է ունենալ այդ դիրքի կորուստը, եւ ինչ կպահանջվի ետ վերցնելու համար:

Երկար մտածելու ժամանակ չկար, անհրաժեշտ էր շտապ օգնության հասնել տղաներին, ամրապնդել նոր դիրքերը, թույլ չտալ հակառակորդին իջնել ավելի ցած:

Ես, Աֆօն, Լենդրոշը, Բորյան (տաշտունեցի) եւ Աֆօյի աշխատակիցն իմ նիվայով շարժվեցինք Ազարակ: Նրանց իջեցրի հյուրանոցի մոտ, որ փոխվեն ու պատրաստվեն, ես գնացի եղբորս տուն՝ նրան ու Նորիկին

տեղյակ պահելու այդ ծրագրի մասին եւ զանգելու գյուղ՝ Էդոյին, Հովիկին ու մյուսներին եւս տեղեկացնելու: Բոլոր զանգերին պատասխանող չկար, կարծես պայմանավորված լինեին: Մինչ ես զանգում էի, եղբայրս պատրաստվել էր ինձ հետ մեկնելու: Ասացի, որ մեքենայում տեղ չկա եւ առաջարկեցի, որ նա շարունակի զանգերով մոբիլիզացնել գյուղի տղաներին:

Ես վերադարձա հյուրանոց, հերթապահն ասաց, որ տղաները գնացել են ճաշարան, որտեղ այդ օրը վաշտի հրամանատարի տեղակալ Սերոժի ամուսնական միջոցառումն էր: Գնացի այնտեղ եւ մեկի միջոցով խնդրեցի փոխանցել Աֆոյին, որ իրեն սպասում եմ: Ինձ ներս հրավիրեցին: Սեղանները գրեթե դատարկ էին: Հարսին ու փեսային շրջապատել էին իմ մեքենայի անձնակազմը, քավոր Բորիկը, հարսի մայրն ու ամենամոտ հարազատները:

Աֆոն, որ հավանաբար նման իրավիճակների մեծ փորձ ուներ, ներկաներին հաջողեցնելու նպատակով պահանջեց, որ շարունակեն հարսանիքը: Իսկ մենք գնացինք Կարենեան: Ես պետք է պատրաստվեի, եւ հետներս վերցնեինք որսորդ Հովիկին: Գյուղի հրապարակը մարդաշատ էր: Աֆոն ցանկություն հայտնեց մինչեւ իմ պատրաստվելը շփվել ժողովրդի հետ, եւ Լենդրոշի հետ իջան հրապարակում:

Պատրաստվեցի, վերադարձա հրապարակ, Աֆոն ու Լենդրոշն այնտեղ չէին: Իմացա, որ վիճաբանություն է եղել երիտասարդների հետ, Զոռնի Էդոն վրա է հասել, հանդարտեցրել եւ տարել իրենց տուն:

Հովիկին հետ կանչեցինք, եւ վեց հոգով բարձրացանք սար: Էդոյին ու Մուկուճին հանձնարարեցինք հավաքել կամավորներին եւ պատրաստ սպասել: Սարի ճանապարհին հանդիպեցինք շտապ օգնության մեքենային, որը եկել էր վիրավորների ետեւից եւ վախենալով նկատվել՝ անջատել էր լույսերն ու կանգնել հարմար դիրքում:

Խոշլիից անընդհատ կրակոցներ էին արձակվում, հաճախ կարելի էր տեսնել լուսածիր փամփուշտների հետագծերը: Վերլուծում էինք, թե ինչպես անենկատ բարձրանանք վիրավորների ետեւից, երբ մթության միջից վազեվազ մեզ մոտեցավ Կարենեանի հերթով պահվող նախարի տվյալ օրվա հովիվը՝ Հարութը, եւ ասաց, որ ճանապարհին է թողել վիրավոր Արմենին, եւ հարկավոր է օգնություն: Շտապ օգնության մեքենան մի քանի հոգու հետ բարձրացավ վիրավորին բերելու:



Լուսնյակ պարզ գիշեր էր, ես քայլեցի դեպի դիմացի բարձունք, որտեղից երեւաց կորցրած խոշլին: Կրակոցներ լսվում էին միայն գագաթից. ենթադրեցի, որ թշնամին առայժմ բավարարվել է բարձունքով՝ ներքեւ չի իջել:

Վերադարձավ շտապ օգնության մեքենան, մենք ընդառաջ վազեցինք: Վիրավոր Արմենն ասաց, որ էլի վիրավորներ կան, որոնք օգնության կարիք ունեն: Նախնական օգնություն ստացած Արմենին տեղավորեցինք իմ մեքենայի մեջ, իսկ շտապ օգնության մեքենան տղաների հետ վերադարձավ վիրավորների ետեւից: Վաշտի վարորդ Հոկտիկի հետ Արմենին տեղափոխեցինք հիվանդանոց:

Ճանապարհին հանդիպեցի Դավիթ Մաթեւոսյանին: Շատ կարճ նրան փոխանցեցի այն ամենը, ինչ հայտնի էր ինձ ու շտապեցի հիվանդանոց: Արմենին տարանք Ագարակի հիվանդանոց, հանձնեցինք բժիշկներին: Այստեղ հավաքված տղաներին ասացի, որ հարկավոր է օգնության հասնել բարձունքի տղաներին, անհրաժեշտ է գտնել զինկոմին եւ նրա միջոցով կազմակերպել Ագարակի օգնությունը:

Գնացի վաշտ՝ գյուղի տղաների համար զենք-զինամթերք ստանալու:

Վաշտի առաջ բազմություն էր հավաքված: Բարձրացա Ղեւոնդի մոտ, պատմեցի իմացածս եւ բարձրացրի Կարենեանի կամավորներին զինելու հարցը: Նա անմիջապես կարգադրեց ինձ հատկացնել 25 ավտոմատ ու փամփուշտներ: Պահունակների պակաս կար, Ղեւոնդը կապվեց ռուսական սահմանապահ զորամաս եւ խնդրեց օգնել պահունակներով: Անմիջապես բերեցին: Ստորագրությամբ ստացա այս ամենը ու գնացի գյուղ: Գյուղի կենտրոնում մեծ բազմություն էր հավաքվել՝ երիտասարդներ, մծաճասակներ, երեխաներ, կանայք ու աղջիկներ: Մեքենայից իջնելուն պես ինձ շրջապատեցին: Անհանգստություն ու տագնապ կար նրանց դեմքերին:

Ասացի, որ զենք եմ բերել, հարկավոր է հավաքվել մշակույթի տանը, կամավորագրվել, զենք ստանալ եւ սար բարձրանալ: Կամավորներն ավելի շատ էին, քան բերածս զենքերը: Զենք չստացածները նեղացան, որոշեցին առավոտ շուտ գնալ վաշտ եւ զենք ստանալ:

Մենք 25–30 հոգով, Դագիկի ԴԱԶ-53 մակնիշի մեքենայով բարձրացանք սար: Ճանապարհին հանդիպեցինք դիրքերը հանձնած տղաներին: Մեր տղաներն ուզում էին մի լավ դաս տալ նրանց, հազիվ զսպեցի»...

## Զորամասի կայացումը

Այլևս ակնհայտ էր, որ, Շուշին ու Լաչինը կորցնելուց հետո, Ադրբեջանի նոր իշխանությունները որոշել են կորցրած տարածքները ետ բերել Ղարաբաղի հետ միասին: Կասկածից վեր էր, որ այդ ծրագրի իրականացմանը զուգահեռ՝ Էլչիբեյը ձգտելու էր Նախիջևանն Ադրբեջանին կապակցող միջանցք բացել, որն ամենաբիչը պետք է ներառեր Մեղրիի արամասերն հովիտը, որովհետև այնտեղով էր անցնում գլխավոր ճանապարհը՝ երկաթուղին:

Խոշլին ետ առնելուց եւ դիրքերն ամրապնդելուց անմիջապես հետո՝ Ղևոնդի հետ քննարկեցինք հեռանկարը: Մի բան ակնհայտ էր, որ միայն 50 հոգանոց վաշտի ուժերով հնարավոր չէր ապահովել Մեղրիի լիարժեք պաշտպանությունը: Իսկ ոստիկանության, աշխարհազորի եւ դրսից եկած ջոկատների ներկայությունը սահմանում մշտապես հնարավոր չէր ապահովել: Միակ ճանապարհը՝ վաշտը գնդի վերածելն էր: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ձեռք բերել գնդի պահանջները բավարարող շինություններով տարածք:

Ղեւոնդն անմիջապես հուշեց ուսումնարանի տարբերակը, հիմնավորելով այնտեղ փաստացի սովորող ուսանողների շատ փոքր թվաքանակը: Շենքային պայմանների համեմատ, ծանրաբեռնվածությունը չէր գերազանցում 10%-ը: Անմիջապես գնացինք շրջխորհրդի գործկոմի նախագահ Ենոք Անդրեասյանի մոտ եւ ներկայացրինք խնդիրը: Վերջինս արագ ընկալեց եւ ձեռնամուխ եղավ նամակագրությամբ՝ կառավարության միջոցով ուսումնարանի տարածքը գնդին հատկացնելու հարցի լուծմանը: Հարկավոր էր արագ գործել՝ այն հաշվով, որ տարածքը վերցնելուց ու անհրաժեշտ բարեկարգումներից հետո հասցնենք աշնանային զորակոչ ընդունել: Ընդամենը երկու ամիս ժամանակ կար:

Ղեւոնդը փշերի վրա էր: Օրը հինգ անգամ զանգում էր Ենոքին, նա էլ պատասխանում էր, որ դեռ տեղեկություն չկա: Ընկերս անհամբեր էր՝ գալիս էր, գնում, ասում էր՝ չենք հասցնելու:

Մի օր էլ եկավ ու ասաց՝ գնում եմ ուսումնարանը գրավեմ: Հարցրի՝ ինչ է նշանակում «գրավել»: «Վաշտը նախապատրաստում եմ, եղածչեղածը բարձեմ մեքենաները, շարասյուն կազմեմ, առջևից ես՝ վիլիսով, հետո զրահամեքենաները, հետո մեքենաները, եւ ամբողջ անձնակազմով ներխուժում ենք ուսումնարանի տարածք, ուսումնական գույքը հավաքենք մի սենյակում, դուռը փակենք, պլոմբենք, որ շատ չանեն, մնացածը տնօրինենք ու սկսենք վերափոխումները, որ հասցնենք»,– մի շնչում ներկայացրեց «գրավման» ծրագիրը:



Հաջորդ օրը վաշտը տեղակայված էր ուսումնարանի տարածքում, իսկ ուսումնարանի ղեկավարությունը՝ հազիվ մի 15 ուսանողի հետ, նստացույց էր անում գործկոմի միջանցքներում:

Ու սկսվեց եռուզեռը: Ագարակի հանքաշինական վարչությունը շարում էր զորամասի պարիսպը: Ցեմենտ չկար: Ստիպված էին կիր-ավազով շաղախ պատրաստել ու պարիսպը շարել բնական, անկանոն քարաբեկորներով: Կիրը տրամադրում էր Ագարակի կոմբինատը՝ անվճար: Ճանապարհաշինարարներն առավոտյան սկսեցին տարածքի ասֆալտապատումն ու, անդադար աշխատելով՝ ավարտեցին գիշերը, լուսարձակների լույսի տակ:

Խոշլիից հետո բոլորը գիտակցում էին բանակ ունենալու անհրաժեշտությունը եւ աշխատանքներին մասնակցում էին սիրով ու նվիրումով: Ղեւոնդն անձամբ աշխատում էր ու հսկում եւ արդյունքում՝ հասցրեց: Վաշտը վերածվեց գնդի ու համալրվեց աշնանային զորակոչով:

Հաջորդ տարվա դեկտեմբերի վերջին, երբ Ադրբեջանը ռեվանշ վերցրեց եւ լուրջ ու ագրեսիվ ջանքեր գործադրեց կորցրած տարածքները ետ վերցնելու, Մեղրիի գնդի որոշ ստորաբաժանումներ տեղափոխվեցին Հորադիզի հատված, ուր արդեն ակտիվ նահանջ էր գրանցվել:

Գունդը մեկնեց Մեղրիի կայարանից՝ տեղավորվելով մի երեք տասնյակ բաց, ցածրակող վագոններից կազմված շարժակազմի վրա: Այսպիսի նվիրում ու արագություն...

## Հրաժեշտ Մահմեդովին

Էլչիբեյի իշխանությունը, բնականաբար, ուզում էր ամբողջությամբ հաստատվել նաեւ Նախիջեւանում, այդ իսկ պատճառով հնարավոր եւ անհնար բոլոր միջոցներով հնչում էր Ալիեւի մերձավոր շրջապատին: Դա էր պատճառը, որ տեւական ժամանակ Նախիջեւանի ներքին գործերի նախարար Մահմեդովը նախկինի պես անմիջական հարաբերություններ չուներ ինձ հետ, անգամ ինձ թվում էր, թե խուսափում է: Ես

նրան խնդրել էի գտնել Լաչինի միջանցքը պահող միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի անհետ կորած սպա Էրիկին, որին նանաչում էի Նյուվադին ազատագրելու ու պահպանելու ժամանակից: Էրիկը բարձրահասակ, սլացիկ, գեղեցիկ ու բարեկիրթ սպա էր, որի նկատմամբ հարգանքով էի լցված: Նրա հայրը ՆԳ ղեկավարներից մեկի վարորդն էր, անունը չեմ հիշում: Էրիկի կորուստն ափսոսանքով էր լցրել սիրտս, եւ իմ նախաձեռնությամբ փորձում էի տեղեկություն ստանալ նրա մասին: Միջանկյալ ասեմ, որ 92թ. ամռանը շատ ծանր դրության մեջ էր հայտնվել Լաչինի միջանցքը՝ գրեթե փակվելու եզրին էր: Որքան հիշում եմ՝ Գոչազի հատվածում միջանցքի լայնությունը կազմում էր 6 կմ: ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանը վերցրեց պատասխանատվությունն ու ոստիկանության ուժերով կազմակերպեց միջանցքի պաշտպանությունը:

Հոկտեմբերյան մի օր երկաթուղու կապով զանգ ստացա: Խոսում էր երկաթուղու Նախիջեւանի վարչության կապի գծով տեղակալ Ազիմովը: Հարցուփորձ արեց, հետո միացրեց Մահմեդովին: Մահմեդովը սրտամոտ բարեւեց ու ասաց, որ ինքը տեղափոխվում է Բաքու, աշխատելու է Բաքու քաղաքի ոստիկանության վարչության պետի տեղակալ թիկունքի գծով, չի մոռացել իմ խնդրանքն Էրիկի մասով, այնտեղ ավելի հեշտ տեղեկություն կհայթայթի, Ազիմովն իր բարեկամն է, վստահելի մարդ է, եւ կապը կպահի միայն Ազիմովի միջոցով:

Հեյդար Ալիեւի կենսագրության այս շրջանին վերաբերող հատվածում ասվում է, որ 1992թ. հոկտեմբերին Ադրբեջանի ՆԳ նախարար Իսկանդեր Համիդովը փորձել է Նախիջեւանի ՆԳ նախարար նշանակել Սիավուշ Մուստաֆաեւին, բայց Նախիջեւանի խորհրդարանը հրաժարվել է հաստատել նրան: Այդ պատճառով ԱՀ-ի 200 ներկայացուցիչներ հոկտեմբերի 24-ին յոթ ժամով գրավել են ՆԳ նախարարության ու հեռուստակենտրոնի շենքերը: Ալիեւը կարողացել է հաղթահարել այդ վիճակը: Համիդովն Ալիեւի հասցեին հենց այդ իրադարձությունների ընթացքում ասել է, որ նա օրական 10 անգամ հեռախոսով խոսում է Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, բայց հարկ չի համարում մեկ անգամ զանգել Էլչիբեյին, իսկ եթե նա մտածում է բառս ստեղծել Ադրբեջանում կամ անջատել Նախիջեւանն Ադրբեջանից, ապա ինքը նրա ճակատին կարձակի ոչ թե մեկ, այլ երկու գնդակ:



Իրավիճակն այսպիսին էր Նախիջեւանում, իսկ Մահմեդովը ստացել էր նոր նշանակում ու մեկնել Բաքու: Երկար ժամանակ չէր անցել՝ կապի դուրս եկավ Ազիմովն ու փոխանցեց, որ Մահմեդովը փնտրել է Էրիկին Ադրբեջանի բոլոր բանտերում ու մեկուսարաններում, բայց չի գտել: Սակայն գերիների մի հատված հանձնվել է կորած ադրբեջանցի զինվորների հարազատներին, եւ ինքը շարունակում է փնտրել Էրիկին այդ հատվածում:

Ես այս տեղեկությունը փոխանցեցի վերադաս նեղ մի շրջանակի: Հետո ինձ հանդիպեց այդ շրջանակից մեկը, ասաց, որ ինքը Մահմեդովի հետ կարեւոր խոսելիք ունի, եւ անհրաժեշտ է ձեռք բերել նրա հեռախոսահամարը: Ես բացատրեցի, որ այդպես նրա հետ կապվելը վտանգավոր կարող է լինել նրա համար, իսկ վերջինս ասաց՝ Մոսկվայից կզանգահարի: Ես Ազիմովից վերցրի երկու հեռախոսահամար եւ փոխանցեցի նրան: Որոշ ժամանակ անց կապվեց Ազիմովն ու փոխանցեց, որ Մահմեդովը տեղափոխվում է այլ աշխատանքի, եւ այդ համարներով իրեն այլեւս պետք չէ զանգել, իսկ նոր համարն ինքը կփոխանցի հայտնի լինելուն պես: Ասաց, որ Երեւանից զանգել է մեկը, պատասխանել է բարտուղարուհին եւ հայտնել, որ Մահմեդովը տեղում չէ: Զանգողն ասել է. «Շատ լավ. որ վերադառնա՝ փոխանցեք, որ Երեւանից զանգել է իր ընկերը, գրանցեք իմ համարը եւ ասացեք՝ բող զանգի այս համարով»: Մարդն ինքնահաստատվելու խնդիր ուներ:

Էրիկի մասով էլ փոխանցել էր, որ Էրիկը հերոս է. Լաչինի միջանցքում վիրավորված Էրիկը շրջապատման մեջ է հայտնվել, ինքնապաշտպանություն է գործել ձեռքի նռնակը պայթեցնելով եւ ոչնչացնելով իրեն շրջափակողներին:

Չգիտեմ, թե որքան է արժանահավատ...

## Կուբաթլիից ողջ վերադարձած միակ գերին

Նոյեմբերի 1-ը կամ 2-ն էր: Չեմ հիշում, թե ում կողմից, բայց ահազանգեցին, որ հերթական գերուն են տարել Կուրաթլու: Գյուղտեխնիկային պատկանող մեքենայի վարորդը՝ Լենդրուշ Հայրապետյանը, Երեւանից վերադառնալիս մեքենան կանգնեցնում է Գորիս-Կապան միջակայքի «Զայ-Զամի» կոչվող հատվածում, որ ուղեւորները՝ քույրն ու նրա

երեխան, իջնեն մեքենայից եւ բնական կարիքները հոգալու նպատակով մտնեն անտառ: Նրանք անտառից վերադառնում են՝ վարորդը չկա:

Նախորդ նմանատիպ դեպքը տեղի էր ունեցել 1991թ. նոյեմբերի 23-ին, երբ նույն Կուբաթլու Լին տարել Մարտիկ Գեւորգյանին, կնոջն ու հարեւանուհուն, որոնց չկարողացանք ողջ վերադարձնել եւ ստիպված եղանք հաղթահարել բարդագույն իրավիճակներ:

Առաջին միտքը, որ ծագեց գլխումս՝ Օրդուբաղի Իլգարին զանգելն էր: Ասացի, որ նրա օգնության կարիքն ունեմ եւ խնդրեցի հնարավորինս արագ հանդիպել սահմանագծին: Հանդիպեցինք: Բացատրեցի իրավիճակը, նկարագրեցի հնարավոր հետեւանքները՝ հիշեցնելով նաեւ նախորդ դեպքի մասին, ու խնդրեցի պայմանավորվել Մեղրիի հակառակ կողմի՝ Զանգելանի շրջանի ազդեցիկ շրջանակների հետ, որ նրանք կոնկրետ ժամին իրենց դիմավորեն Մեղրիի սահմանագծին, ուր կհասնեն, բնականաբար, մեր պատասխանատվությամբ, զանգելանցիների աջակցությամբ մեկնեն Կուբաթլու, պայքարեն, գտնեն, վերցնեն ու նույն ճանապարհով ետ բերեն անմեղ մարդուն:

Իլգարը խոստացավ վերադառնալ, քննարկել եւ մեկ ժամից հստակ պատասխան տալ, թեեւ նախապես ասաց, որ կարծում է՝ պատասխանը դրական կլինի: Ես ընդամենը խնդրեցի հաշվի առնել, որ մեկ րոպեն անգամ կարող է ճակատագրական լինել մարդու կյանքի համար, եւ վերադարձա սպասելու Իլգարի զանգին: Ճանապարհին մտորում էի, թե ինչ որոշում կկայացնեն, եւ ներքին զգացողությունս հուշում էր, որ գալու են: Ո՛չ թե՝ որ առերեւույթ առկա էր մարդկային հարաբերություններ, այլ նախկինում ստացած դառը դասերն էին նրանց մղելու մարդասիրական քայլի:

Դեռ այս մտքերի մեջ էի՝ Իլգարը զանգեց ու ասաց, որ գալիս են երեք հոգով եւ ուղիղ մեկ ժամից կլինեն սահմանագծին: Բենզինը սուղ էր, գնացինք երկուսով՝ Ղեւոնդի հետ, նրա մեքենայով: Դիմավորեցինք նրանց, երեքին տեղավորեցինք ետեւի նստատեղին ու շարժվեցինք: Վերադարձին մենանա ես էի վարում: Նրանց պետք է տեղափոխեինք Արաքսի հովտով, երկաթուղուն զուգահեռ անցնող ավտոճանապարհով մոտ 50 կմ՝ Մեղրիի շրջանի ողջ լայնությամբ: Ղեւոնդը հանկարծ տագնապած անազանգեց կանգնել: Քարայծ էր տեսել: Մեքենայից շտապ իջավ, բեռնախցիկից հանեց լինքեցի լուսահոգի որսորդ Արայիկի հավաքած օպտիկական նշանառությամբ «Մոսինը» ու սկսեց կրակել: Քարայծերի խումբը կրակոցից զլխապատառ փախչում էր առաջ ու ցած: Իլգարն ազարտի մեջ էր ընկել, մոտեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս, աղերսալի հայացքով վրաս նայելով ասաց. «Ասա՝ թող տա, ես էլ կրակեմ»: Ես էլ հումորի տվեցի ու Ղեւոնդին ասացի. «Դու լավ չես կրակում, անընդհատ վրիպում ես, տուր՝ թող Իլգարը փորձի»: Իլգարն էլ վրիպեց: Շարունակեցինք ճանապարհը: «Կամ պետք է կարողանանք խաղաղություն հաստատել, կամ էլ պատերազմին պետք է մասնակցեն միայն նրանք, ովքեր կրակում են այնպես, ինչպես Իլգարն ու Ղեւոնդը կրակեցին այսօր»,– նորից կատակեցի ես:

Իլգարն ասաց, որ անհրաժեշտ է հեռախոսազանգ կատարել: Մտանք Մեղրիի կայարան: Կայարանապետ Ժորա Հայրապետյանը մեզ դիմավորեց թեյի հյուրասիրությամբ: Նրա աշխատասենյակում թեյի բուրմունքն անպակաս էր:

Իլգարը կապվեց Նախիջեւան եւ հրահանգեց միացնել Հեյդար Բեյին: Նա խոսում էր Հեյդար Ալիեւի հետ: Խոսում էր աղրբեջաներեն, հազիվ հասկանում էի, որ պատմում է դիմավորելու եւ տեղափոխելու ընթացքի մասին: Հետո դարձավ ինձ ու ասաց, որ Հեյդար Բեյն ուզում է ինձ հետ խոսել: Վերցրի հեռախոսը:

– Բարեւ ձեզ, Հեյդար Բեյ,– ողջունեցի:

– Բարեւ, թանկագին Դավիթ, ես քեզ հետաքրքիր եմ համարում, ինձ շատ լավ բաներ են պատմել քո մասին: Եթե չլիներ քո գործոնը, ես չկի համաձայնի, որ Իլգարի խումբը կատարեր այդ քայլը: Հիմա խնդրանք ունեմ. այդ տղաներն ինձ համար շատ թանկ արժեն, խնդրում եմ՝ այնպես անես, որ ձեր տարածքում նրանք որեւէ փորձանքի մեջ չընկնեն,– ասաց Հեյդար Բեյը:

– Հանգիստ եղեք, Հեյդար Բեյ,– պատասխանեցի,– ես, նախ, պատվով եմ պատասխանատու նրանց անվտանգության համար եւ անձամբ ձեզ խոստանում եմ, որ ամեն ինչ կարգին կլինի:

Հայր Ալիեւին հեռախոսով հրաժեշտ տալուն պես շարունակեցինք ճանապարհը, որը հաղթահարելու համար դեռ մեկ ժամից ավելի պետք է ժամանակ ծախսեինք, որովհետեւ՝ բացի այն, որ ճանապարհն ընդհանուր առմամբ նեղլիկ ու անբարեկարգ էր, նաեւ Շվանիձոր–Նյուվա-

դի հատվածն էկզոտիկ էր՝ լեռնային արահետից շատ չտարբերվող, գուցե միայն լայնությամբ:

Պայմանավորված ժամին տեղ հասանք: Մեքենայով սահմանագիծը հատելը վտանգավոր էր: Իլգարն ու ընկերները մի քիչ առաջ քայլեցին՝ մնալով մեր տեսադաշտում, եւ քիչ հեռվում տեսնելով իրենց դիմավորողներին՝ ձեռքի շարժումով մեզ վերադառնալու հրահանգ տվեցին: Վերադարձանք՝ սպասելու Իլգարի գործունեության արդյունքին:

(Ես չեմ կարող ասել, թե ինչ դերակատարում էր ունեցել Իլգարը մեկ ամիս առաջ ԱՃ-ի կողմից Նախիջեւանի Մեջլիսի ու հեռուստակենտրոնի շենքերի գրոհման ժամանակ, բայց որ նա ԱՃ-ի հիմնական լիդերներից էր, դա միանշանակ է: Հնարավոր է՝ հոկտեմբերյան ճգնաժամի հաղթահարման ժամանակ Ալիեւը կարողացել էր հարաբերություններ կառուցել եւ հարթել նախիջեւանյան ԱՃ-ի հետ լարվածությունը հենց Իլգարի միջոցով, դրա համար էլ Իլգարն իր համար բանկ արժեր...)

Իլգարը զանգեց 1992թ. նոյեմբերի 5-ին, ասաց՝ գալիս ենք, եւ սահմանագծին դիմավորելու հստակ ժամ ասաց: Դիմավորելու գնացինք երկու մեքենայով: Իլգարը ենդսրտած պատմեց, որ շատ ծանր բանակցությունների արդյունքում են կարողացել փրկել հայի կյանքը, եւ համոզված պնդեց, որ եթե չլիներ այս նախաձեռնությունը, ապա գերին միանշանակ դատապարտված էր մահվան: Անգամ ասաց, որ եթե մեկ օր ուշ մեկնեին, ապա, ամենայն հավանականությամբ, նրա մասին անգամ տեղեկություն չէին կարող ունենալ:

Մի մեքենայով Լենդրոշ Հայրապետյանին ուղարկեցինք հարազատների մոտ, մյուսով՝ սխրանք գործած Իլգարին ու ընկերներին տեղափոխեցինք Նախիջեւանի սահմանագիծ ու հրաժեշտ տվեցինք գրկախառնությամբ...

Լենդրոշ Հայրապետյանը մասիսցի է, մեղրեցի վախ բռնող Ռուբիկի փեսան է:

## Ներդիրների շրջանառություն

Արաքս գետի երկու ափերը՝ Հայաստանն ու Իրանը, միմյանց կապող նավակամուրջը բացվել էր 1992թ. մայիսի 6-ին, սակայն անցուղարձը խիստ պասիվ էր: Գուցե այն պատճառով, որ դիվանագիտական



հարաբերությունները դեռ չէին կայացել, Հայաստանում Իրանի դեսպանատունը բացվել է 1992թ. ապրիլին, իսկ Իրանում Հայաստանի դեսպանատունը՝ 1992թ. դեկտեմբերին: Աշնանային մի օր անձնագրային սեղանի պետ Սամվել Միրզոյանն իմ սեղանին դրեց մի փաթեթ եւ ասաց, որ սովետական հուշագիր է Իրանի ու ԽՍՀՄ-ի միջեւ բաղամացիների պարզեցված անցում կազմակերպելու վերաբերյալ:

Որքան հիշում եմ, հուշագիրը ստորագրվել էր 1982թ., մատնանշում էր բոլոր այն բնակավայրերը, որտեղ նախատեսվում էր սահմանել 45 կմ-ոց գոտի, որում հաշվառված բաղամացիներին իրավունք էր տրվում սահմանը հատել անձնագրով եւ նրան կցված ներդիրով, որի վրա դրվում էին այդ գոտու ոստիկանապետի ու սահմանապահ զորամասի հրամանատարի ստորագրությունն ու կնիքը: Այդ ցանկում ներառված էր նաեւ Մեղրին:

Վերցրի հուշագիրն ու շտապեցի սահմանապահ զորամասի հրամանատար, գնդապետ Ռակովիչ Նիկոլայ Սերգեեւիչի մոտ: Պարզեցի հուշագիրը եւ հարցրի՝ ծանո՞թ է այդ փաստաթղթին: Դրական պատասխան տվեց: Պարզաբանեցի, որ այս հարցով Հայաստանը ԽՍՀՄ իրավահաջորդն է, ուստի անհրաժեշտ է օգտագործել այդ հնարավորությունը եւ կազմակերպել բաղամացիների անցուղարձը: Իմ անմիջականությունից երջանկացած՝ ծիծաղելով ասաց, թե ինքը վստահ է, որ իրանական կողմն ինձ պես չի մտածում:

– Շատ լավ, դա պարզեն ամենեին էլ բարդ չէ,– ասացի ու շտապեցի հենց ռուս սահմանապահների միջոցով հաջորդ օրվա համար կազմակերպել իմ ու իրանական սահմանապահ կոմիսարի հանդիպումը: Այդ ժամանակ Իրանի սահմանային շրջաններում սահմանապահ կոմիսարը ղեկավարում էր եւ սահմանապահներին, եւ ոստիկանությունը:

Հանդիպումը կայացավ հաջորդ օրը: Կոմիսարն ազգությամբ թալիշ էր, անունը՝ Նաղավյան: Նախկինում մի քանի անգամ հանդիպել էինք: Ներկայացրի հուշագիրը, որին նա քաջատեղյակ էր, եւ խնդրեցի սահմանված կարգով կիրառության մեջ դնել: Կոմիսարը, առանց երկար մտածելու, առանց վերադասի հետ խորհրդակցելու, ասաց՝ կարելի է, բայց համոզված է, որ ռուսներն իրենց կնիքն ու ստորագրությունը չեն դնի ներդիրի վրա:

– Ուզում եմ ասել՝ եթե առաջիկա օրերին մեր քաղաքացին անձնագրով եւ ներդիրով՝ ստորագրված ու կնքված իմ ու Ռակովիչի կողմից, հատի սահմանը, ապա դում նրան ետ չեմ դարձնի,– հարցրի:

– Ոչ, ետ չենք դարձնի, միայն թե՝ թեեւ նախատեսված չէ, բայց ներդիրի վրա լուսանկար փակցրեմ, որ կարողանանք ներդիրը նույնականացնել անձնագրի ու անձի հետ,– միանգամից պատասխանեց հարցելի կոմիսարը:

Շնորհակալություն հայտնեցի, հրաժեշտ տվեցի ու շտապեցի Ռակովիչի մոտ: Պատմեցի եղելությունը եւ միանգամից առաջարկեցի լիարժեք մի ներդիր նախապատրաստել եւ մեկին փորձնական ուղարկել: Վերջինս խեղճացած անկեղծացավ եւ ասաց, որ առանց վերադասի՝ գեներալ Բաբենկոյի համաձայնության, չի կարող կնիք ու ստորագրություն դնել ներդիրի վրա: Արագ կողմնորոշվեցի, որ Բաբենկոյին անձամբ պիտի համոզեմ եւ խնդրեցի Ռակովիչին՝ ինձ անմիջապես միացնել գեներալի հետ: Միացրեց: Ասացի, որ ես գործերով վաղը Երեւանում եմ լինելու եւ նրա հետ եւս քննարկելու հարց ունեմ: Առաջարկեցի հանդիպել աշխատանքից հետո՝ ընթրիքի սեղանի շուրջ: Տեղ ու ժամ պայմանավորվեցինք:

Երեկոյան գեներալ Բաբենկոյի հետ հանդիպեցինք Երեւանի ընդամենը մի քանի գործող խորովածանոցներից մեկում՝ Զանգվի ձորում, սեղանի շուրջ: Նա շտապում էր իմանալ, թե ինչ հարց ունեմ քննարկելու իր հետ:

– Ամբողջ օրը մեքենա եմ վարել, հոգնած եմ ու քաղցած, մի քիչ սնվենք, հանգստանանք, խելքի գամ, ու քննարկենք,– ասացի ես:

Որոշ ժամանակ անց, երբ գեներալն արդեն բարձր տրամադրություն ուներ, սկսեցի.

– Նախքան քննարկումը մի հարց եմ ուզում տալ ու ակնկալում եմ շիտակ պատասխան,– ասացի:

– Ես շատ անկեղծ կլինեմ,– շվարած երեսիս նայելով՝ արձագանքեց նա:

– Շատ լավ,– շարունակեցի,– դում ինչպես եք գնահատում՝ Ռուսաստանն է Հայաստանին ավելի բարկամ պետություն, թե Իրանը:

– Իհարկե՝ Ռուսաստանը, դա ինչ հարց է,– վիրավորված տոնով պատասխանեց գեներալը:

– Ես էլ նույնպիսի համոզված կարծիք ունեմ, ուղղակի հարկադրված եմ հարցնում, քանի որ երեկ ստիպված էի ձեր փոխարեն վիրավորանք



կուլ տալ,– բացատրեցի,– ամբողջ հարցն այն է, որ երեկ դիմեցի իրանական կոմիսարին՝ քաղաքացիների պարզեցված անցումը ներդիրներով կազմակերպելու խնդրանքով, իսկ նա խոստացավ թույլատրել պատշաճ կարգով լրացված եւ հաստատված ներդիր ունեցող քաղաքացիների անցումը, բայց համոզմունք հայտնեց, որ ռուսական կողմը կնիք ու ստորագրություն չի դնի ներդիրների վրա:

– Սուտ է ասում, իրենք դա թույլ չեն տա,– հանկարծակիի եկած արձագանքեց գեներալը:

– Շատ լավ, բայց մենք երկուսով հեշտությամբ դա կարող ենք ստուգել. դում հանձնարարում եմ Ռակովիչին, որ ստորագրի ու կնքի իմ նախապատրաստած, կոնկրետ մարդու անունով լրացված ներդիրը: Այդ մարդուն ուղարկում ենք Իրան ու դիտարկում արդյունքը: Կընտրեմ նրանց լեզվին տիրապետող մեկին, որ արդյունքից տեղեկացված լինենք,– ավարտեցի ես:

Պայմանավորվածությունը ձեռք էր բերված: Ավարտեցինք ընթրիքը, գնացինք շտաբ, եւ գեներալն իմ ներկայությամբ հանձնարարեց Ռակովիչին, որ նա ստորագրի ու կնքի փորձնական ներդիրը, իսկ եթե արդյունքը դրական լինի, ապա մշտապես անել այդ գործառույթը:

Հրաժեշտ տվեցի գեներալին ու հանապարհվեցի Մեղրի:

Առավոտյան արդեն փորձնական ներդիրը պատրաստ էր՝ լրացված Բորիկ Սարգսյանի անունով: Վերջինս լավ էր տիրապետում ադրբեջաներենին: Ներդիրի ձեւաթղթում նախատեսված էր նաեւ մեքենայի մակնիշի եւ պետհամարանիշի լրացման տեղ, որ լրացված էր Բորիկի անձնական մեքենայի տվյալներով:

Բորիկը նստեց մեքենան ու անցավ նավակամրջով: Սրտատրոփ սպասում էինք Ռակովիչի հետ միասին: Մի տասը րոպեից մեքենան վերադարձավ: Մինչ Բորիկը կհասներ ու կմոտենար մեզ՝ Ռակովիչն ասաց, թե ինքը համոզված էր, որ չեն թողնելու: Բորիկը մեքենան հարմար տեղավորեց, իջավ մեքենայից, բարձր տրամադրությամբ մոտեցավ մեզ ու ասաց. «Նրանք ասում են, որ թեեւ ներդիրում նախատեսված է մեքենայով գնալը, բայց խնդրում ենք՝ առայժմ եկեք առանց մեքենայի, հետո այդ հարցին կանդրադառնանք: Ասացին նաեւ, որ կարող ենք գնալ մինչեւ Ջուլֆա»: Հետո նա ոտքով անցավ ու վերադարձավ երեկոյան՝ գործարար դարձած:

– Ուզում եմ ասել՝ եթե առաջիկա օրերին մեր քաղաքացին անձնագրով եւ ներդիրով՝ ստորագրված ու կնքված իմ ու Ռակովիչի կողմից, հատի սահմանը, ապա դում նրան ետ չեմ դարձնի,– հարցրի:

– Ոչ, ետ չենք դարձնի, միայն թե՝ թեեւ նախատեսված չէ, բայց ներդիրի վրա լուսանկար փակցրեմ, որ կարողանանք ներդիրը նույնականացնել անձնագրի ու անձի հետ,– միանգամից պատասխանեց հարգելի կոմիսարը:

Շնորհակալություն հայտնեցի, հրաժեշտ տվեցի ու շտապեցի Ռակովիչի մոտ: Պատմեցի եղելությունը եւ միանգամից առաջարկեցի լիարժեք մի ներդիր նախապատրաստել եւ մեկին փոխնական ուղարկել: Վերջինս խեղճացած անկեղծացավ եւ ասաց, որ առանց վերադասի՝ գեներալ Բաբենկոյի համաձայնության, չի կարող կնիք ու ստորագրություն դնել ներդիրի վրա: Առաջ կողմնորոշվեցի, որ Բաբենկոյին անձամբ պիտի հանդիպեմ եւ խնդրեցի Ռակովիչին՝ ինձ անմիջապես միացնել գեներալի հետ: Միացրեց: Ասացի, որ ես գործերով վաղը Երեւանում եմ լինելու եւ նրա հետ եւս քննարկելու հարց ունեմ: Առաջարկեցի հանդիպել աշխատանքից հետո՝ ընթրիքի սեղանի շուրջ: Տեղ ու ժամ պայմանավորվեցինք:

Երեկոյան գեներալ Բաբենկոյի հետ հանդիպեցինք Երեւանի ընդամենը մի քանի գործող խորհրդանոցներից մեկում՝ Զանգվի ձորում, սեղանի շուրջ: Նա շտապում էր իմանալ, թե ինչ հարց ունեմ քննարկելու իր հետ:

– Ամբողջ օրը մեքենա եմ վարել, հոգնած եմ ու քաղցած, մի բիչ սնվենք, հանգստանանք, խելքի գամ, ու քննարկենք,– ասացի ես:

Որոշ ժամանակ անց, երբ գեներալն արդեն բարձր տրամադրություն ուներ, սկսեցի.

– Նախքան քննարկումը մի հարց եմ ուզում տալ ու ակնկալում եմ շիտակ պատասխան,– ասացի:

– Ես շատ անկեղծ կլինեմ,– շվարած երեսիս նայելով՝ արձագանքեց նա:

– Շատ լավ,– շարունակեցի,– դում ինչպես եմ գնահատում՝ Ռուսաստանն է Հայաստանին ավելի բարեկամ պետություն, թե՞ Իրանը:

– Իհարկե՝ Ռուսաստանը, դա ինչ հարց է,– վիրավորված տոնով պատասխանեց գեներալը:

– Ես էլ նույնպիսի համոզված կարծիք ունեմ, ուղղակի հարկադրված եմ հարցնում, քանի որ երեկ ստիպված էի ձեր փոխարեն վիրավորանք



կոպ տալ,– բացատրեցի,– ամբողջ հարցն այն է, որ երեկ դիմեցի իրանական կոմիսարին՝ քաղաքացիների պարզեցված անցումը ներդիրներով կազմակերպելու խնդրանքով, իսկ նա խոստացավ թույլատրել պատշաճ կարգով լրացված եւ հաստատված ներդիր ունեցող քաղաքացիների անցումը, բայց համոզմունք հայտնեց, որ ռուսական կողմը կնիք ու ստորագրություն չի դնի ներդիրների վրա:

– Սուտ է ասում, իրենք դա թույլ չեն տա,– հանկարծակիի եկած արձագանքեց գեներալը:

– Շատ լավ, բայց մենք երկուսով հեշտությամբ դա կարող ենք ստուգել. դում հանձնարարում եմ Ռակովիչին, որ ստորագրի ու կնքի իմ նախապատրաստած, կոնկրետ մարդու անունով լրացված ներդիրը: Այդ մարդուն ուղարկում ենք Իրան ու դիտարկում արդյունքը: Կընտրեմ նրանց լեզվին տիրապետող մեկին, որ արդյունքից տեղեկացված լինենք,– ավարտեցի ես:

Պայմանավորվածությունը ձեռք էր բերված: Ավարտեցինք ընթրիքը, գնացինք շտաբ, եւ գեներալն իմ ներկայությամբ հանձնարարեց Ռակովիչին, որ նա ստորագրի ու կնքի փոխնական ներդիրը, իսկ եթե արդյունքը դրական լինի, ապա մշտապես անել այդ գործառույթը:

Հրաժեշտ տվեցի գեներալին ու հանապարհվեցի Մեղրի:

Առավոտյան արդեն փոխնական ներդիրը պատրաստ էր՝ լրացված Բորիկ Սարգսյանի անունով: Վերջինս լավ էր տիրապետում ադրբեջաներենին: Ներդիրի ձեւաթղթում նախատեսված էր նաեւ մեքենայի մակնիշի եւ պետհամարանիշի լրացման տեղ, որ լրացված էր Բորիկի անձնական մեքենայի տվյալներով:

Բորիկը նստեց մեքենան ու անցավ նավակամրջով: Սրտատրոփ սպասում էինք Ռակովիչի հետ միասին: Մի տասը րոպեից մեքենան վերադարձավ: Մինչ Բորիկը կհասներ ու կմոտենար մեզ՝ Ռակովիչն ասաց, թե ինքը համոզված էր, որ չեն թողնելու: Բորիկը մեքենան հարմար տեղավորեց, իջավ մեքենայից, բարձր տրամադրությամբ մոտեցավ մեզ ու ասաց. «Նրանք ասում են, որ թեեւ ներդիրում նախատեսված է մեքենայով գնալը, բայց խնդրում ենք՝ առայժմ եկեք առանց մեքենայի, հետո այդ հարցին կանդրադառնանք: Ասացին նաեւ, որ կարող ենք գնալ մինչեւ Ջուլֆա»: Հետո նա ոտքով անցավ ու վերադարձավ երեկոյան՝ գործարար դարձած:

Ի նշան երախտագիտության՝ իրանական կոմիսարին հրավիրեցի մեր տուն հաշի: Եկավ գարնան կեսին՝ երկու աշխատակիցների ուղեկցությամբ: Նրանց դիմավորեցինք Ռակովիչի և հետախուզության պետ, գնդապետ Մուշիրիի հետ միասին: Ասացի, որ իր գալու պատվին գառ ենք մորթել, մինչև հասնենք՝ խաշլաման պատրաստ կլինի: Ասաց՝ այդ միսը հալալ չի, և իրենք դա չեն ուտի: Տուն հասանք, զանգեցի Էդիկ Արզումանյանին և խնդրեցի իր գառներից մեկը շտապ բերի մեր տուն: Կոմիսարն այդ գառը մորթեց իր ձեռքով, և մինչ այդ նոր մորթված գառան մսից կերակուր կպատրաստեին, Մուշիրին նրանց մեքենայով տարավ կարճատև շրջագայության: Իսկ Ռակովիչը, օգտագործելով նրանց բացակայության հնարավորությունը, մի կուշտ խմեց ու կերավ, քանի որ նրանք ոգելից խմիչք չէին հանդուրժում և ուղղակի սեղանին չէր կարելի դնել:

Ներդիրների գործն արագ թափ հավաքեց: Կարճ ժամանակահատվածում հասավ պիկին՝ 800 քաղաքացի յուրաքանչյուր ամսվա մեջ հինգ անգամ անցնելու իրավունքով: Ստանում էին բոլոր ցանկացողներն՝ անխտիր: Ներդիրներով զբաղվող ոստիկանության աշխատակցին արգելված էր որևէ մեկից որևէ բան վերցնել: Հենց ականջիս լուր էր հասնում, որ աշխատակիցը պայման է խախտել, նրան զրկում էի այդ գործառույթը կատարելու լիազորությունից: Այդպես զրկվել են մի մայոր և մի փոխգնդապետ: Վերջապես ես այդ գործը վստահեցի ենթասպա Խաչիկ Գասպարյանին, որը պատվով ու մաքրությամբ կատարեց այդ գործը՝ առնվազն մինչև ոստիկանապետի պաշտոնը թողնելս՝ 1995թ. ապրիլը:

Ներդիրավորները բաժանվում էին գործարարների և վարորդների: Վարորդները՝ օգտվելով իրենց անցնելու իրավունքից, Երևանից և Հայաստանի բոլոր ծայրերից եկած բեռնատար դատարկ մեքենաները վարելով անցկացնում էին Իրան և վերադարձնում բեռով: Մեկանգամյա անցման համար նրանք վաստակում էին 50 դոլար: Այսինքն՝ նրանք ամսական վաստակում էին նվազագույնը 250 դոլար: Նվազագույն, որովհետև նրանք վաստակելու ուրիշ նպատակ էլ ունեին: Դատարկ բեռնատար մեքենայի վառելիքի տարան էլ դատարկ էր, որովհետև Հայաստանում վառելիքը սուղ էր: Եվ նրանք իրանական գերէժան վառելիքով լիցքավորում էին իրենց վստահված բեռնատարները ու վաստակում: Բնականաբար, զբաղվում էին նաև փոքր բիզնեսով՝ ձեռքի հետ բերելով փոքր խմբաքանակով իրանական էժան ապրանքներ և վաճառում իրենց շրջապատի մարդկանց, կամ՝ ուղղակի բերում էին նրանց պատվերով: Անգամ այս կողմնակի հնարավորությունները բացառելու դեպքում՝ 1993թ. ամսական 250 դոլարն այսօրվա 1000 դոլարից ավելի գնողունակ էր:



Հիշում եմ, մի օր ինձ մոտ եկավ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրեն Լյուդվիգ Համբարձումյանն ու խնդրեց, որ ԲՊԱՋ-ի վարորդներին ներդիր չտամ, որովհետև աշխատանքից բացակայում են, և անընդմեջ աշխատող կոմբինատի աշխատանքները ձախողվում են՝ անընդհատությունը խզվում է: Իսկ Ագարակի կոմբինատում ամենաբարձր վճարվող աշխատակիցները ԲՊԱՋ-ի վարորդներն էին: Հաշվի առեք նաև, որ Մեղրիի շրջանի ազգաբնակչության թիվն ընդամենը 12–13 հազար էր:

Մի քանի անգամ իրանական կողմում ներդիրավորների և վիզա ունեցող վարորդների մեքենաների խուզարկությամբ օրի, փամփուշտ, անգամ նռնակ էին հայտնաբերել և վարորդին տարել Ջուլֆայի զնդան: Տեղեկությունը ստանալուն պես հանդիպում էի կոմիսարի հետ, բացատրում մեր իրավիճակը և խնդրում ներել կարգազանցներին: Ժպտալով նայում էր երեսիս, ձեռքի ափով մի աչքը ծածկելով ասում. «Քո խաթեր, աչքիս վրա»: Հետո թեյ ու միրգ էր հյուրասիրում՝ մինչև Ջուլֆայից կարգազանցին սահման կհասցնեին: Մի անգամ զնդանից բերված մի երևանցի կարգազանց ասաց, որ պատժախցում մի հայ գինվոր կա, որը երկու ամիս է այնտեղ է գտնվում: Ղևոնդին հարցրի, ասաց՝ հնարավոր չի: Հետո անուն-ազգանունով պարզեց, որ տվյալ զինվորն անհետ կորած է: Նորից դիմեցի կոմիսարին, ասաց, որ ինքն այլևս ազդեցություն չունի նրա վրա, որովհետև նրանով դատարանն է զբաղվում: Խնդրեցի, ասաց՝ մի բան կանեմ: Մեկ շաբաթից վերադարձրեց: Զինվորը պատմեց, որ պարբերաբար լողալով անցել է Արաքս գետը, անգամ անցորդներից ծխախոտ է խնդրել ու ստացել: Հերթական անգամ անցել է, բռնել ու տարել են:

ԽՍՀՄ փլուզումից հետո փլուզվել էր նաև սոցիալական ապահովության համակարգը, և անկախ Հայաստանում հիմնադրվել էր կենսաթոշակային ապահովության համակարգ, որը նախատեսում էր թոշակների վճարումն աշխատողների աշխատավարձի մասնահանումներից: Նոր հիմնադրված համակարգում այդ մասնահանումների հան-

ռազումարը չէր բավարարում ամբողջությամբ վճարել կենսաթոշակները. երբեմն վճարվում էր մի քանի ամիս ուշացումով:

Մեղրի էր եկել Հրանտ Բագրատյանը, հավաքվել էինք շրջխորհրդի գործկոմում, բարձրացվեց նաև կենսաթոշակների հարցը: Բագրատյանի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց Մեղրիի շրջանի տարածքում հավաքագրված կենսաթոշակային վճարներն առանց կենտրոնացնելու՝ միանգամից ուղղել մեղրեցիների կենսաթոշակները վճարելուն:

Պետությունը կայացած չէր, հարկային համակարգը նոր էր ձևավորվում, եւ այդ պայմաններում ներդիրավորների նկամուտը հաշվառող չկար: Ես ինձ վրա վերցրի այդ պատասխանատվությունը եւ հրահանգեցի, որ յուրաքանչյուր անգամ, ներդիր ստանալուց առաջ, քաղաքացին պետք է բանկում 12000 դրամ մուծում կատարի կենսաթոշակային վճարի հաշվեհամարին, եւ ներդիրը կտանա միայն համապատասխան անդորրագիրը ներկայացնելուց հետո:

Բոլորը գիտակցված ու պարտաճանաչ կատարում էին այդ վճարումը: Փաստորեն, ներդիրավորների համբարության շնորհիվ հնարավոր դարձավ Մեղրիում կենսաթոշակները վճարել ժամանակին եւ ամբողջությամբ:

## Քելբաջարի ազատագրման հետեւանքները մեր ռեգիոնում

Քելբաջարն ազատագրվել է 1993թ. ապրիլի 5-ին: Այդ պահից սկսած՝ Զանգելանի սահմանագծին ակտիվությունը աճագնացավ: Ինչպես Ղեւոնդն էր ձեւակերպում՝ 44-ում մերոնք չէին կարողանում խրամատից գլուխները բարձրացնել, գնդակոծում էին օր ու գիշեր՝ ինչով պատահի:

Կիրառում էինք փորձված մեթոդը: Որ հատվածում չափն անցնում էին՝ Դ-30-ով երկու արկ էինք ճշգրիտ հասցեագրում հակառակորդին, եւ նա սթափվում էր: Նրանք անգամ Գրադ էին գործածում մեր 44-ի ուղղությամբ, բայց, որպես կանոն, հրթիռները թռչում էին մեր դիրքապահների գլխավերեւով եւ պայթում Իրանի տարածքում՝ Մեղրիի եւ Զանգելանի սահմանագլխի դիմաց, ավելի շատ դեպի Մեղրիի կողմը: Իրանական կոմիսարը հանդիպում կազմակերպեց եւ ներկայացրեց, որ մեր հրթիռներն են անցնում իրենց տարածք: Ստիպված նրա հետ գնացի իր իսկ ցույց տված հանախ հրետակոծվող տարածք, փնտրեցի ու գտա փափուկ հողի մեջ ցցված, չպայթած մի հրթիռ, որի ուղղությունն ապացուցում էր, որ



հրթիռներն արձակվում են հենց Զանգելանի տարածքից: Փաստը շատ համոզիչ էր, ու կոմիսարը լիովին ըմբռնեց:

Այդ ժամանակահատվածում ստիպված էինք հրետակոծել Վեժնավիրի ուղեկալի տարածքը, որը նախկին սովետական սահմանապահ ուղեկալ էր, բայց վաղուց արդեն դարձել էր ադրբեջանական զինուժի հենակետ: Կրակի ուղղորդիչը Սուրիկ Հայրապետյանն էր, որը հրետակոծությանը հետեւում էր 44-ից: Նա շատ ոգեւորված էր հրետակոծության արդյունքներով, եւ իրոք՝ այդ դասից հետո այդ թեւում շատ ավելի զուսպ էին:

Ապրիլի 10-ին ինձ տագնապած զանգեց Կապանի ոստիկանապետ Էդիկ Բարսեղյանը եւ հայտնեց, որ Զանգելանի կողմից ադրբեջանական զինուժը Ներքին Հանդի ուղղությամբ մտել է Կապանի տարածք: Ներքին Հանդի բնակիչները թողել են գյուղը, ադրբեջանցիները մտել են գյուղ եւ շարժվում են Ծավի ուղղությամբ. խնդրեց օգնել:

Անմիջապես տարածքին քաջածանոթ լուսահոգի Ալյոշա Միքայելյանին ուղարկեցինք Մեղրի–Կապանի սահմանագիծ՝ Մեղրիի լեռնաշղթայի այն հատվածը, որտեղից երեւում են Ծավ գյուղն ու Ներքին Հանդ–Ծավ ճանապարհահատվածը: Հազիվ էինք հասել Նյուվաղի գյուղի վերին ձորամիջում տեղակայված Գրադ համալիրին եւ նախապատրաստել գործածության, Ալոն ռադիոկապով փոխանցեց, որ ադրբեջանական զրահամեքենաները մոտենում են Ներքին Հանդ, Ծավ, Կապան ճամփաբաժանին: Ունենալով հայտնի կետի կոորդինատները՝ արագացված հաշվարկով Գրադը ճշգրիտ դեպի հակառակորդը ուղղորդելուց հետո մի երկու տասնյակ հրթիռ թափեցինք նրանց գլխին: Ալոյին արդյունքը տեսանելի էր, նա ոգեւորված հայտնեց, որ հակառակորդը ետ է փախչում, ընդ որում՝ զրահամեքենաներից մեկը քարշակով են տանում:

Հետագայում՝ 2012թ. մեծամասնական ընտրակարգով առաջադրվել էի պատգամավորության թեկնածու: Այդ օրը՝ օրվա երկրորդ կեսին, Կապանից՝ գյուղերով, մարդկանց հանդիպելով հասա Ներքին Հանդ: Այդ փոքրիկ գյուղում համեմատաբար շատ մարդ էր հավաքվել: Անմիջական ու մարդամոտ զրուցում էինք, պատմում էին, թե գյուղը որքան լքված ու մոռացված է, հիշեցին 1993թ. ապրիլի 10-ի ադրբեջանական ներխուժումը եւ ասացին, որ անգամ դրա հետեւանքները դեռ ամբողջությամբ վերացված չեն:

Հանդիպումից տպավորված՝ ուղեկիցներիս հետ շարունակեցի ճանապարհը եւ Ծավով ու Շվանիձորով վերադարձա տուն՝ գիշերելու: Առավոտյան նորից մեկնեցի Կապան եւ քարոզչական օրն սկսեցի շտաբի անդամներին իրազեկելով Հանդի հանդիպման մասին: Նրանք տեղյակ էին ավելիին, քան ես գիտեի: Ռոման Նավասարդյանը պատմեց, որ իշխանության ներկայացուցիչները՝ մարզպետ եւ պատգամավորի թեկնածու Վահե Հակորյանի գլխավորությամբ, Հանդի հանդիպման մասին իմանալով, շտապել են Ներքին Հանդ, հավաքել բոլոր ընտանիքների ներկայացուցիչներին եւ յուրաքանչյուրին տվել 200000 դրամ գումար՝ ադրբեջանական ներխուժման հետեւանքները վերացնելու նպատակով:

## Քելբաջարյան հանգույց

Այնքան, որքան՝ իմ իսկ հասկանալու համար, հետաքրքրվել ու վերլուծել եմ՝ Քելբաջարի ազատագրման ծրագիրը նախաձեռնել է անձամբ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հաշվի առնելով այն ռեալ իրավիճակը, որ Շուշիի եւ Լաչինի ազատագրումից հետո Էլչիբեյի իշխանությունը ռեվանշ վերցրեց եւ կարողացավ տիրապետել Ղարաբաղի մի հատվածին, այնուհետեւ տեւական ժամանակ հակատի գիծը մնում էր գրեթե անփոփոխ, եւ հաստատված ժամանակավոր ռազմական հավասարակշռության պայմաններում հեռանկարը մշուշոտ էր, անհրաժեշտ էր գտնել այնպիսի լուծում, որը սթափության կմղեր դեռեւս պարտություն չկրած Էլչիբեյին եւ կհարկադրեր նրան Ղարաբաղի հարցի ռազմական կարգավորումից անցում կատարել զինադադարի ու հարցի դիվանագիտական, փոխզիջումային կարգավորման: Հայկական կողմի փոխզիջման առարկան, բնականաբար, կլիներ Քելբաջարի շրջանը:

Այդ նպատակով Տեր-Պետրոսյանը մի քանի պաշտոնատար անձանց ուղեկցությամբ մեկնում է Մոսկվա եւ բարձր մակարդակի հանդիպում ունենում ՌԴ նախագահ Բորիս Ելցինի եւ նրա համապատասխան ենթակա պաշտոնյաների հետ:

Տեր-Պետրոսյանը հիմնավորում է իր ծրագիրը՝ որպես Ղարաբաղի հակամարտության հանգուցալուծման ճանապարհ, եւ ստանում ռուսական կողմի աջակցության խոստումն այն առումով, որ ծրագրի իրագործման դեպքում՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ Ռուսաստանը կսպասարկի հայկական կողմի շահն այդ հարցի քննարկման ժամանակ:



Քելբաջարն ազատագրվեց 1993թ. ապրիլի 5-ին:

Գիտեմ, որ Քելբաջարի ազատագրման ռազմական ծրագիրը գրավոր հաստատված է Գերագույն գլխավոր հրամանատար Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից, կամ՝ նա իր վրա է վերցրել ամբողջական պատասխանատվությունը:

Գիտեմ, որ Վարդենիսի կողմից հայկական զինուժի Քելբաջար մտնելուց ժամեր անց՝ ԱՄՆ-ի դեսպանը այցելել է Տեր-Պետրոսյանին եւ տեղեկացրել, որ ամերիկյան զինվորականությունը տիեզերքից արձանագրել է հայկական զինուժի մուտքն Ադրբեջան: Տեր-Պետրոսյանն անկեղծորեն հաստատել է փաստը եւ բացատրել, որ դա արվել է Ղարաբաղի հայազգի բնակչության անվտանգությունից ելնելով, որ շնորհակալ լինելով ԱՄՆ-ին, Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության հետեւանքով որբ մանուկների կյանքը մանկատներ կազմակերպելով փրկելու համար, այնուամենայնիվ, չեմ կարող թույլ տալ, որ նույնը կրկնվի նաեւ հիմա: Դեսպանը հեռացել է ու, կարճ ժամանակ անց կրկին վերադառնալով, բառացի փոխանցել ԱՄՆ նախագահ Քլինթոնի արձագանքը. «Շնորհակալություն անկեղծության համար»:

1993-ի մայիսի վերջին Վազգեն Սարգսյանի հետ Մեղրի էր եկել Ռոբերտ Քոչարյանը (հետո կմանրամասնեմ): Մեղրիում եղած ժամանակ գործի բերումով Վազգենը մոտ երկու ժամ բացակայեց, Ռոբերտ Քոչարյանի հետ վերջինիս սպասում էինք իմ աշխատասենյակում: Այն ժամանակ նա նիհար երիտասարդ էր եւ ինձ վրա բողեց զուսպ ու համակրելի մարդու տպավորություն:

Ես ավելի երիտասարդ էի եւ մեծ քաղաքականությունից բավական հետու, միգուցե տարիքով եւ իրավիճակով պայմանավորված՝ գուցե նաեւ արկածախնդիր:

Մեղանին դրեցի քարտեզը եւ փորձեցի հիմնավորել Կուբաթլուն, Ջանգելանն ու Ջաբրայիլը գրավելու անհրաժեշտությունը, որովհետեւ Հադրութից մինչեւ Արաքս գետ՝ Իրանի սահմանը մոտ 20 կմ է, եւ այդմանի փոխարեն Սյունիքն ու Ղարաբաղը փաստորեն պահում են շուրջ 250 կմ ընդհանուր սահման:

Քոչարյանը զարմացած երեսիս նայեց ու բառացի ասաց. «Այդ ինչ ես ասում, մեզ ո՞վ կթողնի այդպիսի բան անել»:

Քելբաջարի կոստով սկսվեց Էլչիբեյի կործանումը: Էլչիբեյը համոզված հակառուս էր, եւ, բնականաբար, ռուսական ռազմաղաղական իշխանությունները համարժեք վերաբերմունք ունեին նրա նկատմամբ: Մայիսի 28-ին ռուսական բանակը վաղօրոք նախանշված ժամկետից շատ ավելի շուտ դուրս բերվեց Կիրովաբադից, իսկ սպառազինությունն ամբողջությամբ հանձնեց ապստամբ գնդապետ Սուրաբ Հուսեյնովի զինակիցներին: Հունիսի 6-ին Ադրբեջանի կառավարական ուժերն իրագործեցին «Թայֆուն» օպերացիան՝ Հուսեյնովին զինաթափելու նպատակով: Օպերացիան ձախողվեց. ըստ էության՝ Ադրբեջանում սկսվեց մարդկային զոհերով ուղեկցվող քաղաքացիական պատերազմ: Հուսեյնովը գերի վերցրեց գլխավոր դատախազին, պարտադրեց նրան ստորագրել նախագահ Էլչիբեյի կալանքի որոշումը ու հունիսի 10-ին՝ իր ենթակա զինված ստորաբաժանումներով, ճանապարհին հաստատելով իր ռազմական իշխանությունը՝ շարժվեց Բաքվի ուղղությամբ ու շրջափակեց քաղաքը: Էլչիբեյը գերադասեց Ալիեւին պաշտոնապես հրավիրել Բաքու, քան իշխանությունը հանձնել Սուրաբ Հուսեյնովին, ինչն էլ դարձավ Ալիեւի իշխանության գալու մեկնարկը:

Հունիսի կեսին Էլչիբեյն անակնկալ հեռացավ Նախիջեւան եւ ապաստանեց Մեղրիի հարեւան Օրդուբադի շրջանի Քալաքի գյուղում՝ իր ծննդավայրում:

Հունիսի երրորդ տասնօրյակում, երբ դեռ Սուրաբ Հուսեյնովն ամբողջ թափով իր ռազմական իշխանությունն էր տարածում Ադրբեջանով մեկ եւ բացառում Էլչիբեյի հետ որեւէ հանդիպում կամ բանակցություն, մի օր զանգեց Վազգեն Սարգսյանը: Ասաց, որ կարեւոր հյուրի հետ գալիս է Քաջարանի կոմբինատի հանգստյան տուն, եւ որ Ղեւոնդի ու Աֆոյի հետ գնանք այնտեղ՝ նրան հանդիպելու: Հյուրասիրության որոշակի նախապատրաստությամբ գնացինք նրանց մոտ: Վազգենի հյուրը ռուսական անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար Ռեուտն էր: Այնտեղ էին նաեւ Կապանի ղեկավարներից մի երկուսը: Գլխավոր մեկն այդտեղ էր եկել ակնհայտ գինովցած: Վազգենը հարցրեց, թե արդյոք հնարավորություն կա՞ Կապանում շոգեքաղնիք կազմակերպելու: Գինովցածը, որ աթոռին նստած, գլուխն ուսին ծռած խոմփացնում էր, հանկարծ բարձրացրեց գլուխն ու արձագանքեց. «Կարող ա՞ գիտես՝ քեզ համար քիսաչի եմ»: Վազգենը շատ սրտնեղեց: Հետո անաղմուկ այնպես կազմակերպեցինք, որ հետագա հյուրասիրությունն անցավ առանց «քիսաչիների»: Հյուրասիրությունը վերածվեց խնջույքի: Ռեուտը բարձր տրամադրություն ուներ ու ակտիվ շփվում էր:



Նա իրեն թույլ տվեց ասել հետեւյալը. «Ուզում եմ, որ դում իմանաք, Սուրաբ Հուսեյնովն իմ անձնական գործակալն է»:

Հյուրասիրության ընթացքում մի քանի անգամ Վազգեն Սարգսյանը հարեւան սենյակից հեռախոսով կապվում էր Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ եւ փոխանցում անհրաժեշտ տեղեկությունները:

Հունիսի 24-ին սահմանագծին հանդիպեցի Իլգարի հետ: Իլգարը վաղուց արդեն Օրդուբադի ոստիկանապետն էր: Նա ասաց, որ նախագահ Էլչիբեյը գտնվում է իր ծննդավայրում, նրա անվտանգության ապահովումը կազմակերպում է անձամբ ինքը՝ Աճ զինված խմբերի միջոցով, շրջափակելով ողջ գյուղը: Բայց գյուղն ու Էլչիբեյի անվտանգությունն ապահովողները եւս շրջափակված էին զինված ստորաբաժանումներով, հավանաբար՝ Ալիեւի ու Հուսեյնովի նախաձեռնությամբ:

Այդ հանդիպումը պատվիրել էր նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Աշոտ Մանուչարյանը: Իր ներկայացուցչի միջոցով նա ուղարկել էր հեռախոսով արված մի ձայնագրություն, ուր Էլչիբեյի երբեմնի հավատարիմ խորհրդականը պարզաբանում էր, թե որքան արկածախնդիր ղեկավար էր Էլչիբեյը. նրանից օր առաջ ազատվելը եւ Հեյդար Ալիեւի օր առաջ իշխանության գալը դիտարկում էր որպես Ադրբեջանի փրկություն:

Իմ ընկեր Իլգարի միջոցով Էլչիբեյին փոխանցվեց, որ Հայաստանը նրան է ճանաչում որպես օրինական նախագահ եւ պատրաստ է օժանդակել նրա իշխանության վերադարձին՝ ինչով որ անհրաժեշտ լինի: Եւ եթե նա անհաղթահարելի վտանգ կզգա կյանքի համար, ապա մենք կարող ենք երաշխավորված գաղտնիությամբ նրան Մեղրիով տեղափոխել Երեւան, այնտեղից անմիջապես կազմակերպել թռիչքը Ֆրանսիա, ուր արդեն պայմանավորված է նրան քաղաքական ապաստան տալու հարցը:

Գուցեեւ այս դրվագը նշանակություն ունեցավ, որ Էլչիբեյը մինչեւ վերջ հրաժարական չտվեց՝ երկարաձգելով իշխանափոխությունն Ադրբեջանում: Նրանից ազատվելու միակ իրավական ճանապարհը համա-

ժողովրդական հանրաքվեն էր, որը տեղի ունեցավ 1993թ. օգոստոսի 28-ին: Իսկ Հեյդար Ալիեւը նախագահ ընտրվեց 1993թ. հոկտեմբերի 3-ին: Ադրբեջանական կողմի հիմնական կորուստները տեղի են ունեցել Քելբաջարի անկումով սկիզբ առած քաղաքական ճգնաժամի շրջանում:

Դեռ նախագահ չընտրված՝ Ալիեւը սեպտեմբերին այցելեց Մոսկվա, հանդիպեց Բ. Ելցինի եւ մյուս առանցքային դեմքերի հետ: Այդ այցելությունը նա անվանեց «Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններում նախորդ իշխանությունների կատարած սխալների շտկում», հայտնեց ԱՊՀ-ին անդամակցելու Ադրբեջանի պատրաստակամության մասին, եւ արդեն սեպտեմբերի 20-ին մեջլիսը ԱՊՀ-ին Ադրբեջանի միավորման մասին որոշում ընդունեց:

## Պատերազմի վճռորոշ փուլը

Մինչեւ 1993թ. դեկտեմբերի կեսը Հեյդար Ալիեւը կարողացավ հաշտության մթնոլորտ ապահովել Ադրբեջանում եւ նախաձեռնեց կորցրած տարածքները վերադարձնելու ռազմական ծրագիր: Այլեւս Ռուսաստանի համակրանքը վայելող Ադրբեջանի ռազմական ճնշմանը դիմակայելու նպատակով՝ Հայաստանի զինված ուժերի գերակշիռ մեծամասնությունը տեղափոխվեց ճակատ:

Դեկտեմբերի 16-ին տուն եկա ցերեկով, որդուս ծննդյան օրն էր: Եկավ նաեւ զորամասի հրամանատար Ղեւոնդ Հովհաննիսյանը: Մինչ հարազատներս պատրաստություն էին տեսնում, մենք քննարկում էինք ռազմական դրությունը:

Որոշակի վերլուծության արդյունքում Ղեւոնդին ասացի, որ ժամանակին Նախիջեւանին տրված դասերի ազդեցությունը դեռեւս պահպանվում է, եւ կարելի է Մեղրիի գնդի որոշակի ստորաբաժանումներ եւս տեղափոխել Հորադիզ, որովհետեւ վաղ թե ուշ դրա անհրաժեշտությունն զգացվելու է: Իսկ եթե Նախիջեւանի կողմից սպառնալիք զգանք, ապա աշխարհազորի ու ոստիկանության ներգրավումով ինքս կկազմակերպեմ Մեղրիի պաշտպանությունը: Հորդորեցի Ղեւոնդին՝ չսպասել վերադասի հրամանին, որովհետեւ, այսպես թե այնպես, այդ հրամանն առաջիկայում կարծես թե լինելու է, այլ կապվել նախարարի հետ եւ առաջարկել անձնական նախաձեռնությամբ: Ղեւոնդն արագ ընկալեց ու ասաց.



«Մինչեւ խորհրդածը պատրաստ լինի՝ գնամ զորամաս, զեկուցեմ նախարարին ու շտապ վերադառնամ»:

Վերադարձավ խանդավառված: Պատմեց, որ զորամաս հասնելուն պես իրեն զեկուցել են, որ նախարարը կապի մեջ է: Ինքն էլ նախարարին խնդրել է, որ նա, նախ, լսի իր առաջարկությունը, հետո անցնի ասելիքին: Ղեւոնդը ներկայացրել էր մեր քննարկումից ծնված առաջարկությունը, նախարարը լսել էր ու ասել, որ հենց դա էր իր ասելիքը, շնորհակալություն էր հայտնել Ղեւոնդին եւ խնդրել էր իր շնորհակալությունը փոխանցել նաեւ ինձ:

Նախարարը Սերժ Սարգսյանն էր: Ես նրան միակ անգամ հանդիպել էի օգոստոսի վերջին՝ նախարար նշանակվելուց անմիջապես հետո, Վազգեն Սարգսյանի ուղղակցությամբ Մեղրիի զորամաս այցելության ժամանակ: Զորամասից գնացինք Ղեւոնդենց տուն նաշելու: Նախորդ օրը Ղեւոնդի ծննդյան օրն էր, եւ այդ առիթով Սերժ Սարգսյանը նրան կարաբին նվիրեց: Եկել էին ուղղաթիռով: Ուղղաթիռը վայրկյմ էր կատարել Ագարակի ֆուտբոլի մարզադաշտում: Ուղղաթիռ նստելուց առաջ Վազգենը ժպտալով ասաց, որ նախարարն ինձ առանձին ասելիք ունի:

Մենք առանձնացանք: Սերժ Սարգսյանը բառացի ասաց. «Ես գիտեմ, թե դու ինչ ներդրում ունես Մեղրիի պաշտպանության կազմակերպման գործում: Գիտեմ նաեւ, թե ինչպիսի ազդեցություն ունես Ղեւոնդի նկատմամբ: Եկել եմ խնդրելու, որ նույն կերպ շարունակես նաեւ իմ նախարարության շրջանում»:

Ես անկեղծ պոռթկացի՝ ասելով, թե իմ վարքագիծը բխում է իմ գիտակցությունից, անկախ այն հանգամանքից, թե ով է նախարարը, եւ բնականաբար՝ շարունակվելու է նույն կերպ:

Վազգենն ավելի լայն էր ժպտում, նա բավական մոտ էր կանգնած եւ առնվազն կռահել էր իմ ասածը: Հրաժեշտ տալիս զրկեց ու ցածրաձայն ասաց. «Ես գիտեի, որ դու այդպես ես պատասխանելու»:

Մի քանի օրից Մեղրիի գնդի ճակատ մեկնող ստորաբաժանումները՝ Ղեւոնդի գլխավորությամբ, տեղավորված էին Մեղրիի կայարանում կանգնած, տասնյակ ցածրակող վագոններից կազմված շարժակազմի վրա. անձնակազմ, մեքենաներ, զրահամեքենաներ, տանկեր, հրետանի, թիկունքային պարագաներ:

Պատերազմ մեկնող գնդին իմ հորդորով նանապարհելու էին եկել գործկոմի նախագահն ու դատախազը: Մի տասը բոպե կոստյում-փողկապով կանգնելուց հետո ցուցադրաբար նայեցին ժամացույցին, դեմքի լրջախոհ արտահայտությամբ հրաժեշտ տվեցին ու գնացին՝ պատճառաբանելով կարևոր գործերի առկայությունը:

Կառամատույցում միայնակ կանգնած թափահարում էի ձեռքս՝ մինչ շարժակազմը կանհետանար տեսադաշտից: Սիրտս նմլվում էր...

Կայարանից շարժվեցի: Մեքենան դեռ Մեղրի քաղաք չէր հասել, ոստիկանության աշխատակիցներից Արմեն Մինասյանը ռադիոկապով հաղորդեց, որ Մեղրիի կայարանից 10 կմ հեռավորության վրա գտնվող Կարճեան կայարանից՝ գրավված տարածքների ավար մետաղի ջարդոնով բարձված վեց վագոնից բաղկացած շարժակազմը պոկվել է տեղից եւ արագացումով ընթանում է երկաթուղին ի վար: Դա նշանակում է՝ դեպի Մեղրիի կայարան, դեպի զորագունդ տեղափոխող շարժակազմ:

Մինչ վարորդը շրջադարձ կաներ դեպի Մեղրիի կայարան, ես ռադիոկապով հրահանգեցի հերթապահին, որ, նախ, հեռախոսով կապվի Մեղրիի կայարանապետի հետ եւ իմ անունից հրահանգի Ագարակի կողմից Մեղրիի կայարան մտնող գիծն ուղղորդել փակուղի, այնուհետեւ հեռախոսով կապվի ռուսական սահմանապահ զորամասի հրամանատարի հետ եւ փոխանցի այն ամենը, ինչ կասեմ ես: Երկաթուղին անցնում է այդ զորամասի հաջորդ չորս ուղեկալները շոշափելով: Հրամանատարին հրահանգեցի հանձնարարել ուղեկալներին՝ ցանկացած գնով այդ չարաբաստիկ վեց վագոնը գցել ռելսերից, ընդհուպ գիծը պայթեցնելու միջոցով:

Հասանք կայարան այն պահին, երբ կայարանապետը սլաքավարի բանալին ձեռքին՝ շվարած կանգնած էր գծի կողքին: Շվարած էր ընթացող վագոնների արագությունից ու թափից: Ասաց, որ հոսանքի բացակայության պայմաններում փորձել է ձեռքով կառավարել գծի ուղղությունը, բայց չի հաջողել... Շարունակեցինք մեքենայի հնարավոր ամենամեծ արագությամբ հետապնդել փախչող շարժակազմին, մնալով Ռակովիչի հետ կապի մեջ: Անգամ մի ակնթարթ հասանք շարժակազմին, բայց ընդամենը տեսնում էի, անձնապես ոչինչ ձեռնարկել հնարավոր չէր: Ռակովիչը մեկը մյուսի ետեւից հայտնեց, որ երկու ուղեկալներում ձեռնարկված միջոցառումներն արդյունք չեն տվել, գծի վրա կուտակված կոշտ զանգվածի կույտերը մի ակնթարթում ցամուցրիվ են եղել՝ շաղդելով վագոնների ընթացքի վրա: Ես գայրացա՝ բող հենց հիմա հաջորդ ուղեկալում պայթեցնեն գիծը, եւ խոստացա վագոնների ընթացքը չկանխելու դեպքում պատժել նրանց, եթե բախում տեղի ունենա զորագնդի շարժակազմի հետ:

Նյուվաղիի ուղեկալ չհասած՝ վագոնների ընթացքը կասեցվեց: Գծերի վրա կուտակված կոշտ զանգվածակույտի տակ դրված ելուստներ ունեցող մետաղական մի ամուր շրջանակ, որի բարձրությունն ավելի մեծ էր եղել, քան վագոնի հատակի ու շպալների միջեւ եղած հեռավորությունը, կառչել էր վագոնի հատակից եւ, շպալները ելուստներով ջարդելով՝ մարել էր վագոնների հուժկու թափը: Շուրջ 150մ երկարությամբ երկաթուղու մի հատվածի շպալներն՝ առանց բացառության, ջարդված էին, որի հետեւանքով գծերը միմյանցից հեռացել էին, ու վագոններն ընկել էին գծերից: Միեւնույն է, գայրացա Ռակովիչի վրա, որ վագոնները կանգ են առել պատահականության շնորհիվ: Վերջինս արդարացավ՝ եթե դա տեղի չունենար, ապա ուղեկալի հրամանատարը՝ ընդամենը 100մ հեռավորության վրա, նռնականետով նշանառության տակ էր վերցրել գիծը:

Այսպես կանխվեց վերահաս պատահարը, եւ ո՞վ գիտի՝ քանի՞ նակատ մեկնողի կյանք փրկվեց:

Հորադիզում ահավոր պատերազմ էր, ահարկու ճնշում, կրակի տարափ, մահ ու արյուն: Ջինամթերքն անիվների վրա ծայրը ծայրին հազիվ էին հասցնում: Որոշ ստորաբաժանումներ՝ հատկապես կամավորական ջոկատներ, խուճապի էին մատնվում, ոմանք նողոպրեցին: Ջինվորներն իրար հետեւից զոհվում ու վիրավորվում էին, զինվորական ուժը մաշվում էր ու հազիվ էր դիմակայում:

Ռեզերվի հրատապ անհրաժեշտություն կար: Այդ խնդիրը լուծելու համար իշխանություններ հարկադրված էին իրականացնել եռամսյա հավաքներ, որից այնքա՛ն շատ էր դժգոհությունը:



## Եռամսյա հավաքներ

Առաջին եռամսյա հավաքը կազմակերպվեց 1994թ. հունվարի առաջին կեսին: Մեղրիին տրված էր 96 զինվորացու հավաքագրելու առաջադրանք, հարեւան Կապանին՝ 136: Մեղրիում փաստացի ապրում էր 12–

13 հազար մարդ. Կապանից մոտ հինգ անգամ փիչ: Ծանր հանձնարարություն էր, եթե հաշվի առնենք, որ զորակոչ իրագործող համակարգը ոչ միայն ի վիճակի չէր ինքնուրույն կազմակերպելու այդ գործը, այլեւ չուներ նորմալ հաշվառում: Ոստիկանությունը հարկադրված էր լծվելու եռամսյա զորակոչի կազմակերպմանը: Ջինկոմիսարիատը տալիս էր զորակոչի ենթակա անձանց ցուցակները, իսկ ոստիկանությունն իրականացնում էր հավաքը: Զորակոչվողները գիտակցում էին, որ նպատակ մեկնելու դեպքում զոհվելու հավանականությունը մեծ է, եւ, բնականաբար, խանդավառված չէին ու կամավոր չէին ներկայանում: Մեծ քաղաքներում երբեմն ստիպված էին «աբլավների» գործադրմամբ հավաքագրել մարդկանց: Մեղրիում եռամսյա հավաքով զբաղվել եմ անձամբ՝ ամենայն պատասխանատվությամբ: Ոստիկանության աշխատակիցներ զորակոչի ցուցակում ներառված անձանց մեկ առ մեկ հանձնում էին ծանուցագիրը, իսկ ովքեր դժկամությամբ էին ստանում՝ ուղեկցում էին իմ աշխատասենյակ: Ես նրանց հետ առանձնազրույց էի ունենում, բացատրում զորակոչվելու անհրաժեշտությունը, լսում նրանց դժգոհության պատճառները, անհրաժեշտության դեպքում կազմակերպում նրանց բարձրացրած հատկապես կենցաղային խնդիրների լուծումն ու, ընդհանուր հայտարարի գալով, նրանց տուն էի ճանապարհում՝ հարազատներին հրաժեշտ տալու եւ հաջորդ օրն առավոտյան ներկայանալու պայմանով: Որպես կանոն՝ բոլորը պարտաճանաչ ներկայանում էին: Զորամասին մոտ ապրողները միանգամից ներկայանում էին զորամաս, իսկ Մեղրի քաղաքում եւ նրա շուրջն ապրողները գալիս էին ոստիկանություն եւ ոստիկանության մեքենաներով տեղափոխվում զորամաս:

Եղել են դեպքեր, երբ քաղաքացու դրության մեջ մտնելով՝ նրա զորակոչումը հետաձգել ենք հաջորդ հավաքին: Եղել է, որ ցուցակը ստանալուն պես՝ նկատելով, որ այնտեղ ընդգրկված են միայն խեղճուկրակ մարդիկ՝ հատկապես փախստականներ, ցուցակը վերադարձրել եմ զինկոմիսարին՝ փոփոխելու եւ արդարությունը վերականգնելու նպատակով, որը եւ բավարարվել է: Եղել է դեպք, երբ ցուցակում ընդգրկված իրեն արտոնյալ համարող մեկը ոչ միայն հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, ոչ միայն հրաժարվել է կատարել ոստիկանություն ներկայանալու պահանջը, այլեւ աշխատակցի նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու փորձ է արել, սակայն ձախողվել է, որովհետեւ աշխատակցի



պաշտպանական քայլից վնասել է ոտքի թաթը, բայց հարկադրված է եղել աշխատակիցների օգնությամբ ներկայանալ ոստիկանություն: Ճիշտ է՝ նա չզորակոչվեց հենց ոտքի վնասվածքի պատճառով, բայց այդ դեպքն ունեցավ լուրջ կանխարգելիչ նշանակություն:

Մեծ հաշվով, Մեղրիում կազմակերպված եռամսյա հավաքներն օրինակելի էին:

Ահա այսպիսի դժվարություններով ու կորուստներով հնարավոր եղավ կանխել հակառակորդի համառ ռազմական հնշումը: Անբնդհատ ձգտելով, բայց այդպես էլ չկարողանալով էական բեկում մտցնել եւ խաթարել ռազմական հավասարակշռությունը, տեղի տալով Ռուսաստանի ազդեցությանը՝ Ադրբեջանը հազիվ համաձայնեց զինադադարի հաստատմանը: Զինադադարի հաստատման գործընթացը տեւեց 1994թ. մայիսի 5–17-ը:

Ստորագրված է՝
«Դավիթ Մաթեւոսյան, Գագիկ Գրիգորյան, Ղեւոնդ Հովհաննիսյան
ՀՀ–Նախիջեւան սահմանագիծ»[41]

---

[41] *Սրանից հետո գրված է՝ «ԱՆԱՎԱՐՏ» եւ վերնագրերի մի ցանկ՝ 13-ից 21 համարակալմամբ.*

*13. Դեկտեմբերին Մեղրու գունդը մեկնեց Հորադիզ*

*14. Եռամսյա հավաքներ 1994թ.-ի հունվարից*

*15. Արարատ Համբարձումյանի եւ Վարուժան Թումանյանի դիակների վերադարձը՝ 1994թ.-ի ամառ*

*16. Աշխատանքային հիշողություններ Վանո Միրզոեղյանից, Նաղավյանի նվերը, 2* 10000 ռուբլի, պոստերի վերացում, Մեղրու բամբի անջատումը վարչությունից*

*17. 1995թ.-ի ապրիլ, հրաժեշտ ՆԳ համակարգին*

*18. 1995թ.-ի ամառ, հանդիպում Ս. Բարայանի հետ Ստեփանակերտում*

*19. 1996թ. հանդիպում ԿԳԲ-ի պետ Սերժ Սարգսյանի հետ, Արաքս 94*

*20. 1997թ. հանդիպում վարչապետ Ռ. Քոչարյանի հետ*

*21. 1998թ. հունվարյան իրադարձություններ Գյումրիում, հանդիպում ԼՏՊ-ի հետ:*

## ՄՏԱՀՈԳ ԵՄ

Մեղրի–Նախիջեւան սահմանագծի վրա մի բաց հատված կար, մերոնց (սահմանը պաշտպանողների) համար՝ բարեխիղճ լինելու դեպքում մշտապես տեսանելի, հակառակորդի համար՝ 1992թ. ստացած դասից հետո անհասկանալի, թերեւս անմատչելի (այդ դասը խոշին ետ վերցնելու կռիվն էր, որի մանրամասներին դու տիրապետում ես):

Հենց սրանով էր պայմանավորված, որ մինչեւ վերջերս մեր ծննդավայրի սովորական մարդիկ տնօրինում էին այդ տարածքը՝ հիմնականում զարնանը բոխի էին հավաքում, իսկ եզակիներն էլ քարայծ էին որսում, մասնավորապես իմ ընկեր հանգուցյալ Հովիկը:

Հովիկը որսագող չէր: Հովիկը դասական որսորդ էր, տարբերակում էր սեզոնը, էգն ու արուն, մեծն ու փոքրը: Որսագող ասածը ինչ է բազմաթիվ այն արտոնյալների համար, որոնք տարվա բոլոր եղանակներին, զինված հեռահար զինատեսակներով, գիշեր ու ցերեկ շրջում են մեքենաներով ու գնդակահարում ամեն շարժվող բան, իսկ ոմանք նույնիսկ ուղղաթիռ են օգտագործում այդ նպատակով:

Հովիկը սահմանապահ էր: Որսը նրա անձնական կյանքի գաղտնիության բաղադրիչն էր: Միայնակ քայլում էր դժվարանցանելի լեռնային այդ տարածքներով՝ օրական հաղթահարելով շուրջ 30 կիլոմետր եւ, որպես կանոն, լուսաբացը դիմավորում սահմանագլխին: Վերադառնում էր մթության քողի տակ՝ երբեմն տեղափոխելով իր քաշից ավելին: Միայն Հովիկի հանախակի ներկայությունը բավարարում էր, որ հակառակորդին թվա, թե այնտեղ մի ամբողջ զորագունդ է տեղակայված: Եւ այսպես՝ շուրջ քսանհինգ տարի:



Այդ տարածքում իրականացվում է լեռնային հովազների ուսումնասիրության միջազգային տարածաշրջանային մի ծրագիր, որի միջոցներով՝ տեղադրված սենսորային տեսագրող սարքերի օգնությամբ, արձանագրվել է հովազների գոյության փաստը (տեսել եմ լուսանկարները): Ընդ որում, էգ հովազը հայտնաբերվել է ծրագրի նախիջեւանյան խմբի կողմից, եւ նրա բնակության տարածքը սահմանագծին հարակից ադրբեջանական հատվածն է: Արուն մերոնք են հայտնաբերել, բնակության տարածքը սահմանագծին հարակից հայկական հատվածն է:

Տեւական ժամանակ է՝ այդ հովազները, սահմանագիծը հատելով, այցելում են միմյանց՝ բարեկամության օրինակ ծառայելով երկու կողմերի ժողովուրդներին:

Մտահոգիչն այն է, որ հովազ հայտնաբերող խմբին ուղեկցող բարեխիղճ համազյուղացին է հայտնաբերել ադրբեջանական նոր հենակետերը: Մերոնք էլ իմանալուն պես, ի պատասխան՝ մրցակցության մեջ են մտել:

Ժամանակագրական առումով սա վերադարձ է 91–92 թվականներ: Բայց այն ժամանակ, երբ դիրքային մրցակցության հետեւանքով բախում տեղի ունեցավ՝ երկկողմանի զոհերով, այդ պայմաններում անգամ հանդիպեցինք հակառակորդի հետ, քննարկեցինք, եզրահանգեցինք, պայմանավորվեցինք...

Հիմա էս ադրբեջանցիք երեւի երկու տարի հետո են գլխի ընկել, որ Հովիկը մեռել է, եկել են ու անիմաստ դիրքավորվել Հովիկի ու հովազների որսատեղիում: Իսկ մերոնք փոխանակ սրանց հարցնեն. «Էս ինչ եք անում, ինչու՞ եք անում, ինչ իմաստ ունի դիրքեր խտացնելը, վստահ եք, որ Հովիկը մեռել է...», վերցրել ու մրցակցության մեջ են մտել:

Եթե գործող իշխանություններն անվիճարկելի այս սահմանագծում նմանատիպ խնդիրները միմյանց հետ խոսելով չեն փորձում կարգավորել, ապա ակնհայտ է, որ սրանք չեն գիտակցում իրենց պատասխանատվությունը խաղաղության հաստատման հարցում:

Իսկ հենակետերի խտացման այս գործընթացը ծանր հետեւանքներ է ունենալու:

Նախ՝ միմյանցից մի կրակոց հեռավորության վրա բուսնող հենակետերում վաղ թե ուշ մարդկային զոհեր են լինելու: Մյուսը. որպես կանոն՝

նոր հենակետերի շոռաբոլորը հապճեպ ականապատում են, ինչը վտանգավոր է շատերի՝ հատկապես հաջորդ զորակոչի զինվորների համար:

Ականներով հագեցած խիտ հենակետերի այդ շղթան կենդանական աշխարհի կենսատարածքի աղետալի խզում է՝ բարայծերն ու հովազները մեծամասամբ զոհվելու են կամ հեռանան:

Վաղուց հայտնի է, որ մեր ու մեր հարեւան պետության իշխանական էլիտաների համար մարդը արժեք չի:

Մտորում եմ՝ գուցե հրաշք տեղի ունենա, ու սրանք, հաշվի առնելով, որ մեր հովազները միջազգային հանրության ուշադրության կենտրոնում են, վերցնեն ու՝ հանուն հովազների դադարեցնեն հենակետերի խտացման անիմաստ այդ մրցակցությունը: Մարդկանց համար էլ լավ կլինի:

Ահ հովազի բաժին դառնան դրանք...

08.05.2015թ.

## ՊԱՊՍ

*Նպատակը պապիս կյանքի զրվագներով Կարճեւանի շրջանակներում պատմության այդ բարդ ու դորշ ժամանակաշրջանի վրա լույս սփռելն է:*

Պապս՝ Թեւոս Մաթեւոսյանը, ծնվել է 1892 թվականին Կարճեւան գյուղում՝ Աբելի որդի (ծնվ. 1770-ականներին), Մաթեւոսի որդի, Համբարձումի որդի Դավիթի (1855–1936) ընտանիքում: Ըստ Համբարձումի քույր Ջավահիրի՝ տունը, ուր ծնվել է պապս, վերակառուցվել է (երկրորդ հարկ է ավելացվել), երբ Թեւոսի հայր Դավիթը դեռ չէր բալում, եւ այդ ժամանակ ինքը խնամելիս է եղել Դավիթին, որովհետեւ մյուսներն զբաղված էին տան վերակառուցմամբ: Թեւոսը տան 5-րդ զավակն էր՝ 4-րդ տղան: Դավիթի եղբայր Ալեքսանը զավակ չուներ եւ Թեւոսին որդեգրեց: Թեւոսը 12 տարեկան էր, երբ ծնվեց Ալեքսանի որդի Արտաշեսը (1904թ., հետագայում՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի անդամ): Թեւոսին կողից հուշում են, թե որն է իր իսկական ընտանիքը, եւ նա՝ անձնական որոշմամբ, վերադառնում է ծնողների մոտ, բայց միշտ Արտաշեսին համարում է փոքր եղբայր:

Ընտանիքը, ինչպես նաեւ գյուղի մյուս ընտանիքների հիմնական մասը, զբաղվել է խաղողագործությամբ ու խաղողի վերամշակմամբ՝ գինեգործությամբ: Նրանց ընտանիքի լավագույն այգիները Լկավող կոչվող տարածքում էին՝ ներկայիս ֆաբրիկայի դիմաց: Լկավողը գյուղի մյուս այգիներից առանձնանում է ձորակով, որը կոչվում է Թեւոսա շխոռ: Լկավողի այգիներում աճող «Արեւիկ» (Մեղրիի տարածքում ապրող աղրբեջանցիներն այդ խաղողը կոչում էին ալլահղոռա՝ աստվածային պտուղ)

տեսակի խաղողն ամենաշատ հաղցրությունն էր կուտակում՝ 30%-ից ոչ պակաս: Դրանից պատրաստված գինին լիմոնի գույն, նուրբ ու առանձնահատուկ համ ունի, եզակի է ու արժեքավոր:

Ջրասակավ ու թեք (նույնիսկ մինչև 45 աստիճան) այդ հողերն ավանդաբար ոռոգել են հերթով ու եղել են շատ կարգապահ: Կարելի է ասել՝ այդ ավանդույթը գործում է մինչև հիմա: Նվազագույն ջրով առավելագույն մակերես ոռոգելու և էռոզիայից խուսափելու նպատակով լանջն ի վար անցնող առուները սալահատակում էին: Այդպիսի առուներ կառուցում էին նաև այգու մարգերին ուղղահայաց՝ միմյանցից մոտ 10 մետր հեռավորությամբ, կարճացնելով մարգի երկարությունը, որպեսզի բարակ ջուրը կարողանան տեղ հասցնել: Բուխարու ու օջախի մոխիրը կուտակում էին՝ ջրի հերթի օրը խառնում առվի ջրին, ֆիլտրացիոն կորուստները հասցնում նվազագույնի:

Պապական տան մառանը (ընձան) բավական ընդարձակ էր՝ մեծ չարասով (ավազան, ուր լցնում են խաղողը՝ ոտքերով ճզմելու համար) ու խոր գիփով (հատակից ցածր ուղղաձիգ գլանաձև ավազան, ուր լցվում է ճզմված խաղողի հյութը): Իմ տեսած գիփի խորությունը մարդահասակ էր, և հատակին հասնելու համար պատերին դեմդիմաց տեղադրված էին քարե երուստներ, որոնց վրա ոտ դնելով՝ մոտենում էին գինենյութին՝ դուրս բերելու ու կարասները լցնելու համար: Հայրս պատմում էր, որ այդ գիփը կրկնակի խոր է եղել, և ինքն է կեսը լցրել, որովհետև կոլեկտիվացման պատճառով սեփական խաղողի բերքն այնքան էր քչացել, որ հարմար չէր միշ գիննենյութը խոր փոսից դուրս բերել: Հիշում եմ ընձանում պահպանված մի քանի մարդահասակ կարասները:

Ահա սա է եղել պապական ընտանիքի եկամտի աղբյուրը, որին՝ հոր գլխավորությամբ, լծվել են չորս եղբայրներով, քանի դեռ կյանքը խաղաղ էր:

Հետագայում ավագ եղբայր Բագրատը (1883–1917) հայտնվեց տարածաշրջանի մեծ քաղաքներում, ընդգրկվեց Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյանի) խմբում, մասնակցեց Բաքվում Մուսա աղայից 100000 ռուբլի և Թիֆլիսի բանկի կողոպուտներին, բանտարկվեց սիբիրյան բանտերից մեկում, Փետրվարյան հեղափոխության նախօրեին դիմեց փախուստի և գնդակահարվեց:



Երկրորդ եղբայրը՝ Ղեւոնդը (1886–1914), ծառայել է ցարական բանակի Նախիջեւանի գնդում որպես սպա, զոհվել է 1914թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ Էրզրումի մատույցներում: Միակ զավակը ծնվել է զոհվելուց անմիջապես հետո:

Երրորդ եղբայրը՝ Հակոբը (1890–1963), Օրդուբադում ունեցել է քարվանսարա (հյուրանոցային համալիր), ուր իրենց արտադրած գինին են իրացրել համագյուղացիները: Գյուղի բազմաթիվ մեծերի վկայությամբ, եղել է բարի, սկզբունքային եւ ֆիզիկապես ուժեղ տղամարդ, մշտապես օգտակար է եղել համագյուղացիներին: Պապիցս անձամբ եմ լսել, որ մի օր, երբ ինքը գործերով եղբոր մոտ էր, իրենց է մոտեցել մի հսկա մուսուլման եւ հարցրել Ղոչի Հակորին: Հակոբի ներկայանալուց հետո սա՝ զարմացած Հակոբի նիհար կազմվածքից, ասել է, որ ինքը Ջուլֆայի (կամ Սիահուտի) խանի փահլեւանն է (ըմբշամարտիկը) եւ խանի հանձնարարությամբ եկել է մենամարտելու: Պապս՝ ահաբեկված սրա տեսքից, խնդրում է, որ եղբայրը մերժի մարտահրավերը, սակայն Հակոբը հայտարարում է. «Հնարավոր է, որ ընդամենը չորս հայերի եւ բազմաթիվ մուսուլմանների ներկայությամբ ընթացող մարտում մարտիկներից մեկը զոհվի. եթե երաշխիք եմ տալիս, որ այդ դեպքում դատ ու դատաստան չի լինելու, ապա ես ընդունում եմ մարտը»:

Մարդկային ամբոխով օղակավորված արենա է մտնում Հակորից զանգվածով երկու անգամ մեծ ըմբիշը՝ տրիկոյով ու յուղած մաշկով: Պապս կրկին աղերսում է եղբորը՝ հրաժարվել մենամարտից: Վերջինս հանում է ուսերին գցած կիսավերարկուն, տալիս եղբորը եւ մտնում արենա: Մարտը տեւում է վայրկյաններ: Հակորը մի հնարքով այնպես է գետնին տապալում ըմբիշին, որ վերջինս, տեւական ժամանակ գետնին ընկած, չի կարողանում շունչ առնել: Շունչ առնելուն պես նա արտաբերում է. «Հալալ ա, որ քեզ կոչում են Ղոչի Հակոր»:

Հետագայում Խանը հյուր է կանչում Հակորին, որը գնում է Թեւոսի հետ՝ նվեր տանելով տիկերով գինի: Խնջույքի ընթացքում բոլորը հարբում են, հարբում է նաեւ Խանը եւ, զարմացած Հակոբի սթափության վրա, խոստովանում է նրա բացառիկությունն ու շոայլ նվերներով հանապարհում:

Սովետական իշխանությունները՝ նրան կուլակ համարելով, աքսորել են Սիբիր (1930–1935 թթ.): Այնուհետեւ թույլատրել են ապրել Ջերմ-

սարի հաղաքում, հետո՝ Վանաձորում, ուր հիմնադրվում էր քիմիական կոմբինատը: Եւս մեկ անգամ բանտարկվել է մեկ տարով եւ պահվել Երեւանի բանտում (1938–1939), նրա հետ նույն շինծու գործով բանտարկվել են նաեւ չորս համագյուղացիներ, այդ թվում՝ պապս: Անուղղակի մեղադրանքը Նժդեհին հավատարիմ լինելն էր:

Պապս ունեցել է երկու քույր՝ Սաթենիկն ու Սիրանույշը:

Առաջին աշխարհամարտի սկզբից զորակոչվում է ցարական բանակ, ծառայում է Ջուլֆայում: Եղել է զորամասի լավագույն հրաձիգը: Պատմել է, որ միջզորամասային մրցույթի առաջադրանքը եղել է կոճղի վրա ասեղների միջոցով շարված ծխախոտի գլանակներին կրակելը, եւ որ ինքը՝ 5 փամփուշտից խոցելով 4 գլանակ, դարձել է հաղթող:

1917թ. դեկտեմբերի 5-ի Երզնկայի զինադադարից հետո ռուսական զորամասերը քայքայման շեմին էին, իսկ ազգամիջյան հարաբերությունները խիստ սրված էին Նախիջեւանում, Զանգեզուրում, Ղարաբաղում: Այդ ժամանակ Հակորը լուր է ուղարկում Թեւոսին՝ հորդորելով վերադառնալ եւ հնարավորության դեպքում զենք բերել: Նախիջեւանի տարածքում արդեն վխտում էին տանկական զորախմբերը, եւ անցումը հեշտ չէր: Ազերի մի վանաական, փոխհատուցելով Թեւոսի երբեմնի արած լավությանը, իր կառքով զիշերը նրան ու զանգեզուրցի իր ընկերներին գենքերով տեղափոխում է Օրդուբադի եւ Քյոթամի միջակայք: Լուսաբացին շարունակում են ճանապարհը՝ նպատակ ունենալով տեղաշարժվել լեռնային արահետներով:

Դեռ նոր էին քայլել դեպի լեռներ, երբ սիսիանցի ընկերը, անհրաժեշտությունից ելնելով, ետ է մնում, շարունակում են դանդաղ բարձրանալ ու հանկարծ նկատում են սիսիանցու ուղղությամբ սլացող 50-ի հասնող տանկական (թուրքական) հեծելազորը: Հանուն ընկերոջ փրկության՝ որոշում են 6 հոգով մարտի բռնվել թուրքերի հետ: Հարմար դիրքավորվում են, բառացի հիշում եմ պապիս խոսքերը. «Կանչեցի մեզ դեռ չնկատած թուրքերին եւ ասացի՝ եկեք առանց արյուն թափելու հեռանանք միմյանցից. թուրքերն անակնկալի եկան, իջան ձիերից, դիրքավորվեցին եւ սկսեցին կրակել մեր ուղղությամբ, ասացի՝ պրիցելները դրեք 4-ի վրա՝ պատասխանում ենք. ուր գլուխը քարի ետեւից հանում էր՝ կրակում էինք, փափախը գլորվում էր»:



Տեւական մարտից հետո թուրքերը, զոհեր տալով, փախուստի են դիմում: Կրակոցներից անաբեկված, չհասկանալով, թե ինչ է տեղի ունենում, տեղանքին անծանոթ սիսիանցի ընկերն Արաքսի ափով դեպի Մեղրի է փախչում: Ընկերները ստիպված փոխում են լեռնային արահետներով գնալու որոշումը եւ առաջ շարժվում Արաքսի ափով: Սիսիանցին հասնում է փոստ եւ հեռախոսով Կարնեւան փոխանցում իրեն հայտնի եղելությունը, նաեւ այն, որ Թեւոսն ընկերների հետ կռվի է բռնվել թուրքերի դեմ: Գյուղը ոտքի է ելնում, երիտասարդությունը՝ Հակորի գլխավորությամբ ցանկանում է սարով գնալ Թեւոսենց օգնության, մեծերն առարկում են՝ հիմնավորելով, որ արդեն մութ է, գնալն անիմաստ է, եւ եթե Թեւոսը ողջ լինի, կգա ու կհասնի, միակ վտանգը «Ընգզի տակի» սառույցն է, ավելի լավ կլինի՝ տանենք այնտեղ խարույկ վառենք ու լուսավորենք սառած ճանապարհը, որ փորձանքի չգան: Ահա այս վիճաբանության ընթացքում հեռախոսը նորից է զանգում ու ազդարարում Թեւոսենց փոստ հասնելու լուրը: Փոստը գտնվում էր Արաքսի ափին՝ բլրի վրա, մինչ այժմ պահպանված քարվանսարայում: Հակորը երիտասարդների հետ ձիերով ու ջորիներով գնում է տղաներին բերում, ու ամբողջ գիշեր գյուղովի ճիչ են անում: Ակնհայտ է՝ այդ շրջանում Օրդուբադում գործելն այնքան վտանգավոր էր, որ Հակորը դրանից հետո գյուղում էր մնում:

Հիշում եմ նաեւ, որ պապս պատմում էր, թե ծառայության վերջին շրջանում հրամանատարն իրեն միշտ հորդորում էր զգույշ լինել, զորամասի տարածքից դուրս չգալ եւ անգամ կազարմայում պատուհանի դիմաց չկանգնել, որովհետեւ թուրքերը որոշում ունեին լավագույն հայ հրաձիգին ոչնչացնելու: Այս պատմությունից կրկին պարզ է դառնում, որ այն ժամանակ ազերիները Նախիջեւանում դրության տեր են եղել:

1918թ. հուլիսին Անդրանիկն արդեն Զանգեզուրում էր՝ կարծես թե Նախիջեւանում հայերի պարտությունը գիտակցած: Անդրանիկի մուտքը Զանգեզուր՝ նպաստեց համաժողովրդական համախմբմանն ու ինքնապաշտպանական զինված խմբերի ձեւավորմանը: Ցարական Ռուսաստանի մարդահամարի տվյալներով՝ այդ շրջանում Զանգեզուրում ազերիները հայերից մի քիչ ավելի էին: Շուրջ մեկ տարի Զանգեզուրում կատարելով հսկայածավալ աշխատանք, Հայաստանի ղեկավարության հետ ունենալով անհաղթահարելի քաղաքական տարաձայնություններ՝ Անդ-

ռանիկը հեռացավ Հայաստանից: Պապս հպարտությամբ հիշատակում էր, որ երկու անգամ անձամբ է հանդիպել Անդրանիկին:

Գարեգին Նժդեհը եղավ Անդրանիկի թողած ժառանգության զարգացնողը: Նրա գլխավորած համաժողովրդական պայքարի արդյունքում Զանգեզուրը Հայաստանի անբաժանելի մասը կազմեց: Նա միշտ գովասանքով է արտահայտվել մեղրեցիների, այդ թվում՝ կարնեանցիների քաջության ու հավատարմության մասին:

Մեջբերենք պատմական հիշատակումներ.

«Վարհավար, Կուրիս, Ազարակ եւ Գուտեմնիս, շորս գիւղերէ բաղկացած Արեւիի այս հերոսական շրջանը ընկած էր Ալանգեազ լեռան արեւելեան կողին վրայ:

Սեպտեմբեր 8-ին երկու թուրք պատուիրակներ հոն կը տանին Խորհրդային Հրամանատարութեան վերջնագիրը.

«Անմիջապէս մաքրել Արաքսի ափին վրայ ձգուած խնուոին եւ հնարաւորութիւն տալ Խորհրդային Ատրբէջանին միանալու Նախիջեւանին: Պատուիրակներու հեռանալէն Ի՛նչ յետոյ Կարնեան կը հասնի Նժդեհը, որուն ներկայութիւնը բաւական կ՚ըլլար կռուի ոգեւորութիւն կապելու նաեւ հերոսներու այս բոյնը»:

Հիշատակման արժանի է պարսկական կառավարության աջակցությունը Նժդեհի գործունեությանը.

«Վերջին յաղթութիւններէն օր մը վերջ Մուքալիմ Սաֆրանկ Խան ցանկութիւն կը յայտնէ տեսակցիլ հրամանատար Նժդեհի հետ: Նժդեհ Կարնեանի մէջ կընդունի երիտասարդ Խանը, որ կը յայտնէ թէ՝ «Եկած է իր կառավարութեան կողմէ ուրախութիւն յայտնելու վերջին յաղթութիւններու առիթով»:

Օգտուելով առիթէն, Նժդեհ կը խնդրէ, որ Պարսիկ Կառավարութիւնը թոյլատրէ Գենուազի եւ Թաւրիզի միջեւ Կապարգողթի ներկայացուցիչներուն երթեւեկը: Առաջարկը կընդունուի, եւ նոյն օրն իսկ Գ.Տ.Մ. որպէս Նժդեհի ներկայացուցիչ՝ որոշ յանձնարարութիւններով կանցնի Ատրպատական:

Հետեւեալ օրը տեսակցութիւն մը տեղի կունենայ նաեւ Խանին եղբօրը հետ, որ թշնամիին Օրտուբաղի շարժումներուն նկատմամբ Գենուազը իրազեկ պահել կը խոստանայ»:

«ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆԸ.



Սեպտեմբերի 17-ին Ալանգեազի ուղղութեամբ կը լսուին թշնամիին լեռնային թնդանօթներու ձայները: Շղթայազերծված իր նոր կռիւին մէջ յաղթական դուրս գալու նպատակով արեւելեան ճակատի վրայ (Շիւանաձոր), ան կը պահէր խոր լռութիւն:

Կռահելով ռազմական այդ խաղը, հրամանատար Նժդեհ դէպի Շիւանաձոր կը փութացնէր փոխգնդապետ Մ. Օ.-ի անհրաժեշտ հրահանգները, իսկ ինքնին կանցնէր Կարնեանի ճակատը:

Երկրորդ օրը, երեկոյին, կռիւը դեռ կը պահէ իր սաստկութիւնը: Արաքսի վրայով պարսիկները կը տեղեկացնեն թէ թշնամի բազմահազար խուժան մը թալանի եւ կողոպուտի նպատակով կռուող զօրին հետ միասին կը շարժուի դէպի Գենուազ:

Հրամանատար Նժդեհ ըմբռնելով վայրկեանին լրջութիւնը կը փութայ դիրքէ դիրք, կը խրախուսէ, կը քաջալերէ Գենուազի իր քաջարի մարտիկները: «Եթէ այս անգամ էլ մեզ չըյաջողուեց ի դերեւ հանել թշնամու նիգերը, վաղն էլ հայրենիք չենք ունենայ»,– կ՚ըսէ զօրին, որ խորապէս կըմբռնէ այդ խօսքերուն իմաստը:

Իրենց կարգին Փրկութեան Կոմիտէի անդամներ գիւղերն ինկած՝ դէպի դիրքերը կ՚ուղարկեն վերջին փամփուշտն ու զէնք կրելու կարող ամէն մարդ: Գենուազ ըմբռնած վայրկեանին բովանդակ լրջութիւնը՝ վճռած էր տեղի չտալ երբեք:

Կ՚սկսին կռիւներ արեւելեան ճակատին վրայ եւս, ուր մէկ քանի անգամ ձեռքէ ձեռք կանցնին դիրքերը: Սեպտեմբեր 25-ի լուսաբացին Գենուազի հայ մարտիկները գիշերային զօրեղ գրոհով մը կը ջարդեն թշնամի զօրքը, որ բազմաթիւ դիակներ ձգած կը փախի դէպի Օրտուբաղ»:

«Հոկտեմբեր 1 հրամանատար Նժդեհը հետեւեալ գրութիւնը կը ղրկէր Երեւան.

Հ.Հ. ՋԻՆԻՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Գենուազում կռիւները շարունակում են: Թշնամին սեղմում է մեզ երկու կողմից՝ Շիւանաձորի եւ Օրտուբաղի: Կասկածից դուրս է, որ Ատրբէջանը որոշել է կապիլ Նախիջեւանի հետ, վերացնելով մէջտեղից Գենուազը:

Թշնամին իր ուժերը սկզբում կենտրոնացրած էր Շիւանաձորի ճակատում. այժմ, շրջանցելով Շիւանաձորի զորամասերը, կրկնակի յամառութեամբ նա գործում է Օրտուբաղից:

Մեծամասնականներուն մեծապէս աջակցում են ու անմիջական մասնակցութիւն ցոյց տալիս տեղական թուրք մասսաները եւ տաճկական զորքերը – վերջինս Օրտուբադի ճակատում: Մենք թնդանօթներ չունենք:

Թշնամու կողմից գործում են 4 թնդանօթ եւ մեծ քանակութեամբ գնդացիրներ: Դենուազի մի բուռ հայութիւնը հերոսութեան աննախընթաց օրինակներ է ցոյց տալիս: Յաջողութիւնը մինչեւ օրս մեր կողմն է: Թշնամին տուել է մեծ կորուստներ. վերցրել ենք զերիներ եւ աւար:

Բոպէ առ բոպէ՝ սպասելով ձեզանից որոշ հրահանգներ, ցուցմունքներ մեր անելիքի մասին, ժամանակավորապէս առաջնորդում ենք հետեւեալ երկու սկզբունքներով.

1.– Արաքսի ափը (Շիրանամոր–Մեղրի–Կարճեւան, որոնցից վերջինը գտնում է Նախիջեւանի գաւառում) ոչ մի գնով չը զիջել թշնամուն, որովհետեւ դա միակ ճանապարհն է, որով նա կարող է եւ կամենում է ուժ մատակարարել Նախիջեւանին, նախ՝ կանգնեցնելու հայկական առաջխաղացման վտանգը, ապա յետ շպրտելով հայկական զորքերը մինչեւ հին դեմարկացիոն գիծը, միանգամ ընդ միշտ միանալ Քեմալ փաշայի զօրքերին:

2.– Ժողովրդի ֆիզիկական ինքնապաշտպանութիւնը վերաճաս կոտորածների հանդէպ: Օրտուբադի ճակատում այսօր, թշնամին, չտեսնուած եռանդ է գործադրում պատռելու մեր շղթան: Ռմբակոծում են բոլոր ղիրքերը:

Ալանգեազի վրայ նկատում են թշնամու նորանոր ուժերի կուտակումներ: Բարձունքները գտնում են նրա ձեռքին: Մեր տղաները փամփուշտ, փամփուշտ եւ փամփուշտ են խնդրում: Արագացրէք օգնութիւնը:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ

Կարճեւան, 1 Հոկտեմբեր, 1920

ԲԱԽՏՈՐՈՇ ԳԻՇԵՐ

Դենուազի կռիւներու քառասներորդ գիշերը սուրհանդակը հետեւեալ գրութիւնը կը բերէր հրամանատար Նժդեհին.

ՍԻՐԵԼԻ ՆԺԴԵՀ

Հայաստանը ի վիճակի չէ Ձեզ ներկայումս ոէալ օժանդակութիւն ցոյց տալ: Դուք, ինչպէս մինչ այժմ, այնպէս եւ հիմա պիտի մեն-մենակ շարունակէք Ձեր հերոսական գոյամարտը:

Միայն գիտցէք, որ մեր եւ ամբողջ հայ ժողովրդի համակրանքը դէպի Ձեզ է:



Ե. ՄԻՐԱՔԵԱՆ

Ջոլ. 11 Հոկտեմբեր, 1920»

Թուրք զորավար Խալիլ փաշան՝ ռուսների հետ դաշնակցած, 1920թ. սեպտեմբեր–հոկտեմբերին հարձակումներ է նախաձեռնում Կարճեւան–Կամավաբերդի ուղղությամբ՝ նպատակ ունենալով նեղել Մեղրին Արաքսի երկարությամբ, միացնելով Նախիջեւանն Ադրբեջանին: Կազմակերպված դիմադրության արդյունքում հարձակումները ետ են մղվում:

Այդ մարտերին ակտիվորեն մասնակցել է նաեւ պապս: Հիշում եմ մեծերի պատմածն այդ ժամանակաշրջանի մասին, բան որի՝ զենք բռնելու ունակ տղամարդիկ բոլորը դիրքերում էին, մյուսներ սպասարկում էին: Գյուղի գլխով թնդանոթի արկեր էին թռչում ու պայթում գյուղի դիմաց, նաեւ Քաշվանում: Նույնիսկ ոմանց թվում էր, թե Քաշվանի փոսը դրա հետեւանքով է առաջացել: Հետաքրքիր կապ է գործել գյուղի ու դիրքերի միջեւ: Այդ գծի վրա միմյանց կանչը լսելու հեռավորությամբ մշտապես մարդիկ են հերթապահել եւ անհրաժեշտ տեղեկությունն այդ կանչի շղթայով արագ տեղ են հասցրել: Տատս պատմում էր, որ իր նշանած Թեւոսը դիրքերում էր, երբ կանչն ազդարարեց. «Թե՛ռ՝ սր՛ շ՛ըրջա՛պա՛տմա՛ն մե՛ջ ա՛ ը՛նկե՛լ, դու՛ռս ա՛ ե՛կե՛լ, լա՛վ ա՛ պրրծե՛լ...»: Այդ մարտերի թեմության մասին կարելի է պատկերացում կազմել 1931թ. ծնված մորս հիշողությունից: Նա ասում է, որ ամռանը Իլչաթաղ օթայում իր մանկության շրջանի երեխեքը ոչխար-ոչխար էին խաղում մոտակայքից՝ հատկապես «Գոռուտից» հավաքած փամփուշտների տարատեսակ պարկուններով: Յուրաքանչյուր երեխա ունենում էր շուրջ հազար պարկուճ, մասնավորապես իր եղբայրն ունեցել է 1000-ից ավելի: Մորս դասարանում սովորում էր 19 երեխա:

Կազմակերպված դիմադրության հետ հաշվի են նստում:

Հայաստանի խորհրդային կառավարությունը պատվիրակություն է ուղարկում Լեռնահայաստան՝ Նժդեհին հավատացնում, որ Զանգեզուրը կհայտարարվի Հայաստանի անբաժանելի մաս: Միայն այդ պայմանով 1921թ. հունիսի 3-ին Նժդեհը համաձայնում է զենքը վայր դնել:

Հայաստանի կառավարությունը հունիսի 13-ին, հանդես գալով հայտարարությամբ, Նժդեհին հավաստիացնում է, որ նրա պահանջը կկատարվի: 1921 թվականի հուլիսի 10-ին Նժդեհն անցնում է Արաքսը:

Մեռոնմ հիշում էին, որ Նժդեհն Իրան անցնելուց առաջ շուրջ 40 օր ապրել է Կարճեւանում, փաստորեն՝ հունիսի 3-ից հուլիսի 10-ը: Տեսակետ կա, որ Նժդեհին համոզողներից է եղել Վաղարշակ Տեր-Վահանյանը (հայտնի շախմատիստ Ռաֆայել Վահանյանի պապիկի եղբայրը), որը կարճեւանցի էր: Նաեւ այդ պատճառով էր, որ նա, զինադադարից սկսած 40 օր, սպասեց Կարճեւանում, նախ՝ որպեսզի համոզվի, որ խոստումը կատարվում է, եւ որպեսզի Արաքսը բարակի, ու հնարավոր լինի անցնել:

Տեր-Վահանյանը հայտնի մտավորական ու կուսակցական գործիչ էր, պարբերաբար հրապարակախոսական հոդվածներով հանդես է եկել ստալինյան բաղամականության դեմ, երեք անգամ հեռացվել կուսակցությունից ու վերականգնվել, 1936-ին Զինովեւի եւ 14 այլ մտավորական գործիչների հետ, այսպես կոչված, «մոսկովյան առաջին պրոցեսով» Ստալինի եւ այլոց դեմ տեռորիզմի մեղադրանքով գնդակահարվել է՝ խոշտանգումների հետեւանքով ընդունելով «մեղքը»:

Նժդեհի հետ Արաքսն անցան նաեւ իր հավատարիմները, այդ թվում՝ նրա զինակից մի խումբ կարճեւանցիներ, նաեւ պապս՝ կնոջ՝ Արծվիկի ու եղբոր՝ Հակոբի հետ:

Տատս պատմում էր գետանցումը: Փայտից պատրաստված լաստանավ, որի պարագծով ամուր կապված էին փչած տիկեր, այդ հարմարանքը կոչել են փահլա, որը պարանով ձգել են ափից ափ՝ անցկացնելով մարդկանց ու բեռները:

Մեռոնմ մնացել են Մուժումբարում (Ղարադաղի կենտրոնը, այն ժամանակ հայաբնակ), իսկ Նժդեհը շարունակել է ճանապարհը դեպի Թավրիզ:

Բնակիչները հարգանքով են ընդունել հյուրերին: Մի կին մոտեցել է Թեւոսին ու Հակոբին, ուշադիր զննել եւ ասել, որ իրենք երկուսով Մաթուսաց տղերքից են եւ ներկայացել որպես Համբարձումի քույր Ջավահիր: Մեռոնմ մի քանի ամիս ապրել են հորաքրոջ տանը, հետո նկել է հայրը՝ Դավիթը, եւ հայտնել, որ բոլշեւիկները համաներում են հայտարարել, ու միասին վերադարձել են գյուղ...

Վերադարձավ ու թվացյալ խաղաղության պայմաններում շարունակեց զբաղվել խաղողագործությամբ, գինեգործությամբ, մեղվաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, որսորդությամբ... Հոգում էր բազմաշունչ ընտանիքի հոգսերը (1921–1944 թվականներին ունեցել է 10 երեխա՝ 6 տղա եւ 4 աղջիկ):



Բացառիկ խաղողագործ էր, բոլորը մատնացույց էին անում Թեւոսի Լենջի այգին, մեծ հասակում անգամ Վալամի առվով ջուր էր տանում ու այգին ջրում:

Հայտնի որսորդ էր: Խաչի համակին՝ շոր ու վայրի ժայռերի մեջ մի աղբյուր կա, կոչվում է Թեւոսի աղբյուր: Ժայռածերպի մեջ ծառ կա, այդ ծառի տակ՝ անշան ջուր: Ամռանը շոգից տապակած հասնում ես այդտեղ, նստում ծառի ստվերում, ծղոտի մի կտորով կապակցում խոնավությունը ջրամանի բերանին, ու ջուրը կաթ-կաթ կուտակվում է ջրամանում: Խմում ես ու օրհնում աղբյուրը հայտնաբերողին: Աղբյուրից սկիզբ է առնում դժվարանցանելի լեռնային մի կածան, որով հազվագյուտ մարդիկ են անցել: Այդ անցումն առաջինը հաղթահարել է Թեւոսի որդին՝ հայրս, եւ նրա անունով կոչվում է Ղեւի շահիմ:

Պապս պարբերաբար ենթարկվել է հալածանքների ու արժանապատվության ոտնահարման: Թեեւ ժամանակին գիտակցելով վտանգը, տարել էր իր ու եղբոր անունից կամավոր գեներ էր հանձնել համապատասխան մարմիններին, բայց նրան պարբերաբար անհանգստացրել են ու բռնական գործ սարքելու փորձեր արել:

Հիշում եմ այդպիսի մի պատմություն:

Իր հորեղբայր Մկրտիչի մեռնելուց հետո, իբր պատահաբար գյուղ գալիս՝ միլիցա Կարոն նկատում է, որ Թեւոսի այգում մի իր է շողշողում, հետաքրքրությունից դրդված գնում է եւ տեսնում՝ «մոսին» հրացան է... Արձանագրում են ու Թեւոսին ձերբակալում:

Թեւոսը ճանաչում է հրացանը՝ ասելով, որ դա պատկանում է իր հորեղբորը, որն այդ հրացանի գտնվելու վայրի մասին իր, Թումանաց Արամի ու Հակոբի ներկայությամբ ասել է որդուն: Որդին բերել է հրացանը եւ հարցրել, թե ինչ պիտի անի, իսկ Թեւոսը խորհուրդ է տվել, որ որդին տանի ու հանձնի համապատասխան մարմիններին: Միայն Թումանյան Արամի ու Հակոբի ազնվության ու քաջության շնորհիվ, որոնք մինչեւ վերջ հաստատել ու պնդել են Թեւոսի ցուցմունքը, պապս այդ անգամ չի բանտարկվել:

Տատս պատմում էր, որ Հակոբին բանտարկելուց հետո հատուկ գրված սցենարով թատերական ներկայացում են կազմակերպել, ուր ծաղրուծանակի են ենթարկել «կուլակներին»՝ Հակոբի ընդգծված կերպարով, եւ ստիպել են, որ ներկայացումը դիտի Թեւոսը: Ասում էր՝ լացով եմ

Թեւոսին զսպել, ասել եմ՝ ես չեմ կարող երեխաներին մենակ մեծացնել, ու հազիվ եմ հետ պահել ներկայացման կազմակերպիչներին մաուզերով ոչնչացնելու մտքից:

Նման բանաբերություններ գյուղում կլի են եղել. օրինակ՝ կոլխոզի նախագահ Քաշալաց Մուրադն իր եղբայր Բենիկի միջոցով վառում է խոտի դեզը և մատնացույց անում Մարուքաց Շավարշին, սակայն, հակառակի պես, Շավարշը հրդեհի ժամանակ գյուղից բացակայած է լինում, ինչն էլ բարի մարդկանց աջակցությամբ ապացուցվում է: Իհարկե, Մուրադն ու Բենիկը մնում են անպատիժ եւ շարունակում թունավորել մարդկանց կյանքը:

Նույնիսկ հիշատակվում է դպրոցականների հետ կապված մի պատմություն:

Յոթամյան ավարտած ու միջնակարգը Մեղրիում սովորող երեխաներն ամեն օր ոտքով գնացել են Մեղրի ու վերադարձել մի արահետով, որն անցնում էր հետեւյալ վայրերով՝ Օրդիգալ–Քաշվան–Ըրվը անձեի յոխշ–Մանդած խաչի արտեր–Մորդի ենի–Ծակ քար–Զայլաղ–Մորդի քաշվան–Փոքր թաղ:

Մի օր, դասերից այդ հանապարհով վերադառնալիս, փչացած ընտանիքների ներկայացուցիչ աշակերտներին առաջարկում են որոշ հեռավորությունից քար նետել պայուսակի վրա, որ տեսնեն, թե ով է ավելի դիպուկ: Իրենք վրիպում են, Գալից Սոսիկի եղբայր Մոկուճի նետած քարը դիպչում է պայուսակին: Հետագայում քննությամբ «պարզվում է», որ Մոկուճը գիտակցաբար քարը նետել է ոչ թե պայուսակի, այլ պայուսակում դրված առաջնորդ Ստալինի նկարի վրա: Պատանուն ազատազրկում ու ամսորում են:

Ո՞վ գիտի՝ քանի անմեղ մարդ է կյանքից զրկվել կամ զրկանքների ենթարկվել բոլշեւիկ իշխանավորների ստոր ջանքերով:

Կոլեկտիվացումը Կարնեւանում սկսվել է 1935 թվականին:

Նախ՝ ողջ Հայաստանում պարենաբերի բերը խիստ ծանրացնում են, այնուհետեւ սկսում անհատական ճնշումները:

Տատս պատմում էր, որ հարեւան իշխանավորն ամեն օր ստիպում էր տալ ձվի հարկը, որն իրենց ունեցած հավերի հնարավորությունից բարձր էր: Շաղից-փոքրանքից հետու մնալու ձգտումով հարեւան-բարեկամներից պակաս լրացնելով՝ տալիս է: Երեկոյան պատահաբար լսում



է իշխանավոր հարեւանի խոսակցությունը կնոջ հետ. «Ա՛ռ, ձվածեղ արա, թող երեխեքը կուշտ ուտեն, շուզողի աչքն էլ հանեն»:

Տատս նայում ու տեսնում է նույն տարայով իր հանձնած ձվերը:

Պապիս եղբայր Արտաշես Մաթեւոսյանը, որն այդ ժամանակ արդեն դասախոսում էր Գյուղատնտեսական համալսարանում, ամաչելով պատմում էր, որ իրեն՝ որպես ծագումով մեղրեցի մտավորական, գործուղեցին Մեղրի՝ որպես կոլեկտիվացման քարոզիչ: Մեղրի հասնելուն պես ռայկոմի քարտուղարն ասում է, թե առաջինը միասին գնում են Կարնեւան:

...Միանգամից մտնում են դահլիճ, որտեղ հավաքել էին համագյուղացիներին՝ որոշում կայացնելու:

Արտաշի հայրն ու հորեղբայրները ժողովին չեն մասնակցել, ներկա են եղել միայն Թեւոսն ու Արտաշի քույրը՝ Ազնիվը: Արտաշը գլխիկոր նստել է, չի խոսել: Ժողովի վերջում քվեարկության են դնում կոլխոզ մտնելու հարցը: Ազնիվը՝ հանուն բեմում նստած եղբոր, կողմ է քվեարկում: Թեւոսը բոյկոտում է ու ցուցադրաբար լքում դահլիճը: Քանի որ արդեն ուշ էր, եւ քարոզիչները պիտի գիշերեին գյուղում, քաղաքավարությունից դրդված՝ Արտաշն առաջարկում է քարտուղարին գիշերել իրենց տանը: Վերջինս մերժում է՝ բացատրելով, որ գյուղսովետի նախագահին արդեն խոստացել է, ինչն, իհարկե, Արտաշին շատ է ուրախացնում, որովհետեւ զգում էր գլխին գալիքը: Արտաշը հրոչ ուղեկցությամբ մտնում է տուն՝ Թեւոսի հետեւյալ խոսքերի վրա. «...բա մեր Ազնիվը, որ ձեռքը չբարձրացրեց, ինչ էր մնում խանչալս հանեի ու ձեռքը կտրեի»: Հայրն ու հորեղբայրները բարեւին «պատասխանում են» անխոս, ջղային ու սառը հայացքներով: Ոտքի է կանգնում Դավի ափին՝ հորեղբայրը, մոտենում Արտաշին ու ասում. «Արա՛, էք այգիները մենք էս ձեռքերով ենք սարքել՝ քրքիջող ենք արել (հողը քարերից մաքրել ենք), տնկել ենք, շալակով ջուր ենք տարել ու կպցրել, մեր եկամուտը մեր հետեւողական շարշարանքի արդյունքն ա, հիմա էդ այգիները վերցնում ե՞ռ տաք, Մըգիչն»: Ասում է ու վերջակետ դնում ապտակով... Արտաշը չի ընդունում ուտելու առաջարկը՝ ոչ թե ապտակի ցավից ու վիրավորանքից, այլ, հարազատների հետ լիովին համամիտ լինելով հանդերձ, նրանց օգտակար լինելու անկարողությունից: Գլուխը մտցնում է վերմակի տակ ու սկսում հեկեկալ: Հիշում եմ՝ ինչպես էր նկարագրում ապտակելու պա-

ին. երկու ափերը իրար կպցրած ցույց տալով Դավի ափի բաբի մնծությունը՝ ասում էր՝ էնպես հարվածեց, որ աչքերից կայծեր թռան:

Իսկ Մըգին իր իսկ անբանության հետեւանքով եղել էր գյուղի ամենաանհարակ մարդը, որը, սակայն, այդ շրջանում արդեն գյուղի կատարածուն էր:

1936 թվականին՝ մեկ տարվա մեջ Դավիթ, Ալեքսան եւ Մկրտիչ եղբայրները կնքեցին իրենց մահկանացուն:

...Իհարկե, մինչեւ վերջ ձգձգելով՝ նախ հանձնեցին հողերը, եւ հերթը հասավ անասուններին: Տատս պատմում էր. «Անասունները հանձնելու նախորդ գիշերը Թեւոսն ինձ ուղարկեց ինելու, ինքը մեկը մյուսի ետեւից ծխում էր: Առավոտյան արթնացա, ի զարմանս ինձ՝ Թեւոսը խոր քնած էր, իջա ըմբոթախ (սենյակ, ուր պահում էին սենդամքերը), տեսնեմ՝ վեց մաշկած ոչխարի ջամդամ (մարմին) կուներից կախված են, սարսափած վազեցի, կանչեցի Թեւոսին, թե՝ վեր կաց ու տես..., իսկ վերջինս ասաց, որ պետք չէ աղմկել, ինքն է արել, շրջվեց ու քնեց»: Այդ ժամանակ նրանք արդեն վեց երեխա ունեին:

Բանող անասուններ, կովը, այծերն ու ոչխարները տարան միանգամից, մնացին մեղուները: Թեւոսին էլ կարգեցին կոլխոզի չորան ու քշեցին սարերը: Տատս հասկանում ու հետեւում էր մեղուներին, սակայն արդեն ամառ էր, եւ մեղվաբնտանիքները ենթակա էին տեղափոխման բարձր գոտի: Տատս որդուն՝ հորս, ուղարկում է կոլխոզի նախագահի մոտ, ուր վերջինս ընդառաջի, Թեւոսին փոխարինող ուղարկի, որ նա մի քանի օրով գա ու զբաղվի մեղուներով: Պատասխանը լինում է. «Թեւոսը չի գալու, Թեւոսին ուղարկել ենք, որ էնտեղ սատկի, մեղուներն էլ էստեղ սատկեն»: Մեղուները ոչնչացան: Հայրս ընդամենը 13–14 տարեկան էր:

Մովսիսաց Վարդանը, որը նաեւ նանաչված հյուսն էր, հրաժարվեց մտնել կոլխոզ: Կոլխոզի հիմնադիր նախագահ Ջավադաց Կեւիի տղա Գաբրիելի (նրա նախաձեռնությամբ է քանդվել Մուծ խաչը) հարցին՝ երբ ես մտնելու կոլխոզ, հակադարձել է՝ ինչու պիտի մտնեմ, ու իբրեւ հիմնավորում՝ ավելացրել՝ ինձ փայտ տուր, եւ այդ փայտից քեզ նման մարդ կպատրաստեմ:

Վարդանին տարան, բայց, քանի որ կոլխոզ մտնելն օրենքով կամավոր էր, իսկ չմտնելը, բնականաբար, հրեռեն ոչ հետապնդելի, ուստի



մեղադրանքի որոնումներով սկսում են փորփրել անցյալը: Դիպչում են Նժդեհի գլխավորած ինքնապաշտպանական մարտերի ժամանակ ցուցաբերած ակտիվությանը: Վարդանն արդարանում է՝ ասելով, որ այդ շրջանում ակտիվ են եղել բոլորը, եւ հարցնում է, թե այդ դեպքում ինչու են հատկապես իրեն մեղադրում: Նրանից կոնկրետություն են պահանջում՝ թվարկել բոլորին: Վարդանս հարկադրված թվարկում է մի քանի անուն, այդ թվում՝ Թեւոսի ու Հակոբի...

Բոլորին տանում են, ընդ որում՝ Հակոբին Կիրովականից (Վանաձոր), ուր բանտարկությունից ու ախորից հետո նոր էր հաստատվել ու ապրում էր բնակավայրից չդացակայելու պայմանով: Մի տարի քաշ են տալիս Երեւանի բանտում: Երկուսին, որ, հավանաբար, խոշտանգումներին չդիմանալով, ընդունել էին մեղքը, գնդակահարում են (Բոլբոլաց Գրիգորին ու Ղինից Կարապետին): Վարդանին 10 տարով ուղարկում են Սիբիր: Թեւոսը, Հակոբն ու Կիլիկիից Արամն ազատ են արձակվում: Եղբայրները, որ նախատագրի բերումով 10 տարի միմյանց չէին տեսել, հանդիպում են բանտից դուրս:

Բանտային մեկ տարվա ընթացքում նրանք միմյանցից անտեղյակ կլինեին, եթե պատահաբար բանտախցի պատուհանից Թեւոսը նկատած չլիներ քննության տարվող Հակոբին, իսկ ազատ արձակելիս նույն քննիչը Թեւոսին Հակոբ էր ասել, Իսկ Հակոբին՝ Թեւոս, հավանաբար գիտակցաբար՝ հուշելու համար:

Միմյանցից կարոտ առնելով՝ եղբայրները գնում են փոքր եղբոր՝ Արտաշի տուն...

Ճաշելիս, երբ Ալի պտոզին՝ Արտաշի մայրը, խոհանոցում էր, եւ եղբայրներով մենակ էին, տարարյուն Թեւոսն ասում է, որ թեեւ մի քանի զենք է հանձնել, բայցեւ այնպես՝ մեկը, որ Նժդեհի նվերն էր, պահել է «Խաչի ձորու մուծ բոշնի քմակի քարի ծակումը», եւ որ այս ամենին վերջ դնելու նպատակով որոշել է այդ զենքով վերացնել գյուղացիներին հալածող բոլշեւիկներին: Հեղինակավոր Հակոբն ու Արտաշը հազիվ են նրան հետ պահում այդ մտքից:

Պապս մի քիչ նեղված էր Վարդանից՝ իր ընկերոջից, բնավ ոչ իր անունը տալու համար, գիտակցում էր, թե ինչ վինակի մեջ է եղել հարցաքննվող Վարդանը: Հասկանում էր, որ անուն չտալ չէր կարող, բայց նեղված էր, որ Վարդանը տվել էր արդեն հալածված եղբոր անունը:

Նրա բանտարկության ընթացքում ավագ որդին՝ Բագրատը, լքում է տեխնիկումը, իսկ հայրս դպրոցը թողնում է 9-րդ դասարանից, որպեսզի հոգան ընտանիքի հոգսերը:

Պապս դեռ չէր հասցրել վերլուծել, թե ինչպես անցավ մահվան ու կյանքի հատման գծով եւ ողջ մնաց, վրա հասավ պատերազմը: Երեք որդիները միմյանց հետեւից զորակոչվեցին: Երկրորդը՝ հայրս, Մեղրիով անցնող Ջուլֆա-Մինջեւան երկաթուղու հատվածի գործարկմամբ պայմանավորված, դրան հարող բնակավայրերից զորակոչված ու տվյալ գնացքում եղած մյուս զորակոչվածների հետ Սոչիից վերադարձվեց եւ կցվեց երկաթուղուն՝ մինչեւ պատերազմի ավարտը շահագործմանը մասնակցելու պայմանով: Երրորդը՝ Լեւոնը, զոհվեց 1943թ. դեկտեմբերին՝ 18 տարեկան հասակում: Առաջինը՝ Բագրատը, վերադարձավ պատերազմի ավարտին:

Սեփականությունից զրկված պապս ակամայից դարձել էր կոլխոզի հովիվ, իսկ տատս՝ կթվորուհի: Իրենց իսկ խոստովանությամբ՝ պատերազմի ընթացքում կոլխոզի աշխատանքի դիմաց ստացած չնչին եկամտի պայմաններում իրենց զավակները սովի կմատնվեին, եթե չլիներ որսի միսը եւ, որպես երկաթգծային, հորս ստացած հացի չափաբաժինը:

Որսի միսը միանգամից էր լինում ու շատ: Տատս պատմում էր, որ միսն ապխտելով էին պահում: Փափուկ միսը ձեռում էին բարակ ու երկար կտորների, կողերը՝ մսախառը, հատ-հատ անջատում էին իրարից ու ողնաշարից, կտոր առ կտոր առատ աղով պատում էին, կախում ու չորացնում: Ճաշ պատրաստելուց առաջ դնում էին ջրի մեջ, աղը մսից դուրս էր գալիս, կտրտում էին ու եփում:

Ժամանակն անցնում էր պապուտատի կամքից անկախ. մի օր էլ սթափվեցին ու տեսան, որ տանը երկուսով են մնացել: Արդյունաբերությունն ու բաղամները երեխաներին կլանել ու տարել էին՝ յուրաքանչյուրն իր ընտանիքով, իր տնով, իր գործով:

Միասին մշակում էին Ճմկոտի վարելահողը: Լենջի խաղողի այգու վազերին ոչ ոք մատով դիպչելու իրավունք չուներ՝ վազերը մեկ առ մեկ ճանաչում ու հատ առ հատ շոյում էր պապս: Ընդհանրապես դա ավելի շատ մշակույթ էր, քան մշակություն:

Մի անգամ հայրս՝ հորաքրոջ որդու խորհրդով, էտել էր տան դիմացի խաղողի թարման եւ հպարտությամբ հրավիրել հորը՝ գնահատելու: Եկել նայել էր ու ժպտալով ասել. «Քի նման ռաշպար Շրնանուրու Ֆոլարը լիա» («Քեզ նման այգեգործ Շռնանուրի թփերում շատ կան»՝ նկատի ունենալով վայրի կենդանիներին):



Մի երեսուն գլուխ ոչխար ու այծ էին պահում: Լույսը չբացված՝ արթնանում էր, մոտենում պատի մեջ հանված հին պահարանին, բացում բնկուզենուց պատրաստված դռան փեղկերը, հանում իր ձեռքով հանդարտ թորած խաղողի օղին, լցնում մի 50 գրամ, դանդաղ-դանդաղ խմում, շարքի մի կտոր դնում լեզվի տակ, հագնվում ու գնում գոմ՝ կենդանիներին արոտ արձակելու: Վերադառնում էր, լվացվում ու սկսում նախաճաշել:

Երեկոյան տատիկի հետ էին գոմ գնում՝ կենդանիներին կթելու ու տեղավորելու: Տատս, որ խաշնարած Ռուստամ Մելիք-Հովհաննիսյանի աղջիկն էր, շատ էր սիրում ոչխարաբուծությունը: Պատմում էր, որ հայրական տանն ապրելիս կարողացել է հատ առ հատ զանազանել 500 գլխից ավելի ոչխարներից յուրաքանչյուրին՝ անուններով եւ նրանց գառնուկներին:

Ու այսպես, իրենց արտադրած սեփական պարենով ու պետության կողմից տրվող չնչին թոշակով (պապս ստանում էր 7 ռուբլի 50 կոպեկ, տատս՝ որպես հերոսուհի մայր՝ 15 ռուբլի, պապս օրական ծխում էր երկու տուփ «Ավրորա», մեկ տուփը արժեր 14 կոպեկ, հացը՝ 20 կոպեկ, ձուն՝ 13 կոպեկ) ապրում էին՝ սպասելով կիրակի օրվան: Այդ օրը հավաքվում էին երեխաներն ընտանիքներով՝ ծնողներին ու միմյանց տեսակցելու:

Փորձում էին համոզել հորը, որ շարունակելու տարիքն արդեն անցել է, եւ որ պետք չէ անասնապահությամբ զբաղվել: Պապս խորհրդաստ ժպտում էր ու ասում. «Գուլա մի վախտ, որ կարկառը ծուտիլ ա, գիրիլիմ պանիր ա՝ եռիլիմ օտիլ» (կգա մի ժամանակ, որ ագռավը կծուտի, կիմանամ, թե պանիր ա, կվերցնեմ, կուտեմ)...

«Լույսը բացվի՝ բարին հետը», պապիս խոսքն էր: Ու այսպես ամեն օր՝ լուսաբացի բարու ակնկալիքով ապրեցին մինչեւ խոր ծերություն՝ ամեն պահ հոգու խորքում շնորհակալ Աստծուց ու «Մուծ խաչից», որ իրենց ուժ ու հնարավորություն տվեց անել առավելագույնը՝ 10 երեխաներից 9-ին ողջ ու առողջ հասցնել ինքնուրույն կյանքի:

Կյանքի վերջին տարիներին մի տխուր առիթով Արտաշը գյուղ էր եկել: Աբարողությունից հետո Արտաշին առաջարկում է բայլել գյուղից դուրս:

երբ գյուղից հեռանում են, հոգոց է հանում ու ասում. «Ըսուլու շատ բեն կա, խնդի իմ ասիմ, բայց մաո ըմ, բոնուր ըմ խուսիս, վխի իմ ասիմ՝ էյլը լիսի, ուդուր հետի ալ ըսիս չիմ» (ասելու շատ բան կա, բայց ծանր լսողության պատճառով բարձր եմ խոսում, վախենում եմ ասեմ՝ օտար մարդիկ լսեն, դրա համար էլ չեմ ասում):

Եթե ասեր, հավանաբար այս հիշողություններն ավելի հարուստ կլինեին...

Ուրեսզի հասկանալի դառնա, թե որքան դաժան է եղել ստալինյան մարդակեր մեքենան, հիշատակեմ եւս մեկ դեպք:

Ուսանող Արտաշն արձակուրդներին գյուղ է գալիս եւ գաղտնիության պայմաններում Թեւոսին պատմում, որ իրենց տաղանդավոր դասախոսներից մեկն իրեն ու մի երկու ուրիշ վստահելի ուսանողի մի գրքույկ է տվել թարգմանելու ու վերադարձնելու պայմանով, որտեղ, ի տարբերություն պաշտոնական տեսակետի, Նժդեհի մասին միայն դրականն է ներկայացված: Թեւոսն ուշադիր լսել է ու ասել.

«Ինչ որ կարդացել ես, բացարձակ նշմարտություն է, դեռ մի բան էլ քիչ է ներկայացված, բայց այդ մասին այլեւս որեւէ մեկի հետ չկիսվես, մեզ կկործանեն»:

Արձակուրդներից հետո Արտաշը Երեւան վերադառնալուն պես իմանում է, որ այդ դասախոսին ու գրքույկը կարդացած ուսանողներից մեկին անվերադարձ տարել են...

Պապիս սերնդակիցների կողմից Մեղրին պահպանելու նպատակով հաղթական պայքարից 70 տարի անց՝ Ղարաբաղյան շարժման շրջանակներում, նորից Մեղրիում նույն վիճակն էր՝ ազգամիջյան լարվածություն, Մեղրիով Ադրբեջանի ու Նախիջեւանի ֆիզիկական միավորման վտանգ: Յուրաքանչյուր մեղրեցու գերագույն նպատակը զենքի ձեռքբերումն էր...

1989թ. աշնանը եղբայրս՝ Նորիկը, Երեւանում այցելում է Արտաշես պապիկին: Վերջինս հարցնում է իրավիճակի մասին եւ, իմանալով իրողությունը, ասում է՝ թեւ որոշել էր պապիս զենքի գաղտնիքն իր հետ գերեզման տանել, բայց, անհրաժեշտությունից դրդված, փոխում է այդ որոշումն ու ասում է պապիկի զենքի թաքստոցի տեղը:

Հայրս չէր հավատում, նեղվում էր, ասում էր՝ հնարավոր չէ, որ նման բան եղած լիներ, ու հերս ինձ տեղյակ չպահեր: Հետո, իրեն սփոփելով,



հիշում էր, որ մեռնելիս ինչ-որ բան է փորձել ասել, բայց ուժը չի հերիքել, լսելի է եղել միայն «ս-ս-ս»-ն, ու ենթադրում էր, որ հավանաբար փորձել է «մոս-ս-սին» ասել:

Առավոտյան հորս հետ գնացինք խաչի ձոր՝ որոնումների: «Մուծ բոշնի» գոյություն չուներ: Բարձրանում էի ամեն մի հավանական տեղ՝ մատչելի թե անմատչելի: Ամեն մի բարդության հանդիպելիս հայրս՝ ինձ հետ պահելու նպատակով, նորից պնդում էր, որ դա հնարավոր չէ, եւ առաջարկում էր վերադառնալ տուն: Մի խոր անցք կար՝ խորքը մութ, լույս էր հարկավոր: Դուրս կա ու համաձայնեցի հորս հետ. վերադարձանք տուն:

Առավոտյան, առանց հորս ասելու, Հրոչս ամուսնու՝ Նիկիտի հետ լուսարձակով զինված գնացինք որոնումը շարունակելու: Խոր անցքը դատարկ էր: Հաջորդ անցքի մեջ գտանք «մոսինը», 55 փամփուշտ, դատարկ յուղի սրվակ ու մի ծուռ մեխ: Միայն իջնելուց հետո ուշադիր զննելով նկատեցինք, որ այդտեղ՝ ձորի մեջ ժայռին կպած, հողի երեսին նշմարվում էին «մուծ բոշնի» քայքայված բնի հետքերը:

Ոգեւորությունն անսահման էր: Զենքը պահպանված էր կատարյալ վիճակում, երեւում էր, որ պապն ուժերը ներածի չափով պարբերաբար այցելել ու խնամել էր:

Հայրս զինի բացեց, հորեղբորս որդին ոչխար մորթեց, խմեցինք պապի կենացը, այցելեցինք նրա գերեզմանին, կրակեցինք, հայրս ասաց, որ իր հայրը հարություն է առել: Դա 1989թ. հոկտեմբերի 29-ն էր:

Զենքի հայտնաբերման այս դրվագը դարձավ մեր մարտական ոգու շարժիչ ուժը, եւ հերթական անգամ Մեղրին զերծ մնաց կործանումից:

Նույն տարվա դեկտեմբերի 16-ին ծնվեց որդիս՝ Թեւոս Դավիթի Մաթեւոսյանը...

Ապրեմ խաղաղությամբ: Պատմությունը կրկնվում է:

29.12.2015թ.

## ՍՈՒԼԹԱՆ ՆԱՆԱ[42]

*Հայ ազգային կոնգրեսի 2-րդ (20-րդ) համագումարում Լեւոն Տեր-Պետրոսյանի «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» վերնագրված ելույթի «սխալները» ուղղելու կարիք ամենեւին չկա:*

*Այն պատասխանատվության, սառը դատողության արդյունք է, առարկայական հաշվարկների վրա հիմնված համարձակ մտածելակերպ, որի արմատավորման դեպքում է հնարավոր հաղթահարել մեր կյանքի համատարած ու անորոշ լճացումը:*

*Ժողովուրդն արթուն է, եթե նրա մեծամասնությունն առողջ մտածելակերպի բացահայտ կրողն է: Պահն է, որ քիչ թե շատ հայտնի մարդիկ հաշիվ տան՝ կրողն են իրենք այս մտածելակերպի, թե՝ ոչ: Ոչ-ը արկածախնդրությունն է:*

*Ես կրողն եմ այս մտածելակերպի ու հետեւաբար.*

*ինչպիսի փորձանքի տակ էլ որ գլուխս դնելու լինեմ, ինչ պիտակներ էլ որ կպցնեն, միեւնույն է՝ իմ հնարավորությունները, ունակություններն ու ազդեցությունները գործադրելու եմ հանրության լայն շրջանակներում խաղաղության հաստատման անհրաժեշտությունն իբրեւ համոզմունք ամրապնդելու եւ «Խաղաղություն, Հաշտություն, Բարիդրացիություն» նշանաբանով ընտրությունների գնացող քաղաքական ուժին լիարժեք աջակցելու համար:*

*Որպես առաջին քայլ՝ հրապարակում եմ ապրիլյան կարճատեւ պատերազմի շուրջ մտորումներիս ընթացքում վավերական մի հին պատմության հիման վրա թղթին տված:*

---

[42] *iLur.am, 22.12.2016թ.:*



### Սուլթան նանա

Քամոտ լեռնանցքը ջրբաժան գծի այն հատվածն է, ուր ջրի կաթիլը բաժանվում է երկու մասի՝ սկիզբ դնելով երկու հոսքի: Կիսված ջրի կաթիլից սկիզբ են առնում երկու փոքրիկ գետակ, հեռանում են իրարից, դառնում երկու ավազանի առանցք, դառնում կյանքի գործոն ու թափվում Մեծ գետը: Եւ ջրբաժան գծի վրա կիսված կաթիլները միմյանց գտնում, ամբողջանում են, երբ Մեծ գետի ջրերը խաղաղ են ու ջինջ...

Կիսված կաթիլից գոյացած գետակներից մեկի ավազանում՝ Մեծ գետի ձախակողմյան վտակի կիրճի ծերպերում ծվարած է փոքրիկ հայկական մի գյուղ:

Աշխարհի հեռավոր այս ծայրամասում ապրող հնաբնակների համար, սակայն, հենց դա էր Աշխարհի կենտրոնը: Նրանք դրանում համոզված են նիշտ այնպես, ինչպես Հողե գնդի բազմաթիվ նման ծայրամասերի բոլոր բնակիչներն իրենց բնակավայրի համար:

Յուրօրինակ էին հայկական փոքրիկ այս գյուղի մարդիկ՝ պատվախնդիր, խիստ մաքրասեր, շատ հոգատար՝ միմյանց ու իրենց ապրուստն ապահովող ունեցվածքի նկատմամբ, հանդուրժող ու համակեցությունը հարգող:

Ընտանիքների մեծ մասն զբաղվում էր խաղողագործությամբ ու գինեգործությամբ: Հողագործությամբ զբաղվող յուրաքանչյուր ընտանիք, սակայն, մնացյալ սննդի կարիքները հոգալու համար խնամում էր նաեւ մի 15–20 գլուխ այծ ու ոչխար: Փոքրամասնությունը զբաղվում էր անասնապահությամբ: Նրանցից յուրաքանչյուրն իր անհատական հոտն էր կազմում՝ պակասը լրացնելով մերձավորների ու մտերիմների մանր եղջերավորներով: Հովվին յուրաքանչյուրը վճարում էր իր ունեցած գլխաքանակի համամասնությամբ: Հովվի ու հոտի հետ կապված բոլոր խնդիրները, ընդհուպ՝ հովվի ընտրությունը, համակարգում էր հիմնական գլխաքանակի սեփականատերը:

Նրանցից մեկը՝ Հակոբ Մելիք-Հովհաննիսյանը, հերթական մի հովվի հետ պայմանավորվելուց հետո, բոլորից թաքուն, հովվի փինած տրեխի (կարկատած չարուխ) կարկատանի թելերի մեջ քարի մի կտոր է խցկում: Մեկ շաբաթ անց, երբ հովիվը հոտն արոտից փարախ է բերում, հանել է տալիս նրա տրեխը, ստուգում, հայտնաբերում իր իսկ խցկած քարի

կտորն ու ասում. «Այս քարի կտորը ես եմ խցկել՝ ինձ ստուգելու համար: Մի շաբաթ շարունակ դու չես ջանացել ազատվել ինձ անհարմարությունից պատճառող քարից: Եթե դու չես գնահատում քո իսկ մարմնի արժեքը, հետեւաբար՝ դու չես կարող գնահատել նաեւ իմ հոտի արժեքը: Առավոտյան կհանձնես հոտը, մեկ շաբաթվա աշխատանքիդ դիմաց կստանաս մեկ ամսվա վարձատրություն ու կհեռանաս»:

Հողագործները նույն սկզբունքով էին ձեռավորում իրենց հոտը: Բայց եթե անհատական հոտի հովիվն ընտրվում էր մեկ մարդու ճաշակով, ապա ընդհանուր հոտի հովիվը պետք է կարողանար բավարարել միաժամանակ մի քանի տասնյակ բծախնդիր մարդու ճաշակ:

Հայկական գյուղի հովիվները, որպես կանոն, վարձվում էին ամենամոտ ադրբեջանաբնակ այն գյուղից, որը գտնվում էր Մեծ գետի ձախակողմյան մյուս վտակի ավազանում: Գետակ, որ սկիզբ է առնում Քամոտ լեռնանցքից՝ ջրի նույն կաթիլի երկրորդ կեսից:

Ադրբեջանական այդ գյուղի հին բնակիչները հիմնականում զբաղվում էին ոչխարաբուծությամբ: Նրանք այդ գործի հմուտ մասնագետներ էին: Քչերը հեռավոր անտառում փայտածուխ պատրաստելով ու վաճառելով էին վաստակում: Այդ գյուղի երիտասարդ, բայց փորձառու հովիվներն իրենց նախնական կապիտալը կուտակում էին հենց հարեւան հայկական գյուղում: Այնտեղ նրանց ապահովում էին կացարանով ու սննդով, գլխամանակի հաշվով վճարում էին փողով ու անասունով: Մի քանի տարի աշխատելուց հետո հոտը հանձնում էին նոր երիտասարդ հովվի ու տուն վերադառնում սեփական ոչխարի նշանակալի գլխամանակով:

* * *

Երկու գյուղերը միմյանցից բաժանում է կտրտված ռելիեֆով վիթխարի լեռնաշխարհը, որը դարեր շարունակ եղել է երկու գյուղերի մանր եղջերավոր անասունների հիմնական արոտատեղը:

Հանգամանքների բերումով, մանր եղջերավորները վաղուց արդեն տարածված չեն այս լեռնաշխարհում: Բայց հստակ նշմարվում է եւ դեռ երկար կնշմարվի նրանց կեղակների նախկինում թողած ազդեցությունը ռելիեֆի վրա՝ ամենուր զուգահեռ, նեղլիկ ու երկար ձգված հազարավոր արահետներ: Դրանք առաջացել են, երբ տամ եղանակին, արեւից



պատսպարվելու բնազդով, յուրաքանչյուր հաջորդ ոչխար գլուխը թաքցրել է առջեւից խոնավ հողի վրա քայլող ոչխարի դմակի ստվերում: Այսպես, պարբերաբար ձեւավորվել է մի քանի տասնյակ ոչխարներից կազմված քայլող շարք, եւ բազմաթիվ կեղակների կանոնավոր ու ինտենսիվ ազդեցությամբ տրոհվել է հողը, գծվել արահետ:

Լեռնազանգվածը հատվածաբար ծածկված է նաեւ անտառներով ու վայրի ժայռերով, շատ հարուստ է եղել կենդանական աշխարհի վայրի տեսակներով՝ խոզ, արջ, պախրա, քարայծ, հովազ, լուսան, գայլ...

Հնուց հայտնի է, որ արոտները բազմաթանակ քարայծերից փրկում էին կայծքարե հրացանի որոտի օգնությամբ: Ավելին, հանուն ոչխարի՝ պայքարել են նույնիսկ հովազի դեմ. սալ քարերից պատրաստված ծուղակ շինության մեջ տեղադրված մակտորով գայթակղել, ներքաշել, բանտարկել ու սպանել են հովազին: Այդ շինության ավերակները պահպանվում էին մինչեւ վերջերս:

Երկու գյուղերը միմյանց կապող մի քանի դժվարանցանելի լեռնային արահետներին լիարժեք տիրապետում էին տեղացիներից քչերը՝ հովիվներն ու որսորդները: Որեւէ օտար մարդ՝ առանց նրանց աջակցության, չէր կարող հաղթահարել այդ լեռնազանգվածը: Նման անհրաժեշտություն հատկապես առաջանում էր, երբ գարնանային վարարումներից Մեծ գետի կիրճով անցնող հիմնական ու համեմատաբար հարմարավետ ճանապարհը մի քանի ամսով ջրասույզ էր լինում:

Եւ այսպես, նույն բնաշխարհից շարշարանքով ապրուստ կորզելով՝ համերաշխ ապրում էին երկու գյուղերի բնակիչները: Նրանք օջախներով՝ սերնդեսերունդ բարեկամական, պարզ ու անկեղծ հարաբերություններ էին պահպանում: Այդ հարաբերությունները չխաթարվեցին անգամ Պետերբուրգից, Թեհրանից ու Ստամբուլից հրահրված, Բաքվում սկիզբ առած՝ 1905–1906 թթ. հայ-ադրբեջանական լայնատարած արյունալի բախումների հետեւանքով:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական գյուղի ընդհանուր հոտի հովիվը Նուրուլան էր: Նա մարդամոտ էր, քարի, կոկիկ ու մաքրասեր, իր գործի փայլուն գիտակ: Մեկառմեկ գիտեր, թե

ում է պատկանում տվյալ կենդանին, ճանաչում էր արտաքնապես ու անունով, որն, ի դեպ, բխում էր նրանց արտաքին առանձնահատկություններից (օրինակ՝ Հակոբի սպիտակ երկարականը):

Առոտներում չէր վազվզում Նուրուլան, խոսելով էր կառավարում հոտը՝ աջ-ձախ գնալու, ետ դառնալու, նստելու ու շարժվելու հրահանգներ տալով: Նա ավելի շուտ կենդանիներ վարժեցնող էր, քան հովիվ: Բոլորը գոհ էին նրա աշխատանքից եւ գնահատում էին՝ իրեն հավասարը չունեցողի:

Բացի վարձատրությունից՝ անասնատերերը հովվին կերակրելու պարտավորություն ունեին: Գլխաքանակի հաշվարկով՝ հոտի կառավարչի նախօրոք տեղեկացմամբ, ամեն օր հովվի սննդի հարցը կարգավորում էր որեւէ ընտանիք: Երեկոյան՝ հոտը բերելուց հետո, հովիվը նրանց հետ ընթրում էր տվյալ ընտանիքի անդամի պես: Ընթրելուց հետո շնորհակալություն էր հայտնում ու բարի գիշեր մաղթում՝ հաջորդ օրվա սննդի կապոցը խուրջինում տեղավորելուց հետո: Հովվին հյուրընկալելու օրվա ընթրիքն առատությամբ ու բազմազանությամբ տարբերվում էր ընտանիքի սովորական ընթրիքից:

Այնքան հոգեհարազատ էր միջավայրը, որ Նուրուլան որոշեց ամուսնանալ եւ կնոջ հետ ապրել հայկական գյուղի իրեն հատկացված կացարանում: Այդպես էլ վարվեց, սակայն երջանիկ կյանքը երկար չտեւեց...

* * *

Պատերազմի ավարտին աշխարհն ու Այսրկովկասյան տարածաշրջանը խառնվեցին իրար: Նոր պետություններ էին ծնվում, ուժեղները թույլերից տարածքներ էին խլում, սահմաններ էին գծում, սահմաններ էին փոխում, ազգամիջյան բախումներ՝ տեղահանություններ, բռնություն, արյուն, կեղծիք, թշվառություն...

Իրենց անվտանգությունն ապահովելու նպատակով, հարեւան հայկական բնակավայրերի նման, սկսեցին նախապատրաստվել նաեւ այս փոքրիկ հայկական գյուղում: Նախ ձեւավորեցին «փրկության խորհուրդ», ապա, զենք ու զինամթերք հայթայթելուն զուգահեռ՝ պաշտպանական ստորաբաժանումներ:



Պաշտպանական նախապատրաստությունների հենց սկզբից աղրբեջանցի հովիվները՝ գիտակցելով, որ հայկական գյուղի վտանգը գալու է իրենց գյուղի կողմից (ոչ իրենց գյուղից), որոշեցին հաշտ ու խաղաղ, առանց թշնամանքի նախօրոք հեռանալ: Ստացան վերջնական վարձատրությունը, ափսոսանքով հրաժեշտ տվեցին հայկական գյուղին ու խոստացան վերադառնալ խաղաղ ու բարի ժամանակների հետ:

Նուրուլան հապաղեց. մեծ Աշխարհը նրան անծանոթ էր: Նրա Աշխարհն այդ լեռնաշխարհն էր, իր հոտը ու երկու գյուղերի՝ իրեն հավասարապես հոգեհարազատ բնակիչները: Նուրուլան շարունակեց աշխատել...

Մի օր տուն վերադարձավ տխուր ու մոլոր: Կինը փորձեց հասկանալ պատճառը, բայց նա լռում էր: Մի քանի օր լռեց ու չդիմացավ: Պոռթկաց: Վրդովված պատմեց լեռներում հանդիպած իրենց գյուղի հովվից լսածը, որ, նախ՝ աղրբեջանական գյուղում որոշ մարդիկ իրեն դավաճան են համարում, եւ որ հայկական այս գյուղի օրերը հաշված են:

Գյուղացիներից մեկը, որ այդ պահին անցնում էր Նուրուլայի կացարանի կողքով, լսեց վերջին արտահայտությունը՝ «այս հայկական գյուղի օրերը հաշված են»: Լսեց ու լսածը շտապ փոխանցեց «փրկության խորհրդին»: Անմիջապես խորհուրդ հրավիրվեց՝ Նուրուլայի հարցն էր: Գիտեին, որ վտանգը մոտ է ու անհրաժեշտ: Գիտեին, որ վտանգ ուղղորդողներն իրենց եւ հարեւան հայկական գյուղերի վերջին օրերն էին հաշվում: Մյուս հովիվների հետ Նուրուլայի շմեկնելը համարեցին «այս գյուղի օրերը հաշված են» արտահայտության հետ: Քննելու ու վերլուծելու ժամանակ չունենալու արդարացմամբ հապշտապ եզրակացրին, որ Նուրուլան լրտես է: Նա, որ լավագույնն է տիրապետում լեռնային արահետներին, կարող է գիշերով փորձանքը գյուղ ուղեկցել: Ուրեմն՝ Նուրուլան ամենավտանգավոր լրտեսն է, եւ նրա պատիժը պետք է խիստ լինի՝ մահ: Վճիռը կայացված էր, մնում էր իրագործելը:

Ծրագիր մշակվեց: Հանձնարարվեց երկու երիտասարդ որսորդների՝ Հովսեփին ու Վարդազարին, որոնք էլ, որսի գնալու ճանապարհին, գյուղից հեռու, «պատահաբար» պիտի հանդիպեին նրան եւ ի կատար ածեին վճիռը: Հետո պիտի գային ուրիշ երկու հոգի՝ բահ ու քլունգով, եւ այս ամենը՝ իբրեւ գաղտնիք, խոր թաղեին:

Հովսեփը նախապես տրամաբանական չէր համարում առաջադրանքը, մտատանջվում էր, անգամ մտածում էր հրաժարվել: Ինքն լուրյամբ

ըմբոստ էր՝ բոլորը գիտեին, կարող էր դա անել: Միայն ողջ համայնքին սպառնացող վտանգի լրջության ու ժամանակի սղության պատճառով որոշեց չհակադրվել: Գիշերը չկարողացավ մնել՝ խիղճը տանջում էր, ու անընդհատ թվում էր, թե աջ ցուցամատը չի զգում...

Պայմանավորված ժամին հրացանն ուսն առավ ու դուրս եկավ տնից: Դեռ չէր հասել հանդիպման վայր՝ կրակոցի ձայն լսեց: Վազեց: Շները՝ ոռնոցով ու կլանչոցով, իսկ ոչխարները՝ մայոցով, ողբում էին հովվի մահը: Նստեց սալ քարին՝ ընկերոջ դիմաց, վառեց ծխախոտը ու հարցական հայացքով նայեց նրան:

– Շուտ էի եկել,– ասաց ընկերը,– իրենից շուտ: Եկավ, նայեց աչքերիս մեջ ու հարցրեց.

– Ինչո՞ւ ես այսքան շուտ այստեղ եկել:

– Ընկերոջս եմ սպասում, որսի ենք գնում:

– Հազուստդ որսի գնացողի հագուստ չէ,– ասաց, մի պահ լռեց ու շարունակեց.

– Ես այս գիշեր հասկացա, որ կամ դուք, կամ իմ հայրենակիցներն ինձ սպանելու եք: Նա՝ ով ավելի շուտ կվճռի: Ինձ հաշված օրեր են մնացել ապրելու, գուցե՝ հաշված ռոպեներ: Եթե արդեն վճռել եք, եւ եկել ես ինձ սպանելու, խնդրանք ունեմ՝ թիկունքից մի կրակիր, ուզում եմ տեսնել ինձ սպանողին: Ուզո՞ւմ ես՝ կանգնեմ այն ապառաժի տակ՝ իմ մահարձանի, ու կրակիր ուղիղ սրտիս...

Լռեցին:

Հետո եկան այն երկուսը ու ապառաժի տակ փոս փորեցին: Հովսեփը բարձրաձայն մտածեց. «Նա լրտես չէր»: Ոչ ոք չառարկեց, եւ այդ երկու բառը հնչեց իբրեւ հովվի մահախոսական: Թաղեցին առանց հողարմբի՝ վայրը հողարկելով տեղանքի նմանությամբ:

Երեկոյան հոտը գյուղ եկավ առանց հովվի... Երկու օրվա ոռնումներն արդյունք չտվեցին: Անհետ կորել էր: Հետո հովվի ամբողջական վարձը տվեցին կնոջը, եւս մի ջորի՝ որպես նվեր: Նրանց տնամեջը բարձեցին նվեր ջորու վրա, մի քանի հոգով՝ մի քսանհինգ գլուխ ոչխար էլ առաջներն արած, Մեծ գետի երկայնքով անցնող համեմատաբար հարմար ճանապարհով կնոջն ուղեկցեցին մինչեւ նրանց գյուղի մատույցները, որքան որ անվտանգ էին համարում:



* * *

Հետո եկավ մեծ վտանգը՝ ավելի քան լուրջ, տեղահանելու ու բնաջնջելու սպառնալիքով: Հայկական գյուղերը կարողացան համախմբվել, հաջաբար հետ մղել վտանգն ու կյանքը վերադարձնել բնականոն հուն:

Հետո հաստատվեցին բոլշեւիկյան կարգեր՝ հալածանքներ, ունեզրկում, հարկադիր կոլեկտիվացում, բռնաճնշումներ՝ բանտարկություն, գնդակահարություն, աքսոր...

Շարունակությունը երկրորդ համաշխարհային պատերազմն էր:

Պատերազմի ավարտից մի քանի տարի հազիվ էր անցել: Դեռ բեղավոր բռնակալի դարաշրջանը չէր ավարտվել: Հովսեփն արդեն տարիքն առել էր ու շատ զավակներ ուներ: Որդիներից մեկը զոհվել էր պատերազմում, իսկ հինգը դեռ անչափահաս էին: Օրվա գերխնդիրը երեխաներին քաղցած չթողնելն էր: Հովսեփի հիմնական հենարանն այդ հարցում ավագ որդին էր: Նա, հանգամանքների բերումով, հենց առաջին օրից աշխատում էր պատերազմի տարիներին գործարկված, Մեծ գետի երկայնքով անցնող երկաթուղում: Բացի այն, որ որպես երկաթուղային հացի նշանակալի չափաբաժին էր ստանում ու աշխատավարձի հետ տուն բերում, հանգստյան օրերին էլ զբաղվում էր որսորդությամբ: Երկաթուղու հարակից սահմանապահ ուղեկալից վստահությամբ մարտական զենք էր վերցնում եւ քարայծի մսով լրացնում մեծ ընտանիքի սննդի պակասը:

Աշուն էր՝ հոկտեմբերի վերջը, քարայծի որսի լավագույն շրջանը: Այդ ժամանակ մեծ արու քարայծերն այնքան զեր են լինում, որ հնարավոր է դառնում նրանց մսից ղավուրմա պատրաստել՝ առանց լրացուցիչ յուղ օգտագործելու: Եւ որդին որոշում է ձմռանն ընդառաջ լուծել մեծ ընտանիքի սննդի խնդիրը հենց այդ նանապարհով: Հոր փորձից գիտեր, որ զգացողությունը թուլացած ծեր քարայծերն ամբողջ ցերեկը պատսպարվում են անմատչելի անձավներում եւ դուրս են գալիս արածելու լուսաբացին ու մթնշաղին: Դեռ մութ էր, որ տնից դուրս եկավ՝ միայնակ: Հակառակի պես՝ բոլոր կանխատեսելի վայրերում մեծ քարայծ չտեսավ, իսկ փորերին որսալու մտադրություն չուներ: Ինքը նկատել էր, որ պետական սահմանի պաշտպանությունն ամրապնդելու նպատակով Մեծ գետի ձախ ափով փշալարե ցանկապատ կառուցելուց հետո քարայծերի գլխաքանակը պակասել էր: Կենսատարածք էր խզվել:

Մեծ քարայծի որոնումներով կտրեց անցավ մի 15 կիլոմետր ու հասավ լեռնազանգվածի հակառակ կողմը: Հովիվների գյուղը ոտքերի տակ էր՝ թեք լանջին: Փոքրիկ տներ՝ հողե հարթ կտուրներով, մեկի կտուրը՝ մյուսի համար բակ: Խոնավ հողի վրա մեծ քարայծի թարմ հետք նկատեց: Փորձեց հետքով առաջ շարժվել: Տեղ-տեղ հետքը նշմարվում էր, տեղ-տեղ անհետանում, փնտրում էր՝ նորից էր գտնում, ու էլի կորցնում, հետ ու առաջ էր գնում, ցած իջնում ու վեր բարձրանում՝ նորից գտնում: Վերջապես հետքը դեմ առավ հսկա ու վայրի մի ժայռի, որի մեջ մարդուն անհասանելի խոր անձավ էր նշմարվում: Համոզված էր՝ քարայծն այնտեղ էր: Պետք էր սպասել մթնշաղին...

Ժայռի դիմաց հարմար դիրք գտավ, տեղավորվեց՝ դեմքով դեպի անձավը, ջուր խմեց, հաց կերավ ու հաշվարկեց, որ անգամ առանց բեռի հնարավոր չի լինի գիշերով տուն վերադառնալ: Մի պահ մտածեց՝ գուցե դատարկ վերադառնա, բայց հիշեց տան կիսաքաղց անդամներին, ու պատասխանատվությունը հուշեց՝ մնալ:

Ծրագրեց միակ իրագործելի տարբերակը՝ կիջնի ադրբեջանական գյուղ, կգտնի իր գործընկեր ու մտերիմ Իբրահիմին, կգիշերի նրանց տանը, առավոտյան կիջնի երկաթուղու մոտ, կհանդիպի ծանոթ մեքենավարներից որևէ մեկին, նրա աջակցությամբ կգնա կայարան, իսկ այնտեղից տուն հասնելը խնդիր չէր: Ծնողների անհանգստանալու հանգամանքը մտքովն անցավ՝ իհարկե, բայց երիտասարդի ինքնավստահությամբ դա համարեց երկրորդական:

Ժայռակատարների ստվերները վաղուց արդեն իջել էին ձորը, բարձրացել ու ձգտում էին հավասարվել հանդիպակաց կատարներին: Քիչ անց՝ ուշադրությունը լարած որսորդն անձավի կողմից շոր շիկոց լսեց՝ պոզերը դիպան անձավի պատերին. դուրս է գալիս, համոզված էր: Կրակոցը դիպուկ էր: Ծեր ու հսկա քարայծը գլորվեց դեպի ձորը: Այսպիսին նա առաջին անգամ էր որսում: Ժամանակ չկորցրեց, քարշ տվեց լանջն ի վար՝ գետակի մոտ, վարժ ու արագ քերթեց, մասերի բաժանելով տեղավորեց ուսապարկի մեջ, լվացվեց, շալակեց ու արդեն հազիվ տեսանելի անձանոթ արահետով քայլեց առաջ՝ իր քաշի չափ բեռի տակ կքած:

Մութն ու սեւ շաղրայով կինը նրան դիմավորեցին գյուղի եզրին: Որսորդը հարգալից բարեւեց կնոջն ու հարցրեց Իբրահիմենց տունը: Կինը երկու փաթիլ (մոտ երեք լիտր տարողությամբ կիսագնդաձեւ պղնձե



աման) տարողությամբ կաթով լի սաթլը (դույլի ու ձագարի կոմբինացված պղնձե տարա) դրեց գետնին, հրազը պահեց որսորդի ուղղությամբ ու հարցրեց.

– Իսկ դու ինչ կապ ունես Իբրահիմի հետ:

– Իբրահիմն իմ մտերիմ ընկերն է, մենք միասին ենք աշխատում:

– Որտեղից ես:

– Լեռնաշխարհի հակառակ կողմից՝ կիրճի ծերպերին ծվարած գյուղից եմ:

Կինը նկատելիորեն լարվեց ու, կարծես իր կամքին հակառակ, հարցրեց.

– Ո՞ւմ որդին ես:

– Հովսեփի, ճանաչո՞ւմ եք:

Կնոջ մարմնով սարսուռ անցավ, ինքնատիրապետումը կորցնում էր, շնչառությունն արագացավ, սիրտը թրթռում էր, ուզում էր պոռթկալ, բայց չէր կարողանում՝ խեղդվում էր: Հետո ֆիշ-ֆիշ խաղաղվեց, շունչը տեղը եկավ, ու զուսպ արտաբերեց.

– Ես Իբրահիմի մայրն եմ՝ Սուլթան նանան: Հետեւիր ինձ, Իբրահիմն ուր որ է կգա,– ասաց ու, լուսավորելով նանապարհը՝ հյուրին տուն առաջնորդեց:

Տունը մի քանի քայլի վրա էր: Կնոջ խորհրդով՝ ուսապարկը կախեց կիսաբաց թոնրատան կաղնու սյան կլուտից, հրացանը հենեց պատին:

– Նստիր այդտեղ, շարուխներդ ու գուլպաներդ հանիր, տաք ջուր բերեմ, ոտքերդ լվամ,– ասաց Սուլթան նանան՝ ցույց տալով մուտքի դռան աջ կողմի պատից կլնող սալ քարը:

Բերեց փայտե տաշտը, դրեց հյուրի ոտքերի առաջ, օջախին դրած մեծ պղնձե կաթսայից տաք ջուր բերեց, շոռնց, որ լվա: Հյուրը փորձեց դիմադրել՝ ապարդյուն, Սուլթան նանան պնդեց՝ ասելով, որ դա ազգային ավանդույթ է, ու լվաց հյուրի ոտքերը: Հետո լաթով մաքրեց, տվեց իր ձեռքով գործած նոր ու ճերմակ բրդե գուլպաներ, ասաց՝ նվեր է, եւ պարտադրեց հագնել:

Եկավ Իբրահիմը: Մայրը հանձնարարեց հյուրին պատվելու նպատակով հավ մորթել: Երիտասարդ հյուրը միջամտեց՝ ասելով, թե ամենեին հավ մորթելու կարիք չկա, քանի որ ուսապարկում այդքան շատ միս կա, եւ որ ինքն այդ մսի մի մասը նվիրելու է նրանց:

Սուլթան նանան առարկեց.

– Քո ուսապարկի միսը հարամ է՝ գնդակով սպանված, մենք դա չենք ուտում:

Մինչ Իբրահիմը կմորթեր հավը, Սուլթան նանան լվացավ հյուրի գոպպանները ու կախեց օջախի մոտ ձգած թելին:

Ընթրիքն ավարտելուն պես Սուլթան նանան առանձին սենյակում չօգտագործած անկողին բացեց հյուրի համար ու որդուն հանձնարարեց, որ ստուգի, թե արդյոք ամո՞ւր է փակել հավաքնի անցքը: Որդին հակառակելով գնաց: Ինքը հյուրին ուղեկցեց ննջասենյակ, ցույց տվեց անկողինը, բանալին մոցրեց պատի պահարանից կախված կողպեքի մեջ ու ասաց.

– Հրացանդ պահարանի մեջ պահիր ու բանալին մոտդ թող: Գիտեմ, որ հայրդ՝ Հովսեփը, մասնակցել է եղբորս՝ Նուրուլայի սպանությանը, բայց չկարծես, թե կարող եմ վրեժխնդիր լինել: Ես անգամ գիտեմ, որ Վարդազարի արձակած գնդակն է դիպել եղբորս,– ասաց ու դուրս եկավ սենյակից՝ ետևից ծածկելով դուռը:

Հյուրն անակնկալի եկավ: Առաջին անգամ էր լսում: Մտքերը ցամուցրիվ էին: Չգիտեր անելիքը: Հետո սթափվեց, գնահատեց, որ այդ պահին մնալն է ճիշտ, ու որոշեց այնպես հեռանալ, որ գյուղը մթնով անցնի եւ երկաթգիծ հասնի լույսը բացվելուն պես: Պառկեց գլխատակը բարձր, բաց աչքերով, լիցքավորված հրացանը կողքին:

Գնալու ժամն էր: Հագավ շարուխները, զգուշությամբ հրեց դուռը ու կիսաբաց դռան արանքից ձգեց վիզը: Լամպի աղոտ լույսի տակ, կարպետի վրա ծալպատակ նստած էր Սուլթան նանան:

– Առաջ արի, քեզ համար նախաճաշ եմ պատրաստել,– ասաց ու բարձրացրեց լամպի բոցը:

– Շնորհակալ եմ, այս ժամին նախաճաշելու սովորություն չունեմ, տանը կնախաճաշեմ:

– Չէ, այդպես չի լինի՝ կնեղանամ, գոնե մի բաժակ կաթ պիտի խմես,– ասաց ու փայտե շերեփով կաթ լցրեց բաժակի մեջ: Բաժակը մեկնեց, բայց արագ ձեռքը ետ քաշեց, ցուցադրաբար բաժակի պարունակության կեսը լցրեց ուրիշ բաժակի մեջ, առաջին բաժակը լրացրեց, կիսատ բաժակից մի կում խմեց ու կրկին լիքը բաժակը մեկնեց հյուրին: Խմեցին:

– Հիմա գնանք, ես կուղեկցեմ քեզ մինչև երկաթգիծ:



Դուրս եկան: Դեռ մութ էր, սակայն հեռավոր արեւելքում նշմարվում էր ամպի մխացող եզրը: Մինչ լուռ քայլելով կհասնեին գյուղի վերջը, ամպը բոցավառվեց: Հյուրը կանգ առավ ու բախանձեց ընկերոջ խորհրդավոր մորը՝ տուն վերադառնալ:

– Լա՛վ,– համաձայնեց կինը,– ասելիք ունեմ, ասեմ՝ նոր վերադառնամ,– հետո խոր հոգոց հանեց ու շարունակեց: – Չգիտեմ՝ ինչպես պատահեց, որ ասացի քեզ այդ մասին: Սխալվեցի: Ամբողջ գիշեր ես էլ քեզ նման աչք չեմ փակել՝ խիղճս տանջում էր: Հիմա համոզված եմ՝ էս աշխարհում մարդու ամենակարեւոր ձեռքբերումը խաղաղությունն է: Քո գալն առիթ դարձավ, որ մտորեմ դրա շուրջ: Ինձ համար այլեւս համոզմունք է, որ խաղաղությունը քո ու իմ որդու ընկերությունն է, եւ այդ գիտակցումն ինձ ազատեց ծանր ատելության բեռից: Զմոռանաս՝ մեր օջախի դուռը միշտ բաց է քո առաջ: Ապրենք խաղաղությամբ,– ասաց, բարի ճանապարհ մաղթեց ու վերադարձավ:

* * *

Հովսեփն ու կինը ամբողջ գիշեր անկողին չէին մտել: Որդու անկանխատեսելի բացակայությունը մորմոքել էր պատերազմում զոհված որդու կորստյան ցավը:

Մայրն ամբողջ գիշեր մղկտում էր ու ննջալով խնդրում Աստծուն, որ օգնի որդուն:

Հայրը պատշգամբում ծխելով առաջ ու հետ էր քայլում եւ մորը սփոփելու նպատակով իր ու շրջապատի գլխով անցած նմանատիպ դեպքեր էր հիշեցնում, որոնք, իհարկե, բարի վերջաբան էին ունեցել: Հաշվարկներ էր անում, հնարավոր վերադարձի ժամն էր հիշատակում: Իսկ մտքում որոշում էր, թե որ պահից ում հետ եւ որ ուղղություններով կգնան որդուն որոնելու:

Լույսը նոր էր բացվում: Վերջին ծխախոտը սպառվեց: Սիրտը ծուխ էր ուզում՝ առատ ծուխ: Պահած թութուն ուներ: Պարտադիր բաժանորդագրված «Կոլխոզնիկ» թերթից պատռած թղթի կտորով երկար ու անճոռնի գլանակ փաթաթեց: Վառեց, ծանր ծուխը կլանելուն պես մտքովն անցավ. «Հանկարծ ու՝ այրվող տառերից ձեւակերպված բոլշեւիկյան կեղծ լոզունգները թութունի ծխի հետ չնեռծվեն հոգու մեջ»: Այդ մտքից սթափ-

վեց ու հազալով ծուխը դուրս փչեց հնարավորինս հեռու: Ծուխը չէր կարող խեղդել, ինքը ծխին սովոր էր: Ծուխ դարձած լոգունգներն էին խեղդողը. «Այսման ուրախ կյանքը մեր՝ ընկեր Ստալինն է տվել», «Նորից եկավ ազատաբեր մեր սիրելի Հոկտեմբեր»...

Այսպես՝ ինքն իրեն շեղում էր, փորձելով վանել սիրտ սողոսկող չարագուշակ մտքերը, մեկ էլ դանդաղ բացվեց ծանր փայտե դարպասը: Որդին էր՝ բեռի տակ կքած:

Նա, նախ, զրկեց արդեն ուրախությունից արտասվող մորը, հետո ողջագուրվեց հոր հետ՝ հայացքով հասկացնելով առանձին խոսելու անհրաժեշտության մասին:

Հայրը մորը պատվիրեց նախաճաշ պատրաստել:

Լսեց որդուն: Ծուխը ներս քաշեց, արագ դուրս փչեց, գլանակը դեն նետեց: Այնուամենայնիվ, զզվելի էր ծխի հետ ներս թափանցող այրված խրթությունը:

– Ինչ ասել է այդ կինը՝ ճշմարտություն է: Ինչպես պատմեի, որդիս, հպարտանալու բան էր արածներս, Թալեաթին էինք սպանել, Հիտլերին էինք սպանել, անզեն ու անպաշտպան հովիվ էինք սպանել: Ամաչում էի պատմել: Ներիր, որդիս, ներիր, որ իմ պատճառով կարող էիր փորձանքի մեջ ընկնել...

* * *

Մեծ զետով ու նույն կետից սկիզբ առնող այն երկու վտակներով պարփակված լեռնաշխարհի առանցքով՝ իշխող ջրբաժան գծով այժմ անցնում է պետական սահմանը: Սահմանագծի երկայնքով՝ բարձունքների վրա, հաջորդաբար հայկական ու ադրբեջանական ռազմական ենթակետեր են: Նրանցում՝ միմյանց փոխադարձաբար նշանառության տակ պահող սովորական ընտանիքների զավակ զինվորներ՝ դեռ կյանք չճաշակած երիտասարդներ: Նրանց հարեւանությամբ՝ լեռնաշխարհի խոր անձավների փակ դատարկության մեջ ականջ փնտրելով՝ դեռ պտտվում է Սուլթան նանայի՝ իբրեւ պատգամ ասված խոսքի արձագանքը.

– Ապրենք խաղաղությամբ...

29.04.2016թ.

## ՃԵՐՄԱԿԸ[43]

Ազատության հրապարակի արշալույսներ 8 օր շարունակ կրկնվում էին նույնությամբ:

Փետրվարի վերջին տասնօրյակին ոչ բնորոշ ցուրտ էր: Բայց անգամ սառնամանիքը չէր խոչընդոտում մի քանի տասնյակ հասարակ նվիրյալների, որոնք ոչ մի վայրկյան չրացակայելով պայքարի էպիկենտրոնից՝ մթի ու լույսի ներքո լցվում էին հրապարակ եւ հրապարակի մաքրությամբ սկսում պայքարի հերթական օրվա իմաստավորումը:

Հիմնականում նույն մարդիկ էին՝ բարի ու բարեկիրթ արտահայտությամբ, ապազգայի հանդեպ լեցուն հավատով: Միմյանց լրացնելով ու օգնելով՝ ավլում, հավաքում ու տեղափոխում էին աղբը, ավարտում օրվա աշխատանքը, երբ մյուսները դեռ քնած էին: Մաքրությունն ավարտում ու ժպտում էին այն մտքից, որ նաեւ իրենց մասնակցությամբ ու ջանքերով է Ազատության հրապարակի մաքրամաքուր խորհուրդը շատ շուտով տարածվելու Հայաստանով մեկ:

Այդ կարեւոր գործի մասնակիցներից մեկը՝ վայելչակազմ մի տղամարդ, աչք էր ծակում իր արտահայտությամբ: Հասակով բոլորից մի գլուխ բարձր էր, ձյունաճերմակ մազերով:

Այդ օրը՝ լուսաբացի սպասումով, հանդարտ քայլում էր մութ հրապարակում: Շրջում ու նորից էր շրջում հարյուրին մոտ վրանների արանքով ու մտքում հաշվարկում, որ հաղթական հանգրվանին հասնելու համար ծրագրված ժամկետն արդեն կիսվել է, որ շատ արագ է անցնում ժամանակը, որ պարտավոր է մնալ եւ ներկա գտնվել մարտի 9-ին

[43] *iLur.am, 23.02.2017թ.:*

նշանակված Սահմանադրական դատարանի նիստին, որ տասնյակ հազարավոր ցուցարարների եւ իր ներկայությունը հարկադրելու է դատարանին՝ կայացնել անաչառ որոշում, որ, նվազագույնը, կլինի ընտրությունների երկրորդ փուլ, որ երկրորդ փուլում միանշանակ հաղթելու են...

**2008 թվականի մարտի մեկն էր:** Լուսաբացից առաջ, մթության հողի տակ, հրապարակ ներխուժեց կեղծիքից ծնված բռնությունը: Իններորդ լուսաբացը մամրամամոր հրապարակի փոխարեն տեսավ անբնակ, տապալված վրաններով աղրատեղի:

Հրապարակից դուրս մղված ցուցարարների ալիքի կատարին ճերմակը հայտնվեց ֆրանսիական դեսպանատան դիմաց: Խուժանի արարքից վրդովված՝ մարդիկ միմյանց իմաց տալով բազմապատկվում էին: Բռնությունից ծնվեց հաղթական համերաշխություն, ինքնարուխ զանգվածային հրապարակային միջոցառում: Միջոցառման սկզբնական կազմակերպիչը «Պայքար, պայքար մինչեւ վերջ»-ն էր:

Բռունցքները գլխներից բարձր անընդհատ ու ներդաշնակ նոնելով՝ կրկնում ու կրկնում էին. «Պայքար, պայքար մինչեւ վերջ»:

Ճերմակը աչք էր ծակում երկար հասակով, սպիտակ մազերով, պիրկ ու երկար բազուկով, սաստ բռունցքով, նվիրումով...

Նա ակամայից դարձավ Մարտի մեկի ոճրագործության ականատեսը ու վերադարձավ գյուղ՝ Արագածավան: Տասն օր շարունակ կարգին չէր քնել: Լողացավ, մտավ անկողին: Անհանգիստ էր, հոգին չէր խաղաղվում, մամի մեջ զոհված երիտասարդներն էին՝ իր զավակները, իր սիրելի Հայաստանի օրվա իշխանավորների ձեռքով սպանված: Այս իրողության գիտակցումից արյունը ցավում էր: Չկարողացավ քնել...

Զբաղվում էր առօրյա գործերով՝ առավոտ կանուխ արթնանում էր, մոր ու կնոջ հետ մտնում անասնագոմ, ինքը մաքրում էր, կերակրում խոզերին, մայրն ու կինը կովերին էին կթում, հետո արդեն կթված կովերին քշում էր արոտ: Մայիսի սկզբի այդ օրը կովերին արոտ քշելուց հետո՝ ինքն էլ չհասկացավ, թե ինչու, տուն դառնալու փոխարեն՝ մոլորվածի պես ծաղկած կանաչներով շարունակեց քայլել դեպի արեւմուտք: Մամում զոհվածների հայրերի համար սփոփանքի խոսքեր էր փնտրում ու չէր գտնում: Սթափվեց հեռախոսի զանգից: Կինն էր, տանը հյուրեր կային: Շուրջը նայեց ու հասկացավ, որ արդեն կիսել է այն նանապարհը, որը շարունակելու դեպքում կհասներ այնտեղ, որտեղից երեւում են Անիի ավերակները: Հիշողության մեջ Ազատության հրապարակի տապալված, անբնակ ու աղրատեղի դարձած վրանային ճամբարը, դիմացը՝ Անիի ավերակները: Ինչու՞ էր գնում, ինչ խորհուրդ էր փնտրում՝ ինքն էլ չէր հասկանում: Տուն դարձավ:

Կինը լուռ արտասվում էր, մայրը լացակումած մրմնջում. «Թող գան, թող ողջ գյուղին փոքրից մեծ հարցուփորձ անեն, որ հասկանան, թե ինչ դաստիարակված ու օրինակելի մարդ է որդիս, ախր ինչու՞ ես տանում, ո՞ւր ես տանում...»

Հյուրերը Թալինից եկած ոստիկաններ էին՝ մի Միշ ամոթխած, մի Միշ մեղավոր հայացքներով: Արդարանում էին, թե իրենք ընդամենը հրաման են կատարում...

Քննչական խմբի ղեկավարի սենյակ մտցնելուն պես հնչեց հարցապառնալիքը. «Մեղքդ ընդունո՞ւմ ես, թե՞ չէ»:

– Իսկ ո՞րն է մեղքս,– մեղմիկ ձայնով, զարմացած ու անկեղծ հարցրեց նա եւ թյուրիմացությունը պարզելու վճռականությամբ փորձեց որսալ հարցնողի հայացքը: Չհասցրեց, հարվածների տարափ տեղաց: Հարվածում էին բոլորը: Հարվածում էին ու հարվածում, հարվածում էին ու հայհոյում, հարվածում էին ու հայհոյախառն հարցնում. «Ընդունո՞ւմ ես, թե՞ չէ: Չընդունես՝ կսպանենք, արա՛, քո մերը... ընդունո՞ւմ ես՛, թե՞ չէ»:

Ընկել էր գետնին, հարվածներից պաշտպանվելու բնազդով գլուխն առել ձեռքերի մեջ ու չէր ընկալում՝ իրականությո՞ւն է, թե մղձավանջային երազ: Սրանք, որ կոչված էին Մարտի մեկի տասը սպանությունները բացահայտելու, իրեն ծեծում էին ու ծեծելով սպառնում սպանել, եթե չընդունի մեղքը:

Ո՞րն էր մեղքը: Դիտել էին տեսագրությունները ու հայտնաբերել, որ երկար հասակով, սպիտակ մազերով, պիրկ ու երկար բազուկով, սաստ բռունցքը գլխից բարձր ներդաշնակ նոնող, «Պայքար, պայքար մինչեւ վերջ» ու «Լե-տն նա-խա-գահ» վանկարկող այդ մարդն աչք էր ծակում իր նվիրումով: Զարացել ու որոշել էին պատժել: Ինչ-որ մեկը տեսագրության մեջ ճանաչել էր ու մատնել: Երկու ամիս անց էլ շարությունը չէր անցել, ծեծում էին ու սպանելու սպառնալիքով ստիպում ընդունել չգործած մեղքը:

Ցավը թափառում էր մարմնով մեկ, մինչդեռ նա ընկճվում էր ոչ այնքան ցավից, որքան խարված լինելու գիտակցումից: Զի՞ որ նա հեռուստացույցով տեսել էր, թե ինչպես է Հանրապետության առաջին դեմքը հայ-

տարարում, որ պետք է բանդել չճանաչվածության պատը: Հավատացել էր ու անգամ մտածել, որ նա զոհացել է Մարտի 1-ին կատարվածի համար: Ընկճվում էր, որովհետև սենյակում գտնվողներից զոնե մեկը մարդկային չէր, բոլորն էին ծեծում: Հասկացավ, որ սրանք ավելի շուտ գազան են, քան մարդ: Որ իրոք կարող են իրեն ծեծելով սպանել, որ ինքը կդառնա տասնմեկերորդ զոհը, որ իրեն հետո պատուհանից դուրս կնետեն, կնեակերպեն ինքնասպանություն, ու ոչ ոք չի կ իմանա իրականությունը: Տերն ո՞վ էր:

Ընդունեց «մեղքը»: Ծեծելուց հոգնած ու անտարբեր հայացքների ներքո՝ առանց կարդալու ստորագրեց բոլոր թղթերը, ինչ առաջարկեցին:

Հետո խմբի ղեկավարն ինքնագոհ ժպտաց ու ասեց. «Ճիշտ վարվեցիր, քեզ արագացված կդատեն ու պայմանական կտան»:

Հայտնվեց բանտում: Առաջին տպավորությունից շոյվեց: Մարտի 1-ի հետ առնչություն չունեցող խցակիցները, ի հենուկս քննչական խմբի ողջ կազմի, բարի ու մարդկային էին:

Մի քանի օր անց հանրային պաշտպանի հետ ունեցավ եզակի հանդիպում: Վերջինս հպանցիկ նայեց գործը, քթի տակ ժպտաց ու ասաց. «Անտեղի դատում են»: Մեղադրանք էր առաջադրված խուլիգանության երկրորդ մասով, երկու ոստիկանի ցուցմունքի հիման վրա, որոնց երբեք չէր տեսել ու չէր տեսնելու: Սեւ կարկատան՝ ներմակ սավանի վրա:

Մայիսի 30-ին հանձնում ստացավ: Ընտանիքն էր ուղարկել: Տեսակցություն չեղավ, արգելված էր:

Հետո խցում փոփոխություն զգաց: Բոլորը մի տեսակ լուռ էին ու տխուր: Նկատում էր, որ խցակիցներն իրենից ինչ-որ բան են թաքցնում: Մայրն էր վախճանվել, թաղումից հետո խցակիցները համարձակվեցին ասել:

Բանիմաց, գրագետ, ամեն օր գիրք կարդացող, 10 զավակ մեծացրած ու դաստիարակած գուսպ մայրը, որին շատ էր սիրում: Աղարող մայրը, հենարան մայրը, առողջ մայրը, որն ամեն օր կնոջ հետ միասին 6 կով էր կթում, կաթը մշակում ու բարիք ստեղծում: Վշտից կծկվել էր, հուսահատվել, զգացել վերահաս մահը ու հասցրել շշնջալ. «Ռորերտ, Սերժիկ, Աղվան՝ ձեր բոյր թաղեմ, ինչո՞ւ տարամ որդուս...»:

Ճերմակը մտատանջվում էր մոր կորստի ու ընտանիքի վիճակի համար:

Ինքնազգացողությունը վատացավ, զննեցին ու պարզեցին, որ վարակվել է բանտային ծանր հիվանդությամբ: Տեղափոխեցին բանտային



հիվանդանոց: Արյան ճնշումը 80/40 էր, նիհարեց 20 կիլոգրամ: Երկու ամիս բուժելուց հետո հյուծված ու հատուկ խնամքի կարիք ունեցող մարդուն տարան դատարան ու դատապարտեցին 3 տարվա ազատազրկման:

Բանտ վերադառնալուց հետո՝ միայն կիսաբաց ռեժիմի պայմաններում ծանոթացավ իրեն ջերմությամբ շրջապատած մյուս քաղբանտարկյալների հետ: Հոգատարության մրցույթ էր՝ իրեն խցից խուց էին հրավիրում ու հյուրասիրում տնից ստացած ամենասննդարար ու համեղ պատառներով: Ստիպում էին ուտել ու կատակում. «Մենք այստեղից դուրս չենք գա, քանի դեռ դու չես վերականգնել քո կորցրած 20 կիլոգրամն ու առողջ տեսքը»:

Մի օր եկավ բանտապետը, որին կարճ ժամանակ անց պիտի ազատեին աշխատանքից՝ քաղբանտարկյալների ներքին ազատությունն ընկճել չկարողանալու պատճառով, ու ասաց.

– Մեզ նորից հանձնարարված է ներման դիմումներ կորզել քաղբանտարկյալներից: Հասկանում եմ, որ անիմաստ է ձեզանից որեւէ մեկի հետ այս թեմայով խոսելը, ես ինձ թույլ չեմ տա: Բայց մի խնդիր կա, Տիգրան Մկրտչյանի խնդիրն է: Նրա նման հիվանդներն առողջ են լինում ընտանեկան խնամքի ու ջերմության պայմաններում: Գուցե օգտագործենք առիթը, փորձենք տուն ուղարկել: Թեև չեմ կ կարող երաշխիք տալ, որ դիմումը կբավարարվի:

Անկեղծ էր ասում: Հավամվեցինք, քննարկեցինք ու որոշեցինք առաջարկել: Առաջարկեցինք նրան՝ հանուն առողջության, մոտ 50 քաղբանտարկյալի ստորագրած հրապարակային հորդորը հարգելով, նման դիմում գրել:

Աչքերը փայլատակեցին. «Ես կմտնեմ, բայց այլեւս որեւէ թղթի տակ ստորագրություն չեմ դնի: Իսկ ձեր միջավայրում ես ինձ զգում եմ՝ ինչպես իմ ընտանիքում»:

Նրա աչքերում ներկաներս տեսանք ջինջ հոգուց ճառագող **ներմակ** լույսը ու նահանջեցինք:

22.02.2017թ.

Հ.Գ. Հարգելի՛ ընթերցող, եթե ուզում ես ճանաչել հասարակ ու լուսավոր այդ մարդուն, ապա մարտի մեկին, ժամը 18-ին արի Ազատության հրապարակ: Նրան պետք չէ փնտրել:

Նա դարձյալ աչք է ծակելու:

## ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Դու վերջին կապող օղակն ես, որով կարող է հարատեւել պետականությունը: Զաղոյան, Շիրխանյան, Աբրահամյան... փուչ են. զրո՝ առանց քեզանից ներշնչված վախի:

Ս. Սարգսյան, Ռ. Քոչարյան... մեծամիտ շներ, չգիտեմ ինչ են՝ զրո...

Պետականության պահպանող վերջին սերունդը մեռն է, ճակատագրի բերումով՝ քո գլխավորությամբ: Չգիտեմ, ամենախելոքը դու ես, թե Արծրուն Մարգարյանը, բայց բաներ կան, որ ես նրան չեմ հասկանում, ու բաներ կան, որ դու ինձ չես հասկանա՝ եթե չփվես: Բայց պետականություն պահող վերջին սերունդը մեռն է:

Ողջամիտ եղիր:

Մեզանից հետո շատ խելոք են՝ Դարբինյան, Սանդոյան, Վարդանյան, էներգետիկայի նախկին նախարար...

Սրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած որեւէ զարգացած երկրում կարող է մեծ ավանդներ բերել:

Մեր զավակները՝ իմ, Անդոյի, Արծրունի... բոլորիցս փայլուն ու տաղանդավոր են:

Բայց քո սերունդը ճակատագրական դերակատարում ունի, եւ շատ բան հիմա քեզանից է կախված: Ինձ թվում է, թե այս բանը շատ լավ է հասկանում Վանոն:

Ողջամիտ եղիր, թե չէ կորուստը շատ մեծ է...

Հունիս 19, 1999թ., Դավիթ Մաթեւոսյան





## ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Իմ տեղեկություններով եւ վերլուծությամբ՝ «սրբազան», «հայրենական» պատերազմը տանուլ ես տալիս: Քանի դեռ ուշ չէ, անձամբ վերցրու պատասխանատվությունը, որպեսզի առաջ գնա քաղաքական լուծման: Վստահ եղիր՝ ժողովուրդը քեզ կաջակցի ու կգնահատի»:

Հոկտեմբերի սկիզբ, 2020թ.



## ԱՐՁԱԳԱՆՔ

Գնահատելով, որ Արցախի ՊԲ զրագետ ու նպատակասլաց հակազդեցության արդյունքում այլեւս վերջնականապես վիժեցվել է Թուրքիայի աջակցությամբ Արցախյան հակամարտությունն ուժով լուծելու Ադրբեջանի ծրագիրը, ապացուցված համարելով, որ հակամարտության խաղաղ կարգավորումը չունի այլընտրանք, հարգանքով վերաբերվելով Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների միասնական դիրքորոշմանը, անսպառով ռազմական գործողությունները առանց նախապայմանների դադարեցնելու նրանց կոչին՝ արձագանքում ենք.

ՀՀ-ն եւ ԱՀ-ն պատրաստակամ են անմիջապես դադարեցնել ռազմական հակազդեցությունը՝ Ադրբեջանի կողմից ռազմական ազդեցության դադարեցման դեպքում:

Էսպիսի մի բան ա պետք անել, այլապես տպավորություն կա, որ գնում ենք ընկել «Նոր պատերազմ՝ նոր տարածքներ» կարգախոսին: Ափսոս են երեխաները:

Դավիթ Մաթեւոսյան, 02 հոկտեմբերի, 2020թ.

# ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆԸ
# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿԸ՝ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ[44]

Հայաստանում այսօր 50-ից ավելի քաղբանտարկյալներ կան: Սա ընդամենը նրանցից մեկի պատմությունն է: Մի մարդու պատմություն, որ իր գիտակցական կյանքի 20-ից ավելի տարիները նվիրել է ժողովրդավարության կայացմանը Հայաստանում: Մարդու, որ դեռևս 25 տարեկանում, լինելով Հայաստանի համայնքների ղեկավարներից ամենաերիտասարդը, Մեղրիում առաջինն է ներդրել պետական սեփականություն հանդիսացող հողակտորների վարձակալությամբ տալու մեխանիզմը, որով փրկել է քայքայման եզրին գտնվող շրջանի տնտեսությունը: Այսպիսով, իր ազատական հայացքների շնորհիվ նա, դեռևս խորհրդային Հայաստանում, արդեն գործնականում ժողովրդավարություն էր կառուցում: Հիմա ժողովրդավարության առաջամարտիկը քաղբանտարկյալ է...

Դավիթ Մաթևոսյանը 2007 թվականի աշնանը Հայաստանում սկիզբ առած Համաժողովրդական շարժման առաջնորդներից է եւ ՀՀ առաջին նախագահ, 2008 թվականի նախագահական ընտրություններում նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի ղեկավար կազմի անդամ, քաղաքական թիմի առանցքային դերակատարներից է:

2008-ի մարտի 1-ի առավոտյան, խաղաղ ցուցարարներին Ազատության հրապարակից դաժանաբար հեռացնելուց մոտ 1 ժամ հետո, Դավիթն իրեն ուղեկցող երկու քաղաքացիների՝ Արմեն Ռաֆիկի Օհանյանի եւ Հովհաննես Հրաչիկի Մաթևոսյանի հետ Աբովյան փողոցի վրա գտն-

---

[44] *«Ազատություն երկիր», 31.03.2008թ.:*

վող Սիլ Պլազայի շենքի կողքից բերման է ենթարկվել Երևանի Քանաքեռ-Զեյթուն ոստիկանական բաժանմունք, որտեղ ապօրինաբար պահվել է երկու օր շարունակ: Հետաքրքրական է, որ Քանաքեռ-Զեյթունում՝ միևնույն վայրից, միևնույն ժամին բերման ենթարկված քաղաքացիների բերման մասին արձանագրությունները կազմվել են տարբեր ժամերի եւ տարբեր կերպ: Քանաքեռ-Զեյթունի բաժանմունքի աշխատակից ոմն Աբրահամյան անմիջականորեն հրահանգել է իր ենթականերին՝ բերման ակտերում «բերման է ենթարկվել ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու կասկածանքով» արտահայտությունը փոխարինել «բերման է ենթարկվել ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու համար», որպեսզի կեղծ վկայությունների հիման վրա հնարավոր լինի «գործ սարքել»: Այս ընթացքում, ավազակապետական իշխանություններն իրենց ստորաբար ծառայող հետաքննչական մարմինների օժանդակությամբ, առանց հիմքերի կեղծ եւ ընթացքում հետին ամսաթվով լրացվող վկայությունների հիման վրա ձերբակալել են նրան: Հետաքննչական մարմիններն առայժմ վկայություններ ստանալու համար չեն կանչել դատախազություն ոչ միայն այդ օրը Դավիթի կողքին եղած քաղաքացիներին, այլեւ մի շարք քաղաքացիների, որոնք իրենց տան պատուհաններից տեսել են, թե ինչպես են նրանց ոստիկանները նստեցնում մեքենա, եւ նաեւ՝ թե Դավիթին, թե Արմենին: Բնական է, որ ոստիկանությանը ոչ մի դիմադրություն էլ չի եղել, որ փոխգնդապետ Մաթևոսյանը շատ-շատերից ավելի լավ է պատկերացնում ոստիկանության հետ շփվելու կարգը...

Հետաքննությունն իրականացվում է օրենքի լրջագույն խախտումներով: Հավելենք նաեւ, որ Քանաքեռ-Զեյթուն ոստիկանատուն բերման ենթարկվածների հետ հանդիպել չեն թույլատրել Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանին, ինչի մասին նշվում է իր պաշտոնական հաղորդագրության մեջ:

* * *

Դավիթ Մաթեւոսյանը 1991 թվականից նշանակվել է Մեղրու Ներքին գործերի բաժնի պետ՝ շրջանի պաշտպանությունը ապահովելու եւ տեղում բանակի ձեւավորման աշխատանքներ համակարգելու լիազորություններով: Այդ թվականներին, նրա անմիջական նախաձեռնությամբ եւ ջանքերով, վտանգելով սեփական կյանքը՝ նա կարողացավ գերությունից ազատել ադրբեջանական զինված ուժերի մոտ գերության մեջ գտնվող մեր 14 հայրենակիցներին, նաեւ հայկական կողմում հայտնված բազմաթիվ ադրբեջանցիների կյանքի եւ անվտանգության միակ երաշխիքը եղել է անձամբ Դավիթը, որն ամեն ինչ արել է, որ անմեղ մարդկանց արյուն չթափվի, կազմակերպել է գերիների փոխանակման հարցերը: Պատերազմական իրավիճակում նրան հաջողվել է երկխոսության մեջ մտնել ադրբեջանական կողմի հետ, կազմակերպել Մեղրու տարածաշրջանի ադրբեջանաբնակ վայրերից խաղաղ բնակչության արտագաղթը՝ թույլ չտալով, որ անմեղ մարդիկ դառնան վրեժխնդրության զոհեր:

Պատերազմի ողջ ընթացքում՝ ընդհուպ մինչեւ զինադադարի կնքումը, Դավիթը մեծագույն ներդրում է ունեցել ոչ միայն Մեղրիի, այլեւ ընդհանրապես ողջ Սյունիքի ինքնապաշտպանության կազմակերպման գործում:

Այս տարիների հայրենանվեր, մարդասիրական աշխատանքն է, որ գնահատվեց մեր ժողովրդի կողմից, եւ 1995թ. ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում նա հաղթեց ձայների ճնշող մեծամասնությամբ:

Ազգային ժողովում որպես պատգամավոր նա ակտիվ օրենսդրական գործունեություն է ծավալել: Նրա ջանքերի շնորհիվ լուծվել են բազմաթիվ տնտեսական հիմնախնդիրներ՝ կատարվել են փոփոխություններ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին օրենքում, փոփոխություններ՝ բյուջեի մասին օրենքում: Կրթության մասին օրենքում նրա առաջարկած փոփոխությունների արդյունքում լուծվել է լեռնային եւ սահմանամերձ գյուղերում ուսուցիչների աշխատավարձի լրավճարի հարցը: Հարկային արտոնություններ են շնորհվել Ազարակի եւ Կապանի Լեռնահարստացման ՊՓԲԸ-ներին: Թերեւս, Ազգային ժողովում նրա ներկայացրած ամենալուրջ փաստաթուղթն իր հեղինակած Ընտրական օրենսգրքի նախագիծն էր, որը, ցավոք, չի ընդունվել այն տարիներին: Այս օրենսգրքի նախագիծը պատմական մեծ նշանակություն ունի, քանի որ նրանում առաջարկվող մեխանիզմները ժամանակին ընդունվելու դեպքում՝ այսօր, թերեւս, կասեցնեին այն խայտառակ ընտրական գործընթացները, որ տեղի են ունենում ՀՀ-ում:

1996թ. փետրվարին նշանակվել է Սյունիքի փոխմարզպետ:

1999–2000 թթ. նա գլխավորել է ՀՀ Կառավարությանն առընթեր «Հայանտառ»-ը: Այդ կարճ ժամանակում նա հասցրեց արմատապես փոխել վերաբերմունքն անտառի նկատմամբ, հանդես եկավ բնագավառի բարեփոխումների վերաբերյալ բազմաթիվ օրենսդրական առաջարկություններով, որոնց մի մասն ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից եւ հաջողությամբ գործում է առայսօր: Նրա պաշտոնավարման ընթացքում էական երկխոսություն է սկսվել բնապահպանական հարցերով զբաղվող մի շարք միջազգային կառույցների հետ:

Վերջնականապես հիասթափվելով Հայաստանում հաստատված Ռոշարյանասերժական ռեժիմից՝ Ոստիկանության փոխգնդապետ Դավիթ Մաթեւոսյանն իր կամքով հեռացել է պետական ապարատից եւ հանուն ժողովրդավարության եւ ազատության իր պայքարը շարունակել՝ սկզբում որպես քաղաքացի, իսկ 2006-ից՝ որպես հրապարակային եւ քաղաքական գործիչ՝ վերադառնալով ակտիվ քաղաքական կյանք:

Բռնարարքները եւ ճնշումները Դավիթ Մաթեւոսյանի նկատմամբ ունեն իրենց նախապատմությունը: Ավազակապետական իշխանությունները վաղուց են նրան պահում ուշադրության կենտրոնում՝ սկսած 2006 թվականից, երբ վերադարձել է քաղաքականություն եւ հրապարակայնորեն հանդես եկել գործող իշխանությունների կողմից տարվող քաղաքականության դեմ: «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնության հիմնադիրներից է եւ խորհրդի անդամ: «Այլընտրանքի» ձեւավորման առաջին իսկ օրերից ենթարկվել է հետապնդումների, բռնարարքների, ճնշումների: 2007 թվականի Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցել է որպես թեկնածու՝ ընդդիմադիր «Իմպիչմենտ» դաշինքի կողմից:

2007-ի մայիսի 9-ին Նալբանդյան փողոցով անցնող խաղաղ ցուցարարների նկատմամբ ԱԱԾ շենքի մոտ կիրառվեց բռնություն, որի ընթացքում Դավիթ Մաթեւոսյանը դաժանաբար ծեծի է ենթարկվել եւ առեւանգվել իրավապահների կողմից: Միայն համառորեն կանգնած եւ առեւանգվածների ազատումը պահանջող ցուցարարների ճնշման տակ նրան բաց թողեցին: Այս բախման համար ոչ ոք պատասխան այդպես էլ չտվեց, չնայած կային բազմաթիվ ապացույցներ, կադրեր, թե ինչպես է խաղաղ երթը կասեցվում եւ օգտագործվում արցունքաբեր գազ ու բռնություն իրավապահների կողմից: Միայն ազատ մամուլը հանդես եկավ այդ օրվա բռնարարքները դատապարտող հայտարարություններով:



2007 թվականի հոկտեմբերի 23-ին մի խումբ համախոհների հետ բերման է ենթարկվել Կենտրոնի ոստիկանատուն, որտեղ պահվել է մինչեւ գիշերվա ժամը 3-ը եւ միայն ոստիկանատան առջեւ հավաքված հոծ բազմության եւ առաջին նախագահի անձնական ներկայությամբ եւ պահանջով բաց է թողնվել, այդ օրը բերման է ենթարկվել նաեւ նրա 18-ամյա որդին: Նրա որդուն՝ Թեւոս Մաթեւոսյանին եւ անչափահաս աղջկան՝ Հերմինե Մաթեւոսյանին նույնպես տարբեր առիթներով, ոստիկաններն առեւանգել են փողոցից եւ ապօրինաբար պահել մի քանի ժամ ոստիկանատանը՝ հոր գործունեության մասին տեղեկատվություն կորզելու նպատակով:

Ավելացնենք, որ ինչպես տեղեկացանք Մաթեւոսյանի պաշտպան Արտավազդ Փարսադանյանից, նա այժմ գտնվում է «Վարդաշեն» բրեակատարողական հիմնարկում: Քննությունը դեռ շարունակվում է, չի բացառվում, որ նրան նոր մեղադրանք առաջադրվի: «Իմ ներկայությամբ Մաթեւոսյանը հարցաքննվել է, ընդունել, որ մասնակցել է միտինգներին, բայց նշել է, որ դրա մեջ հակաօրինական ոչինչ չի տեսնում: Նաեւ ասել է, որ իր նկատմամբ բռնություն չի կիրառվել»: Փարսադանյանը փոխանցել է, որ իր պաշտպանյալը վնասվածքներ չունի:

Ուզում ենք հավատալ նաեւ, որ իրավապահ մարմինները, հատկապես դատական ատյանը, հաշվի կառնեն Դավիթ Մաթեւոսյանի անցած ուղին:

## ԲԱՑ ՆԱՄԱԿ ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆԻՆ[45]

Հարգարժան հայրենակից.

Ազատության, արդարության, մեր եւ մեր երեխաների ապագայի համար մղվող պայքարի առաջին օրերից սկսած՝ մենք Ձեզ հետ ենք:

Այն, որ ՄԵՂՐԵՑԻՆ այսօր ակտիվորեն չի մասնակցում համաժողովրդական շարժման նախաձեռնություններին, դեռևս չի նշանակում, որ այս անօրեն իշխանությունները մեր գողտրիկ, հեռավոր եւ բազմաթիվ շահարկումների առարկա դարձած տարածքում տեղ ունեն...

ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂՐԵՑԻՆ դա վաղուց է ապացուցել եւ շարունակում է ապացուցել ամեն ոտքի. դրա վառ ապացույցը հանրապետական մակարդակի ցանկացած ընտրություններն են, որոնց ժամանակ իշխանությունները հիմնականում պարտվողի դերում են (չանդրադառնամ այն հանգամանքին, որ ժամկետային զինծառայության մեջ գտնվող մեր հայորդիներին հայց բանակում փոխանակ դաստիարակեն հայրենասիրական ոգով, դարձնում են մտի եւ խղճի ստրուկներ եւ շարքերով բերում մասնակցելու ԷՇԸ ՑԵԽԻՑ ՀԱՆԵԼՈՒ լավ ծրագրված եւ բազմաթիվ ֆնարկումներ անցած օպերացիային, երբեմն դա նրանց հաջողվում էր եւ որոշ ընտրատեղամասերում հաղթում էին (եթե, իհարկե, դա կարելի է հաղթանակ անվանել):

Իշխանություններն՝ ի դեմս հանրապետական բարձրաստիճան պարոնների եւ մարզային կատարածուների, վաղուց են ապացուցել, որ թքած ունեն թե՛ մեր տարածքի, թե՛ այնտեղ ապրող մարդկանց վրա...

Բավական է միայն հիշել կամ առավել եւս հիշեցնել կիսագրագետ

[45] *«Այսնյաց Երկիր», 15.09.2008թ., հատվածաբար տպագրվել է նաեւ՝ «Ժամանակ» թերթում, 31.10.2008թ.:*



եւ խեղկատակ մեղրեցի իշխանիկներին եւ նրանց «դուխ տվող» մի քանի ստրկամիտ պաշտոնյաներին, թե ինչպես էին «երկրի տերերը» մի գշի հարվածով վերացնում Մեղրիում հիվանդանոցային որոշ ծառայություններ, եւ միայն Լենուզիաստների ակտիվ նախաձեռնությամբ կանխվեց ստրատեգիական նշանակություն ունեցող տարածքի առողջապահության բնագավառի հերթական «բարեփոխումը»:

Կամ լրջորեն մտածել, թե ինչպես են վերաբերվում Մեղրու եւ մեղրեցու ցանկացած խնդրին՝ մարզպետարանում կամ հանրապետությունում:

Փառ Աստծո, որ գտնվեցին մարդիկ՝ ի դեմս մեր առաջին նախագահի եւ նրա խիզախ ու աննկուն համախոհների, որոնք ինքնազոհողության գնով սկսեցին համաժողովրդական շարժումը եւ ձեռնամուխ եղան հանցավոր եւ անօրեն իշխանությունների դեմ պայքարին եւ հայի ինքնամաքրման գործընթացին:

ՄՏԱԾՈՂ ՄԵՂՐԵՑԻՆ ՊԵՏՔ է ՀՊԱՐՏԱՆԱ, ՈՐ ԴԱՎԻԹ ՄԱԹԵՒՈՍՅԱՆԸ ԿԱ ԱՅՍՕՐՎԱ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՈՐ ՄԵՂՐԻՆ ԱՅՍՕՐ ՁԵՐ ԴԵՄՔՈՎ է ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋ ՄՏԵԼ... Ցավոք, մեղրեցին (բարեբախտաբար՝ ոչ բոլորը) աստիճանաբար կորցնում է իր դեմքը, իր խիղճը, մտածելու իր ունակությունը, մարդկային արժանիքները... դրանք ծախում են մի թիզ տարածքով՝ նույնիսկ Ձեզ վրա ցեխ շպրտելով... մի մարդու, որը եղել է Մեղրու ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչը, մի մարդու, որի փոխմարզպետ լինելու տարիներին մեղրեցին իրեն անտեր չէր զգում, ինչպես հիմա, մի մարդու, որը սկզբունքային է եւ անվախ, մի խոսքով՝ ԻՍԿԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ: Իսկ մեր կողմին իր գոյն է քարշ տալիս մարդու մի տեսակ, որ ճնճիմ է, վախկոտ է, շողոքորթ է, անբարոյական է բառի տարբեր իմաստներով եւ դեռ ուրախ է, որ ապրում է՝ «վայելելով կյանքի հաճույքները»:

Ո՛չ, Դուք չեք դատապարտված անազատության մեջ, եւ նաղերը չէ, որ փոխում են Ձեր կարգավիճակը, այլ նրանք, որ ստրուկ են մտքով եւ խղճով, եւ այդպես էլ ստրկամիտ դաստիարակում են իրենց զավակներին:

ՄԻ ԽՈՍՔՈՎ՝ ՁԵԶ ԵՒ ՁԵՐ ՆՄԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՆՔ ՄԵՆՔ. մենք, որ մտածել գիտենք, որ պայքարել գիտենք, որ հավատալ եւ հասկանալ գիտենք, ինչու չէ՝ նաեւ ամաչել գիտենք, ամաչել այսօրվա իրականության համար, որի պատասխանատուն է մեզանից յուրաքանչյուրը:

Պայքար, պայքար միչեւ վերջ:

Հաղթելու ենք անկասկած: **Համաժողովրդական շարժման 187 մեղրեցի աջակից:** (Ստորագրություններ կան)

## ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ ՁՈՀՎԵԼ Է ԴԱՎԻԹ ՄԱԹԵՈՍՅԱՆԸ[46]

Ռազմի դաշտում հայրենիքի պաշտպանի իր պարտքը կատարելիս զոհվեց հայտնի քաղաքական գործիչ, ազատամարտիկ Դավիթ Ղեւոնդի Մաթեւոսյանը:

Դավիթ Մաթեւոսյանը ծնվել է 1960 թվականի մարտի 22-ին, Մեղրիի շրջանի Կարճեւան գյուղում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտում՝ հիդրոինժեների մասնագիտությամբ: Աշխատանքային գործունեությունն սկսել է Ագարակի հանքաշինական վարչությունում, Մեղրիի կոմերիտմիության շրջկոմում, ապա՝ 1985 թվականին նշանակվել է Կարճեւանի խորհրդային տնտեսության տնօրեն: Նա եղել է առաջին պաշտոնյան, որը, մեծ ռիսկի դիմելով, ղեռեւս Հայաստանի անկախությունից առաջ, խորհրդային տնտեսության հողատարածքը որպես սեփականություն բաժանել է գյուղացիներին, ինչի համար խորհրդային իշխանությունները նրան պատժի են ենթարկել:

1992–1995 թվականներին աշխատել է որպես Մեղրիի ոստիկանության շրջանային բաժնի պետ: Ղարաբաղյան շարժման առաջին օրերից Դավիթը դրա ակտիվ մասնակիցն էր, կազմակերպիչը, Շարժման, ապա՝ ՀՀՇ տեղական մարմինների հիմնադիրը եւ ղեկավարը:

1989–1990 թվականներին, սահմանների պաշտպանության խնդրի առաջացման շրջանում նա զբաղվել է տեղի երկրապահ ջոկատների կազմակերպմամբ: Ղեւոնդ Հովհաննիսյանի հետ միասին ղեկավարել է ինքնապաշտպանության գործը՝ ինչպես Նախիջեւանի, այնպես էլ Ադրբեջանի Ջանգելանի շրջանի հետ սահմաններում:

[46] *iLur.am, 23.10.2020թ.:*



1995–1999 թթ. Դավիթ Մաթեւոսյանը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր էր: 1996թ. նշանակվել է Սյունիքի փոխմարզպետ: 1998թ. մարտին ՀՀ Առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի քաղաքական թիմի կազմում հրաժարական էր ներկայացրել փոխմարզպետի պաշտոնից:

1999–2000 թվականներին աշխատել է որպես Հայաստանի անտառային տնտեսության տնօրեն:

Դավիթ Մաթեւոսյանը երբեք չհաշտվեց այն իրականության հետ, որը հաստատվեց 1998–1999 թվականներից հետո: Նրա ակտիվ քաղաքական գործունեությունը 1999 թվականից «Արմատ» ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն հասարակական կազմակերպության, ապա 2006 թվականից՝ նույն հիմքի վրա ստեղծված «Այլընտրանք» հասարակական-քաղաքական շարժման շրջանակներում էր, որոնց հիմնադիր անդամներից էր ինքը:

2007 թվականի աշնանից ծավալված համաժողովրդական շարժման առաջին շարքերում եւս կենտրոնական դեմքերից էր Դավիթ Մաթեւոսյանը՝ որպես հանրահավաքների կազմակերպիչ, ամենապատասխանատու գործերի ու նախաձեռնությունների իրականացնող: Նա 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններում Առաջին նախագահ եւ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի 10 անդամներից մեկն էր: Մարտի 1-ի ոճրագործ բռնարարքի օրը հարյուրավորների հետ ձերբակալվեց նաեւ Դավիթը եւ, ինչպես մյուսները, ապօրինի դատապարտվեց տեւական ազատազրկման՝ 100-ից ավելի քաղբանտարկյալների հետ միասին:

2009 թվականի հունիսին համաժողովրդական շարժման ջանքերով կալանքից ազատվելուց հետո նա նույնպիսի ակտիվությամբ եւ նվիրումով շարունակեց պայքարը Հայ ազգային կոնգրեսի շարքերում՝ որպես նրա ղեկավար մարմնի անդամ: Իր եւ մյուս քաղբանտարկյալների արդարացման գործը նրա նպատակներից մեկն էր: Եւրոպական դատարանի եւ Հայաստանի Վճռաբեկ դատարանի որոշումներով նա մոտ մեկ տարի առաջ արդարացվեց:

Իր կյանքի էական մասը որպես երկրապահ, զինվոր ապրած Դավիթ Մաթեւոսյանը խաղաղության համոզված ու անխոնջ մարտիկ էր: Նրա բազմաթիվ քաղաքական, հրապարակախոսական հոդվածները լայն լսա-

ման ունեին՝ ոչ միայն շնորհիվ իր սուր մտքի, շիտակության ու համարձակության, այլեւ՝ յուրատեսակ գեղեցիկ լեզվի:

Հայ ազգային կոնգրեսը խոր կսկիծով սգում է բոլորի կողմից շատ սիրված Դավիթ Մաթեւոսյանի մահը, կիսում նրա ընտանիքի անդամների, բարեկամների ծանրագույն վիշտը:

Դավիթ Մաթեւոսյանի հոգեհանգիստը տեղի կունենա այսօր՝ Մեղրիի տարածաշրջանի Կարեւան համայնքի Սբ. Աստվածածին եկեղեցում, ժամը 17.30–20.00-ին, վաղը՝ Երեւանում՝ Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցում, ժամը 17.30–20.00-ին: Հուղարկավորությունը՝ հոկտեմբերի 25-ին, ժամը 11-ին Եռաբլուրում:

Հայ Ազգային Կոնգրես

* * *

ԼԵՒՈՆ ՁՈՒՐԱԲՅԱՆ[47]. Դավիթ Մաթեւոսյանը չի զոհվել որպես հերոս, նա իր ամբողջ կյանքն է ապրել որպես հերոս՝ մինչեւ վերջին վայրկյանը: Դրա համար որեւէ նիգ չի գործադրել, ու դա եղել է իր համար այնքան բնական վիճակ, որ դրանով երբեմ չի հպարտացել:

Փայլուն զինվորական էր՝ հրետանավոր, բայց էդ կարգավիճակին հասել էր ինքնուս՝ լինելով հնարամիտ ինժեներ եւ անցնելով առաջին արցախյան պատերազմի դպրոցը: Որպես զինվորական, ռազմի դաշտում անողոք էր թշնամու հանդեպ, բայցեւ, ինչպես իսկական զինվորական, հարգանքով էր վերաբերվում հակառակորդին, երբեմ նրան շքեղագնահատելով եւ բացառձակ մարդկային վերաբերմունք դրսեւորելով գերիների նկատմամբ: Հետեւաբար, հարգված էր ոչ միայն հայերիս կողմից, այլ նաեւ ադրբեջանցիների: Իր խոսքը խոսք էր, դա գիտեին եւ մերոնք, եւ նրանք: Դրա համար էլ գերիների փոխանակման գործը միշտ իրեն էր հանձնարարվում:

Զգիտեմ, էդքան քանակությամբ լավ մարդկային որակներ մեկ մարդու մեջ ինչ էր տեղավորվում, եւ մեկ այլ նմանը աշխարհում կա՞ ընդհանրապես: Համարձակ, սկզբունքային, պատասխանատու, վճռական, ուժեղ, արդար, բարի, նշմարտախոս, խորաթափանց, նրբազգաց, խելացի,

[47] *iLur.am, 23.10.2020թ.:*



կարեկցող, սրամիտ, ժպտերես, ազնիվ, բաց, համակրելի, սթափ, գործնական, աշխատասեր, հուսալի, շռայլ: Անսահման ազնվականությո՛ւն: Ոչ մեկից ոչ մի բան երբեմ չի վերցրել եւ բոլորին միշտ միայն տվել է իր ստեղծած բարիքները, աջակցությունն ու եռանդը:

Հայրենիքի պաշտպանության գործը նրա համար միայն սահմանների պաշտպանությունը չէր: Հայրենիքի պաշտպանության գործը նրա համար նաեւ հայրենիքի մաքրությունն էր, արդարությունը, ժողովրդավարությունը եւ ազատությունը: Այդ գործի համար էլ նա պատրաստ էր ամեն զրկանքի: Միայն այն հանգամանքը, որ Դավիթի նման մարդը կարող էր շինծու մեղադրանքներով մեկուկես տարի անցկացնել բանտում, նրան կալանավորած բոնապետության լավագույն դատավճիռն էր: Բայց նրան ոչինչ չէր կարող ընկճել կամ կոտրել, հալածանքները նրան միայն ավելի զորեղ եւ պայծառ էին դարձնում:

Դավիթը նաեւ տաղանդավոր գրող էր, որի համար չկար ազգություն, այլ կար մարդ: Դաժան պատերազմ անցած, նա միշտ քարոզում էր սեր, արժանապատվություն եւ խաղաղություն: Հրանտի, Վանոյի երկրի եւ հողի զգացողությունը կար իր շնորհալի գործերում:

Սա նաեւ իմ ընտանիքի համար անձնական եւ դաժան ողբերգություն է: Իմ ամենամտերիմ եւ ամենաամենահարազատ ընկերներից էր: Երբ գալիս էր Մեղրիից, առաջինը պետք է գար Հայ Ազգային Կոնգրեսի գրասենյակ եւ պայթեցներ մեր քաղաքական բանավեճը, իսկ երեկոյան պիտի գար մեր տուն, որ ըմբոշխնեինք Շողերի նաշերը եւ իր քաշած թզի, թթի եւ սերկեւիլի օղիները: Միակ բանը, որով երեխու պես պարծենում էր՝ իր քաշած օղիներն էին, եւ իսկապես հիասքանչ էին: Նրա ամեն գալը տոն էր դառնում՝ նշմարտության, ուրախության, անկեղծության: Հիմա էլ դեռ երկար ժամանակ տոն չի լինելու:

Ընտանիքիս վշտակցությունը կնոջը՝ Սուսաննային, զավակներին՝ Թեւոսին, Հերմինեին, Ղեւոնդին:

Մի բան էլ: Փակագծերը հիմա չեմ բացվում, բայց էնպես էր ստացվել, որ ինքնապաշտպանությունը կազմակերպելիս, Դավիթը մի քանի հոգու հետ միասին, ըստ էության, մեն-մենակ էր մնացել թշնամու բանակի դիմաց: Ինչպես միշտ, նա ընդունեց մարտահրավերը, գիտակցաբար եւ խիզախաբար մտնելով անհավասար մարտի մեջ, որովհետեւ այլընտրանք չկար: Նա տվեց հայրենիքին ամեն ինչ՝ ինչ ուներ, բայց հայրենիքն

իրեն ոչնչով դեռ չի փոխհատուցել: Նրա անցած ուղին, նրա հերոսական անձնատուր պայքարը հայրենիքի գոյության եւ ազատության համար, նրա անկրկնելի քաղաքացիական ծառայությունը սեփական երկրին՝ արժանի են Ազգային հերոսի կոչման:

* * *

ՄԱՐԻԱՄ ԾԱՏՐՅԱՆ[48]. Հարազատ լինելը՝ մի կողմ, ես ընկեր եմ կորցրել, ես գաղափարի մարտիկ եմ կորցրել, ես զերազույն գլխավոր խորհրդական եմ կորցրել, հոգի մարդու եմ կորցրել: Պատերազմն ինձնից Դավիթին խլեց:

Իմ ամեն զանգին պատասխանում էր՝ «հա, շեֆ ջան» նախաբանով:

Ամուր էր, կոտրում էին, չէր կոտրվում, հուսահատվում էի, զանգում-դժգոհում էի, լսում էր, հաջորդ օրը զանգում ասում՝ պիղծ եղիր, մանր հարց է: Գլուխս էդպես խաբում էր, որ չընկճվեմ:

Օրվա մեջ 3 անգամ խոսում էինք, ինքնակում ցանկացած իրավիճակ, իրադարձություն: Ամսի 27-ից խառն էր ու անհանգիստ, ավելի շատ էինք խոսում: Անելիքը լավ գիտեր: Մոայլվում էր հաճախ, զայրույթի համար թիրախ ընտրում ինձ, վերջում ասում՝ կներես, անուշս, դու մեղավոր չես, բայց թող կիսվեմ:

Երեկ ուշ ժամի զանգեց ու կարճ խոսեց, չհասցրեցի օրվա լրահոսը ներկայացնել: Չհասցրեցի... Հետո զանգերս անպատասխան մնացին:

Ասում էր՝ Մարիամ, հիշիր, մարդու ամենամեծ ձեռքբերումը խաղաղությունն է: Համաձայնվում էի: Դավիթ ջան, կներես ինձ եւ մեզ, որ խաղաղության սպասումդ էդքան երկար տեւեց: Կներես:

Դավիթ, լույսերի մեջ մնաս, Դավիթ: Թախիծիս մեջ լուսավորություն կա, պարտ կա, մեղքի զգացում կա, Դավիթ, հպարտություն կա:

[48] *ilur.am, 23.10.2020թ.:*



* * *

ԼԻԶԱ ՃԱՂԱՐՅԱՆ[49]. Ես երբ մտածում էի, որ Մարդը կարող է նաեւ կատարյալ լինել, Քեզ էի հիշում, Դավիթ ջան: Ես քո մասին մտածելիս միշտ հարց էի տալիս ինքս ինձ, թե ոնց է հնարավոր էդքան Մարդ լինել, որքան դու ես էս նամարդ աշխարհում: Ես չգիտեմ էն բառը, չկա էն բառը, որով աշխարհին ասեմ, թե դու ինչ Աշխարհ էիր, ու որ Հայաստանը Աշխարհ կորցրեց քեզ զոհելով: Դավիթ ջան:

* * *

ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆՅԱՆ[50]. ԺԱՅՌ էր Դավիթը: Ամենայն դրականի չափանիշ մի ժայռ: Քո կիսատ թողածն իրագործելու խոստումը սրտներումս, ԸՆԿԵՐ...

* * *

ԴԱՎԻԹ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ[51]. Ինչ տեսակ մարդ ես, որ գնալուցդ հետո էլ շազատվեցի գրաքննությունիցդ: Մարդ չգիտի ինչ անի: Բառ գրելուց հա՛ մտածում ես, որ նոռում չենչի, թե չէ ձեռքիցդ պրծնել չի լինի:

Ընկեր, պիտի ինձ ներես, եթե էս տողերում զգվածդ պաթոսը տեսնես: Խոսելով, պատմելով ու հիշելով ա, որ էս դառնազույն վշտից փախուստ, թախտաց ու սփոփանք եմ փնտրում:

Կներես: Նենց գնացիր, որ ընկերության տարիների ընթացքում, խախանդ ժամանակներում, համիդ, հոտիդ, հումորիդ ու ընդհանրապես կողքդ լինելու հաճույքի մասին գրել չի լինում: Երբ գիտեի, որ կաս՝ հեշտ էր ու ապահով: Մանր, խղճի ու ճշմարտության հետ կապված որոշում կայացնելուց՝ կգանգեի, հետդ կխորհրդակցեի, բեռի մի մասն էլ վրադ կթողնեի ու հանգիստ կապրեի:

[49] *ilur.am, 23.10.2020թ.:*

[50] *ilur.am, 23.10.2020թ.:*

[51] *iLur.am, 24.10.2020թ.:*

Բա հիմա ինչ անեմ: Էլի բոլորիս լռեյայն դաստիարակում ես: Ստիպում ես, որ մենք մեր խիղճը գտնենք, սկսենք մեր խղճով ու խելքով ապրել... Բա որ չնգենք: Թե մի բանում համոզված էիր, համփան նախանշած՝ «արգելակ» բառը չէիր ճանաչում, ոչնչի առաջ կանգնել չունեիր: Ընտանիք, ընկերներ... Բոլորիս համփան ցույց էիր տալիս, զգուշության կոչերն էլ՝ էն համեստ ու սիրուն ժպիտովդ լռեցնում:

«Խաղաղություն» բառը հայհոյանք սարքած, խաղաղասերին դավաճան համարող հասարակությունից ձեռ չմաշեցիր, կրկին ու կրկին փորձեցիր շտկել, իսկ վերջում՝ արդեն կյանքիդ գնով...

Կյանքդ տվիր ու մտքիդ ծայրով էլ չանցկացրիր, որ ինձ համար էդ հասարակությունն առանց ինձ արժեք չունի...

Դժվար ա լինելու առանց ինձ, ընկեր ջան...

## ԴԱՎԻԹ ՄԱԹԵՈՍՅԱՆ. ՆՐԱ ԿՅԱՆՔԸ ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՎԱՌ ՕՐԻՆԱԿ Է[52]

Հրադադարից երկու ամիս անց անգամ չենք կարողանում ամբողջացնել Արցախյան երրորդ պատերազմում նահատակված սյունեցիների ամբողջական անվանացանկը:

Մի բան է ակնհայտ՝ մարզում չկա բնակավայր, որ չունենա զոհված կամ անհետ կորած զավակ:

Եւ փորձում ենք խորանալ նահատակներից յուրաքանչյուրի կենսագրության, մարտական ուղու մանրամասների մեջ: Ու ամեն դեպքում ակներեւ է դառնում, որ գործ ունենք հայրենիքին անձնուրացորեն նվիրվելու իրողության հետ:

Այդ հանգամանքն էլ հիմք է դառնում, որ հուզմունքի ու սգի միջից նորովի վերընձյուղվի մեր ազգային հպարտությունը, մեր պատասխանատվությունը հայրենիքի ներկայի ու գալիքի հանդեպ:

Մանավանդ որ հայրենիքը եւ հատկապես Սյունիքը շարունակում են մնալ վտանգի մեջ...

* * *

Այսօր առանձնահատուկ ակնածանքով ենք ուզում հիշել մեր նորօրյա պատերազմի հերոսներից մեկին՝ Դավիթ Մաթեւոսյանին:

Եւ ոչ միայն հիշում ենք, այլեւ խոնարհվում նրա անմեռ հիշատակի առջեւ, նաեւ փաստում, որ նրա ու մյուս նահատակների արյամբ երիցս արբա-

[52] *syuniacyerkir.am, 30.12.2020թ.:*

գործվել է Սյունյաց հողը, որ նորովի է հայրենացել մեր լեռնաշխարհը:

Ու որքան հեռանում ենք 2020թ. հոկտեմբերի 22-ի օրվանից, երբ տարածվեց Դավիթ Մաթևոսյանի մահվան բոթը, ու մի նոր տրտմություն իջավ Սյունյաց տան վրա, ավելի հաստատուն է դառնում մեր ձգտումը՝ ներողություն հայցելով՝ չհամաձայնել Համո Սահյան նահապետի մի բանաձևումին. **«Իմ մահով ոչինչ չի փոխվի կյանքում»**: Չէ, այդպես չի լինում, դա նիշտ չէ մարդկային ամեն մի կորստի դեպքում, հատկապես երբ մահը վասն հայրենյաց է լինում, հատկապես երբ մարդ հայրենիքի զոհասեղան է բարձրանում գիտակցաբար: Այդպես է նաև Դավիթ Մաթևոսյանի դեպքում. նրա մահով շատ բան է փոխվել ու փոխվում առնվազն մեր անկրկնելի Արևիմ աշխարհում: Նրա մահով կորցրեցինք այունեցու մաքրամաքուր արժանիքները կրող անհատականություններից ևս մեկին...

Դավիթ Մաթևոսյանի մասին շատերն են խոսք ասել նրա մահվան առիթով ու դրանից առաջ ու հետո: Ու դեռ ասվելու է...

Ինքս էլ հիշողություններ ունեմ՝ հատկապես նրա կյանքի այն շրջանից, երբ Սյունիքի նորաստեղծ մարզի ղեկավարի (մարզպետի) տեղակալն էր՝ փոխմարզպետը...

Անշուշտ, ծանոթ էինք նրա նախորդ շրջանի կենսագրությանը, բայց 1996–98 թվականներին, հիրավի, նորովի բացահայտվեց նրա լուսավոր կերպարը Սյունիքի մարզի մի շարք ոլորտներում ու համայնքներում:

Նրա գործունեությունն ի սկզբանե չէր տեղավորվում փոխմարզպետի ի վերուստ սահմանված պաշտոնական լիազորությունների շրջանակում:

Ավելին էր, քան փոխմարզպետը կարող էր լինել կամ պետական պաշտոն եւ աստիճան ունեցողը:

Կարողանում էր մտածել երկրի, հանրապետության կտրվածքով:

Կարողանում էր վեր բարձրանալ աննկանից եւ ապրել երկրի, ազգի ընդհանրական շահերով, ինչին ֆչերն են ընդունակ:

Եւ մեր ժողովրդի վերածնունդն ու առաջադիմությունը տեսնում էր արդարության, ճշմարտության, բարոյականության մեջ:

Նրա տաք շունչը, ոչ ստանդարտ մտածելակերպը, նորի հանդեպ ձգտումը զգացվում էր մարզային կյանքի մի շարք ոլորտներում:

Մի խոսքով՝ ինքն առողջ, բարձր ու ախորժելի մի զեփյուռ էր, որ այդ տարիներին թեւածեց նորաստեղծ մարզի կառավարման համակարգում:



Ի դեպ, դա սովորական ժամանակ չէր. պատերազմը նոր-նոր էր ավարտվել, իսկ Սյունիքի մեծաթիվ վերքերը բուժել էր պետք...

Եւ իր գործունեությամբ մարզի իշխանական համակարգին յուրովի եռանդ ու ոգեւորություն էր փոխանցում:

Եւ որ մի ոլորտով էլ զբաղվում էր՝ առաջադիմությունն անխուսափելի էր դառնում:

* * *

Դավիթ Մաթևոսյանին դեռ պատանեկան տարիներից լին նկատել Մեղրիի շրջանի ղեկավարները ու փորձել նրա գիտելիքները, եռանդն ու կազմակերպչական ունակությունները ծառայեցնել շրջանի զարգացմանը:

1982-ին Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետն ավարտելուց հետո (ինժեներ-հիդրոտեխնիկի մասնագիտությամբ) պատասխանատու պաշտոններ է վարել շրջանում՝ Ագարակի հանքաքիմական վարչության աշխատակ, Ողջաբերդ եւ ջրօգտագործման վարչության ինժեներ, կոմերիտմիության շրջկոմի պատասխանատու աշխատող, Կարեւեանի պետական տնտեսության տնօրեն, ՆԳ Մեղրիի բաժնի պետ...

Բոլոր այդ պաշտոններում էլ դրսեւորել է եռանդ եւ աշխատասիրություն, հանձնարարված գործի նկատմամբ պատասխանատվություն, հայրենի քարափների հանդեպ տիրոջ սրտացավություն:

Այդ ամենի համար է նաեւ, որ նրան ընդգծված հարգանքով ու պատկառանքով են վերաբերվել ոչ միայն բնօրրան Մեղրիում, այլեւ ամբողջ մարզում ու մեր երկրամասի սահմաններից դուրս:

Հովհաննես Թումանյան անհասանելի գագաթը մի առիթով ուշագրավ դիտարկում է արել. **«Անհատներ կան, որ առանց իշխանության է... միշտ երեւում են իրենց ինքնուրույն կերպարանքով, ուժով ու շնորհքով»:**

Այդ միտքը, կարծեմ, Դավիթ Մաթևոսյանի նկարագիրն ունեցող մարդկանց համար է ասված. երկար տարիներ պաշտոն չի ունեցել, նույնիսկ անգործ է մնացել ու հալածվել, բայց միշտ էլ աչքի է ընկել իր ինքնուրույն կերպարանքով, վեհությամբ ու հեղինակությամբ:

Նրա անունն արդեն իսկ լրջություն, հարգանք ու պատկառանք էր առաջ բերում շրջապատում...

* * *

Հայրենասիրությունը, հայրենի եզերին նվիրվածությունը Դավիթ Մաթեւոսյանի համար բառեր չէին սոսկ, այլ կոնկրետ գործերի հանրագումար, անմնացորդ նվիրում ազգային գործերին...

Դա հատկապես երեւաց 1990-ականներին, երբ հայ ժողովուրդը ոտի էր ելել հայոց Արցախի ազատագրության համար, երբ հայրենի Արեւիք աշխարհը եւս ռազմական գործողությունների թատերաբեմ էր դարձել:

Փառահեղ Ղեւոնդ Հովհաննիսյանի հետ կարողացան արժանապատվորեն գլխավորել Մեղրիի տարածաշրջանի ինքնապաշտպանությունը:

Քանի-քանի անգամ Սպարապետ Վազգեն Սարգսյանից ինքներս ենք գնահատանքի ու երախտիքի խոսքեր լսել Դավիթ Մաթեւոսյանի մասին:

Նրա հայրենանվիրության նոր պոռթկումին ականատես եղանք 2020-ին՝ Արցախյան երրորդ պատերազմում:

Սեպտեմբերի 27-ից հետո վերադարձել էր Մեղրի եւ բազմակողմանի գործունեություն ծավալել երկրամասի անվտանգության ապահովման ուղղությամբ, մանավանդ որ հոկտեմբերի կեսերին թուրք-ազերիները թիրախավորել էին նաեւ Մեղրիի շրջանի արեւելյան սահմանամերձը:

Բազմաթիվ ճանաչված գործիչներ, բարձրաստիճան զինվորականներ, կամավորականներ ու շարքային զինվորներ մեզ պատմեցին, թե կազմակերպչական ինչպիսի գործունեություն էր ծավալել Դավիթ Մաթեւոսյանն ամրաշինության ոլորտում, աշխարհազորայինների մոբիլիզացման, սահմանի պաշտպանությունն ամուր հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Առանց չափազանցության՝ նրա կերպարը պատերազմական այդ օրերին ոգեշնչման աղբյուր էր շատերի համար:

Մարտական առաջադրանքներ կատարելու ժամանակ էլ մահացու վերքեր ստացավ թշնամու անօդաչու սարքի հերթական գրոհի հետեւանքով...

Գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանը ողբերգական այդ պատահարից հետո մեզ պատմեց, թե մարտական ինչպիսի կարեւոր առաջադրանք էր կատարում Դավիթ Մաթեւոսյանը Հայաստանի Հանրապետության հարավ-արեւելքի այդ հատվածում:

Դավիթ Մաթեւոսյանը յուրովի էր վերաբերվում Արցախյան նոր պատերազմին, ինչն արտացոլված է նրա վերջին հարցազրույցներից մեկում. **«Արցախյան այս պատերազմին պետք է վերջ տրվի խաղաքարեր միջամտությամբ...»**: Նաեւ ցավ էր ապրում, որ իր սերունդը չկարողացավ Արցախյան հիմնախնդիրը վերջնականապես լուծել ու դա թողեց հաջորդ սերնդին. **«Ցավոք, մենք երկրորդ անգամ ենք սերունդ կորցնում...»**:



* * *

Դավիթ Մաթեւոսյանի նկարագիրն արտացոլող եւս մի քանի շտրիխ. համարձակ անձնավորություն էր, ազատության, ժողովրդավարության, արդարության իսկական մարմնավորում:

Կամայական դատավճռով մոտ մեկուկես տարի մնաց բանտարկված, բայց նրա մեջ նեղացածություն, չարություն, ընկճվածություն չծլարձակեց երբեք, իսկ երկրի, ազգի վաղվա օրվա հանդեպ լավատեսությունն ու հավատը չնահանջեցին:

Եւ ուրեմն՝ երիցս ափսոս, որ այլեւս մեզ հետ չէ, որ նրա բարձր ներկայությունն այսուհետ բացակայելու է դժվարագույն ընթացքի մեջ գտնվող մեր երթից, որ նրա նվիրական բազում ծրագրեր անավարտ մնացին...

* * *

Դավիթ Մաթեւոսյանի մահվան բոթը լսեցինք պատերազմական ամենածանր ժամանակաշրջանում:

Շաղված-շփոթված այդ օրերին չկարողացանք նույնիսկ հրաժեշտ տալ նրան ոչ Մեղրիում, ոչ Եռաբլուրում:

Եւ հիմա՝ մոտ երկու ամիս անց, խորին պատկառանքով ու երախտագետ սրտով վերստին խոնարհվում ենք նրա պայծառ հիշատակի առջեւ:

«Այունյաց երկրի» խմբագրակազմի, անձամբ իմ եւ ընտանիքիս անունից վշտակցում ենք մեր լեռնաշխարհի երեւելի դուստր Սուսաննա Սարգսյանին. ինչպիսի՜ գեղեցիկ ընտանիք էին ստեղծել Դավիթ Ղեւոնդիչի հետ: Իսկ հիմա... Հիմա Սուսաննան, հրաշալի զավակների հետ, համոզված ենք, ամեն ինչ անում է եւ անելու է, որ Դավիթ Մաթեւոսյանի երազանքներն ու իղձերը ճնարավորինս ի կատար ածվեն...

Մենք էլ պարտավոր ենք պետական մակարդակով եւ ըստ պատշաճի գնահատել Դավիթ Մաթեւոսյանի նվիրական գործունեությունը:

Մեղրիում էլ... Վստահ ենք՝ կգտնվեն երախտավորներ, որոնք արժանավայել մակարդակով կհավերժացնեն Դավիթ Մաթևոսյանի հիշատակը՝ դրանով իսկ գալիքի սերմնացաններին ցույց տալով, թե ինչպիսի արժանապատիվ ու վեհանձն զավակ է Արեւիք աշխարհը նվիրել հայ ժողովրդին:

...Վերջում շեղվենք ավանդակարգից, մի պահ դուրս գանք իրականությունից ու խոսք ուղղենք հենց իրեն՝ երկնային թագավորությունում այլեւս հանգրվանած Դավիթ Մաթեւոսյան մարտիրոսին. **«Հարգելի բարեկամ, թող օրհնված լինի քո հիշատակը. հանուն հայրենիքի շունչդ տալուց հետո էլ՝ քո անվամբ ու գերեզմանով շարունակում ես ազնվացնել ու բարձրացնել Սյունյաց սրբազան աշխարհի անունը, պատիվն ու արժանապատվությունը, եւ ուրեմն՝ շիրիմդ միշտ լույսի մեջ լինի: Իսկ հերոսական Սյունիքում, վստահ եղիր, կրկին թեւ են առնելու Սիսակ նահապետի, Անդոկ մեծ իշխանի ու Նժդեհի ոգիները, եւ ոչ մի ուրացող չի կարողանալու անդամահատել ու բարոյազրկել աստվածասկիզբ եւ սրբասուրբ մեր հայրենիք Սյունիքը»:**

**Սամվել Ալեքսանյան**

## ԼԻԶԱ ՀԱՂԱՐՅԱՆ. ԷԼ ՉԵՆՔ ԺՊՏՈՒՄ, ԴԱՎԻԹ[53]

Ժամանակն է կուչ եկել ու մի բուռ դարձել Հայաստանում, թե մահերի անաստված առատությանն ենք ընտելանում:

Չգիտեմ:

Գիտեմ միայն, որ ամեն բացվող առավոտ սկսվում է այնպես՝ կարծես Հայաստանի կապիտուլյացիան, որին պայմանականորեն «զինադադար» կամ «պատերազմի ավարտ» ենք ասում՝ արդեն է վերջակետվել:

Նույն սրտամաշ զգացողությամբ՝ Դավիթ Մաթեւոսյանը կարծես երեկ է բռնել հավերժության նամփան:

Այս զգացողությունը նրան ճանաչելու բախտ ունեցողներից շատերն ունեն: Առանց հարցնելու՝ վստահ եմ:

Որովհետեւ Դավիթը միհատիկ էր, նրա նմանը չկար, հիմա էլ չկա ու չի լինելու:

Որովհետեւ կարող էիր նաեւ Դավիթին տարեկան մեկ անգամ հանդիպել, բայց որ գիտեիր՝ Հայաստանի մի անկյունում ինքն ապրում է՝ երկրիդ թիկունքն ապահով էր թվում:

Որովհետեւ Դավիթին հիշելիս մտածում էիր՝ բարությունն անդեմ չի լինում, բարությունը պետք է Դավիթի պես ապառաժյա լինի, որ լրջությունը չնմանվի:

Որովհետեւ Դավիթը զինվոր էր, բայց՝ խաղաղության զինվոր:

Որովհետեւ Դավիթի մահն այնպիսի անամոթ կորուստ էր, եւ նրա նկատմամբ սերն այնքան անափ էր, որ նույնիսկ չարությունից եռացող մեր այս իրականության մեջ ընդամենը մի երկոտանու նղնիմ հոգուց

[53] *ilur.am, 22.10.2021թ.:*

լեղին հոսեց գիշատչային ու գոեհիկ հեգնանքի կերպարանքով (երբեմ չեմ մոռանալու):

Խաղաղություն Հոգուդ, Դավիթ:

Մենք այլևս չենք ժպտում:

Նևրիր:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*Խմբագրի կողմից* ..... 5

*Ինքնակենսագրություն* ..... 11

*ՀՈԴՎԱԾՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՆԵՐ* ..... 13

*Ելույթ Ազգային ժողովում՝ ՀՀ Գլխավոր դատախազի միջնորդությունը Վանո Սիրադեղյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցի քննարկմանը* ..... 15

*Երբ կառավարում են նվաճողի հոգեբանությամբ* ..... 17

*ԷՆԿԱՎԵԴԻ-Ն պիտի պարտվի* ..... 21

*Նախօրոք տված վերջին խոսք կամ՝ մենք քաղաքական բանտարկյալներ ենք* ..... 25

*Կալանախուց N* ..... 33

*Մենք ժպտում ենք* ..... 37

*Վերջին խոսք՝ դատարանի դահլիճում* ..... 41

*Պատասխան «Աղվանստանին»* ..... 43

*Պատասխանների ակնկալիքով* ..... 45

*Դավիթ Մաթեւոսյանի կարծիքով՝ փաստահավաք խումբը ծիածածկույթ ստեղծելու նպատակ ունի* ..... 50

*Նիկոյանի հանձնաժողովը, կամ՝ պարկ, որի մեջ մախաթ է պահվում* ..... 53

*Հայցադուլ ընդդեմ եռկդիմության եւ անհետեւողականության (հարցազրույց «Ժամանակ» թերթին)* ..... 63

*Ռեժիմի հուշարձանը* ..... 67

*«Մենք թքած ունենք համաներման վրա» (հարցազրույց «Ժամանակ» թերթին)* ..... 70

Համբերության առաձգականությունը ..... 73
Բաց նամակ փաստահավաք խմբին ..... 77
Ապատամբությունը նաեւ իրավունք է ..... 81
«Վարդաշենն» քրեակատարողական հիմնարկ ..... 86
Մայիսի 31-ին ընդառաջ ..... 91
Հաղթող ընդդիմությունը դադարում է ընդդիմություն լինելուց հիշտ այնպես, ինչպես պարտված իշխանությունն է դադարում իշխանություն լինելուց (հարցազրույց «Զորբորդ իշխանությանը») ..... 97
Հակաժողովրդական երկու ուժ ..... 101
Գլխավորը պետությունն ու ժողովուրդն են (հարցազրույց «Ժամանակ» թերթին) ..... 104
Բանալին ՀԱԿ-ի եւ ԲՀԿ-ի համագործակցությունն է առաջիկա նախագահական ընտրություններում (հարցազրույց «Իլուր» կայքին) .... 108
Ասածը իշխանահաճո սպասավորները ..... 111
Վերլուծություն մեկ տեղամասի արդյունքներով, կամ հետեւություն անելու ժամանակը ..... 114
Ուրիշ ելք չկա ..... 118
Իրական հաղթանակը խաղաղության մեջ է (հարցազրույց «Իլուր» կայքին) ..... 124
Կոչ ընտրողին ..... 130
Խաղաղության սպասումով ..... 133
Երկաթուղու օրհասը ..... 137
Ոչչ ժողովուրդն է տուժել Մարտի 1-ին (հարցազրույց «Սիվիլնեթ» կայքին) ..... 142
Թալան չի եղել, եթե թալանած լինեի, ինձ կկախեին (հարցազրույց 24news կայքին) ..... 151
Իմաստուն գյուղացին կամ Սահմանադրական դատարանի թնջուկը ..... 154
Մարտի 1-ի բացահայտումը առաջին հերթին պայմանավորված է Ռոբերտ Քոչարյանով (հարցազրույց «Առաջին լրատվական» կայքին) ... 157
Վեհափառի սրտի խոսքը ..... 169
Աջակցություն ԱԱԾ-ին ..... 171



Հասարակության գործը իշխանությանն զգոն պահելն է (հարցազրույց «Իլուր» կայքին) ..... 174
Հիմա՝ ավելի լուրջ ..... 176
ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐՁԱԿ, ՆԱՄԱԿՆԵՐ ..... 179
Սկիզբ (ինչպես որ եղել է) ..... 181
Մտահոգ եմ ..... 324
Պապս ..... 327
Սուլթան նանա ..... 346
Ճերմակը ..... 359
ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանին ..... 364
ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին ..... 366
Արձագանք ..... 367
ԴԱՎԻԹ ՄԱԹԵՈՍՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ԴՆԱՀԱՏՄԱՄԲ ..... 369
Ժողովրդավարության առաջամարտիկը՝ քաղրանտարկյալ ..... 371
Բաց նամակ Դավիթ Մաթեւոսյանին ..... 376
Մարտական դիրքում զոհվել է Դավիթ Մաթեւոսյանը ..... 378
Դավիթ Մաթեւոսյան. Նրա կյանքը հայրենապաշտության վառ օրինակ է ..... 385
Լիզա Ճաղարյան. էլ չենք ժպտում, Դավիթ ..... 391

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՈՍՅԱՆ

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՄՔՈՎ

Կազմողներ՝
Դավիթ Տեր-Պետրոսյան, Թեոս Մաթեոսյան, Արման Մուսինյան,
Մարիամ Ծատրյան


| | |
|---|---|
| Խմբագիր՝ | Աշոտ Սարգսյան |
| Սրբագրիչ խմբագիր՝ | Լիզա Ճաղարյան |
| Տեխն. խմբագիր՝ | Արարատ Թովմասյան |
| Ձեւավորող՝ | Ավետիս Ավագյան |
| Կազմը՝ | «Անտարես» մեդիա հոլդինգի |

Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
Երեւան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am